ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔ

Հոդված 5. Քաղաքական պաշտոնները

1. Քաղաքական պաշտոնը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված ընտրովի կամ նշանակովի պաշտոն է, որն զբաղեցնող անձն օժտված է քաղաքական որոշումներ կայացնելու իրավասությամբ և քաղաքական պատասխանատվություն է կրում այդ որոշումների համար:
2. Պետական քաղաքական պաշտոններն են Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի պատգամավորների, վարչապետի, փոխվարչապետների, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի, նախարարների և նրանց տեղակալների պաշտոնները:
3. Համայնքային քաղաքական պաշտոններն են համայնքների ղեկավարների և նրանց տեղակալների, համայնքի ավագանու անդամի պաշտոնները:
4. Քաղաքական պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձանց գործունեության սկզբունքների և կազմակերպման կարգի հետ կապված հարաբերությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով:
5. Նախարարի տեղակալի քաղաքական պաշտոն և համայնքի ղեկավարի տեղակալի համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձը գործում է համապատասխանաբար նախարարից և համայնքի ղեկավարից պատվիրակված լիազորությունների ուժով և սեփական պատասխանատվությամբ քաղաքական որոշումներ կայացնելու իրավասությամբ օժտված չէ:
6. Նախարարի կամ համայնքի ղեկավարի փոփոխության դեպքում համապատասխանաբար նախարարի կամ համայնքի ղեկավարի տեղակալները, որպես ժամանակավոր պաշտոնակատարներ, շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց պաշտոնում նոր նշանակում կատարելը: Նախարարի կամ համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում նոր նշանակումը կատարվում է համապատասխանաբար նախարարի նշանակման, իսկ համայնքի ղեկավարի դեպքում՝ պաշտոնի ստանձնման օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Հոդված 9. Հանրային պաշտոններում նշանակելու իրավասությունը

1. Նախարարի տեղակալին նախարարի առաջարկությամբ պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վարչապետը:
2. Կառավարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարին վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է Կառավարությունը, բացառությամբ տեսչական մարմինների:
3. Տեսչական մարմնի ղեկավարին Տեսչական մարմնի կառավարման խորհրդի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը:

4. Կառավարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալին Կառավարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:
5. Վարչապետին ենթակա պետական մարմնի ղեկավարին նշանակում և ազատում է վարչապետը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:
6. Վարչապետին ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալին վարչապետին ենթակա պետական մարմնի ղեկավարի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:
7. Նախարարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարին համապատասխան նախարարի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:
8. Նախարարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալին նախարարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարի առաջարկությամբ նշանակում և ազատում է համապատասխան նախարարը:
9. Մարզպետների տեղակալներին մարզպետի առաջարկությամբ պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վարչապետը:
10. Պետական հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց նշանակում և ազատում է այն պետական մարմնի ղեկավարը կամ ենթակա պետական մարմնի ղեկավարը, որտեղ նրանք լինելու են աշխատանքային հարաբերությունների մեջ, բացառությամբ սույն հոդվածի 14-րդ մասով նախատեսված դեպքերի:
11. Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարին և նրա տեղակալներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հանրապետության նախագահը:
12. Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարին և նրա տեղակալներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Ազգային ժողովի նախագահը:
13. Վարչապետի աշխատակազմի ղեկավարին և նրա տեղակալներին, վարչապետի աշխատակազմի գրասենյակի ղեկավարին, բացառությամբ փոխվարչապետի գրասենյակի ղեկավարի, պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վարչապետը:
14. Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի օգնականին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարը: Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի օգնականին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը: Վարչապետի աշխատակազմի ղեկավարի օգնականին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վարչապետի աշխատակազմի ղեկավարը: Փոխվարչապետի գրասենյակի ղեկավարին, խորհրդականին, օգնականին, մամուլի քարտուղարին, ռեֆերենտին, արարողակարգի պատասխանատուին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է համապատասխան փոխվարչապետը: Անվտանգության խորհրդի քարտուղարի օգնականին, խորհրդականին և մամուլի քարտուղարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Անվտանգության խորհրդի քարտուղարը:
15. Համայնքային վարչական և համայնքային հայեցողական պաշտոններում նշանակում և այդ պաշտոններից ազատում է համայնքի ղեկավարը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:
16. ~~Նախարարին,~~ Փոխվարչապետին, նախարարին Անվտանգության խորհրդի քարտուղարին, Կառավարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարին, վարչապետի աշխատակազմի ղեկավարին, տեսչական մարմնի ղեկավարին, վարչապետին ենթակա պետական մարմնի ղեկավարին, մարզպետին, վարչապետի

աշխատակազմի գրասենյակի ղեկավարին, բացառությամբ փոխվարչապետի գրասենյակի ղեկավարի, արձակուրդ տրամադրում է վարչապետը:
17. Նախարարի տեղակալին, Կառավարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալին, տեսչական մարմնի ղեկավարի տեղակալին, վարչապետին ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալին, մարզպետի տեղակալին արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է անմիջական ղեկավարը:
18. Նախարարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարին արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է համապատասխան նախարարը, իսկ նախարարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալին արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է անմիջական ղեկավարը:
19. Պետական հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է անմիջական ղեկավարը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:
20. Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարին արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է Հանրապետության նախագահը, իսկ աշխատակազմի ղեկավարի տեղակալներին, աշխատակազմի ղեկավարի օգնականին՝ Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարը:
21. Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարին արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է Ազգային ժողովի նախագահը, իսկ աշխատակազմի ղեկավարի տեղակալներին, աշխատակազմի ղեկավարի օգնականին՝ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը:
22. Վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալներին, աշխատակազմի ղեկավարի օգնականին արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է վարչապետի աշխատակազմի ղեկավարը:
23. Փոխվարչապետի գրասենյակի ղեկավարին, խորհրդականին, օգնականին, մամուլի քարտուղարին, ռեֆերենտին, արարողակարգի պատասխանատուին արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է համապատասխան փոխվարչապետը:
24. Անվտանգության խորհրդի քարտուղարի օգնականին, խորհրդականին և մամուլի քարտուղարին արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է Անվտանգության խորհրդի քարտուղարը:
25. Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարին պաշտոնի նշանակում, պաշտոնից ազատում, արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է վարչապետը:
26. Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչին պաշտոնի նշանակում, պաշտոնից ազատում, արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է վարչապետը:
(9-րդ հոդվածը լրաց. 08.05.19 ՀՕ-35-Ն, 10.07.19 ՀՕ-144-Ն)

Հոդված 31. Անհամատեղելիության պահանջները

1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային

կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:
2. Հայաստանի Հանրապետության նախագահը չի կարող զբաղեցնել որևէ այլ պաշտոն, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք:
3. Կենտրոնական բանկի նախագահը և խորհրդի մյուս անդամներն իրավունք ունեն առևտրային կազմակերպություններում և հիմնադրամներում զբաղեցնելու իրենց կարգավիճակով պայմանավորված պաշտոններ:
~~4. Հանրային ծառայողը «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված դեպքերում կարող է կատարել ընտրական հանձնաժողովի անդամի, բացառությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի կամ ընտրական հանձնաժողովում տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետի կարգավիճակից բխող աշխատանք:~~
«4. Հանրային ծառայողը «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված դեպքերում կարող է կատարել ընտրական հանձնաժողովի անդամի (բացառությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի) կամ ընտրական հանձնաժողովում տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետի կարգավիճակից բխող աշխատանք:»:
5. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ մեկ ամսվա ընթացքում, պարտավոր են ապահովել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների կատարումը:
6. Սույն օրենքի իմաստով՝ առևտրային կազմակերպությունում (բացառությամբ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերի հիման վրա ստեղծված կազմակերպությունների) պաշտոն զբաղեցնելու ներքո հասկացվում է՝
1) առևտրային կազմակերպության կառավարման մարմնում ընդգրկված լինելը.
2) առևտրային կազմակերպությունում ցանկացած այլ պաշտոն զբաղեցնելը.
3) առևտրային կազմակերպության գույքի հավատարմագրային կառավարիչ լինելը.
4) սույն մասի 1-3-րդ կետերում նշված դեպքերից բացի, որևէ այլ ձևով առևտրային կազմակերպության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառույթների իրականացմանը ներգրավված լինելը:
Հանրային պաշտոն զբաղեցնող անձը (բացառությամբ Հայաստանի Հանրապետության նախագահի, պատգամավորի, Կառավարության անդամի, ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի) կամ հանրային ծառայողը կարող է ընդգրկվել 50 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ առևտրային կազմակերպության տնօրենների խորհրդի (դիտորդ խորհուրդ) կազմում, եթե դա ուղղակիորեն առնչվում է իր պաշտոնավարման ոլորտի քաղաքականության իրականացման հետ՝ առանց վարձատրության կամ որևէ այլ ձևով փոխհատուցում ստանալու կամ հանրային պաշտոն չզբաղեցնող անձանց կամ ոչ հանրային ծառայողների համար նախատեսված սոցիալական երաշխիքներից կամ այլ ծառայություններից կամ արտոնություններից օգտվելու իրավունքի:
7. Սույն օրենքի իմաստով՝ ձեռնարկատիրական գործունեություն է համարվում՝
1) անհատ ձեռնարկատեր լինելը.
2) առանց պետական գրանցման կամ հաշվառման ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում.

3) առևտրային կազմակերպության մասնակից լինելը, բացառությամբ այն դեպքի, երբ առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման:
8. Սույն օրենքի իմաստով՝ ձեռնարկատիրական գործունեություն չի համարվում՝
1) վստահության վրա հիմնված ընկերակցության մասնակից ավանդատու (կոմանդիտիստ) լինելը.
2) վարկային կամ խնայողական միության ավանդատու կամ անդամ լինելը.
3) առևտրային կազմակերպությունից դուրս գալու կամ դրա լուծարվելու դեպքում հասանելիք գույքի մասը կամ դրա արժեքն ստանալը.
4) բանկում ավանդ, ապահովագրական կազմակերպությունում ապահովագրական պոլիս ունենալը.
5) Հայաստանի Հանրապետության, համայնքի կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի թողարկած արժեթղթեր ունենալը.
6) սեփականության իրավունքով պատկանող գույքը վաճառելը կամ որոշակի վճարի կամ հատուցման դիմաց վարձակալության հանձնելը.
7) փոխառության դիմաց տոկոսներ և այլ հատուցում ստանալը.
8) գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի օգտագործման կամ օգտվելու իրավունքի համար ցանկացած հեղինակային իրավունքից, ցանկացած արտոնագրից, ապրանքային նշանից, նախագծից կամ մոդելից, պլանից, գաղտնի բանաձևից կամ գործընթացից, էլեկտրոնային հաշվողական մեքենաների և տվյալների բազայի համար ծրագրերի կամ արդյունաբերական, առևտրային, գիտական սարքավորումներն օգտագործելու կամ օգտվելու համար իրավունքի կամ արդյունաբերական, տեխնիկական, կազմակերպական, առևտրային, գիտական փորձի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու համար հատուցում (ռոյալթի) ստանալը.
9) պատճառված վնասի (կրած կորստի) դիմաց հատուցում ստանալը:
9. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները համարվում են ձեռնարկատիրական գործունեությամբ չզբաղվելու պահանջը խախտած, եթե նրանք այդ առնչությամբ Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ենթարկվել են վարչական կամ քրեական պատասխանատվության:
10. Առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունենալու դեպքում հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ մեկ ամսվա ընթացքում, այն օրենքով սահմանված կարգով հանձնել հավատարմագրային կառավարման:
11. Առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարիչ կարող է լինել նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող քաղաքացին կամ ոչ առևտրային կազմակերպությունը:
12. Սույն օրենքի իմաստով՝ գիտական աշխատանք է համարվում գիտական կազմակերպությունում, հիմնարկում, բարձրագույն ուսումնական հաստատությունում կամ այլ կերպ գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական, գիտամանկավարժական, փորձատեխնոլոգիական, նախագծակոնստրուկտորական, նախագծատեխնոլոգիական աշխատանքներ կատարելը:
13. Սույն օրենքի իմաստով՝ կրթական աշխատանք է համարվում ուսուցիչ, դասախոս (ասիստենտ) աշխատելը կամ հանրակրթական (հիմնական, լրացուցիչ) ծրագրերի

յուրացման և առարկայական չափորոշիչների պահանջների ապահովման գործընթացին, ինչպես նաև ուսուցման մեթոդների կիրառման միջոցով համապատասխան գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերմանը, արժեքային համակարգի ձևավորմանը նպաստող և (կամ) դրանք ապահովող այլ աշխատանք կատարելը:
14. Սույն օրենքի իմաստով՝ ստեղծագործական աշխատանք է համարվում մշակույթի և արվեստի երկեր, գեղարվեստական, գեղարվեստական ժողովրդական ստեղծագործություններ և արհեստներ, բանահյուսություն, բարոյագիտական և գեղագիտական գաղափարատիպեր (իդեալներ), վարվեցողության կանոններ և ձևեր, լեզուներ, բարբառներ և խոսվածքներ, ազգային ավանդույթներ և սովորույթներ, պատմաաշխարհագրական տեղանուններ, մշակութային գործունեության մասին գիտական հետազոտությունների արդյունքներ և մեթոդներ, մշակութային ժառանգության առարկաներ (օբյեկտներ) ստեղծելը կամ մեկնաբանելը:
15. Հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի լիազորությունների իրականացման հետ կապված պարտականությունները գերակա են նրա կողմից իրականացվող գիտական, կրթական, ստեղծագործական աշխատանքի հանդեպ:
16. Հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքի համար վճարումը չի կարող գերազանցել այն չափը, որին նույնպիսի գործունեության համար համանման որակներ ունեցող, պաշտոնատար անձ չհանդիսացող անձը կարող էր հավակնել:
17. Հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի կողմից սույն հոդվածով նախատեսված անհամատեղելիության պահանջները խախտելը նրա լիազորությունների դադարեցման կամ նրան զբաղեցրած պաշտոնից ազատելու հիմք է:

Հոդված 3. Օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.
«4. Հանրային ծառայողը «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված դեպքերում կարող է կատարել ընտրական հանձնաժողովի անդամի (բացառությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի) կամ ընտրական հանձնաժողովում տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետի կարգավիճակից բխող աշխատանք:»:
Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔ

Հոդված 2. Օրենքի գործողության շրջանակը

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է օրենսդիր, գործադիր, դատական իշխանության մարմիններում, Հանրապետության նախագահի աշխատակազմում, դատախազությունում, քննչական մարմիններում, անկախ պետական մարմիններում, ինքնավար մարմիններում, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում, ինչպես նաև Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա պետական մարմիններում (այսուհետ՝ համապատասխան մարմին) քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող անձանց վրա:
2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված մարմիններում պետական ծառայության հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, եթե այլ օրենքներով առանձնահատկություններ սահմանված չեն:
~~3. Պետական ծառայության այլ օրենքներով առանձնահատկություններ նախատեսող ծառայություններում (մարմիններում) աշակցող մասնագիտական գործառույթներ իրականացնող ծառայողները քաղաքացիական ծառայողներ են:~~
«3. Պետական ծառայության պաշտոնը համարվում է առանձնահատկություն ունեցող, եթե այն չի ընդգրկվում քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում:»:

Հոդված 9. Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի տեսակները, առանձնահատկությունները

1. Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը (այսուհետ՝ մրցույթ) հիմնված է հավասար հնարավորությունների և արժանիքների վրա:
2. Մրցույթը դասակարգվում է երկու տեսակի՝ արտաքին և ներքին:
3. Մրցույթներն անցկացնում են համապատասխան մարմինները, բացառությամբ գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի, որն անցկացնում է քաղաքացիական ծառայության գրասենյակը:
4. Մրցույթ անցկացնելու համար նախապատրաստական աշխատանքներն իրականացնում է համապատասխան մարմնի անձնակազմի կառավարման ստորաբաժանումը:
5~~. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի գլխավոր քարտուղարի մրցույթը կազմակերպում և անցկացնում է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը:~~

«5. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում մրցույթը կազմակերպում և անցկացնում է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը՝ սույն օրենքով սահմանված կարգով:».

2) 5-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6-րդ մասով.

«6. Հաշվեքննիչ պալատում գլխավոր քարտուղարի մրցույթը կազմակերպում և անցկացնում է Հաշվեքննիչ պալատը:»:

Հոդված 10. Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը

1. Մրցույթը հայտարարվում է քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում: Եթե հայտարարված մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ ներկայացված բոլոր դիմումներում առկա է սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկը, ինչպես նաև եթե մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացրած անձանցից ոչ մեկը չի ներկայացել, կամ մրցույթի մասնակիցներից ոչ մեկը չի հաղթահարել թեստավորման փուլը կամ թեստավորման փուլը հաղթահարած մասնակիցներից ոչ մեկը չի ներկայացել հարցազրույցի փուլին, կամ հարցազրույցի փուլ անցած մասնակիցներից ոչ մեկը չի հաղթահարել հարցազրույցի փուլը կամ հաղթահարել է հարցազրույցի փուլը և պաշտոնի նշանակման համար դիմում չի ներկայացրել, ապա տվյալ պաշտոնի համար մրցույթ հայտարարվում է մեկ ամսվա ընթացքում:

2. Մինչև արտաքին մրցույթ հայտարարելը պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ կարող է անցկացվել ներքին մրցույթ: Քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մնալուց հետո տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար կարող է անցկացվել մեկ ներքին մրցույթ: Եթե ներքին մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ ներկայացված բոլոր դիմումներում առկա է սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկը, ինչպես նաև եթե ներքին մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացրած անձանցից ոչ մեկը չի ներկայացել, կամ ներքին մրցույթի մասնակիցներից ոչ մեկը չի հաղթահարել թեստավորման փուլը կամ թեստավորման փուլը հաղթահարած մասնակիցներից ոչ մեկը չի ներկայացել հարցազրույցի փուլին, կամ հարցազրույցի փուլ անցած մասնակիցներից ոչ մեկը չի հաղթահարել հարցազրույցի փուլը կամ հաղթահարել է հարցազրույցի փուլը և պաշտոնի նշանակման համար դիմում չի ներկայացրել, ապա անցկացվում է արտաքին մրցույթ: Ներքին մրցույթին կարող են մասնակցել տվյալ մարմնի հանրային ծառայողները և քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողները:

3. Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը մրցույթն անցկացնող համապատասխան մարմինը հրապարակում է մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնող մարմնի պաշտոնական կայքէջում, քաղաքացիական ծառայության գրասենյակի պաշտոնական կայքէջում և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքէջում: Հայտարարության հետ հրապարակվում են նաև այն բնագավառները, որոնցից կազմված է լինելու թեստը:

4. Քաղաքացին չի մասնակցում մրցույթին, եթե չի բավարարում սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով և 17-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջները, և (կամ) առկա է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը, և (կամ) առկա է սույն օրենքի 37-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված հիմքը:
5. Մրցույթին մասնակցելու համար քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է էլեկտրոնային տարբերակով: Մրցույթի մասնակցության հարցը որոշում է գլխավոր քարտուղարը՝ անձնակազմի կառավարման ստորաբաժանման տված եզրակացության հիման վրա: Մրցույթի մասնակցության որոշման մասին անձնակազմի կառավարման ստորաբաժանումը երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով տեղեկացնում է դիմող քաղաքացուն: Գլխավոր քարտուղարի՝ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնի մրցույթի մասնակցության հարցը որոշում է քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարը՝ գրասենյակի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման տված եզրակացության հիման վրա: Քաղաքացիական ծառայության գրասենյակը թեստավորման մասնակցության որոշման մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով տեղեկացնում է դիմող քաղաքացուն:
6. Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորում և հարցազրույց: Մրցույթն անցկացվում է, եթե դիմել է առնվազն մեկ քաղաքացի:
7. Թեստավորումն անցկացնում են համապատասխան մարմիններն էլեկտրոնային եղանակով՝ քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում:
8. Քաղաքացիական ծառայության պաշտոնների առանձնահատկություններից ելնելով կարող են կազմվել տարբեր բովանդակությամբ թեստեր: Թեստերը պետք է բխեն քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով սահմանված մասնագիտական գիտելիքների ու կոմպետենցիաների տիրապետմանը ներկայացվող պահանջներից: Թեստերում ընդգրկվող առաջադրանքների հարաբերակցությունը որոշվում է ըստ պաշտոնների ենթախմբերի. որքան ցածր է պաշտոնի ենթախումբը, այնքան գերակշռում են մասնագիտական գիտելիքների վերաբերյալ առաջադրանքները:
9. Թեստերում ընդգրկվող առաջադրանքները, որոնք վերաբերում են մասնագիտական գիտելիքներին, կազմում և քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում տեղադրում է համապատասխան մարմինը, իսկ կոմպետենցիաների վերաբերյալ առաջադրանքները՝ քաղաքացիական ծառայության գրասենյակը:
10. Գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի թեստում ընդգրկվող մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների վերաբերյալ առաջադրանքները կազմում է քաղաքացիական ծառայության գրասենյակը:
11. Մրցույթի մասնակիցը, պատասխանելով թեստում ընդգրկված առաջադրանքներին, անմիջապես տեղեկանում է իր ստացած արդյունքների մասին: Թեստավորման արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում մրցույթի մասնակիցն իր արդյունքների մասով կարող է բողոք ներկայացնել գլխավոր քարտուղարին: Գլխավոր քարտուղարը քննում է դիմումը և ընդունում արդյունքները փոփոխելու կամ նույնը թողնելու մասին որոշում: Գլխավոր քարտուղարի՝ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնի համար անցկացվող մրցույթի թեստավորման արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում մրցույթի մասնակիցն իր արդյունքների մասով կարող է բողոք ներկայացնել քաղաքացիական ծառայության գրասենյակի

ղեկավարին: Քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարը քննում է դիմումը և ընդունում արդյունքները փոփոխելու կամ նույնը թողնելու մասին որոշում:
12. Մրցույթի երկրորդ՝ հարցազրույցի փուլին մասնակցելու իրավունք են ձեռք բերում Կառավարության սահմանած միավորից բարձր առավելագույն միավորներ ստացած հինգ մասնակիցը: Եթե միևնույն արդյունք ունենալու դեպքում հնարավոր չէ պարզել առավելագույն միավորներ հավաքած և թեստավորման փուլը հաղթահարած հինգ մասնակցին, ապա միևնույն առավելագույն միավորներ հավաքած մասնակիցներն անցնում են հարցազրույցի փուլ: Թեստավորման փուլը հաղթահարած մասնակիցների թիվը հինգից պակաս լինելու դեպքում բոլոր մասնակիցներն իրավունք են ձեռք բերում մասնակցելու հարցազրույցի փուլին, եթե հավաքել են թեստավորման փուլը հաղթահարելու համար անհրաժեշտ միավորը:
13. Հարցազրույցն անցկացնում է տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի ձևավորած հանձնաժողովը, բացառությամբ գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի, որի դեպքում հանձնաժողովը ձևավորում է քաղաքացիական ծառայության գրասենյակը՝ համակարգող փոխվարչապետի հաստատած հանձնաժողովի անդամության թեկնածուների ցանկից:
14. Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի ձևավորած հանձնաժողովի կազմում ընդգրկվում են տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը, այն կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը, որի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարվել է տվյալ մրցույթը, անձնակազմի կառավարման ստորաբաժանման ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը, ինչպես նաև տվյալ պաշտոնի համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների տիրապետման մակարդակն ստուգելու կարողություններ ունեցող այլ անձինք:
15. Հանձնաժողովը կազմված է առնվազն հինգ անդամից:
16. Հարցազրույցի փուլը հաղթահարում է մեկ մասնակից: Հարցազրույցի արդյունքում հանձնաժողովը պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին ներկայացնում է եզրակացություն հարցազրույցի մասնակիցների վերաբերյալ՝ նշելով հարցազրույցի փուլը հաղթահարած միակ մասնակցին: Հանձնաժողովի եզրակացությունն ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը հարցազրույցի փուլը հաղթահարած միակ մասնակցին նշանակում է համապատասխան պաշտոնի:
17. Եթե երկու անգամ անընդմեջ հայտարարված արտաքին մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ ներկայացված բոլոր դիմումներում առկա է սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկը, ապա համապատասխան մարմինը սույն օրենքով սահմանված կարգով փոփոխում է տվյալ պաշտոնի համար սահմանված պահանջները:
18. Անվանացանկում կատարված լրացումների և փոփոխությունների հետևանքով առաջացած քաղաքացիական ծառայության նոր պաշտոնները, բացառությամբ համապատասխան մարմնի վերակազմակերպման և (կամ) կառուցվածքային փոփոխության հետևանքով առաջացած քաղաքացիական ծառայության պաշտոնների, զբաղեցվում են մրցույթով:

19. Համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայողի առաջխաղացումն իրականացվում է միայն սույն օրենքով սահմանված մրցույթով:
20. Մրցույթի արդյունքով նույն համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայության այլ պաշտոնի նշանակվելու դեպքում քաղաքացիական ծառայողի հետ վերջնահաշվարկ չի կատարվում:
21. Մրցույթն անվավեր է ճանաչվում դատական կարգով: Մրցույթն անվավեր ճանաչվելու դեպքում հայտարարվում է մրցույթ, որն անցկացվում է սույն օրենքով սահմանված կարգով:
22. Մրցույթ անցկացնելու կարգը սահմանում է Կառավարությունը, **իսկ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում՝ Մարդու իրավունքների պաշտպանը** :
23. Թեստերը կազմելու, թեստային առաջադրանքները ձևավորելու, թեստային առաջադրանքների բովանդակային առանձնահատկությունները, թեստային առաջադրանքների քանակը, հարցազրույցի անցկացման մեթոդաբանությունը և ձևաչափը սահմանում է համակարգող փոխվարչապետը:

Հոդված 11. Վարկանիշային ցուցակների կազմումը և վարկանիշային ցուցակներից պաշտոն զբաղեցնելը

1. Քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթախմբերի պաշտոններն զբաղեցնելու համար հարցազրույցին մասնակցելու համար թեկնածուներն ընտրվում են վարկանիշային ցուցակներից:
2. Վարկանիշային ցուցակները կազմելու համար առնվազն տարին երկու անգամ քաղաքացիական ծառայության գրասենյակն անցկացնում է թեստավորում: Ելնելով թեստավորման մասնակիցների թվից՝ թեստավորումը կարող է անցկացվել մեկ կամ մի քանի խմբով տարբեր օրերի և (կամ) ժամերի: Յուրաքանչյուր խմբի համար կազմվում է նոր թեստ:
3. Թեստավորմանը մասնակցելու համար քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է էլեկտրոնային տարբերակով: Թեստավորման մասնակցության հարցը որոշում է քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարը՝ համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման տված եզրակացության հիման վրա: Քաղաքացիական ծառայության գրասենյակը թեստավորման մասնակցության որոշման մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով տեղեկացնում է դիմող քաղաքացուն:
4. Քաղաքացին չի մասնակցում թեստավորմանը, եթե չի բավարարում սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով, 17-րդ հոդվածի 4-րդ մասով և «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով սահմանված պահանջները:
5. Թեստավորումը հաղթահարում են Կառավարության սահմանած նվազագույն միավորից բարձր միավոր ստացած մասնակիցները: Թեստավորման արդյունքներով քաղաքացիական ծառայության գրասենյակն առցանց կարգով վարում է վարկանիշային համարակալված ցուցակ: Միևնույն արդյունք հավաքած թեկնածուները գրանցվում են նույն համարի տակ:
6. Համապատասխան մարմինները հարցազրույցի հրավիրում են վարկանիշային ցուցակի 1-5-րդ համարներում գրանցված անձանց, որոնք բավարարում են քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները:

7. Եթե պաշտոնի անձնագրով նախատեսված է ~~մասնագիտական բարձրագույն կրթության~~ **բարձրագույն մասնագիտական կրթության** պահանջ և վարկանիշային ցուցակի 1-5-րդ համարներում չկա համապատասխան մասնագիտություն ունեցող հինգ թեկնածու, ապա հրավիրվում են տվյալ մասնագիտությունն ունեցող առաջին ~~հինգ թեկնածուները~~ **հինգ թեկնածուն:**

8. Վարկանիշային ցուցակում միանգամյա գրանցված լինելու առավելագույն ժամկետը երկու տարի է: Վարկանիշային ցուցակում գրանցման առավելագույն ժամկետը լրանալու օրվան հաջորդող օրը թեկնածուն ինքնաշխատ եղանակով հանվում է ցուցակից: Վարկանիշային ցուցակի թափուր համարները լրացվում են հաջորդաբար՝ նվազման կարգով ինքնաշխատ եղանակով:

9. Վարկանիշային ցուցակը համալրվում է թեստավորման բոլոր խմբերի արդյունքներն ամփոփելու հաջորդ աշխատանքային օրը:

10. Քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթախմբերի պաշտոններն զբաղեցնելու համար հարցազրույցը կազմակերպվում և անցկացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածի 13-16-րդ մասերով սահմանված կարգով: Պաշտոնի նշանակված թեկնածուն հանվում է վարկանիշային ցուցակից:

11. Վարկանիշային ցուցակները կազմելու համար անցկացվող թեստավորման և հարցազրույցի կազմակերպման կարգը սահմանում է Կառավարությունը:

12. Վարկանիշային ցուցակները կազմելու համար անցկացվող թեստավորման թեստերը կազմելու, թեստային առաջադրանքները ձևավորելու, թեստային առաջադրանքների բովանդակային առանձնահատկությունները, թեստային առաջադրանքների քանակը սահմանում է համակարգող փոխվարչապետը:

Հոդված 13. Քաղաքացիական ծառայության պաշտոնը որոշակի ժամկետով զբաղեցնելը

1. Քաղաքացիական ծառայության պաշտոնը որոշակի ժամկետով զբաղեցվում է՝

1) հղիության և ծննդաբերության արձակուրդի դեպքում.

2) մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի դեպքում.

3) պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու դեպքում.

4) քաղաքացիական ծառայողի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության դեպքում.

5) եռամսյա ժամկետը գերազանցող վերապատրաստման կամ ծառայողական գործուղման մեկնելու դեպքում.

6) 12-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված դեպքում.

7) օրենքով սահմանված այլ դեպքերում:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված դեպքերում ~~այդ պաշտոններն զբաղեցվում են~~ **քաղաքացիական ծառայության այդ պաշտոնների անձնագրերով նախատեսված գործառույթներն իրականացվում են** պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հայեցողությամբ՝ տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված փոխարինող քաղաքացիական ծառայողի կողմից կամ սույն օրենքի **այդ պաշտոններն զբաղեցվում են** 12-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով կամ հաշվի առնելով սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով և 17-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված

պահանջները և «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված հիմքերը՝ **այդ պաշտոններն զբաղեցվում են** մեկ այլ անձի հետ (այդ թվում՝ ռեզերվում գտնվող) ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելով:
3. Չի թույլատրվում այլ անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքել, եթե քաղաքացիական ծառայության տվյալ թափուր պաշտոնն առաջացել է այդ անձի ծառայությունը սույն օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի 2-4-րդ, 6-10-րդ և 16-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով դադարեցվելու հետևանքով:
4. Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 17. Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու փորձաշրջանը, առավելագույն տարիքը

1. Մրցույթի արդյունքում քաղաքացիական ծառայության պաշտոն առաջին անգամ զբաղեցնող անձի նշանակումն իրականացվում է փորձաշրջանով՝
1) ղեկավար պաշտոնների խմբի համար՝ 12 ամիս.
2) մասնագիտական պաշտոնների 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթախմբերի պաշտոնների համար՝ 9 ամիս.
3) մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթախմբերի պաշտոնների համար՝ 6 ամիս:
2. Փորձաշրջանի ընթացքում քաղաքացիական ծառայողը չի կարող սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով զբաղեցնել քաղաքացիական ծառայության այլ պաշտոն: Փորձաշրջանի ընթացքում մրցույթի արդյունքում այլ պաշտոնի նշանակվելու դեպքում քաղաքացիական ծառայողի նկատմամբ սահմանվում է փորձաշրջան:
3. Փորձաշրջանի հետ կապված առանձնահատկությունները սահմանում է համակարգող փոխվարչապետը՝ հաշվի առնելով պաշտոնների խմբերը, ենթախմբերը, պաշտոնների առանձնահատկությունները:
~~4. Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը 65 տարին է: Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալու դեպքում տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ քաղաքացիական ծառայողը կարող է մինչև մեկ տարի ժամկետով շարունակել զբաղեցնել իր պաշտոնը:~~
«4. Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալու դեպքում տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ մինչև մեկ տարի ժամկետով, մեկ անգամ, կարող է երկարաձգվել ծառայության ժամկետը և քաղաքացիական ծառայողը շարունակում է զբաղեցնել իր պաշտոնը:»:

Հոդված 19. Քաղաքացիական ծառայողի վերապատրաստումը

1. Քաղաքացիական ծառայողներն իրավունք ունեն բարելավելու և պարտավոր են բարելավել իրենց մասնագիտական գիտելիքները և կոմպետենցիաները շարունակական

մասնագիտական զարգացման սկզբունքի վրա հիմնված վերապատրաստումներին մասնակցելու միջոցով:
2. Համապատասխան մարմինները պարտավոր են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները վերապատրաստումները կազմակերպելու և այդ վերապատրաստումներին քաղաքացիական ծառայողների մասնակցությունն ապահովելու համար:
3. Համապատասխան մարմիններում վերապատրաստման գործընթացը կազմակերպում է գլխավոր քարտուղարը:
4. Վերապատրաստումն իրականացվում է յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի համար ըստ անհատական ծրագրի, որը կազմվում (փոփոխվում) է քաղաքացիական ծառայողի տարեկան կատարողականի գնահատմանը զուգընթաց իրականացված վերապատրաստման կարիքների գնահատումից:
5. Վերապատրաստում անցկացվում է նաև քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով քաղաքացիական ծառայողի մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների տիրապետման նոր պահանջների սահմանման դեպքում՝ քաղաքացիական ծառայողի կամ կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի նախաձեռնությամբ:
6. **Մեկանգամյա վերապատրաստման** մասնակցության առավելագույն ժամկետը վեց ամիս է:
7. Գլխավոր քարտուղարը վերապատրաստման կարիքների գնահատման արդյունքներն ամփոփելուց հետո կազմում է համապատասխան մարմնի քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագիրը, որը ներառում է վերապատրաստման կարիքները, վերապատրաստման եղանակները, հատկացված կրեդիտները, ժամանակի բաշխվածությունը, վերապատրաստում իրականացնող կազմակերպությունները, վերապատրաստում իրականացնող մասնագետների թեկնածուները և համակարգող փոխվարչապետի որոշմամբ սահմանված այլ չափանիշներ, և այդ ծրագիրը ներկայացնում է քաղաքացիական ծառայության գրասենյակ՝ համաձայնեցման:
8. Քաղաքացիական ծառայության գրասենյակն ուսումնասիրում է ծրագիրը և տալիս համաձայնություն վերապատրաստման ծրագիրը հաստատելու համար: Համաձայնությունն ստանալուց հետո գլխավոր քարտուղարը հաստատում է վերապատրաստման ծրագիրը և քաղաքացիական ծառայողներին տեղեկացնում այդ ծրագրից բխող քաղաքացիական ծառայողի վերապատրաստման անհատական ծրագիրը: Հաշվեքննիչ պալատում վերապատրաստման ծրագիրը հաստատում է Հաշվեքննիչ պալատը:
9. Գլխավոր քարտուղարն անհրաժեշտության դեպքում սույն հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով սահմանված կարգով կարող է վերանայել վերապատրաստման ծրագիրը:
10. Կոմպետենցիաների վերաբերյալ վերապատրաստումները կազմակերպում է քաղաքացիական ծառայության գրասենյակը, իսկ մասնագիտական գիտելիքների վերաբերյալ վերապատրաստումները՝ համապատասխան մարմինը:
11. Համապատասխան մարմինների ծրագրերի ուսումնասիրության ժամանակ քաղաքացիական ծառայության գրասենյակը կարող է առաջարկել վերանայել վերապատրաստման ծրագիրը, ինչպես նաև այդ ծրագրերում կարող է ներառել նաև կոմպետենցիաների վերաբերյալ կազմված վերապատրաստման ծրագրերը:

12. Վերապատրաստման հետ կապված ծախսերը կատարվում են պետական բյուջեի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:
13. Վերապատրաստումների արդյունքով քաղաքացիական ծառայողը ստանում է կրեդիտներ: Անհատական ծրագրով հաստատված համապատասխան կրեդիտներն ստանալուց հետո քաղաքացիական ծառայողը համարվում է վերապատրաստված:
14. Սույն օրենքի հիման վրա վերապատրաստման կարգը, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքները գնահատելու և անհատական ծրագիր կազմելու, ինչպես նաև համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագիրը կազմելու, միջազգային հավաստագրերի ճանաչելիության սկզբունքները, տեսակները սահմանում է համակարգող փոխվարչապետը:

Հոդված 21. Քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվող կարգապահական պատասխանատվության միջոցները և առանձնահատկությունները, կարգապահական տույժ կիրառելու որոշումը, պաշտոնից ազատելու կամ ծառայության դադարեցման մասին որոշումը բողոքարկելը

1. Ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու և (կամ) ոչ պատշաճ կատարելու և (կամ) ծառայողական լիազորությունները վերազանցելու և (կամ) աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելու և (կամ) քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները խախտելու և (կամ) հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու և (կամ) շահերի բախման կանոնները, նվերներ ընդունելու արգելքը խախտելու դեպքերում քաղաքացիական ծառայողի նկատմամբ սահմանված կարգով կիրառվում են սույն օրենքով սահմանված կարգապահական տույժերը:
2. Կարգապահական տույժերը դասակարգվում են երկու տեսակի՝ թեթև և խիստ.
1) թեթև կարգապահական տույժերն են՝
ա. նախազգուշացում,
բ. նկատողություն.
2) խիստ կարգապահական տույժերն են՝
ա. խիստ նկատողություն,
բ. **հիմնական** աշխատավարձի իջեցում մինչև 20 տոկոսով, բայց ոչ ավելի, քան բազային աշխատավարձի չափը,
գ. ծառայության դադարեցում:
3. Կարգապահական տույժ կիրառվում է ծառայողական քննություն անցկացնելուց հետո:
4. Կարգապահական տույժ նշանակվում է, եթե երեք ամսից ավելի չի անցել խախտման հայտնաբերման օրվանից՝ չհաշված քաղաքացիական ծառայողի ժամանակավոր անաշխատունակության պատճառով բացակայության, գործուղման, վերապատրաստման կամ արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածները:
5. Կարգապահական տույժ նշանակվել չի կարող, եթե վեց ամսից ավելի է անցել խախտում կատարելու օրվանից: Եթե խախտումը հայտնաբերվում է ֆինանսատնտեսական գործունեության, գումարային կամ այլ արժեքների ստուգման (այդ

թվում՝ գույքագրման) ընթացքում, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել, եթե խախտումը կատարելու օրվանից անցել է ոչ ավելի, քան երեք տարի:
6. Կարգապահական տույժ նշանակելիս հաշվի են առնվում խախտման բնույթը, բովանդակությունը, այն հանգամանքները, որի պարագայում կատարվել է խախտումը, խախտման հետևանքները, նախկինում քաղաքացիական ծառայողի նկատմամբ կարգապահական տույժեր կիրառված լինելու և (կամ) խախտումներ կատարած լինելու հանգամանքները:
7. Կարգապահական տույժի մասին քաղաքացիական ծառայողին հաղորդվում է ոչ ուշ, քան կարգապահական տույժ նշանակելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:
8. Յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ: Սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված կարգապահական տույժը կրկին չի կարող կիրառվել, եթե կարգապահական տույժը հանված չէ, կամ չի լրացել սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված ժամկետը:
9. Եթե քաղաքացիական ծառայողը թեթև կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում, նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, իսկ խիստ կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա նա համարվում է կարգապահական տույժի չենթարկված:
10. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգապահական տույժերը քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:
11. Քաղաքացիական ծառայողն իր նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու, պաշտոնից ազատելու կամ ծառայությունը դադարեցնելու մասին որոշումը կարող է բողոքարկել պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի անմիջական ղեկավարին կարգապահական տույժ կիրառելու մասին, պաշտոնից ազատելու կամ ծառայությունը դադարեցնելու մասին որոշմանը ծանուցվելու օրվանից հաշված՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:
12. Սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված կարգով բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող ակտի կատարումը:
13. Սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված բողոքարկման կարգը չի տարածվում քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները խախտելու, հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու, շահերի բախման կանոնները խախտելու, նվերներ ընդունելու արգելքը խախտելու դեպքերում կիրառված կարգապահական տույժերի վրա: Նշված դեպքերում կիրառված կարգապահական տույժերը բողոքարկվում են դատական կարգով:
14. Քննարկելով բերված բողոքը՝ իրավասու պաշտոնատար անձն իրավասու է՝
1) բավարարելու բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ փոփոխել կարգապահական տույժի տեսակը կամ ճանաչել կարգապահական տույժ կիրառելու մասին կամ պաշտոնից ազատելու կամ ծառայությունը դադարեցնելու մասին որոշումն անվավեր.
2) մերժել բողոքը՝ կարգապահական տույժ կիրառելու մասին կամ պաշտոնից ազատելու կամ ծառայությունը դադարեցնելու մասին որոշումը թողնելով անփոփոխ:
15. Քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատելու կամ ծառայությունը դադարեցնելու մասին որոշումն անվավեր ճանաչվելու դեպքում քաղաքացիական ծառայողը վերականգնվում է իր պաշտոնում վարչական կամ

դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, և հարկադիր պարապուրդի դիմաց ստանում է հատուցում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով:
16. Քաղաքացիական ծառայողն իր նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու, այդ թվում՝ քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատելու կամ ծառայությունը դադարեցնելու մասին որոշումը կարող է բողոքարկել դատական կարգով:
17. Քաղաքացիական ծառայողների նկատմամբ սույն օրենքով սահմանված կարգով կարող է կիրառվել նյութական պատասխանատվություն՝ օրենքով սահմանված չափով:

Հոդված 22. Ծառայողական քննությունը

1. Սույն օրենքով նախատեսված դեպքերում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն նշանակում է ծառայողական քննություն՝ նշելով ծառայողական քննության անցկացման հիմքերը, պարզաբանման ենթակա հարցերը և անցկացման եղանակը:
2. Քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումների, շահերի բախման, նվերներ ընդունելու արգելքի վերաբերյալ հարցերի ուսումնասիրության համար նշանակված ծառայողական քննությունն անցկացնում է քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովը:
3. Քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումների, շահերի բախման, նվերներ ընդունելու արգելքի վերաբերյալ այլ անձի դիմումի և (կամ) լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա ծառայողական քննություն նշանակում է գլխավոր քարտուղարը:
4. Ծառայողական քննության անցկացման ժամանակ անհրաժեշտության դեպքում ծառայողական քննություն նշանակած պաշտոնատար անձը, իր որոշմամբ, կարող է ներգրավել ծառայողական քննության արդյունքներով չշահագրգռված մասնագետ՝ խորհրդատվություն տրամադրելու համար:
5. Ծառայողական քննություն անցկացնելու ընթացքում քաղաքացիական ծառայողի (քաղաքացիական ծառայողների) ծառայողական պարտականությունների կատարումը ծառայողական քննություն անցկացնելու ժամկետում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարող է կասեցնել՝ պահպանելով քաղաքացիական ծառայողի վարձատրությունը:
6. Ծառայողական քննության նյութերում հանցագործությունների և (կամ) զանցանքների հատկանիշներ հայտնաբերելու դեպքերում այդ մասին հայտնվում է համապատասխան պետական մարմիններին, և ծառայողական քննությունը կասեցվում է:
7. Ծառայողական քննության արդյունքով ծառայողական քննություն վարողը պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին ներկայացնում է եզրակացություն, որն առնվազն ներառում է ծառայողական քննությամբ պարզված հանգամանքները և դրանց վերաբերյալ հետևությունները, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան առաջարկություններ և դրանց վերաբերյալ հիմնավորումներ:
8. Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար **եզրակացությունը ստանալուց** հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, քննարկում է

եզրակացությունը և ընդունում համապատասխան որոշում, բացառությամբ սույն օրենքի 35-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:
9. Ծառայողական քննություն անցկացնելու կարգը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 33. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովը

1. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի կազմում ընդգրկվելու համար համապատասխան մարմինների գլխավոր քարտուղարները քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում լրացնում են համակարգող փոխվարչապետի սահմանած պահանջները բավարարող երկու քաղաքացիական ծառայողի թեկնածություն: Գլխավոր քարտուղարը չի կարող լինել էթիկայի հանձնաժողովի անդամ:
«1.1 Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովը ձևավորվում է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով սահմանված կարգով:»:
2. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովը բաղկացած է հինգ անդամից: Յուրաքանչյուր դեպքի համար ձևավորվում է քաղաքացիական ծառայողների էթիկայի առանձին հանձնաժողով:
3. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողով ձևավորելու իրավական հիմք առաջանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան մարմնի բարեվարքության հարցերով կազմակերպիչը էլեկտրոնային ծրագրի միջոցով պատահականության սկզբունքով ձևավորում է քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողով՝ կազմում պարտադիր ընդգրկելով տվյալ մարմնի՝ քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի անդամի թեկնածուներից մեկին: Էլեկտրոնային ծրագիրը պատահականության սկզբունքով պաշտոնով ավելի բարձր քաղաքացիական ծառայողին ընտրում է քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի նախագահ: Տվյալ մարմնի ներկայացուցիչը չի կարող լինել քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի նախագահ:
4. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի անդամն իր լիազորություններն իրականացնելիս ենթարկվում է միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին, անկախ է իրեն առաջադրած պաշտոնատար անձից:
5. Քաղաքացիական ծառայողը, որպես հանձնաժողովի անդամ և դրանից հետո, չի կարող կարգապահական պատասխանատվության ենթարկվել իր՝ որպես հանձնաժողովի անդամի կարգավիճակից բխող գործողությունների համար, բացառությամբ անհարգելի պատճառով հանձնաժողովի աշխատանքից բացակայելու դեպքերի:

Հոդված 37. Քաղաքացիական ծառայողին պաշտոնից ազատելու և ծառայության դադարման հիմքերը

1. Քաղաքացիական ծառայողին պաշտոնից ազատելու հիմքերն են՝
1) անձնական դիմումը.

2) հաստիքների և (կամ) սույն օրենքի 23-րդ հոդվածով սահմանված դեպքում քաղաքացիական ծառայության պաշտոնի կրճատումը.
3) սույն օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերում քաղաքացիական ծառայության պաշտոնի չնշանակվելը.
4) քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատելու կամ ծառայությունը դադարեցնելու որոշումն անվավեր ճանաչելը և անձին քաղաքացիական ծառայության իր պաշտոնում վերականգնելը.
5) համապատասխան մարմնի գործունեության դադարումը.
6) սույն օրենքի 23-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված դեպքում քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակվելուն համաձայնություն չտալը.
7) հանրային պաշտոնում ընտրվելը կամ նշանակվելը:
2. Քաղաքացիական ծառայողի լիազորությունները դադարում են՝
1) նրա մահվան դեպքում.
2) սույն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված կարգապահական տույժը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելու դեպքում.
3) սույն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված կարգապահական տույժերը մեկ տարվա ընթացքում կիրառելու դեպքում.
4) սույն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված կարգապահական տույժը կիրառելու դեպքում.
5) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան չորս ամիս անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում ավելի քան ~~140~~ **80** օր աշխատանքի չներկայանալու դեպքում՝ չհաշված հղիության և ծննդաբերության արձակուրդը.
6) սույն օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու դեպքում.
7) քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակելու՝ սույն օրենքով սահմանված կարգի խախտումը՝ քաղաքացիական ծառայության գրասենյակի միջնորդությամբ.
8) «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու դեպքերում՝ համապատասխան եզրակացության հիման վրա.
9) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու դեպքում.
10) ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք: Անձի կողմից տուգանքի վճարման ժամանակացույցով սահմանված պարտավորությունների կատարումը խախտելու դեպքում տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինվելու դեպքում ծառայությունը դադարեցվում է.
11) քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու՝ սույն օրենքով սահմանված առավելագույն տարիքը լրանալու դեպքում.
12) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում.
13) դատական կարգով քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկվելու դեպքում.
14) Կառավարության հաստատած հիվանդություններից որևէ մեկով հիվանդանալու դեպքում.

15) կադրերի ռեզերվից հանվելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ քաղաքացիական ծառայողը զբաղեցնում է հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն.
16) երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում.
17) անձնական դիմումի համաձայն:
3. Երկու տարի անընդմեջ կատարողականի տարեկան գնահատման արդյունքները Կառավարության սահմանած տոկոսից (միավորից) ցածր լինելու դեպքում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն իրավունք ունի դադարեցնելու քաղաքացիական ծառայողի լիազորությունները:
4. Քաղաքացիական ծառայողի ծառայությունը չի կարող դադարեցվել սույն հոդվածի 2-րդ մասի 17-րդ կետով, եթե առկա է 1-16-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկը:
5. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և սույն հոդվածի 2-րդ մասի 17-րդ կետով նախատեսված հիմքերով քաղաքացիական ծառայողն ազատվում է զբաղեցրած պաշտոնից, կամ դադարեցվում է ծառայությունը դիմում ներկայացնելուց հետո՝ երրորդ աշխատանքային օրը, եթե այդ դիմումում ավելի ~~ուշ~~ **շուտ** ժամկետ նախատեսված չէ: Մինչև համապատասխան իրավական ակտի ընդունումը քաղաքացիական ծառայողը կարող է հետ վերցնել ներկայացրած դիմումը:
6. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերի (բացառությամբ 17-րդ կետով նախատեսված հիմքի) ի հայտ գալու դեպքում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը երկու աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է քաղաքացիական ծառայողի լիազորությունները դադարելու մասին համապատասխան իրավական ակտ:
7. Սույն հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերով նախատեսված հիմքերով քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատելու դեպքում քաղաքացիական ծառայողներին այդ մասին նախազգուշացնելը պարտադիր չէ:
8. Սույն հոդվածի 2-րդ մասի 2-4-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով ծառայությունը դադարեցրած անձը մինչև մեկ տարին լրանալը չի կարող մասնակցել քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի մրցույթին:
9. Մինչև քաղաքացիական ծառայության զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին կամ լիազորությունները դադարելու մասին իրավական ակտն ընդունելը համապատասխան մարմինը քաղաքացիական ծառայողից պահանջում է նրա գործավարությանը հանձնված նյութերը և օգտագործմանը տրամադրված գույքը: Քաղաքացիական ծառայողը պարտավոր է անհապաղ կատարել այդ պահանջը:

Հոդված 38. Քաղաքացիական ծառայության կազմակերպումը և ղեկավարումը

1. Քաղաքացիական ծառայության ղեկավարումը, միասնականությունը սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ապահովում է վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը:
2. Քաղաքացիական ծառայության գրասենյակը հաշվետու է վարչապետին, Կառավարությանը և համակարգող փոխվարչապետին:
3. Քաղաքացիական ծառայության գրասենյակը՝
1) իրականացնում է համապատասխան մարմինների մարդկային ռեսուրսների կառավարման մեթոդական ղեկավարումը և վերահսկողությունը.

2) ուսումնասիրում և վերլուծում է համապատասխան մարմիններում հանրային ծառայության օրենսդրության կիրառման պրակտիկան, մշակում և Կառավարության, վարչապետի և համակարգող փոխվարչապետի քննարկմանն է ներկայացնում հանրային ծառայությանն առնչվող համապատասխան իրավական ակտերի նախագծերը.
3) իրականացնում է վերլուծություններ՝ բացահայտելու հոսունության դինամիկան, դրան նպաստող պայմանները, հայտարարված մրցույթներին դիմորդներ չլինելու պատճառները, այդ թվում՝ պաշտոնների սխալ գնահատումը, չափանիշների սահմանումը, ենթախմբերի դասակարգումը.
4) մշակում է պետական մարմիններում աշխատանքի վարձատրության քաղաքականությունը.
5) Կառավարության սահմանած կարգով իրականացնում է աշխատանքի շուկայի վերլուծություն՝ ըստ մասնագիտությունների և տարածքների.
6) իրականացնում է կատարողականի գնահատման արդյունքների մոնիտորինգ և կատարում համապատասխան վերլուծություններ.
7) իրականացնում է վերապատրաստման արդյունքների ուսումնասիրություն և վերլուծություն.
8) ~~Կառավարություն~~ առաջարկություններ է ներկայացնում համապատասխան մարմինների վերակազմակերպման, գործունեության դադարման, կառուցվածքային փոփոխությունների ժամանակ քաղաքացիական ծառայության հետ կապված հարցերի վերաբերյալ.
9) ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում համապատասխան մարմիններ.
10) համապատասխան և այլ մարմիններից ստանում է քաղաքացիական ծառայության հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն.
11) անձնակազմի կառավարման աշխատանքների կազմակերպման մասով տալիս է մեթոդական ցուցումներ.
12) իրականացնում է սույն օրենքով, այլ օրենքներով, դրանցից բխող իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:
4. Քաղաքացիական ծառայության գրասենյակը, օրենքով սահմանված դեպքերում քաղաքացիական ծառայության որոշ ինստիտուտների, գործառույթների, ընթացակարգերի հետ կապված կարող է փորձարարական աշխատանքներ կազմակերպել համապատասխան մարմիններում:

Հոդված 39. Գլխավոր քարտուղարը

1. Գլխավոր քարտուղարը քաղաքացիական ծառայող է:
2. Համապատասխան մարմիններում մարդկային ռեսուրսների կառավարման, հանրային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման պատասխանատուն գլխավոր քարտուղարն է:
3. Գլխավոր քարտուղարի լիազորությունները սահմանվում են սույն օրենքով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով:

4. Սույն օրենքով սահմանված գլխավոր քարտուղարի լիազորություններն իրականացնում են օրենքով նախատեսված դեպքերում ~~քաղաքացիական ծառայող համարվող աշխատակազմի ղեկավարը,~~ դատական դեպարտամենտի ղեկավարը, վարչական պաշտոն զբաղեցնող աշխատակազմի ղեկավարը:
5. Անվտանգության խորհրդի գրասենյակում սույն օրենքով սահմանված՝ գլխավոր քարտուղարի լիազորություններն իրականացնում է Անվտանգության խորհրդի քարտուղարը, իսկ մարմնի ղեկավարին վերապահված լիազորությունները՝ վարչապետը:
«5.1 Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում սույն օրենքով սահմանված գլխավոր քարտուղարի լիազորությունները իրականացնում է Մարդու իրավունքների պաշտպանը:»:
6. Այն տեսչական մարմնում, որի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված չէ գլխավոր քարտուղարի պաշտոն, սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով, 10-րդ հոդվածի 5-րդ և 11-րդ մասերով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 19-րդ հոդվածի 3-րդ և 7-9-րդ մասերով, 22-րդ հոդվածի 3-րդ մասով, 30-րդ հոդվածի 6-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասով և 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված լիազորություններն իրականացնում է տեսչական մարմնի ղեկավարը: Տեսչական մարմնի օրենքով նախատեսված ստորաբաժանման ղեկավարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վարչապետի աշխատակազմի ղեկավարը:

Հոդված 44. Սույն օրենքից բխող իրավական ակտերն ընդունելը

1. Քաղաքացիական ծառայության գրասենյակի կազմավորումից հետո՝ մեկամսյա ժամկետում, վարչապետի հաստատմանն է ներկայացվում ժամանակացույց և միջոցառումների ծրագիր՝ սույն օրենքի գործողության ոլորտը սահմանված մարմինների վրա տարածելու համար:
2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, ընդունել սույն օրենքի կատարումն ապահովող Կառավարության որոշումները:
3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, ընդունել սույն օրենքի կատարումն ապահովող փոխվարչապետի որոշումները:
4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը, սույն օրենքին համապատասխանեցնել պետական ծառայության մյուս օրենքները՝ հիմք ընդունելով սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը, մասնավորապես առանձնահատկություններ են սահմանվում զինվորական ծառայություն անցնող պետական ծառայողների պաշտոնների, ~~ոստիկանության գործառույթներ~~ **ոստիկանությունում իրավապահ գործառույթներ** իրականացնող ոստիկանության ծառայողների պաշտոնների, փրկարարական ծառայության պաշտոնների, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պետական ծառայության պաշտոնների, քրեակատարողական ծառայության բարձրագույն խմբի պաշտոնների և ~~քրեակատարողական ծառայության հատուկ նշանակության ստորաբաժանման պաշտոնների~~, **քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի անվտանգության ապահովման, պահպանության ապահովման, օպերատիվ, հատուկ նշանակության, ուղեկցումների և ներքին անվտանգության ստորաբաժանումների պաշտոնների** հարկադիր կատարողների պաշտոնների,

դիվանագիտական ծառայության պաշտոնների, ~~հարկային մարմնում հետաքննչական, օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պաշտոնների, մաքսային մարմիններում իրավապահ գործառույթներ իրականացնող պաշտոնների, նախաբացթողումային հսկողություն, ներքին անվտանգության ապահովման գործառույթներ իրականացնող պաշտոնների, ինչպես նաև մաքսատան և մաքսակետի պաշտոնների~~, **պետական եկամուտների կազմակերպման և հսկողության, ստուգումների կազմակերպման և դիտարկման, ներքին աուդիտի, մաքսային հսկողության, հետբացթողումային հսկողության, մաքսանենգության դեմ պայքարի, քննչական, հետաքննության և օպերատիվ-հետախուզության, ներքին անվտանգության վարչությունների, փոքր հարկ վճարողների հարկային տեսչության-վարչության, խոշոր և միջին հարկ վճարողների հարկային տեսչության-վարչության, մաքսատուն-վարչության պաշտոնների,** դատական ծառայողների՝ դատավորի օգնականի, դատավորի գործավարի և դատական նիստերի քարտուղարի պաշտոնների, դատական կարգադրիչների ծառայության պաշտոնների համար:

5. Պետական ծառայողները համարվում են քաղաքացիական ծառայողներ: Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամանակացույցին համապատասխան՝ առանց մրցույթի նշանակվում են քաղաքացիական ծառայության համապատասխան պաշտոններում:

Հոդված 45. Գործառույթների իրականացման առանձնահատկությունները մինչև սույն օրենքով նախատեսված էլեկտրոնային ծրագրերը կազմելը

1. Մինչև սույն օրենքով նախատեսված էլեկտրոնային ծրագրերի կազմումը քաղաքացիական ծառայության գրասենյակը այդ գործընթացները կազմակերպում և գործառույթներն իրականացնում է ոչ էլեկտրոնային եղանակով՝ համակարգող փոխվարչապետի սահմանած կարգին համապատասխան:

2. Պաշտոնների դասակարգման և չափանիշների սահմանման սույն օրենքով սահմանված պահանջները համապատասխան մարմինների վրա տարածվում են համակարգող փոխվարչապետի սահմանած ժամանակացույցին համապատասխան: Մինչ նոր չափանիշներով պաշտոնների գնահատումներն իրականացնելը և չափանիշներ սահմանելը գործում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը հաստատված պաշտոնների անձնագրերը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամանակացույցին համապատասխան՝ պաշտոնների դասակարգման նոր համակարգին անցնելու դեպքում քաղաքացիական ծառայողները վերանշանակվում են իրենց պաշտոններում առանց մրցույթի և ժամկետային պայմանագրի, **բացառությամբ ժամկետային աշխատանքային պայմանագրով քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնողների:**

Հոդված 47. Իրավահաջորդության որոշ դրույթներ

1. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կիրառված խրախուսանքի (պարգևատրման), կարգապահական տույժի միջոցները պահպանում են իրենց իրավական հետևանքները և հաշվի են առնվում սույն օրենքով նախատեսված կարգապահական տույժեր և խրախուսանքի տեսակներ կիրառելիս:

2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը տրամադրված արձակուրդները պահպանում են իրենց իրավական հետևանքները: Նախկինում չօգտագործված և տեղափոխված արձակուրդները պահպանվում են և տրամադրվում են մինչ սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող կարգին համապատասխան:
3. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը հրապարակված մրցույթներն անցկացվում են մրցույթի հրապարակման ժամանակ գործող կարգին համապատասխան:
4. Պետական ծառայության պաշտոններում օրենքով սահմանված կարգով փոխարինող և (կամ) պայմանագրով պաշտոն զբաղեցնող և (կամ) ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնող անձինք շարունակում են իրենց պարտականությունների կատարումը մինչև տվյալ պաշտոնների համար սահմանված հիմքերի վերացումը, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:
5. Վերապատրաստման, ատեստավորման (կատարողականի գնահատման) հարաբերությունների իրավական հետևանքները, ինչպես նաև արդեն իսկ նախատեսված և իրականացվող գործողությունները պահպանում են իրենց իրավական ուժը:
6. Ստացած դասային աստիճանները, կոչումները պահպանվում են:
7. Կրտսեր պաշտոններ զբաղեցնելու համար գործող հավաստագիր ունեցող անձինք ընդգրկվում են վարկանիշային ցուցակներում՝ սույն օրենքով սահմանված կարգին համապատասխան:
8. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո այն մարմիններում, որոնց վրա սույն օրենքի գործողությունը տարածվելու է համաձայն սույն օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամանակացույցի, պետական ծառայողական հարաբերությունները կարգավորվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող կարգին համապատասխան:
9. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան վեց ամիս աշխատանքի չներկայանալու ժամկետները (չհաշված հղիության և ծննդաբերության արձակուրդի) հաշվարկվում են նաև սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո, և իրավական հետևանքներն առաջանում են սույն օրենքով սահմանված ժամկետները լրանալու դեպքերում:
10. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը նախատեսված վերապատրաստումները կազմակերպվում և անցկացվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող կարգին համապատասխան:
11. Պաշտոնների դասակարգման նոր համակարգին անցնելը ծառայությունը դադարեցնելու հիմք չէ: Քաղաքացիական ծառայողը վերանշանակվում է ~~նոր պաշտոնին: Նոր պաշտոնի նշանակվելը~~ **իր պաշտոնում, որը** չի հանգեցնում քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետների վերահաշվարկի:
12. Պաշտոնների դասակարգման նոր համակարգին անցնելիս քաղաքացիական ծառայողը պահպանում է իր աշխատավարձը **(հիմնական աշխատավարձը, հավելավճարը, օրենքով նախատեսված դեպքում և կարգով՝ նաև լրավճարը)** , եթե նոր դասակարգմամբ լինի պաշտոնի ենթախմբի ~~(սանդղակի մակարդակի)~~ իջեցում:
«12.1. Պաշտոնների դասակարգման նոր համակարգին անցնելիս, եթե նոր դասակարգման արդյունքում քաղաքացիական ծառայողի պաշտոնի ենթախումբը բարձրանում է, ապա քաղաքացիական ծառայողի հիմնական աշխատավարձը

որոշվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով:».

1~~3. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը դասային աստիճանի համար հաշվարկվող հավելավճարը տրվում է տվյալ պաշտոնն զբաղեցնելու ժամանակահատվածում: Պաշտոնի փոփոխության դեպքում հավելավճարը չի հաշվարկվում:~~

«13. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը դասային աստիճանի համար հաշվարկվող հավելավճարը տրվում է տվյալ պաշտոնը զբաղեցնելու ժամանակահատվածում, բացառությամբ այն դեպքերի, երբ պաշտոնի դասակարգման արդյունքում պաշտոնի ենթախումբը բարձրանում է: Պաշտոնի փոփոխության, ինչպես նաև պաշտոնի դասակարգման արդյունքում պաշտոնի ենթախմբի բարձրացման դեպքերում հավելավճարը չի հաշվարկվում:»:

14. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողները համարվում են քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից վարվող կադրերի ռեզերվում գրանցված և ստանում են սահմանված վարձատրությունը մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը սահմանված ժամկետով:

15. «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-272 օրենքի ուժը կորցնելը հիմք չէ քաղաքացիական ծառայության պաշտոններից ազատելու համար, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

16. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո պետական ծառայողին սույն օրենքով սահմանված կարգով քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակելու դեպքում համապատասխան ծառայողի համար վերջին պաշտոնում սահմանված ~~պաշտոնային դրույքաչափը~~ **հիմնական աշխատավարձը և հավելավճարը** «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պահպանվում է, **եթե քաղաքացիական ծառայության պաշտոնում նշանակվելուց հետո օրենքով սահմանված կարգով նրա համար հաշվարկված հիմնական աշխատավարձը ցածր է լինում տվյալ պետական ծառայողի համար վերջին պաշտոնում սահմանված հիմնական աշխատավարձի և հավելավճարի հանրագումարից**:

17. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ~~քաղաքացիական (պետական)~~ **պետական** ծառայողին սույն օրենքով սահմանված կարգով քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակելու դեպքում, որը պայմանավորված է պաշտոնների դասակարգման նոր համակարգին անցնելով, համապատասխան ծառայողի համար վերջին պաշտոնում սահմանված ~~պաշտոնային դրույքաչափը~~ **հիմնական աշխատավարձը և հավելավճարը** «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պահպանվում է, **եթե քաղաքացիական ծառայության պաշտոնների դասակարգման նոր համակարգին անցնելուց հետո օրենքով սահմանված կարգով նրա համար հաշվարկված հիմնական աշխատավարձը ցածր է լինում տվյալ պետական ծառայողի համար վերջին պաշտոնում (մինչև քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակվելը) սահմանված հիմնական աշխատավարձի և հավելավճարի հանրագումարից**:

18. Եթե պետական ծառայողի նշանակումը պայմանավորված չէ սույն հոդվածի 16-17-րդ մասերով նախատեսված պայմաններով, ապա նրա համար պաշտոնային դրույքաչափը որոշվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդհանուր կարգով:
19. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով քաղաքացիական հատուկ ծառայողների համար սահմանված հավասարեցումը տարածվում է այդ մարմինների քաղաքացիական ծառայողների վրա:
20. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով զինծառայողների համար սահմանված արտոնությունները գործում են քաղաքացիական ծառայող դառնալուց հետո այն կարգավորումներով, ինչ նախատեսված է քաղաքացիական հատուկ ծառայողների համար:
21. Քաղաքացիական ծառայության ստաժում չեն ներառվում համապատասխան մարմիններում քաղաքացիական աշխատանքը և տեխնիկական սպասարկում իրականացնելու ժամանակահատվածները:
22. Քաղաքացիական ծառայության խորհրդի մասնակցությամբ դատական գործերում սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո դատական ներկայացուցչության հարցերը սահմանում է Կառավարությունը՝ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔ

Հոդված 5. Պետական մարմնի քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակցությունը, գույքը

1. Պետական մարմինը, օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նաև ենթակա պետական մարմինը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության անունից իր գործողություններով կարող են ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ ու պարտականություններ:
2. Պետական մարմինը, ենթակա պետական մարմինը չեն կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն:
3. Պետական մարմնի, ենթակա պետական մարմնի կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների համար կարող է գանձվել միայն պետական տուրք՝ օրենքով սահմանված չափով և կարգով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
4. Պետական մարմինը, օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նաև ենթակա պետական մարմինն ունեն ինքնուրույն հաշվեկշիռ:
5. Պետական մարմնի, օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նաև ենթակա պետական մարմնի գույքը ձևավորվում է օրենսդրությամբ սահմանված կարգով՝ նրա տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից:
6. Պետական մարմնի գույքը հանձնվում է իրավական ակտին համապատասխան, որը Կառավարության սահմանած կարգով հաշվառվում է նրա հաշվեկշռում:
7. Սույն օրենքով սահմանված կառավարման լիազորություն ունեցող սահմանադրական մարմինը, պաշտոնատար անձն իրավունք ունեն հետ վերցնելու պետական մարմնին, ենթակա պետական ~~մարմնին հանձնված գույքը~~ **մարմնի համար ձեռք բերված գույքը և այն հանձնել պետական այլ մարմնին կամ Կառավարությանը** :
8. Պետական մարմինը, ենթակա պետական մարմինը, սույն օրենքով և իրենց կանոնադրության համաձայն, իրենց գործունեության նպատակներին և գույքի նշանակությանը համապատասխան, պետք է օգտագործեն, տիրապետեն, իսկ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ տնօրինեն իրենց հանձնված գույքը:
9. Պետական մարմնի, ենթակա պետական մարմնի պահպանման և լիազորությունների իրականացման հետ կապված ծախսերը ֆինանսավորվում են պետական բյուջեի և (կամ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված միջոցներից:
10. Պետական մարմնի, օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նաև ենթակա պետական մարմնի ֆինանսական գործառնություններն իրականացվում են գանձապետական համակարգի միջոցով:

11. Պետական մարմնի, օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նաև ենթակա պետական մարմնի կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:
12. Պետական մարմնի, օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նաև ենթակա պետական մարմնի պարտավորությունների համար պատասխանատվությունը կրում է Հայաստանի Հանրապետությունը:
13. Պետական մարմինը, ենթակա պետական մարմինը իրենց իրավասության սահմաններում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դատարանում կարող են հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
14. Պետական մարմինը, ենթակա պետական մարմինը կարող են ունենալ Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և իրենց անվանմամբ կլոր կնիք և անհատականացման միջոցներ:

Հոդված 6. Պետական մարմնի, ենթակա պետական մարմնի կառուցվածքը

1. Պետական մարմնի կառուցվածքում ընդգրկվում են պետական մարմնի ղեկավարի, պետական մարմնի ղեկավարի տեղակալի (կոլեգիալ մարմինների դեպքում՝ կոլեգիալ մարմնի անդամների), գլխավոր քարտուղարի պաշտոնները, կառուցվածքային ստորաբաժանումները, օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ գրասենյակը, օրենքով նախատեսված դեպքերում՝ պետական մարմնի ղեկավարի խորհրդականի, մամուլի քարտուղարի, օգնականի, ռեֆերենտի, պետական մարմնի ղեկավարի տեղակալի օգնականի, օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև գլխավոր քարտուղարի տեղակալի պաշտոնները:
2. Ենթակա պետական **մարմնի** կառուցվածքում ընդգրկվում են ենթակա պետական մարմնի ղեկավարի, ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալի, ենթակա պետական մարմնի ղեկավարի օգնականի, խորհրդականի (եթե օրենքով նման պաշտոն նախատեսված է), ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալի օգնականի պաշտոնները, կառուցվածքային ստորաբաժանումները, օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ գրասենյակը, գլխավոր քարտուղարի, օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև գլխավոր քարտուղարի տեղակալի պաշտոնները:

Հոդված 12. Գլխավոր քարտուղարը

1. Պետական մարմինն իր իրավասության սահմաններում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, ինչպես նաև քաղաքացիաիրավական այլ պարտականություններ է ձեռք բերում և իրականացնում է գլխավոր քարտուղարի միջոցով:
2. Գլխավոր քարտուղարն օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատու է պետական մարմնի լիազորությունների իրականացման կազմակերպական, անձնակազմի կառավարման, ֆինանսատնտեսական գործառույթների իրականացման և քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակցության համար:
3. Աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն անմիջական հաշվետու են գլխավոր քարտուղարին:
4. Գլխավոր քարտուղարն օրենքով սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում պետությանը իր մեղքով պատճառած վնասի համար:

Գլխավոր քարտուղարի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար: Գլխավոր քարտուղարի լիազորությունները դադարեցնող անձը պարտավոր է լուծել նաև նրա՝ պետությանը պատճառած վնասի հատուցման հարցը: Սույն պահանջը չկատարելու հետևանքով պետությանը պատճառած վնասը հատուցում է սույն մասի պահանջը խախտած անձը:
5. Գլխավոր քարտուղարը՝
1) առանց լիազորագրի՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմաններում հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից և ներկայացնում նրա շահերը, կնքում է գործարքներ, իր իրավասությանը վերապահված հարցերով տալիս է լիազորագրեր.
2) օրենքով, այլ իրավական ակտերով և կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է պետական մարմնին ամրացված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.
3) օրենքով նախատեսված դեպքերում նշանակում և ազատում է պետական մարմնի համապատասխան աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.
4) կառավարման լիազորություններ ունեցող սահմանադրական մարմին (պաշտոնատար անձին) է ներկայացնում պետական մարմնի տարեկան հաշվեկշիռը, եթե պետական մարմնի կանոնադրությամբ նախատեսված չէ այն ներկայացնել պետական մարմնի ղեկավարին.
5) պետական մարմնի ղեկավարին է ներկայացնում առաջարկություններ պետական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների և գրասենյակների աշխատանքների կազմակերպական հարցերի վերաբերյալ.
6) պետական մարմնի ղեկավարին է ներկայացնում աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության հաշվետվությունները և մյուս ստորաբաժանումների և գրասենյակների մասով՝ իր իրավասության շրջանակներին վերաբերող տեղեկատվություն, իսկ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հաշվետվություն.
7) իր համակարգման լիազորությունների շրջանակներում համագործակցում է պետական մարմնի ղեկավարի տեղակալի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների հետ.
8) իր համակարգման լիազորությունների շրջանակներում պետական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներին, գրասենյակներին, ենթակա պետական մարմիններին, կազմակերպություններին և հիմնարկներին փոխանցում է պետական մարմնի ղեկավարի հանձնարարականները կամ իր համակարգման լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում հսկողություն՝ արդյունքների մասին տեղեկացնելով պետական մարմնի ղեկավարին.
9) անհրաժեշտության դեպքում կնքում է կառուցվածքային ստորաբաժանումների պատրաստած, ինչպես նաև իր և (կամ) պետական մարմնի ղեկավարի և (կամ) պետական մարմնի ղեկավարի տեղակալի անունից պատրաստված փաստաթղթերը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:
6. Գլխավոր քարտուղարը կարող է ունենալ տեղակալ, որը փոխարինում է նրան բացակայության ժամանակ: Գլխավոր քարտուղարը իր տեղակալի անմիջական ղեկավարն է: Գլխավոր քարտուղարի տեղակալն անմիջական հաշվետու է գլխավոր քարտուղարին: Գլխավոր քարտուղարի տեղակալների թիվը սահմանում է վարչապետը:

7. Սույն օրենքով սահմանված՝ գլխավոր քարտուղարի լիազորություններն իրականացնում են օրենքով նախատեսված դեպքերում ~~քաղաքացիական ծառայող համարվող աշխատակազմի ղեկավարը,~~ դատական դեպարտամենտի ղեկավարը, վարչական պաշտոն զբաղեցնող աշխատակազմի ղեկավարը, Մարդու իրավունքների պաշտպանի ~~աշխատակազմի քարտուղարը~~ **աշխատակազմի գլխավոր քարտուղարը:**

Հոդված 21. Պետական մարմնի, ենթակա պետական մարմնի կառուցվածքային փոփոխությունը

1. Պետական մարմնի կառուցվածքային փոփոխությունն իրականացվում է կառուցվածքային ստորաբաժանումների **ստեղծման,** միաձուլման, միացման, առանձնացման, բաժանման, վերակազմավորման կամ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության դադարեցման եղանակներով:
2. Կառուցվածքային փոփոխություն իրականացվում է համապատասխանաբար պետական մարմնի կանոնադրության փոփոխությամբ պայմանավորված գործառույթների փոփոխության**, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանման օպտիմալացման և հաստիքների կրճատման** դեպքում:
3. Կառուցվածքային փոփոխություն կարող է իրականացվել նաև աշխատանքների փորձարարական կազմակերպման համար: Աշխատանքների փորձարարական կազմակերպման համար կառուցվածքային ստորաբաժանման կարգավիճակի համար աշխատանքների փորձարարական կազմակերպման ծրագրով կարող են նախատեսվել կառուցվածքի՝ սույն օրենքով սահմանված չափանիշներից տարբերվող այլ չափանիշներ:
4. Պետական մարմնի, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանման կամ գրասենյակի անվանումներն առանց կառուցվածքային փոփոխություն իրականացնելու կարող են փոփոխվել, որն աշխատանքային հարաբերությունների դադարման հիմք չէ:
5. Ենթակա պետական մարմնի, մարզպետարանի կառուցվածքային փոփոխությունն իրականացվում է սույն հոդվածի 1-4-րդ մասերով սահմանված կարգով:
6. Վերադաս մարմնի փոփոխության դեպքում աշխատանքային հարաբերությունները չեն դադարում, բացառությամբ հանրային պաշտոններ զբաղեցնող պաշտոնատար անձանց:
7. Գրասենյակի կառուցվածքային փոփոխությունը և անվանափոխությունն իրականացվում են սույն հոդվածի 1-4-րդ մասերով սահմանված կարգով:

Հոդված 22. Պետական մարմնի վերակազմակերպումը

1. Պետական մարմինը վերակազմակերպվում՝ միաձուլվում, միացվում, բաժանվում, առանձնացվում, վերակազմավորվում է օրենքով, ~~իսկ տեսչական մարմինների դեպքում՝ Կառավարության որոշմամբ~~:
2. Պետական մարմինը, բացառությամբ միացման ձևով վերակազմակերպման դեպքի, վերակազմակերպված է համարվում նոր ստեղծված պետական մարմնի (մարմինների) կանոնադրությունն ուժի մեջ մտնելու պահից:
3. Պետական մարմինն այլ պետական մարմնի հետ միացման ձևով վերակազմակերպվելիս նրանք համարվում են վերակազմակերպված՝ միացած պետական մարմնի գործունեությունը դադարելու վերաբերյալ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

4. Բացառությամբ առանձնացման և միացման դեպքերի, վերակազմակերպված պետական մարմնի կանոնադրությունն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցնում են նախկին պետական մարմինների կանոնադրությունները:
5. Վերակազմակերպման արդյունքով պետական մարմնի գործունեությունը դադարած է համարվում նույն պահից, իսկ նրա իրավունքներն ու պարտավորությունները փոխանցվում են այլ պետական մարմնի՝ վերակազմակերպման մասին իրավական ակտին համապատասխան:
6. Սույն հոդվածով սահմանված կանոնակարգումները տարածվում են նաև ենթակա պետական մարմինների և մարզպետարանների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2005 թվականի հուլիսի 8-ին

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

~~**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**~~

~~Սույն օրենքը կարգավորում է քրեակատարողական գործառույթներ իրականացնող պետական լիազոր մարմնում քրեակատարողական ծառայության (այսուհետ՝ քրեակատարողական ծառայություն) հիմնական սկզբունքները, քրեակատարողական ծառայության մարմինների և հիմնարկների համակարգը, դրանց գործունեության կազմակերպման հիմունքները, ծառայություն անցնելու կարգը և պայմանները, պաշտոնների ու կոչումների դասակարգումը, ծառայողների իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, իրավական ու սոցիալական երաշխիքները, ծառայության հետ կապված այլ հարաբերություններ:~~

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է քրեակատարողական գործառույթներ իրականացնող պետական լիազոր մարմնում քրեակատարողական ծառայության (այսուհետ՝ քրեակատարողական ծառայություն) մարմինների և հիմնարկների համակարգը, դրանց գործունեության կազմակերպման հիմունքները, ինչպես նաև քրեակատարողական ծառայության, որպես պետական ծառայության առանձին տեսակի առանձնահատկությունները:

Հոդված 2. Քրեակատարողական ծառայությունը

1. Քրեակատարողական ծառայությունն ապահովում է սույն օրենքով նախատեսված խնդիրների իրականացումը:

2. ***(պարբերությունն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-282-Ն)***

Մարզպետները քրեակատարողական ծառայության գործունեության համակարգման լիազորություններ չունեն:

3. ~~Քրեակատարողական ծառայությունում ծառայությունը պետական ծառայության հատուկ տեսակ է, որի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով:~~

Քրեակատարողական ծառայությունում ծառայող քաղաքացին պետական ծառայող է:

~~3.1. Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայությունը (այսուհետ՝ քաղաքացիական հատուկ ծառայություն) պետական ծառայության տեսակ է:~~

~~Քաղաքացիական հատուկ ծառայությունը քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունից անկախ մասնագիտական գործունեություն է՝ ուղղված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ քրեակատարողական ծառայությանը վերապահված առանձին խնդիրների և գործառույթների իրականացմանը:~~

~~Քրեակատարողական ծառայության խնդիրների և պաշտոնների առանձնահատկություններից ելնելով՝ սույն օրենքով սահմանված կարգով քաղաքացիական հատուկ ծառայության կարող են անցնել Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:~~

4. Քրեակատարողական ~~ծառայությունում~~ ծառայությունն իրականացվում է օրինականության, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության ու հրապարակայնության սկզբունքների պահպանմամբ՝ միանձնյա ու կենտրոնացված ղեկավարման միջոցով:

5. Քրեակատարողական ծառայությունն իրականացվում է՝

~~1) համապատասխան նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում (այսուհետ՝ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմին).~~

1) համապատասխան նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի (այսուհետ՝ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմին) հատուկ նշանակության ստորաբաժանումում

2) ***(կետն ուժը կորցրել է 08.04.08 ՀՕ-11-Ն)***

3) համապատասխան նախարարության քրեակատարողական հիմնարկներում (այսուհետ՝ քրեակատարողական հիմնարկ):

6. Կառավարության որոշմամբ կարող են ստեղծվել դատապարտյալների սոցիալ-հոգեբանական վերականգնման, գիտահետազոտական, բուժական, կրթական և այլ պետական ոչ առևտրային կազմակերպություններ:

7. Քրեակատարողական ծառայողի և քաղաքացիական ծառայողի զինվորական հաշվառումն իրականացնում է քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմինը՝ Կառավարության սահմանած կարգով:

Հոդված 3. Քրեակատարողական ծառայության մասին օրենսդրությունը

1. Քրեակատարողական ծառայության մասին օրենսդրությունը բաղկացած է Սահմանադրությունից, սույն օրենքից, **«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքից,** այլ օրենքներից և իրավական ակտերից, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

~~3. Քրեակատարողական ծառայողների և քաղաքացիական ծառայողների աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ, եթե քրեակատարողական ծառայության և քաղաքացիական հատուկ ծառայության մասին օրենսդրությամբ այդ հարաբերությունները կարգավորող առանձնահատկություններ սահմանված չեն:~~

3. Քրեակատարողական ծառայողների աշխատանքային հարաբերություններին վերաբերող հարցերը, որոնք կարգավորված չեն սույն օրենքով կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով և «Հանրային ծառայության մասին» օրենքով:»

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավական ակտերով այդ հարաբերությունները կարգավորված չլինելու դեպքում դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ:

5. Քրեակատարողական ծառայողների բարեվարքության համակարգի և այս իրավակարգավորումներից բխող այլ հարաբերություններ, որոնք պարտադիր են քրեակատարողական ծառայողների համար, կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

6. Սույն օրենքը քրեակատարողական ծառայայության պետի և նրա տեղակալների վրա տարածվում է միայն սույն օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում:

~~Հոդված 9. Քրեակատարողական ծառայության պաշտոնները և քրեակատարողական ծառայությանպաշտոնների անվանացանկը~~

~~1. Քրեակատարողական ծառայության պաշտոններն աստիճանական համակարգով՝ բարձրից ցածր, դասակարգվում են ըստ բարձրագույն, գլխավոր, առաջատար, միջին և կրտսեր խմբերի: Յուրաքանչյուր խմբի պաշտոնները նույնպես դասակարգվում են աստիճանական համակարգով՝ բարձրից ցածր: Նույն աստիճանի պաշտոնները բերված են ստորև նույն տողում՝~~

~~1) քրեակատարողական ծառայության բարձրագույն խմբի պաշտոններ՝~~

~~ա. քրեակատարողական ծառայության պետ,~~

~~բ. քրեակատարողական ծառայության պետի առաջին տեղակալ,~~

~~գ. քրեակատարողական ծառայության պետի տեղակալ.~~

~~2) քրեակատարողական ծառայության գլխավոր խմբի պաշտոններ՝~~

~~ա. քրեակատարողական հիմնարկի պետ, քրեակատարողական ծառայության բաժնի պետ,~~

~~բ. քրեակատարողական հիմնարկի պետի տեղակալ, քրեակատարողական հիմնարկի պատասխանատու հերթապահ, քրեակատարողական ծառայության բաժնի պետի տեղակալ, քրեակատարողական ծառայությանբաժանմունքի պետ.~~

~~3) քրեակատարողական ծառայության առաջատար խմբի պաշտոններ՝~~

~~ա. քրեակատարողական ծառայության գլխավոր մասնագետ, քրեակատարողական հիմնարկի բաժնի պետ,~~

~~բ. քրեակատարողական հիմնարկի բաժնի պետի տեղակալ, քրեակատարողական հիմնարկի բաժանմունքի պետ, քրեակատարողական հիմնարկի տեղամասի պետ,~~

~~գ. քրեակատարողական հիմնարկի խմբի ղեկավար,~~

~~դ. քրեակատարողական հիմնարկի գլխավոր մասնագետ.~~

~~4) քրեակատարողական ծառայության միջին խմբի պաշտոններ՝~~

~~ա. քրեակատարողական ծառայության առաջատար մասնագետ,~~

~~բ. քրեակատարողական ծառայության առաջին կարգի մասնագետ, քրեակատարողական հիմնարկի առաջատար մասնագետ,~~

~~գ. քրեակատարողական հիմնարկի առաջին կարգի մասնագետ.~~

~~5) քրեակատարողական ծառայության կրտսեր խմբի պաշտոններ՝~~

~~ա. քրեակատարողական ծառայության երկրորդ կարգի մասնագետ,~~

~~բ. քրեակատարողական ծառայության երրորդ կարգի մասնագետ,~~

~~գ. քրեակատարողական հիմնարկի երկրորդ կարգի մասնագետ,~~
~~դ. քրեակատարողական հիմնարկի երրորդ կարգի մասնագետ,~~
~~ե. քրեակատարողական հիմնարկի կրտսեր մասնագետ:~~
~~2. Քրեակատարողական ծառայության պաշտոնների առանձին խմբերում ընդգրկվող հիմնական պաշտոնների, ինչպես նաև այդ պաշտոններին հավասարեցված պաշտոնների անվանացանկը սահմանում է Կառավարությունը:~~
~~3. Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության մարմինների համակարգերում զինվորական ծառայության հիմնական պաշտոնների, քրեակատարողական և փրկարար ծառայությունների հիմնական պաշտոնների միջև համապատասխանությունը սահմանում է Կառավարությունը:~~

Հոդված 9. Քրեակատարողական ծառայության պաշտոնները և քրեակատարողական ծառայության պաշտոնների անվանացանկը

1. Քրեակատարողական ծառայության պաշտոնները դասակարգվում են խմբերի՝ ելնելով այդ պաշտոնները զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, գործունեության ազդեցության, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց լուծման, ինչպես նաև մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների տեսանկյունից ներկայացվող պահանջներից: Քրեակատարողական ծառայության պաշտոնները աստիճանական համակարգով՝ բարձրից ցածր, դասակարգվում են ըստ գլխավոր, առաջատար, միջին և կրտսեր խմբերի: Յուրաքանչյուր խմբի պաշտոնները նույնպես դասակարգվում են աստիճանական համակարգով՝ բարձրից ցածր:

2. Քրեակատարողական ծառայության պաշտոնների խմբերում պաշտոնների դասակարգումն իրականացվում է քրեակատարողական ծառայության պաշտոնների անվանացանկով, որը հաստատվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով: Քրեկատարողական ծառայության պետը և նրա տեղակալները համարվում են պետական վարչական պաշտոն զբաղեցնող անձինք, որոնց պաշտոնները չեն ներառվում քրեակատարողական ծառայության պաշտոնների անվանացանկում:

3. Պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոնների, քրեակատարողական և փրկարար ծառայությունների պաշտոնների միջև համապատասխանությունը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 10. Քրեակատարողական ծառայողների կոչումները

1. Քրեակատարողական ծառայողներին շնորհվում են արդարադատության հետևյալ կոչումները.
~~- արդարադատության գեներալ-լեյտենանտ,~~
~~- արդարադատության գեներալ-մայոր,~~
- արդարադատության գնդապետ,
- արդարադատության փոխգնդապետ,

- արդարադատության մայոր,
- արդարադատության կապիտան,
- արդարադատության ավագ լեյտենանտ,
- արդարադատության լեյտենանտ,
- արդարադատության ավագ ենթասպա,
- արդարադատության ենթասպա,
- արդարադատության ավագ,
- արդարադատության ավագ սերժանտ,
- արդարադատության սերժանտ,
- արդարադատության կրտսեր սերժանտ:

Կոչումները դասակարգվում են աստիճանական համակարգով՝ բարձրից ցածր:

~~2. Քրեակատարողական ծառայության պաշտոնների բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնող քրեակատարողական ծառայողների համար սահմանված արդարադատության գեներալ-լեյտենանտ և գեներալ-մայոր կոչումները շնորհում է վարչապետը: Վարչապետը քրեակատարողական ծառայության պետի տեղակալին արդարադատության կոչումը շնորհում է Քրեակատարողական ծառայության պետի առաջարկությամբ:~~

2. Քրեկատարողական ծառայության պետին և նրա տեղակալներին շնորհվում են արդարադատության գեներալ-լեյտենանտ և գեներալ-մայոր կոչումները: Արդարադատության գեներալ-լեյտենանտ և գեներալ-մայոր կոչումները շնորհում է վարչապետը: Վարչապետը քրեակատարողական ծառայության պետի տեղակալին արդարադատության կոչումը շնորհում է Քրեակատարողական ծառայության պետի առաջարկությամբ:

3. Քրեակատարողական ծառայության պաշտոններ զբաղեցնող քրեակատարողական ծառայողների կոչումները, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով և սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի, շնորհում է քրեակատարողական ծառայության պետը:

Քրեակատարողական հիմնարկի կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող քրեակատարողական ծառայողներին կոչումներ շնորհում է քրեակատարողական հիմնարկի պետը:

4. Կոչումները շնորհվում են հերթականության կարգով, զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված կոչումներին համապատասխան, սույն օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

5. Կոչումները շնորհվում են անհատական կարգով, ցմահ:

6. Քրեակատարողական ծառայողը, ինչպես նաև քրեակատարողական ծառայությունում ծառայությունը դադարեցրած քաղաքացին կարող է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտվելու դեպքում զրկվել կոչումից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 11. Քրեակատարողական ծառայության պաշտոններին համապատասխանող կոչումները

-

Քրեակատարողական ծառայության պաշտոնների համար սահմանվում են հետևյալ առավելագույն կոչումները.

~~1) քրեակատարողական ծառայության բարձրագույն խմբի պաշտոններ՝~~

~~ա. քրեակատարողական ծառայության պետ՝ արդարադատության գեներալ-լեյտենանտ,~~

~~բ. քրեակատարողական ծառայության պետի առաջին տեղակալ, քրեակատարողական ծառայության պետի տեղակալ՝ արդարադատության գեներալ-մայոր.~~

2) քրեակատարողական ծառայության գլխավոր խմբի պաշտոններ՝

ա. քրեակատարողական հիմնարկի պետ, քրեակատարողական ծառայության բաժնի պետ՝ արդարադատության գնդապետ,

բ. քրեակատարողական հիմնարկի պետի տեղակալ, քրեակատարողական հիմնարկի պատասխանատու հերթապահ, քրեակատարողական ծառայության բաժնի պետի տեղակալ, քրեակատարողական ծառայությանբաժանմունքի պետ՝ արդարադատության փոխգնդապետ.

3) քրեակատարողական ծառայության առաջատար խմբի պաշտոններ՝

ա. քրեակատարողական ծառայության գլխավոր մասնագետ, քրեակատարողական հիմնարկի բաժնի պետ, քրեակատարողական հիմնարկի տեղամասի պետ՝ արդարադատության փոխգնդապետ,

բ. քրեակատարողական հիմնարկի բաժնի պետի տեղակալ, քրեակատարողական հիմնարկի բաժանմունքի պետ, քրեակատարողական հիմնարկի խմբի ղեկավար, քրեակատարողական հիմնարկի գլխավոր մասնագետ՝ արդարադատության մայոր.

4) քրեակատարողական ծառայության միջին խմբի պաշտոններ՝

ա. քրեակատարողական ծառայության առաջատար մասնագետ, քրեակատարողական ծառայության առաջին կարգի մասնագետ, քրեակատարողական հիմնարկի առաջատար մասնագետ՝ արդարադատության մայոր.

5) քրեակատարողական ծառայության կրտսեր խմբի պաշտոններ՝

ա. քրեակատարողական ծառայության երկրորդ կարգի մասնագետ, քրեակատարողական ծառայությաներրորդ կարգի մասնագետ, քրեակատարողական հիմնարկի երկրորդ կարգի մասնագետ, քրեակատարողականհիմնարկի երրորդ կարգի մասնագետ՝ արդարադատության ավագ ենթասպա,

բ. քրեակատարողական հիմնարկի կրտսեր մասնագետ՝ արդարադատության ենթասպա:

Հոդված 12. Կոչումների շնորհման ժամկետները

1. Սույն օրենքով սահմանված կարգով հերթական կոչումների շնորհման համար սահմանվում են ծառայության հետևյալ ժամկետները.

- արդարադատության կրտսեր սերժանտ՝ 1 տարի,
- արդարադատության սերժանտ՝ 2 տարի,
- արդարադատության ավագ սերժանտ՝ 3 տարի,
- արդարադատության ավագ՝ 3 տարի,

- արդարադատության ենթասպա՝ 4 տարի,
- արդարադատության լեյտենանտ՝ 2 տարի,
- արդարադատության ավագ լեյտենանտ՝ 3 տարի,
- արդարադատության կապիտան՝ 3 տարի,
- արդարադատության մայոր՝ 4 տարի,
- արդարադատության փոխգնդապետ՝ 5 տարի:

Արդարադատության ավագ ենթասպայի և արդարադատության գնդապետի կոչումներով ծառայությանժամկետ չի սահմանվում:

2. Պետական այլ մարմնում ծառայություն անցած (աշխատած) և զինվորական կամ հատուկ կոչում (դասային աստիճան, որակավորման դաս) ունեցող քաղաքացիներին քրեակատարողական ծառայությունում պաշտոնի նշանակելիս շնորհվում է նրանց զինվորական կամ հատուկ կոչմանը (դասային աստիճանին, որակավորման դասին) համապատասխան կոչում:

3. Պետական այլ մարմիններում շնորհված զինվորական կամ հատուկ կոչումների, դասային աստիճանների, որակավորման դասերի համապատասխանությունը սույն օրենքով սահմանված կոչումներին սահմանում է Կառավարությունը:

~~Քաղաքացիական ծառայողների դասային աստիճանների համապատասխանությունը քրեակատարողականծառայության կոչումներին, ինչպես նաև դրանք շնորհելու կարգը և պայմանները սահմանում է Կառավարությունը:~~

~~Դասային աստիճանների և քրեակատարողական ծառայության կոչումների համապատասխանությունը հաշվի է առնվում քաղաքացիական ծառայողին սույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված պաշտոնների նշանակելիս կամ քրեակատարողական ծառայողին սույն օրենքի 51.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պաշտոնների նշանակելիս:~~

4. Քրեակատարողական ծառայողի հերթական կոչումի շնորհումը հետաձգվում է, երբ՝

~~1) քրեակատարողական ծառայողի նկատմամբ ատեստավորման արդյունքում ընդունվել է սույն օրենքի 19-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ կետով նախատեսված որոշում.~~

2) քրեակատարողական ծառայողն ունի կարգապահական տույժ.

3) քրեակատարողական ծառայողը գտնվում է քրեական հետապնդման կամ ծառայողական քննության մեջ:

Հերթական կոչումի շնորհումը հետաձգելու դեպքում քրեակատարողական ծառայողի հերթական կոչումը շնորհվում է սույն մասի 1-ին պարբերությամբ նշված խոչընդոտների վերացումից հետո՝ 15-օրյա ժամկետում:

~~**Հոդված 14. Ծառայության անցնելու համար ներկայացվող հիմնական պահանջները**~~

-

~~1. Քրեակատարողական ծառայությունում, որպես քրեակատարողական ծառայող, ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով, անկախ սեռից, ազգությունից, ռասայից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից՝~~

~~1) անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի քաղաքացիների կամ սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի).~~

~~2) տիրապետում է հայերենին.~~

~~3) իր մասնագիտական գիտելիքներով, գործնական և անձնական հատկանիշներով ու առողջական վիճակով կարող է կատարել քրեակատարողական ծառայողի պարտականությունները.~~

~~4) դիմելու պահին նրա 30 տարեկանը չի լրացել, բացառությամբ սույն օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքի:~~

~~Քրեակատարողական ծառայությունում միջին և կրտսեր խմբերի պաշտոններում կարող են նշանակվել նաև սույն հոդվածի պահանջներին համապատասխանող, սակայն դիմելու պահին «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ-ե» կետերով նախատեսված հիմքերով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված քաղաքացիները:~~

~~2. Քրեակատարողական ծառայողին ներկայացվող մասնագիտական և առողջական վիճակի հետ կապված պահանջները սահմանում է Կառավարությունը:~~

~~3. Քրեակատարողական ծառայությունում պաշտոնի նշանակվելու համար դիմած և քրեակատարողականծառայությունում պաշտոնի անցնելու համար սույն հոդվածով սահմանված պահանջները (բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջների) բավարարող, սակայն աշխատանքային փորձ չունեցող քաղաքացիները մինչև պաշտոնի նշանակվելը կարող են ներգրավվել մեկամյա ուսումնական դասընթացների՝ նրանց պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից: Ուսումնական դասընթացներ անցնող քաղաքացիները ծառայողներ չեն համարվում: Ուսումնական դասընթացում ներգրավելու և դասընթաց անցնելու կարգն ու պայմանները սահմանում է համապատասխան նախարարը:~~

~~4. Քրեակատարողական ծառայությունում, որպես քրեակատարողական ծառայող, ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին, ով՝~~

~~1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.~~

~~2) դատական կարգով զրկվել է քրեակատարողական կամ այլ ծառայությունում պաշտոն զբաղեցնելու իրավունքից.~~

~~3) *(կետն ուժը կորցրել է 17.11.09 ՀՕ-218-Ն)*~~

~~4) գտնվում է քրեական հետապնդման մեջ.~~

~~5) չի համապատասխանում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին.~~

~~6) դատապարտվել է դիտավորյալ հանցագործություն կատարելու համար, անկախ դատվածությունը հանված կամ մարված լինելու հանգամանքից.~~

~~7) դատապարտվել է անզգույշ հանցագործություն կատարելու համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ:~~

Հոդված 14. Ծառայության անցնելու համար ներկայացվող հիմնական պահանջները

1. Սույն օրենքով սահմանված կարգով քրեակատարողական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն քրեակատարողական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ովքեր անցել են պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի, ինչպես նաև այն քաղաքացիների, ովքեր օրենքով նախատեսված կարգով և

հիմքով ազատվել են պարտադիր զինվորական ծառայությունից), դիմելու պահին չի լրացել նրա 30 տարին՝ բացառությամբ սույն օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքի: Քրեակատարողական ծառայությունում միջին և կրտսեր խմբերի պաշտոններում կարող են նշանակվել նաև սույն հոդվածի պահանջներին համապատասխանող, սակայն դիմելու պահին օրենքով նախատեսված կարգով և հիմքով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված քաղաքացիները:

2. Քրեակատարողական ծառայողին ներկայացվող մասնագիտական պահանջները սահմանում է հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը:

3. Քրեակատարողական ծառայությունում մրցույթի համար դիմած և քրեակատարողական ծառայությունում պաշտոնի անցնելու համար սույն հոդվածով սահմանված պահանջները (բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջների) բավարարող, սակայն աշխատանքային փորձ չունեցող քաղաքացիները մրցույթը հաղթահարելուց հետո, մինչև պաշտոնի նշանակվելը ներգրավվում են մեկամսյա ուսումնական դասընթացների՝ նրանց պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից: Ուսումնական դասընթացներ անցնող քաղաքացիները ծառայողներ չեն համարվում: Ուսումնական դասընթացում ներգրավելու, դասընթաց անցնելու կարգը,պայմանները և դաընթացի ավարտից հետո պաշտոնի նշանակման կարգը սահմանում է հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը:

4. Քրեակատարողական ծառայության պաշտոնի չի կարող նշանակվել այն քաղաքացին, որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում և (կամ) առկա է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը:

«Հոդված 14.1. Քրեակատարողական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը

1. Բացառությամբ քրեակատարողական հիմնարկի պետերի պաշտոնների՝ քրեակատարողական ծառայության մյուս պաշտոնները զբաղեցվում են մրցույթի արդյունքներով: Մրցույթի անցկացման եղանակները և կարգը սահմանում է կառավարությունը:

2. Մրցույթը հայտարարվում և հրապարակվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով:

3. Մրցույթին չեն կարող մասնակցել այն քաղաքացիաները, ովքեր չեն բավարարում սույն օրենքի 14-րդ, 17-րդ և 41-րդ հոդվածների պահանջները:

4. Քրեկատարողական ծառայողների առջխաղացումը կատարվում սույն օրենքով սահմանված մրցույթով:

Հոդված 16. Քրեակատարողական ծառայությունում պաշտոնի նշանակելը

1. ***(մասն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-282-Ն)***

2. Քրեակատարողական հիմնարկների պետերին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է համապատասխան նախարարը՝ քրեակատարողական ծառայության պետի առաջարկությամբ:

(պարբերությունն ուժը կորցրել է 08.04.08 ՀՕ-11-Ն)
(պարբերությունն ուժը կորցրել է 08.04.08 ՀՕ-11-Ն)

3. Քրեակատարողական ծառայության գլխավոր, առաջատար, միջին և քրեակատարողական ծառայությանկենտրոնական մարմնի կրտսեր խմբի պաշտոններում նշանակում և պաշտոնից ազատում է քրեակատարողական ծառայության պետը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

Քրեակատարողական հիմնարկի կրտսեր պաշտոնների խմբի ծառայողներին նշանակում, տվյալ քրեակատարողական հիմնարկում այլ պաշտոնի փոխադրում և պաշտոնից ազատում է քրեակատարողականհիմնարկի պետը:

~~4. Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի, այդ թվում՝ տարածքային մարմինների վարձու աշխատողների աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է քրեակատարողական ծառայությանպետը:~~

~~5. Քրեակատարողական հիմնարկի վարձու աշխատողների աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է քրեակատարողական հիմնարկի ղեկավարը:~~

Հոդված 17. ~~**Քրեակատարողական ծառայությունում պաշտոնի նշանակելու պայմանները**~~
Քրեակատարողական ծառայության պաշտոններում նշանակելու պայմանները, քրեակատարողական ծառայության պաշտոնի անձնագրի՝ կրթության և աշխատանքային ստաժի չափանիշները

~~1. Քրեակատարողական ծառայության պետ կարող է նշանակվել այն ծառայողը, ով զբաղեցրել է քրեակատարողական ծառայության բարձրագույն կամ առնվազն երեք տարի գլխավոր խմբի պաշտոն և ունի արդարադատության գնդապետից ոչ ցածր կոչում:~~

1. Քրեակատարողական ծառայության պետ կարող է նշանակվել այն անձը, ով զբաղեցրել է քրեակատարողական ծառայության պետի տեղակալի պաշտոն կամ առնվազն երեք տարի՝ քրեակատարողական ծառայության գլխավոր խմբի պաշտոն և ունի արդարադատության գնդապետից ոչ ցածր կոչում:

~~2. Քրեակատարողական ծառայության բարձրագույն խմբի պաշտոններում, բացառությամբ քրեակատարողական ծառայության պետի պաշտոնի, կարող է նշանակվել այն ծառայողը, ով զբաղեցրել է քրեակատարողական ծառայության բարձրագույն կամ առնվազն երեք տարի գլխավոր խմբի պաշտոն և ունի արդարադատության փոխգնդապետից ոչ ցածր կոչում:~~

2. Քրեակատարողական ծառայության պետի տեղակալ կարող է նշանակվել այն անձը, ով զբաղեցրել է քրեակատարողական ծառայության պետի պաշտոն կամ առնվազն երեք տարի՝ քրեակատարողական ծառայության գլխավոր խմբի պաշտոն և ունի արդարադատության փոխգնդապետից ոչ ցածր կոչում:

~~3. Քրեակատարողական ծառայության գլխավոր խմբի պաշտոններում կարող է նշանակվել այն ծառայողը, ով զբաղեցրել է քրեակատարողական ծառայության բարձրագույն, գլխավոր խմբի կամ առնվազն երեք տարի առաջատար խմբի պաշտոն:~~

3. Քրեակատարողական ծառայության գլխավոր խմբի պաշտոններում կարող է նշանակվել այն անձը, ով զբաղեցրել է քրեակատարողական ծառայության պետի,

նրա տեղակալների պաշտոն, քրեակատարողական ծառայության գլխավոր խմբի կամ առնվազն երեք տարի՝ առաջատար խմբի պաշտոն:

~~4. Քրեակատարողական ծառայության առաջատար խմբի պաշտոններում կարող է նշանակվել այն ծառայողը, ով զբաղեցրել է քրեակատարողական ծառայության բարձրագույն, գլխավոր, առաջատար խմբի կամ առնվազն մեկ տարի միջին խմբի պաշտոն, բացառությամբ բժշկական սպասարկման ոլորտի պաշտոնների:~~

4. Քրեակատարողական ծառայության առաջատար խմբի պաշտոններում կարող է նշանակվել այն անձը, ով զբաղեցրել է քրեակատարողական ծառայության պետի, նրա տեղակալների պաշտոն, քրեակատարողական ծառայության գլխավոր, առաջատար խմբի կամ առնվազն մեկ տարի միջին խմբի պաշտոն, բացառությամբ բժշկական սպասարկման ոլորտի պաշտոնների:

5. Քրեակատարողական ծառայության կրտսեր խմբում պաշտոնում կարող է նշանակվել առնվազն միջնակարգ կրթություն ունեցող քաղաքացին: Վերջինիս շնորհվում է արդարադատության կրտսեր սերժանտի կոչում կամ ունեցած ավելի բարձր զինվորական կամ հատուկ կոչմանը (դասային աստիճանին, որակավորման դասին) համապատասխանող կոչում:

5.1. Քրեակատարողական ծառայության միջին և կրտսեր խմբերի պաշտոն զբաղեցնելու համար աշխատանքային ստաժ չի պահանջվում:

6. Քրեակատարողական ծառայության ~~բարձրագույն,~~ գլխավոր, առաջատար և միջին խմբերի պաշտոններում կարող են նշանակվել բարձրագույն կրթություն ունեցող քաղաքացիները:

7. Քրեակատարողական ծառայության միջին խմբի պաշտոններում առաջին անգամ նշանակված քաղաքացիներին, լեյտենանտից ցածր զինվորական կամ հատուկ կոչում, դասային աստիճան, որակավորման դաս ունենալու, ինչպես նաև կոչում չունենալու դեպքում շնորհվում է արդարադատության լեյտենանտի կոչում:

~~8. Քրեակատարողական ծառայությունում թափուր պաշտոն առաջանալու դեպքում ծառայության կարող են նշանակվել նաև զինված ուժերի, ազգային անվտանգության, ոստիկանության, դատախազության լիազոր մարմինների, ինչպես նաև Հարկադիր կատարումն ապահովող ծառայության այն ծառայողները (այդ թվում՝ նշված մարմինների նախկին ծառայողները), որոնք բավարարում են տվյալ պաշտոնին նշանակվելու համար քրեակատարողական ծառայողներին ներկայացվող պահանջները:~~

~~Այլ մարմնում ծառայություն անցած և քրեակատարողական ծառայության գլխավոր խմբի թափուր պաշտոնի նշանակված քրեակատարողական ծառայողին ավելի բարձր պաշտոնի նշանակելիս հաշվի է առնվում նաև այլ մարմնում ծառայության ժամկետը:~~

~~Զինված ուժերի, ազգային անվտանգության, ոստիկանության, դատախազության լիազոր մարմինների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության պաշտոնների համապատասխանությունը քրեակատարողականծառայության պաշտոններին սահմանում է Կառավարությունը:~~

8. Քրեակատարողական ծառայությունում թափուր պաշտոն առաջանալու դեպքում մրցույթին կարող են մասնակցել նաև զինված ուժերի, ազգային անվտանգության, ոստիկանության, դատախազության մարմինների, ինչպես նաև հարկադիր կատարումն ապահովող ծառայության այն ծառայողները (այդ թվում՝

նշված մարմինների նախկին ծառայողները), որոնք բավարարում են տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները:

Զինված ուժերի, ազգային անվտանգության, ոստիկանության, դատախազության լիազոր մարմինների, ինչպես նաև արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության պաշտոնների համապատասխանությունը քրեակատարողական ծառայության պաշտոններին սահմանում է կառավարությունը:

9. Քրեակատարողական ծառայությունում թափուր պաշտոնի կարող է նշանակվել ժամանակավոր պաշտոնակատար, բայց ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով:

Քրեակատարողական ծառայությունում ծառայողի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության, այդ թվում՝ ծառայողական քննության դեպքում, կին ծառայողի նախածննդյան կամ հետծննդյան, ինչպես նաև ծառայողի՝ երեխային խնամելու արձակուրդի դեպքերում նրա պաշտոնը կարող է զբաղեցվել՝ քրեակատարողական ծառայության այլ փոխարինող ծառայողին տվյալ պաշտոնին գործուղելով կամ քրեակատարողական ծառայությունում կադրերի ռեզերվում գտնվող ծառայողին կամ քրեակատարողական ծառայությունում ծառայության անցնող անձին տվյալ պաշտոնին ժամանակավոր նշանակելով:

Սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված հիմքերի վերացման դեպքում փոխարինող ծառայողը սույն օրենքով սահմանված կարգով նշանակվում է հավասարազոր կամ իր համաձայնությամբ ավելի ցածր պաշտոնի, իսկ դրա անհնարինության դեպքում գրանցվում է կադրերի ռեզերվում:

~~**Հոդված 18. Փորձաշրջանի նշանակումը և անցկացումը**~~

~~1. Քրեակատարողական ծառայության պաշտոն առաջին անգամ զբաղեցնող անձի նշանակումն իրականացվում է մինչև 6 ամիս փորձաշրջանով: Փորձաշրջանի տևողությունը յուրաքանչյուր ծառայողի համար սահմանում է պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:~~

~~2. Փորձաշրջանի ընթացքում ծառայողն ունի բոլոր իրավունքները և կրում է բոլոր պարտականությունները, որոնք սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված են քրեակատարողական ծառայողների համար:~~

~~3. Փորձաշրջանի համար սահմանված ժամկետում չեն ներառվում աշխատանքից աշխատողի բացակայության հետևյալ ժամանակահատվածները.~~

~~1) սահմանված կարգով աշխատողի չվճարվող արձակուրդում գտնվելու ժամանակահատվածը.~~

~~2) աշխատողի ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածը.~~

~~3) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աշխատողի վրա դրված պարտականությունների կատարման ժամանակահատվածը:~~

~~4. Եթե քրեակատարողական ծառայողը սահմանված փորձաշրջանի ընթացիկ արդյունքներով չի համապատասխանում առաջադրված պահանջներին, ապա կարող է մինչև փորձաշրջանի ժամկետը լրանալը ազատվել ծառայությունից, որի մասին գրավոր տեղեկացվում է երեք օր առաջ:~~

~~Եթե փորձաշրջանն անցնելուց հետո ծառայողը շարունակում է ծառայությունը, ապա նա համարվում է փորձաշրջան անցած:~~

Հոդված 18. Փորձաշրջանի նշանակումը և անցկացումը

1. Քրեակատարողական ծառայության պաշտոն առաջին անգամ զբաղեցնող անձի նշանակումն իրականացվում է մինչև 9 ամիս փորձաշրջանով: Փորձաշրաջնի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

Գ Լ ՈՒ Խ 5

~~ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ~~

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

~~**Հոդված 19. Քրեակատարողական ծառայողի ատեստավորման կարգը և պայմանները**~~

~~1. Յուրաքանչյուր տարի քրեակատարողական ծառայողների առնվազն մեկ երրորդը ենթակա է պարտադիր ատեստավորման:~~

~~2. Հերթական ատեստավորումն անցկացվում է երեք տարին մեկ անգամ:~~

~~3. Արտահերթ ատեստավորումն անցկացվում է հերթական ատեստավորումից առնվազն մեկ տարի հետո:~~

~~4. Արտահերթ ատեստավորումն անցկացվում է քրեակատարողական ծառայության պետի պատճառաբանված հրամանի հիման վրա:~~

~~***(պարբերությունն ուժը կորցրել է 08.04.08 ՀՕ-11-Ն)***~~

~~5. Ատեստավորումն անցկացվում է քրեակատարողական ծառայողի անմիջական մասնակցությամբ:~~

~~6. Ատեստավորման ենթակա չեն՝~~

~~1) քրեակատարողական ծառայության բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնողները.~~

~~2) տվյալ պաշտոնը մեկ տարուց պակաս ժամկետով զբաղեցնող քրեակատարողական ծառայողները, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել.~~

~~3) հղի կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող քրեակատարողական ծառայողները, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել.~~

~~4) սույն օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմքով տվյալ տարում ծառայությունից ազատվողները:~~

~~Հղիության կամ երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող քրեակատարողականծառայողները ենթակա են ատեստավորման արձակուրդից վերադառնալուց հետո՝ ոչ շուտ, քան մեկ տարի անց, եթե վերջիններս ցանկություն չեն հայտնել ավելի վաղ ատեստավորվելու համար:~~

~~Աստեստավորման ենթակա, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող կամ ժամանակավոր անաշխատունակ քրեակատարողական ծառայողները ենթակա են աստեստավորման ծառայության անցնելուց հետո՝ երկամսյա ժամկետում:~~

~~7. Աստեստավորման ենթակա քրեակատարողական ծառայողները ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ տեղեկացվում են աստեստավորման անցկացման մասին, բացառությամբ սույն հոդվածի 10-րդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի:~~

~~8. Աստեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ անմիջական ղեկավարը ներկայացնում է քրեակատարողական ծառայողի ծառայողական բնութագիրը:~~

~~Ծառայողական բնութագիրը պետք է բովանդակի տվյալներ քրեակատարողական ծառայողի մասին, նրա գործնական, մարդկային հատկանիշների և ծառայողական գործունեության արդյունքների հիմնավորված գնահատականը:~~

~~Քրեակատարողական ծառայողն աստեստավորումն անցկացնելու օրվանից առնվազն մեկ շաբաթ առաջ պետք է ծանոթանա իր ծառայողական բնութագրին:~~

~~Սույն հոդվածով սահմանված կարգով ծառայողական բնութագիր չներկայացնելը չի կարող բացասաբար ազդել քրեակատարողական ծառայողի աստեստավորման արդյունքների վրա:~~

~~9. Աստեստավորման հանձնաժողովը կազմավորում է համապատասխան նախարարը: Ելնելով ծառայությանառանձնահատկություններից՝ համապատասխան նախարարը կարող է ձևավորել մեկից ավելի աստեստավորման հանձնաժողովներ:~~

~~Աստեստավորման անցկացման կարգը և պայմանները սահմանում է Կառավարությունը:~~

~~10. Աստեստավորումից հետո աստեստավորման հանձնաժողովն ընդունում է հետևյալ որոշումներից միայն մեկը.~~

~~1) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին.~~

~~2) աստեստավորումը հետաձգել և քրեակատարողական ծառայողին գործուղել վերապատրաստման.~~

~~3) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին:~~

~~Սույն մասի 2-րդ կետին համապատասխան՝ վերապատրաստման գործուղված քրեակատարողականծառայողի աստեստավորումն անցկացվում է վերապատրաստման ավարտից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, որի մասին քրեակատարողական ծառայողը տեղեկացվում է ոչ ուշ, քան աստեստավորման անցկացման օրվանից 5 օր առաջ:~~

~~11. Քրեակատարողական ծառայողն աստեստավորման արդյունքներին ծանոթանում է դրա անցկացման օրը: Քրեակատարողական ծառայողն իրավունք ունի աստեստավորման հանձնաժողովին բողոքարկելու աստեստավորման արդյունքները դրանց ծանոթանալու օրվանից հետո՝ մեկ օրվա ընթացքում:~~

~~12. Աստեստավորման հանձնաժողովն աստեստավորման արդյունքները, այդ թվում՝ բողոքարկումները և դրանց քննարկման արդյունքներն ու կայացված որոշումներն աստեստավորման օրվանից հետո՝ 7 օրվա ընթացքում, ներկայացնում է քրեակատարողական ծառայության պետին և համապատասխան նախարարին:~~

~~13. Աստեստավորման արդյունքները հավաստող փաստաթղթերը պահվում են քրեակատարողականծառայողի անձնական գործում:~~

«Հոդված 19 Քրեակատարողական ծառայողի կատարողականի գնահատումը

.

1. Քրեակատարողական ծառայողի կատարողականի գնահատման և վերապատրաստման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:»

Հոդված 20. Քրեակատարողական ծառայողի վերապատրաստումը և հատուկ ուսուցումը

~~1. Քրեակատարողական ծառայության գլխավոր, առաջատար, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող քրեակատարողական ծառայողները ենթակա են պարտադիր վերապատրաստման առնվազն 3 տարին մեկ և հատուկ ուսուցման՝ առնվազն տարին մեկ:~~

1. Քրեակատարողական ծառայության գլխավոր, առաջատար, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող քրեակատարողական ծառայողները ենթակա են վերապատրաստամն «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմնված կարգով:

~~2. Սույն օրենքի 19-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքերում քրեակատարողականծառայողներն անցնում են մինչև երեք ամիս ժամկետով վերապատրաստում:~~

~~3. Հատուկ ուսուցում անցնելուց հետո քրեակատարողական ծառայողներն իրավունք ունեն սահմանված կարգով կրելու, պահելու և գործադրելու (կիրառելու) հրազեն և օրենքով նախատեսված հատուկ միջոցներ:~~

3. Քրեակատարողական ծառայության հանրային ծառայողներն իրավունք ունեն սահմանված կարգով կրելու, պահելու և գործադրելու (կիրառել) հրազեն և օրենքով նախատեսված հատուկ միջոցներ հատուկ ուսուցում անցնելուց հետո: Հատուկ ուսուցում անցնելու կարգն ու պայմանները սահմանում է հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը:

~~4. Վերապատրաստում և հատուկ ուսուցում անցնելու կարգն ու պայմանները սահմանում է համապատասխան նախարարը:~~

5. Քրեակատարողական ծառայողը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով սահմանված համապատասխան միջոցների հաշվին վերապատրաստվելուց կամ հատուկ ուսուցում անցնելուց հետո մեկ տարուց պակաս ծառայություն անցնելու դեպքում պարտավոր է, ծառայություն չանցած ամիսներին համապատասխան, կատարված ծախսը, 12 ամսվա կտրվածքով բաժանելով յուրաքանչյուր ամսվա վրա, փոխհատուցել իր վերապատրաստման կամ հատուկ ուսուցման համար կատարված ծախսերը:

Հոդված 21. Քրեակատարողական ծառայողին այլ պաշտոնի փոխադրելը

1. Քրեակատարողական ծառայողը, ծառայողական անհրաժեշտությամբ պայմանավորված կամ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում, առանց իր համաձայնության կարող է փոխադրվել՝

1) զբաղեցրած պաշտոնին համարժեք այլ պաշտոնի՝ տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի, իսկ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում՝ նվազագույնը երեք և առավելագույնը 5 տարի ծառայելուց հետո.

2) իր զբաղեցրած պաշտոնին համապատասխանող խմբում ավելի ցածր պաշտոնի, եթե փոխադրումը կապված է կառուցվածքային փոփոխությունների կամ հաստիքների կրճատման հետ.

~~3) զբաղեցրած պաշտոնից մեկ աստիճանով ցածր պաշտոնի, եթե ատեստավորումից հետո կայացվել է որոշում՝ զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու մասին.~~

4) զբաղեցրած պաշտոնին համարժեք այլ պաշտոնի՝ քրեակատարողական ծառայողի մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, պապ, տատ, ամուսնու ծնող, զավակ, եղբայր, քույր, պապ և տատ) քրեակատարողական հիմնարկում պատիժը կրելու կամ կալանքի տակ գտնվելու ընթացքում.

5) զբաղեցրած պաշտոնին համարժեք այլ կամ ավելի ցածր պաշտոնի՝ առողջական վիճակից ելնելով՝ բժշկական եզրակացության հիման վրա:

1.1. Քրեակատարողական ծառայողի տեղափոխման, փոխադրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով:

2. Առանց իր համաձայնության այլ մարզ ծառայության փոխադրելը թույլատրվում է, եթե տվյալ ծառայողի նկատմամբ վերջին համանման փոփոխությունը կատարվել է առնվազն մեկ տարի առաջ:

~~3. Քրեակատարողական ծառայողն իր դիմումի համաձայն կարող է փոխադրվել իր զբաղեցրած պաշտոնին համարժեք կամ ցածր այլ պաշտոնի կամ ծառայության այլ վայր:~~

4. Քրեակատարողական հիմնարկների պետերի պարտադիր ռոտացիան քրեակատարողական ծառայությանպետի առաջարկությամբ իրականացնում է համապատասխան նախարարը:

Հոդված 22. Այլ պաշտոնի փոխադրելը

1. ~~Քրեակատարողական ծառայության բարձրագույն խմբի պաշտոններում~~ **Քրեակատարողական ծառայության պետին և նրա տեղակալներին**, ինչպես նաև քրեակատարողականհիմնարկների պետերին սույն օրենքով սահմանված կարգով այլ պաշտոնի փոխադրում է համապատասխան նախարարը՝ քրեակատարողական ծառայության պետի առաջարկությամբ:

2. Քրեակատարողական ծառայության պաշտոնների գլխավոր, առաջատար, միջին և կրտսեր խմբերում քրեակատարողական ծառայողներին սույն օրենքով սահմանված կարգով այլ պաշտոնի փոխադրում է քրեակատարողական ծառայության պետը, բացառությամբ սույն հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքերի:

~~Հոդված 23. Քրեակատարողական ծառայողի իրավունքները~~

~~Քրեակատարողական ծառայողի հիմնական իրավունքներն են՝~~

~~1) զբաղեցրած պաշտոնում իր իրավունքները և պարտականությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.~~

~~2) իր անձնական գործի բոլոր նյութերին՝ իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեությանը վերաբերող այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ ներկայացնելը.~~

~~3) ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.~~

~~4) իր իրավասության սահմաններում որոշումներ ընդունելը.~~

~~5) ծառայության համար համարժեք վարձատրություն ստանալը.~~

~~6) սոցիալական պաշտպանությունը և ապահովությունը.~~

~~7) իրավական պաշտպանությունը.~~

~~8) կոչումի՝ սահմանված կարգով բարձրացումը.~~

~~9) պաշտոնի նշանակման և ատեստավորման արդյունքները բողոքարկելը.~~

~~10) ծառայության կազմակերպման ու կատարելագործման հարցերի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը:~~

~~Քրեակատարողական ծառայողը կարող է ունենալ սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:~~

~~***(23-րդ հոդվածը փոփ. 12.12.13 ՀՕ-165-Ն)***~~

~~**Հոդված 24. Քրեակատարողական ծառայողի պարտականությունները**~~

~~1. Քրեակատարողական ծառայողի հիմնական պարտականություններն են՝~~

~~1) Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները կատարելը.~~

~~2) մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար անհրաժեշտ գիտելիքներ ապահովելը.~~

~~3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները ճշգրիտ ու ժամանակին կատարելը.~~

~~4) վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով ընդունած հրամաններն ու որոշումները, տրված կարգադրություններն ու ցուցումները կատարելը.~~

~~5) սահմանված կարգով և ժամկետներում առաջարկությունները, դիմումները և բողոքները քննության առնելը և դրանց ընթացք տալը.~~

~~6) պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները պահպանելը.~~

~~7) օրենքով նախատեսված դեպքում եկամուտների հայտարարագիր ներկայացնելը.~~

~~8) կարգապահական կանոնակարգը պահպանելը:~~

~~Քրեակատարողական ծառայողի համար սույն օրենքով և այլ իրավական ակտերով կարող են սահմանվել նաև այլ պարտականություններ:~~

~~2. Քրեակատարողական ծառայության կարգապահական կանոնակարգը հաստատում է Կառավարությունը:~~

Հոդված 23. Քրեակատարողական ծառայողի իրավունքները

1. «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված հիմնական իրավունքներից բացի, քրեակատարողական ծառայողների հիմնական իրավունքներն են՝

1) իր իրավասության սահմաններում որոշումներ ընդունելը.

2) կոչումի՝ սահմանված կարգով բարձրացումը.

3) պաշտոնի նշանակման արդյունքները բողոքարկելը.

4) ծառայության կազմակերպման ու կատարելագործման հարցերի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը:

Հոդված 24 Քրեակատարողական ծառայողի պարտականությունները

.

1. «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով նախատեսված հիմնական պարտականություններից բացի, քրեակատարողական ծառայողի հիմնական պարտականություններն են՝

1) սահմանված կարգով և ժամկետներում առաջարկությունները, դիմումները և բողոքները քննության առնելը և դրանց ընթացք տալը.

2) պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները պահպանելը.

3) կարգապահական կանոնակարգը պահպանելը:

2. Քրեակատարողական ծառայության կարգապահական կանոնակարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 26. Քրեակատարողական ծառայության պետը

(վերնագիրը փոփ. 23.03.18 ՀՕ-282-Ն)

1. Քրեակատարողական ծառայության պետը՝

1) ղեկավարում և հսկում է քրեակատարողական ծառայության և ~~քաղաքացիական հատուկ ծառայության~~ գործունեությունը.

2) ապահովում է սույն օրենքի, Հայաստանի Հանրապետության այլ օրենքների ու իրավական ակտերի պահանջների, ինչպես նաև համապատասխան նախարարի հրամանների և ցուց ումների կատարումը.

3) ընդունում է քրեակատարողական ծառայության և ~~քաղաքացիական հատուկ ծառայության~~ գործունեության կազմակերպմանն ուղղված հրամաններ, տալիս է ցուցումներ, անհրաժեշտության դեպքում հայտարարում է տագնապ, այդ թվում՝ ուսումնական տագնապ կամ ուժեղացված ծառայություն.

4) առաջարկություններ է ներկայացնում համապատասխան նախարարին՝ ծառայության կառուցվածքի, իր տեղակալների միջև պարտականությունների բաշխման, քրեակատարողական ծառայության և ~~քաղաքացիական հատուկ ծառայության~~ պաշտոններում նշանակելու կամ պաշտոնից ազատելու վերաբերյալ.

~~5) համապատասխան նախարարի հաստատմանն է ներկայացնում քաղաքացիական ծառայողների պաշտոնի անձնագրերը.~~

~~6) իր իրավասությունների շրջանակներում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է քաղաքացիական ծառայողներին.~~

~~7) շնորհում է քաղաքացիական հատուկ ծառայության դասային աստիճաններ, բացառությամբ սույն օրենքի 51.4-րդ հոդվածով նախատեսված դեպքերի.~~

8) միջնորդություն է ներկայացնում համապատասխան նախարարին՝ քրեակատարողական ծառայողներին ~~և քաղաքացիական ծառայողներին~~ խրախուսելու կամ նրանց նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու մասին.

9) քննարկում է քրեակատարողական ծառայողների և քաղաքացիական ծառայողների նկատմամբ բերված բողոքները.

10) վերացնում է քրեակատարողական ծառայողների ~~և քաղաքացիական ծառայողների~~ անօրինական հրամանները և ցուցումները.

11) նշանակում ~~և անցկացնում~~ է ծառայողական քննություններ.

12) իր իրավասության սահմաններում խրախուսանքի կամ կարգապահական տույժի է ենթարկում քրեակատարողական ծառայողներին, ~~քաղաքացիական ծառայողներին և քրեակատարողական ծառայությանկենտրոնական մարմնի վարձու աշխատողներին~~.

13) ծառայողական քննության ժամանակահատվածում կարող է ժամանակավորապես դադարեցնել իր կողմից պաշտոնում նշանակված քրեակատարողական ծառայողի ~~կամ քաղաքացիական ծառայողի~~ լիազորությունները.

14) իրականացնում է օրենքով և իրավական այլ ակտերով, ինչպես նաև քրեակատարողական ծառայությանկենտրոնական մարմնի կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

2. Քրեակատարողական ծառայության պետը պատասխանատվություն է կրում քրեակատարողականծառայության խնդիրների իրականացման համար:

Հոդված 29. Քրեակատարողական ծառայողի վարձատրությունը
(վերնագիրը փոփ. 12.12.13 ՀՕ-165-Ն)

1. Քրեակատարողական յուրաքանչյուր ծառայող ունի ծառայության համար համարժեք վարձատրության, ինչպես նաև հանդերձանքի ապահովման իրավունք:

2. Քրեակատարողական ծառայողի վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ **և պետական ծառայության պաշտոններ** զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

3. ***(մասն ուժը կորցրել է 12.12.13 ՀՕ-165-Ն)***
4. ***(մասն ուժը կորցրել է 12.12.13 ՀՕ-165-Ն)***
5. ***(մասն ուժը կորցրել է 12.12.13 ՀՕ-165-Ն)***
6. ***(մասն ուժը կորցրել է 12.12.13 ՀՕ-165-Ն)***
7. ***(մասն ուժը կորցրել է 12.12.13 ՀՕ-165-Ն)***
8. ***(մասն ուժը կորցրել է 12.12.13 ՀՕ-165-Ն)***

~~**Հոդված 32. Քրեակատարողական ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները**~~

~~1. Քրեակատարողական ծառայողն իրավունք չունի՝~~

~~1) կատարելու վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից.~~

~~2) անձամբ զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ.~~

~~3) լինելու երրորդ անձանց ներկայացուցիչն այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ ինքը գտնվում է ծառայության մեջ, կամ որն անմիջականորեն ենթակա է իրեն կամ անմիջականորեն վերահսկելի է իր կողմից.~~

~~4) հոնորար ստանալու ծառայողական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար.~~

~~5) ոչ ծառայողական նպատակներով օգտագործելու նյութատեխնիկական, ֆինանսական ու տեղեկատվական միջոցները, պետական այլ գույքը և ծառայողական տեղեկատվությունը.~~

~~6) ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալու նվերներ, գումար կամ ծառայություններ.~~

~~7) լինելու որևէ կուսակցության, կրոնական կազմակերպության անդամ.~~

~~8) կազմակերպելու գործադուլներ, հանրահավաքներ, երթեր, ցույցեր կամ մասնակցելու դրանց:~~

~~2. Քրեակատարողական ծառայողին արգելվում է համատեղ ծառայել մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, ամուսնու ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ և պապ) հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ անմիջական վերահսկողության հետ:~~

~~3. Քրեակատարողական ծառայությունում պաշտոնի նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, քրեակատարողական ծառայողը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավոր է առևտրային կազմակերպությունների կանոնադրական (բաժնեհավաք, փայահավաք) կապիտալում բաժնեմաս (բաժնետոմս, փայ) ունենալու դեպքում դա հանձնել հավատարմագրային կառավարման: Քրեակատարողական ծառայողն իրավունք ունի հավատարմագրային կառավարման հանձնված գույքից ստանալու եկամուտ:~~

~~4. Քրեակատարողական ծառայողին չի տրվում իր՝ պաշտոնի նշանակման, այլ պաշտոնի փոխադրման, ազատման կամ նրա նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու մասին հրամանի պատճենը, եթե հրամանը պարունակում է պետական կամ ծառայողական գաղտնիք կամ հրապարակման ոչ ենթակա տեղեկատվություն: Այդ դեպքում նրան տրվում է հրամանից քաղվածք, որից հանվում է պետական գաղտնիք կամ հրապարակման ոչ ենթակա տեղեկատվությունը:~~

Հոդված 32. Քրեակատարողական ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները

1. Ի լրումն «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների՝ քրեակատարողական ծառայողն իրավունք չունի՝

1) լինելու ներկայացուցիչ դատարանում, բացառությամբ օրինական ներկայացուցիչ լինելու և ի պաշտոնե գործելու դեպքերի.

2) լինելու որևէ կուսակցության անդամ կամ այլ կերպ զբաղվելու քաղաքական գործունեությամբ: Քրեակատարողական ծառայողը ցանկացած հանգամանքում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն:

~~Հոդված 35. Քրեակատարողական ծառայողների նկատմամբ կիրառվող խրախուսանքի տեսակները~~

~~1. Երկարամյա ծառայության, ինչպես նաև ծառայողական պարտականությունները և առաջադրանքները պատշաճ կատարելու համար քրեակատարողական ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ տեսակները.~~

~~1) շնորհակալության հայտարարում.~~

~~2) միանվագ դրամական պարգևատրում.~~

~~3) հուշանվերով պարգևատրում.~~

~~4) արտահերթ կոչման շնորհում.~~

~~4.1) տվյալ պաշտոնի համար սահմանված առավելագույն կոչումից մեկ աստիճան բարձր կոչումի շնորհում, եթե կրկնակի լրացել է ունեցած կոչումով ծառայության սահմանված ժամկետը.~~

~~5) կրծքանշանով պարգևատրում:~~

~~2. Քրեակատարողական ծառայողի նկատմամբ որպես խրախուսանք կարող է կիրառվել նախկինում նշանակված կարգապահական տույժը ժամկետից շուտ հանելը տույժը կիրառած ղեկավարի կամ նրա վերադասի կողմից: Եթե կարգապահական տույժը նշանակել է համապատասխան նախարարը, ապա նախկինում նշանակված կարգապահական տույժը ժամկետից շուտ կարող է հանել միայն նա:~~

~~3. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ և 4.1-րդ կետերով նախատեսված խրախուսանքը քրեակատարողականծառայողի նկատմամբ կարող է կիրառվել մեկ անգամ ծառայության ամբողջ ընթացքում:~~

~~4. Միաժամանակ կարող է կիրառվել խրախուսանքի մի քանի տեսակ:~~

~~5. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված խրախուսանքները կիրառում է համապատասխան նախարարը, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ և 4.1-րդ կետերով նախատեսված խրախուսանքի:~~

~~Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ և 4.1-րդ կետերով նախատեսված խրախուսանքը կիրառում է քրեակատարողական ծառայության պետը՝ համապատասխան նախարարի համաձայնությամբ:~~

~~*(պարբերությունն ուժը կորցրել է 08.04.08 ՀՕ-11-Ն)*~~

~~Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված խրախուսանքները կարող են կիրառել նաև քրեակատարողական ծառայության պետը և քրեակատարողական հիմնարկների ղեկավարները, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված խրախուսանքը կիրառվում է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջներին համապատասխան:~~

~~*(պարբերությունն ուժը կորցրել է 08.04.08 ՀՕ-11-Ն)*~~

~~6. Սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված կրծքանշանի տեսակները և ձևերը սահմանում է համապատասխան նախարարը:~~

~~7. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերով նախատեսված խրախուսանքները կիրառվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով սահմանված համապատասխան միջոցների հաշվին, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված խրախուսանքը կիրառվում է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված համապատասխան միջոցների հաշվին:~~

~~*(35-րդ հոդվածը փոփ.-08.04.08 ՀՕ-11-Ն, լրաց., փոփ.-17.11.09 ՀՕ-218-Ն, խմբ., փոփ., լրաց.-12.12.13 ՀՕ-165-Ն, փոփ.-23.03.18 ՀՕ-282-Ն)*~~

~~Հոդված 36. Քրեակատարողական ծառայողների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը~~

~~1. Ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ծառայողական դիրքն ի չարը գործադրելու, ինչպես նաև ծառայողական լիազորությունները վերազանցելու դեպքերում քրեակատարողական ծառայողի նկատմամբ կիրառվում են հետևյալ կարգապահական տույժերը.~~

~~1) նկատողություն.~~

~~2) խիստ նկատողություն.~~

~~3) պաշտոնի իջեցում.~~

~~4) կոչման իջեցում մեկ աստիճանով.~~

~~5) ծառայությունից ազատում:~~

~~2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգապահական տույժերը կիրառում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված կարգապահական տույժի, ինչպես նաև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:~~

~~Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը կիրառում է քրեակատարողական ծառայության պետը (բացառությամբ արդարադատության գեներալ-մայորի կոչում ունեցող քրեակատարողական ծառայողի նկատմամբ)՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի համաձայնությամբ:~~

~~*(պարբերությունն ուժը կորցրել է 08.04.08 ՀՕ-11-Ն)*~~

~~Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերը կարող է կիրառել նաև քրեակատարողական ծառայության պետը: Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժը քրեակատարողական ծառայության պետը կարող է կիրառել միայն իր կողմից պաշտոնում նշանակված քրեակատարողական ծառայողների նկատմամբ:~~

~~Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերը կարող են կիրառել նաև քրեակատարողական հիմնարկների ղեկավարները:~~

~~*(պարբերությունն ուժը կորցրել է 08.04.08 ՀՕ-11-Ն)*~~

~~3. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը քրեակատարողականծառայության պետի նկատմամբ չի կիրառվում:~~

~~Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը քրեակատարողականծառայության պետի նկատմամբ կիրառում է վարչապետը՝ սեփական նախաձեռնությամբ կամ համապատասխան նախարարի միջնորդությամբ:~~

~~Սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը քրեակատարողականծառայության պետի նկատմամբ կիրառում է վարչապետը՝ սեփական նախաձեռնությամբ կամ համապատասխան նախարարի միջնորդությամբ:~~

Հոդված 35. Քրեակատարողական ծառայողների նկատմամբ կիրառվող խրախուսանքի տեսակները

1.Քրեակատարողական ծառայողների նկատմամաբ կիրառվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված խրախուսանքի տեսակները: Քրեակատարողական ծառայողների նկատմամաբ խրախուսանք կիրառում է պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

2. Քրեակատարողական ծառայողների նկատմամբ կարող է կիրառվել նաև արտահերթ կոչման շնորհում խրախուսանքի տեսակը եթե կրկնակի լրացել է

ունեցած կոչումով ծառայության սահմանված ժամկետը, որը քրեակատարողական ծառայողների նկատմամբ ծառայության ամբողջ ընթացքում կարող է կիրառվել մեկ անգամ: Արտահերթ կոչման շնորհում խրախուսանքի տեսակը կիրառում է կոչումը շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

3. Երկարամյա ծառայության և (կամ) ծառայողական պարտականությունները և (կամ) հանձնարարականները (առաջադրանքները) բարեխղճորեն կատարելու համար քրեակատարողական ծառայողը պարգևատրվում է մեդալով կամ կրծքանշանով:

4. Մեդալի և կրծքանշանի տեսակները, ձևերը և շնորհման կարգը սահմանում է հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը:

Հոդված 36. Քրեակատարողական ծառայողների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը

1. «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով քրեակատարողական ծառայողների նկատմամաբ կիրառվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգապահական տույժերը:

2. Քրեակատարողական ծառայողի նկատմամաբ կարող է կիրառվել նաև կոչման իջեցում մեկ աստիճանով կարգապահական տույժը՝ մեկ անգամ կոչումը շնորհած պաշտոնատար անձի կողմից: Կոչման իջեցում մեկ աստիճանով կարգապահական տույժը կիրառում է կոչումն շնորհած պաշտոնատար անձը:

3. Քրեակատարողական ծառայողների նկատմամբ կարգապահական տույժ կիրառում է քրեակատարողական ծառայության պետը: Քրեակատարողական ծառայության պետի հրամանով որոշ կարգապահական տուժերի նշանակման լիազորությունը կարող է պատվիրակել այլ պաշտոնատար անձանց:

Հոդված 37. ~~Կարգապահական տույժը կիրառելու և տույժը հանելու կարգը~~ Ծառայողական պարտականությունների կասեցումը

~~1. Կարգապահական տույժը նշանակվում է, եթե վեց ամսից ավելի չի անցել կարգապահական խախտումը հայտնաբերելու օրվանից՝ չհաշված քրեակատարողական ծառայողի հիվանդությունը կամ արձակուրդում գտնվելը, ընդ որում, նշանակվող տույժը պետք է համապատասխանի կատարված խախտման բնույթին և վտանգավորության աստիճանին:~~

~~1.1. Կարգապահական տույժ նշանակվել չի կարող, եթե մեկ տարուց ավելի է անցել կարգապահական խախտում կատարելու օրվանից:~~

~~2. Քրեակատարողական ծառայողների նկատմամբ կիրառվող տույժերը ձևակերպվում են գրավոր: Կարգապահական յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ:~~

~~3. Կարգապահական տույժի մասին քրեակատարողական ծառայողը տեղեկացվում է դրա նշանակումից հետո՝ հնգօրյա ժամկետում:~~

~~4. Եթե կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, քրեակատարողականծառայողը նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա կարգապահական տույժը համարվում է մարված:~~

~~5. Կարգապահական տույժը կիրառող պաշտոնատար անձի կամ նրա վերադասի կողմից կարող է հանվել նշանակումից վեց ամիս հետո՝ մինչև մեկ տարին լրանալը, եթե քրեակատարողական ծառայողը թույլ չի տվել կարգապահական նոր խախտում:~~

~~Բացառիկ դեպքերում մեկից ավելի կարգապահական տույժերը կարող է հանել համապատասխան նախարարը՝ սույն օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով:~~

~~6. Քրեակատարողական ծառայողների նկատմամբ սույն օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-5-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերը կարող են կիրառվել միայն ծառայողական քննության արդյունքների հիման վրա:~~

~~7. Քրեակատարողական ծառայողը պարտավոր է տալ գրավոր բացատրություններ, եթե իր նկատմամբ անցկացվում է ծառայողական քննություն:~~

~~Ծառայողական քննություն նշանակելու և անցկացնելու կարգը սահմանում է համապատասխան նախարարը:~~

8. Ծառայողական քննության ժամանակահատվածում քրեակատարողական ծառայողի լիազորությունները կարող են ժամանակավորապես դադարեցվել՝ վարձատրության պահպանմամբ, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ պաշտոնում մնալով՝ նա կխոչընդոտի ծառայողական քննությանը:

9. Քրեակատարողական ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում իրականացվելիս նրա լիազորությունները ժամանակավորապես դադարեցվում են մինչև քրեական հետապնդումը դադարեցնելը կամ մինչև տվյալ գործով դատարանի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Այդ դեպքում քրեակատարողականծառայողին աշխատավարձ վճարվում է մինչև երկու ամսվա համար, իսկ մնացած վճարումը կատարվում է անմեղության հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու կամ արդարացման դատավճիռ կայացնելու դեպքում:

~~**Հոդված 38. Քրեակատարողական ծառայողին հրամաններ տալու սահմանափակումները**~~

~~1. Քրեակատարողական ծառայողին չեն կարող տրվել այնպիսի բանավոր կամ գրավոր հրամաններ կամ ցուցումներ, որոնք՝~~

~~1) հակասում են Սահմանադրությանը, օրենքներին և այլ իրավական ակտերին.~~

~~2) հրամաններ կամ ցուցումներ տվողի կամ կատարողի լիազորությունների սահմաններից դուրս են:~~

~~2. Քրեակատարողական ծառայողը սույն հոդվածի 1-ին մասում նշված հրամաններ կամ ցուցումներ ստանալիս պարտավոր է ղեկավարվել օրենքների պահանջներով՝ այդ մասին տեղյակ պահելով վերադասին:~~

~~3. Ակնհայտ անօրինական հրամանը կամ ցուցումը չկատարելը քրեակատարողական ծառայողին ազատում է հրամանը կամ ցուցումը չկատարելու համար պատասխանատվությունից:~~

Հոդված 39. Քրեակատարողական ծառայությունից ազատելը

1. Քրեակատարողական ծառայողը քրեակատարողական ծառայությունից ազատվում է՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման դեպքում.

2) անձնական նախաձեռնությամբ՝ գրավոր դիմումի հիման վրա.

3) սույն օրենքի 41-րդ հոդվածով նախատեսված սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ.

4) առողջական վիճակի պատճառով՝ ծառայությանը ոչ պիտանի լինելու դեպքում.

5) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու դեպքում.

~~6) կարգապահական խախտումների համար, եթե մեկ տարվա ընթացքում նրա նկատմամբ կիրառվել է երեք և ավելի կարգապահական տույժ, որոնցից գոնե մեկը սույն օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կամ 4-րդ կետերով սահմանված տույժերից է.~~

~~7) սույն օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված տույժը կիրառելու դեպքում.~~

6) «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված կարգապահական տույժը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելու դեպքում կամ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված կարգապահական տույժերը մեկ տարվա ընթացքում կիրառելու դեպքում կամ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված կարգապահական տույժը կիրառելու դեպքում կամ կոչման իջեցում մեկ աստիճանով կարգապահական տույժը և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված տույժերից որևէ մեկը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելը:

7) «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու դեպքերում՝ համապատասխան եզրակացության հիման վրա.

8) սույն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները խախտելու դեպքում.

~~9) օրենքով նախատեսված դեպքում իր եկամուտների հայտարարագիրը չներկայացնելու դեպքում.~~

9) երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում.

10) քրեակատարողական ծառայողի նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում.

11) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան 120 օր անընդմեջ, կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում ավելի քան 140 օր ծառայության չներկայանալու դեպքում՝ չհաշված նախածննդյան ու հետծննդյան և երեխային խնամելու համար արձակուրդը.

12) սահմանված կարգով կադրերի ռեզերվից հանվելու դեպքում.

13) ~~քաղաքական կամ հայեցողական~~ **հանրային** պաշտոններում ընտրվելու կամ նշանակվելու դեպքում.

14) ~~սույն~~ օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու դեպքում:

2. Քրեակատարողական ծառայողի պարտականությունները համարվում են դադարած՝ նրա մահվան կապակցությամբ:

3. Քրեակատարողական ծառայողին ծառայությունից ազատում է նրան համապատասխան պաշտոնին նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

4. Երկու տարի անընդմեջ կատարողականի տարեկան գնահատման արդյունքները Կառավարության սահմանած տոկոսից (միավորից) ցածր լինելու դեպքում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն իրավունք ունի դադարեցնելու քրեակատարողական ծառայողի լիազորությունները:

Հոդված 40. Քրեակատարողական ծառայությունում զբաղեցրած պաշտոնից ազատելը

1. Քրեակատարողական ծառայողը քրեակատարողական ծառայությունում զբաղեցրած պաշտոնից ազատվում է՝

1) անձնական նախաձեռնությամբ՝ գրավոր դիմումի հիման վրա.

2) հաստիքների կրճատման, ստորաբաժանման լուծարման կամ վերակազմակերպման դեպքում՝ այլ պաշտոնի նշանակվելիս.

3) հաստիքների կրճատման, ստորաբաժանման լուծարման կամ վերակազմակերպման դեպքում, եթե քրեակատարողական ծառայողին համապատասխան պաշտոնում նշանակելը հնարավոր չէ, և հաստիքների կրճատումը պայմանավորված է տվյալ կառուցվածքային ստորաբաժանման հաստիքների ընդհանուր թվի կրճատմամբ.

4) առողջական վիճակի պատճառով՝ տվյալ պաշտոնում հետագա ծառայությունը շարունակելու անհնարինության դեպքում.

~~5) ատեստավորման արդյունքների հիման վրա.~~

~~6) սույն օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված կարգապահական տույժի ենթարկվելու դեպքում.~~

~~7) սույն օրենքով նախատեսված այլ դեպքերում:~~

Հոդված 41. Քրեակատարողական ծառայությունում տարիքային սահմանափակումները

1. Քրեակատարողական ծառայողների համար պաշտոն զբաղեցնելու սահմանային տարիք է համարվում կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնողների համար 50 տարեկանը, միջին և առաջատար խմբի պաշտոններ զբաղեցնողների համար՝ 55 տարեկանը, գլխավոր խմբի պաշտոններ զբաղեցնողների համար՝ 60 տարեկանը, իսկ ~~բարձրագույն խմբերի պաշտոններ զբաղեցնողների~~ **քրեակատարողական ծառայության պետի և նրա տեղակալների** համար՝ 65 տարեկանը:

2. Քրեակատարողական ծառայությունից ազատումը, սույն օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին համապատասխան, կատարվում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տարիքը լրանալուց հետո՝ հաջորդ ամսվա 1-ին:

Հոդված 42. Քրեակատարողական ծառայությունից ազատվածներին տրվող վճարումները և կենսաթոշակի ապահովումը

Քրեակատարողական ծառայությունից ազատվածներին տրվող վճարումները, արտոնությունները, կենսաթոշակի ապահովումը և կենսաթոշակ նշանակելու պայմանները, տեսակները, կենսաթոշակի անցնելու կապակցությամբ տրվող դրամական օգնությունը և վճարումները, ծառայության ստաժի հաշվարկման կարգը, ինչպես նաև սոցիալական ապահովության հետ կապված մյուս հարաբերությունները սահմանվում են

«Պետական պաշտոններ **և պետական ծառայության պաշտոններ** զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, զինծառայողների սոցիալական ապահովության հարաբերությունները կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով:

Հոդված 43. Քրեակատարողական ծառայության կադրերի ռեզերվը

1. Քրեակատարողական ծառայության կադրերի ռեզերվում գրանցվում են սույն օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-5-րդ կետերով նախատեսված հիմքերով զբաղեցրած պաշտոնից ազատված ծառայողները: Քրեակատարողական ծառայության կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողները կադրերի ռեզերվում չեն գրանցվում:

2. Քրեակատարողական ծառայության կադրերի ռեզերվում ծառայողի միանգամյա գտնվելու առավելագույն ժամկետը 6 ամիս է, սակայն ոչ ավելի, քան ծառայողի 65 տարին լրանալը:

3. Քրեակատարողական ծառայության կադրերի ռեզերվում գտնվելու առաջին չորս ամիսների համար ծառայողին վճարվում է նրա զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափը: Այն դեպքում, երբ քրեակատարողական ծառայության կադրերի ռեզերվում գտնվելու ընթացքում ծառայողն անձնական նախաձեռնությամբ ազատվում է քրեակատարողական ծառայությունից, ապա քրեակատարողականծառայողի վարձատրությունն իրականացվում է կադրերի ռեզերվում փաստացի գտնվելու ժամանակաշրջանին համապատասխան:

~~4. Սույն օրենքի հիման վրա քրեակատարողական ծառայության կադրերի ռեզերվում գտնվելու և ռեզերվից հանելու կարգը սահմանում է համապատասխան նախարարը:~~

4. Քրեակատարողական ծառայության կադրերի ռեզերվը վարվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով:

~~**Գ Լ ՈՒ Խ 14.1**~~
~~***(գլուխը լրաց. 17.11.09 ՀՕ-218-Ն)***~~

~~***ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ***~~

~~**Հոդված 51.1. Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների դասակարգումը**~~

~~1. Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնները դասակարգվում են խմբերի՝ ելնելով այդ պաշտոնն զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման պահանջի, ինչպես նաև գիտելիքների և հմտությունների անհրաժեշտ մակարդակից:~~

~~2. Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.~~

~~1) քաղաքացիական հատուկ ծառայության բարձրագույն պաշտոններ.~~

~~2) քաղաքացիական հատուկ ծառայության գլխավոր պաշտոններ.~~

~~3) քաղաքացիական հատուկ ծառայության առաջատար պաշտոններ.~~

~~4) քաղաքացիական հատուկ ծառայության կրտսեր պաշտոններ:~~

~~3. Քաղաքացիական հատուկ ծառայության գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոնների խմբերը դասակարգվում են 1-ին, 2-րդ և 3-րդ ենթախմբերի: Քաղաքացիական հատուկ ծառայության գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոնների խմբերում 1-ին ենթախումբը տվյալ խմբի բարձրագույն ենթախումբն է: Քաղաքացիական հատուկ ծառայության բարձրագույն խումբը ենթախմբերի չի դասակարգվում:~~

~~4. Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագիրը հաստատում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը՝ համապատասխան նախարարի առաջարկությամբ:~~

~~(51.1-ին հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-282-Ն)~~

-

~~Հոդված 51.2.~~ ~~Քաղաքացիական հատուկ ծառայության դասային աստիճանները~~

-

~~1. Քաղաքացիական ծառայողներին շնորհվում են հետևյալ դասային աստիճանները.~~

~~1) քաղաքացիական հատուկ ծառայության բարձրագույն պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հատուկ ծառայության 1-ին կամ 2-րդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան.~~

~~2) քաղաքացիական հատուկ ծառայության գլխավոր պաշտոնների՝~~

~~ա. 1-ին ենթախմբի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հատուկ ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան, ինչպես նաև ավելի բարձր՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հատուկ ծառայության 2-րդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան,~~

~~բ. 2-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հատուկ ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան, ինչպես նաև ավելի բարձր՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հատուկ ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան,~~

~~գ. 3-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հատուկ ծառայության 3-րդ դասի խորհրդականի դասային աստիճան, ինչպես նաև ավելի բարձր՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հատուկ ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան.~~

~~3) քաղաքացիական հատուկ ծառայության առաջատար պաշտոնների՝~~

~~ա. 1-ին ենթախմբի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հատուկ ծառայության 1-ին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, ինչպես նաև ավելի բարձր՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հատուկ ծառայության 3-րդ դասի խորհրդականի դասային աստիճան,~~

~~բ. 2-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հատուկ ծառայության 2-րդ դասի~~

~~առաջատար ծառայողի դասային աստիճան, ինչպես նաև ավելի բարձր՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հատուկ ծառայության 1-ին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան,~~

~~գ. 3-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հատուկ ծառայության 3-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, ինչպես նաև ավելի բարձր՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հատուկ ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան.~~

~~4) քաղաքացիական հատուկ ծառայության կրտսեր պաշտոնների՝~~

~~ա. 1-ին ենթախմբի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հատուկ ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան, ինչպես նաև ավելի բարձր՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հատուկ ծառայության 3-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան,~~

~~բ. 2-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հատուկ ծառայության 2-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան, ինչպես նաև ավելի բարձր՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հատուկ ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան,~~

~~գ. 3-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հատուկ ծառայության 3-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան, ինչպես նաև ավելի բարձր՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հատուկ ծառայության 2-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան:~~

~~2. *(մասն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-282-Ն)*~~

~~3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հատուկ ծառայության դասային աստիճանները, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասի, շնորհում է քրեակատարողական ծառայության պետը:~~

~~4. Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնի (բացառությամբ քաղաքացիական հատուկ ծառայությանբարձրագույն պաշտոնի) նշանակման հետ միաժամանակ քաղաքացիական ծառայողին շնորհվում է քաղաքացիական հատուկ ծառայության համապատասխան դասային աստիճան, եթե նա չունի քաղաքացիական հատուկ ծառայության համապատասխան կամ ավելի բարձր դասային աստիճան:~~

~~5. Քաղաքացիական ծառայողին իր զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված քաղաքացիական հատուկ ծառայության դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան (բացառությամբ քաղաքացիական հատուկ ծառայության բարձրագույն դասային աստիճանի) շնորհվում է համապատասխան դասային աստիճանն ստանալուց ոչ շուտ, քան երեք տարի, և ոչ ուշ, քան հինգ տարի հետո:~~

~~6. Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն (բացառությամբ քաղաքացիական հատուկ ծառայությանբարձրագույն պաշտոնի) առաջին անգամ զբաղեցնող անձին քաղաքացիական հատուկ ծառայությանհամապատասխան դասային աստիճան շնորհվում է սույն օրենքով նախատեսված փորձաշրջանի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում:~~

~~7. Սույն օրենքի 51.27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 17-րդ և 19-րդ կետերով նախատեսված հիմքերով զբաղեցրած պաշտոնից~~

~~ազատվելու հետ միաժամանակ քաղաքացիական ծառայողը զրկվում է քաղաքացիական հատուկ ծառայության դասային աստիճանից՝ տվյալ դասային աստիճանը շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ:~~

~~***(51.2-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-282-Ն)***~~

-

~~Հոդված 51.3.~~ ~~Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անվանացանկը և հաստիքացուցակը հաստատելը (փոփոխելը)~~

-

~~1. Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատում (փոփոխում) է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը՝ համապատասխան նախարարի առաջարկությամբ:~~

~~2. Քրեակատարողական ծառայության պաշտոնների հաստիքացուցակը համապատասխան նախարարը հաստատում (փոփոխում) է քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելուց (փոփոխելուց) հետո՝ 15-օրյա ժամկետում:~~

~~3. Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբում և ենթախմբում ընդգրկվող պաշտոնների անվանացանկը հաստատում (փոփոխում) է համապատասխան նախարարը:~~

~~***(51.3-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-282-Ն)***~~

-

~~Հոդված 51.4.~~ ~~Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անձնագրերը~~

-

~~1. Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատում (փոփոխում) է համապատասխան նախարարը՝ քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագրի հիման վրա:~~

~~2. Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անձնագրերն ընդգրկում են աշխատանքային ստաժի և փորձի առնվազն հետևյալ չափանիշները.~~

~~1) քաղաքացիական հատուկ ծառայության բարձրագույն պաշտոններ՝ բարձրագույն (կամ բարձրագույն մասնագիտական) կրթություն, քաղաքացիական հատուկ ծառայության գլխավոր պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա քաղաքացիական հատուկ ծառայության ստաժ և քաղաքացիական հատուկ ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական (բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների) կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ կամ առնվազն հինգ տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան.~~

~~2) քաղաքացիական հատուկ ծառայության գլխավոր պաշտոններ՝ բարձրագույն (կամ բարձրագույն մասնագիտական) կրթություն, քաղաքացիական հատուկ ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա քաղաքացիական~~

~~հատուկ ծառայության ստաժ և քաղաքացիական հատուկ ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական (բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների) կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ առնվազն հինգ տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան.~~

~~3) քաղաքացիական հատուկ ծառայության առաջատար պաշտոններ՝ բարձրագույն (կամ բարձրագույն մասնագիտական) կրթություն, քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոններում կամ քաղաքացիական ծառայության կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական (բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների) կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.~~

~~4) քաղաքացիական հատուկ ծառայության կրտսեր պաշտոններ՝ առանց աշխատանքային ստաժի:~~

~~3. Մինչև 2015 թվականի հունվարի 1-ը քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անձնագրերն ընդգրկում են նաև աշխատանքային ստաժի և փորձի հետևյալ չափանիշները.~~

~~1) քաղաքացիական հատուկ ծառայության բարձրագույն պաշտոններ՝ պետական կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ.~~

~~2) քաղաքացիական հատուկ ծառայության գլխավոր պաշտոններ՝ պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.~~

~~3) քաղաքացիական հատուկ ծառայության առաջատար պաշտոններ՝ պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ:~~

~~4. Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անձնագրերով կարող են նախատեսվել նաև այլ չափանիշներ:~~

~~5. Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնի անձնագիրը կարող է փոփոխվել, եթե դա տվյալ պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար չի առաջացնում այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստման արդյունքով:~~

~~***(51.4-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-282-Ն)***~~

~~-~~

~~**Հոդված 51.5. Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեցող անձինք**~~

~~-~~

Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունի Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած այն քաղաքացին, որը բավարարում է սույն օրենքի 51.4-րդ հոդվածի պահանջները:

-

Հոդված 51.6. Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք չունեցող անձը

-

Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք չունի այն անձը, որը՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատական կարգով զրկվել է պետական կամ համայնքային ծառայության որևէ պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանը և լիազորությունների իրականացմանը: Այդ հիվանդությունների ցանկը հաստատում է Կառավարությունը.

4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

5) օրենքով սահմանված կարգի խախտումով չի անցել պարտադիր զինվորական ծառայություն:

(51.6-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-282-Ն)

-

Հոդված 51.7. Քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելը

-

Քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոնը զբաղեցվում է արտամրցութային կարգով կամ մրցույթով:

-

Հոդված 51.8. Քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոն արտամրցութային կարգով զբաղեցնելու դեպքերը

-

Քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում առնվազն մեկամսյա ժամկետում՝ մինչև տվյալ պաշտոնի համար մրցույթ հայտարարելը, տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն իրավասու է տվյալ թափուր պաշտոնում նշանակելու՝

1) այն քաղաքացիական ծառայողին, որը միաժամանակ՝

ա. բավարարում է տվյալ թափուր պաշտոնի անձնագրի պահանջները,

բ. համարվում է քաղաքացիական հատուկ ծառայության միևնույն խմբի պաշտոն զբաղեցնող կամ առնվազն ունի տվյալ թափուր պաշտոնի համար նախատեսված քաղաքացիական հատուկ ծառայության դասային աստիճան կամ զբաղեցնելու է քաղաքացիական հատուկ ծառայության իր զբաղեցրած խմբին հաջորդող բարձր խմբի 3-րդ կամ 2-րդ ենթախմբերի պաշտոն,

գ. այդ մասին տվել է գրավոր համաձայնություն.

2) սույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված պաշտոն զբաղեցնող անձին կամ քաղաքացիական հատուկ ծառայության կադրերի ռեզերվում գրանցված այն քաղաքացիական ծառայողին, որը միաժամանակ՝

ա. բավարարում է տվյալ թափուր պաշտոնի անձնագրի պահանջները,

բ. այդ մասին տվել է գրավոր համաձայնություն:

Հոդված 51.9. Քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը

1. Նոր ստեղծված քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոններում (բացառությամբ սույն օրենքի 51.24-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, քաղաքացիական հատուկ ծառայության կրտսեր թափուր պաշտոնների), ինչպես նաև քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոններում սույն օրենքի 51.8-րդ հոդվածով և 51.24-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով և ժամկետներում նշանակումներ չկատարվելու դեպքերում այդ պաշտոնները զբաղեցվում են մրցույթով:

2. Քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնում է քրեակատարողական ծառայությանհամապատասխան ստորաբաժանումը:

3. Քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակվում է մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով:

4. Մրցութային հանձնաժողովը քաղաքացուն չի թույլատրում մասնակցել մրցույթին, եթե քաղաքացին չի բավարարում սույն օրենքի 51.5-րդ հոդվածով և 51.28-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, կամ առկա է սույն օրենքի 51.6-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը:

5. Մրցույթն անցկացվում է նաև, եթե մրցույթին մասնակցելու համար դիմել է մեկ մասնակից:

6. Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

7. Թեստավորումը կարող է անցկացվել համակարգչի միջոցով կամ գրավոր:

8. Թեստերը կազմվում են համապատասխան նախարարի սահմանած կարգով՝ համակարգչում զետեղված հարցաշարից և դրանցից պատահական ընտրված հարցերից՝ մասնակիցների գիտելիքները հետևյալ բնագավառներում ստուգելու համար.

1) Սահմանադրություն.

2) քաղաքացիական հատուկ ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրություն.

3) քրեական, քրեադատավարական և քրեակատարողական ոլորտը կանոնակարգող օրենսդրություն.

4) համապատասխան պետական մարմնի իրավասությունը կանոնակարգող, ինչպես նաև քաղաքացիական ծառայողի պաշտոնի համար նախատեսված գործառութային պարտականություններին վերաբերող պահանջները սահմանող օրենսդրություն (մասնագիտական հարցեր):

9. Համակարգչում զետեղված հարցաշարը ոչ ուշ, քան մրցույթ անցկացնելուց մեկ ամիս առաջ պետք է հրապարակվի:

~~10. Թեստավորման առաջադրանքները բաղկացած են հարցերից և խնդիրներից: Յուրաքանչյուր հարց (խնդիր) պետք է ունենա երեք կամ չորս ենթադրյալ պատասխան: Յուրաքանչյուր հարց (խնդիր) պետք է ունենա մեկ միանշանակ ճիշտ պատասխան:~~

~~11. Թեստավորման փուլն անցկացվում է մասնակիցների համար կոդերի կիրառմամբ՝ գաղտնիությունն ապահովելու նպատակով:~~

~~12. Մրցույթի երկրորդ՝ հարցազրույցի փուլին մասնակցելու իրավունք են ձեռք բերում թեստավորման առաջադրանքների առնվազն 80 տոկոսին ճիշտ պատասխանած մասնակիցները:~~

~~13. Մասնակիցների հետ հարցազրույցն անցկացվում է հարցատոմսերով՝ քաղաքացիական հատուկ ծառայության տվյալ պաշտոնի անձնագրի դրույթների շրջանակներում նրանց գործնական կարողություններն ստուգելու նպատակով:~~

~~14. Մրցութային հանձնաժողովը հարցազրույցի արդյունքի հիման վրա յուրաքանչյուր մասնակցի համար անցկացնում է քվեարկություն: Մրցութային հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ քվեարկում է կողմ կամ դեմ:~~

~~15. Մրցույթի հաղթող են ճանաչվում այն մասնակիցները, ովքեր քվեարկության արդյունքով հավաքել են մրցութային հանձնաժողովի՝ քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայները:~~

~~16. Մրցույթի արդյունքները հրապարակվում են մրցույթն անցկացնելուց հետո՝ նույն օրը:~~

~~17. Մրցույթի արդյունքները հրապարակվելուց հետո այդ արդյունքները կարող են մասնակցի (իր արդյունքների մասով) կամ մրցութային հանձնաժողովի անդամի կողմից գրավոր բողոքարկվել:~~

~~18. Գրավոր բողոքի քննության ժամանակ ուսումնասիրվում են մասնակցի տված պատասխանները, դրանց վերաբերյալ մրցութային հանձնաժողովի գնահատականները (դրանց ճիշտ կամ սխալ լինելը)՝ դրանք համադրելով քվեարկության արդյունքների հետ և որոշելով տվյալ մասնակցի՝ մրցույթի արդյունքով հաղթող ճանաչվելու հարցը:~~

~~19. Բողոքի վերաբերյալ ընդունված որոշումը հրապարակվում է դա ընդունվելուց հետո՝ նույն օրը:~~

~~20. Գրավոր բողոք ներկայացնելու, դա քննության առնելու և որոշում կայացնելու կարգն ու ժամկետները սահմանում է համապատասխան նախարարը:~~

~~21. Մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո գրավոր բողոքի բացակայության դեպքում մրցութային հանձնաժողովից ստացված մրցույթի արդյունքով հաղթող ճանաչված մասնակիցների վերաբերյալ եզրակացությունը մրցույթի նախապատրաստական աշխատանքներ իրականացնող ստորաբաժանման ղեկավարն ուղարկում է տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին: Եզրակացությունն ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, քաղաքացիական հատուկ ծառայության տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը մրցույթի արդյունքով հաղթող ճանաչված մասնակիցներից մեկին նշանակում է համապատասխան պաշտոնում:~~

~~22. Գրավոր բողոքի առկայության դեպքում, սույն հոդվածի 21-րդ մասով նախատեսված կարգով, եզրակացության հետ ուղարկվում է նաև սույն հոդվածի 18-րդ մասով նախատեսված որոշումը՝ դա ստանալուց անմիջապես հետո:~~

~~23. Եթե մրցույթի արդյունքով մասնակիցներից ոչ մեկը թեստավորման առաջադրանքների առնվազն 80 տոկոսին ճիշտ պատասխան չի տվել, կամ հարցազրույցի մասնակիցներից ոչ մեկը քվեարկության արդյունքով չի հավաքել~~

~~մրցութային հանձնաժողովի՝ քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայներ ու մրցույթում հաղթող չի ճանաչվել, կամ համապատասխան մարմնի ղեկավարը սույն հոդվածի 18-րդ մասով նախատեսված դեպքում կայացրել է մրցույթում հաղթող չճանաչելու մասին որոշում, ապա անցկացվում է նոր մրցույթ։~~

~~24. Եթե մրցութային հանձնաժողովն իրավազոր չէ (նիստին չի մասնակցում հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելին), ապա մրցույթը համարվում է չկայացած, և անցկացվում է կրկնակի մրցույթ։~~

~~25. Կրկնակի մրցույթի ժամանակ մրցույթին մասնակցելու համար նոր դիմումներ չեն ընդունվում, և այն անցկացվում է 10-օրյա ժամկետում ընդհանուր հիմունքներով։~~

~~26. Եթե մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ ներկայացված բոլոր դիմումներում առկա է սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված հիմքերից որևէ մեկը, ինչպես նաև եթե մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացրած անձանցից ոչ մեկը չի ներկայացել, ապա մրցույթը համարվում է չկայացած, և անցկացվում է նոր մրցույթ։~~

~~27. Սույն հոդվածով սահմանված կարգի խախտմամբ անցկացված մրցույթն անվավեր է ճանաչվում դատական կարգով։~~

~~28. Նոր մրցույթ է անցկացվում նաև մրցույթն անվավեր ճանաչվելու դեպքում։~~

~~29. Նոր մրցույթն անցկացվում է ընդհանուր հիմունքներով։~~

~~30. Եթե նոր կամ կրկնակի մրցույթը համարվում է չկայացած (անվավեր), ինչպես նաև նոր կամ կրկնակի մրցույթի արդյունքով հաղթող չի ճանաչվում, ապա քաղաքացիական հատուկ ծառայության տվյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարվում է նոր մրցույթ։~~

~~31. Մրցույթի հետ կապված և սույն օրենքով չկարգավորվող հարաբերությունները կարգավորվում են համապատասխան նախարարի հրամանով։~~

~~(51.9-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-282-Ն)~~

-

~~Հոդված 51.10. Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնի նշանակումը~~

-

~~1. Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնում նշանակվող անձն անփոփոխելի է։~~

~~2. Քաղաքացիական հատուկ ծառայության բարձրագույն պաշտոններում նշանակում և այդ պաշտոններից ազատում է համապատասխան նախարարը։~~

~~3. Քաղաքացիական հատուկ ծառայության գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոններում նշանակում և այդ պաշտոններից ազատում է քրեակատարողական ծառայության պետը։~~

~~4. Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն առաջին անգամ զբաղեցնող անձի նշանակումն իրականացվում է մինչև վեց ամիս փորձաշրջանով՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով։~~

~~(51.10-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-282-Ն)~~

-

~~Հոդված 51.11. Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնի նշանակելիս քաղաքացիական ծառայողի երդումը~~

-

~~1. Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն առաջին անգամ զբաղեցնող անձն իր պաշտոնն ստանձնում է հանդիսավոր պայմաններում իրեն պաշտոնում նշանակելու~~

~~իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կամ նրա ներկայացուցիչների ներկայությամբ տրված հետևյալ երդմամբ.~~

~~«Ես՝ (անուն, ազգանուն, հայրանուն), ստանձնելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնը, երդվում եմ. անձնվիրաբար ծառայել Հայրենիքիս՝ Հայաստանի Հանրապետությանը, խստագույնս պահպանել Սահմանադրությունը և օրենքները, աջակցել սահմանադրական կարգի պահպանմանը, արժանապատվորեն կրել քաղաքացիական ծառայողի բարձր կոչումը, անվերապահորեն կատարել ծառայողական պարտականություններս և պահպանել պետական ու ծառայողական գաղտնիքը»:~~

~~2. Երդումը տրվում է անհատական կարգով՝ յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի կողմից երդման տեքստն ընթերցելու միջոցով:~~

~~3. Քաղաքացիական ծառայողն ստորագրում է երդման իր ընթերցած տեքստը, որը կցվում է նրա անձնական գործին:~~

~~***(51.11-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-282-Ն)***~~

~~-~~

~~**Հոդված 51.12. Քաղաքացիական հատուկ ծառայության ստաժը**~~

~~-~~

~~1. Քաղաքացիական հատուկ ծառայության ստաժը ներառում է մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը, քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելը քրեակատարողականծառայության, ինչպես նաև այլ պետական մարմիններում քաղաքացիական կամ քաղաքացիական հատուկ ծառայության, քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն զբաղեցնելու և քաղաքացիական հատուկ ծառայության կադրերի ռեզերվում գտնվելու ողջ ժամանակահատվածը:~~

~~2. Քաղաքացիական հատուկ ծառայության ստաժը չի ներառում սույն հոդվածի 1-ին մասում նշված՝ օրենքով սահմանված կարգի խախտմամբ աշխատած ժամանակահատվածի ստաժը:~~

~~3. Քաղաքացիական հատուկ ծառայության ստաժը հաշվարկվում է քաղաքացիական ծառայողի ընդհանուր և մասնագիտական աշխատանքային ստաժում:~~

~~4. Սույն օրենքի 51.27-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված հիմքով քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնից ազատված անձի քաղաքական կամ հայեցողական (բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների) կամ քաղաքացիական պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածի աշխատանքային ստաժը հավասարեցվում է քաղաքացիական հատուկ ծառայությանստաժին:~~

~~5. Քաղաքացիական հատուկ ծառայությունում ժամանակահատվածը համարվում է քրեակատարողականծառայությունում ծառայության ստաժ և հաշվի է առնվում քաղաքացիական ծառայողին սույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված պաշտոնների նշանակելիս:~~

~~-~~

~~**Հոդված 51.13. Քաղաքացիական հատուկ ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելը**~~

~~-~~

~~1. Քաղաքացիական հատուկ ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի, մինչև քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոնը մրցույթի արդյունքով հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը, քաղաքացիական ծառայողի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության, սույն օրենքի 51.15-րդ հոդվածի 7-րդ մասով, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում այդ պաշտոնն զբաղեցվում է՝~~

~~1) պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հայեցողությամբ՝ տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված փոխարինող քաղաքացիական ծառայողի կողմից մինչև վեց ամիս ժամկետով կամ որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու եղանակով սույն մասի 2-րդ կետով նախատեսված անձանց կողմից, բացառությամբ հղիության, ծննդաբերության և երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդի, ինչպես նաև վեց ամիսը գերազանցող ժամկետով սույն օրենքի 51.15-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված գործուղման դեպքերի: Այդ ժամկետի ավարտից հետո կամ փոխարինողի բացակայության կամ սույն կետով նախատեսված մյուս դեպքերում մեկշաբաթյա ժամկետում.~~

~~2) քաղաքացիական հատուկ ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող քաղաքացիական ծառայողի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելով, իսկ դրա անհնարինության դեպքում հաշվի առնելով սույն օրենքի 51.5-րդ հոդվածի, 51.19-րդ հոդվածի 3-րդ մասի և 51.28-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ մեկ այլ անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելով:~~

~~2. Չի թույլատրվում սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված այլ անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքել, եթե քաղաքացիական հատուկ ծառայության ժամանակավոր թափուր տվյալ պաշտոնն առաջացել է նրա՝ այդ պաշտոնից սույն օրենքի 51.27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 10-րդ, 11-րդ, 17-րդ և 19-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով ազատվելու հետևանքով:~~

-

~~Հոդված 51.14. Քաղաքացիական ծառայողի ատեստավորումը~~

-

~~1. Յուրաքանչյուր տարի քաղաքացիական ծառայողների առնվազն մեկ երրորդը ենթակա է պարտադիր ատեստավորման:~~

~~2. Քաղաքացիական ծառայողի հերթական ատեստավորումն անցկացվում է երեք տարին մեկ:~~

~~3. Քաղաքացիական ծառայողի արտահերթ ատեստավորումն անցկացվում է հերթական ատեստավորումից առնվազն մեկ տարի հետո:~~

~~4. Քաղաքացիական ծառայողի արտահերթ ատեստավորումն անցկացվում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի պատճառաբանված որոշման հիման վրա:~~

~~5. Ատեստավորումն անցկացվում է քաղաքացիական ծառայողի անմիջական մասնակցությամբ:~~

~~6. Ատեստավորման ենթակա չեն՝~~

~~1) տվյալ պաշտոնը երեք տարուց պակաս ժամկետով զբաղեցնող քաղաքացիական ծառայողները, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել.~~

2) հղի և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող քաղաքացիական ծառայողները, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել:

7. Հղիության և երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող քաղաքացիական ծառայողները ենթակա են ատեստավորման արձակուրդից վերադառնալուց հետո՝ ոչ շուտ, քան մեկ տարի հետո, եթե վերջիններս ցանկություն չեն հայտնել ավելի վաղ ատեստավորվելու համար:

8. Ատեստավորման ենթակա, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակ քաղաքացիական ծառայողները ենթակա են ատեստավորման աշխատանքի ներկայանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

9. Սույն հոդվածի 6-րդ մասի 1-ին կետը չի տարածվում սույն օրենքի 51.8-րդ և 51.24-րդ հոդվածներով սահմանված կարգով քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն զբաղեցնելու դեպքերի վրա:

10. Ատեստավորման ենթակա քաղաքացիական ծառայողները ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ տեղեկացվում են ատեստավորման անցկացման մասին:

11. Ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ անմիջական ղեկավարը ներկայացնում է քաղաքացիական ծառայողի ծառայողական բնութագիրը:

12. Ծառայողական բնութագիրը պետք է բովանդակի տվյալներ քաղաքացիական ծառայողի մասին, նրա գործնական, մարդկային հատկանիշների և ծառայողական գործունեության արդյունքների հիմնավորված գնահատականը: Այդ գնահատականը պետք է հիմնվի նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակահատվածում քաղաքացիական ծառայողի կողմից իր կատարած աշխատանքների մասին յուրաքանչյուր կիսամյակ անմիջական ղեկավարին ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ վերջինիս եզրակացությունների հիման վրա:

13. Եթե ատեստավորումների միջև ընկած ժամանակահատվածում քաղաքացիական ծառայողի անմիջական ղեկավարն ազատվել է քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնից ատեստավորման արդյունքով զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու հիմքով (հայեցողական և քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող ղեկավարների դեպքում՝ հեռացման կամ պաշտոնանկության հիմքով), ապա վերջինիս տված եզրակացություններն իրավական ուժ չունեն: Եթե նման ղեկավարի տված եզրակացություններն ընդգրկում են ատեստավորումների միջև ընկած ժամանակահատվածի երկու երրորդից ավելին, ապա քաղաքացիական ծառայողի վերաբերյալ ծառայողական բնութագիր չի ներկայացվում:

14. Քաղաքացիական ծառայողն ատեստավորում անցկացնելու օրվանից առնվազն մեկ շաբաթ առաջ պետք է ծանոթանա իր ծառայողական բնութագրին:

15. Սույն հոդվածով սահմանված կարգով ծառայողական բնութագիր չներկայացնելը չի կարող բացասաբար ազդել քաղաքացիական ծառայողի ատեստավորման արդյունքների վրա:

16. Ատեստավորումն անցկացվում է հետևյալ եղանակներով.

1) փաստաթղթային.

2) թեստավորման և հարցազրույցի:

17. Այն քաղաքացիական ծառայողները, որոնք ունեն զբաղեցրած պաշտոնի ենթախմբի համար սույն օրենքով նախատեսված առավելագույն քաղաքացիական հատուկ ծառայության դասային աստիճան, ենթակա են փաստաթղթային ատեստավորման:

~~18. Փաստաթղթային աուդիտավորումն անցկացվում է ծառայողական բնութագրի հիման վրա՝ հարցազրույցի միջոցով: Հարցազրույցն անցկացվում է հարցատոմսերով՝ քաղաքացիական հատուկ ծառայության տվյալ պաշտոնի անձնագրի դրույթների շրջանակներում նրանց գործնական կարողություններն ստուգելու նպատակով:~~

~~19. Աուդիտավորման հանձնաժողովը յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի համար քվեարկության է դնում սույն հոդվածի 20-րդ մասի 1-ին կետի որոշումը, որը հանձնաժողովի՝ քվեարկությանը մասնակցած անդամների ձայների մեծամասնությամբ չընդունվելու դեպքում ընդունված է համարվում սույն հոդվածի 20-րդ մասի 2-րդ կետով նախատեսված որոշումը:~~

~~20. Փաստաթղթային աուդիտավորումից հետո աուդիտավորման հանձնաժողովն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.~~

~~1) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին.~~

~~2) ենթակա է աուդիտավորման թեստավորման և հարցազրույցի միջոցով:~~

~~21. Թեստավորման և հարցազրույցի միջոցով աուդիտավորման ենթակա են այն քաղաքացիական ծառայողները՝~~

~~1) որոնք փաստաթղթային աուդիտավորման ենթակա չեն.~~

~~2) որոնց վերաբերյալ աուդիտավորման հանձնաժողովն ընդունել է սույն հոդվածի 20-րդ մասի 2-րդ կետում նշված որոշումը:~~

~~22. Թեստավորումը կարող է անցկացվել համակարգչի միջոցով կամ գրավոր:~~

~~23. Թեստերը կազմում, հարցազրույցն անցկացնում և արդյունքները գնահատում է աուդիտավորման հանձնաժողովը՝ սույն օրենքի 51.9-րդ հոդվածով սահմանված կարգով:~~

~~24. Աուդիտավորման հանձնաժողովը թեստավորման և հարցազրույցի արդյունքներով ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.~~

~~1) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին.~~

~~2) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին:~~

~~25. Աուդիտավորման հանձնաժողովը յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի համար քվեարկության է դնում սույն հոդվածի 24-րդ մասի 1-ին կետի որոշումը, որը հանձնաժողովի՝ քվեարկությանը մասնակցած անդամների ձայների մեծամասնությամբ չընդունվելու դեպքում ընդունված է համարվում սույն հոդվածի 24-րդ մասի 2-րդ կետով նախատեսված որոշումը:~~

~~26. Աուդիտավորման հանձնաժողովի որոշումը պարտադիր է քաղաքացիական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի համար, բացառությամբ աուդիտավորման հանձնաժողովի որոշման բողոքարկման դեպքերի:~~

~~27. Քաղաքացիական ծառայողը, ինչպես նաև աուդիտավորման հանձնաժողովի անդամն իրավունք ունեն ծանոթանալու աուդիտավորման արդյունքներին և բողոքարկելու դրանք սույն օրենքի 51.9-րդ հոդվածով սահմանված կարգով:~~

~~28. Աուդիտավորման արդյունքները, սույն օրենքի 51.9-րդ հոդվածի 21-րդ և 23-րդ մասերով սահմանված կարգով եռօրյա ժամկետում ներկայացվում են քաղաքացիական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին, որը քաղաքացիական ծառայողի զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու արդյունքի դեպքում ընդունում է նրան զբաղեցրած պաշտոնից ազատելու մասինորոշում:~~

~~29. Քաղաքացիական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը սույն հոդվածի 28-րդ մասով նախատեսված որոշումն ընդունում է ոչ ուշ, քան աուդիտավորման արդյունքներն ստանալու օրվանից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:~~

~~30. Քաղաքացիական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը քաղաքացիական ծառայողի ժամանակավոր անաշխատունակության և արձակուրդում գտնվելու ժամանակ սույն հոդվածի 28-րդ մասով նախատեսված որոշումն ընդունում է նրա՝ աշխատանքի ներկայանալու օրվանից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում։~~

~~31. Ատեստավորման հետ կապված և սույն օրենքով չկարգավորվող հարաբերությունները կարգավորվում են համապատասխան նախարարի հրամանով։~~

~~(51.14-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-282-Ն)~~

-

~~Հոդված 51.15. Քաղաքացիական ծառայողի վերապատրաստումը, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով գործուղումը~~

-

~~1. Յուրաքանչյուր քաղաքացիական ծառայող առնվազն երեք տարին մեկ ենթակա է պարտադիր վերապատրաստման։~~

~~2. Վերապատրաստումն անցկացվում է նաև քաղաքացիական հատուկ ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով քաղաքացիական ծառայողի իրավունքների ու պարտականությունների, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման որոշակի պահանջների կատարելագործման կամ այդ պահանջների փոփոխության դեպքում՝ քաղաքացիական ծառայողի կամ քրեակատարողականծառայության պետի նախաձեռնությամբ։~~

~~3. Քաղաքացիական ծառայողի վերապատրաստումն անցկացվում է քրեակատարողական ծառայությանպետի հայտի հիման վրա։~~

~~4. Քաղաքացիական ծառայողների վերապատրաստումն անցկացվում է համապատասխան նախարարի հաստատած ծրագրերով։~~

~~5. Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման հետ կապված ծախսերը կատարվում են պետական բյուջեի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին։~~

~~6. Մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով քաղաքացիական ծառայողի գործուղումն իրականացնում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը։~~

~~7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերում պահպանվում են քաղաքացիական ծառայողի պաշտոնը և ստաժը, իսկ նրա վարձատրությունը կարող է պահպանվել նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հայեցողությամբ։~~

~~8. Սույն օրենքի հիման վրա քաղաքացիական ծառայողների վերապատրաստման, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով գործուղելու կարգը սահմանում է համապատասխան նախարարը։~~

~~(51.15-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-282-Ն)~~

-

~~Հոդված 51.16. Քաղաքացիական հատուկ ծառայության կադրերի ռեզերվը~~

-

1. Քաղաքացիական հատուկ ծառայության կադրերի ռեզերվը վարում է քրեակատարողական ծառայությունը:

2. Քաղաքացիական հատուկ ծառայության կադրերի ռեզերվում գրանցվում են սույն օրենքի 51.27-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 7-րդ կետով նախատեսված հիմքով քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնից ազատված անձինք.

2) 20-րդ կետով նախատեսված հիմքով քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնում չնշանակված անձինք:

3. Քաղաքացիական հատուկ ծառայության կադրերի ռեզերվում միանգամյա գտնվելու առավելագույն ժամկետը վեց ամիս է, բայց ոչ ավելի, քան կադրերի ռեզերվում գրանցված անձի 65 տարին լրանալը:

4. Սույն օրենքի հիման վրա քաղաքացիական հատուկ ծառայության կադրերի ռեզերվում գրանցելու և կադրերի ռեզերվից հանելու կարգը սահմանում է համապատասխան նախարարը:

(51.16-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-282-Ն)

-

Հոդված 51.17. Քաղաքացիական ծառայողի հիմնական իրավունքները

-

1. Քաղաքացիական ծառայողի հիմնական իրավունքներն են՝

1) գբաղեցրած պաշտոնում իր իրավունքները և պարտականությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.

2) իր անձնական գործի բոլոր նյութերին, իր գործունեության գնահատականներին և այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ ներկայացնելը.

3) ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.

4) սահմանված կարգով որոշումներ ընդունելը.

5) սահմանված կարգով և դեպքերում ծառայողական քննություն անցկացնել պահանջելը.

6) աշխատանքի, վարձատրության, առողջության պաշտպանությունը, անվտանգ և անհրաժեշտ աշխատանքային պայմանների ապահովվածությունը.

7) սոցիալական պաշտպանությունը և ապահովությունը.

8) իրավական պաշտպանությունը, այդ թվում՝ քաղաքական հետապնդումներից.

9) քաղաքացիական հատուկ ծառայության դասային աստիճանի սահմանված կարգով բարձրացումը.

10) պետական բյուջեի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին վերապատրաստվելը.

11) մրցույթի և ատեստավորման արդյունքները բողոքարկելը, այդ թվում՝ դատական կարգով.

12) քաղաքացիական հատուկ ծառայության կազմակերպման ու կատարելագործման հարցերի քննությանը մասնակցելը և առաջարկություններ ներկայացնելը:

2. Քաղաքացիական ծառայողն ունի նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ:

-

Հոդված 51.18. Քաղաքացիական ծառայողի հիմնական պարտականությունները

-

~~1. Քաղաքացիական ծառայողի հիմնական պարտականություններն են՝~~

~~1) Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները կատարելը.~~

~~2) մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ ապահովելը.~~

~~3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները ճշգրիտ ու ժամանակին կատարելը և հաշվետվություններ ներկայացնելը.~~

~~4) վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները կատարելը.~~

~~5) օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները պահպանելը.~~

~~6) սահմանված կարգով և ժամկետներում առաջարկություններ, դիմումներ և բողոքներ քննության առնելը և դրանց ընթացք տալը.~~

~~7) պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները պահպանելը նաև ծառայությունը դադարեցնելուց հետո.~~

~~8) օրենքով նախատեսված դեպքում իր եկամուտների հայտարարագիրը ներկայացնելը.~~

~~9) սահմանված կարգով և ժամկետներում մասնակցել ատեստավորմանը և վերապատրաստմանը:~~

~~2. Քաղաքացիական ծառայողն ունի նաև սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված այլ պարտականություններ:~~

~~***(51.18-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-282-Ն)***~~

-

~~Հոդված 51.19.~~ **~~Քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները~~**

-

~~1. Քաղաքացիական ծառայողն իրավունք չունի՝~~

~~1) կատարելու այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական, ստեղծագործական և բուժական աշխատանքից.~~

~~2) անձամբ զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ.~~

~~3) լինելու երրորդ անձանց ներկայացուցիչն այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ ինքը ծառայության մեջ է, կամ որն անմիջականորեն ենթակա է իրեն կամ անմիջականորեն վերահսկելի է իր կողմից.~~

~~4) իրականացնելու քաղաքացիական ծառայողների քաղաքական զսպվածության սկզբունքի խախտումներ՝ իր ծառայողական դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական միավորումների (այդ թվում՝ կրոնական) շահերի համար, նրանց նկատմամբ վերաբերմունք քարոզել, ինչպես նաև իր ծառայողական պարտականությունները կատարելիս այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնելու.~~

~~5) հոնորար ստանալու ծառայողական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար.~~

6) ոչ ծառայողական նպատակներով օգտագործելու նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական այլ գույքը և ծառայողական տեղեկատվությունը.

7) ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալու նվերներ, գումարներ կամ ծառայություններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.

8) որպես պետության ներկայացուցիչ՝ գույքային գործարքներ կնքելու սույն հոդվածի 3-րդ մասում նշված անձանց հետ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

2. Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնի նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, քաղաքացիական ծառայողը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավոր է առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում 10 և ավելի տոկոս բաժնեմաս ունենալու դեպքում դա հանձնել հավատարմագրային կառավարման: Քաղաքացիական ծառայողն իրավունք ունի հավատարմագրային կառավարման հանձնված գույքից ստանալու եկամուտ:

3. Քաղաքացիական ծառայողին արգելվում է համատեղ աշխատել մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ:

-

Հոդված 51.20. Քաղաքացիական ծառայողին հանձնարարականներ տալու սահմանափակումները

-

1. Քաղաքացիական ծառայողին չեն կարող տրվել այնպիսի բանավոր կամ գրավոր հանձնարարականներ, որոնք՝

1) հակասում են Սահմանադրությանը և օրենքներին.

2) հանձնարարականներ տվողի կամ կատարողի լիազորությունների շրջանակներից դուրս են:

2. Սույն հոդվածի 1-ին մասի խախտմամբ հանձնարարականներ տալու դեպքերում քաղաքացիական ծառայողը պարտավոր է հանձնարարականի օրինականության վերաբերյալ իր կասկածների մասին անհապաղ գրավոր զեկուցել հանձնարարականը տվողին և նրա վերադասին կամ նրանց փոխարինող անձանց: Եթե վերադասը (նրա բացակայության դեպքում՝ նրան փոխարինող անձը կամ հանձնարարական տվողը) գրավոր հաստատում է հանձնարարականը, ապա քաղաքացիական ծառայողը պարտավոր է դա կատարել (բացառությամբ այն դեպքերի, երբ հանձնարարականի կատարումը կհանգեցնի օրենքով սահմանված քրեական կամ վարչական պատասխանատվության) և այդ մասին գրավոր տեղեկացնել համապատասխան նախարարին: Քաղաքացիական ծառայողի կողմից այդ հանձնարարականի կատարման համար պատասխանատվությունը կրում է հանձնարարականը գրավոր հաստատած անձը:

(51.20-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-282-Ն)

-

Հոդված 51.21. Քաղաքացիական ծառայողի սոցիալական երաշխիքները

-

~~1. Պետությունը քաղաքացիական ծառայողի համար երաշխավորում է՝~~

~~1) ծառայողական պարտականությունների կատարման համար անվտանգ և անհրաժեշտ աշխատանքային պայմաններ.~~

~~2) վարձատրություն, իր զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճանի համար հավելավճար և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ վճարներ.~~

~~3) ամենամյա վճարովի արձակուրդ.~~

~~4) վերապատրաստում՝ այդ ընթացքում պահպանելով նրա պաշտոնը և դրա համար նախատեսված վարձատրությունը.~~

~~5) օրենքով սահմանված դեպքերում և կարգով պարտադիր պետական սոցիալական ապահովագրություն.~~

~~6) ծառայողական պարտականությունները կատարելիս հաշմանդամության դեպքում նրան, իսկ զոհվելու դեպքում՝ նրա ընտանիքի անդամներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան վճարով ապահովում.~~

~~7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով, քաղաքացիական ծառայողի դիմումի հիման վրա ծառայողական պարտականությունների կատարման հետ կապված՝ նրա և նրա ընտանիքի անդամների անվտանգության պաշտպանության ապահովում բռնությունից, ահաբեկումից, այլ ոտնձգություններից.~~

~~8) ծառայողական գործուղումների հետ կապված՝ տրանսպորտային, բնակարանային և այլ ծախսերի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցում:~~

~~2. Քաղաքացիական ծառայողին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով հատկացվում է տրանսպորտային միջոց կամ տրանսպորտային ծախսերի փոխհատուցում:~~

-

~~Հոդված 51.22. Քաղաքացիական ծառայողի վարձատրությունը~~

-

~~Քաղաքացիական ծառայողի աշխատանքի վարձատրությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:~~

-

~~Հոդված 51.23. Քաղաքացիական ծառայողի սոցիալական ապահովությունը~~

-

~~Քաղաքացիական ծառայողի սոցիալական (այդ թվում՝ կենսաթոշակային) ապահովությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:~~

-

~~Հոդված 51.24. Քաղաքացիական ծառայողի իրավական վիճակը համապատասխան մարմնի կառուցվածքային փոփոխության (անվանափոխության) ժամանակ~~

-

~~1. Բրեակատարողական ծառայության կառուցվածքային փոփոխությունը (անվանափոխությունը) քաղաքացիական ծառայողին պաշտոնից ազատելու հիմք չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ուղեկցվում են կառուցվածքային փոփոխությամբ (անվանափոխությամբ) պայմանավորված հաստիքների կրճատմամբ:~~

~~Հաստիքների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը տրվում է հոի կամ մինչև երեք տարեկան երեխա խնամող քաղաքացիական ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության դեպքում՝ քաղաքացիական հատուկ ծառայության ավելի բարձր դասային աստիճան ունեցող քաղաքացիական ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության դեպքում՝ քաղաքացիական հատուկ ծառայության առավել երկար ստաժ ունեցող քաղաքացիական ծառայողին:~~

~~2. Բրեակատարողական ծառայության կառուցվածքային փոփոխության (անվանափոխության) հետևանքով քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անվանացանկում առաջացած նոր պաշտոնները զբաղեցվում են անվանացանկում փոփոխություններ կատարելուց հետո՝ սույն օրենքի 51.8-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետում:~~

~~3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով և ժամկետում նշանակումներ չկատարելու դեպքում այդ պաշտոններն զբաղեցվում են սույն օրենքով նախատեսված մրցույթով:~~

-

~~Հոդված 51.25.~~ ~~Քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվող խրախուսանքի տեսակները~~

-

~~1. Երկարամյա ծառայության, ինչպես նաև ծառայողական պարտականությունները և հատուկ առաջադրանքները գերազանց կատարելու համար քաղաքացիական ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ տեսակները.~~

~~1) շնորհակալության հայտարարում.~~

~~2) միանվագ դրամական պարգևատրում.~~

~~3) հուշանվերով պարգևատրում.~~

~~4) լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում.~~

~~5) կարգապահական տույժի հանում:~~

~~2. Քաղաքացիական ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել նաև օրենքով սահմանված խրախուսման այլ տեսակներ:~~

~~3. Քաղաքացիական ծառայողի նկատմամբ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված խրախուսանքները կիրառում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:~~

-

~~Հոդված 51.26.~~ ~~Քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը~~

-

~~1. Ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև ծառայողական լիազորությունները վերազանցելու, կարգապահական ներքին կանոնները խախտելու դեպքերում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվում են հետևյալ կարգապահական տույժերը.~~

~~1) նկատողություն.~~

~~2) խիստ նկատողություն.~~

~~3) զբաղեցրած պաշտոնից ազատում.~~

4) քաղաքացիական հատուկ ծառայության ավելի բարձր դասային աստիճանի (բացառությամբ քաղաքացիական հատուկ ծառայության բարձրագույն դասային աստիճանի) իջեցում՝ մեկ աստիճանով:

2. Մինչև կարգապահական տույժ նշանակելը կարգապահական տույժ կիրառելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարգապահական խախտման վերաբերյալ պետք է գրավոր բացատրություն պահանջի կարգապահական խախտում թույլ տված քաղաքացիական ծառայողից: Բացատրություն տալուց հրաժարվելու դեպքում կազմվում է համապատասխան արձանագրություն: Բացատրություն տալուց հրաժարվելը հիմք չէ կարգապահական տույժ չկիրառելու համար:

3. Կարգապահական տույժը նշանակվում է, եթե վեց ամսից ավելի չի անցել կարգապահական խախտման հայտնաբերման օրվանից՝ չհաշված հիվանդությունը կամ արձակուրդում կամ գործուղման մեջ գտնվելը:

4. Կարգապահական տույժ նշանակվել չի կարող, եթե մեկ տարուց ավելի է անցել կարգապահական խախտում կատարելու օրվանից:

5. Կարգապահական տույժը քաղաքացիական ծառայողին հաղորդվում է ոչ ուշ, քան կարգապահական տույժ նշանակելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

6. Կարգապահական յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ:

7. Եթե քաղաքացիական ծառայողը կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա նա համարվում է կարգապահական տույժի չենթարկված: Կարգապահական տույժը կարող է հանվել մինչև մեկ տարին լրանալը, եթե քաղաքացիական ծառայողը թույլ չի տվել կարգապահական նոր խախտում և դրսևորել է իրեն որպես բարեխիղճ ծառայող:

8. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգապահական տույժերը քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

9. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառում է քաղաքացիական հատուկ ծառայության տվյալ դասային աստիճանը շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

10. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերը կիրառվում են ծառայողական քննություն անցկացնելուց հետո: Ծառայողական քննություն նշանակելու և անցկացնելու կարգը սահմանում է համապատասխան նախարարը:

11. Ծառայողական քննություն անցկացնելու ընթացքում քաղաքացիական ծառայողի ծառայողական պարտականությունների կատարումը մինչև մեկ ամիս ժամկետով կարող է կասեցվել քաղաքացիական ծառայողի վարձատրության պահպանմամբ:

(51.26-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-282-Ն)

-

Հոդված 51.27. Քաղաքացիական ծառայողին պաշտոնից ազատելու հիմքերը

-

1. Քաղաքացիական ծառայողին պաշտոնից ազատելու հիմքերն են՝

1) անձնական դիմումը.

2) օրենքով սահմանված դեպքում իր եկամուտների հայտարարագիրը չներկայացնելը.

~~3) սույն օրենքի 51.26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելը.~~

~~4) սույն օրենքի 51.26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերը մեկ տարվա ընթացքում կիրառելը.~~

~~5) սույն օրենքով նախատեսված ատեստավորմանը երեք անգամ չներկայանալը.~~

~~6) սույն օրենքով նախատեսված ատեստավորման արդյունքները.~~

~~7) հաստիքների կրճատումը.~~

~~8) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան վեց ամիս աշխատանքի չներկայանալը՝ չհաշված հղիության և ծննդաբերության արձակուրդը.~~

~~9) քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական կամ քրեակատարողական ծառայությանպաշտոններում ընտրվելը կամ նշանակվելը.~~

~~10) քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնը զբաղեցնելու՝ սույն օրենքով սահմանված կարգի խախտումը.~~

~~11) սույն օրենքի 51.19-րդ հոդվածի 1-3-րդ մասերով նախատեսված սահմանափակումները չպահպանելը.~~

~~12) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելը.~~

~~13) մեղադրական դատավճիռն ուժի մեջ մտնելը.~~

~~14) քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն զբաղեցնելու՝ սույն օրենքով սահմանված առավելագույն տարիքը լրանալը.~~

~~15) սույն օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելը.~~

~~16) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող ճանաչվելը.~~

~~17) դատական կարգով քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկվելը.~~

~~18) սույն օրենքի 51.6-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված հիվանդություններից որևէ մեկով հիվանդանալը.~~

~~19) սույն օրենքի 51.26-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված կարգապահական տույժ կիրառելը.~~

~~20) սույն օրենքի 51.24-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում նշանակում չկատարելը.~~

~~21) սույն օրենքի 51.8-րդ հոդվածի հիմքով արտամրցութային կարգով քաղաքացիական հատուկ ծառայությանթափուր պաշտոնին նշանակվելը:~~

~~2. Քաղաքացիական ծառայողի պարտականությունները համարվում են դադարած նրա մահվան դեպքում:~~

~~3. Քաղաքացիական ծառայողը պաշտոնից ազատման ենթակա չէ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով, եթե առկա է սույն հոդվածի 1-ին մասի 2-21-րդ կետերով նախատեսված՝ պաշտոնից ազատման հիմքերից որևէ մեկը:~~

~~4. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով քաղաքացիական ծառայողն ազատվում է զբաղեցրած պաշտոնից անձնական դիմում ներկայացնելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, եթե այդ դիմումում այլ ժամկետ նախատեսված չէ:~~

-

~~Հոդված 51.28.~~ ~~Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը~~

-

1. Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը 65 տարին է։

2. Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալու դեպքում տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ քաղաքացիական ծառայողը կարող է մինչև մեկ տարի ժամկետով շարունակել զբաղեցնել իր պաշտոնը։

-

Հոդված 51.29. Քաղաքացիական ծառայողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու որոշումը դատական կարգով բողոքարկելը

-

1. Քաղաքացիական ծառայողն իր նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու, այդ թվում՝ քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնից ազատելու որոշումը կարող է բողոքարկել դատական կարգով։

2. Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնից ազատելու որոշումն անվավեր ճանաչվելու դեպքում քաղաքացիական ծառայողը վերականգնվում է իր պաշտոնում դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ ինգօրյա ժամկետում, և հարկադիր պարապուրդի դիմաց ստանում է հատուցում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով։

-

Հոդված 51.30. Քաղաքացիական հատուկ ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովները

-

1. Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթը և քաղաքացիական ծառայողների ատեստավորումն անցկացնում են համապատասխանաբար քաղաքացիական հատուկ ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովները։

2. Քաղաքացիական հատուկ ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերում ներգրավվում են նաև գիտական կամ ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ։

3. Քաղաքացիական հատուկ ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հաստատում է համապատասխան նախարարը, իսկ անհատական կազմերը՝ տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը։

(51.30-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-282-Ն)

-

Հոդված 51.31. Վեճերի լուծումը և պատասխանատվությունը քաղաքացիական հատուկ ծառայությանմասին օրենսդրությունը խախտելու համար

-

1. Քաղաքացիական հատուկ ծառայության մասին օրենսդրության կիրառման հետ կապված վեճերը լուծվում են համապատասխան նախարարի կողմից կամ դատական կարգով։

2. Քաղաքացիական հատուկ ծառայության մասին օրենսդրությունը խախտող անձինք կրում են պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով։

(51.31-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-282-Ն)

(գլուխը լրաց. 17.11.09 ՀՕ-218-Ն)

Հոդված 55.1. Քրեակատարողական ծառայության պաշտոնի անձնագիր

1. Բացառությամբ քրեակատարողական ծառայության պետի և նրա տեղակալների պաշտոնների, քրեակատարողական ծառայության մյուս պաշտոնների համար սահմանվում է պաշտոնի անձնագիր: Պաշտոնի անձնագրի հաստատման և փոփոխման հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով:

2. Քրեակատարողական ծառայության պաշտոնի անձնագիրը (աշխատատեղի նկարագիր) քրեակատարողական ծառայության իրավասությունը սահմանող իրավական ակտերից և խնդիրներից բխող քրեակատարողական ծառայողի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրող և այդ գործառույթները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ ու կոմպետենցիաներ նախատեսող, կառավարման համակարգում տեղակայվածությունը նախատեսող և սույն օրենքով սահմանված կարգով հաստատված փաստաթուղթ է:

3. Քրեակատարողական ծառայությունում պաշտոնների անձնագրերը հաստատում էքրեակատարողական ծառայության պետը:

Հոդված 55.2. Քրեակատարողական ծառայողի անձնական գործը

1. Քրեակատարողական ծառայողի ծառայության ընթացքն արտացոլվում է նրա անձնական գործում: Քրեակատարողական ծառայողի անձնական գործը վարում է համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը՝ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով:

Հոդված 55.3. Քրեակատարողական ծառայողների էթիկայի հանձնաժողովը

1. Քրեակատարողական ծառայողների էթիկայի հանձնաժողովի ձևավորման, գործունեության քրեկատարողական ծառայողի վարքագծի կանոնները խախտելու և (կամ) հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու և (կամ) շահերի բախման կանոնները, նվերներ ընդունելու արգելքը խախտելու, անհամատեղելիության պահանջները չպահպանելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

2. Քրեակատարողական ծառայության անձնակազմի կառավարման ստորաբաժանումում նախատեսվում է բարեվարքության հարցերով կազմակերպչի քաղաքացիական ծառայության պաշտոն:»:

Հոդված 32. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո քրեակատարողական ծառայողը քաղաքացիական ծառայողի պաշտոնում նշանակվելու (քաղաքացիական ծառայող համարվելու) օրվանից հետո՝ երեք տարվա ընթացքում, օգտվում է «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքից: Այս դեպքում քրեակատարողական ծառայությունում պաշտոն զբաղեցրած ժամանակահատվածը համարվում է զինվորական ծառայության ստաժ:

Հոդված 33. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

~~Սույն սահմանադրական օրենքով սահմանվում են Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) լիազորությունները, գործունեության կարգը և երաշխիքները, Պաշտպանի ընտրության և լիազորությունների դադարեցման կարգը, Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց (այսուհետ՝ պետական ծառայող) իրավական կարգավիճակի, նրանց պաշտոնի նշանակման և ազատման, դասային աստիճաններ~~

~~շնորհելու, պետական ծառայության կազմակերպման և ղեկավարման առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերություններ:~~

«1. Սույն սահմանադրական օրենքով սահմանվում են Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) լիազորությունները, գործունեության կարգը և երաշխիքները, Պաշտպանի ընտրության և լիազորությունների դադարեցման կարգը, Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց իրավական կարգավիճակի և քաղաքացիական ծառայության առանձնահատկությունները:»:

Հոդված 29. Պաշտպանի լիազորությունները նորմատիվ իրավական ակտերի կատարելագործման հարցում

1. Պաշտպանն իրավասու է մինչև մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի ընդունումը դրանց վերաբերյալ իրավասու մարմին ներկայացնելու գրավոր կարծիք:

2. Այն բոլոր դեպքերում, երբ Պաշտպանն իր գործունեության ընթացքում պարզում է, որ մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող հարցերը օրենքով կամ որևէ այլ իրավական ակտով կարգավորված չեն կամ ունեն ոչ լիարժեք կարգավորում, ապա Պաշտպանը կարող է համապատասխան առաջարկություն ներկայացնել իրավական ակտն ընդունող մարմին՝ նշելով իրավական ակտը փոփոխելու կամ լրացնելու անհրաժեշտությունն ու սահմանները:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված առաջարկությունը ստացած մարմինը պարտավոր է այն քննարկել և արդյունքների մասին սույն օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ժամկետում տեղեկացնել Պաշտպանին:

4. Պաշտպանն իրավունք ունի դիմելու Սահմանադրական դատարան օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով:

~~5. Պաշտպանը կարող է իրականացնել իր աշխատակազմի, ինչպես նաև շահառու մարմինների և կազմակերպությունների՝ մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող հարցերով վերապատրաստումներ:~~

«5. Աշխատակազմի մասնագիտական վերապատրաստումներն և մարդու իրավունքների վերաբերյալ կրթական ծրագրերը իրականացնում է Պաշտպանը՝ իր աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման կամ այլ հաստատության միջոցով: Պաշտպանը կարող է իրականացնել նաև շահառու մարմինների և կազմակերպությունների՝ մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող հարցերով վերապատրաստումներ:»:

ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ~~ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ~~ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 34. Պ~~աշտպանի աշխատակազմում պետական ծառայությունը կարգավորող իրավական ակտերը~~ Պաշտպանի աշխատակազմում քաղաքացիական ծառայությունը

~~1. Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու, դասային աստիճաններ շնորհելու, թափուր պաշտոնների համալրման նպատակով մրցույթ անցկացնելու, պետական ծառայողների վերապատրաստման, կադրերի ռեզերվում ընդգրկելու, նրանց գործունեության գնահատման, փոխարինման, գործուղման, արձակուրդի տրամադրման, պետական ծառայողների սոցիալական երաշխիքների և դրանց հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, ինչպես նաև «Դատական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, եթե սույն օրենքով այդ հարաբերությունները կարգավորող առանձնահատկություններ սահմանված չեն:~~

«1.Պաշտպանի աշխատակազմում ծառայությունը քաղաքացիական ծառայություն է, որը կարգավորվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով, եթե սույն օրենքով առանձնահատկություններ նախատեսված չեն:».

~~2. Պետական ծառայողների ծառայողական փոխհարաբերությունները կարգավորվում են Պաշտպանի հաստատած կարգապահական ներքին կանոններով:~~

3. Պետական ծառայողների աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ, եթե սույն օրենքով և այլ իրավական ակտերով այդ հարաբերությունները կարգավորող առանձնահատկություններ սահմանված չեն:

«4. Պաշտպանի աշխատակազմում քաղաքացիական ծառայություն չի համարվում Պաշտպանի ներգրաված փորձագետների, մասնագետների և տեխնիկական սպասարկման և պայմանագրային հիմունքներով առանձին այլ խնդիրներ ու գործառույթներ իրականացնող անձանց գործունեությունը:»:

~~**Հոդված 35. Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայությունը և դասային աստիճանները**~~

~~1. Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայությունը Սահմանադրությամբ և սույն օրենքով Պաշտպանին վերապահված լիազորությունների իրականացումն ապահովելու նպատակով իրականացվող մասնագիտական գործունեություն է: Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական ծառայության հատուկ տեսակ է:~~

~~2. Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայություն չի համարվում Պաշտպանի ներգրաված փորձագետների, մասնագետների և տեխնիկական~~

~~սպասարկման և պայմանագրային հիմունքներով առանձին այլ խնդիրներ ու գործառույթներ իրականացնող անձանց գործունեությունը:~~

~~3. Պետական ծառայողներին շնորհվում են հետևյալ դասային աստիճանները.~~

~~1) բարձրագույն պաշտոններ զբաղեցնող պետական ծառայողներին՝ Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության 1-ին և 2-րդ դասի պետական խորհրդականի դասային աստիճաններ.~~

~~2) գլխավոր պաշտոններ զբաղեցնող պետական ծառայողներին՝ Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության 1-ին և 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճաններ.~~

~~3) առաջատար պաշտոններ զբաղեցնող պետական ծառայողներին՝ Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության 1-ին և 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճաններ.~~

~~4) կրտսեր պաշտոններ զբաղեցնող պետական ծառայողներին՝ Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության 1-ին և 2-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճաններ:~~

~~4. Բոլոր պետական ծառայողներին Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության դասային աստիճանները շնորհում, դասային աստիճանն իջեցնում, ինչպես նաև դասային աստիճանից զրկում է Պաշտպանը:~~

~~(35-րդ հոդվածը փոփ. 13.06.18 ՀՕ-355-Ն)~~

Հոդված 36. Պաշտպանի աշխատակազմը

~~1. Պաշտպանի աշխատակազմն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող պետական կառավարչական հիմնարկ է, որի լիազորություններն իրականացնում է աշխատակազմի քարտուղարությունը:~~

«1. Պաշտպանը ձևավորում է իր աշխատակազմը՝ հաստատելով աշխատակազմի կառուցվածքը:».

~~2.~~ Պաշտպանի աշխատակազմն ապահովում է Պաշտպանի՝ Սահմանադրությամբ և սույն օրենքով վերապահված լիազորությունների լիարժեք ու արդյունավետ իրականացումը, ~~ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունը:~~

3. Պաշտպանի աշխատակազմը կազմված է երկու դեպարտամենտից, կանխարգելման ազգային մեխանիզմի ստորաբաժանումից, քարտուղարությունից, մարզային և Պաշտպանի որոշմամբ ստեղծվող այլ ստորաբաժանումներից, ինչպես նաև Պաշտպանի խորհրդականներից, օգնականներից և մամուլի քարտուղարից: Դեպարտամենտները, կանխարգելման ազգային մեխանիզմի ստորաբաժանումը և մարզային ստորաբաժանումները հանդիսանում են Պաշտպանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումներ:

4. Պաշտպանի որոշմամբ Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձինք կարող են հանդես գալ որպես Պաշտպանի ներկայացուցիչներ Ազգային ժողովում և Սահմանադրական դատարանում:

(36-րդ հոդվածը փոփ. 13.06.18 ՀՕ-355-Ն)

Հոդված 37. Պաշտպանի աշխատակազմի քարտուղարությունը

1. Քարտուղարությունը բաղկացած է գլխավոր քարտուղարից, պետական ծառայողներից, ինչպես նաև տեխնիկական սպասարկում իրականացնող անձանցից:

2. Քարտուղարության կառուցվածքում ներառվում են օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված նրա կառուցվածքային ստորաբաժանումները:

3. Գլխավոր քարտուղարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Պաշտպանը:

4. Քարտուղարությունը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Պաշտպանի հաստատած կանոնադրության հիման վրա:

5~~. Քարտուղարությունն իր իրավասության սահմաններում կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:~~

- **«5. Գլխավոր քարտուղարն իր իրավասության սահմաններում կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ:»:**

6. Քարտուղարությունն աջակցում է Պաշտպանի, նրա աշխատակազմի ստորաբաժանումների, ինչպես նաև Պաշտպանի խորհրդականների, օգնականների և մամուլի քարտուղարի գործունեության լիարժեք և արդյունավետ իրականացմանը:

(37-րդ հոդվածը փոփ. 13.06.18 ՀՕ-355-Ն)

Հոդված 39. Պաշտպանի աշխատակազմի ստորաբաժանումների և քարտուղարության կառավարումը և ղեկավարումը

1. Պաշտպանի աշխատակազմի ստորաբաժանումների և քարտուղարության կառավարումն իրականացնում է Պաշտպանը: Պաշտպանը՝

1) ղեկավարում, համակարգում և վերահսկում է Պաշտպանի աշխատակազմի ստորաբաժանումների ընթացիկ գործունեությունը, ապահովում է դրանց առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացումը.

2) արձակում է պարտադիր կատարման ենթակա հրամաններ, հանձնարարականներ, ընդունում որոշումներ.

3) հաստատում և փոփոխում է Պաշտպանի աշխատակազմի աշխատողների քանակը և հաստիքացուցակը.

4~~) հաստատում է Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության պաշտոնների անվանացանկը և պետական ծառայողների պաշտոնների անձնագրերը.~~

- **«4) հաստատում և փոփոխում է քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում այլ պաշտոնատար անձանց պաշտոնների անձնագրերը.».**

5) նշանակում և պաշտոնից ազատում է պետական ծառայողներին և Պաշտպանի աշխատակազմում ~~հայեցողական~~ **այլ** պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառում է խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.

~~6) սահմանում է պետական ծառայողների վերապատրաստման, գործունեության գնահատման կարգը, չափանիշները և բնութագրի ձևը, պետական ծառայողների վարքագծի կանոնները, ծառայողական քննություն անցկացնելու, գործավարության~~

~~(փաստաթղթաշրջանառության), պետական ծառայողների անձնական գործերը վարելու կարգերը.~~

«6) սահմանում է վերապատրաստման, գործունեության գնահատման կարգը, չափանիշները և բնութագրի ձևը, Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները, ներքին կարգապահական կանոնները և գործավարության (փաստաթղթաշրջանառության) կարգը.».

7) սահմանում է ~~Պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության թափուր պաշտոնների զբաղեցման համար մրցույթի անցկացման կարգը, մրցութային հանձնաժողովների ձևավորման կարգը, ինչպես նաև դրանց աշխատակարգը.~~

- «7) «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի հիման վրա սահմանում է Պաշտպանի աշխատակազմում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի կարգը».

8) պետական ծառայողներին և Պաշտպանի աշխատակազմում ~~հայեցողական~~ **այլ** պաշտոն զբաղեցնող անձանց իր որոշմամբ գործուղում կամ տրամադրում է արձակուրդ.

«8.1) սահմանում է էթիկայի հանձնաժողովի կազմը, գործունեության կարգը և լիազորությունների շրջանակը.»:

9) տալիս է Պաշտպանի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով.

10) իրականացնում է Սահմանադրությամբ և սույն օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

2. Քարտուղարության ղեկավարումն իրականացնում է գլխավոր քարտուղարը: Գլխավոր քարտուղարը՝

1) օժանդակում է կադրային քաղաքականության, ֆինանսաբյուջետային, նյութատեխնիկական ապահովմանն ուղղված աշխատանքներին.

2) նշանակում և պաշտոնից ազատում է քարտուղարության տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց, ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառում է խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.

3) ապահովում է Պաշտպանի աշխատակազմի գործունեության վերլուծությունը և ամփոփումը.

4) իրականացնում է Պաշտպանին հասցեագրված բողոքների ընդունման և հաշվառման, դրանց ժամկետների պահպանման հետ կապված աշխատանքները.

5) վարում է աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց անձնական գործերը.

6) ապահովում է համացանցում Պաշտպանի պաշտոնական կայքի աշխատանքները.

7) ապահովում է Պաշտպանի խորհրդակցությունների, հանդիպումների, այցերի, ինչպես նաև պետական ծառայողների վերապատրաստման և գործուղման համար անհրաժեշտ կազմակերպական աշխատանքների իրականացումը.

8) իրականացնում է օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

3. Պաշտպանի աշխատակազմի ստորաբաժանման ղեկավարումն իրականացնում է ստորաբաժանման ղեկավարը: Ստորաբաժանման ղեկավարը՝

1) ապահովում է ստորաբաժանման նպատակներից և խնդիրներից բխող գործառույթների իրականացումը.

2) համակարգում է իր պատասխանատվության ներքո գտնվող բնագավառներում անհրաժեշտ աշխատանքների իրականացումը.

3) իր պատասխանատվության ոլորտներում վերահսկողություն է իրականացնում Պաշտպանի հանձնարարականների կատարման նկատմամբ, արդյունքների մասին հաշվետվություն է ներկայացնում Պաշտպանին.

4) Պաշտպանի հաստատած կարգով ապահովում է ստորաբաժանման պատասխանատվության ոլորտին առնչվող փաստաթղթաշրջանառությունը.

5) իր իրավասության սահմաններում համագործակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հետ.

6) հանդիսանում է Պաշտպանի ներկայացուցիչը այլ մարմինների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ հարաբերություններում.

7) սույն օրենքով սահմանված դեպքերում և կարգով փոխարինում է Պաշտպանին.

8) սույն օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ իրականացնում է Պաշտպանի պատվիրակած լիազորությունները.

9) իրականացնում է սույն օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

(39-րդ հոդվածը փոփ. 13.06.18 ՀՕ-355-Ն)

Հոդված 40. Պաշտպանի և նրա աշխատակազմի պետական ծառայողների վարձատրությունը

1. Պաշտպանի, նրա աշխատակազմում հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց և պետական ծառայողների վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ **և պետական ծառայության պաշտոններ** զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Օրենքի ամբողջ տեքստում «պետական ծառայողներ» բառերը համապատասխան հոլովաձևերով համապատասխանաբար փոխարինել «քաղաքացիական ծառայողներ» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2004 թվականի փետրվարի 18-ին

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

~~**Հոդված 1.** **Օրենքի կարգավորման առարկան**~~

~~Սույն օրենքը կարգավորում է դատական ակտերի հարկադիր կատարման գործառույթներ իրականացնող պետական լիազոր մարմնում (այսուհետ՝ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն) ծառայության հիմնական սկզբունքները, ծառայության անցնելու կարգը և պայմանները, պաշտոնների ու կոչումների դասակարգումը, ծառայողների իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, իրավական ու սոցիալական երաշխիքները, ծառայության հետ կապված այլ հարաբերություններ:~~

«Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է դատական, վարչական ակտերի, կատարողական մակագրության թերթերի (այսուհետ՝ նաև կատարման ենթակա ակտեր) հարկադիր կատարման գործառույթներ իրականացնող պետական լիազոր մարմնի (այսուհետ՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն)՝ որպես պետական ծառայության առանձին տեսակի, առանձնահատկությունները:»:

Հոդված 2. Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը

1. Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը (այսուհետ՝ հարկադիր կատարման ծառայություն) ապահովում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դատական ակտերի հարկադիր կատարումը:

~~2. Հարկադիր կատարման ծառայությունը պետական ծառայության հատուկ տեսակ է, որի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով:~~

~~Հարկադիր կատարման ծառայությունում ծառայող քաղաքացին պետական ծառայող է։~~

3. Ծառայությունը հարկադիր կատարման ծառայությունում իրականացվում է օրինականության, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության ու հրապարակայնության սկզբունքների պահպանմամբ՝ միանձնյա ու կենտրոնացված ղեկավարման միջոցով:

4. ***(պարբերությունն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-281-Ն)***

Մարզպետները հարկադիր կատարման ծառայության գործունեության համակարգման լիազորություններ չունեն:

Հարկադիր կատարման ծառայության համակարգը կազմված է կառուցվածքային ստորաբաժանումներից և տարածքային մարմիններից:

Հարկադիր կատարման ծառայությունը կազմված է հարկադիր կատարման ծառայության կենտրոնական մարմնից և տարածքային մարմիններից:

Հարկադիր կատարման ծառայության կենտրոնական մարմինը կարող է ունենալ բաժիններ:

Գլխավոր հարկադիր կատարողը կարող է ունենալ օգնականներ, որոնք համարվում են կենտրոնական մարմնի ծառայողներ:

~~Հարկադիր կատարման ծառայության տարածքային մարմիններն են հարկադիր կատարման մարզային (Երևանի քաղաքային) բաժինները, որոնց կազմում գործում են բաժանմունքներ:~~

Հարկադիր կատարման ծառայության կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է համապատասխան նախարարը:

~~5. Հարկադիր կատարման ծառայության առանձնահատկություններից ելնելով՝ ծառայությունում կարող են աշխատանքի ընդունվել նաև քաղաքացիական ծառայողներ՝ քաղաքացիական ծառայության հարաբերությունները կարգավորող օրենսդրությանը համապատասխան:~~

Հոդված 3. Հարկադիր կատարման ծառայության մասին օրենսդրությունը

1. Հարկադիր կատարման ծառայության մասին օրենսդրությունը բաղկացած է սույն օրենքից, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից **«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից**, այլ օրենքներից ու իրավական ակտերից, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են պայմանագրերի նորմերը:

3. Հարկադիր կատարողների բարեվարքության համակարգի և այս իրավակարգավորումներից բխող այլ հարաբերություններ, որոնք պարտադիր են հարկադիր կատարողների համար, կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

4. Հարկադիր կատարողների աշխատանքային հարաբերություններին վերաբերող հարցերը, որոնք կարգավորված չեն սույն օրենքով կարգավորվում են

«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով և «Հանրային ծառայության մասին» օրենքով:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված իրավական ակտերով այդ հարաբերությունները կարգավորված չլինելու դեպքում դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ:

~~Հոդված 4. Հարկադիր կատարման ծառայության պաշտոնները~~

~~1. Հարկադիր կատարման ծառայության պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.~~

~~1) հարկադիր կատարման ծառայության բարձրագույն խմբի պաշտոններ՝~~

~~- Հայաստանի Հանրապետության դատական ակտերի գլխավոր հարկադիր կատարող (այսուհետ՝ գլխավոր հարկադիր կատարող),~~

~~- գլխավոր հարկադիր կատարողի տեղակալ.~~

~~2) հարկադիր կատարման ծառայության գլխավոր խմբի պաշտոններ՝~~

~~- կենտրոնական մարմնի բաժնի պետ,~~

~~- Երևանի քաղաքային բաժնի պետ,~~

~~- մարզային բաժնի պետ,~~

~~- բաժնի պետի տեղակալ,~~

~~- բաժանմունքի պետ,~~

~~- գլխավոր խորհրդատու.~~

~~3) հարկադիր կատարման ծառայության առաջատար խմբի պաշտոններ՝~~

~~- առաջատար խորհրդատու,~~

~~- առաջին կարգի խորհրդատու,~~

~~- ավագ հարկադիր կատարող,~~

~~- հարկադիր կատարող, տեսուչ:~~

~~2. Հարկադիր կատարման ծառայությունում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պաշտոն զբաղեցնող ծառայողները (բացառությամբ քաղաքացիական ծառայողների) համարվում են հարկադիր կատարման ծառայողներ (այսուհետ՝ հարկադիր կատարողներ):~~

~~3. Գլխավոր և առաջատար խմբերի պաշտոններին հավասարեցված այլ պաշտոնների անվանացանկը սահմանում է համապատասխան նախարարը:~~

Հոդված 4. Հարկադիր կատարման ծառայության պաշտոնները

1. Հարկադիր կատարման ծառայության պաշտոնները դասակարգվում են խմբերի՝ ելնելով այդ պաշտոնները զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, գործունեության ազդեցության, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց լուծման, ինչպես նաև մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների տեսանկյունից ներկայացվող պահանջներից:
2. Հարկադիր կատարման ծառայության պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.

1) **հարկադիր կատարման ծառայության գլխավոր պաշտոններ.**
2) **հարկադիր կատարման ծառայության առաջատար պաշտոններ.**

3. **Հարկադիր կատարման ծառայության պաշտոնների խմբերում պաշտոնների դասակարգումնիրականացվումէ հարկադիր կատարման ծառայության պաշտոնների անվանացանկով, որը հաստատվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով: Անվանացանկում չեն ներառվում գլխավոր հարկադիր կատարողի և նրա տեղակալների պաշտոնները:**
4. **Հարկադիր կատարման ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող ծառայողները համարվում են հարկադիր կատարման ծառայողներ (այսուհետ՝ հարկադիր կատարողներ):**
5. **Գլխավոր հարադիր կատարողը և նրա տեղակալները համարվում են պետական վարչական պաշտոն զբաղեցնող անձինք, ովքեր ի պաշտոնե հարկադիր կատարողներ են::**
6. **Սույն օրենքը գլխավոր հարադիր կատարողի և նրա տեղակալների վրա տարածվում է միայն սույն օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում:**

Հոդված 5. Հարկադիր կատարողների կոչումները

1. Հարկադիր կատարողներին շնորհվում են արդարադատության հետևյալ կոչումները, որոնք դասակարգվում են հետևյալ խմբերի.

1) բարձրագույն խմբի կոչում՝
- արդարադատության գեներալ-մայոր.

2) գլխավոր խմբի կոչումներ՝
- արդարադատության գնդապետ,
- արդարադատության փոխգնդապետ.

3) առաջատար խմբի կոչումներ՝
- արդարադատության մայոր,
- արդարադատության կապիտան,
- արդարադատության ավագ լեյտենանտ,
- արդարադատության լեյտենանտ:

Կոչումները դասակարգվում են աստիճանական համակարգով՝ բարձրից ցածր:

~~2. Հարկադիր կատարման ծառայության պաշտոնների բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների համար սահմանված արդարադատության գեներալ-մայորի կոչումը շնորհում է վարչապետը:~~

2. Արդարադատության գեներալ-մայորի կոչումը շնորհվում է գլխավոր հարկադիր կատարողին և նրա տեղակալներին: Արդարադատության գեներալ-մայորի կոչումը շնորհում է վարչապետը:»

3. Հարկադիր կատարման ծառայության պաշտոններ զբաղեցնող ծառայողների կոչումները, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի, շնորհում է գլխավոր հարկադիր կատարողը:

4. Կոչումները շնորհվում են հերթականության կարգով, զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված կոչումներին համապատասխան, սույն օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

5. Կոչումները շնորհվում են անհատական կարգով՝ ցմահ:

6. Հարկադիր կատարողը, ինչպես նաև հարկադիր կատարման ծառայությունում ծառայությունը դադարեցրած քաղաքացին կարող են ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտվելու դեպքում զրկվել կոչումից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 7. Կոչումների շնորհման ժամկետները

1. Սույն օրենքով սահմանված կարգով հերթական կոչումների շնորհման համար սահմանվում են ծառայության հետևյալ ժամկետները.

- արդարադատության լեյտենանտ՝ 2 տարի,
- արդարադատության ավագ լեյտենանտ՝ 3 տարի,
- արդարադատության կապիտան՝ 3 տարի,
- արդարադատության մայոր՝ 4 տարի,
- արդարադատության փոխգնդապետ՝ 5 տարի:

Արդարադատության գնդապետի կոչումով ծառայության ժամկետ չի սահմանվում:

2. Այլ պետական մարմնում ծառայություն անցած (աշխատած) և զինվորական կամ հատուկ կոչում (դասային աստիճան, որակավորման դաս) ունեցող քաղաքացիներին հարկադիր կատարման ծառայությունում պաշտոնի նշանակելիս շնորհվում է նրանց զինվորական կամ հատուկ կոչմանը (դասային աստիճան, որակավորման դաս) համապատասխան կոչում, պաշտոնի նշանակվելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում:

3. Այլ պետական մարմիններում շնորհված զինվորական կամ հատուկ կոչումների (դասային աստիճանների, որակավորման դասերի) համապատասխանությունը սույն օրենքով սահմանված կոչումներին սահմանում է Կառավարությունը:

~~Սույն օրենքով սահմանված կոչումների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության արդարադատության դասային աստիճաններին սահմանում է Կառավարությունը:~~

4. Հարկադիր կատարման ծառայության առաջատար խմբի պաշտոններում առաջին անգամ նշանակված քաղաքացիներին լեյտենանտից ցածր զինվորական կամ հատուկ կոչում, դասային աստիճան, որակավորման դաս ունենալու, ինչպես նաև կոչում չունենալու դեպքում շնորհվում է արդարադատության լեյտենանտի կոչում՝ 6 ամսվա ընթացքում:

5. Հարկադիր կատարողի հերթական կոչումի շնորհումը հետաձգվում է, երբ՝

~~1) նրա նկատմամբ ատեստավորումից հետո ընդունվել է որոշում ատեստավորումը հետաձգելու և վերապատրաստման գործուղելու մասին.~~

2) նա ունի կարգապահական տույժ.

3) նա գտնվում է քրեական հետապնդման մեջ, կամ նրա նկատմամբ կատարվում է ծառայողական քննություն:

Հերթական կոչումի շնորհումը հետաձգելու դեպքում ծառայողի հերթական կոչումը շնորհվում է սույն մասի 1-ին կետում նշված խոչընդոտների վերացումից հետո՝ 15-օրյա ժամկետում:

~~**Հոդված 9. Ծառայության անցնելու համար ներկայացվող հիմնական պահանջները**~~

-

1. Հարկադիր կատարման ծառայությունում, որպես հարկադիր կատարող, ծառայության կարող է անցնել բարձրագույն կրթություն ունեցող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որը, անկախ սեռից, ազգությունից, ռասայից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից՝

1) անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի քաղաքացիների կամ սույն մասի երրորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի).

2) տիրապետում է հայերենին.

3) իր մասնագիտական գիտելիքներով, գործնական և անձնական հատկանիշներով ու առողջական վիճակով կարող է կատարել հարկադիր ծառայողի պարտականությունները:

Հարկադիր կատարողին ներկայացվող մասնագիտական և առողջական վիճակի հետ կապված պահանջները սահմանում է Կառավարությունը:

Հարկադիր կատարման ծառայությունում պաշտոնի կարող են նշանակվել նաև սույն հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանող, սակայն դիմելու պահին «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ-ե» կետերով և 13-րդ հոդվածով նախատեսված հիմքերով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված քաղաքացիները:

1.1 Հարկադիր կատարման ծառայությունում պաշտոնի նշանակվելու համար դիմած և ծառայությունում պաշտոնի անցնելու համար սույն հոդվածով սահմանված պահանջները (բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ մասնագիտական գիտելիքներին, գործնական և անձնական հատկանիշներին ներկայացվող պահանջների) բավարարող, սակայն աշխատանքային փորձ չունեցող քաղաքացիները մինչև պաշտոնի նշանակվելը կարող են ներգրավվել մեկամսյա ուսումնական դասընթացների՝ նրանց պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից: Ուսումնական դասընթացներ անցնող քաղաքացիները ծառայողներ չեն համարվում: Ուսումնական դասընթացում ներգրավելու և դասընթաց անցնելու կարգն ու պայմանները սահմանում է համապատասխան նախարարը:

2. Հարկադիր կատարման ծառայությունում որպես հարկադիր կատարող ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին, ով՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատական կարգով զրկվել է քաղաքացիական կամ այլ ծառայությունում պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3) դատապարտվել է հանցագործություն կատարելու համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

4) գտնվում է քրեական հետապնդման մեջ.

5) չի համապատասխանում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին:

Հոդված 9. Ծառայության անցնելու համար ներկայացվող հիմնական պահանջները

1. **Սույն օրենքով սահմանված կարգով հարկադիր կատարողի պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն հարկադիր կատարման ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ովքեր անցել են պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի, ինչպես նաև այն քաղաքացիների, ովքեր**

օրենքով նախատեսված կարգով և հիմքով ազատվել են պարտադիր զինվորական ծառայությունից):

2. **Հարկադիր կատարման ծառայության պաշտոնի չի կարող նշանակվել այն քաղաքացին, որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում և (կամ) առկա է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը:**
3. **Հարկադիր կատարողին ներկայացվող մասնագիտական պահանջները սահմանում է հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը:**
4. **Հարկադիր կատարման ծառայությունում պաշտոնի նշանակվելու համար դիմած և ծառայությունում պաշտոն զբաղեցնելու համար սույն հոդվածով սահմանված պահանջները բավարարող, սակայն աշխատանքային փորձ չունեցող քաղաքացիները մրցույթը հաղթահարելուց հետո՝ մինչև պաշտոնի նշանակվելը, ներգրավվում են մեկամսյա ուսումնական դասընթացների՝ նրանց պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից: Ուսումնական դասընթացներ անցնող քաղաքացիները ծառայողներ չեն համարվում: Ուսումնական դասընթացում ներգրավելու և դասընթաց անցնելու կարգը, պայմանները և դասընթացի ավարտից հետո պաշտոնի նշանակման կարգը սահմանում է հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը:**

Հոդված 11. Պաշտոնի նշանակելը հարկադիր կատարման ծառայությունում

1. Հարկադիր կատարման ծառայության անմիջական ղեկավարումն իրականացնում է գլխավոր հարկադիր կատարողը:

~~2. Սույն օրենքի 4-րդ հոդվածում նշված պաշտոններում հարկադիր կատարողներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է գլխավոր հարկադիր կատարողը:~~

2. Հարկադիր կատարման ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոններում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է գլխավոր հարկադիր կատարողը:

~~3. Հարկադիր կատարման ծառայությունում քաղաքացիական ծառայողներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է համապատասխան նախարարության գլխավոր քարտուղարը՝ քաղաքացիական ծառայությունը կանոնակարգող օրենքներին և իրավական այլ ակտերին համապատասխան:~~

~~Հոդված 12. Հարկադիր կատարման ծառայությունում պաշտոնի նշանակելու պայմանները~~

-

~~1. Գլխավոր հարկադիր կատարող կարող է նշանակվել այն հարկադիր կատարողը, որը մինչև նշանակումն զբաղեցրել է հարկադիր կատարման ծառայության բարձրագույն խմբի կամ առնվազն երեք տարի գլխավոր խմբի պաշտոն և ունի արդարադատության գնդապետից ոչ ցածր կոչում:~~

~~2. Գլխավոր հարկադիր կատարողի տեղակալ կարող է նշանակվել այն հարկադիր կատարողը, որը զբաղեցրել է հարկադիր կատարման ծառայության բարձրագույն կամ առնվազն երեք տարի գլխավոր խմբի պաշտոն և ունի արդարադատության փոխգնդապետից ոչ ցածր կոչում:~~

~~3. Հարկադիր կատարման ծառայության գլխավոր խմբի պաշտոններում կարող է նշանակվել այն ծառայողը, որը զբաղեցրել է հարկադիր կատարման ծառայության բարձրագույն, գլխավոր խմբի կամ առնվազն երկու տարի առաջատար խմբի պաշտոն:~~

~~4. Հարկադիր կատարման ծառայության առաջատար խմբի պաշտոններում ծառայողների առաջխաղացումը կատարվում է տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո:~~

~~Հարկադիր կատարման ծառայության առաջատար խմբի հարկադիր կատարողի և տեսուչի պաշտոնները համալրվում են սույն օրենքով սահմանված կարգով՝ մրցույթի արդյունքների հիման վրա:~~

~~5. Հարկադիր կատարման ծառայությունում թափուր պաշտոն առաջանալու դեպքում ծառայության կարող են նշանակվել զինված ուժերի, ազգային անվտանգության, ոստիկանության, դատախազության, ինչպես նաև համապատասխան նախարարության քրեակատարողական ծառայության այն ծառայողները (այդ թվում՝ նշված մարմինների նախկին ծառայողները), որոնք բավարարում են տվյալ պաշտոնին նշանակվելու համար հարկադիր կատարողներին ներկայացվող պահանջները:~~

~~Այլ մարմնում ծառայություն անցած և հարկադիր կատարման ծառայության գլխավոր խմբի թափուր պաշտոնի նշանակված հարկադիր կատարողին ավելի բարձր պաշտոնի նշանակելիս հաշվի է առնվում նաև այլ մարմնում ծառայության ժամկետը:~~

~~Զինված ուժերի, ազգային անվտանգության, ոստիկանության, դատախազության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պաշտոնների համապատասխանությունը հարկադիր կատարման ծառայության պաշտոններին սահմանում է Կառավարությունը:~~

~~6. Հարկադիր կատարման ծառայությունում թափուր պաշտոնի կարող է նշանակվել ժամանակավոր պաշտոնակատար, բայց ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով:~~

~~Հարկադիր կատարման ծառայությունում ծառայողի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության, այդ թվում՝ ծառայողական քննության դեպքում, կին ծառայողի նախածննդյան կամ հետծննդյան, ինչպես նաև ծառայողի՝ երեխային խնամելու արձակուրդի դեպքերում նրա պաշտոնը կարող է զբաղեցվել՝ հարկադիր կատարման ծառայության այլ փոխարինող ծառայողին տվյալ պաշտոնին գործուղելով:~~

~~Սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված հիմքերի վերացման դեպքում փոխարինող ծառայողը սույն օրենքով սահմանված կարգով նշանակվում է հավասարազոր կամ իր համաձայնությամբ ավելի ցածր պաշտոնի:~~

Հոդված 12. Հարկադիր կատարման ծառայության պաշտոններում նշանակելու պայմանները, հարկադիր կատարման ծառայության պաշտոնի անձնագրի՝ կրթության և աշխատանքային ստաժի չափանիշները

1. Գլխավոր հարկադիր կատարող կարող է նշանակվել այն հարկադիր կատարողը, որը մինչև նշանակումն զբաղեցրել է գլխավոր հարկադիր կատարողի տեղակալի պաշտոն կամ առնվազն երեք տարի՝ հարկադիր կատարման գլխավոր խմբի պաշտոն կամ հանրային ծառայության առնվազն հինգ տարվա ստաժ, որից երկու տարին առնվազն կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում և ունի արդարադատության գնդապետից ոչ ցածր կոչում:

2. Գլխավոր հարկադիր կատարողի տեղակալ կարող է նշանակվել այն հարկադիր կատարողը, ով զբաղեցրել է գլխավոր հարկադիր կատարողի պաշտոն, առնվազն երեք տարի՝ հարկադիր կատարման գլխավոր խմբի պաշտոն և ունի արդարադատության փոխգնդապետից ոչ ցածր կոչում կամ հանրային ծառայության առնվազն հինգ տարվա ստաժ կամ յոթ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

3. Հարկադիր կատարման ծառայության գլխավոր խմբի պաշտոններում կարող է նշանակվել այն ծառայողը, որը զբաղեցրել է գլխավոր հարկադիր կատարողի կամ տեղակալի կամ հարկադիր կատարման ծառայության գլխավոր խմբի պաշտոն կամ առնվազն երկու տարի՝ առաջատար խմբի պաշտոն կամ ունի հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

4. Հարկադիր կատարման առաջատար խմբի պաշտոնները սույն օրենքով սահմանված կարգով զբաղեցվում են առանց աշխատանքային ստաժի և փորձի:

5. Հարկադիր կատարման ծառայության առաջատար խմբի պաշտոններում ծառայողների առաջխաղացումն իրականացվում է տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարվա ծառայություն անցնելուց հետո:

Հոդված 12.1. Հարկադիր կատարման ծառայության պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը

~~1. Հարկադիր կատարման ծառայության առաջատար խմբի հարկադիր կատարողի և տեսուչի թափուր պաշտոն առաջանալու դեպքում գլխավոր հարկադիր կատարողը նշանակում է մրցույթ պաշտոնը թափուր մնալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:~~

~~2. Հարկադիր կատարման ծառայության թափուր պաշտոնի մրցույթի մասին տրվում է հայտարարություն առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլի միջոցով՝ մրցույթի անցկացման օրվանից առնվազն մեկ ամիս առաջ: Մրցույթի հայտարարության ձևը սահմանում է համապատասխան նախարարը:~~

1. Բացառությամբ գլխավոր հարկադիր կատարողի և նրա տեղակալների, մյուս հարկադիր կատարողները պաշտոնի նշանակվում են մրցույթի արդյունքներով: Մրցույթը կազմակերպվում և անցկացվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով՝ հարկադիր կատարման ծառայության կողմից:

2. Մրցույթին չեն կարող մասնակցել այն քաղաքացիները, ովքեր չեն բավարարում սույն օրենքի 9-րդ, 12-րդ և 40-րդ հոդվածների պահանջները:

~~3. Մրցութային հանձնաժողովը քաղաքացուն չի թույլատրում մասնակցելու մրցույթին, եթե նա չի բավարարում սույն օրենքի 9-րդ հոդվածի պահանջները:~~

~~4. Մրցույթն անցկացվում է նաև, եթե մրցույթին մասնակցելու համար դիմել է մեկ մասնակից:~~

~~5. Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:~~

~~6. Թեստավորումը անցկացվում է գրավոր: Թեստերը կազմվում են համապատասխան նախարարի սահմանած կարգով՝ համակարգչում գետեղված հարցաշարից և դրանցից պատահական ընտրված հարցերից՝ մասնակիցների գիտելիքները հետևյալ բնագավառներում ստուգելու համար.~~

~~ա) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության.~~

~~բ) հարկադիր կատարման ծառայության մասին օրենսդրության.~~

~~գ) հարկադիր կատարողի գործառույթները սահմանող Հայաստանի Հանրապետության օրենսդրության (մասնագիտական հարցեր):~~

~~Համակարգչում գետեղված հարցաշարը, ոչ ուշ, քան մրցույթ անցկացնելուց մեկ ամիս առաջ, պետք է տրամադրվի մասնակիցներին:~~

~~Թեստավորման առաջադրանքներում ընդգրկված յուրաքանչյուր հարց պետք է ունենա երեք կամ չորս ենթադրյալ պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Թեստավորման փուլն անցկացվում է մասնակիցների համար կոդերի կիրառմամբ՝ գաղտնիությունն ապահովելու նպատակով:~~

~~7. Մրցույթի երկրորդ՝ հարցազրույցի փուլին մասնակցելու իրավունք են ձեռք բերում թեստավորման առաջադրանքների առնվազն իննսուն տոկոսին ճիշտ պատասխանած մասնակիցները:~~

~~Մասնակիցների հետ անցկացվում է հարցազրույց՝ նրանց գործնական կարողություններն ստուգելու նպատակով:~~

~~Մրցութային հանձնաժողովը հարցազրույցից հետո յուրաքանչյուր մասնակցի համար անցկացնում է քվեարկություն: Մրցութային հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ քվեարկում է կողմ կամ դեմ:~~

~~Մրցույթի հաղթող են ճանաչվում այն մասնակիցները, ովքեր քվեարկությունից հետո հավաքել են մրցութային հանձնաժողովի քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայները:~~

~~8. Մրցույթի արդյունքները հրապարակվում են մրցույթի անցկացման օրը:~~

~~9. Մրցույթի արդյունքների հրապարակվելուց հետո մասնակիցը (իր արդյունքների մասով) կամ մրցութային հանձնաժողովի անդամը արդյունքների հրապարակումից հետո՝ մեկ օրվա ընթացքում, այդ արդյունքները կարող է գրավոր բողոքարկել համապատասխան նախարարին:~~

~~10. Մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո, գրավոր բողոքի բացակայության դեպքում, համապատասխան մրցութային հանձնաժողովը մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցների վերաբերյալ եզրակացություն է ներկայացնում գլխավոր հարկադիր կատարողին: Եզրակացությունն ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, գլխավոր հարկադիր կատարողը մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցներից մեկին նշանակում է համապատասխան պաշտոնում:~~

~~11. Եթե մրցույթից հետո մասնակիցներից ոչ մեկը թեստավորման առաջադրանքների առնվազն 90 տոկոսին ճիշտ պատասխան չի տվել կամ հարցազրույցի մասնակիցներից ոչ մեկը քվեարկությունից հետո չի հավաքել մրցութային հանձնաժողովի՝ քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայներ ու մրցույթում հաղթող չի ճանաչվել, ապա անցկացվում է նոր մրցույթ:~~

~~Եթե մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ ներկայացված բոլոր դիմումներում առկա է սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերից որևէ մեկը, ինչպես նաև եթե մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացրած անձանցից ոչ մեկը չի ներկայացել, կամ մրցույթում հաղթած մասնակիցներից ոչ մեկը մրցույթի արդյունքների հրապարակումից հետո՝ երեք օրվա ընթացքում, պաշտոնում նշանակվելու համար դիմում չի ներկայացրել, ապա մրցույթը համարվում է չկայացած, և անցկացվում է նոր մրցույթ:~~

~~Նոր մրցույթը հայտարարվում է մեկ ամիս հետո սույն հոդվածով սահմանված կարգով:~~

~~12. Մրցութային հանձնաժողովը կազմավորում է համապատասխան նախարարը: Մրցութային հանձնաժողովի աշխատակարգը սահմանում է համապատասխան նախարարը:~~

Հոդված 12.2. Փորձաշրջանի նշանակումը և անցկացումը

~~1. Հարկադիր կատարման ծառայության պաշտոն առաջին անգամ զբաղեցնող անձի նշանակումն իրականացվում է մինչև 6 ամիս փորձաշրջանով: Փորձաշրջանի տևողությունը յուրաքանչյուր ծառայողի համար սահմանում է գլխավոր հարկադիր կատարողը:~~

1. Հարկադիր կատարման ծառայության պաշտոն առաջին անգամ զբաղեցնող անձի նշանակումն իրականացվում է մինչև 9 ամիս փորձաշրջանով: Փորձաշրջանի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

~~2. Փորձաշրջանի ընթացքում ծառայողն ունի բոլոր իրավունքները և կրում է բոլոր պարտականությունները, որոնք օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված են հարկադիր կատարողների համար:~~

~~3. Փորձաշրջանի համար սահմանված ժամկետում չեն ներառվում աշխատանքից ծառայողի բացակայության հետևյալ ժամանակահատվածները.~~

~~1) սահմանված կարգով ծառայողի չվճարվող արձակուրդում գտնվելու ժամանակահատվածը.~~

~~2) ծառայողի ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածը.~~

~~3) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ծառայողի վրա դրված պարտականությունների կատարման ժամանակահատվածը:~~

~~4. Եթե ծառայողը սահմանված փորձաշրջանի ընթացիկ արդյունքներով չի համապատասխանում առաջադրված պահանջներին, ապա կարող է մինչև փորձաշրջանի ժամկետը լրանալը ազատվել ծառայությունից, որի մասին գրավոր տեղեկացվում է երեք օր առաջ:~~

~~Եթե փորձաշրջանն անցնելուց հետո ծառայողը շարունակում է ծառայությունը, ապա նա համարվում է փորձաշրջան անցած:~~

Գ Լ ՈՒ Խ 4.

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻ ~~ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ~~ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Հոդված 13. Հարկադիր կատարողի ~~ատեստավորման կարգն ու պայմանները~~ կատարողականի գնահատումը

~~1. Յուրաքանչյուր տարի հարկադիր կատարողների առնվազն մեկ երրորդը ենթակա է պարտադիր ատեստավորման:~~

1. Հարկադիր կատարողի կատարողականի գնահատման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

~~2. Հերթական ատեստավորումն անցկացվում է երեք տարին մեկ:~~

~~3. Ատեստավորումն անցկացվում է հարկադիր կատարողի անմիջական մասնակցությամբ:~~

~~4. Ատեստավորման ենթակա չեն՝~~

~~1) հարկադիր կատարման ծառայության բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնողները.~~

~~2) տվյալ պաշտոնը մեկ տարուց պակաս ժամկետով զբաղեցնող հարկադիր կատարողները, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել.~~

~~3) հղիության և ծննդաբերության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող հարկադիր կատարողները, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել.~~

~~4) սույն օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմքով տվյալ տարում ծառայությունից ազատվողները:~~

~~Հղիության և ծննդաբերության կամ երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող հարկադիր կատարողները ենթակա են ատեստավորման արձակուրդից վերադառնալուց հետո ոչ շուտ, քան մեկ տարի հետո, եթե վերջիններս ցանկություն չեն հայտնել ավելի վաղ ատեստավորվելու համար:~~

~~Ատեստավորման ենթակա, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող կամ ժամանակավոր անաշխատունակ հարկադիր կատարողները ենթակա են ատեստավորման ծառայության անցնելուց հետո՝ երկամսյա ժամկետում:~~

~~5. Ատեստավորման ենթակա հարկադիր կատարողները ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ տեղեկացվում են ատեստավորման անցկացման մասին, բացառությամբ սույն հոդվածի 8-րդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի:~~

~~6. Ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ անմիջական ղեկավարը ներկայացնում է հարկադիր կատարողի ծառայողական բնութագիրը:~~

~~Ծառայողական բնութագիրը պետք է բովանդակի տվյալներ հարկադիր կատարողի գործնական, մարդկային հատկանիշների մասին և ներառի ծառայողական գործունեության արդյունքների հիմնավորված գնահատականը, որը պետք է հիմնվի նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակահատվածում հարկադիր կատարողի՝ իր կատարած աշխատանքների մասին վեց ամիսը մեկ անմիջական ղեկավարին ներկայացրած հաշվետվությունների վերաբերյալ վերջինիս եզրակացությունների վրա:~~

~~Հարկադիր կատարողն ատեստավորումն անցկացնելու օրվանից առնվազն մեկ շաբաթ առաջ պետք է ծանոթանա իր ծառայողական բնութագրին:~~

~~Սույն հոդվածով սահմանված կարգով ծառայողական բնութագիր չներկայացնելը չի կարող բացասաբար ազդել հարկադիր կատարողի ատեստավորման արդյունքների վրա:~~

~~7. Ատեստավորման հանձնաժողովը կազմավորում է համապատասխան նախարարը: Ելնելով ծառայության առանձնահատկություններից՝ համապատասխան նախարարը կարող է ձևավորել մեկից ավելի ատեստավորման հանձնաժողովներ:~~

~~Ատեստավորման անցկացման կարգը և պայմանները սահմանում է համապատասխան նախարարը:~~

~~8. Ատեստավորումից հետո ատեստավորման հանձնաժողովն ընդունում է հետևյալ որոշումներից միայն մեկը.~~

~~1) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին.~~

~~1.1) կարող է զբաղեցնել ավելի բարձր պաշտոն.~~

~~2) ատեստավորումը հետաձգել և հարկադիր կատարողին գործուղել վերապատրաստման.~~

~~3) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին:~~

~~Սույն մասի 2-րդ կետին համապատասխան՝ վերապատրաստման գործուղված հարկադիր կատարողի ատեստավորումն անցկացվում է վերապատրաստման ավարտից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, որի մասին ծառայողը տեղեկացվում է ոչ ուշ, քան ատեստավորման անցկացման օրվանից 5 օր առաջ:~~

~~9. Հարկադիր կատարողն ատեստավորման արդյունքներին ծանոթացվում է դրա անցկացման օրը: Հարկադիր կատարողն իրավունք ունի ատեստավորման հանձնաժողովին բողոքարկելու ատեստավորման արդյունքները դրանց ծանոթանալու օրվանից հետո՝ մեկ օրվա ընթացքում:~~

~~10. Ատեստավորման հանձնաժողովն ատեստավորման արդյունքները, այդ թվում՝ բողոքարկումները և դրանց քննարկման արդյունքներն ու կայացված որոշումները, ատեստավորման օրվանից հետո՝ 7 օրվա ընթացքում, ներկայացնում է գլխավոր հարկադիր կատարողին:~~

~~11. Ատեստավորման արդյունքները հավաստող փաստաթղթերը պահվում են հարկադիր կատարողի անձնական գործում:~~

Հոդված 14. Հարկադիր կատարողի վերապատրաստումը և հատուկ ուսուցումը

~~1. Հարկադիր կատարման ծառայության գլխավոր և առաջատար խմբերի պաշտոններ զբաղեցնող հարկադիր կատարողները ենթակա են պարտադիր վերապատրաստման առնվազն 5 տարին մեկ անգամ:~~

1. Հարկադիր կատարողի վերապատրաստման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

2. Հարկադիր կատարման ծառայության հանրային ծառայողներն իրավունք ունեն սահմանված կարգով կրելու, պահելու և գործադրելու (կիրառել) հրազեն և օրենքով նախատեսված հատուկ միջոցներ հատուկ ուսուցում անցնելուց հետո: Հատուկ ուսուցում անցնելու կարգն ու պայմանները սահմանում է հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը:

~~2. Սույն օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքերում հարկադիր կատարողներն անցնում են եռամսյա վերապատրաստում:~~

~~3. Հատուկ ուսուցում անցնելուց հետո հարկադիր կատարողներն իրավունք ունեն սահմանված կարգով կրելու, պահելու և գործադրելու (կիրառել) հրազեն և օրենքով նախատեսված հատուկ միջոցներ:~~

~**4. Վերապատրաստում և հատուկ ուսուցում անցնելու կարգն ու պայմանները սահմանում է Կառավարությունը:**~

~~**Հոդված 16. Հարկադիր կատարողին այլ պաշտոնի փոխադրելը**~~

~~1. Հարկադիր կատարողը, ծառայողական անհրաժեշտությամբ պայմանավորված, առանց իր համաձայնության, կարող է փոխադրվել՝~~

~~1) զբաղեցրած պաշտոնին համարժեք այլ պաշտոնի՝ տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո (իսկ մինչև մեկ տարին լրանալը՝ միայն իր համաձայնության դեպքում).~~

~~1.1) կենտրոնական մարմնի բաժինների պետերին, Երևանի քաղաքային բաժինների պետերին, մարզային բաժինների պետերին, բաժինների պետերի տեղակալներին, բաժանմունքների պետերին պարտադիր ռոտացիայի կարգով այլ պաշտոնի փոխադրելով՝ տվյալ պաշտոնում նվազագույնը երեք և առավելագույնը հինգ տարի ծառայելուց հետո.~~

~~2) իր զբաղեցրած պաշտոնին համապատասխանող խմբում ավելի ցածր պաշտոնի, եթե փոխադրումը կապված է կառուցվածքային փոփոխությունների կամ հաստիքների կրճատման հետ.~~

~~3) զբաղեցրած պաշտոնից մեկ աստիճանով ցածր պաշտոնի, եթե ատեստավորումից հետո կայացվել է որոշում զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու մասին: Նման պաշտոնի բացակայության դեպքում հարկադիր կատարողը կարող է ազատվել ծառայությունից.~~

~~4) զբաղեցրած պաշտոնին համարժեք այլ կամ ավելի ցածր պաշտոնի՝ առողջական վիճակից ելնելով՝ բժշկական եզրակացության հիման վրա:~~

~~2. *(մասն ուժը կորցրել է 17.11.09 ՀՕ-208-Ն)*~~

~~3. Հարկադիր կատարողը, իր դիմումի համաձայն, կարող է փոխադրվել իր զբաղեցրած պաշտոնին համարժեք կամ ցածր այլ պաշտոնի կամ ծառայության այլ վայր:~~

Հոդված 16. Հարկադիր կատարողին այլ պաշտոնի փոխադրելը

1. Հարկադիր կատարողի տեղափոխման, փոխադրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով:

2. Հարկադիր կատարողը, ծառայողական անհրաժեշտությամբ պայմանավորված, առանց իր համաձայնության, կարող է փոխադրվել՝

1) կենտրոնական մարմնի բաժինների պետերին, Երևանի քաղաքային բաժինների պետերին, մարզային բաժինների պետերին, բաժինների պետերի տեղակալներին, բաժանմունքների պետերին պարտադիր ռոտացիայի կարգով այլ պաշտոնի փոխադրելով՝ տվյալ պաշտոնում նվազագույնը երեք և առավելագույնը հինգ տարվա ծառայություն անցնելուց հետո.

2) իր զբաղեցրած պաշտոնին համապատասխանող խմբում ավելի ցածր պաշտոնի, եթե փոխադրումը կապված է կառուցվածքային փոփոխությունների կամ հաստիքների կրճատման հետ:

3. Հարկադիր կատարողը, իր դիմումի համաձայն, կարող է փոխադրվել իր զբաղեցրած պաշտոնին համարժեք կամ ցածր այլ պաշտոնի կամ ծառայության այլ վայր»:

Հոդված 18. Հարկադիր կատարողի իրավունքները

~~Հարկադիր կատարողի իրավունքներն են՝~~

1. «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված հիմնական իրավունքներից բացի, հարկադիր կատարողի հիմնական իրավունքներն են՝

~~1) զբաղեցրած պաշտոնում իր իրավունքները և պարտականությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.~~

~~2) իր անձնական գործի բոլոր նյութերին՝ իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեությանը վերաբերող այլ փաստաթղթերի ծանոթանալն ու բացատրություններ ներկայացնելը.~~

~~3) ծառայողական պարտականությունների կատարման համար՝ սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.~~

~~4) իր իրավասության սահմաններում որոշումներ ընդունելը.~~

~~5) ծառայության համար համարժեք վարձատրություն ստանալը.~~

~~6) սոցիալական պաշտպանությունը և ապահովությունը.~~

~~7) իրավական պաշտպանությունը.~~

8) կոչումի՝ սահմանված կարգով բարձրացումը.

9) պաշտոնի նշանակման ~~և ատեստավորման~~ արդյունքները բողոքարկելը.

10) ծառայության կազմակերպման ու կատարելագործման հարցերի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը:

~~Հարկադիր կատարողը կարող է ունենալ սույն օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:~~

Հոդված 19. Հարկադիր կատարողի պարտականությունները

1. «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով նախատեսված հիմնական պարտականություններից բացի, հարկադիր կատարողի հիմնական պարտականություններն են՝

~~1) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների և իրավական այլ ակտերի պահանջները կատարելը.~~

~~2) մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար անհրաժեշտ գիտելիքներ ապահովելը.~~

~~3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները ճշգրիտ ու ժամանակին կատարելը.~~

~~4) վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով ընդունած հրամաններն ու որոշումները, տրված կարգադրություններն ու ցուցումները կատարելը.~~

~~5) սահմանված կարգով և ժամկետներում առաջարկություններ, դիմումներ և բողոքներ քննության առնելը և դրանց ընթացք տալը.~~

6) պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները պահպանելը, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.

7) եկամուտների հայտարարագիր ներկայացնելը.

~~8) հարկադիր կատարողի վարքագծի կանոնները պահպանելը:~~

~~2. Հարկադիր կատարողը պարտավոր է տալ գրավոր բացատրություններ, եթե իր նկատմամբ անցկացվում է ծառայողական քննություն: Ծառայողական քննության նշանակման և անցկացման կարգը սահմանում է համապատասխան նախարարը:~~

~~3. Հարկադիր կատարողի համար սույն օրենքով, այլ օրենքներով ու իրավական ակտերով կարող են սահմանվել նաև այլ պարտականություններ:~~

~~4. Հարկադիր կատարողի վարքագծի կանոնները հաստատում է Կառավարությունը:~~

2.Հարկադիր կատարողը պարտավոր է տալ գրավոր բացատրություններ, եթե իր նկատմամբ անցկացվում է ծառայողական քննություն: Ծառայողական քննություն անցկացվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Հոդված 21. Գլխավոր հարկադիր կատարողի լիազորությունները

1. Գլխավոր հարկադիր կատարողը՝

1) ղեկավարում և հսկողություն է իրականացնում հարկադիր կատարման ծառայության գործունեության նկատմամբ.

2) ապահովում է սույն օրենքի, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, **«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,** այլ օրենքների ու իրավական ակտերի պահանջների, ինչպես նաև համապատասխան նախարարի հրամանների և ցուցումների կատարումը.

3) ընդունում է հարկադիր կատարման ծառայության գործունեության կազմակերպմանն ուղղված հրամաններ, տալիս է ցուցումներ.

4) առաջարկություն է ներկայացնում համապատասխան նախարարին՝ ծառայության կառուցվածքի վերաբերյալ.

5) միջնորդություն է ներկայացնում համապատասխան նախարարին՝ գլխավոր հարկադիր կատարողի տեղակալին խրախուսելու կամ նրա նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու մասին.

6) քննում է հարկադիր կատարողների նկատմամբ բերված բողոքները, վերացնում է հարկադիր կատարողների անօրինական որոշումները.

7) նշանակում և անցկացնում է ծառայողական քննություններ.

8) ծառայողական քննության ժամանակահատվածում կարող է ժամանակավորապես դադարեցնել իր կողմից պաշտոնի նշանակված ծառայողի լիազորությունները.

~~9) իրականացնում է հարկադիր կատարման ծառայության նյութատեխնիկական ապահովությունը.~~

~~10) օրենսդրությամբ վերապահված լիազորությունների սահմաններում տնօրինում է ծառայության դեպոզիտ հաշիվը և դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցները.~~

11) սահմանում է մարզային (Երևանի քաղաքային) բաժինների պետերի կողմից հաշվետվություններ ներկայացնելու կարգը և ժամկետները.

12) կազմակերպում է ծառայողների ~~մասնագիտական և~~ հատուկ ուսուցումը.

13) իր իրավասության սահմաններում խրախուսում կամ կարգապահական տույժի է ենթարկում հարկադիր կատարման ծառայության՝ իր կողմից պաշտոնում նշանակված ծառայողներին.

14) առաջարկություններ է ներկայացնում համապատասխան նախարարին՝ դատական ակտերի հարկադիր կատարման մասին օրենսդրության կատարելագործման վերաբերյալ:

Գլխավոր հարկադիր կատարողն ունի նաև օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված այլ լիազորություններ:

2. Գլխավոր հարկադիր կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության խնդիրների իրականացման համար:

3. ~~Գլխավոր հարկադիր կատարողի բացակայության ժամանակ նրա լիազորություններն իրականացնում է նրա տեղակալը:~~ Գլխավոր հարկադիր կատարողի տեղակալը կատարում է ~~նաև~~ գլխավոր հարկադիր կատարողի ~~այլ~~ հանձնարարություններ:

Գ Լ ՈՒ Խ 8.

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻ ~~ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ~~ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

Հոդված 25. Հարկադիր կատարողի վարձատրությունը

1. Յուրաքանչյուր հարկադիր կատարող ունի ծառայության համար համարժեք վարձատրության իրավունք:

2. Հարկադիր կատարողի վարձատրության, այդ թվում՝ հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի հաշվարկների և չափերի, աշխատավարձի բնականոն աճի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ **և պետական ծառայության պաշտոններ** զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

3. ***(մասն ուժը կորցրել է 12.12.13 ՀՕ-168-Ն)***

4. ***(մասն ուժը կորցրել է 12.12.13 ՀՕ-168-Ն)***

5. ***(մասն ուժը կորցրել է 12.12.13 ՀՕ-168-Ն)***

6. ***(մասն ուժը կորցրել է 12.12.13 ՀՕ-168-Ն)***

7. ***(մասն ուժը կորցրել է 12.12.13 ՀՕ-168-Ն)***

~~**Հոդված 30. Հարկադիր կատարողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները**~~

~~-~~

~~1. Հարկադիր կատարողն իրավունք չունի՝~~

~~1) կատարելու վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից.~~

~~2) անձամբ զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ.~~

~~3) լինելու երրորդ անձանց ներկայացուցիչն այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ ինքը գտնվում է ծառայության մեջ, կամ որն անմիջականորեն ենթակա է իրեն կամ անմիջականորեն վերահսկելի է իր կողմից.~~

~~4) ստանալու հոնորար ծառայողական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար.~~

~~5) ոչ ծառայողական նպատակներով օգտագործելու նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական այլ գույք և ծառայողական տեղեկատվությունը.~~

~~6) ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալու նվերներ, գումար կամ ծառայություններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.~~

~~7) լինելու որևէ կուսակցության, հասարակական (բացառությամբ գիտական, մշակութային, մարզական, որսորդական և նմանօրինակ շահերի ընդհանրության հիման~~

~~վրա միավորված կազմակերպությունների), այդ թվում՝ կրոնական, արհեստակցական կազմակերպության անդամ.~~

~~8) կազմակերպելու գործադուլներ, հանրահավաքներ, երթեր, ցույցեր կամ մասնակցելու դրանց:~~

~~2. Հարկադիր կատարման ծառայությունում պաշտոնի նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, հարկադիր կատարողը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, պարտավոր է առևտրային կազմակերպությունների կանոնադրական (բաժնեհավաք, փայահավաք) կապիտալում բաժնեմաս (բաժնետոմս, փայ) ունենալու դեպքում դա հանձնել հավատարմագրային կառավարման: Հարկադիր կատարողն իրավունք ունի հավատարմագրային կառավարման հանձնված գույքից ստանալու եկամուտ:~~

~~3. Հարկադիր կատարողին արգելվում է համատեղ ծառայելու մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ անմիջական վերահսկողության հետ:~~

~~4. Հարկադիր կատարողին չի տրվում իր՝ պաշտոնի նշանակման, այլ պաշտոնի փոխադրման, ազատման կամ նրա նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու մասին հրամանի պատճենը, եթե հրամանը պարունակում է պետական կամ ծառայողական գաղտնիք կամ հրապարակման ոչ ենթակա տեղեկատվություն: Այդ դեպքում նրան տրվում է հրամանից քաղվածք, որից հանվում է պետական գաղտնիք կամ հրապարակման ոչ ենթակա տեղեկատվությունը:~~

«Հոդված 30. Հարկադիր կատարողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները

1. Ի լրումն «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների՝ հարկադիր կատարողն իրավունք չունի լինելու ներկայացուցիչ դատարանում, բացառությամբ օրինական ներկայացուցիչ լինելու և ի պաշտոնե գործելու դեպքերի:

2. Հարկադիր կատարողը ցանկացած հանգամանքում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն:»:

Հոդված 34. Հարկադիր կատարողների նկատմամբ կիրառվող ~~խրախուսանքի տեսակները~~ խրախուսանքները

~~1. Երկարամյա ծառայության, ինչպես նաև ծառայողական պարտականությունները և առաջադրանքները պատշաճ կատարելու համար հարկադիր կատարողի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ տեսակները.~~

~~1) շնորհակալության հայտարարում.~~

~~2) միանվագ դրամական պարգևատրում.~~

~~3) հուշանվերով պարգևատրում.~~

~~4) արտահերթ կոչման շնորհում.~~

~~4.1) մեդալով պարգևատրում.~~

~~5) կրծքանշանով պարգևատրում:~~

~~2. Հարկադիր կատարողի նկատմամբ որպես խրախուսանք կարող է կիրառվել նախկինում նշանակված կարգապահական տույժը ժամկետից շուտ հանելը՝ տույժը կիրառած պաշտոնատար անձի կողմից:~~

~~3. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խրախուսանքը հարկադիր կատարողի նկատմամբ ծառայության ամբողջ ընթացքում կարող է կիրառվել մեկ անգամ:~~

~~4. Միաժամանակ կարող է կիրառվել խրախուսանքի մի քանի տեսակ:~~

1. Հարկադիր կատարողների նկատմամաբ կիրառվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված խրախուսանքի տեսակները: Հարկադիր կատարողների նկատմամաբ խրախուսանք կիրառում են համապատասխանաբար համապատասխան նախարարը և գլխավոր հարկադիր կատարողը՝ իրենց կողմից նշանակված հարկադիր կատարողների նկատմամբ:

2. Հարկադիր կատարողի նկատմամբ կարող է կիրառվել նաև արտահերթ կոչման շնորհում խրախուսանքի տեսակը, որը հարկադիր կատարողի նկատմամբ ծառայության ամբողջ ընթացքում կարող է կիրառվել միայն մեկ անգամ: Արտահերթ կոչման շնորհում խրախուսանքը կիրառում է գլխավոր հարկադիր կատարողը՝ համապատասխան նախարարի համաձայնությամբ:

3. Երկարամյա ծառայության և (կամ) ծառայողական պարտականությունները և (կամ) հանձնարարականները (առաջադրանքները) բարեխղճորեն կատարելու համար հարկադիր կատարողը պարգևատրվում է մեդալով կամ կրծքանշանով:

4. Մեդալի և կրծքանշանի տեսակները, ձևերը և շնորհման կարգը սահմանում է հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը:

~~5. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված խրախուսանքները կիրառում է համապատասխան նախարարը, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խրախուսանքի:~~

~~Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խրախուսանքը կիրառում է գլխավոր հարկադիր կատարողը՝ համապատասխան նախարարի համաձայնությամբ:~~

~~Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ և 4.1-ին կետերով նախատեսված խրախուսանքները կարող է կիրառել նաև գլխավոր հարկադիր կատարողը, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված խրախուսանքը կիրառվում է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջներին համապատասխան:~~

~~6. Սույն հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետով նախատեսված մեդալի և 5-րդ կետով նախատեսված կրծքանշանի տեսակները, ձևերը և շնորհման կարգը սահմանում է համապատասխան նախարարը:~~

~~7. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերով նախատեսված խրախուսանքները կիրառվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով սահմանված համապատասխան միջոցների հաշվին, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված խրախուսանքը կիրառվում է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված համապատասխան միջոցների հաշվին:~~

~~Հոդված 35. Հարկադիր կատարողի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը~~

~~1. Ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ծառայողական դիրքը չարաշահելու, ծառայողական լիազորությունները վերազանցելու, ինչպես նաև հարկադիր կատարողի վարքագծի կանոնները խախտելու դեպքերում հարկադիր կատարողի նկատմամբ կիրառվում են հետևյալ կարգապահական տույժերը.~~

~~1) նկատողություն.~~

~~2) խիստ նկատողություն.~~

~~3) պաշտոնի իջեցում.~~

~~4) կոչման իջեցում մեկ աստիճանով.~~

~~5) ծառայությունից ազատում:~~

~~2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգապահական տույժերը կիրառում է համապատասխան նախարարը, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված կարգապահական տույժի, ինչպես նաև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:~~

~~Սույն հոդվածի 1-ին մասի 1-5-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերը կիրառում է գլխավոր հարկադիր կատարողը իր կողմից պաշտոնում նշանակված ծառայողների նկատմամբ:~~

~~Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը գլխավոր հարկադիր կատարողը (բացառությամբ արդարադատության գեներալ-մայորի կոչում ունեցող ծառայողի) կարող է կիրառել համապատասխան նախարարի համաձայնությամբ:~~

~~3. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը գլխավոր հարկադիր կատարողի նկատմամբ չի կիրառվում:~~

~~Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը գլխավոր հարկադիր կատարողի և արդարադատության գեներալ-մայորի կոչում ունեցող ծառայողների նկատմամբ կիրառում է վարչապետը՝ սեփական նախաձեռնությամբ կամ համապատասխան նախարարի միջնորդությամբ:~~

~~Սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը գլխավոր հարկադիր կատարողի նկատմամբ կիրառում է վարչապետը՝ սեփական նախաձեռնությամբ կամ համապատասխան նախարարի միջնորդությամբ:~~

Հոդված 35. Հարկադիր կատարողի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը

1. «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով հարկադիր կատարողների նկատմամաբ կիրառվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգապահական տույժերը:

2. Հարկադիր կատարողի նկատմամաբ կարող է կիրառվել նաև մեկ աստիճանով կոչման իջեցում կարգապահական տույժը՝ ծառայության ամբողջ ընթացքում միայն մեկ անգամ:

3. Մեկ աստիճանով կոչման իջեցում կարգապահական տույժը գլխավոր հարկադիր կատարողի և արդարադատության գեներալ-մայորի կոչում ունեցող հարկադիր

կատարողների նկատմամբ կիրառում է վարչապետը՝ սեփական նախաձեռնությամբ կամ համապատասխան նախարարի միջնորդությամբ:

4. Ծառայությունից ազատում կարգապահական տույժը գլխավոր հարկադիր կատարողի նկատմամբ կիրառում է վարչապետը՝ սեփական նախաձեռնությամբ կամ համապատասխան նախարարի միջնորդությամբ:

5. Կարգապահական տույժերը կիրառում են համապատասխանաբար համապատասխան նախարարը և գլխավոր հարկադիր կատարողը՝ իրենց կողմից նշանակված հարկադիր կատարողների նկատմամբ:

~~Հոդված 36. Կարգապահական տույժը կիրառելու և տույժը հանելու կարգը~~

~~1. Կարգապահական տույժը նշանակվում է, եթե վեց ամսից ավելի չի անցել կարգապահական խախտումը հայտնաբերելու օրվանից՝ չհաշված հիվանդությունը կամ արձակուրդում գտնվելը. ընդ որում, նշանակվող տույժը պետք է համապատասխանի կատարված խախտման բնույթին և վտանգավորության աստիճանին:~~

~~2. Հարկադիր կատարողի նկատմամբ կիրառվող տույժերը ձևակերպվում են գրավոր: Կարգապահական յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ:~~

~~3. Կարգապահական տույժի մասին հարկադիր կատարողը տեղեկացվում է դրա նշանակումից հետո՝ հնգօրյա ժամկետում:~~

~~4. Եթե կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, հարկադիր կատարողը նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա դա համարվում է մարված:~~

~~5. Կարգապահական տույժը կիրառող պաշտոնատար անձի կամ նրա վերադասի կողմից կարող է հանվել նաև նշանակումից վեց ամիս հետո՝ մինչև մեկ տարին լրանալը, եթե հարկադիր կատարողը թույլ չի տվել կարգապահական նոր խախտում:~~

~~Բացառիկ դեպքերում մեկից ավելի կարգապահական տույժերը կարող է հանել համապատասխան նախարարը՝ սույն օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով:~~

~~6. Հարկադիր կատարողների նկատմամբ սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-5-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերը կարող են կիրառվել միայն ծառայողական քննության արդյունքների հիման վրա:~~

~~7. Ծառայողական քննության ժամանակահատվածում հարկադիր կատարողի լիազորությունները կարող են ժամանակավորապես դադարեցվել՝ վարձատրության պահպանմամբ, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ պաշտոնում մնալով՝ նա կխոչընդոտի ծառայողական քննության անցկացմանը:~~

~~8. Հարկադիր կատարողի նկատմամբ քրեական հետապնդում իրականացվելիս լիազորությունները ժամանակավորապես դադարեցվում են մինչև քրեական հետապնդման դադարեցումը կամ մինչև տվյալ գործով դատարանի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Այդ դեպքում հարկադիր կատարողին աշխատավարձ վճարվում է մինչև երկու ամսվա համար, իսկ մնացած վճարումը կատարվում է անմեղության հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու կամ արդարացման դատավճիռ կայացնելու դեպքում:~~

Հոդված 36. Հարկադիր կատարողների էթիկայի հանձնաժողովը

1. Հարկադիր կատարողների էթիկայի հանձնաժողովի ձևավորման, գործունեության կարգը, հարկադիր կատարողի վարքագծի կանոնները խախտելու և (կամ) հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու և (կամ) շահերի բախման կանոնները, նվերներ ընդունելու արգելքը խախտելու, անհամատեղելիության պահանջները չպահպանելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

2. Հարկադիր կատարման ծառայության անձնակազմի կառավարման ստորաբաժանումում նախատեսվում է բարեվարքության հարցերով կազմակերպչի քաղաքացիական ծառայության պաշտոն:

~~**Հոդված 37. Հարկադիր կատարողին հրամաններ տալու սահմանափակումները**~~

~~1. Հարկադիր կատարողին չեն կարող տրվել այնպիսի բանավոր կամ գրավոր հրամաններ կամ ցուցումներ, որոնք՝~~

~~1) հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին և իրավական այլ ակտերին.~~

~~2) հրամաններ կամ ցուցումներ տվողի կամ կատարողի լիազորությունների սահմաններից դուրս են:~~

~~2. Հարկադիր կատարողը սույն հոդվածի 1-ին մասում նշված հրամաններ կամ ցուցումներ ստանալիս պարտավոր է ղեկավարվել օրենքների պահանջներով՝ այդ մասին տեղյակ պահելով վերադասին:~~

~~3. Ակնհայտ անօրինական հրամանը կամ ցուցումը չկատարելը հարկադիր կատարողին ազատում է հրամանը կամ ցուցումը չկատարելու համար պատասխանատվությունից:~~

Հոդված 38. Հարկադիր կատարման ծառայությունից ազատելը

1. Հարկադիր կատարողը հարկադիր կատարման ծառայությունից ազատվում է՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման դեպքում.

2) անձնական նախաձեռնությամբ՝ գրավոր դիմումի հիման վրա.

3) սույն օրենքի 40-րդ հոդվածով նախատեսված սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ.

4) հաստիքների կրճատման, ստորաբաժանման լուծարման կամ վերակազմակերպման դեպքում, եթե հարկադիր կատարողին համապատասխան պաշտոնում նշանակելը հնարավոր չէ, և հաստիքների կրճատումը պայմանավորված է հաստիքների ընդհանուր թվի կրճատմամբ.

5) ծառայությանը՝ հիվանդության պատճառով ոչ պիտանի լինելու դեպքում.

6) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու դեպքում.

~~7) կարգապահական խախտումների համար, եթե մեկ տարվա ընթացքում նրա նկատմամբ կիրառվել են երկու և ավելի կարգապահական տույժեր, որոնցից գոնե մեկը սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-4-րդ կետերով սահմանված տույժերից է, կամ սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը կիրառելու դեպքում.~~

~~8) սույն օրենքի 30-րդ հոդվածի պահանջները խախտելու դեպքում.~~

7) «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված կարգապահական տույժը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելու դեպքում կամ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված կարգապահական տույժերը մեկ տարվա ընթացքում կիրառելու դեպքում կամ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված կարգապահական տույժը կիրառելու դեպքում կամ կոչման իջեցում մեկ աստիճանով կարգապահական տույժը և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված տույժերից որևէ մեկը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելը.».

8) «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու դեպքերում՝ համապատասխան եզրակացության հիման վրա.

~~9) օրենքով սահմանված կարգով իր եկամուտների հայտարարագիրը չներկայացնելու դեպքում.~~

10) դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում.

11) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ոչ ավելի, քան 120 օր անընդմեջ, կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում ոչ ավելի, քան 140 օր ծառայության չներկայանալու դեպքում՝ չհաշված հղիության և ծննդաբերության կամ երեխային խնամելու համար արձակուրդը.

~~12) քաղաքական կամ հայեցողական պաշտոններում ընտրվելու կամ նշանակվելու դեպքում.~~

~~13) սույն օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու դեպքում.~~

~~14) ատեստավորման արդյունքների հիման վրա, եթե համապատասխան թափուր պաշտոնի բացակայության պատճառով ավելի ցածր պաշտոնի նշանակելն անհնար է:~~

~~Հարկադիր կատարողի պարտականությունները համարվում են դադարած՝ նրա մահվան կապակցությամբ:~~

12) հանրային պաշտոնում ընտրվելու կամ նշանակվելու դեպքում.

13) օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու դեպքում.

14) երկու տարի անընդմեջ վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում.

2. Հարկադիր կատարողի պարտականությունները համարվում են դադարած՝ նրա մահվան կապակցությամբ:

3. Երկու տարի անընդմեջ կատարողականի տարեկան գնահատման արդյունքները Կառավարության սահմանած տոկոսից (միավորից) ցածր լինելու դեպքում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն իրավունք ունի դադարեցնելու հարկադիր կատարողի լիազորությունները:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերի ի հայտ գալու դեպքում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը երկու աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է հարկադիր կատարողի լիազորությունները դադարեցնելու մասին համապատասխան իրավական ակտ:

Հոդված 39. Հարկադիր կատարման ծառայությունում զբաղեցրած պաշտոնից ազատելը

Հարկադիր կատարողը հարկադիր կատարման ծառայությունում զբաղեցրած պաշտոնից ազատվում է՝

1) անձնական նախաձեռնությամբ՝ գրավոր դիմումի հիման վրա.

2) հաստիքների կրճատման, ստորաբաժանման լուծարման կամ վերակազմակերպման դեպքում՝ այլ պաշտոնի նշանակվելիս.

~~3) սահմանափակ առողջական վիճակի պատճառով՝ տվյալ պաշտոնում հետագա ծառայությունը շարունակելու անհնարինության դեպքում.~~

~~4) ատեստավորման արդյունքների հիման վրա.~~

~~5) սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված կարգապահական տույժի ենթարկվելու դեպքում.~~

~~6) սույն օրենքով նախատեսված այլ դեպքերում:~~

~~**Հոդված 42. Ծառայությունում կամ պաշտոնում վերականգնելը**~~

~~Այն հարկադիր ծառայողները, ովքեր սահմանված կարգով ճանաչվել են ծառայությունում անհիմն փոխադրված, պաշտոնը կամ կոչումը իջեցված, ինչպես նաև ծառայությունից ազատված, ենթակա են ծառայության, կոչումի կամ պաշտոնում վերականգնման:~~

Հոդված 52.1. Պաշտոնի անձնագիրը

1. Բացառությամբ գլխավոր հարկադիր կատարողի և նրա տեղակալների պաշտոնների՝ հարկադիր կատարման մյուս պաշտոնների համար սահմանվում է պաշտոնի անձնագիր: Պաշտոնի անձնագրի հաստատման և փոփոխման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

2. Հարկադիր կատարման ծառայության պաշտոնի անձնագիրը (աշխատատեղի նկարագիր) հարկադիր կատարման ծառայության իրավասությունը սահմանող իրավական ակտերից և խնդիրներից բխող հարկադիր կատարողի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրող և այդ գործառույթները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ ու կոմպետենցիաներ նախատեսող, կառավարման համակարգում տեղակայվածությունը նախատեսող և սույն օրենքով սահմանված կարգով հաստատված փաստաթուղթ է:

3. Հարկադիր կատարման ծառայությունում պաշտոնների անձնագրերը հաստատում է գլխավոր հարկադիր կատարողը:

Հոդված 52.2. Հարկադիր կատարողի անձնական գործը

1. Հարկադիր կատարողի ծառայության ընթացքն արտացոլվում է նրա անձնական գործում: Հարկադիր կատարողի անձնական գործը վարում է կենտրոնական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումը՝ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով:

Հոդված 30. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հարկադիր կատարողը քաղաքացիական ծառայողի պաշտոնում նշանակվելու (քաղաքացիական ծառայող համարվելու) օրվանից հետո՝ երեք տարվա ընթացքում, օգտվում է «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքից: Այս դեպքում հարկադիր ծառայությունում պաշտոն զբաղեցրած ժամանակահատվածը համարվում է զինվորական ծառայության ստաժ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2002 թվականի հուլիսի 3-ին

ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

~~1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության, որպես պետական ծառայության հատուկ տեսակ, կազմակերպման և իրականացման, հարկային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց իրավական կարգավիճակի, հարկային ծառայության առանձնահատկությունների, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերություններ:~~

~~2. Հարկային ծառայության աշխատողների աշխատանքային իրավունքներին և պարտականություններին վերաբերող հարցերը, որոնք կարգավորված չեն սույն օրենքով, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ:~~

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության՝ որպես պետական ծառայության առանձին տեսակի առանձնահատկությունները:

2. Հարկային ծառայողների աշխատանքային հարաբերություններին վերաբերող հարցերը, որոնք կարգավորված չեն սույն օրենքով, կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով և «Հանրային ծառայության մասին» օրենքով:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավական ակտերով այդ հարաբերությունները կարգավորված չլինելու դեպքում դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ:

Հոդված 2. Օրենքի գործողության ոլորտը

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության հարկային~~ ծառայության մարմնի (այսուհետ՝ հարկային մարմին) և դրանում հարկային ծառայություն իրականացնող պաշտոնատար անձանց վրա~~ **մարմնում (այսուհետ՝ հարկային մարմին) հետաքննչական, օպերատիվ հետախուզական գործառույթներ իրականացնող անձանց վրա**:

~~2. Սույն օրենքի գործողությունը չի տարածվում հարկային մարմնի քաղաքացիական ծառայողների, վարչատեխնիկական կամ այլ սպասարկման գործառույթներ իրականացնող անձանց վրա:~~

Հոդված 3. Հարկային ծառայության մասին օրենսդրությունը

1. Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքից, սույն օրենքից, **Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքից** և այլ իրավական ակտերից:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են պայմանագրերի նորմերը:

Հոդված 4. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստները.

~~***հարկային ծառայող***՝ հարկային մարմնում հարկային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված որևէ պաշտոն զբաղեցնող անձ.~~

հարկային ծառայող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ով սույն օրենքով սահմանված կարգով զբաղեցնում է հարկային ծառայության պաշտոն և իրականացնում այդ պաշտոնին վերապահված մասնագիտական գործունեություն կամ գրանցված է հարկային ծառայության կադրերի ռեզերվում և վարձատրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից.

~~**հարկային ծառայության պաշտոնի նկարագիր**՝ տվյալ պաշտոնը զբաղեցնող հարկային ծառայողի համար օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները նկարագրող և տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար հարկային ծառայողին մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների~~ **~~կոմպետենցիաների~~** ~~տիրապետման տեսանկյունից ներկայացվող, ինչպես նաև հարկային ծառայության համապատասխան կոչում ունենալու պահանջները սահմանող, հարկային մարմնի հաստատած փաստաթուղթ~~ **~~«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով հարկային մարմնի ղեկավարի կողմից հաստատված փաստաթուղթ.~~**

1) «**հարկային ծառայության պաշտոնի նկարագիր**» պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հարկային ծառայության պաշտոնի անձնագիրը (աշխատատեղի նկարագիր) հարկային ծառայության իրավասությունը սահմանող իրավական ակտերից և խնդիրներից բխող հարկային ծառայողի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրող և այդ գործառույթները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ

մասնագիտական գիտելիքներ ու կոմպետենցիաներ նախատեսող, կառավարման համակարգում տեղակայվածությունը նախատեսող և սույն օրենքով սահմանված կարգով հաստատված փաստաթուղթ է».

ռոտացիա՝ հարկային մարմնի ստորաբաժանումների հարկային ծառայողների տեղափոխում հարկային մարմնի մի ստորաբաժանումից մեկ այլ ստորաբաժանում Կառավարության սահմանած կարգով.

հարկային ծառայողի ատեստավորում՝ հարկային ծառայողի զբաղեցրած պաշտոնին վերջինիս համապատասխանությունը և ծառայողական առաջխաղացման նպատակահարմարությունը որոշելու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով անցկացվող որակավորման ստուգում.

հարկային ծառայության գործառույթներ՝ հարկային մարմնի՝ ըստ կառուցվածքային ստորաբաժանումների, վարչապետի կողմից հաստատվող գործառութային պարտականություններ.

հարկային ծառայողի վարքագծի կանոններ՝ հարկային ծառայողի մասնագիտական (ծառայողական) պահվածքի և վարվելակերպի նորմեր պարունակող փաստաթուղթ, որը հաստատում է Կառավարությունը.

հարկային ծառայողի նյութական պատասխանատվություն՝ սույն օրենքով, հարկային ծառայության ընթացակարգերով և հարկային ծառայողի վարքագծի կանոններով հարկային ծառայողի համար սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի որոշմամբ և հարկային մարմնի ղեկավարի կողմից կիրառվող պատասխանատվության տեսակ.

Հարկային մարմնի հանրային ծառայողի նյութական պատասխանատվություն՝ սույն օրենքով, հարկային ծառայության ընթացակարգերով և հարկային մարմնի կողմից հանրային ծառայողի համար սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի որոշման հիման վրա հարկային մարմնի ղեկավարի կողմից կիրառվող պատասխանատվության տեսակ.

ծառայողական քննություններ անցկացնող հանձնաժողով՝ Կառավարության սահմանած կարգով առաջարկված թեկնածուներից հարկային մարմնի ղեկավարի կողմից ձևավորվող մարմին, որն իրականացնում է սույն օրենքով և հարկային մարմնի ղեկավարի սահմանած կարգով վերապահված լիազորություններ.

հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտներ՝ Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջություն, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին.

հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներ՝ հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներ, հարկային մարմնի հարկային տեսչություններ.

հարկային ծառայության կադրերի ռեզերվ՝ հարկային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացված մրցույթում օրենքով սահմանված կարգով հաղթող ճանաչված, սակայն պաշտոնի չնշանակված և (կամ) սույն օրենքի 26-րդ

~~հոդվածի առաջին մասի 11-րդ կետով նախատեսված հիմքով հարկային ծառայությունից ազատված անձանց հանրույթ:~~

հարկային ծառայության կադրերի ռեզերվ՝ ռեեստր, որտեղ գրանցվում են սույն օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված հիմքերով պաշտոնից ազատված հարկային ծառայողները:

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում կիրառվող հասկացությունները սույն օրենքում կիրառվում են օրենսգրքում կիրառվող իմաստով ու նշանակությամբ, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված հասկացությունները սույն օրենքում կիրառվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում սահմանված իմաստով ու նշանակությամբ, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

Հոդված 5. Հարկային ծառայությունը

Հարկային ծառայությունը, ~~սույն օրենքի 8-րդ հոդվածում նշված մարմնում~~ հարկային ծառայողի կողմից սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ու իր իրավասության սահմաններում իրականացվող մասնագիտական գործունեությունն է, որը նպատակաուղղված է հարկային մարմնի խնդիրների և գործառույթների իրականացմանը **և չի իրականացվում այլ հանրային ծառայողների կողմից:**

~~**Հոդված 7. Հարկային ծառայության կազմակերպման սկզբունքները**~~

~~Հարկային ծառայության կազմակերպման սկզբունքներն են՝~~

~~1) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների գերակայությունը, մարդու իրավունքների և ազատությունների առաջնայնությունը.~~

~~1.1) Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի սկզբունքները.~~

~~2) հարկային ծառայության կայունությունը.~~

~~3) հարկային ծառայողներին ներկայացվող պահանջների միասնականությունը և հարկային ծառայողների իրավահավասարությունը.~~

~~4) օրենքով նախատեսված դեպքերում հարկային ծառայության հրապարակայնությունը.~~

~~5) քաղաքացիների համար հարկային ծառայության հավասար մատչելիությունը՝ իրենց մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան.~~

~~6) հարկային ծառայողների արհեստավարժությունը.~~

~~7) հարկային ծառայողների իրավական և սոցիալական պաշտպանվածությունը.~~

~~8) հարկային ծառայողների պատասխանատվությունը՝ իրենց ծառայողական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար.~~

~~9) *(կեպն ուժը կորցրել է 21.12.17 ՀՕ-276-Ն)*~~

~~10) *(կեպն ուժը կորցրել է 21.12.17 ՀՕ-276-Ն)*~~

~~11) հարկային ծառայության արդյունավետ կազմակերպումը.~~

~~12) հարկային ծառայողների ռոտացիան:~~

Հոդված 8. Հարկային մարմինը

1. Հարկային մարմինը Պետական եկամուտների կոմիտեն է (այսուհետ՝ հարկային մարմին): Հարկային տեսչությունները հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներ են:

2. ***(մասն ուժը կորցրել է 23.10.08 ՀՕ-176-Ն)***

2.1. Հարկային մարմնի անմիջական ղեկավարումն իրականացնում է Պետական եկամուտների կոմիտեի նախագահը:

3. Հարկային մարմնի հարկային տեսչություններն ստեղծում, վերակազմակերպում և լուծարում է Կառավարությունը:

~~3.1. Հարկային մարմնի համակարգում գիտահետազոտական գործունեության իրականացման, կադրերի պատրաստման, վերապատրաստման և այլ նպատակով Կառավարության կողմից կարող են ստեղծվել մասնագիտացված պետական ոչ առևտրային կազմակերպություններ:~~

4. ***(մասն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-262-Ն)***

5. ***(մասն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-262-Ն)***

6. ***(մասն ուժը կորցրել է 23.10.08 ՀՕ-176-Ն)***

7. Հարկային ծառայողների տեղափոխման, փոխադրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 8.1. Քննչական մարմինը

1. Քննչական մարմինը հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Քննչական մարմինը կազմակերպում և իրականացնում է նախաքննություն հարկային մարմնի քննչական ենթակայությանը վերապահված հանցագործություններով:

3. Քննչական մարմնի ղեկավարին նշանակում և ազատում է հարկային մարմնի ղեկավարը՝ վարչապետի համաձայնությամբ:

4. Քննչական մարմնում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում են սույն օրենքով սահմանված կարգով:

5.Քննչական մարմնում ինքնավար պաշտոնների դասակարգման, դասային կոչումների, պաշտոնների ներկայացվող չափանիշները, մրցույթի անցկացման կարգը սահմանում է կառավարությունը:

6. Սույն օրենքով սահմանված կատարողականի գնահատման հարաբերությունները չեն տարածվում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձնաց վրա:

Հոդված 9. Հարկային մարմնի լիազորությունները

1. Հարկային մարմինը՝

1) Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքին համապատասխան՝ իրականացնում է հարկային վարչարարություն՝

ա. հարկ վճարողների հաշվառում,

բ. հարկ վճարողների սպասարկում,

գ. հարկ վճարողների հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառում,

դ. հարկային հսկողության իրականացում և հարկային հսկողության հարակից ընթացակարգերի կիրառում,

ե. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքին համապատասխան՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ իրեն վերապահված գործերով վարույթի իրականացում, հարկային իրավախախտումների բացահայտման ուղղությամբ անհրաժեշտ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացում՝ օրենքով սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության, հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերի՝ հարկային պարտավորությունների գծով պահանջների խախտման համար օրենքով սահմանված պատասխանատվության կիրառում,

զ. հարկային պարտավորությունների կատարման ապահովում, հարկերի և այլ պարտադիր վճարների հավաքման կազմակերպում,

է. հարկային վեճերի լուծում, հարկ վճարողների բողոքների քննարկում և որոշումների ընդունում,

ը. հարկ վճարողների նկատմամբ օրենքով սահմանված կարգով հսկողության իրականացում,

թ. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով տնտեսավարող սուբյեկտների մոտ օրենքով սահմանված կարգով ստուգումների և ուսումնասիրությունների իրականացում,

ժ. միջազգային պայմանագրերի շրջանակներում հարկային վարչարարության իրականացում.

2) իրականացնում է բյուջեների՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների հաշվառումը, ապահովում է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները.

3) իրականացնում է տեղեկատվական տեխնոլոգիաների և դրանց առնչվող համակարգերի կառավարումը (մշակում, ներդնում և սպասարկում).

4) կազմակերպում է հարկային ծառայողների ուսուցումը, վերապատրաստումը ~~և ատեստավորումը.~~

5) միջազգային պայմանագրերի շրջանակներում օտարերկրյա իրավասու մարմինների հետ հարկման նպատակով փոխանակում է տեղեկատվություն (ըստ՝ դիմում-պահանջի, ինքնաբերական և ավտոմատ եղանակով).

6) իրականացնում է նախաքննություն հարկային մարմնի ենթակայությանը վերապահված հանցագործությունների վերաբերյալ վարույթով.

7) վերահսկողություն է իրականացնում պետական տուրքի հաշվարկման և գանձման կարգի պահպանման նկատմամբ:

2. ***(մասն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-262-Ն)***

3. ***(մասն ուժը կորցրել է 05.11.03 ՀՕ-28-Ն)***

Հոդված 11[1]. Հարկային մարմնի ղեկավարը

(վերնագիրը լրաց. 23.10.08 ՀՕ-176-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-262-Ն)

Հարկային մարմնի ղեկավարն իրականացնում է սույն օրենքով սահմանված գործառույթներ, կրում է սույն օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված պարտականություններ և իրավունքներ, այդ թվում՝

1) ***(կետն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-262-Ն)***

2) հարկային հսկողության իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով տալիս է հանձնարարագրեր, հրամաններ, կայացնում է որոշումներ.

3) հարկային ծառայողներին և հարկային մարմնի համակարգի քաղաքացիական ծառայողներին ու այլ աշխատակիցներին տալիս է բանավոր և գրավոր հանձնարարություններ.

~~4) սահմանում է հարկային մարմնի ղեկավարի տեղակալների, հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների պետերի իրավասությունների շրջանակները, գործունեության բնագավառները և պատասխանատվությունը՝ սույն օրենքից ելնելով.~~

5) սահմանում է հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթները, հարկային տեսչությունների գործունեության բնագավառները.

6) հաստատում է հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կառուցվածքը և հաստիքացուցակը.

7) Կառավարության հաստատմանն է ներկայացնում հարկային մարմնի տարեկան աշխատանքային ծրագիրը.

8) հաստատում է հարկային մարմնի տարեկան հաշվեկշիռը, տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը, ֆինանսական հաշվետվությունները.

8.1) լսում և Կառավարություն է ներկայացնում կոմիտեի աշխատակազմի գործունեության մասին տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, քննում է դրանց գործունեության ստուգման արդյունքները, հաստատում կոմիտեի աշխատակազմի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը և ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերստուգման արդյունքները.

~~9) վերահսկողություն է իրականացնում հարկային մարմնին ամրացված պետական սեփականության պահպանման և արդյունավետ օգտագործման նկատմամբ.~~

10) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հարկային մարմնի համակարգում ընդունված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհամապատասխանող իրավական ակտերը.

11) չեղյալ է ճանաչում հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհամապատասխանող որոշումները.

12) տնօրինում է հարկային մարմնի համակարգի զարգացման ֆոնդի միջոցները.

13) ստեղծում է աշխատանքային և փորձագիտական հանձնաժողովներ և խմբեր՝ ըստ անհրաժեշտության.

14) պատասխանատվություն է կրում հարկային վարչարարության՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով կազմակերպման և իրականացման համար.

15) հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի եզրակացության հիման վրա կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

- եզրակացությունը թողնել անհետևանք,
- եզրակացությունը վերադարձնել լրացուցիչ քննության,
- վերանայել պատասխանատվության ձևը,
- արձակել հրաման՝ հարկային ծառայողին կարգապահական կամ նյութական պատասխանատվության ենթարկելու համար.

16) ստեղծում է խորհրդակցական մարմիններ:

~~**Հոդված 12. Հարկային ծառայության պաշտոնի նշանակվելու իրավունք ունեցող անձինք**~~

~~Սույն օրենքով սահմանված կարգով հարկային մարմնում հարկային ծառայության պաշտոնի նշանակվելու իրավունք ունի հայերենին տիրապետող, պետական հավատարմագրում ստացած բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտած՝ պետական հավատարմագրում ստացած մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացին:~~

~~Հարկային ծառայության պաշտոնի նշանակվելու համար անհրաժեշտ մասնագիտությունների ցանկը հաստատում է Կառավարությունը:~~

Հոդված 12. Հարկային ծառայության պաշտոնի նշանակվելու իրավունք ունեցող անձինք

1. **Օրենքով սահմանված կարգով հարկային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն հարկային ծառայության տվյալ պաշտոնի նկարագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:**
2. **Հարկային ծառայության պաշտոնի նշանակվելու համար անհրաժեշտ մասնագիտությունների ցանկը հաստատում է հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը:**

~~**Հոդված 13. Հարկային ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները**~~

~~1. Հարկային ծառայության պաշտոնի չի կարող նշանակվել այն անձը, ով՝~~

~~1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.~~

~~2) դատական կարգով զրկված է հարկային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից.~~

~~3) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը հարկային ծառայության պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանը և լիազորությունների իրականացմանը.~~

~~4) դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.~~

~~5) խուսափել է ժամկետային զինվորական ծառայությունից:~~

~~2. Սույն հոդվածի առաջին մասի 3-րդ կետով նախատեսված հիվանդությունների ցանկը հաստատում է Կառավարությունը:~~

~~3. Հարկային ծառայողն իրավունք չունի՝~~

~~1) զբաղեցնել պետական այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից.~~

~~2) զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ.~~

~~3) լինել երրորդ անձանց ներկայացուցիչ այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ ինքը գտնվում է ծառայության մեջ, կամ որն անմիջականորեն ենթակա է իրեն կամ անմիջականորեն վերահսկելի է իր կողմից.~~

~~4) հոնորար ստանալ ծառայողական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար.~~

~~5) ոչ ծառայողական նպատակներով օգտագործել նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական այլ գույքը և ծառայողական տեղեկատվությունը.~~

~~6) ծառայողական պարտականությունները կատարելու համար այլ անձանցից ստանալ նվերներ, գումար կամ ծառայություններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.~~

~~7) որպես պետության ներկայացուցիչ՝ գույքային գործարքներ կնքել սույն հոդվածի հինգերորդ մասում նշված անձանց հետ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.~~

~~8) հարկային ծառայության պաշտոնից ազատվելուց հետո՝ երեք տարվա ընթացքում, ընդունվել աշխատանքի այն գործատուի մոտ կամ դառնալ այն կազմակերպության աշխատողը, որի նկատմամբ նա անմիջական հսկողություն է իրականացրել իր պաշտոնավարման վերջին մեկ տարվա ընթացքում:~~

~~4. Հարկային ծառայության նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, հարկային ծառայողը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավոր է առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում բաժնեմաս ունենալու դեպքում դա հանձնել հավատարմագրային կառավարման:~~

~~5. Հարկային ծառայողին արգելվում է համատեղ աշխատել մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, նրանց զավակ, ամուսնու ծնող, եղբայր և քույր) հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ:~~

«Հոդված 13. Հարկային ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները

1. Ի լրումն «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների՝ հարկային ծառայողն իրավունք չունի լինելու ներկայացուցիչ դատարանում, բացառությամբ օրինական ներկայացուցիչ լինելու և ի պաշտոնե գործելու դեպքերի:

2. Հարկային ծառայողը ցանկացած հանգամանքում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն:»:

Հոդված 14. Հարկային ծառայության պաշտոնների դասակարգումը

~~1. Հարկային ծառայության պաշտոնները դասակարգվում են խմբերի՝ ելնելով այդ պաշտոններն զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման պահանջի, ինչպես նաև գիտելիքների և հմտությունների անհրաժեշտ մակարդակից:~~

1. Հարկային ծառայության պաշտոնները դասակարգվում են խմբերի՝ ելնելով այդ պաշտոնները զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, գործունեության ազդեցության, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց լուծման, ինչպես նաև մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներից:

2. Հարկային ծառայության պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.
1) հարկային ծառայության բարձրագույն պաշտոններ.
2) հարկային ծառայության գլխավոր պաշտոններ.
3) հարկային ծառայության առաջատար պաշտոններ.
4) հարկային ծառայության կրտսեր պաշտոններ:

~~**Հոդված 15. Հարկային ծառայության պաշտոնների անվանացանկը**~~

~~1. Հարկային մարմնի համակարգում սահմանվում են հարկային ծառայության հետևյալ պաշտոնները.~~

~~Ա խումբ. հարկային ծառայության բարձրագույն պաշտոններ՝~~
~~հարկային մարմնի ղեկավար,~~
~~հարկային մարմնի ղեկավարի տեղակալ,~~
~~հարկային մարմնի վարչության պետ,~~
~~հարկային տեսչության պետ.~~
~~Բ խումբ. հարկային ծառայության գլխավոր պաշտոններ՝~~
~~հարկային մարմնի վարչության պետի տեղակալ,~~
~~հարկային մարմնի բաժնի պետ,~~
~~հարկային տեսչության պետի տեղակալ,~~
~~հարկային մարմնի բաժնի պետի տեղակալ.~~
~~Գ խումբ. հարկային ծառայության առաջատար պաշտոններ՝~~
~~հարկային մարմնի հատկապես կարևորագույն գործերով քննիչ,~~
~~հարկային մարմնի ավագ քննիչ,~~
~~հարկային մարմնի քննիչ,~~
~~հարկային մարմնի գլխավոր օպերլիազոր,~~
~~հարկային մարմնի գլխավոր հարկային տեսուչ,~~
~~հարկային մարմնի գլխավոր մասնագետ,~~
~~հարկային մարմնի ավագ հետաքննիչ,~~
~~հարկային տեսչության բաժնի պետ,~~
~~հարկային մարմնի ավագ օպերլիազոր,~~
~~հարկային մարմնի ավագ հարկային տեսուչ,~~
~~հարկային մարմնի առաջատար մասնագետ,~~
~~հարկային մարմնի հետաքննիչ,~~
~~տարածքային բաժնի գլխավոր օպերլիազոր,~~
~~հարկային տեսչության գլխավոր հարկային տեսուչ,~~
~~հարկային տեսչության գլխավոր մասնագետ,~~
~~հարկային մարմնի օպերլիազոր,~~
~~հարկային մարմնի հարկային տեսուչ.~~
~~Դ խումբ. հարկային ծառայության կրտսեր պաշտոններ՝~~
~~տարածքային բաժնի ավագ օպերլիազոր,~~
~~հարկային տեսչության ավագ հարկային տեսուչ,~~
~~հարկային տեսչության առաջատար մասնագետ,~~
~~հարկային մարմնի 1-ին կարգի մասնագետ,~~
~~հարկային մարմնի 2-րդ կարգի մասնագետ,~~
~~տարածքային բաժնի օպերլիազոր,~~
~~հարկային տեսչության հարկային տեսուչ,~~

~~հարկային տեսչության 1-ին կարգի մասնագետ,~~

~~հարկային տեսչության 2-րդ կարգի մասնագետ:~~

~~2. Սույն օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ Կառավարության կողմից ստեղծվող հարկային մարմնի այլ առանձնացված ստորաբաժանումների հարկային ծառայողների պաշտոնների անվանացանկը հաստատվում է առանձնացված ստորաբաժանում ստեղծելու վերաբերյալ Կառավարության համապատասխան որոշմամբ:~~

~~3. Հարկային մարմնի ղեկավարի և հարկային մարմնի ղեկավարի տեղակալի, հարկային մարմնի վարչության պետի, հարկային տեսչության պետի պաշտոններ զբաղեցնող անձանց վրա չեն տարածվում սույն օրենքով սահմանված մրցույթի, ատեստավորման և վերապատրաստման հետ կապված նորմերը:~~

1. Հարկային ծառայության պաշտոնների խմբերում պաշտոնների դասակարգումն իրականացվում է հարկային ծառայության պաշտոնների անվանացանկով, որը հաստատվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով:

2. Հարկային մարմնի ղեկավարի և նրա տեղակալների պաշտոնները պետական վարչական պաշտոններ են:

Հոդված 16. Հարկային ծառայության ստաժը, առավելագույն տարիքը

1. Հարկային ծառայության ստաժը ներառում է հարկային ծառայողի՝ հարկային ծառայության պաշտոն զբաղեցնելու, ինչպես նաև մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը հարկային մարմնում աշխատած ողջ ժամանակաշրջանը:

2. Հարկային ծառայության ստաժը հաշվարկվում է հարկային ծառայողի ընդհանուր և մասնագիտական աշխատանքային ստաժում:

~~3. Մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով սահմանված կարգով հարկային ծառայողի գործուղման դեպքում պահպանվում է վերջինիս պաշտոնը, դրամական բավարարումն ու հարկային ծառայության ստաժը:~~

3. Հարկային ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը 65 տարին է: Հարկային ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալու դեպքում տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ հարկային ծառայողը կարող է մինչև մեկ տարի ժամկետով շարունակել զբաղեցնել իր պաշտոնը:

~~4. Հարկային ծառայողների համար կենսաթոշակային տարիքը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:~~

~~**Հոդված 17. Հարկային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովը**~~

~~1. Սույն օրենքով սահմանված կարգով մրցույթներ և ատեստավորումներ անցկացնելու նպատակով Կառավարության որոշմամբ ստեղծվում է մրցութային և ատեստավորման հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով): Հանձնաժողովի անդամներին ներկայացվող չափանիշները, Հանձնաժողովի կազմը, աշխատակարգը և անդամների թվաքանակը սահմանում է Կառավարությունը, իսկ Հանձնաժողովի անհատական կազմը՝ հարկային մարմնի ղեկավարը:~~

~~2. Հանձնաժողովի նախագահը և անդամներն իրենց աշխատանքը Հանձնաժողովում համատեղում են զբաղեցրած պաշտոնների հետ:~~

Հոդված 17. Հարկային ծառայության պաշտոնի նկարագրի՝ կրթության և աշխատանքային ստաժի չափանիշները

1. Հարկային ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացին պետք է ունենա բարձրագույն կրթություն:

2. Հարկային ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար անհրաժեշտ են աշխատանքային ստաժի և փորձի առնվազն հետևյալ չափանիշները.

1) Հարկային ծառայության բարձրագույն պաշտոնների համար՝ հանրային ծառայության առնվազն հինգ տարվա ստաժ կամ յոթ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ յոթ տարվա աշխատանքային ստաժ:

2) հարկային ծառայության գլխավոր պաշտոնների համար՝ հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի նկարագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ հինգ տարվա աշխատանքային ստաժ.

3) հարկային ծառայության առաջատար պաշտոնների համար՝ հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի նկարագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

4) հարկային ծառայության կրտսեր պաշտոնների համար աշխատանքային ստաժ չի պահանջվում:

~~**Հոդված 18. Հարկային ծառայության պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը**~~

~~1. Սույն օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ պարբերությամբ սահմանված կարգով, այդ թվում՝ հարկային ծառայության կադրերի ռեզերվից, մաքսային ծառայողներից, ինչպես նաև հարկային և մաքսային մարմիններում քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձանցից հարկային ծառայության պաշտոնների անվանացանկի Դ խմբին դասվող թափուր պաշտոնում նշանակում չկատարելու դեպքում Հանձնաժողովը կազմակերպում է բաց մրցույթ: Բաց մրցույթին կարող են մասնակցել հարկային ծառայողները և սույն օրենքի 12-13-րդ հոդվածների պահանջները բավարարող քաղաքացիները:~~

~~2. Հարկային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հարկային մարմինը հրապարակում է մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլի կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով:~~

~~3. Մրցույթն անցկացվում է նաև մրցույթին մեկ մասնակցի դիմելու դեպքում:~~

~~Հանձնաժողովը հարկային ծառայողին (քաղաքացուն) չի թույլատրում մասնակցել մրցույթին, եթե քաղաքացին չի բավարարում սույն օրենքի 12-13-րդ հոդվածներով սահմանված պահանջները, կամ ապագա աշխատանքը կապված է մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, նրանց զավակ, ամուսնու ծնող, եղբայր և քույր) հարկային ծառայողի նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ:~~

~~4. Մրցույթը բաղկացած է երկու մասից՝ թեստավորում և հարցազրույց:~~

~~Թեստերը կազմվում են հանձնաժողովի սահմանած կարգով համակարգչում գետեղված հարցաշարից և դրանից պատահական ընտրված հարցերից՝ մասնակիցների գիտելիքները հետևյալ բնագավառներում ստուգելու համար.~~

~~1) Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն.~~

~~2) հարկային ծառայության մասին օրենսդրություն.~~

~~3) Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք~~

~~4) հարկային մարմնի (կառուցվածքային ստորաբաժանման) իրավասություններին առնչվող իրավական ակտերի իմացություն.~~

~~5) հարկային ծառայության համապատասխան պաշտոնի նկարագրով նախատեսված պահանջների իմացություն:~~

~~Թեստերի հարցաշարը, ոչ ուշ, քան մրցույթ անցկացնելուց մեկ ամիս առաջ, պետք է հրապարակվի:~~

~~Թեստավորման առաջադրանքները բաղկացած են հարցերից և խնդիրներից: Յուրաքանչյուր հարց (խնդիր) պետք է ունենա երեք կամ չորս ենթադրյալ պատասխան: Յուրաքանչյուր հարց (խնդիր) պետք է ունենա մեկ պատասխան:~~

~~Թեստավորումն անցկացվում է մասնակիցների համար կոդերի կիրառմամբ՝ գաղտնիությունն ապահովելու նպատակով:~~

~~Մրցույթի երկրորդ՝ հարցազրույցի մասին մասնակցելու իրավունք են ձեռք բերում թեստավորման առաջադրանքների առնվազն 80 տոկոսին ճիշտ պատասխանած մասնակիցները:~~

~~Մասնակիցների հետ հարցազրույցն անցկացվում է հարկային ծառայության տվյալ պաշտոնի նկարագրով նախատեսված լիազորությունների վերաբերյալ նրանց գործնական կարողությունները և անհատական հատկանիշները գնահատելու նպատակով:~~

~~Հանձնաժողովը հարցազրույցի արդյունքում յուրաքանչյուր մասնակցի համար անցկացնում է փակ գաղտնի քվեարկություն: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ քվեարկում է կողմ կամ դեմ:~~

~~Մրցույթում հաղթող են ճանաչվում այն մասնակիցները, ովքեր փակ գաղտնի քվեարկության արդյունքում հավաքել են Հանձնաժողովի քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայները:~~

~~Մրցույթի պայմանները չբավարարած անձանց յոթնօրյա ժամկետում այդ մասին հայտնվում է գրավոր:~~

~~5. Եթե մրցույթի արդյունքում մասնակիցներից ոչ մեկը թեստավորման առաջադրանքների առնվազն 80 տոկոսին ճիշտ պատասխան չի տվել, կամ հարցազրույցի մասնակիցներից ոչ մեկը փակ գաղտնի քվեարկության արդյունքում չի հավաքել Հանձնաժողովի՝ քվեարկության մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայներ, ապա մրցույթի արդյունքում հաղթող չի ճանաչվում, և անցկացվում է կրկնակի մրցույթ:~~

~~Եթե մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ ներկայացված բոլոր դիմումներում առկա է սույն օրենքով սահմանված սահմանափակումներից որևէ մեկը, ապա մրցույթը համարվում է չկայացած, և անցկացվում է կրկնակի մրցույթ:~~

~~Սույն հոդվածով սահմանված կարգի խախտմամբ անցկացված մրցույթն անվավեր է ճանաչվում դատական կարգով:~~

~~Կրկնակի մրցույթ է անցկացվում նաև մրցույթն անվավեր ճանաչվելու դեպքում:~~

~~Կրկնակի մրցույթն անցկացվում է սույն հոդվածով սահմանված ընդհանուր կարգով:~~

~~Եթե կրկնակի մրցույթը համարվում է չկայացած (անվավեր), կամ կրկնակի մրցույթի արդյունքում հաղթող չի ճանաչվում, ապա հարկային ծառայության տվյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար նոր մրցույթը հայտարարվում է կրկնակի մրցույթ անցկացնելուց երկու ամիս հետո:~~

~~6. Սույն օրենքի հիման վրա մրցույթ անցկացնելու (մրցույթին մասնակցելու) կարգը սահմանում է Կառավարությունը:~~

Հոդված 18. Հարկային ծառայության պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը

1. Հարկային ծառայության պաշտոններում նշանակումները կատարվում են մրցույթի արդյունքներով: Հարկային ծառայության պաշտոններում մրցույթն անցկացվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով՝ հարկային մարմնի կողմից:

2. Քաղաքացին չի մասնակցում մրցույթին, եթե չի բավարարում սույն օրենքի 12-րդ հոդվածով և 16-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները, և (կամ) առկա է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը:

3. Հարկային մարմնի ղեկավարի և նրա տեղակալների վրա չեն տարածվում սույն օրենքով սահմանված մրցույթի, կատարողականի գնահատման և վերապատրաստման հետ կապված նորմերը:

~~**Հոդված 19. Հարկային ծառայության պաշտոնի նշանակումը**~~

~~1. Հարկային ծառայության պաշտոնների անվանացանկի Բ և Գ խմբերում թափուր պաշտոն առաջանալու դեպքում հարկային մարմնի ղեկավարը կարող է տասնհինգօրյա ժամկետում տվյալ կամ դրան հաջորդող խմբին դասվող հարկային ծառայության պաշտոն զբաղեցնող հարկային ծառայողներից կամ մաքսային ծառայության առաջատար կամ գլխավոր պաշտոն զբաղեցնող մաքսային ծառայողներից, հարկային կամ մաքսային մարմիններում քաղաքացիական, ինչպես նաև հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանցից, հարկային ծառայության կադրերի ռեզերվից կատարել նշանակում՝ առաջնայնությունը տալով այն ծառայողներին, որոնց վերաբերյալ Հանձնաժողովը վերջին ատեստավորման արդյունքում կայացրել է սույն օրենքի 20-րդ հոդվածի տասներորդ մասի 1-ին կետով նախատեսված եզրակացությունը, ինչպես նաև հարկային ծառայության ավելի երկար ստաժ ունեցող ծառայողներին:~~

~~Սույն մասի առաջին պարբերությամբ նախատեսված դրույթները չեն տարածվում հարկային ծառայության պաշտոնների անվանացանկի Դ խմբին դասվող, սույն օրենքին համապատասխան, տվյալ պաշտոնում նշանակումից հետո 1 տարին չլրացած հարկային ծառայողների վրա:~~

~~2. Սույն հոդվածի առաջին մասում նշված ժամկետներում հարկային ծառայության պաշտոնների անվանացանկի Բ և Գ խմբերին դասվող թափուր պաշտոնում նշանակում չկատարվելու դեպքում Հանձնաժողովը կազմակերպում է փակ մրցույթ՝ սույն օրենքի 18-րդ հոդվածի երրորդից վեցերորդ մասերով սահմանված կարգով:~~

~~Փակ մրցույթին կարող են մասնակցել հարկային ծառայողները, ինչպես նաև ֆինանսական, բանկային, մաքսային մարմիններում, ֆինանսավարկային կազմակերպություններում, պետական կառավարման (տեղական ինքնակառավարման) մարմինների ֆինանսական ծառայություններում, գիտական, բարձրագույն ուսումնական~~

~~հաստատություններում մասնագիտական աշխատանքի փորձ ունեցող և սույն օրենքի 12-13-րդ հոդվածների պայմանները բավարարող քաղաքացիները, ընդ որում, հարկային ծառայության պաշտոնների անվանացանկի Բ խմբի թափուր պաշտոնների համար կազմակերպվող փակ մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է 5 տարվա մասնագիտական աշխատանքի փորձ, իսկ հարկային ծառայության պաշտոնների անվանացանկի Գ խմբի թափուր պաշտոնների համար կազմակերպվող փակ մրցույթին մասնակցելու համար՝ 3 տարվա մասնագիտական աշխատանքի փորձ:~~

~~3. Սույն օրենքով նախատեսված մրցույթի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, Հանձնաժողովը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցների վերաբերյալ հարկային մարմնի ղեկավարին տալիս է եզրակացություն: Եզրակացությունն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, հարկային մարմնի ղեկավարը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցներից նշանակում է համապատասխան պաշտոնում՝ առաջնայնությունը տալով այն հարկային ծառայողներին (քաղաքացիներին), որոնց վերաբերյալ Հանձնաժողովը վերջին ատեստավորման արդյունքում կայացրել է սույն օրենքի 20-րդ հոդվածի տասներորդ մասի 1-ին կետով նախատեսված եզրակացությունը, ինչպես նաև հարկային ծառայության (մասնագիտական աշխատանքի) ավելի երկար ստաժ ունեցող ծառայողներին (քաղաքացիներին): Մրցույթով անցած անձը հարկային ծառայության պաշտոնում նշանակվում է անժամկետ, բացառությամբ մրցույթով առաջին անգամ հարկային ծառայության պաշտոնի նշանակվող անձի, որը նշանակվում է մինչև վեց ամիս փորձաշրջանով: Փորձաշրջանի անցկացման կարգը սահմանում է Կառավարությունը: Փորձաշրջանի անբավարար արդյունքի դեպքում փորձաշրջանն անցնող անձին այդ մասին հայտնվում է գրավոր՝ փորձաշրջանի ավարտից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում:~~

~~3[1]. Հարկային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի, պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու, մինչև հարկային ծառայության թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը, հարկային ծառայողի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում այդ պաշտոնին կարող են նշանակվել հարկային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ տվյալ պաշտոնի նկարագրին բավարարող անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ հաշվի առնելով սույն օրենքի 12-րդ, 13-րդ հոդվածների և 16-րդ հոդվածի չորրորդ մասի պահանջները՝ մեկ այլ անձի հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր:~~

~~4. *(մասն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-262-Ն)*~~

~~5. Հարկային ծառայության պաշտոնում նշանակվելու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է Կառավարությունը:~~

Հոդված 19. Հարկային ծառայության պաշտոնի նշանակումը

1. Մրցույթի արդյունքներով հարկային ծառայողներին պաշտոնի նշանակում և զբաղեցրած պաշտոնից ազատում է հարկային մարմնի ղեկավարը:

2. Հարկային ծառայության պաշտոն առաջին անգամ զբաղեցնող անձը պաշտոնի նշանակվում է մինչև 9 ամիս փորձաշրջանով: Փորձաշրջանի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

~~Հոդված 19[1]. Հարկային ծառայության կադրերի ռեզերվը~~

~~1. Հարկային ծառայության կադրերի ռեզերվում գտնվելու առավելագույն ժամկետը երեք ամիս է:~~

~~2. Հարկային ծառայության կադրերի ռեզերվում քաղաքացիները գտնվում են մինչև՝~~

~~- սույն օրենքի 16-րդ հոդվածի չորրորդ մասում նշված ժամկետի լրանալը,~~

~~- սույն օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ պարբերությամբ սահմանված կարգով հարկային ծառայության թափուր պաշտոնին նշանակումը,~~

~~- Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարումը,~~

~~- սույն օրենքի 13-րդ հոդվածի պահանջների խախտման հիմքերի առաջացումը,~~

~~- հարկային ծառայության կադրային ռեզերվից դուրս գալու մասին քաղաքացու դիմումի ներկայացումը:~~

Հոդված 19.1. Հարկային ծառայության կադրերի ռեզերվը, կատարողականի գնահատումը, վերապատրաստումը

1. Հարկային ծառայության կադրերի ռեզերվի, կատարողականի գնահատման և վերապատրաստման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

~~Հոդված 20. Հարկային ծառայողների ատեստավորումը~~

~~1. Յուրաքանչյուր տարի հարկային ծառայողների առնվազն մեկ երրորդը ենթակա է պարտադիր ատեստավորման:~~

~~2. Հարկային ծառայողի հերթական ատեստավորումն անցկացվում է երեք տարին մեկ անգամ:~~

~~Հարկային ծառայողի արտահերթ ատեստավորումն անցկացվում է հերթական ատեստավորումից առնվազն մեկ տարի հետո:~~

~~3. Հարկային ծառայողի արտահերթ ատեստավորումն անցկացվում է նրա անմիջական ղեկավարի պատճառաբանված միջնորդության հիման վրա՝ հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ կամ հարկային ծառայողի ցանկությամբ:~~

~~4. Ատեստավորումն անցկացվում է հարկային ծառայողի անմիջական մասնակցությամբ:~~

~~5. Ատեստավորման ենթակա չեն՝~~

~~1) մեկ տարուց պակաս հարկային ծառայության ստաժ ունեցող հարկային ծառայողները, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել.~~

~~2) հղի և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող հարկային ծառայողները, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել:~~

~~Հղիության և երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող հարկային ծառայողները ենթակա են ատեստավորման արձակուրդից վերադառնալուց հետո ոչ ուշ, քան մեկ տարի հետո, եթե վերջիններս ավելի վաղ ատեստավորվելու ցանկություն չեն հայտնել:~~

~~6. Ատեստավորման ենթակա, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակ հարկային ծառայողները ենթակա են ատեստավորման աշխատանքի ներկայանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում:~~

~~7. Ատեստավորման ենթակա հարկային ծառայողները, ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ, տեղեկացվում են ատեստավորման անցկացման մասին:~~

~~8. Ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ անմիջական ղեկավարը ներկայացնում է հարկային ծառայողի ծառայողական բնութագիրը:~~

~~Ծառայողական բնութագիրը պետք է բովանդակի տվյալներ հարկային ծառայողի մասին, նրա գործնական, մարդկային հատկանիշների և ծառայողական գործունեության արդյունքների հիմնավորված գնահատականը: Այդ գնահատականը պետք է հիմնվի նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակաշրջանում հարկային ծառայողի՝ իր կատարած աշխատանքների մասին վեց ամիսը մեկ անգամ անմիջական ղեկավարին ներկայացրած հաշվետվությունների վերաբերյալ վերջինիս եզրակացությունների հիման վրա:~~

~~Եթե ատեստավորումների միջև ընկած ժամանակաշրջանում հարկային ծառայողի անմիջական ղեկավարն ազատվել է հարկային ծառայության պաշտոնից՝ ատեստավորման արդյունքում գբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու կամ սույն օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ, 5-րդ, 7-րդ և 26[1]-րդ հոդվածի առաջին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերով, ապա վերջինիս տված բնութագիրն իրավական ուժ չունի: Եթե նման ղեկավարի տված եզրակացություններն ընդգրկում են ատեստավորումների միջև ընկած ժամանակաշրջանի երկու երրորդից ավելին, ապա հարկային ծառայողի վերաբերյալ ծառայողական բնութագիր չի ներկայացվում:~~

~~Հարկային ծառայողն ատեստավորում անցկացնելու օրվանից առնվազն մեկ շաբաթ առաջ պետք է ծանոթանա իր ծառայողական բնութագրին:~~

~~Սույն հոդվածով սահմանված կարգով ծառայողական բնութագիր չներկայացնելը չի կարող բացասաբար ազդել հարկային ծառայողի ատեստավորման արդյունքների վրա:~~

~~9. Ատեստավորումն անցկացվում է հետևյալ եղանակներով՝~~

~~1) փաստաթղթային.~~

~~2) թեստավորման և հարցազրույցի միջոցով, իսկ հարկային մարմնի օպերատիվ ստորաբաժանումներում ծառայություն անցնողների համար նաև ֆիզիկական պատրաստվածության, զենքի և հատուկ միջոցների տիրապետման գծով՝ ատեստավորման հանձնաժողովի սահմանած չափանիշներով և կարգով:~~

~~9.1. Այն հարկային ծառայողները, որոնք ծառայողական դրական բնութագրի և նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակահատվածում վերապատրաստման (ուսուցման) արդյունքների ընդհանուր գումարով հավաքում են 80 և ավելի միավոր, ենթակա են փաստաթղթային ատեստավորման: Միավորների հաշվարկն իրականացվում է հարկային մարմնի սահմանած կարգով:~~

~~9.2. Փաստաթղթային ատեստավորումն անցկացվում է ծառայողական բնութագրի հիման վրա՝ հարցազրույցի միջոցով: Հարցազրույցն անցկացվում է հարկային ծառայության տվյալ պաշտոնի նկարագրի դրույթների շրջանակներում՝ հարկային ծառայողների գործնական կարողություններն ստուգելու նպատակով: Հանձնաժողովը փաստաթղթային ատեստավորման արդյունքի հիման վրա կայացնում է հետևյալ եզրակացություններից մեկը և փաստաթղթային ատեստավորումն ավարտվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, ներկայացնում հարկային մարմնի ղեկավարին՝~~

~~1) շնորհել ավելի բարձր դասային աստիճան կամ հատուկ կոչում.~~

~~2) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին.~~

~~3) ենթակա է ատեստավորման թեստավորման և հարցազրույցի միջոցով:~~

~~9.3. Թեստավորման և հարցազրույցի միջոցով ատեստավորման ենթակա են այն հարկային ծառայողները, որոնք փաստաթղթային ատեստավորման ենթակա չեն, կամ որոնց վերաբերյալ Հանձնաժողովն ընդունել է սույն հոդվածի 9.2-րդ մասի 3-րդ կետում~~

~~նշված եզրակացությունը: Թեստերը հաստատում, հարցազրույցն անցկացնում և արդյունքները գնահատում է Հանձնաժողովը՝ սույն օրենքի 18-րդ հոդվածով սահմանված կարգով:~~

~~10. Հանձնաժողովը թեստավորման և հարցազրույցի (համապատասխան դեպքերում նաև ֆիզիկական պատրաստվածության, զենքի և հատուկ միջոցների տիրապետման ստուգման) արդյունքներով կայացնում է հետևյալ եզրակացություններից մեկը.~~

~~1) շնորհել ավելի բարձր դասային աստիճան կամ հատուկ կոչում.~~

~~2) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին.~~

~~3) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին՝ վերապատրաստում անցնելու և վերապատրաստման արդյունքում դրական գնահատական ստանալու պայմանով.~~

~~4) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին:~~

~~Ատեստավորումն ավարտվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, Հանձնաժողովը վերոնշյալ եզրակացություններից մեկը ներկայացնում է հարկային մարմնի ղեկավարին:~~

~~11. Հարկային ծառայողն իրավունք ունի ծանոթանալ ատեստավորման արդյունքներին և բողոքարկել դրանք մինչև հարկային ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին այդ արդյունքները ներկայացնելը:~~

~~12. Հարկային մարմնի ղեկավարը սույն հոդվածի տասներորդ մասով նախատեսված եզրակացություններն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.~~

~~1) հարկային ծառայողին ավելի բարձր դասային աստիճան կամ հատուկ կոչում շնորհելու կամ տվյալ կոչումը շնորհելու իրավասու անձին համապատասխան միջնորդություն ներկայացնելու մասին.~~

~~2) զբաղեցրած պաշտոնին հարկային ծառայողի համապատասխանության մասին.~~

~~3) հարկային ծառայողի վերապատրաստում անցկացնելու մասին.~~

~~4) հարկային ծառայողին զբաղեցրած պաշտոնից իջեցնելու մասին: Նման որոշում կայացվում է նաև, եթե հարկային ծառայողը վերապատրաստման արդյունքում ստանում է բացասական գնահատական.~~

~~5) հարկային ծառայությունից ազատելու մասին: Նման որոշում կարող է կայացվել նաև, եթե հարկային ծառայողը վերապատրաստման արդյունքում ստանում է բացասական գնահատական:~~

~~Հարկային մարմնի ղեկավարը հարկային ծառայողի ժամանակավոր անաշխատունակության և արձակուրդում գտնվելու, ինչպես նաև վերապատրաստման ժամանակ ատեստավորման արդյունքների հիման վրա համապատասխան որոշում է ընդունում նրանց աշխատանքի ներկայանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում:~~

~~13. Սույն հոդվածով նախատեսված բնութագիրը (ութերորդ մաս), եզրակացությունը (տասներորդ մաս) և որոշումը (տասներկուերորդ մաս) կցվում են հարկային ծառայողի անձնական գործին:~~

~~14. Սույն օրենքի հիման վրա հարկային ծառայողի ատեստավորում անցկացնելու կարգը սահմանում է հարկային մարմինը:~~

~~***(20-րդ հոդվածը խմբ., փոփ., լրաց. 05.11.03 ՀՕ-28-Ն, փոփ. 16.12.05 ՀՕ-24-Ն, խմբ., լրաց. 10.06.13 ՀՕ-68-Ն, լրաց. 23.03.18 ՀՕ-262-Ն)***~~

~~**Հոդված 21. Հարկային ծառայողների վերապատրաստումը**~~

~~1. Յուրաքանչյուր տարի հարկային ծառայողների առնվազն մեկ երրորդը ենթակա է պարտադիր վերապատրաստման:~~

~~2. Հարկային ծառայողի վերապատրաստումն իրականացվում է հարկային մարմնի սահմանած կարգով:~~

Հոդված 21[1]. Հարկային ծառայության հատուկ կոչումների և դասային աստիճանների դասակարգումը

1. Հարկային ծառայության բարձրագույն հատուկ կոչումներն ~~ու դասային աստիճաններն են~~՝

- Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության պետական խորհրդական,

- Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության առաջին դասի պետական խորհրդական, Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության գեներալ-մայոր:

2. Հարկային ծառայության գլխավոր հատուկ կոչումներն ~~ու դասային աստիճաններն են~~՝

- Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության առաջին դասի ավագ խորհրդական, Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության գնդապետ,

- Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության երկրորդ դասի ավագ խորհրդական, Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության փոխգնդապետ:

3. Հարկային ծառայության ավագ հատուկ կոչումներն ~~ու դասային աստիճաններն են~~՝

- Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության երրորդ դասի ավագ խորհրդական, Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության մայոր,

- Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության առաջին դասի խորհրդական, Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության կապիտան,

- Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության երկրորդ դասի խորհրդական, Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության ավագ լեյտենանտ,

- Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության երրորդ դասի խորհրդական, Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության լեյտենանտ:

4. Հարկային ծառայության բարձրագույն կոչումներն օրենքով սահմանված կարգով շնորհվում են նաև հարկային մարմնի ղեկավարին և նրա տեղակալներին:

~~**Հոդված 22. Հարկային ծառայության դասային աստիճանները**~~

~~1. Աշխատանքում ցուցաբերած առանձնահատուկ ծառայությունների, մարդկային և մասնագիտական բարձր հատկանիշների համար հարկային ծառայողներին շնորհվում են դասային աստիճաններ:~~

~~2. Հարկային ծառայողների համար սահմանվում են հետևյալ դասային աստիճանները.~~

~~- Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության պետական խորհրդական,~~

~~- Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության առաջին դասի պետական խորհրդական,~~

~~- Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության առաջին դասի ավագ խորհրդական,~~

~~- Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության երկրորդ դասի ավագ խորհրդական,~~

~~- Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության երրորդ դասի ավագ խորհրդական,~~

~~Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության առաջին դասի խորհրդական,~~

~~Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության երկրորդ դասի խորհրդական,~~

~~Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության երրորդ դասի խորհրդական:~~

~~3. Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության պետական խորհրդականի և Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության առաջին դասի պետական խորհրդականի դասային աստիճանը օրենքով սահմանված դեպքերում և կարգով շնորհում է Հանրապետության նախագահը:~~ ~~***(նախադասությունը հանվել է 05.11.03 ՀՕ-28-Ն)***~~

~~4. Սույն հոդվածի երրորդ մասում չնշված դասային աստիճանները շնորհում է հարկային մարմնի ղեկավարը՝ կոչման ներկայացվողի վերադասի ներկայացմամբ:~~

~~Դասային աստիճանի ներկայացնելիս նշվում են ծառայողի կենսագրական տվյալները, աշխատանքի գնահատականը, նրա գործնական և անձնական հատկանիշների բնութագիրը:~~

~~Սույն մասի առաջին պարբերությամբ սահմանված կարգով հարկային ծառայողին դասային աստիճանի ներկայացնելը չի կարող հետաձգվել հարկային ծառայության անցնելուց կամ հերթական (արտահերթ) դասային աստիճանն ստանալուց հետո՝~~

~~1) հարկային ծառայության գլխավոր դասային աստիճանների համար՝ ավելի քան 3 տարի.~~

~~2) հարկային ծառայության ավագ դասային աստիճանների համար՝ ավելի քան 2 տարի:~~

~~5. Հարկային ծառայողի վարքագծի կանոնները կոպիտ խախտելու կամ ծառայողական պարտականությունները պարբերաբար չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար հարկային ծառայողը կարող է զրկվել դասային աստիճանից, հարկային ծառայողի դասային աստիճանը կարող է իջեցվել, ինչպես նաև հարկային ծառայողին հերթական կոչման ներկայացումը կարող է պատճառաբանված մերժվել:~~

~~6. Դասային աստիճանի իջեցումը կամ դասային աստիճանից զրկումը կատարում է տվյալ դասային աստիճանը շնորհող պաշտոնատար անձը՝ ծառայողական քննություններ անցկացնող հանձնաժողովի ներկայացմամբ:~~

Հոդված 23. Հարկային ծառայության հատուկ կոչումները

1. Հարկային մարմնի օպերատիվ ստորաբաժանման ծառայողների համար սահմանվում են հետևյալ հատուկ կոչումները.

- Հարկային ծառայության գեներալ-մայոր,
- Հարկային ծառայության գնդապետ,
- Հարկային ծառայության փոխգնդապետ,
- Հարկային ծառայության մայոր,
- Հարկային ծառայության կապիտան,
- Հարկային ծառայության ավագ լեյտենանտ,
- Հարկային ծառայության լեյտենանտ:

2. Հարկային ծառայության գեներալ-մայորի հատուկ կոչումը շնորհում է վարչապետը:

3. Սույն հոդվածի երկրորդ մասում չնշված հատուկ կոչում կոչումները~~, աստիճանները~~ շնորհում է հարկային մարմնի ղեկավարը՝ հարկային մարմնի օպերատիվ ստորաբաժանման ղեկավարի ներկայացմամբ:

Հատուկ կոչման ներկայացնելիս նշվում են ծառայողի կենսագրական տվյալները, աշխատանքի գնահատականը, նրա գործնական և անձնական հատկանիշների բնութագիրը, աշխատանքի ստաժը, հատուկ կոչում ~~կամ դասային աստիճան~~ ունենալու դեպքում՝ կոչումները~~, աստիճանները~~ և դրանք հարկային ծառայողին շնորհվելու ամսաթիվը:

3.1. Առանձին դեպքերում հարկային ծառայության հատուկ կոչումներ կարող են շնորհվել նաև այլ հարկային ծառայողների:

4. Սահմանվում են հատուկ կոչում կրելու հետևյալ ժամկետները.

- Հարկային ծառայության լեյտենանտի համար՝ 1 տարի,
- Հարկային ծառայության ավագ լեյտենանտի, կապիտանի և մայորի համար՝ 3 տարի,
- Հարկային ծառայության փոխգնդապետի համար՝ 4 տարի:

5. Հարկային ծառայողի վարքագծի կանոնները կոպիտ խախտելու կամ ծառայողական պարտականությունները պարբերաբար չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար հարկային ծառայողին հերթական հատուկ կոչման ներկայացնելը կարող է պատճառաբանված մերժվել:

6. Հարկային ծառայողի հատուկ կոչումը կարող է իջեցվել սույն հոդվածի հինգերորդ մասում նախատեսված դեպքերում: Հարկային ծառայողները հատուկ կոչումից կարող են զրկվել աշխատանքից հեռացվելու և սույն հոդվածի հինգերորդ մասում նախատեսված դեպքերում:

Հատուկ կոչման իջեցումը կամ հատուկ կոչումից զրկումը կատարում է տվյալ հատուկ կոչումը շնորհող պաշտոնատար անձը՝ ծառայողական քննություններ անցկացնող հանձնաժողովի ներկայացմամբ:

Հոդված 23[1]. Հարկային ծառայության պաշտոններին համապատասխանող հարկային ծառայությանկոչումները ~~և աստիճանները~~

1. ~~Հարկային ծառայության բարձրագույն պաշտոններից~~ հարկային մարմնի ղեկավարի պաշտոնին համապատասխանող հարկային ծառայության կոչումների ~~և աստիճանների~~ վերին սահմանը համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության պետական խորհրդականի կոչումն ու աստիճանն են:

2. ~~Հարկային ծառայության բարձրագույն պաշտոններից~~ հարկային մարմնի ղեկավարի տեղակալների, հարկային մարմնի օպերատիվ ստորաբաժանման ղեկավարի պաշտոններին համապատասխանող հարկային ծառայության կոչումների ~~և աստիճանների~~ վերին սահմանը համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության առաջին դասի պետական խորհրդականի կամ հարկային ծառայության գեներալ-մայորի կոչումն ու աստիճանն են:

3. Հարկային ծառայության բարձրագույն պաշտոններից հարկային մարմնի **հարկային ծառայող** վարչության պետի, հարկային տեսչության պետի **, հարկային տեսչության պետի** պաշտոնին համապատասխանող հարկային ծառայության կոչումների և աստիճանների վերին սահմանը համապատասխանաբար Հայաստանի

Հանրապետության հարկային ծառայության առաջին դասի ավագ խորհրդականի կամ հարկային ծառայության գնդապետի կոչումն ~~ու աստիճանն~~ են:

4. Հարկային ծառայության գլխավոր պաշտոններին համապատասխանող հարկային ծառայության կոչումների ~~և աստիճանների~~ վերին սահմանը համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության երկրորդ դասի ավագ խորհրդականի կամ հարկային ծառայության փոխգնդապետի կոչումն ու աստիճանն են:

5. Հարկային ծառայության առաջատար պաշտոններից հարկային մարմնի գլխավոր օպերլիազորի, ~~հարկային մարմնի գլխավոր հարկային տեսուչի, հարկային մարմնի գլխավոր տեսուչ-իրավաբանի,~~ ավագ հետաքննիչի, ~~հարկային տեսչության բաժնի պետի~~ պաշտոնին համապատասխանող հարկային ծառայության կոչումների ~~և աստիճանների~~ վերին սահմանը համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության երրորդ դասի ավագ խորհրդականի կամ հարկային ծառայության մայորի կոչումն ու աստիճանն են:

6. Հարկային ծառայության առաջատար մյուս պաշտոններից ~~հարկային մարմնի ավագ հարկային տեսուչի,~~ հարկային մարմնի ավագ օպերլիազորի, ~~հարկային մարմնի առաջատար մասնագետի,~~ քննիչի, հետաքննիչի, ~~տարածքային հարկային տեսչության գլխավոր հարկային տեսուչի, տարածքային հարկային տեսչության գլխավոր մասնագետի,~~ տարածքային բաժնի գլխավոր օպերլիազորի պաշտոններին համապատասխանող հարկային ծառայության կոչումների ~~և աստիճանների~~ վերին սահմանը համապատասխանաբար հարկային ծառայության առաջին դասի խորհրդականի կամ հարկային ծառայության կապիտանի կոչումն ու աստիճանն են:

7. Հարկային ծառայության ~~հարկային մարմնի հարկային տեսուչի,~~ հարկային մարմնի օպերլիազորի, ~~հարկային մարմնի առաջին կարգի մասնագետի, տարածքային հարկային տեսչության ավագ հարկային տեսուչի, տարածքային հարկային տեսչության առաջատար մասնագետի,~~ տարածքային բաժնի ավագ օպերլիազորի պաշտոններին համապատասխանող հարկային ծառայության կոչումների ~~և աստիճանների~~ վերին սահմանը համապատասխանաբար հարկային ծառայության երկրորդ դասի խորհրդականի կամ հարկային ծառայության ավագ լեյտենանտի կոչումն ու աստիճանն են:

8. Հարկային ծառայության կրտսեր մյուս պաշտոններին համապատասխանող հարկային ծառայության կոչումների ~~և աստիճանների~~ վերին սահմանը հարկային ծառայության երրորդ դասի խորհրդականի կամ հարկային ծառայության լեյտենանտի կոչումն ու աստիճանն են:

~~**Հոդված 24. Հարկային ծառայողների վարձատրությունը և խրախուսումը**~~

~~1. Հարկային ծառայողների վարձատրության, այդ թվում՝ հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի հաշվարկների և չափերի, աշխատավարձի բնականոն աճի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:~~

~~2. *(մասն ուժը կորցրել է 12.12.13 ՀՕ-175-Ն)*~~

~~3. *(մասն ուժը կորցրել է 12.12.13 ՀՕ-175-Ն)*~~

~~4. *(մասն ուժը կորցրել է 12.12.13 ՀՕ-175-Ն)*~~

~~5. *(մասն ուժը կորցրել է 12.12.13 ՀՕ-175-Ն)*~~

~~6. Երկարամյա ծառայության, ծառայողական պարտականությունները և հատուկ առաջադրանքները գերազանց կատարելու, ինչպես նաև աշխատանքի նկատմամբ նվիրվածության համար հարկային ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ տեսակները.~~

~~1) կարգապահական տույժի հանում.~~

~~2) դրամական պարգևատրում.~~

~~3) հուշանվերով պարգևատրում.~~

~~4) *(կետն ուժը կորցրել է 12.12.13 ՀՕ-175-Ն)*~~

~~5) հարկային մարմնի ղեկավարի կողմից շնորհակալության հայտարարում.~~

~~6) հատուկ կոչման և (կամ) դասային աստիճանի արտահերթ շնորհում.~~

~~7) *(կետն ուժը կորցրել է 17.09.09 ՀՕ-172-Ն)*~~

~~8) *(մասն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-262-Ն)*~~

~~7. Սույն հոդվածի 6-րդ մասի 1-ին, 3-րդ, 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված խրախուսման միջոցները կիրառում է հարկային մարմնի ղեկավարը, իսկ 6-րդ մասի 2-րդ կետով նախատեսված խրախուսումն իրականացվում է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջներին համապատասխան:~~

Հոդված 24. Հարկային ծառայողների վարձատրությունը և խրախուսումը

1.Հարկային մարմնի ղեկավարի և նրա տեղակալների, հարկային ծառայողների վարձատրության, այդ թվում՝ հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի հաշվարկների և չափերի, աշխատավարձի բնականոն աճի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

2. Հարկային ծառայողների նկատմամաբ կիրառվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված խրախուսանքի տեսակները: Հարկային ծառայողների նկատմամաբ խրախուսանք կիրառում է հարկային մարմնի ղեկավարը:

3. Հարկային ծառայողների նկատմամբ կարող է կիրառվել նաև հատուկ և (կամ) դասային կոչման արտահերթ շնորհում խրախուսանքի տեսակը, որը հարկային ծառայողի նկատմամբ ծառայության ամբողջ ընթացքում կարող է կիրառվել միայն մեկ անգամ:

4. Երկարամյա ծառայության և (կամ) ծառայողական պարտականությունները և (կամ) հանձնարարականները (առաջադրանքները) բարեխղճորեն կատարելու համար հարկային ծառայողը պարգևատրվում է մեդալով կամ կրծքանշանով:

5. Մեդալի և կրծքանշանի տեսակները, ձևերը և շնորհման կարգը սահմանում է հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը:

~~**Հոդված 25. Հարկային ծառայողների նկատմամբ կիրառվող կարգապահական պատասխանատվությունը**~~

~~1. Անբարեխիղճ աշխատանքի, ծառայողական պարտականությունների նկատմամբ անպատասխանատու վերաբերմունքի և անփութության համար հարկային ծառայողների նկատմամբ կիրառվում են կարգապահական պատասխանատվության հետևյալ տեսակները.~~

~~1) բանավոր նկատողություն.~~

~~2) գրավոր նկատողություն.~~

~~3) կոչման իջեցում.~~

~~4) նյութական պատասխանատվության կիրառում.~~

~~5) զբաղեցրած պաշտոնից իջեցում.~~

~~6) հարկային ծառայությունից ազատում:~~

~~2. Սույն հոդվածի առաջին մասի 1-ին կետով նախատեսված կարգապահական պատասխանատվության ենթարկում է հարկային ծառայողի անմիջական ղեկավարը, իսկ հարկային ծառայության պաշտոնների անվանացանկի Ա, Բ խմբերի հարկային ծառայողների, ինչպես նաև Գ, Դ խմբերի հարկային մարմնի հարկային ծառայողների և հարկային տեսչության բաժնի պետի դեպքում նաև հարկային մարմնի ղեկավարը՝ առաջին մասի 2-6-րդ կետերով նախատեսված կարգապահական պատասխանատվության ենթարկում է հարկային մարմնի ղեկավարը՝ հարկային մարմնի ծառայողական քննություններ անցկացնող հանձնաժողովի եզրակացության հիման վրա:~~

~~3. Հարկային ծառայողի նկատմամբ կիրառված կարգապահական պատասխանատվության վերաբերյալ նշում է կատարվում հարկային ծառայողի անձնական գործում:~~

Հոդված 25. Հարկային ծառայողների նկատմամբ կիրառվող կարգապահական պատասխանատվությունը

1.«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով հարկային ծառայողների նկատմամաբ կիրառվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգապահական տույժերը:

2. Հարկային ծառայողի նկատմամաբ կարող է կիրառվել նաև կոչման իջեցում մեկ աստիճանով կարգապահական տույժը:

3.Հարկային ծառայողների նկատմամբ կարգապահական տույժ կիրառում է հարկային մարմնի ղեկավարը:

~~Հոդված 26. Հարկային ծառայողին հարկային ծառայությունից ազատելու հիմքերը~~

~~1. Հարկային ծառայողին հարկային ծառայությունից ազատելու հիմքերն են՝~~

~~1) հարկային ծառայողի անձնական դիմումը.~~

~~2) սույն օրենքի 13-րդ հոդվածի սահմանափակումները չպահպանելը.~~

~~3) հարկային ծառայողին պաշտոնի նշանակման՝ սույն օրենքով սահմանված կարգի խախտումը.~~

~~4) ատեստավորման արդյունքում սույն օրենքի 20-րդ հոդվածի տասներկուերորդ մասի 5-րդ կետով սահմանված դեպքը.~~

~~5) հարկային ծառայողի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելը.~~

~~6) սույն օրենքի 42-րդ հոդվածով նախատեսված դեպքերը.~~

~~7) սույն օրենքի 19-րդ հոդվածի երրորդ մասի համաձայն՝ փորձաշրջանը չանցնելը.~~

~~8) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան չորս ամիս աշխատանքի չներկայանալը (չհաշված հղիության և ծննդաբերության արձակուրդը).~~

~~9) սույն օրենքի 13-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով նախատեսված հիվանդություններից որևէ մեկով հիվանդանալը.~~

~~10) (կետն ուժը կորցրել է 29.11.11 ՀՕ-296-Ն)~~

~~11) հարկային ծառայողների հաստիքները կրճատվելը.~~

~~12) սույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը:~~

~~2. Հարկային ծառայությունից ազատվելու դեպքում հարկային ծառայողը հարկային մարմին է հանձնում իր ծառայողական վկայականը, իրեն ամրագրված զենքը, համազգեստը և պաշտոնական պարտականությունների կատարման հետ կապված այլ միջոցներ:~~

Հոդված 26. Հարկային ծառայողին պաշտոնից ազատելու և ծառայության դադարման հիմքերը

1. Հարկային ծառայողին պաշտոնից ազատելու հիմքերն են՝
   1) հարկային ծառայողի անձնական դիմումը.
   2) հաստիքների և (կամ) հարկային ծառայության պաշտոնի կրճատումը.
   3) հարկային մարմնի գործունեության դադարումը.
   4) Հանրայինպաշտոնում ընտրվելը կամ նշանակվելը:

2. Հարկային ծառայողին հարկային ծառայությունից ազատելու հիմքերն են՝
   1) հարկային ծառայողի անձնական դիմումը.
   2) «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելը՝ համապատասխան եզրակացության հիման վրա.
   3) հարկային ծառայողին պաշտոնի նշանակման՝ սույն օրենքով սահմանված կարգի խախտումը.
   4) հարկային ծառայողի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելը.
   5) սույն օրենքի 42-րդ հոդվածով նախատեսված դեպքը.
   6) օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելը.
   7) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան չորս ամիս անընդմեջ աշխատանքի չներկայանալը (չհաշված հղիության և ծննդաբերության արձակուրդը).
   8) Կառավարության հաստատած՝ հարկային ծառայության պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող հիվանդությունների ցանկում ընդգրկված որևէ հիվանդությամբ տառապելու դեպքում.
   9) «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված կարգապահական տույժը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելու դեպքում կամ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված կարգապահական տույժերը մեկ տարվա ընթացքում կիրառելու դեպքում կամ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված կարգապահական տույժը կիրառելու դեպքում:
   10) նրա նկատմամբ կայացված մեղադրական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք: Անձի կողմից տուգանքի վճարման ժամանակացույցով սահմանված պարտավորությունների կատարումը խախտելու դեպքում տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինվելու դեպքում ծառայությունը դադարեցվում է.

11) հարկային ծառայության պաշտոն զբաղեցնելու՝ սույն օրենքով սահմանված առավելագույն տարիքը լրանալու դեպքում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ իրավասու պաշտոնատար անձի որոշմամբ պաշտոնավարումը երկարաձգվել է մինչև մեկ տարի ժամկետով.
12) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում.
13) դատական կարգով հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկվելու դեպքում.
14) կադրերի ռեզերվից հանվելու դեպքում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հարկային ծառայողը զբաղեցնում է հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն.
15) երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում.

2. Երկու տարի անընդմեջ կատարողականի տարեկան գնահատման արդյունքները Կառավարության սահմանած տոկոսից (միավորից) ցածր լինելու դեպքում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն իրավունք ունի դադարեցնելու հարկային ծառայողի լիազորությունները:

3. Հարկային ծառայությունից ազատվելու դեպքում հարկային ծառայողը հարկային մարմին է հանձնում իր ծառայողական վկայականը, իրեն ամրագրված զենքը, համազգեստը և պաշտոնական պարտականությունների կատարման հետ կապված այլ միջոցներ:

~~Հոդված 26[1]. Հարկային ծառայողին զբաղեցրած պաշտոնից իջեցնելու հիմքերը~~

~~1. Հարկային ծառայողին զբաղեցրած պաշտոնից իջեցնելու հիմքերն են՝~~

~~1) ատեստավորման արդյունքում սույն օրենքի 20-րդ հոդվածի տասներկուերորդ մասի 4-րդ կետով սահմանված դեպքը.~~

~~2) սույն օրենքի 25-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով նախատեսված կարգապահական պատասխանատվության ենթարկվելը.~~

~~3) սույն օրենքի 25-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերից որևէ մեկը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելը:~~

~~2. Հարկային ծառայողին պաշտոնից ազատում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:~~

Հոդված 28. Նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդը
(վերնագիրը խմբ. 05.11.03 ՀՕ-28-Ն, լրաց. 12.12.13 ՀՕ-175-Ն, փոփ. 21.12.17 ՀՕ-276-Ն)

1. Հարկային վարչարարության իրականացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հարկային մարմնում գործում է հարկային մարմնի նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդ (այսուհետ՝ ֆոնդ):

2. Ֆոնդը կազմավորվում է՝

1) հարկային մարմնի կողմից ստուգման ակտով կամ ուսումնասիրության արձանագրությամբ կամ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում կազմված վարչական ակտով արձանագրված՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով նախատեսված պետական հարկերի և պետական վճարների մասով

վճարման ենթակա հարկի և (կամ) վճարի գումարների, ինչպես նաև հարկային պատասխանատվության տեսակներից տույժերի և տուգանքների (բացառությամբ սույն մասի 2-րդ կետում նշված դեպքի) գումարների (այսուհետ՝ լրացուցիչ գումարներ) տասը տոկոս մասհանումների հաշվին:

Ֆոնդի միջոցների հաշվառման համար հարկային մարմնում բացվում են հատուկ անձնական հաշվի քարտեր: Հատուկ անձնական հաշվի քարտի ձևը և վարման կարգը սահմանում է հարկային մարմինը:

Ֆոնդում պարտավորությունները և դրանց մարումները (վճարումը, հաշվանցումը), ինչպես նաև պարտավորություններից ավելի վճարված գումարները հաշվառվում են դրամով (առանց լումաների)՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով: ***(նախադասությունն հանվել է 21.12.17 ՀՕ-276-Ն)***

(պարբերությունն ուժը կորցրել է 21.12.17 ՀՕ-276-Ն)

(պարբերությունն ուժը կորցրել է 21.12.17 ՀՕ-276-Ն)

2) հարկային **մարմնի հանրային** ծառայողների նկատմամբ սույն օրենքի 42-րդ հոդվածի համաձայն կիրառվող նյութական պատասխանատվության արդյունքում գանձվող գումարների հաշվին.

3) Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնները չպահպանելու համար Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված տուգանքների, ինչպես նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով հարկային մարմնի քննությանը վերապահված իրավախախտումների գործերով նշանակված վարչական տուգանքների երեսուն տոկոս մասհանումների հաշվին.

4) օրենքով սահմանված կարգով հարկային ~~ծառայություն իրականացնող~~ **մարմնի** պաշտոնատար անձանց ներկայացված հետադարձ պահանջների բավարարումից ստացվող գումարների հաշվին:

3. Ֆոնդը ծախսվում է՝

1) համակարգչային, կապի և տրանսպորտային միջոցների ձեռքբերման ու շահագործման, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և նյութատեխնիկական ապահովվածության համար.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օպերատիվ-հետախուզական և հետաքննչական միջոցառումներ իրականացնելիս ծախսեր կատարելու համար.

3) լրացուցիչ գումարներ անմիջապես հայտնաբերողների, հարկային մարմնի աշխատանքներում ներդրում ունեցողների դրամական պարգևատրման և օգնության համար, ընդ որում, ֆոնդից պարգևատրմանն ուղղվող միջոցները չեն կարող գերազանցել հարկային մարմնի աշխատավարձի ֆոնդի 30 տոկոսը.

4) Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով հսկիչ գնումների իրականացման համար.

5) շենքերի, շինությունների, աշխատանքային պայմանների բարելավման համար.

6) հարկային մարմնի կամ հարկային ծառայողի **կամ քաղաքացիական ծառայողի** կողմից հարկային օրենսդրության դրույթների խախտման հետևանքով սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված գումարները հարկ վճարողին փոխհատուցելու համար.

7) հարկային մարմնի ~~կամ հարկային ծառայություն իրականացնող~~ պաշտոնատար անձանց վարչարարության հետևանքով պատճառված վնասը հատուցելու համար (բացառությամբ պետական բյուջե գանձված գումարները պետական բյուջեի մուտքերի համապատասխան հաշիվներից վերադարձնելու դեպքերի).

8) սույն հոդվածի 3.1-ին մասում նշված դեպքում Կառավարության պահուստային ֆոնդից կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ միջոցներից տրամադրված միջոցների վերականգնման համար.

9) Կառավարության կողմից սահմանված այլ ուղղությունների համար:

Ֆոնդի տնտեսված միջոցները Կառավարության որոշմամբ կարող են ուղղվել Կառավարության պահուստային ֆոնդ:

3.1. Ֆոնդի միջոցների անբավարարության դեպքում հարկային մարմնի կամ հարկային ծառայություն իրականացնող պաշտոնատար անձանց վարչարարության հետևանքով պատճառված վնասը հատուցվում է Կառավարության պահուստային ֆոնդի կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ միջոցների հաշվին: Այդ նպատակով Կառավարության պահուստային ֆոնդից կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ միջոցներից տրամադրված միջոցները վերականգնվում են ֆոնդի միջոցների հաշվին՝ Կառավարության սահմանած կարգով:

3.2. Ֆոնդի միջոցների օգտագործման կարգը և առաջնահերթությունները սահմանում է Կառավարությունը:

4. Լրացուցիչ գումարի օգտագործումն իրականացվում է միայն տվյալ գումարին համապատասխանող հայտնաբերված լրացուցիչ գումարը պետական բյուջե մուտքագրելուն (վերականգնելուն) համամասնորեն, իսկ հայտնաբերված լրացուցիչ գումարի վճարման պարտավորությունը հաստատող՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայության դեպքում՝ ամբողջությամբ: Սույն հոդվածի 1-ին մասում նշված նպատակներով ֆոնդի միջոցները մուտքագրվում և օգտագործվում են հարկային մարմնի ղեկավարի սահմանած կարգով:

5. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հարկային մարմնի պահպանման ծախսերում կարող է նախատեսվել նաև պարգևատրման ֆոնդ:

Հոդված 29.1. Հարկային ծառայողների ծառայողական վկայականը և անձնական գործը

1. Հարկային ծառայողներին տրվում է ծառայողական վկայական, որի ձևը և տրամադրման կարգը հաստատում է հարկային մարմնի ղեկավարը:

~~2. Հարկային ծառայողի ծառայության ընթացքն արտացոլվում է նրա անձնական գործում, որը վարում է հարկային մարմնի համապատասխան ստորաբաժանումը: Հարկային ծառայողների անձնական գործի վարման կարգը հաստատում է հարկային մարմնի ղեկավարը:~~

2. Հարկային ծառայողի ծառայության ընթացքն արտացոլվում է նրա անձնական գործում, որը վարվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով:

Հոդված 30. Հարկային մարմնի հանրային ծառայողների զենքը

1. Հարկային **մարմնի հանրային** ծառայողներին զենք տրամադրելու, զենքը պահելու, կրելու և օգտագործելու կարգը սահմանում է Կառավարությունը:

2. Հարկային մարմնին զենքով ապահովելու (տրամադրելու), զենքը պահպանելու կարգը, զենքի ու ռազմամթերքի տեսակների ցանկը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 31. Ֆիզիկական ուժի կիրառումը (գործադրումը)

Հարկային **մարմնի հանրային** ծառայողներն իրավախախտների նկատմամբ իրավունք ունեն կիրառել (գործադրել) ֆիզիկական հարկադրանք (ուժ)՝

1) իրենց և (կամ) այլ անձանց վրա հարձակումը կանխելու դեպքում.

2) հարկային մարմնին պատկանող կամ վերջիններիս հսկողության տակ գտնվող շինությունների, կառույցների և փոխադրամիջոցների վրա հարձակումը կանխելու դեպքում.

3) դիմադրություն ցույց տվող իրավախախտում կատարած անձին ձերբակալելու կամ ծառայողական շինություն հասցնելու դեպքում, եթե այդ դիմադրությունը կարող է վնաս պատճառել շրջապատին կամ իրենց:

Հոդված 32. Հատուկ միջոցների կիրառում

1. Հարկային **մարմնի հանրային** ծառայողները հատուկ միջոցները (ձեռնաշղթաներ, փականքները բացելու գործիքներ) կիրառում են՝

1) իրենց և (կամ) այլ անձանց վրա հարձակումը կանխելու համար.

2) հարկային մարմնին պատկանող կամ վերջիններիս հսկողության տակ գտնվող շինությունների, կառույցների և փոխադրամիջոցների վրա հարձակումը կանխելու համար.

3) դիմադրություն ցույց տվող իրավախախտում կատարող անձին ձերբակալելու կամ ծառայողական շինություն հասցնելու համար, եթե այդ դիմադրությունը կարող է վնաս պատճառել շրջապատին կամ իրենց:

Հղիության կամ հաշմանդամության ակնհայտ նշաններով անձանց և անչափահասների նկատմամբ հատուկ միջոցներ չեն կիրառվում, բացառությամբ նշված անձանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու, խմբակային կամ այլ հարձակումների, մարդկանց կյանքի և առողջության համար վտանգավոր գործողությունների դեպքերի:

2. Օպերատիվ-հետախուզական միջոցներ հարկային ծառայողները կիրառում են Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերում և կարգով:

Հոդված 33. Զենքի գործադրումը

1. Զենք կրելու իրավունք ունեցող հարկային **մարմնի հանրային** ծառայողն իրավունք ունի դա գործադրել՝

1) իր կամ այլ անձի վրա զինված հարձակումը կանխելու համար, եթե առկա է նրանց կյանքին կամ առողջությանն սպառնացող իրական վտանգ.

2) զենքի հափշտակման փորձը կանխելու համար:

2. Մինչ զենքի գործադրումը հարկային **մարմնի հանրային** ծառայողը պետք է կատարի նախազգուշական կրակոց, բացառությամբ սույն օրենքի 34-րդ հոդվածի երկրորդ մասով նախատեսված դեպքերի:

3. Արգելվում է զենքի գործադրումը հղիության կամ հաշմանդամության ակնհայտ նշաններ ունեցող անձանց և անչափահասների նկատմամբ, բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու և հարկային ծառայողի կյանքին և առողջությանն իրական վտանգ սպառնացող գործողություններ կատարելու դեպքերի:

Հոդված 34. Հարկային ծառայողների կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի օգտագործման պայմանները

1. Նախքան ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի օգտագործման իրավասություն ստանալը, այնուհետև պարբերաբար, հարկային **մարմնի հանրային** ծառայողները հարկային մարմնի սահմանած կարգով անցնում են հատուկ պատրաստություն և պիտանիության ստուգումներ: Նշված անձինք պարտավոր են ունենալ նաև տուժողին առաջին բուժօգնություն ցույց տալու հմտություն:

2. Հարկային **մարմնի հանրային** ծառայողը ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք կիրառելուց (գործադրելուց) առաջ նախազգուշացնում է այդ մտադրության մասին՝ տալով իր պահանջները կատարելու համար բավարար ժամանակ, բացառությամբ անակնկալ, զինված, ռազմական տեխնիկայի և փոխադրամիջոցների օգտագործմամբ հարձակումների և այլ իրադրությունների, երբ նման նախազգուշացումն ստեղծված իրավիճակում անտեղի է, անհնարին կամ կարող է առաջացնել վտանգ իր կամ այլ անձանց կյանքին և առողջությանը, հանգեցնել այլ ծանր հետևանքների:

3. Իրավախախտման վտանգավորության աստիճանից և դա կատարող անձի ինքնությունից, ինչպես նաև դիմադրության ուժից ելնելով՝ վտանգի վերացմանն ուղղված գործողությունների հետևանքով հնարավոր վնասները հարկային ծառայողի կողմից պետք է հասցվեն նվազագույնի:

4. Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառման (գործադրման) դեպքում հարկային **մարմնի հանրային** ծառայողն անմիջապես զեկուցում է վերադասության կարգով, իսկ զենքի կիրառման բոլոր դեպքերի մասին՝ նաև դատախազին:

Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառման (գործադրման) հետևանքով առաջացած մարմնական վնասվածքների, մահվան բոլոր դեպքերի մասին հարկային մարմնի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն անմիջապես տեղյակ է պահում առողջապահության և դատախազության համապատասխան մարմիններին:

5. Ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք օգտագործելու լիազորությունների սահմանազանցումն առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

Հոդված 37. Հարկային մարմնում հանրային ծառայողներին պատճառված վնասի հատուցման իրավունքը

1. Ծառայողական գործունեության կապակցությամբ հարկային **մարմնում հանրային** ծառայողին վնասվածքներ պատճառելու դեպքում, որոնք բացառում են ~~հարկային~~ **հանրային** ծառայություն անցնելու նրա հետագա հնարավորությունը, նրան ամեն ամիս վճարվում է փոխհատուցում՝ այդ կապակցությամբ նշանակված կենսաթոշակի և նրա ամսական միջին վաստակի տարբերության չափով:

2. Ծառայության ընթացքում կամ ազատվելուց հետո հարկային ծառայողի մահվան դեպքում, եթե դա առաջացել է ծառայողական գործունեության կապակցությամբ նրան վնասվածքներ պատճառելու հետևանքով, հարկային **մարմնում հանրային** ծառայողի խնամքի տակ գտնվող ընտանիքի անչափահաս և (կամ) անաշխատունակ անդամներին ամեն ամիս վճարվում է փոխհատուցում՝ մահացածի ամսական միջին վաստակից նրանց բաժին ընկնող մասի և կերակրողին կորցնելու համար նշանակված կենսաթոշակի չափերի միջև տարբերության չափով: Ամսական միջին վաստակից մահացածին բաժին ընկնող մասը որոշելու համար մահացածի ամսական միջին վաստակը բաժանվում է նրա խնամքի տակ գտնվող ընտանիքի անդամների, այդ թվում՝ աշխատունակների թվի վրա:

3. Ծառայողական գործունեության կապակցությամբ հարկային **մարմնում հանրային** ծառայողին կամ նրա ընտանիքի անդամներին պատկանող գույքին պատճառված վնասը ենթակա է հատուցման լրիվ ծավալով, ներառյալ՝ բաց թողնված օգուտը:

4. Սույն հոդվածում նախատեսված վնասները հատուցվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

Հոդված 38. Հարկային ծառայության տարբերանշանը և կնիքը

1. Հարկային ծառայությունն ունի տարբերանշան, որի նկարագիրը հաստատում է Կառավարությունը: Հարկային ծառայության տարբերանշանը հարկային ծառայողների համազգեստի պարտադիր ~~ատրիբուտ~~ **տարր** է:

2. Հարկային ~~մարմինն ունի~~ **մարմինը կարող է ունենալ** հարկային ծառայության տարբերանշանի պատկերով և իր անվամբ կնիք:

Հոդված 39. Հարկային ծառայողի պարտականությունները

~~Հարկային ծառայողի պարտականություններն են՝~~

1. «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով նախատեսված հիմնական պարտականություններից բացի, հարկային ծառայողի հիմնական պարտականություններն են՝

1) իր իրավասությունների սահմաններում հարկային մարմնի լիազորությունների իրականացումը.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում հարկ վճարողների հարկային պարտավորությունների հաշվարկումը, ինչպես նաև սահմանված կարգով հաշվարկված գումարների վճարման առաջադրումը.

~~3) ղեկավար մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տրված հանձնարարականների և ընդունած որոշումների կատարումը.~~

4) օրենքով սահմանված դեպքերում հետաքննության գործերի սկսումը.

5) պետական, ծառայողական և օրենքով պահպանվող այլ գաղտնիքն օրենքով սահմանված կարգով պահպանելը, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.

6) հարկ վճարողների, նրանց ներկայացուցիչների և հարկային հարաբերությունների այլ մասնակիցների նկատմամբ պատասխանատու և ուշադիր վերաբերմունքի ցուցաբերումը.

7) ***(կետն ուժը կորցրել է 21.12.17 ՀՕ-276-Ն)***

8) հարկային ծառայության գործառույթների և հարկային ծառայողի վարքագծի կանոնների պահանջներով խստագույնս առաջնորդվելը.

9) ***(կետն ուժը կորցրել է 29.11.11 ՀՕ-296-Ն)***

Հոդված 40. Հարկային ծառայողի իրավունքները

~~Հարկային ծառայողի իրավունքներն են՝~~

1.«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված հիմնական իրավունքներից բացի, հարկային ծառայողի հիմնական իրավունքներն են՝

~~1) գբաղեցրած պաշտոնում իր իրավունքները և պարտականությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.~~

~~2) իր անձնական գործի բոլոր նյութերին, իր գործունեության գնահատականներին և այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ ներկայացնելը.~~

~~3) ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.~~

4) սահմանված կարգով որոշումներ ընդունելը, հարցերի քննարկումներին մասնակցելը.

~~5) ծառայողական քննություն անցկացնել պահանջելը՝ իր կարծիքով իր նկատմամբ անհիմն մեղադրանքները և կասկածները վերացնելու նպատակով կամ իր նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու դեպքերում.~~

~~6) անվտանգ և անհրաժեշտ աշխատանքային պայմանների ապահովվածությունը.~~

~~7) սոցիալական և իրավական պաշտպանությունը.~~

~~8) սոցիալական ապահովությունը.~~

9) սահմանված կարգով հարկային ծառայության կոչման բարձրացումը.

~~10) աստեստավորման արդյունքները բողոքարկելը.~~

11) հարկային ծառայության կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.

~~12) օրենքով նախատեսված այլ իրավունքներ:~~

Հոդված 41. Հարկային ծառայողի պատասխանատվությունը

1. Սույն օրենքի խախտման համար հարկային ծառայողները պատասխանատվություն**, ներառյալ՝ նյութական պատասխանատվություն** են կրում օրենքով սահմանված կարգով:

~~2. Եթե սույն օրենքի, հարկային ծառայության գործառույթների կամ հարկային ծառայողի վարքագծի կանոնների խախտումները չեն հանգեցրել քրեական կամ վարչական պատասխանատվության կիրառման, ապա հարկային ծառայողները սույն օրենքի 42-րդ հոդվածով սահմանված կարգով կրում են նյութական պատասխանատվություն:~~

Հոդված 42. Հարկային ծառայողի նյութական պատասխանատվությունը

1. Սույն օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պարտականությունները չկատարելու (ոչ պատշաճ կատարելու) համար, հարկային ծառայության գործառույթներին համապատասխան, հարկային մարմնի պաշտոնատար անձը (անձինք)՝

1) ստանում է (են) ~~գրավոր~~ նախազգուշացում, եթե խախտման հետևանքով բյուջե վճարման ենթակա ավելի կամ թերի հաշվարկված (առաջադրված) հարկային պարտավորության գումարը պակաս է 100.000 դրամից.

2) վճարում է (են) տուգանք, եթե խախտման հետևանքով բյուջե վճարման ենթակա ավելի կամ թերի հաշվարկված (առաջադրված) հարկային պարտավորության գումարը կազմում է 100.000-ից մինչև 1.000.000 դրամ՝ ավելի կամ թերի հաշվարկված (առաջադրված) գումարի մինչև 5 տոկոսի չափով.

3) վճարում է (են) տուգանք, եթե խախտման հետևանքով բյուջե վճարման ենթակա ավելի կամ թերի հաշվարկված (առաջադրված) հարկային պարտավորության գումարը կազմում է 1.000.001-ից մինչև 5.000.000 դրամ՝ ավելի կամ թերի հաշվարկված (առաջադրված) գումարի մինչև 10 տոկոսի չափով.

4) եթե խախտման հետևանքով բյուջե վճարման ենթակա ավելի կամ թերի հաշվարկված (առաջադրված) հարկային պարտավորության գումարը կազմում է 5.000.000 դրամից ավելի, ապա վճարում է (են) տուգանք ավելի կամ թերի հաշվարկված

(առաջադրված) գումարի մինչև քսան տոկոսի չափով կամ~~ազատվում է (են) հարկային ծառայությունից՝ ծառայողական անհամապատասխանության հիմնավորմամբ~~ **կիրառվում է ծառայությունից ազատում կարգապահական տույժը:**

~~2. Սույն օրենքի 39-րդ հոդվածի 3-4-րդ կետերով սահմանված պարտականությունները չկատարելու համար, հարկային ծառայության գործառույթներին համապատասխան, հարկային մարմնի պաշտոնատար անձն առաջին անգամ ստանում է գրավոր նկատողություն:~~

~~Գրավոր նկատողությունն ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, համանման խախտում կատարելու դեպքում իջեցվում է հարկային մարմնի պաշտոնատար անձի հարկային ծառայության դասային աստիճանը կամ հատուկ կոչումը:~~

~~3. Սույն օրենքի 39-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պարտականությունը չկատարելու դեպքում, հարկային ծառայության գործառույթներին համապատասխան, առաջին անգամ իջեցվում է հարկային մարմնի պաշտոնատար անձի հարկային ծառայության դասային աստիճանը կամ հատուկ կոչումը, իսկ եթե խախտումը տեղի է ունեցել հարկային ծառայությունից ազատվելուց հետո, ապա նա զրկվում է հատուկ կոչումից և դասային աստիճանը կոչումից:~~

~~Մեկ տարվա ընթացքում համանման խախտում կատարելու դեպքում հարկային մարմնի պաշտոնատար անձն ազատվում է հարկային ծառայությունից՝ ծառայողական անհամապատասխանության հիմնավորմամբ:~~

~~4. Սույն օրենքի 39-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված պարտականությունը չկատարելու կամ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չկատարելու դեպքում, հարկային ծառայության գործառույթներին համապատասխան, հարկային մարմնի պաշտոնատար անձն առաջին անգամ ստանում է գրավոր նկատողություն:~~

~~Գրավոր նկատողությունն ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, համանման խախտում կատարելու դեպքում իջեցվում է հարկային մարմնի պաշտոնատար անձի հարկային ծառայության դասային աստիճանը կամ հատուկ կոչումը:~~

~~5. Սույն օրենքի 39-րդ հոդվածի 8-րդ կետով սահմանված պարտականությունները չկատարելու համար, եթե դա չի առաջացրել սույն հոդվածի առաջինից չորրորդ մասերով նախատեսված պատասխանատվություն, հարկային ծառայության գործառույթներին համապատասխան, հարկային մարմնի պաշտոնատար անձը՝~~

~~1) ստանում է գրավոր նկատողություն, եթե խախտումը տեղի է ունեցել պաշտոնատար անձի անզգուշությամբ.~~

~~2) իջեցվում է հարկային ծառայության դասային աստիճանը կամ հատուկ կոչումը, եթե խախտումը տեղի է ունեցել դիտավորյալ.~~

~~3) դասային աստիճանը կամ հատուկ կոչումն իջեցնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, համանման խախտում կատարելու դեպքում ազատվում է հարկային ծառայությունից՝ ծառայողական անհամապատասխանության հիմնավորմամբ:~~

~~6. Սույն հոդվածով նախատեսված նյութական պատասխանատվության միջոցները կիրառվում են կատարված խախտումների փաստերը ծառայողական քննությամբ հաստատվելուց հետո:~~

~~7. Սույն հոդվածով նախատեսված պատասխանատվության կոնկրետ տեսակը, նյութական պատասխանատվության չափերը, ինչպես նաև խախտում թույլ տված հարկային ծառայողին (ծառայողներին), որի (որոնց) նկատմամբ կիրառվում են նյութական պատասխանատվության միջոցները, ներկայացնում է հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովը:~~

~~Նյութական պատասխանատվությունը կիրառվում է հարկային մարմնի ղեկավարի հրամանով:~~

~~8. Նյութական պատասխանատվության կիրառման արդյունքում գանձված գումարները մուտքագրվում են հարկային մարմնի նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդ:~~

Հոդված 43. Ծառայողական քննության անցկացումը
(վերնագիրը խմբ. 05.11.03 ՀՕ-28-Ն)

1. Ծառայողական քննություն անցկացվում է հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ՝ **«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով և դեպքերում՝ Հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից, որի անհատական կազմը հաստատում է հարկային մարմնի ղեկավարը՝ հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետի կողմից հաստատված հանձնաժողովի անդամության թեկնածուների ցուցակից:**

~~2. Հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի անհատական կազմը հաստատում է հարկային մարմնի ղեկավարը՝ Կառավարության սահմանած կարգով առաջարկված թեկնածուներից:~~

~~3. Հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովը՝~~

~~1) հսկողություն է իրականացնում հարկային ծառայողների վարքագծի կանոնների նկատմամբ.~~

~~2) ծառայողական քննություն է անցկացնում հարկային մարմնի ղեկավարի սահմանած կարգով.~~

~~3) եզրակացություն է ներկայացնում հարկային մարմնի ղեկավարին՝ սույն օրենքի 11[1]-րդ հոդվածի 15-րդ կետով սահմանված կարգով հետագա ընթացքն ապահովելու նպատակով:~~

~~4. Հարկային ծառայողների ծառայողական քննություն իրականացնում է հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովը:~~

Հոդված 44. Հարկ վճարողին հասցված վնասի փոխհատուցումը

Հարկային մարմնի կամ հարկային **մարմնի հանրային** ծառայողի սույն օրենքի կամ Հայաստանի Հանրապետության հարկային հարաբերությունները կարգավորող այլ ակտերի դրույթների խախտումների հետևանքով հարկ վճարողին հասցրած վնասը հատուցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, բացառությամբ սույն օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետով նախատեսված դեպքերի:

Հարկային **մարմնի հանրային** ծառայողի գործողությունները կարող են բողոքարկվել հարկային մարմին կամ դատարան: Հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների գործողությունները կարող են բողոքարկվել հարկային մարմին կամ դատարան:

Հոդված 39. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի ապրիլի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2002 թվականի հուլիսի 3-ին

ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

~~**Հոդված 1.**~~ ~~**Օրենքի կարգավորման առարկան**~~

~~Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության, որպես պետական ծառայության հատուկ տեսակ, կազմակերպման և դրա իրականացման, մաքսային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց իրավական կարգավիճակի, մաքսային ծառայության առանձնահատկությունների, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերություններ:~~

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության՝ որպես պետական ծառայության առանձին տեսակի, առանձնահատկությունները:

~~**Հոդված 2. Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության մասին օրենսդրությունը**~~

~~Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության մասին օրենսդրությունը բաղկացած է սույն օրենքից, մաքսային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերից և մաքսային ծառայության հարցերը կարգավորող իրավական այլ ակտերից:~~

~~Մաքսային ծառայության պաշտոնատար անձանց՝ սույն օրենքով չկարգավորվող աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով և իրավական այլ ակտերով:~~

Հոդված 2. Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության մասին օրենսդրությունը

1. Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության մասին օրենսդրությունը բաղկացած է սույն օրենքից, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքից, «Հանրային ծառայության մասին» օրենքից, մաքսային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերից և մաքսային ծառայության հարցերը կարգավորող իրավական այլ ակտերից:

2. Մաքսային ծառայողների աշխատանքային հարաբերություններին վերաբերող հարցերը, որոնք կարգավորված չեն սույն օրենքով կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով և «Հանրային ծառայության մասին» օրենքով:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավական ակտերով այդ հարաբերությունները կարգավորված չլինելու դեպքում դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ:

~~**Հոդված 5. Սույն օրենքի գործողության ոլորտը**~~

~~1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է մաքսային մարմիններում որոշակի պաշտոններ զբաղեցնող այն անձանց (այսուհետ՝ մաքսային ծառայող) վրա, որոնց սույն օրենքով նախատեսված կարգով կարող են շնորհվել մաքսային ծառայության հատուկ կոչումներ, և որոնք լիազորված են իրականացնել մաքսային մարմինների գործառույթների հետ կապված մասնագիտական գործունեություն:~~

~~2. Մաքսային մարմիններում նախատեսվում են նաև քաղաքացիական ծառայության և մաքսային մարմինների գործունեության տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոններ:~~

~~Մաքսային մարմիններում քաղաքացիական ծառայողների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության մասին օրենքով և դրանից բխող իրավական ակտերով:~~

~~Մաքսային մարմինների գործունեության տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով:~~

Հոդված 5. Սույն օրենքի գործողության ոլորտը

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է մաքսային մարմիններում իրավապահ գործառույթներ իրականացնող ծառայողների, նախաբացթողումային հսկողություն, ներքին անվտանգության ապահովման գործառույթներ իրականացնող ծառայողների, ինչպես նաև մաքսատանը և մաքսակետում ծառայություն իրականացնող մաքսային ծառայողների վրա:

2. Մաքսային մարմնի ղեկավարի և նրա տեղակալների պաշտոնները պետական վարչական պաշտոններ են:

3. Մաքսային մարմիններում նախատեսվում են նաև մաքսային մարմինների գործունեության տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց հաստիքներ, որոնց աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են աշխատանքային օրենսգրքով:

~~**Հոդված 7. Մաքսային ծառայության պաշտոնները**~~

~~1. Մաքսային ծառայության պաշտոնները դասակարգվում են խմբերի՝ ելնելով այդ պաշտոններն զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման ու ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման պահանջի, ինչպես նաև գիտելիքների և հմտությունների անհրաժեշտ մակարդակից:~~

~~2. Մաքսային ծառայության պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.~~

~~1) մաքսային ծառայության բարձրագույն պաշտոններ՝~~

~~- կոմիտեի ղեկավար,~~

~~- կոմիտեի ղեկավարի տեղակալ,~~

~~- կոմիտեի վարչության պետ,~~

~~- կոմիտեի մաքսատան պետ.~~

~~2) մաքսային ծառայության գլխավոր պաշտոններ՝~~

~~- կոմիտեի վարչության պետի տեղակալ,~~

~~- կոմիտեի բաժնի պետ,~~

~~- կոմիտեի մաքսատան պետի տեղակալ,~~

~~- կոմիտեի մաքսային կետի պետ,~~

~~- կոմիտեի բաժնի պետի տեղակալ,~~

~~- կոմիտեի բաժանմունքի պետ,~~

~~- կոմիտեի բաժանմունքի պետի տեղակալ,~~

~~- կոմիտեի հերթափոխի պետ,~~

~~- կոմիտեի հերթափոխի պետի տեղակալ,~~

~~- կոմիտեի հատկապես կարևորագույն գործերով քննիչ,~~

~~- կոմիտեի գլխավոր մաքսային տեսուչ,~~

~~- կոմիտեի ավագ քննիչ,~~
~~- կոմիտեի մաքսային կետի պետի տեղակալ,~~
~~- կոմիտեի մաքսատան բաժնի պետ.~~
~~3) մաքսային ծառայության առաջատար պաշտոններ՝~~
~~- կոմիտեի ավագ մաքսային տեսուչ,~~
~~- կոմիտեի քննիչ,~~
~~- կոմիտեի մաքսատան բաժնի պետի տեղակալ,~~
~~- կոմիտեի մաքսատան բաժանմունքի պետ,~~
~~- կոմիտեի մաքսատան բաժանմունքի պետի տեղակալ,~~
~~- կոմիտեի մաքսատան հերթափոխի պետ,~~
~~- կոմիտեի մաքսատան հերթափոխի պետի տեղակալ,~~
~~- կոմիտեի մաքսային կետի հերթափոխի պետ,~~
~~- կոմիտեի մաքսային կետի հերթափոխի պետի տեղակալ,~~
~~- կոմիտեի մաքսային կետի բաժանմունքի պետ,~~
~~- կոմիտեի մաքսային կետի բաժանմունքի պետի տեղակալ,~~
~~- կոմիտեի մաքսատան կամ մաքսային կետի գլխավոր մաքսային տեսուչ.~~
~~4) մաքսային ծառայության կրտսեր պաշտոններ՝~~
~~- կոմիտեի տեսուչ,~~
~~- կոմիտեի մաքսատան կամ մաքսային կետի ավագ մաքսային տեսուչ,~~
~~- կոմիտեի մաքսատան կամ մաքսային կետի մաքսային տեսուչ:~~
~~3. Մաքսային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատում է Կառավարությունը:~~

Հոդված 7. Մաքսային ծառայության պաշտոնները

1. Մաքսային ծառայության պաշտոնները դասակարգվում են խմբերի՝ ելնելով այդ պաշտոնները զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, գործունեության ազդեցության, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց լուծման, ինչպես նաև մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների տեսանկյունից ներկայացվող պահանջներից:

2. Մաքսային ծառայության պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.

1) մաքսային ծառայության բարձրագույն պաշտոններ,

2) մաքսային ծառայության գլխավոր պաշտոններ,

3) մաքսային ծառայության առաջատար պաշտոններ,

4) մաքսային ծառայության կրտսեր պաշտոններ:

3. Մաքսային ծառայության պաշտոնների խմբերում պաշտոնների դասակարգումն իրականացվում է մաքսային ծառայության պաշտոնների անվանացանկով, որը հաստատվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով:

4. Մաքսային մարմնի ղեկավարի և նրա տեղակալների պաշտոնները պետական վարչական պաշտոններ են:

5. Մաքսային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոններ զբաղեցնող անձինք համարվում են մաքսային ծառայողներ:

Հոդված 8. Մաքսային ծառայության պաշտոնի նշանակման պայմանները

1. ~~Մաքսային ծառայության պաշտոնի նշանակվելու իրավունք ունի միայն բարձրագույն կրթություն ունեցող, հայերենին տիրապետող և կոմիտեի հաստատած համապատասխան պաշտոնի նկարագրի պահանջները բավարարող Հայաստանի Հանրապետության քաղաքացին:~~ **Մաքսային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն համապատասխան պաշտոնի նկարագրի պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Մաքսային ծառայության պաշտոնի անձնագիրը (աշխատատեղի նկարագիր) մաքսայի ն ծառայության իրավասությունը սահմանող իրավական ակտերից և խնդիրներից բխող մաքսային ծառայողի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրող և այդ գործառույթները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ ու կոմպետենցիաներ նախատեսող, կառավարման համակարգում տեղակայվածությունը նախատեսող և սույն օրենքով սահմանված կարգով՝ կոմիտեի ղեկավարի հաստատած փաստաթուղթն է:»:**

~~2. Մաքսային ծառայությունն իրականացվում է մաքսային ծառայության անցնելու մասին կնքված պայմանագրին համապատասխան, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:~~

3. Մաքսային ծառայության **բարձրագույն,** գլխավոր, առաջատար և կրտսեր թափուր պաշտոններ առաջանալու դեպքում այդ պաշտոններն զբաղեցվում են մրցույթով, բացառությամբ սույն ~~օրենքով~~ **հոդվածի 4-րդ մասով** նախատեսված դեպքերի:

4. Կառավարությունը սահմանում է մաքսային մարմինների կողմից իրականացվող՝ ~~օպերատիվ հետախուզական գործունեության հետ կապված~~ **ներքին անվտանգության ապահովման գործառույթ իրականացնող** այն պաշտոնների անվանացանկը, որոնցում նշանակումները կատարվում են առանց մրցույթի՝ կոմիտեի ղեկավարի կողմից:

~~**Հոդված 9. Մաքսային ծառայության պաշտոնի նշանակվելու իրավունքի սահմանափակումները**~~

~~Մաքսային ծառայության պաշտոնի չեն կարող նշանակվել այն անձինք, ովքեր՝~~

~~1) դատական կարգով ճանաչվել են անգործունակ կամ սահմանափակ գործունակ.~~

~~2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով զրկված են որոշակի պաշտոն զբաղեցնելու իրավունքից.~~

~~3) տառապում են այնպիսի հիվանդությամբ, որը մաքսային ծառայության պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանը և լիազորությունների իրականացմանը: Այդ հիվանդությունների ցանկը հաստատում է Կառավարությունը.~~

~~4) դատապարտվել են հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.~~

~~5) խուսափել են ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից:~~

~~***(9-րդ հոդվածը լրաց. 24.12.04 ՀՕ-71-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-263-Ն)***~~

~~**Հոդված 10. Մաքսային ծառայության անցնելու փորձաշրջանը**~~

1. Առաջին անգամ մաքսային ծառայության պաշտոն զբաղեցնող անձի նշանակումը, բացառությամբ մաքսային ծառայության բարձրագույն պաշտոնների նշանակումների, իրականացվում է մինչև վեց ամիս փորձաշրջանով՝ կախված նրա մասնագիտական պատրաստվածության աստիճանից և պաշտոնից: Այդ ժամանակահատվածում համապատասխան պաշտոնեական պարտականություններ իրականացնող անձին հատուկ կոչում չի շնորհվում:

2. Փորձաշրջանի տևողությունը նշվում է ծառայության ընդունման մասին կոմիտեի ղեկավարի հրամանում:

3. Փորձաշրջան անցնելու կարգը և պայմանները սահմանում է Կառավարությունը:

(10-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-263-Ն)

Հոդված 11. Մաքսային ծառայության անցնելու մասին պայմանագիրը

1. Մաքսային ծառայության անցնելու մասին պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) կնքվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու և կոմիտեի միջև, գրավոր ձևով, մինչև սույն օրենքով սահմանված մաքսային ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքի լրանալը:

2. Պայմանագրի կնքման կարգը և օրինակելի ձևը հաստատում է Կառավարությունը՝ կոմիտեի ներկայացմամբ:

3. Պայմանագրում սահմանվում են կողմերի իրավունքները, պարտականությունները և ստանձնած պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվությունը:

4. Մաքսային ծառայողներին տրվում են ծառայողական վկայականներ, որոնց ձևը հաստատում է նրանց պաշտոնի նշանակող անձը:

5. Սույն օրենքի 14-րդ հոդվածի չորրորդ և հինգերորդ մասերով նախատեսված նշանակումների դեպքում սույն հոդվածով նախատեսված պայմանագիր չի կնքվում:

Հոդված 12. Մաքսային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովը

1. Սույն օրենքով սահմանված կարգով մրցույթներ և ատեստավորումներ անցկացնելու նպատակով Կառավարության որոշմամբ ստեղծվում է մրցութային և ատեստավորման հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով): Հանձնաժողովի անդամներին ներկայացվող չափանիշները, Հանձնաժողովի կազմը, աշխատակարգը և անդամների թվաքանակը սահմանում է Կառավարությունը, իսկ Հանձնաժողովի անհատական կազմը՝ կոմիտեի ղեկավարը:

2. Հանձնաժողովի նախագահը և անդամներն իրենց աշխատանքը Հանձնաժողովում համատեղում են զբաղեցրած պաշտոնների հետ:

Հոդված 12. Մաքսային ծառայության պաշտոնի նկարագրի՝ կրթության և աշխատանքային ստաժի չափանիշները

1. Մաքսային ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացին պետք է ունենա բարձրագույն կրթություն:

2. Մաքսային ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար անհրաժեշտ են աշխատանքային ստաժի և փորձի առնվազն հետևյալ չափանիշները.

1) մաքսային ծառայության բարձրագույն պաշտոնների համար՝ հանրային ծառայության առնվազն հինգ տարվա ստաժ կամ յոթ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ յոթ տարվա աշխատանքային ստաժ:

2) մաքսային ծառայության գլխավոր պաշտոնների համար՝ հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի նկարագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ հինգ տարվա աշխատանքային ստաժ.

3) մաքսային ծառայության առաջատար պաշտոնների համար՝ հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի նկարագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

4) մաքսային ծառայության կրտսեր պաշտոնների համար աշխատանքային ստաժ չի պահանջվում:

~~Հոդված 13. Մաքսային ծառայության պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը~~

~~1. Մաքսային ծառայության կրտսեր պաշտոններում թափուր պաշտոն առաջանալու դեպքում կոմիտեի ղեկավարը կարող է տասնհինգօրյա ժամկետում մաքսային ծառայության տվյալ կամ նախորդող խմբին դասվող մաքսային ծառայության պաշտոն զբաղեցնող մաքսային ծառայողներից կամ հարկային մարմիններում հարկային ծառայության պաշտոն զբաղեցնող հարկային ծառայողներից, ինչպես նաև մաքսային կամ հարկային մարմիններում քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանցից, որոնք համապատասխանում են սույն օրենքի 8-րդ և 9-րդ հոդվածների պահանջներին, կատարել նշանակում:~~

~~Մաքսային ծառայության պաշտոնների տվյալ կամ նախորդող խմբին դասվող մաքսային ծառայությանպաշտոն զբաղեցնող մաքսային ծառայողներից կամ հարկային մարմիններում հարկային ծառայության պաշտոն զբաղեցնող հարկային ծառայողներից, ինչպես նաև մաքսային կամ հարկային մարմիններում քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանցից նշանակում չկատարվելու դեպքում կոմիտեի ղեկավարը կարող է հնգօրյա ժամկետում նշանակում կատարել մաքսային ծառայության կադրերի ռեզերվից՝ առաջնությունը տալով մաքսային ծառայության ավելի երկարատև ստաժ ունեցող մաքսային ծառայողներին:~~

~~1[1]. Սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետներում մաքսային ծառայության կրտսեր պաշտոնում նշանակում չկատարվելու դեպքում Հանձնաժողովը կազմակերպում է բաց մրցույթ: Բաց մրցույթին կարող են մասնակցել մաքսային ծառայողները և սույն օրենքի 8-րդ և 9-րդ հոդվածների պահանջները բավարարող քաղաքացիները:~~

~~2. Մաքսային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասինհայտարարությունը կոմիտեն հրապարակում է մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ, առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլի կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով:~~

~~3. Մրցույթն անցկացվում է նաև մրցույթին մասնակցելու համար մեկ մասնակցի դիմելու դեպքում:~~

~~Հանձնաժողովը մաքսային ծառայողին (քաղաքացուն) չի թույլատրում մասնակցել մրցույթին, եթե քաղաքացին չի բավարարում սույն օրենքի 8-9-րդ հոդվածով սահմանված պահանջները, կամ ապագա աշխատանքը կապված է մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) մաքսային ծառայողի նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ:~~

~~4. Մրցույթը բաղկացած է երկու մասից՝ թեստավորում և հարցազրույց:~~

~~Թեստերը կազմվում են հանձնաժողովի սահմանած կարգով՝ համակարգչում գետեղված հարցաշարից և դրանցից պատահական ընտրված հարցերից՝ մասնակիցների գիտելիքները հետևյալ բնագավառներում ստուգելու համար.~~

~~1) Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն.~~

~~2) մաքսային ծառայության մասին օրենսդրություն.~~

~~3) մաքսային օրենսդրության ընդհանուր հարցեր.~~

~~4) կոմիտեի (կառուցվածքային ստորաբաժանման) իրավասություններին առնչվող իրավական ակտերի իմացություն.~~

~~5) մաքսային ծառայության համապատասխան պաշտոնի նկարագրով նախատեսված պահանջների իմացություն:~~

~~Թեստերի հարցաշարը, ոչ ուշ, քան մրցույթ անցկացնելուց մեկ ամիս առաջ, պետք է հրապարակվի:~~

~~Թեստավորման առաջադրանքները բաղկացած են հարցերից և խնդիրներից: Յուրաքանչյուր հարց (խնդիր) պետք է ունենա երեք կամ չորս ենթադրյալ պատասխան: Յուրաքանչյուր հարց (խնդիր) պետք է ունենա մեկ միանշանակ պատասխան:~~

~~Թեստավորումն անցկացվում է մասնակիցների համար ծածկագրերի կիրառմամբ՝ գաղտնիությունն ապահովելու նպատակով:~~

~~Մրցույթի երկրորդ՝ հարցազրույցի փուլին մասնակցելու իրավունք են ձեռք բերում թեստավորման առաջադրանքների առնվազն 90 տոկոսին ճիշտ պատասխանած մասնակիցները:~~

~~Մասնակիցների հետ հարցազրույցն անցկացվում է մաքսային ծառայության տվյալ պաշտոնի նկարագրով նախատեսված լիազորությունների վերաբերյալ նրանց գործնական կարողությունները և անհատական հատկանիշները գնահատելու նպատակով:~~

~~Հանձնաժողովը հարցազրույցի արդյունքներում յուրաքանչյուր մասնակցի համար անցկացնում է փակ գաղտնի քվեարկություն: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ քվեարկում է կողմ կամ դեմ:~~

~~Մրցույթում հաղթող են ճանաչվում այն մասնակիցները, ովքեր փակ գաղտնի քվեարկության արդյունքում հավաքել են մրցութային հանձնաժողովի քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայները:~~

~~Մրցույթի պայմանները չբավարարած անձանց, յոթնօրյա ժամկետում, այդ մասին հայտնվում է գրավոր:~~

~~5. Եթե մրցույթի արդյունքում մասնակիցներից ոչ մեկը թեստավորման առաջադրանքների առնվազն 90 տոկոսին ճիշտ պատասխան չի տվել, կամ հարցազրույցի մասնակիցներից ոչ մեկը փակ գաղտնի քվեարկության արդյունքում չի հավաքել մրցութային հանձնաժողովի քվեարկության մասնակցած անդամների կեսից~~

~~ավելի կողմ ձայներ, ապա մրցույթի արդյունքում հաղթող չի ճանաչվում, և անցկացվում է կրկնակի մրցույթ։~~

~~Եթե մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ ներկայացված բոլոր դիմումներում առկա է սույն օրենքով սահմանված սահմանափակումներից որևէ մեկը, ապա մրցույթը համարվում է չկայացած, և անցկացվում է կրկնակի մրցույթ։~~

~~Սույն հոդվածով սահմանված կարգի խախտմամբ անցկացված մրցույթն անվավեր է ճանաչվում դատական կարգով՝ շահագրգիռ անձանց դիմումի հիման վրա։~~

~~Կրկնակի մրցույթ է անցկացվում նաև մրցույթն անվավեր ճանաչվելու դեպքում։~~

~~Կրկնակի մրցույթն անցկացվում է սույն հոդվածով սահմանված ընդհանուր կարգով։~~

~~Եթե կրկնակի մրցույթը համարվում է չկայացած (անվավեր), կամ կրկնակի մրցույթի արդյունքում հաղթող չի ճանաչվում, ապա մաքսային ծառայության տվյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար նոր մրցույթը հայտարարվում է կրկնակի մրցույթ անցկացնելուց երկու ամիս հետո։~~

~~6. Սույն օրենքի հիման վրա մրցույթ անցկացնելու (մրցույթին մասնակցելու) կարգը սահմանում է Կառավարությունը։~~

~~***(13-րդ հոդվածը խմբ., լրաց. 24.12.04 ՀՕ-71-Ն, փոփ. 03.10.06 ՀՕ-167-Ն, լրաց., փոփ. 23.10.08 ՀՕ-175-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-263-Ն)***~~

~~-~~

~~Հոդված 14. Մաքսային ծառայության պաշտոնի նշանակումը~~

~~-~~

~~1. Մաքսային ծառայության գլխավոր և առաջատար պաշտոններում թափուր պաշտոն առաջանալու դեպքում կոմիտեի ղեկավարը կարող է տասնհինգօրյա ժամկետում մաքսային ծառայության պաշտոնների տվյալ կամ դրան հաջորդող կամ նախորդող խմբերին դասվող մաքսային ծառայության պաշտոն զբաղեցնող մաքսային ծառայողներից կամ հարկային մարմիններում հարկային ծառայության առաջատար և գլխավոր պաշտոններ զբաղեցնող հարկային ծառայողներից, ինչպես նաև մաքսային կամ հարկային մարմիններում քաղաքացիական ծառայության առաջատար, գլխավոր կամ հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանցից, որոնք բավարարում են սույն օրենքի 8-րդ և 9-րդ հոդվածների պահանջները, կատարել նշանակում՝ առաջնայնությունը տալով այն ծառայողներին, որոնց վերաբերյալ Հանձնաժողովը վերջին ատեստավորման արդյունքում կայացրել է սույն օրենքի 15-րդ հոդվածի տասներորդ մասի 1-ին կետով նախատեսված եզրակացությունը, ինչպես նաև մաքսային ծառայության ավելի երկար ստաժ ունեցող ծառայողներին։~~

~~Մաքսային ծառայության պաշտոնների տվյալ կամ դրան հաջորդող կամ նախորդող խմբին դասվող մաքսային ծառայության պաշտոն զբաղեցնող մաքսային ծառայողներից կամ հարկային մարմիններում հարկային ծառայության առաջատար և գլխավոր պաշտոններ զբաղեցնող հարկային ծառայողներից, ինչպես նաև մաքսային կամ հարկային մարմիններում քաղաքացիական ծառայության առաջատար, գլխավոր կամ հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանցից նշանակում չկատարվելու դեպքում կոմիտեի ղեկավարը կարող է հնգօրյա ժամկետում նշանակում կատարել մաքսային ծառայության կադրերի ռեզերվից՝ առաջնությունը տալով մաքսային ծառայության ավելի երկարատև ստաժ ունեցող մաքսային ծառայողներին։~~

~~2. Սույն հոդվածի առաջին մասում նշված ժամկետներում մաքսային ծառայության գլխավոր և առաջատար թափուր պաշտոնում նշանակում~~

~~չկատարվելու դեպքում Հանձնաժողովը կազմակերպում է փակ մրցույթ՝ սույն օրենքի 13-րդ հոդվածի երրորդից վեցերորդ մասերով սահմանված կարգով:~~

~~Փակ մրցույթին կարող են մասնակցել մաքսային ծառայողները, ինչպես նաև մաքսային, հարկային մարմիններում, ֆինանսավարկային կազմակերպություններում, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններում, դատաիրավական մարմիններում, գիտական, բարձրագույն ուսումնական հաստատություններում մասնագիտական աշխատանքի փորձ ունեցող և սույն օրենքի 8-րդ և 9-րդ հոդվածների պահանջները բավարարող քաղաքացիները, ընդ որում՝ առաջատար պաշտոններում թափուր պաշտոն առաջանալու դեպքում անցկացվող մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է 3 տարվա մասնագիտական աշխատանքի փորձ, իսկ գլխավոր պաշտոններում թափուր պաշտոն առաջանալու դեպքում անցկացվող մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է 5 տարվա մասնագիտական աշխատանքի փորձ:~~

~~3. Սույն օրենքով նախատեսված մրցույթի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, Հանձնաժողովը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցների վերաբերյալ կոմիտեի ղեկավարին տալիս է եզրակացություն: Եզրակացությունն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կոմիտեի ղեկավարը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցներից մեկին նշանակում է համապատասխան պաշտոնում՝ առաջնայնությունը տալով այն մաքսային ծառայողներին (քաղաքացիներին), որոնց վերաբերյալ Հանձնաժողովը վերջին ատեստավորման արդյունքում կայացրել է սույն օրենքի 15-րդ հոդվածի տասներորդ մասի 1-ին կետով նախատեսված եզրակացությունը, ինչպես նաև մաքսային ծառայության (մասնագիտական աշխատանքի) ավելի երկար ստաժ ունեցող ծառայողներին (քաղաքացիներին): Մրցույթով անցած անձը մաքսային ծառայության պաշտոնում նշանակվում է մինչև սույն օրենքով սահմանված մաքսային ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքի լրանալը, բացառությամբ բաց մրցույթով առաջին անգամ մաքսային ծառայության պաշտոնի նշանակվող անձի, որը նշանակվում է մինչև վեց ամիս փորձաշրջանով: Փորձաշրջանի անցկացման կարգը սահմանում է Կառավարությունը: Փորձաշրջանի անբավարար արդյունքի դեպքում փորձաշրջանն անցնող անձին այդ մասինհայտնվում է գրավոր:~~

~~3.1. Մաքսային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու դեպքում (հղիության և ծննդաբերության արձակուրդ, պարտադիր զինվորական ծառայության զորակոչում), ինչպես նաև մաքսային ծառայողի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության և օրենքով նախատեսված այլ դեպքերում այդ պաշտոնը կարող են զբաղեցնել մաքսային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող և տվյալ պաշտոնի նկարագրին բավարարող անձինք, որոնց հետ կնքվում է ժամկետային աշխատանքային պայմանագիր, իսկ դրա անհնարինության դեպքում հաշվի առնելով սույն օրենքի 8-րդ, 9-րդ հոդվածների և 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ մեկ այլ անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելով:~~

~~4. *(մասն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-263-Ն)*~~

~~5. *(մասն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-263-Ն)*~~

~~6. Մաքսային մյուս ծառայողները պայմանագրի հիման վրա սահմանված կարգով պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում են կոմիտեի ղեկավարի հրամանով:~~

~~7. Համապատասխան պաշտոնում նշանակվող անձը պետք է ունենա այդ պաշտոնի համար սահմանված առավելագույն հատուկ կոչումից երկու աստիճանից ոչ ցածր կոչում:~~

~~Սույն կետի պահանջները չեն տարածվում մաքսային ծառայության բարձրագույն պաշտոնների նշանակումների վրա։~~

~~8. Մաքսային ծառայության պաշտոնում նշանակվելու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է Կառավարությունը։~~

~~Հոդված 15. Մաքսային ծառայողների ատեստավորումը~~

~~1. Մաքսային ծառայողի ատեստավորումն անցկացվում է երեք տարին մեկ անգամ։~~

~~Մաքսային ծառայողի արտահերթ ատեստավորումն անցկացվում է հերթական ատեստավորումից առնվազն մեկ տարի հետո։~~

~~Սույն հոդվածով նախատեսված ատեստավորմանը ենթակա են այն մաքսային ծառայողները, որոնց պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է կոմիտեի ղեկավարը, բացի կոմիտեի վարչության պետի և մաքսատան պետի պաշտոն զբաղեցնող անձանցից։~~

~~2. Մաքսային ծառայողի արտահերթ ատեստավորումն անցկացվում է նրա անմիջական ղեկավարի պատճառաբանված միջնորդության հիման վրա՝ կոմիտեի ղեկավարի որոշմամբ կամ մաքսային ծառայողի ցանկությամբ։~~

~~3. Ատեստավորումն անցկացվում է մաքսային ծառայողի անմիջական մասնակցությամբ։~~

~~4. Ատեստավորման ենթակա չեն՝~~

~~1) տվյալ պաշտոնը մեկ տարուց պակաս ժամկետով զբաղեցնող մաքսային ծառայողները, եթե նման ցանկություն չեն հայտնել.~~

~~2) հղի և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող մաքսային ծառայողները, եթե նման ցանկություն չեն հայտնել։~~

~~5. Ատեստավորման ենթակա, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակ մաքսային ծառայողները ենթակա են ատեստավորման աշխատանքի ներկայանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, բացառությամբ հղիության և երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող մաքսային ծառայողների։~~

~~6. Հղիության և երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող մաքսային ծառայողները ենթակա են ատեստավորման արձակուրդից վերադառնալուց հետո՝ 2 ամիս անց, սակայն ոչ ուշ, քան արձակուրդից վերադառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, եթե վերջիններս ավելի վաղ ատեստավորվելու ցանկություն չեն հայտնել։~~

~~7. Ատեստավորման ենթակա մաքսային ծառայողները, ոչ ուշ, քան ատեստավորումից մեկ ամիս առաջ, տեղեկացվում են ատեստավորման անցկացման մասին։~~

~~8. Ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ մաքսային ծառայողի անմիջական ղեկավարը ներկայացնում է մաքսային ծառայողի ծառայողական բնութագիրը։~~

~~Մաքսային ծառայողն ատեստավորում անցկացնելու օրվանից առնվազն մեկ շաբաթ առաջ պետք է ծանոթանա իր ծառայողական բնութագրին։~~

~~Սույն հոդվածով սահմանված կարգով ծառայողական բնութագիր չներկայացնելը չի կարող բացասաբար ազդել մաքսային ծառայողի ատեստավորման արդյունքների վրա։~~

~~9. Ատեստավորումն անցկացվում է հետևյալ եղանակներով՝~~

~~1) փաստաթղթային.~~

~~2) թեստավորման և հարցազրույցի միջոցով, իսկ կոմիտեի օպերատիվ ստորաբաժանումներում ծառայություն անցնողների համար նաև ֆիզիկական~~

պատրաստվածության, զենքի և հատուկ միջոցների տիրապետման գծով՝ ատեստավորման հանձնաժողովի սահմանած կարգով:

9.1. Այն մաքսային ծառայողները, որոնք ծառայողական դրական բնութագրի և նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակահատվածում վերապատրաստման (ուսուցման) արդյունքների ընդհանուր գումարով հավաքել են 80 և ավելի միավոր, ենթակա են փաստաթղթային ատեստավորման: Միավորների հաշվարկն իրականացվում է կոմիտեի սահմանած կարգով:

9.2. Փաստաթղթային ատեստավորումն անցկացվում է ծառայողական բնութագրի հիման վրա՝ հարցազրույցի միջոցով: Հարցազրույցն անցկացվում է մաքսային ծառայողների տվյալ պաշտոնի նկարագրի դրույթների շրջանակներում՝ մաքսային ծառայությունների գործնական կարողություններն ստուգելու նպատակով: Հանձնաժողովը փաստաթղթային ատեստավորման արդյունքի հիման վրա կայացնում է հետևյալ եզրակացություններից մեկը և փաստաթղթային ատեստավորումն ավարտվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, ներկայացնում կոմիտեի ղեկավարին՝

1) շնորհել ավելի բարձր հատուկ կոչում.

2) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին.

3) ենթակա է ատեստավորման թեստավորման և հարցազրույցի միջոցով:

9.3. Թեստավորման և հարցազրույցի միջոցով ատեստավորման ենթակա են այն մաքսային ծառայողները, որոնք փաստաթղթային ատեստավորման ենթակա չեն, կամ որոնց վերաբերյալ Հանձնաժողովն ընդունել է սույն հոդվածի 9.2-րդ մասի 3-րդ կետում նշված եզրակացությունը: Թեստերը հաստատում, հարցազրույցն անցկացնում և արդյունքները գնահատում է Հանձնաժողովը՝ սույն օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով:

10. Ատեստավորման հանձնաժողովը թեստավորման և հարցազրույցի (համապատասխան դեպքերում նաև ֆիզիկական պատրաստվածության, զենքի և հատուկ միջոցների տիրապետման ստուգման) արդյունքներով կայացնում է հետևյալ եզրակացություններից մեկը և ատեստավորումն ավարտվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, ներկայացնում է կոմիտեի ղեկավարին.

1) շնորհել ավելի բարձր հատուկ կոչում.

2) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին.

3) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին՝ վերապատրաստում անցնելու և վերապատրաստման արդյունքում դրական գնահատական ստանալու պայմանով.

4) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին:

11. Մաքսային ծառայողն իրավունք ունի ծանոթանալ ատեստավորման արդյունքներին և բողոքարկել դրանք մինչև այդ արդյունքները մաքսային ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին ներկայացնելը:

12. Կոմիտեի ղեկավարը, սույն հոդվածի տասներորդ մասով նախատեսված եզրակացությունն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) մաքսային ծառայողին ավելի բարձր հատուկ կոչում շնորհելու կամ տվյալ կոչումը շնորհելու իրավասու անձին համապատասխան միջնորդություն ներկայացնելու մասին.

2) մաքսային ծառայողի վերապատրաստում անցկացնելու մասին.

3) մաքսային ծառայողին զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին: Նման որոշում կայացվում է նաև, եթե մաքսային ծառայողը վերապատրաստման արդյունքում ստանում է բացասական գնահատական.

~~4) զբաղեցրած պաշտոնին մաքսային ծառայողի համապատասխանության մասին.~~

~~5) մաքսային ծառայողին զբաղեցրած պաշտոնից իջեցնելու մասին:~~

~~Կոմիտեի ղեկավարը մաքսային ծառայողի ժամանակավոր անաշխատունակության և արձակուրդում գտնվելու, ինչպես նաև վերապատրաստման ժամանակ ատեստավորման արդյունքների հիման վրա համապատասխան որոշում է ընդունում նրանց աշխատանքի ներկայանալու օրվանից եռօրյա ժամկետում:~~

~~13. Սույն հոդվածով նախատեսված բնութագիրը (ութերորդ մաս), եզրակացությունը (տասներորդ մաս) և որոշումը (տասներկուերորդ մաս) կցվում են մաքսային ծառայողի անձնական գործին:~~

~~14. Սույն օրենքի հիման վրա մաքսային ծառայողի ատեստավորում անցկացնելու կարգը սահմանում է կոմիտեն:~~

Հոդված 13. Մաքսային ծառայության պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը

1. Մաքսային ծառայության պաշտոններում նշանակումները կատարվում են մրցույթի արդյունքներով: Մաքսային ծառայության պաշտոններում մրցույթը կազմակերպվում և անցկացվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով՝ մաքսային մարմնի կողմից:

2. Մրցույթին չի կարող մասնակցել այն քաղաքացին, ով չի բավարարում սույն օրենքի 8-րդ և 49-րդ հոդվածներով սահմանված պահանջները, և (կամ) առկա է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը:

Հոդված 14. Մաքսային ծառայության պաշտոնի նկարագրի՝ կրթության և աշխատանքային ստաժի չափանիշները, մաքսային ծառայության պաշտոնի նշանակումը

1. Մաքսային ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար անհրաժեշտ են աշխատանքային ստաժի և փորձի առնվազն հետևյալ չափանիշները.

1) Մաքսային ծառայության բարձրագույն պաշտոնների համար՝ հանրային ծառայության առնվազն հինգ տարվա ստաժ կամ յոթ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ յոթ տարվա աշխատանքային ստաժ:

2) Մաքսային ծառայության գլխավոր պաշտոնների համար՝ հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի նկարագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ հինգ տարվա աշխատանքային ստաժ.

3) Մաքսային ծառայության առաջատար պաշտոնների համար՝ հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի նկարագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

4) Մաքսային ծառայության կրտսեր պաշտոնների համար աշխատանքային ստաժ չի պահանջվում:

2. Մաքսային ծառայության պաշտոններում մրցույթի արդյունքներով պաշտոնի նշանակում և պաշտոններից ազատում է մաքսային մարմնի ղեկավարը:

3. Մաքսային ծառայության պաշտոն առաջին անգամ զբաղեցնող անձը պաշտոնի նշանակվում է մինչև 9 ամիս փորձաշրջանով: Փորձաշրջանի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

Հոդված 15. Մաքսային ծառայողների կատարողականի գնահատումը, վերապատրաստումը

1. Մաքսային ծառայողների կատարողականի գնահատման և վերապատրաստման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

~~**Հոդված 16. Մաքսային ծառայողների վերապատրաստումը**~~

~~1. Յուրաքանչյուր տարի մաքսային ծառայողների առնվազն մեկ երրորդը ենթակա է պարտադիր վերապատրաստման:~~

~~2. Մաքսային ծառայողի վերապատրաստումն իրականացվում է կոմիտեի սահմանած կարգով:~~

Հոդված 18. Մաքսային ծառայողների հատուկ կոչումները

1. Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայողների համար սահմանվում են հետևյալ հատուկ կոչումները.

մաքսային ծառայության գեներալ-լեյտենանտ,
մաքսային ծառայության գեներալ-մայոր,
մաքսային ծառայության գնդապետ,
մաքսային ծառայության փոխգնդապետ,
մաքսային ծառայության մայոր,
մաքսային ծառայության կապիտան,
մաքսային ծառայության ավագ լեյտենանտ,
մաքսային ծառայության լեյտենանտ,
մաքսային ծառայության կրտսեր լեյտենանտ:

2. Մաքսային ծառայողներին ըստ զբաղեցրած պաշտոնի հասանելիք առավելագույն հատուկ կոչումները սահմանում է Կառավարությունը:

3. Առաջին անգամ մաքսային ծառայության պաշտոն զբաղեցնող անձին հատուկ կոչում շնորհվում է սույն օրենքով նախատեսված փորձաշրջանի ավարտից հետո՝ կոմիտեի ղեկավարի հրամանով:

4. Մաքսային ծառայողը հատուկ կոչումից զրկվում է զբաղեցրած պաշտոնից սույն օրենքի 48-րդ հոդվածի երկրորդ մասի 8-րդ, 10-12-րդ և 15-րդ կետերով նախատեսված հիմքերով ազատվելու դեպքերում:

5. Մաքսային ծառայության բարձրագույն կոչումներն օրենքով սահմանված կարգով շնորհվում են նաև մաքսային մարմնի ղեկավարին և նրա տեղակալներին:

Հոդված 19. Հատուկ կոչումների շնորհման ընդհանուր պայմանները

1. Մաքսային ծառայության գեներալ-լեյտենանտի և մաքսային ծառայության գեներալ-մայորի հատուկ կոչումները շնորհում է վարչապետը:

2. Մաքսային ծառայության սույն օրենքով սահմանված մյուս հատուկ կոչումները շնորհում է կոմիտեի ղեկավարը:

3. Մաքսային ծառայության հատուկ կոչում շնորհելիս Կառավարության սահմանած կարգով հաշվի է առնվում մաքսային ծառայողի նախկին աշխատանքի կամ ծառայության վայրում շնորհված դասային, հատուկ կամ զինվորական կոչումը:

4. Մաքսային ծառայողին հերթական հատուկ կոչումը շնորհվում է հաջորդական կարգով, զբաղեցրած պաշտոնին համապատասխան և նախորդ կոչումով ծառայության ժամկետի լրանալուց հետո, բացառությամբ սույն հոդվածի հինգերորդ մասով նախատեսված դեպքերի:

5. Մաքսային ծառայողին հերթական հատուկ կոչում կարող է շնորհվել՝

1) մինչև նախորդ կոչումը կրելու՝ սույն օրենքով սահմանված ժամկետի լրանալը, բայց զբաղեցրած պաշտոնին հասանելիքից ոչ բարձր, որպես խրախուսում, պաշտոնեական պարտականությունները գերազանց կատարելու համար.

2) զբաղեցրած պաշտոնին հասանելիք առավելագույն հատուկ կոչումից մեկ աստիճան բարձր կոչում կարող է շնորհվել նախորդ հատուկ կոչման ժամկետի ավարտից հետո՝ աշխատանքում ցուցաբերած առանձնահատուկ ծառայությունների համար.

~~3) մինչև նախորդ կոչումը կրելու՝ սույն օրենքով սահմանված ժամկետի լրանալը, կամ զբաղեցրած պաշտոնին հասանելիք առավելագույն հատուկ կոչումից մեկ աստիճան բարձր կոչում կարող է շնորհվել նաև ատեստավորման արդյունքներով:~~

6. Մաքսային ծառայողին զբաղեցրած պաշտոնին հասանելիք առավելագույն կոչումից մեկ աստիճան բարձր կամ վաղաժամկետ կոչում՝ մինչև մաքսային ծառայության գնդապետի հատուկ կոչումը ներառյալ, ծառայությանողջ ընթացքում կարող է շնորհվել ոչ ավելի, քան երկու անգամ:

~~**Հոդված 22. Մաքսային ծառայողի կարգավիճակը**~~

~~Մաքսային ծառայողը գործադիր իշխանության ներկայացուցիչ է, գտնվում է օրենքի և պետության պաշտպանության ներքո:~~

Հոդված 22[1]. Մաքսային ծառայողի իրավական վիճակը համապատասխան մարմնի վերակազմակերպման ժամանակ

Համապատասխան մարմնի վերակազմակերպումը, **կառուցվածքային փոփոխությունը** մաքսային ծառայողին պաշտոնից ազատելու հիմք չէ, բացառությամբ այն դեպքերի, ~~երբ վերակազմակերպումն~~ **երբ վերակազմակերպումը, կառուցվածքային փոփոխությունը** ուղեկցվում է հաստիքների կրճատմամբ:

Հոդված 23. Մաքսային ծառայողի հիմնական իրավունքները

1. ~~Մաքսային ծառայողն իրավունք ունի՝~~ **Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված հիմնական իրավունքներից բացի, մաքսային ծառայողների հիմնական իրավունքներն են՝**

~~1) ծանոթանալ գբաղեցրած պաշտոնում իր իրավունքները և պարտականությունները սահմանող իրավական ակտերին.~~

2) ծառայողական պարտականությունների կատարման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ստանալ տեղեկություններ և փաստաթղթեր.

~~3) իր լիազորությունների շրջանակներում որոշումներ ընդունել.~~

4) մաքսային ծառայության գծով առաջխաղացման և վարձատրության չափերի մեծացման՝ հաշվի առնելով ծառայած տարիները, ծառայության արդյունքները և վերապատրաստման մակարդակը.

~~5) ծանոթանալ իր անձնական գործին կցվող բոլոր նյութերին, իր ծառայության գնահատականներին և այլ փաստաթղթերի՝ մինչև դրանք անձնական գործին կցելը, և ներկայացնել բացատրություններ.~~

6) Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների պահպանման համար հատկացված միջոցների հաշվին վերապատրաստվել.

~~7) կենսաթոշակային ապահովման.~~

8) պահանջել Կառավարության սահմանած կարգով ծառայողական քննության անցկացում՝ իր պատիվը և արժանապատվությունը վարկաբեկող տեղեկությունները, իր կարծիքով անհիմն մեղադրանքները հերքելու և վերացնելու նպատակով.

9) օգտագործել ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, ինչպես նաև հրազեն՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով.

~~10) աշխատանքի, վարձատրության, առողջության պաշտպանության, անվտանգ և անհրաժեշտ աշխատանքային պայմանների ապահովվածության.~~

~~11) սոցիալական և իրավական պաշտպանության ու ապահովության:~~

~~2. Մաքսային ծառայողն ունի նաև սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով նախատեսված այլ իրավունքներ:~~

Հոդված 24. Մաքսային ծառայողի հիմնական պարտականությունները

1. ~~Մաքսային ծառայողը պարտավոր է՝~~ **Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով նախատեսված հիմնական պարտականություններից բացի, մաքսային ծառայողների հիմնական պարտականություններն են՝**

~~1) իր իրավասության սահմաններում ապահովել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների կատարումը, ինչպես նաև տիրապետել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար անհրաժեշտ այլ գիտելիքների.~~

~~2) իր իրավասության սահմաններում ապահովել քաղաքացիների օրինական շահերի և իրավունքների պահպանումը.~~

~~3) կատարել կոմիտեի ղեկավարի ու պաշտոնատար անձանց՝ իրենց իրավասության սահմաններում տրված օրինական հրամաններն ու կարգադրությունները.~~

~~4) իր իրավասության սահմաններում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ուսումնասիրել քաղաքացիների, կազմակերպությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների դիմումները և ընթացք տալ դրանց.~~

~~5) պահպանել ծառայողական տեղեկությունների հետ աշխատելու կարգը.~~

6) օրենքով սահմանված դեպքերում սկսել հետաքննության և նախաքննության գործերը.

6.1) մաքսանենգության և օրենքով նախատեսված դեպքերում մտավոր սեփականության իրավունքի խախտման գործերով իրականացնել դեպքի վայրի պահպանություն, որի կանոնները սահմանում է Կառավարությունը.

7) մասնակցել կոմիտեի ղեկավարի հաստատած ծրագրով անցկացվող ուսումնավարժական հավաքներին, մրցույթներին և այլ ծառայողական միջոցառումներին.

~~8) ճշգրիտ, ժամանակին, բարեխղճորեն և անշահախնդրորեն կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված այլ պարտականություններ.~~

~~9) պահպանել մաքսային ծառայողի վարքագծի (էթիկայի) կանոնները, որոնք հաստատվում են կոմիտեի ղեկավարի կողմից:~~

~~2. Մաքսային ծառայողի պարտականություններն ըստ զբաղեցրած պաշտոնի որոշում է կոմիտեի ղեկավարը:~~

~~Հոդված 24[1]. Մաքսային ծառայողին հանձնարարականներ տալու սահմանափակումները~~

~~1. Մաքսային ծառայողին չեն կարող տրվել բանավոր և (կամ) գրավոր այնպիսի հանձնարարականներ, որոնք՝~~

~~ա) հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և Հայաստանի Հանրապետության օրենքներին.~~

~~բ) դուրս են հանձնարարականներ տվողի և կատարողի լիազորություններից:~~

~~2. Սույն հոդվածի 1-ին մասի խախտմամբ հանձնարարականներ ստանալու դեպքում մաքսային ծառայողը պարտավոր է ստացած հանձնարարականների օրինականության վերաբերյալ իր կասկածների մասին անհապաղ գրավոր զեկուցել հանձնարարականը տվողին և նրա վերադասին կամ նրանց փոխարինող անձանց: Եթե վերադասը (նրա բացակայության դեպքում՝ նրան փոխարինող անձը) կամ հանձնարարական տվողը (նրա բացակայության դեպքում՝ նրան փոխարինող անձը) գրավոր հաստատում է տրված հանձնարարականը, ապա մաքսային ծառայողը պարտավոր է դա կատարել, բացառությամբ այն դեպքերի, երբ հանձնարարականի կատարումը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված քրեական կամ վարչական պատասխանատվության: Մաքսային ծառայողի կողմից այդ հանձնարարականի կատարման պատասխանատվությունը կրում է հանձնարարականը գրավոր հաստատած անձը: Եթե հանձնարարականի կատարումը կարող է հանգեցնել քրեական կամ վարչական պատասխանատվության, ապա մաքսային ծառայողը այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել կոմիտեի ղեկավարին:~~

~~Հոդված 25. Մաքսային ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները~~

~~1. Մաքսային ծառայողն իրավունք չունի՝~~

~~1) զբաղեցնել պետական այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից.~~

~~2) անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ.~~

~~3) մաքսային մարմիններում հանդես գալ որպես երրորդ անձանց լիազորված անձ.~~

~~4) ոչ ծառայողական նպատակներով օգտագործել մաքսային մարմինների նյութատեխնիկական, տեղեկատվական և ֆինանսական միջոցները, պետական այլ գույք, ինչպես նաև ծառայողական տեղեկատվությունը.~~

~~5) իր ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալ նվերներ, գումարներ կամ ծառայություններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.~~

~~6) իր ծառայողական դիրքն ու միջոցներն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական, ինչպես նաև նրանց օգտին վերաբերմունք քարոզող կազմակերպությունների շահերի համար.~~

~~7) խախտել պետական, ծառայողական, առևտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող նյութերի հետ աշխատելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ հրաժարվել անցնելու այդ գաղտնիքների հետ առնչվելու թույլտվության ձևակերպման սահմանված ընթացակարգը.~~

~~8) հոնորար ստանալ ծառայողական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար.~~

~~9) որպես պետության ներկայացուցիչ՝ գույքային գործարքներ կնքել սույն հոդվածի 3-րդ մասում նշված անձանց հետ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:~~

~~2. Մաքսային մարմիններում արգելվում է կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական կազմակերպությունների ձևավորումը:~~

~~3. Մաքսային մարմիններում արգելվում է համատեղ ծառայել միմյանց հետ մերձավոր ազգակցությամբ կապված անձանց (ծնողներ, ամուսիններ, եղբայրներ, քույրեր, զավակներ, ինչպես նաև ամուսինների եղբայրներ, քույրեր և նրանց զավակներ), եթե նրանց ծառայությունը կապված է մեկը մյուսի նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ:~~

~~4. Մաքսային ծառայության պաշտոնի նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, մաքսային ծառայողը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավոր է առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում բաժնեմաս ունենալու դեպքում դա հանձնել հավատարմագրային կառավարման: Մաքսային ծառայողն իրավունք ունի հավատարմագրային կառավարման հանձնված գույքից ստանալու եկամուտ:~~

«Հոդված 25. Մաքսային ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները

1. Ի լրումն «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների՝ մաքսային ծառայողն իրավունք չունի լինելու ներկայացուցիչ դատարանում, բացառությամբ օրինական ներկայացուցիչ լինելու և ի պաշտոնե գործելու դեպքերի:

2. Մաքսային ծառայողը ցանկացած հանգամանքում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն:»:

Հոդված 26. Մաքսային ծառայողների կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների ու զենքի օգտագործման դեպքերը և կարգը

1. **Մաքսային մարմնի հանրային ծառայողն իրավունք ունի գործադրել ֆիզիկական ուժ, կիրառել հատուկ միջոցներ, ինչպես նաև հրազեն՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:** Նախքան ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի օգտագործման իրավասություն ստանալը, այնուհետև՝ պարբերաբար, մաքսային **մարմնի հանրային** ծառայողները, կոմիտեի սահմանած կարգով անցնում են հատուկ պատրաստություն և պիտանիության ստուգումներ: Նշված անձինք պարտավոր են ունենալ նաև տուժածներին առաջին բուժօգնություն ցուցաբերելու հմտություն:

2. Սույն օրենքի 27-29-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում և կարգով՝ մաքսային **մարմնի հանրային** ծառայողն իրավունք ունի կիրառել ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք:

3. Մաքսային **մարմնի հանրային** ծառայողը ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք կիրառելուց առաջ նախազգուշացնում է այդ մտադրության մասին՝ տալով իր պահանջները կատարելու համար բավարար ժամանակ, բացառությամբ անակնկալ, զինված, ռազմական տեխնիկայի և տրանսպորտային այլ միջոցների օգտագործմամբ հարձակումների և այլ իրադրությունների, եթե նման նախազգուշացումն ստեղծված իրավիճակում անտեղի է, անհնարին կամ կարող է առաջացնել վտանգ իր կամ այլ անձանց կյանքին և առողջությանը, հանգեցնել այլ ծանր հետևանքների:

4. Իրավախախտման վտանգավորության աստիճանից և դա կատարող անձի ինքնությունից, ինչպես նաև դիմադրության ուժից ելնելով՝ վտանգի վերացմանն ուղղված գործողությունների հետևանքով հնարավոր վնասները մաքսային **մարմնի հանրային** ծառայողը պետք է հասցնի նվազագույնի:

5. Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառման դեպքում մաքսային **մարմնի հանրային** ծառայողն անմիջապես զեկուցում է վերադասության կարգով, իսկ զենքի կիրառման բոլոր դեպքերի մասին՝ նաև դատախազին:

Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառման հետևանքով առաջացած մարմնական վնասվածքների, մահվան բոլոր դեպքերի մասին մաքսային մարմնի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն անմիջապես տեղյակ է պահում առողջապահության և դատախազության համապատասխան մարմիններին:

Հոդված 27. Ֆիզիկական հարկադրանքի (ուժի) կիրառումը

Մաքսային **մարմնի հանրային** ծառայողները, իրենց պարտականությունների կատարման ընթացքում, իրավունք ունեն իրավախախտների նկատմամբ կիրառել ֆիզիկական հարկադրանք (ուժ)՝

1) իրենց կամ այլ անձանց վրա կատարված հարձակումը կանխելու համար.

2) մաքսային մարմիններին պատկանող կամ վերջիններիս հսկողության տակ գտնվող շինությունների կառույցների և տրանսպորտային միջոցների վրա կատարված հարձակումը կանխելու համար.

3) դիմադրություն ցույց տվող իրավախախտին վարչական ձերբակալության ենթարկելու կամ մաքսային մարմնի շենք կամ դրան փոխարինող այլ շինություն հասցնելու համար:

Հոդված 28. Հատուկ միջոցների կիրառումը

1. Մաքսային **մարմնի հանրային** ծառայողներն իրավունք ունեն կիրառել ձեռնաշղթաներ, ռետինե մահակներ, արցունքաբեր նյութեր, փականքները բացելու գործիքներ, տրանսպորտային միջոցները հարկադրաբար կանգնեցնելու համար նախատեսված միջոցներ, էլեկտրահարող սարքեր, կայծային պարպիչներ, ծառայողական շներ, ուշադրությունը շեղող լուսաձայնային միջոցներ:

2. Իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս մաքսային **մարմնի հանրային** ծառայողները հատուկ միջոցներ կարող են կիրառել՝

1) իրենց և (կամ) այլ անձանց վրա կատարված հարձակումը կանխելու համար.

2) մաքսային մարմնին պատկանող կամ նրա հսկողության տակ գտնվող շինությունների, կառույցների և տրանսպորտային միջոցների վրա կատարված հարձակումը կանխելու համար.

3) դիմադրություն ցույց տվող իրավախախտին վարչական ձերբակալության ենթարկելու կամ մաքսային մարմնի շենք կամ դրան փոխարինող այլ շինություն հասցնելու համար, եթե այդ դիմադրությունը կարող է վնաս պատճառել շրջապատին կամ իրենց.

4) տրանսպորտային միջոցը կանգնեցնելու համար, եթե դրա վարորդը չի կատարում մաքսային ծառայողի օրինական պահանջները:

3. Հղիության կամ հաշմանդամության ակնհայտ նշաններով անձանց, անչափահասների նկատմամբ հատուկ միջոցներ չեն կիրառվում, բացառությամբ նշված անձանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու, խմբակային կամ այլ հարձակումների, մարդկանց կյանքի և առողջության համար վտանգավոր գործողությունների դեպքերի:

Հոդված 29. Զենքի գործադրումը

1. Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված պաշտոններ զբաղեցնող մաքսային **մարմնի հանրային** ծառայողներին ծառայողական պարտականություններ կատարելիս իրավունք է տրվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կրելու, պահելու և օգտագործելու զենք:

2. Զենք կրելու, պահելու և օգտագործելու իրավունք ունեցող մաքսային **մարմնի հանրային** ծառայողներն իրավունք ունեն դա գործադրել՝

1) իրենց և (կամ) այլ անձանց վրա կատարված հարձակումը կանխելու համար, կամ եթե առկա է նրանց կյանքին կամ առողջությանն սպառնացող իրական վտանգ.

2) զենքի կամ հատուկ միջոցների հափշտակման փորձը կանխելու համար:

3. Մինչև զենքի գործադրումը մաքսային **մարմնի հանրային** ծառայողը պետք է կատարի նախազգուշական կրակոց, բացառությամբ սույն օրենքի 26-րդ հոդվածի երրորդ մասով նախատեսված դեպքերի:

4. Արգելվում է զենքի գործադրումը հղիության կամ հաշմանդամության ակնհայտ նշաններ ունեցող անձանց և անչափահասների նկատմամբ, բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու և մաքսային ծառայողի կյանքին և առողջությանն իրական վտանգ սպառնացող գործողություններ կատարելու դեպքերի:

5. Մաքսային **մարմնի հանրային** ծառայողներին զենքով ապահովելու կարգը, զենքի ու զինամթերքի ցանկը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 30. Մաքսային մարմնի հանրային ծառայողների անհատական

պաշտպանության միջոցները

Անձնական անվտանգության ապահովման համար մաքսային **մարմնի հանրային** ծառայողն իրավունք ունի օգտագործել սաղավարտ, վահան, զրահաբաճկոն, հակագազ և անհատական պաշտպանության այլ միջոցներ:

Հոդված 32. Մաքսային ծառայողի ծառայողական տեղափոխումը և երաշխիքները

1. Կոմիտեի ղեկավարի հրամանով մաքսային ծառայողին նույն մաքսային մարմնում, նույն տարածաշրջանի այլ մաքսային մարմնում կամ այլ տարածաշրջանի մաքսային մարմնում այլ պաշտոնի նշանակելը (այսուհետ՝ ծառայողական տեղափոխում) թույլատրվում է միայն մաքսային ծառայողի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով, բացառությամբ սույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքի:

2. Մաքսային ծառայողին այլ տարածաշրջանի մաքսային մարմին ծառայողական տեղափոխման դեպքում նշված ծառայողի և նրա հետ բնակվող ընտանիքի անդամների համար ծառայության նոր վայրում Կառավարության սահմանած կարգով տրամադրվում է բնակելի տարածք կամ բնակելի տարածքի վարձակալման համար ամենամսյա դրամական փոխհատուցում:

3. Մաքսային ծառայողին այլ տարածաշրջան ծառայողական տեղափոխման դեպքում մաքսային ծառայողին Կառավարության սահմանած կարգով տրվում է տեղափոխվելու և անձնական գույքը տեղափոխելու հետ կապված ծախսերի փոխհատուցում:

4. Հարկային ծառայողների տեղափոխման, փոխադրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով:

~~**Հոդված 33. Մաքսային ծառայության համար կադրերի վերապատրաստումը**~~

~~Մաքսային ծառայության կրտսեր և առաջատար պաշտոններ զբաղեցնող բոլոր մաքսային ծառայողները պարտադիր, իսկ գլխավոր պաշտոններ զբաղեցնող մաքսային ծառայողները, իրենց ցանկությամբ, ոչ պակաս, քան յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ, մասնակցում են կոմիտեի ուսումնական կենտրոնում կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին:~~

Հոդված 34. Մաքսային ծառայողի անձնական գործը

1. Մաքսային ծառայողի ծառայության ընթացքն արտացոլվում է նրա անձնական գործում: Մաքսային ծառայողի անձնական գործը վարում է կոմիտեի համապատասխան ~~ծառայությունը~~ **ստորաբաժանումը՝ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմնված կարգով:**

~~2. Մաքսային ծառայողի անձնական գործի վարման կարգը սահմանում է կոմիտեն:~~

Հոդված 35. Մաքսային ծառայողի համազգեստը և ծառայողական վկայականը

1. ~~Մաքսային ծառայողների~~ **Մաքսային մարմնի հանրային ծառայողների** համար սահմանվում է համազգեստ, որի ձևը որոշում է Կառավարությունը, իսկ կրելու կարգը՝ մաքսային մարմինը: Համազգեստը տրվում է անվճար:

2. ~~Մաքսային ծառայողին~~ **Մաքսային մարմնի հանրային ծառայողին** տրվում է ծառայողական վկայական, որի ձևը և տրամադրման կարգը հաստատում է կոմիտեն:

Հոդված 41[1]. Մաքսային ծառայողների վարձատրությունը
(վերնագիրը փոփ. 12.12.13 ՀՕ-178-Ն)

1. Մաքսային ծառայողների վարձատրության, այդ թվում՝ հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի հաշվարկների և չափերի, աշխատավարձի բնականոն աճի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են **«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»** Հայաստանի Հանրապետության օրենքով:

1.1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով մաքսային մարմնի պահպանման ծախսերում կարող է նախատեսվել նաև պարգևատրման ֆոնդ:

2. ***(մասն ուժը կորցրել է 12.12.13 ՀՕ-178-Ն)***
3. ***(մասն ուժը կորցրել է 12.12.13 ՀՕ-178-Ն)***
4. ***(մասն ուժը կորցրել է 12.12.13 ՀՕ-178-Ն)***
5. ***(մասն ուժը կորցրել է 12.12.13 ՀՕ-178-Ն)***

Գ Լ ՈՒ Խ 6.

ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՈՒՄԸ, ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼԸ, ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

~~**Հոդված 43.**~~ ~~**Մաքսային ծառայողների խրախուսումը**~~

~~1. Մաքսային ծառայողների նկատմամբ կարող են կիրառվել խրախուսման հետևյալ ձևերը.~~

~~1) ծառայողական պարտականությունները կատարելիս բարձր ցուցանիշներ ապահովելու համար՝~~

~~- շնորհակալության հայտարարում,~~

~~- դրամական պարգևատրում,~~

~~- հուշանվերով պարգևատրում,~~

~~- կոմիտեի պատվոգրով պարգևատրում,~~

~~- կարգապահական տույժի վաղաժամկետ հանում.~~

~~- լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում:~~

~~2) գերազանց ծառայության համար՝~~

~~- հերթական հատուկ կոչման վաղաժամկետ շնորհում,~~

~~- զբաղեցրած պաշտոնին հասանելիք առավելագույն հատուկ կոչումից մեկ աստիճան բարձր կոչման շնորհում.~~

~~3) տասը տարուց ավելի բարեխիղճ ծառայության համար՝~~

~~«Մաքսային ծառայության առաջավոր», «Հայաստանի Հանրապետության պատվավոր մաքսային ծառայող» կոչքանշաններով պարգևատրում.~~

~~4) մաքսային գործի բնագավառում հատուկ ծառայությունների համար՝~~

~~«Մաքսային ծառայության առաջավոր», «Հայաստանի Հանրապետության պատվավոր մաքսային ծառայող» կոչքանշաններով պարգևատրում:~~

~~2. *(մասն ուժը կորցրել է 17.09.09 ՀՕ-171-Ն)*~~

~~3. Մաքսային ծառայողները վարչապետի կողմից կարող են ներկայացվել Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և կոչումների:~~

~~4. «Հայաստանի Հանրապետության պատվավոր մաքսային ծառայող», «Մաքսային ծառայության առաջավոր» կոչքանշանների, ինչպես նաև կոմիտեի պատվոգրի վերաբերյալ կանոնները և դրանցով պարգևատրման դեպքերը սահմանում է կոմիտեն:~~

Հոդված 43. Մաքսային ծառայողների խրախուսումը

1. Մաքսային ծառայողների նկատմամբ կիրառվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված խրախուսանքի տեսակները: Մաքսային ծառայողների նկատմամբ խրախուսանք կիրառում է մաքսային մարմնի ղեկավարը:

2. Մաքսային ծառայողների նկատմամբ կարող է կիրառվել նաև արտահերթ կոչման շնորհում խրախուսանքի տեսակը, որը մաքսային ծառայողների նկատմամբ ծառայության ամբողջ ընթացքում կարող է կիրառվել միայն մեկ անգամ: Արտահերթ կոչման շնորհում խրախուսանքի տեսակը կիրառում է նման կոչում շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

3. Երկարամյա ծառայության և (կամ) ծառայողական պարտականությունները և (կամ) հանձնարարականները (առաջադրանքները) բարեխղճորեն կատարելու համար մաքսային ծառայողը պարգևատրվում է մեդալով կամ կրծքանշանով:

4. Մեդալի և կրծքանշանի տեսակները, ձևերը և շնորհման կարգը սահմանում է հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը:

5. Մաքսային ծառայողների նկատմամբ կարգապահական տույժ կիրառում է պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

~~**Հոդված 43[1]. Խրախուսման ձևերի կիրառումը և կարգը**~~

-

~~Սույն օրենքի 43-րդ հոդվածում նշված խրախուսման ձևերը կիրառում է կոմիտեի ղեկավարը մաքսային ծառայողի անմիջական ղեկավարի գրավոր միջնորդագրի հիման վրա, իսկ նույն հոդվածի առաջին մասի 1-ին կետի առաջին, երկրորդ և հինգերորդ թվարկումներում նշված խրախուսման ձևերը կարող է կիրառել նաև մաքսատան պետը: Ընդ որում, «կարգապահական տույժի վաղաժամկետ հանում» խրախուսման ձևը մաքսատան պետի կողմից կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ կարգապահական տույժը կիրառվել է մաքսատան պետի կողմից:~~

~~**Հոդված 44. Մաքսային ծառայողների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը**~~

~~1. Ծառայողական կարգապահությունը խախտելու համար մաքսային ծառայողների նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական հետևյալ տույժերը.~~

~~1) դիտողություն.~~

~~2) նկատողություն.~~

~~3) խիստ նկատողություն.~~

~~4) հատուկ կոչման իջեցում, բայց երկու աստիճանից ոչ ավելի.~~

~~5) մաքսային ծառայողի պաշտոնի իջեցում, բայց մեկ աստիճանից ոչ ավելի.~~

~~6) նյութական պատասխանատվության կիրառում.~~

~~7) մաքսային ծառայության պաշտոնից ազատում:~~

~~2. Սույն հոդվածի առաջին մասով սահմանված կարգապահական տույժերը կիրառում է կոմիտեի ղեկավարը, իսկ սույն հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերը կարող է կիրառել նաև մաքսատան պետը:~~

~~3. Սույն հոդվածի առաջին մասի 4-7-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերը կիրառվում են սահմանված կարգով անցկացված ծառայողական քննության արդյունքների հիման վրա կոմիտեի ծառայողական քննության հանձնաժողովի եզրակացության հիման վրա:~~

Հոդված 44. Մաքսային ծառայողների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը

1. «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով մաքսային ծառայողների նկատմամբ կիրառվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգապահական տույժերը:

2. Մաքսային ծառայողի նկատմամբ կարող է կիրառվել նաև կոչման իջեցում մեկ աստիճանով կարգապահական տույժը՝ ծառայության ամբողջ ընթացքում միայն մեկ անգամ՝ կոչումը շնորհած պաշտոնատար անձի կողմից:

3. Մաքսային ծառայողների նկատմամբ կարգապահական տույժ կիրառում է պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձը: Մաքսային մարմնի ղեկավարի հրամանով որոշ կարգապահական տուժերի նշանակման լիազորությունը կարող է պատվիրակվել այլ պաշտոնատար անձանց:

~~**Հոդված 44[1].** **Կարգապահական տույժի միջոցի ընտրության և նշանակման կարգը**~~

~~Կարգապահական տույժ նշանակելիս պետք է հաշվի առնվեն կատարված խախտման (զանցանքի) ծանրությունը, այն հանգամանքները, որոնց առկայությամբ խախտումը (զանցանքը) կատարվել է մաքսային ծառայողի կողմից:~~

~~Մինչև կարգապահական տույժ նշանակելը մաքսային ծառայողից վերցվում է գրավոր բացատրություն: Բացատրություն տալուց հրաժարվելու դեպքում կազմվում է համապատասխան արձանագրություն:~~

~~Ոչ սթափ վիճակում գտնվող կարգազանցին կարգապահական տույժի ենթարկելը, ինչպես նաև նրանից բացատրություն ստանալը հետաձգվում է մինչև նրա սթափվելը:~~

~~Բացատրություն տալուց հրաժարվելը հիմք չէ կարգապահական տույժ չկիրառելու համար:~~

~~Կարգապահական տույժերը կիրառվում են խախտման (զանցանքի) հայտնաբերման օրվանից՝ երկու ամսվա ընթացքում, չհաշված մաքսային ծառայողի ժամանակավոր անաշխատունակության և (կամ) արձակուրդում գտնվելու ժամանակահատվածը:~~

~~Կարգապահական տույժերը կիրառվում են խախտման (զանցանքի) կատարման օրվանից վեց ամսվա ընթացքում, իսկ վերստուգման կամ ֆինանսական գործունեության ստուգման արդյունքներով հայտնաբերվելու դեպքում՝ խախտման (զանցանքի) կատարման օրվանից՝ երկու տարվա ընթացքում, չհաշված քրեական գործի վարույթի ժամանակահատվածը:~~

~~Ծառայողական կարգապահության յուրաքանչյուր խախտման համար կարող է կիրառվել միայն մեկ կարգապահական տույժ:~~

~~Կարգապահական տույժը հայտարարվում է հրամանով և մաքսային ծառայողին հաղորդվում է հրամանը տալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, նրանից ստորագրություն վերցնելով: Ստորագրություն տալուց հրաժարվելու դեպքում կազմվում է համապատասխան ակտ:~~

~~Մաքսային ծառայողների նկատմամբ սույն օրենքով նախատեսված «Հատուկ կոչման իջեցում, բայց երկու աստիճանից ոչ ավելի» կարգապահական տույժը կարող է կիրառել կոմիտեի ղեկավարը միայն մեկ անգամ:~~

~~«Մաքսային ծառայողի պաշտոնի իջեցում, բայց մեկ աստիճանից ոչ ավելի» կարգապահական տույժը մաքսային ծառայողների նկատմամբ կարող է կիրառել կոմիտեի ղեկավարը միայն մեկ անգամ:~~

Հոդված 45. Մաքսային ծառայողի նյութական պատասխանատվությունը

1. ~~Սույն օրենքի 24-րդ հոդվածի առաջին մասով սահմանված պարտականությունները չկատարելու (ոչ պատշաճ կատարելու) համար, եթե դրա արդյունքում~~ **Մաքսային ծառայողի կոմից պարտականությունները ոչ պատշաճ կատարելու արդյունքում** տեղի է ունեցել մաքսային վճարների գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա գումարների ավելի կամ թերի հաշվարկում (առաջադրում)՝ 100.000 դրամ և ավելի չափով, մաքսային ծառայողը (ծառայողները)՝

1) վճարում է (են) տուգանք՝ ավելի կամ թերի հաշվարկված (առաջադրված) գումարի 10 տոկոսի չափով, եթե խախտման հետևանքով բյուջե վճարման ենթակա ավելի կամ թերի հաշվարկված գումարը կազմում է 100.000-ից մինչև 500.000 դրամ և (կամ) իջեցվում պաշտոնից.

2) վճարում է (են) տուգանք՝ ավելի կամ թերի հաշվարկված (առաջադրված) գումարի 10-ից մինչև 25 տոկոսի չափով, եթե խախտման հետևանքով բյուջե վճարման ենթակա ավելի կամ թերի հաշվարկված գումարը կազմում է 500.000-ից մինչև 1000.000 դրամ և (կամ) իջեցվում պաշտոնից.

3) վճարում է (են) տուգանք՝ ավելի կամ թերի հաշվարկված (առաջադրված) գումարի 25-ից մինչև 50 տոկոսի չափով, եթե խախտման հետևանքով բյուջե վճարման ենթակա ավելի կամ թերի հաշվարկված գումարը կազմում է 1000.000 դրամից ավելի~~, և (կամ) իջեցվում պաշտոնից կամ ազատվում~~ **ազատվում է** մաքսային ծառայությունից:

~~2. Սույն օրենքի 24-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ և 6-րդ կետերով սահմանված պարտականությունները չկատարելու համար մաքսային ծառայողը (ծառայողները)՝~~

~~1) առաջին անգամ ստանում է (են) խիստ նկատողություն և (կամ) իջեցվում հատուկ կոչումից.~~

~~2) խիստ նկատողություն ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, համանման խախտում կատարելու դեպքում վճարում է (են) տուգանք՝ ամսական միջին վաստակի մինչև 50 տոկոսի չափով, կամ ազատվում է (են) մաքսային ծառայությունից:~~

~~3. Սույն օրենքի 24-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ, 4-րդ, 8-րդ և 9-րդ կետերով սահմանված պարտականությունները չկատարելու կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չկատարելու համար մաքսային ծառայողը (ծառայողները)՝~~

~~1) առաջին անգամ ստանում է (են) նկատողություն.~~

~~2) նկատողություն ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, համանման խախտում կատարելու համար վճարում է (են) տուգանք՝ ամսական միջին վաստակի մինչև 40 տոկոսի չափով, կամ ազատվում է (են) մաքսային ծառայությունից:~~

~~4. Սույն օրենքի 24-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով սահմանված պարտականությունները չկատարելու համար մաքսային ծառայողը (ծառայողները)՝~~

~~1) ստանում է (են) նկատողություն, եթե խախտումը տեղի է ունեցել մաքսային ծառայողի (ծառայողների) անզգուշությամբ.~~

~~2) վճարում է (են) տուգանք ամսական միջին վաստակի մինչև 40 տոկոսի չափով, եթե խախտումը տեղի է ունեցել դիտավորյալ.~~

~~3) նկատողությունն ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, երկու և ավելի անգամ համանման խախտում կատարելու դեպքում իջեցվում կամ զրկվում է (են) հատուկ կոչումից կամ իջեցվում պաշտոնից կամ ազատվում մաքսային ծառայությունից:~~

4[1]. Մաքսային ծառայողը պարտավոր է հատուցել իր պատճառած իրական վնասը: Չստացված օգուտները մաքսային ծառայողից չեն կարող գանձվել:

Իրական վնասը մաքսային մարմնի գույքի առկա կորուստն է, պակասելը կամ այդ գույքի վնասվածքը (այդ թվում՝ երրորդ անձանց գույքը, որը գտնվում է այդ գույքի պահպանության համար պատասխանատվություն կրող մաքսային մարմիններում):

Մաքսային ծառայողը կրում է նյութական պատասխանատվություն ինչպես մաքսային մարմիններին անմիջական իրական վնաս հասցնելու համար, այնպես էլ այն վնասի համար, որը մաքսային մարմինը հատուցել է այլ անձանց, որոնց վնաս է պատճառվել մաքսային ծառայողի գործողությունների կամ անգործության հետևանքով:

Մաքսային ծառայողը նյութական պատասխանատվության չի ենթարկվում, եթե վնասն առաջացել է անհաղթահարելի ուժի, ծայրահեղ անհրաժեշտության կամ անհրաժեշտ պաշտպանության հետևանքով:

Մաքսային մարմինը, հաշվի առնելով կոնկրետ իրադրությունը, որի ընթացքում պատճառվել է վնասը, իրավունք ունի հրաժարվել (լրիվ կամ մասնակի) մեղավոր մաքսային ծառայողից վնասը գանձելուց:

Վնաս պատճառելու համար մաքսային ծառայողը կրում է նյութական պատասխանատվություն իր ամսական միջին աշխատավարձի չափով:

Պատճառված վնասի նյութական պատասխանատվությունն ամբողջությամբ դրվում է մաքսային ծառայողի վրա, եթե՝

1) նյութական վնասը պատճառվել է նրա աշխատանքային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով, և վնասի հատուցումը նախատեսված է սույն օրենքով կամ Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով.

2) վնասը պատճառվել է դիտավորությամբ.

3) վնասը պատճառվել է ոչ սթափ վիճակում.

4) վնասը պատճառվել է մաքսային ծառայողի հանցավոր գործողությամբ, որը հաստատվել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով.

5) վնասը պատճառվել է վարչական զանցանքի պատճառով, ինչը հաստատել է համապատասխան պետական մարմինը.

6) վնասը պատճառվել է օրենքով պաշտպանվող ծառայողական, առևտրային, բանկային կամ այլ գաղտնիքը հրապարակելու կամ երրորդ անձանց տրամադրելու հետևանքով.

7) վնասը պատճառվել է մաքսային ծառայողի կողմից ոչ աշխատանքային պարտականությունները կատարելիս:

5. Սույն հոդվածով նախատեսված տուգանքները վճարվում են մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդ, իսկ պատասխանատվության միջոցները կիրառվում են կատարված խախտումների փաստերը ծառայողական քննությամբ հաստատվելուց հետո՝ կոմիտեի ղեկավարի հրամանով:

Հոդված 46. Կոմիտեի ծառայողական քննության հանձնաժողովը

1. Կոմիտեի ծառայողական քննություններ անցկացնող հանձնաժողովը, ~~կոմիտեի սահմանած կարգով~~ **«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով**, անցկացնում է ծառայողական քննություններ և դրանց արդյունքների վերաբերյալ կոմիտեի ղեկավարին ներկայացնում է եզրակացություններ:

~~1[1]. Ծառայողական քննությունը սույն օրենքով և կոմիտեի կողմից սահմանված կարգով իրականացվող գործունեություն է, որի խնդիրներն են՝~~

~~1) բացահայտել կարգապահական իրավախախտում կամ վարքագծի (էթիկայի) կանոնների խախտում կատարած մաքսային ծառայողին.~~

~~2) ապացուցել նրա մեղավորությունը կարգապահական իրավախախտման կամ վարքագծի (էթիկայի) կանոնների խախտման մեջ.~~

~~3) հայտնաբերել կարգապահական իրավախախտում կամ վարքագծի (էթիկայի) կանոնների խախտում ծնող պատճառներն ու դրանց նպաստող պայմանները և միջոցներ ձեռնարկել դրանց վերացման ուղղությամբ:~~

2. Կոմիտեի ծառայողական քննություններ անցկացնող հանձնաժողովի անհատական կազմը հաստատում է կոմիտեի ղեկավարը՝ Կառավարության սահմանած կարգով առաջարկված թեկնածուներից:

~~**Հոդված 46[1]. ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**~~

~~***(վերնագիրը փոփ. 23.03.18 ՀՕ-263-Ն)***~~

~~Կոմիտեի ծառայողական քննության հանձնաժողովն իրավունք ունի՝~~

~~1) բացատրություններ վերցնել կարգապահական պատասխանատվության ենթարկվող անձից, վկաներից և տուժողներից.~~

~~2) պետական, տեղական ինքնակառավարման մարմիններից, ֆիզիկական և իրավաբանական անձանցից պահանջել փաստաթղթեր և նյութեր, տվյալներ, որոնք կարող են տեղեկություններ պարունակել զանցանքի և դրանց առնչվող անձանց մասին.~~

~~3) պահանջել կատարելու ստուգողական գործողություններ և վերաստուգումներ.~~

~~4) նշանակել փորձաքննություններ.~~

~~5) վերցնել գործի համար էական նշանակություն ունեցող իրեր և փաստաթղթեր.~~

~~6) կատարել իրերի և փաստաթղթերի զննում.~~

~~7) հրավիրել անձանց՝ որպես վկա և տուժող.~~

~~8) անհրաժեշտության դեպքում ժամանակավորապես դադարեցնել անձի ծառայողական լիազորությունները՝ հիմնական աշխատավարձի պահպանմամբ, եթե հիմքեր կան ենթադրելու, որ պաշտոնում մնալով՝ նա կխոչընդոտի ծառայողական քննության օրինական ընթացքին:~~

~~1. Կոմիտեի ծառայողական քննության հանձնաժողովը պարտավոր է՝~~

~~1) կատարել բազմակողմանի, անաչառ և լրիվ քննություն.~~

~~2) լուծել միջնորդությունները.~~

~~3) բացատրել կարգապահական պատասխանատվության ենթարկվող անձի, վկայի, տուժողի, փորձագետի իրավունքները և պարտականությունները.~~

~~4) անցկացված ծառայողական քննության արդյունքների հիման վրա տալ եզրակացություն:~~

~~*(46[1]-րդ հոդվածը լրաց. 11.04.03 ՀՕ-539-Ն, 18.11.09 ՀՕ-212-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-263-Ն)*~~

~~**Հոդված 46[2].** **ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎՈՂ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**~~

-

~~1. Կարգապահական պատասխանատվության ենթարկվող անձն իրավունք ունի իմանալ, թե ինչու է մեղադրվում, ծանոթանալ իր իրավունքներին և պարտականություններին, կարգապահական վարույթի ավարտման պահից ծանոթանալ գործի նյութերին, հարուցել միջնորդություններ, ստանալ իրավական օգնություն:~~

~~2. Կարգապահական պատասխանատվության ենթարկվող անձը պարտավոր է ժամանակին ներկայանալ վարույթ իրականացնող մարմնի կանչով, տալ ճշմարտացի բացատրություններ:~~

Հոդված 47. Մաքսային մարմնի ղեկավարի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը ծառայողական կարգուկանոնի պահպանման գործում

Կարգապահության համար պատասխանատու են՝

1) կոմիտեում՝ ղեկավարը, ղեկավարի տեղակալները և ստորաբաժանումների ղեկավարները.

2) մաքսատներում՝ մաքսատան պետը, նրա տեղակալը (տեղակալները) և ստորաբաժանումների ղեկավարները.

3) մաքսային կետերում՝ մաքսակետի պետը, նրա տեղակալը և ստորաբաժանումների ղեկավարները:

Մաքսային մարմնի և նրա ստորաբաժանումների ղեկավարները պարտավոր են՝

1) ենթակաների համար ստեղծել ծառայության հանգստի ~~և որակավորման բարձրացման~~ համար անհրաժեշտ պայմաններ.

2) ենթակաների մոտ դաստիարակել պատասխանատվության զգացում ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ.

3) ենթակաների ծառայողական գործունեությունը վերադասի մոտ գնահատելիս լինել օբյեկտիվ և ապահովել անհրաժեշտ հրապարակայնություն.

4) բացառել հովանավորչությունն անձնակազմի հետ աշխատելիս.

5) բացառել մաքսային ծառայողի հետապնդումներն անձնական բնույթի շարժառիթներով կամ տվյալ ծառայությունում առկա թերությունների վերաբերյալ արտահայտած քննադատության համար.

6) հետամուտ լինել իրենց ենթակաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար:

Մաքսային մարմինների ղեկավարները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն ենթակաների անհատական հատկանիշների ուսումնասիրմանը, սույն օրենքով սահմանված փոխհարաբերությունների պահպանմանը, անձնակազմի համախմբմանը, ժամանակին հայտնաբերեն ենթակաների կատարած զանցանքների պատճառները,

նախազգուշացնեն նրանց, կարգազանցների նկատմամբ դրսևորեն անհանդուրժողական վերաբերմունք:

Հոդված 48. Մաքսային ծառայության պաշտոնից ազատելու հիմքերը

1. Մաքսային ծառայողի ծառայությունը դադարում է մաքսային ծառայողի ծառայությունից ազատվելու (ազատելու) կամ նրա զոհվելու (մահանալու) դեպքում:

2. Մաքսային ծառայողին ծառայությունից ազատելու հիմքերն են՝

1) անձնական դիմումը.

2) մաքսային ծառայության պաշտոն զբաղեցնելու՝ սույն օրենքով սահմանված մաքսային ծառայությանառավելագույն տարիքի լրանալը.

3) ***(կետն ուժը կորցրել է 24.12.04 ՀՕ-71-Ն)***

4) հաստիքների կրճատումը կամ մաքսային մարմնի լուծարումը.

5) պետական այլ մարմնում աշխատանքի տեղափոխվելը.

~~6) Հայաստանի Հանրապետության ընտրովի մարմիններում ընտրվելը.~~

6) հանրային պաշտոնում ընտրվելը կամ նշանակվելը.

7) մաքսային ծառայողի առողջական վիճակի կապակցությամբ՝ մաքսային ծառայության համար պիտանիությունը սահմանափակող Հայաստանի Հանրապետության ներքին գործերի հանրապետական մարմնի ռազմաբժշկական հանձնաժողովի տված եզրակացությունը.

8) մաքսային ծառայության պաշտոնի նշանակվելու՝ սույն օրենքով սահմանված կարգը խախտելը.

~~9) ատեստավորման արդյունքներով կամ ատեստավորման արդյունքում կոմիտեի ղեկավարի կայացրած որոշման համաձայն անցկացված վերապատրաստման արդյունքներով զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանությունը որոշելը.~~

9) երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում.

~~9[1]) ատեստավորման ենթակա մաքսային ծառայողի կողմից ատեստացիայի նշանակման ժամկետից սկսած վեց ամսվա ընթացքում ատեստավորմանը չներկայանալը.~~

9[1]) «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու դեպքերում՝ համապատասխան եզրակացության հիման վրա.

10) ծառայողական կարգապահական և վարքագծի (էթիկայի) կանոնները միանգամյա կոպիտ խախտելը կամ ծառայողական կարգապահական ~~և վարքագծի (էթիկայի)~~ կանոնները պարբերաբար խախտելը:

(պարբերությունն ուժը կորցրել է 11.04.03 ՀՕ-539-Ն)

Ծառայողական կարգապահական ~~և վարքագծի (էթիկայի)~~ կանոնների միանգամյա կոպիտ խախտումներ են՝

1) օրենսդրության պահանջների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը, եթե դրա արդյունքում տեղի է ունեցել մաքսային վճարների գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա գումարների ավելի կամ թերի հաշվարկում (առաջադրում) 1.000.000 դրամից ավելի.

2) պետական, բանկային, առևտրային, ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունները հրապարակելը, անձնական նպատակներով օգտագործելը, երրորդ անձանց տրամադրելը, եթե դրանց տրամադրումը նախատեսված չէ օրենքով.

3) առանց հարգելի պատճառների գործալքությունը (այդ թվում՝ աշխատանքային օրվա ընթացքում ավելի քան երեք ժամ աշխատանքից բացակայելը).

4) ոչ սթափ վիճակում, թմրամիջոցներ կամ թունամիջոցներ օգտագործած վիճակում աշխատանքի ներկայանալը.

5) աշխատանքի վայրում գույք հափշտակելը (այդ թվում՝ մանր), անհիմն ծախսեր կատարելը, գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որը հաստատվել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով.

6) աշխատողի կողմից աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելը, եթե այդ խախտումն առաջացրել է կամ կարող էր առաջացնել մարդկանց հետ դժբախտ դեպքեր կամ այլ ծանր հետևանքներ.

~~7) մաքսային ծառայողի կողմից թույլ տրված այնպիսի մեղավոր գործողությունը կամ անգործությունը, որը կոմիտեի ղեկավարի վստահությունը կորցնելու հիմք է տալիս.~~

7) «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված կարգապահական տույժը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելու դեպքում կամ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված կարգապահական տույժերը մեկ տարվա ընթացքում կիրառելու դեպքում կամ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված կարգապահական տույժը կիրառելու դեպքում կամ կոչման իջեցում մեկ աստիճանով կարգապահական տույժը և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված տույժերից որևէ մեկը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելու դեպքում:

8) կոմիտեի տարածաշրջանային մաքսատան ղեկավարի կամ տեղակալի, մաքսային կետի պետի կամ տեղակալի, գլխավոր հաշվապահի կողմից անհիմն որոշում ընդունելը, եթե դա հանգեցրել է մաքսատան կամ մաքսային կետի գույքի անիրավաչափ օգտագործման, գույքի ամբողջականության խախտման կամ այլ վնասի:

Ծառայողական կարգապահական և վարքագծի (էթիկայի) կանոնների պարբերաբար խախտող է համարվում ծառայողական կարգապահության խախտման համար կարգապահական տույժ ստացած այն ծառայողը, ով կրկին խախտել է դա:

Եթե մեկ տարվա ընթացքում մաքսային ծառայողի նկատմամբ կիրառվել է կարգապահական երեք տույժ, ապա մաքսային ծառայողն ազատվում է պաշտոնից:

11) ազատազրկման դատապարտվելը.

12) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելը.

13) ~~սույն~~ օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելը.

14) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելը.

15) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով որոշակի պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկվելը.

16) մաքսային ծառայողի՝ զինվորական ծառայության զորակոչվելը.

17) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով աշխատանքի չներկայանալն ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 140 օր:

18) ***(կետն ուժը կորցրել է 29.11.11 ՀՕ-297-Ն)***

3. Մաքսային ծառայողին պաշտոնից ազատում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

4. Մաքսային ծառայողն ամենամյա հերթական արձակուրդում գտնվելու կամ հիվանդության ժամանակահատվածում չի կարող ազատվել զբաղեցրած պաշտոնից, բացառությամբ սույն հոդվածի երկրորդ մասի 7-րդ կետում նշված դեպքի:

~~5. Սույն հոդվածի երկրորդ մասի 4-րդ և 9-րդ կետերում նշված հիմքերով մաքսային ծառայողն ազատվում է ծառայությունից, եթե սահմանված կարգով իրականացված ատեստավորման արդյունքներով որոշվել է նրա անհամապատասխանությունն զբաղեցրած պաշտոնին, կամ վերջին ատեստավորման արդյունքների ցածր մակարդակով նրան հնարավոր չէ տեղափոխել այլ պաշտոնի:~~

5. Երկու տարի անընդմեջ կատարողականի տարեկան գնահատման արդյունքները Կառավարության սահմանած տոկոսից (միավորից) ցածր լինելու դեպքում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն իրավունք ունի դադարեցնելու մաքսային ծառայողի լիազորությունները:

6. Սույն հոդվածի երկրորդ մասի 7-րդ կետում նշված հիմքով մաքսային ծառայողն ազատվում է ծառայությունից, եթե հնարավոր չէ նրան տեղափոխել առողջական վիճակին համապատասխան այլ ազատ պաշտոնի, կամ եթե տվյալ ծառայողը հրաժարվել է տեղափոխվել այդ պաշտոնին:

7. Հաստիքների կրճատման հետևանքով ծառայությունից առաջիկա ազատման վերաբերյալ մաքսային ծառայողը պետք է տեղեկացվի ազատվելուց առնվազն երկու ամիս առաջ:

8. Մաքսային ծառայությունից ազատվելու դեպքում մաքսային ծառայողը կոմիտե է հանձնում իր ծառայողական վկայականը, իրեն ամրագրված կնիքը, զենքը և պաշտոնեական պարտականությունների կատարման հետ կապված այլ միջոցներ:

9. Սույն հոդվածի երկրորդ մասի 4-րդ և 17-րդ կետերով նախատեսված հիմքերով զբաղեցրած պաշտոնից ազատվել չեն կարող հղի և մինչև երեք տարեկան երեխա խնամող մաքսային ծառայողները:

~~Հոդված 48[1]. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ~~

~~Եթե մաքսային ծառայողը կարգապահական տույժի կիրառման օրվանից մեկ տարվա ընթացքում նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա նա համարվում է կարգապահական տույժի չենթարկված, և դրա համար նոր հրաման չի տրվում:~~

~~Կարգապահական տույժը մինչև մեկ տարին լրանալը կարող է հանել դա կիրառած պաշտոնատար անձը կամ կոմիտեի ղեկավարը, եթե մաքսային ծառայողը թույլ չի տվել աշխատանքային կարգապահության նոր խախտում և իրեն դրսևորել է որպես լավ և բարեխիղճ ծառայող:~~

~~«Հատուկ կոչման իջեցում, բայց 2 աստիճանից ոչ ավելի» կարգապահական տույժ ստացած մաքսային ծառայողի նախկին հատուկ կոչումը վերականգնվում է կոմիտեի ղեկավարի հրամանով, բայց ոչ շուտ, քան կոչումն իջեցնելու օրվանից մեկ տարի հետո, դրական բնութագրման դեպքում:~~

~~«Պաշտոնի իջեցում մեկ աստիճանով» կարգապահական տույժը կարող է հանվել ոչ շուտ, քան պաշտոնի իջեցման օրվանից վեց ամիս անց:~~

~~Կարգապահական տույժի գործողության ընթացքում մաքսային ծառայողի նկատմամբ խրախուսանքի ձև չի կիրառվում, բացառությամբ սույն օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի երկրորդ և հինգերորդ պարբերություններով նախատեսված խրախուսանքների:~~

~~Ժամկետից շուտ հանված կամ ուժը կորցրած կարգապահական տույժը չի կարող հաշվի առնվել մաքսային ծառայողի ազատման ժամանակ և չի կարող նշվել ծառայողական բնութագրում:~~

~~Սույն օրենքով նախատեսված կարգապահական տույժերը տրվում են հրամանով:~~

~~Հոդված 48.2.~~ ~~Մաքսային ծառայողին զբաղեցրած պաշտոնից իջեցնելու հիմքերը~~

~~1. Մաքսային ծառայողին զբաղեցրած պաշտոնից իջեցնելու հիմքերն են՝~~

~~1) ատեստավորման արդյունքում սույն օրենքի 15-րդ հոդվածի 12-րդ մասի 5-րդ կետով սահմանված դեպքը.~~

~~2) սույն օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված կարգապահական պատասխանատվության ենթարկվելը.~~

~~3) սույն օրենքի 45-րդ հոդվածով նախատեսված պաշտոնից իջեցնելու դեպքերը:~~

Հոդված 48.2. Մաքսային ծառայողների էթիկայի հանձնաժողովը

1. Մաքսային ծառայողների էթիկայի հանձնաժողովի ձևավորման, գործունեության կարգը, վարքագծի կանոնները խախտելու և (կամ) հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու և (կամ) շահերի բախման կանոնները, նվերներ ընդունելու արգելքը խախտելու, անհամատեղելիության պահանջները չպահպանելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

2. Մաքսային ծառայության անձնակազմի կառավարման ստորաբաժանումում նախատեսվում է բարեվարքության հարցերով կազմակերպչի քաղաքացիական ծառայության պաշտոն:

Հոդված 49. Մաքսային ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը

1. Մաքսային ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը ~~օրենքով սահմանված տարիքային աշխատանքային կենսաթոշակի տարիքն է~~ **65 տարին է**:

2. Մաքսային ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալու դեպքում, մաքսային ծառայողի ցանկությամբ և տվյալ պաշտոնում նշանակում կատարելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ, մաքսային ծառայողը կարող է մինչև ~~հինգ~~ **մեկ** տարի ժամկետով զբաղեցնել մաքսային ծառայությանպաշտոն:

Հոդված 51. Մաքսային ծառայության կադրերի ռեզերվը

1. Մաքսային ծառայության կադրերի ռեզերվում հետագայում ծառայությունը շարունակելու նպատակով գրանցվում են՝

1) սույն օրենքի 48-րդ հոդվածի երկրորդ մասի 4-րդ կետով նախատեսված հիմքերով մաքսային ծառայությանպաշտոնից ազատված անձինք.

~~2) սույն օրենքի 48-րդ հոդվածի երկրորդ մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով մաքսային ծառայությանպաշտոնից ազատված անձինք՝ ընտրովի մարմիններում իրենց պաշտոնավարման ավարտից հետո.~~

3) սույն օրենքի 48-րդ հոդվածի երկրորդ մասի 17-րդ կետով նախատեսված հիմքերով մաքսային ծառայության պաշտոնից ազատված անձինք.

~~4) մաքսային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացված մրցույթում օրենքով սահմանված կարգով հաղթող ճանաչված, սակայն պաշտոնի չնշանակված անձինք:~~

2. Մաքսային ծառայության կադրերի ռեզերվում մաքսային ծառայողների միանգամյա գտնվելու առավելագույն ժամկետը երեք ամիս է:

Մաքսային ծառայության կադրերի ռեզերվում մաքսային ծառայողները գտնվում են մինչև՝

1) սույն օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասում նշված ժամկետի լրանալը.

~~2) սույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությամբ, 14-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությամբ և 14-րդ հոդվածի 3.1-րդ մասով սահմանված կարգով մաքսային ծառայության թափուր պաշտոնի նշանակվելը.~~

3) Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարումը.

~~4) սույն օրենքի 9-րդ և 25-րդ հոդվածների պահանջների խախտման հիմքերի առաջացումը.~~

4) «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով սահմանված հիմքերի առաջացումը և (կամ) 32-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները չպահպանելը:

5) մաքսային ծառայության կադրերի ռեզերվից դուրս գալու մասին քաղաքացու դիմումի հիման վրա կոմիտեի ղեկավարի կողմից համապատասխան որոշման ընդունումը:

~~3. Մաքսային ծառայության կադրերի ռեզերվում գրանցելու և ռեզերվից հանելու կարգը հաստատում է Կառավարությունը:~~

3. Մաքսային ծառայության կադրերի ռեզերվի վարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

Հոդված 40. Անցումային դրույթներ

Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը մաքսային ծառայողի ծառայության ժամկետը օրենքով սահմանված կարգով երկարացված լինելու դեպքում մաքսային ծառայողը շարունակում է զբաղեցնել մաքսային ծառայության պաշտոնը մինչև ժամկետի ավարտը:

Հոդված 41. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի ապրիլի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2005 թվականի հուլիսի 8-ին

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

~~Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան~~

~~Սույն օրենքը կարգավորում է արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում խնդիրներ իրականացնող՝ Փրկարար ծառայության գործունեության հիմնական սկզբունքները, այդ մարմնում ծառայությունը, պաշտոնները և կոչումները, ծառայության անցնելու կարգն ու պայմանները, պաշտոնի նշանակման և կոչումներ շնորհելու կարգը, ծառայության հետ կապված՝ ծառայողների իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, իրավական և սոցիալական երաշխիքները, ծառայության հետ կապված այլ առանձնահատկություններն ու հիմնական հարաբերությունները:~~

Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում խնդիրներ իրականացնող՝ Փրկարար ծառայության գործունեության հիմնական սկզբունքները և փրկարարական ծառայության՝ որպես պետական ծառայության առանձին տեսակի առանձնահատկությունները:

~~Հոդված 3. Փրկարար ծառայության գործունեության իրավական կարգավորումը~~

~~Փրկարար ծառայության գործունեությունը կարգավորվում է Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով ու իրավական ակտերով:~~

Հոդված 3. Փրկարար ծառայության գործունեության իրավական կարգավորումը

1. **Փրկարար ծառայության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն օրենքով, «Հանրային ծառայության մասին» օրենքով, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով ու իրավական ակտերով:**

2. Փրկարարական ծառայողների աշխատանքային հարաբերություններին վերաբերող հարցերը, որոնք կարգավորված չեն սույն օրենքով կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով և «Հանրային ծառայության մասին» օրենքով:
3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավական ակտերով այդ հարաբերությունները կարգավորված չլինելու դեպքում դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ:
4. Փրկարարական ծառայողների բարեվարքության համակարգի և այս իրավակարգավորումներից բխող այլ հարաբերություններ, որոնք պարտադիր են փրկարարական ծառայողների համար, կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով:

Հոդված 7. Փրկարար ծառայության համակարգը, կառուցվածքը և ղեկավարումը

1. Փրկարար ծառայության անմիջական ղեկավարումն իրականացնում է ծառայության տնօրենը:

2. Փրկարար ծառայության համակարգում գործում են ~~գրասենյակը և~~ կառուցվածքային ստորաբաժանումներ:

Հոդված 11. Ծառայությունը Փրկարար ծառայությունում

~~1. Փրկարար ծառայությունում ծառայությունը (այսուհետ՝ փրկարարական ծառայություն) պետական ծառայության հատուկ տեսակ է, որի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով:~~

~~1.1. Համապատասխան նախարարության համակարգում գործող ուսումնական հաստատությունում, այլ պետական ոչ առևտրային կազմակերպություններում, փակ բաժնետիրական ընկերություններում և ստորաբաժանումներում՝~~

~~ա) փրկարարական ծառայության գործուղված հաստիքների քանակը սահմանվում է սույն օրենքի 7-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված կարգով.~~

~~բ) փրկարարական ծառայությունը կազմակերպվում է նաև սույն օրենքի 7-րդ հոդվածի 1.1-ին մասի համաձայն՝ պայմանագրային հիմունքներով ծառայություններ մատուցող և այդ ծառայությունների դիմաց ստացվող միջոցներից ֆինանսավորվող փրկարարական ծառայության հաստիքների հատկացված քանակի սահմաններում:~~

~~2. Փրկարար ծառայությունում, առանձին ստորաբաժանումների առանձնահատկություններից ելնելով, առանձին պաշտոններում կարող են նշանակվել (աշխատանքի ընդունվել) քաղաքացիական ծառայողներ՝ քաղաքացիական ծառայության հարաբերությունները կարգավորող օրենսդրությանը համապատասխան:~~

~~3. Փրկարարական ծառայությունն իրականացվում է օրինականության, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության և հրապարակայնության սկզբունքների պահպանմամբ՝ միանձնյա և կենտրոնացված ղեկավարման միջոցով:~~

1. Նախարարության հաստիքների առավելագույն քանակը որոշում է վարչապետը, այդ թվում պայմանագրային հիմունքներով ծառայություններ մատուցող փրկարարական ծառայության հաստիքների:

2. Փրկարարական ծառայությունն իրականացվում է օրինականության, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության և հրապարակայնության սկզբունքների պահպանմամբ՝ միանձնյա և կենտրոնացված ղեկավարման միջոցով:

Հոդված 12. Փրկարարական ծառայության ծառայողը

1. Փրկարարական ծառայության ծառայող է համարվում **փրկարարական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող** Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որն ~~զբաղեցնում է սույն օրենքի 13-րդ հոդվածով սահմանված որևէ խմբի պաշտոն և~~ ունի սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված կոչում ու տվել է երդում կամ սույն օրենքով սահմանված կարգով գտնվում է կադրերի ռեզերվում:

2. Փրկարարական ծառայության ծառայողը (այսուհետ՝ ծառայող) պետական ծառայող է:

~~**Հոդված 13. Փրկարարական ծառայության պաշտոնների խմբերը և փրկարար ծառայության պաշտոնների անվանացանկը**~~

~~***(վերնագիրը լրաց. 11.06.14 ՀՕ-62-Ն)***~~

~~1. Փրկարարական ծառայության պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.~~

~~ա) փրկարարական ծառայության բարձրագույն պաշտոններ՝~~

~~- Փրկարար ծառայության ղեկավար,~~

~~- Փրկարար ծառայության ղեկավարի տեղակալ,~~

~~- կենտրոնական ապարատի վարչության պետ.~~

~~բ) փրկարարական ծառայության գլխավոր պաշտոններ՝~~

~~- կենտրոնական ապարատի առանձին բաժնի պետ,~~

~~- կենտրոնական ապարատի վարչության պետի տեղակալ, տարածքային, ներառյալ՝ Երևան քաղաքի, վարչության պետ, կենտրոնական ապարատի վարչության բաժնի պետ,~~

~~- հատուկ փրկարարական ջոկատի հրամանատար, հատուկ հրշեջ ջոկատի հրամանատար.~~

~~գ) փրկարարական ծառայության ավագ պաշտոններ՝~~

~~- տարածքային, ներառյալ՝ Երևան քաղաքի, վարչության պետի տեղակալ, հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար,~~

~~- բաժնի պետ,~~

~~- հատուկ փրկարարական ջոկատի հրամանատարի տեղակալ, հատուկ հրշեջ ջոկատի հրամանատարի տեղակալ, հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատարի տեղակալ,~~

~~- լաբորատորիայի պետ.~~

~~դ) փրկարարական ծառայության միջին պաշտոններ՝~~

~~- խմբի պետ, ջոկի հրամանատար,~~

~~- ավագ փրկարար.~~

~~ե) փրկարարական ծառայության կրտսեր պաշտոն՝~~

~~- փրկարար:~~

~~Փրկարար ծառայության պաշտոնների առանձին խմբերում ընդգրկվող հիմնական պաշտոնների, ինչպես նաև այդ պաշտոններին հավասարեցված պաշտոնների անվանացանկը սահմանում է Կառավարությունը:~~

~~2. Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության համապատասխան նախարարությունների համակարգերում զինվորական ծառայության հիմնական պաշտոնների, քրեակատարողական և փրկարար ծառայությունների հիմնական պաշտոնների միջև համապատասխանությունը սահմանում է Կառավարությունը:~~

Հոդված 13. Փրկարարական ծառայության պաշտոնների խմբերը և փրկարար ծառայության պաշտոնների անվանացանկը

1. Փրկարարական ծառայության պաշտոնները դասակարգվում են խմբերի՝ ելնելով այդ պաշտոնները զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, գործունեության ազդեցության, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց լուծման, ինչպես նաև մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների տեսանկյունից ներկայացվող պահանջներից:

2. Փրկարարական ծառայության պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի՝

ա) փրկարարական ծառայության բարձրագույն պաշտոններ,

բ) փրկարարական ծառայության գլխավոր պաշտոններ,

գ) փրկարարական ծառայության ավագ պաշտոններ,

դ) փրկարարական ծառայության միջին պաշտոններ,

ե) փրկարարական ծառայության կրտսեր պաշտոն,

3. Փրկարարական ծառայության պաշտոնների խմբերում պաշտոնների դասակարգումն իրականացվում է փրկարար ծառայության պաշտոնների անվանացանկով, որը հաստատվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով: Փրկարար ծառայության ղեկավարը և տեղակալները համարվում են պետական վարչական պաշտոն զբաղեցնող անձինք, որոնց պաշտոնները չեն ներառվում փրկարար ծառայության պաշտոնների անվանացանկում:

4. Փրկարարական ծառայության տնօրենի և տնօրենի տեղակալի պաշտոնները պետական վարչական պաշտոններ են, սակայն նրանց ծառայության ստաժը հաշվարկվում է փրկարարական ծառայության ստաժում:

5. Փրկարարական ծառայության ծառայողների ստաժի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքներով:

6. Սույն օրենքը փրկարար ծառայության տնօրենի և նրա տեղակալների վրա տարածվում է միայն սույն օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում:

7. Պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոնների, քրեակատարողական և փրկարար ծառայությունների պաշտոնների միջև համապատասխանությունը սահմանում է կառավարությունը:

Հոդված 14. Փրկարարական ծառայության կոչումները

1. Փրկարարական ծառայության կոչումները դասակարգվում են հետևյալ խմբերի.
ա) փրկարարական ծառայության բարձրագույն կոչումներ՝
- փրկարարական ծառայության գեներալ-լեյտենանտ,
- փրկարարական ծառայության գեներալ-մայոր.
բ) փրկարարական ծառայության գլխավոր կոչում՝
- փրկարարական ծառայության գնդապետ.
գ) փրկարարական ծառայության ավագ կոչումներ՝
- փրկարարական ծառայության փոխգնդապետ,
- փրկարարական ծառայության մայոր.
դ) փրկարարական ծառայության միջին կոչումներ՝
- փրկարարական ծառայության կապիտան,
- փրկարարական ծառայության ավագ լեյտենանտ,
- փրկարարական ծառայության լեյտենանտ.
ե) փրկարարական ծառայության կրտսեր կոչումներ՝
- փրկարարական ծառայության ավագ ենթասպա,
- փրկարարական ծառայության ենթասպա,
- փրկարարական ծառայության ավագ,
- փրկարարական ծառայության ավագ սերժանտ,
- փրկարարական ծառայության սերժանտ,
- փրկարարական ծառայության կրտսեր սերժանտ,
- փրկարարական ծառայության շարքային:

~~2. Փրկարարական ծառայության բարձրագույն կոչումներ շնորհում է Հայաստանի Հանրապետության Նախագահը:~~

2. Փրկարարական ծառայության տնօրենին և նրա տեղակալներին շնորհվում են փրկարարական ծառայության գեներալ-լեյտենանտ և փրկարարական ծառայության գեներալ-մայոր կոչումները: Փրկարարական ծառայության գեներալ-լեյտենանտ և գեներալ-մայոր կոչումները շնորհում է վարչապետը:

3. Փրկարարական ծառայության գլխավոր, ավագ, միջին կոչումներ շնորհում է համապատասխան նախարարը:

4. Փրկարարական ծառայության կրտսեր կոչումներ շնորհում է Փրկարար ծառայության տնօրենը:

5. Փրկարար ծառայության մարմնի կոչումները շնորհվում են հերթականության կարգով, տվյալ կոչումով ծառայելու ժամկետը լրանալուց հետո՝ ծառայողի զբաղեցրած պաշտոնին համապատասխան, բացառությամբ սույն օրենքով նախատեսված այլ դեպքերի: Համապատասխան նախարարության ուսումնական հաստատությունների սովորողներին, ասպիրանտներին կոչումներ շնորհվում են ուսումնառության անցնելուց առաջ զբաղեցրած պաշտոնին համապատասխան:

6. Փրկարարական ծառայության կոչումները շնորհվում են անհատական կարգով՝ ցմահ:

7. Փրկարարական ծառայությունը սույն օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի «բ», «գ», «դ», «ե» և «ժա» կետերի հիմքով դադարեցրած ծառայողի կոչմանն ավելացվում է «պաշտոնաթող» բառը:

Հոդված 28. Փրկարարական կոչումը վերականգնելը

1. Նախկին փրկարարական կոչումը վերականգնում է փրկարարական կոչումը շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը՝ կոչումից զրկված անձանց դատվածության հանման կամ մարման ~~, ինչպես նաև համապատասխան նախարարի կողմից ստեղծված ատեստացիոն հանձնաժողովի որոշման առկայության~~ դեպքերում:

2. Փրկարարական կոչումը վերականգնելու վերաբերյալ զեկուցագրերը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ատեստացիոն հանձնաժողովը քննարկում է ստանալու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում: Դրական հիմքերի առկայության դեպքում հանձնաժողովը նախապատրաստում է փրկարարական կոչումը վերականգնելու վերաբերյալ միջնորդագիր, որին ընթացք է տրվում կոչում շնորհելու ներկայացման համար սահմանված կարգով:

3. Անօրինական դատապարտված քաղաքացիների նախկին փրկարարական կոչումը վերականգնվում է փրկարարական կոչումից զրկվելու օրվանից՝ արդարացման որոշումն ուժի մեջ մտնելուց հետո:

Հոդված 29. Փրկարարական ծառայությունում ծառայության անցնելու համար ներկայացվող պահանջները, մրցույթը

~~1. Փրկարարական ծառայությունում ծառայության կարող է անցնել մինչև 35 տարեկան Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որն անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ՝ կանանց և սույն օրենքի 32-րդ հոդվածի տասներորդ մասով նախատեսված դեպքերի), տիրապետում է հայերենին, իր գործնական, անձնական, բարոյական հատկանիշներով, կրթությամբ, առողջական վիճակով և ֆիզիկական պատրաստականությամբ ունակ է կատարելու փրկարարական ծառայողի պարտականությունները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:~~

1 Սույն օրենքով սահմանված կարգով փրկարարական ծառայությունում ծառայության անցնելու իրավունք ունեն փրկարարական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ովքեր անցել են պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի կամ այն քաղաքացիների, ովքեր օրենքով նախատեսված կարգով և հիմքով ազատվել են պարտադիր զինվորական ծառայությունից) և դիմելու պահին չի լրացել վերջիններիս 35 տարին՝ բացառությամբ սույն օրենքի 32-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքի: Փրկարար ծառայության պաշտոնի անձնագիրը (աշխատատեղի նկարագիր) փրկարար ծառայության իրավասությունը սահմանող իրավական ակտերից և խնդիրներից բխող փրկարար ծառայողի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրող և այդ գործառույթները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ ու կոմպետենցիաներ նախատեսող, կառավարման համակարգում տեղակայվածությունը նախատեսող և սույն օրենքով սահմանված կարգով հաստատված փաստաթուղթ է:»:

~~2. Փրկարարական ծառայողին ներկայացվող մասնագիտական, ֆիզիկական պատրաստվածության, առողջական վիճակի հետ կապված պահանջները սահմանում է կառավարությունը:~~

3. Առանձին մասնագիտություններով փրկարարական ծառայության անցնելու համար կարող են սահմանվել այլ (այդ թվում՝ տարիքային) պահանջներ: Այդ մասնագիտությունների ցանկը և դրանց համար նախատեսված պահանջները սահմանում է ~~կառավարությունը~~ **հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը**:

~~4. Փրկարարական ծառայությունում թափուր պաշտոն առաջանալու դեպքում ծառայության կարող են ընդունվել զինված ուժերի, ազգային անվտանգության, ոստիկանության լիազոր մարմինների ծառայողներ, այդ թվում՝ փրկարարական ծառայությունից այլ մարմիններ տեղափոխված կամ ազատված ծառայողներ:~~

~~5. Փրկարարական ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին, որը՝~~

~~ա) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.~~

~~բ) դատական կարգով զրկվել է քաղաքացիական կամ այլ ծառայությունում պաշտոն զբաղեցնելու իրավունքից.~~

~~գ) դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար.~~

~~դ) անցել է այլընտրանքային զինվորական ծառայություն.~~

~~ե) չի համապատասխանում սույն հոդվածի առաջին մասով սահմանված պահանջներին:~~

4. Փրկարարական ծառայությունում թափուր պաշտոն առաջանալու դեպքում մրցույթին կարող են մասնակցել զինված ուժերի, ազգային անվտանգության, ոստիկանության լիազոր մարմինների ծառայողներ, այդ թվում՝ փրկարարական ծառայությունից այլ մարմիններ տեղափոխված կամ ազատված ծառայողներ, եթե բավարարում են տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները:

5. Փրկարար ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին, ով անցել է այլընտրանքային զինվորական ծառայություն և (կամ) առկա է «Հանրային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը:

6. Բացառությամբ փրկարարական ծառայության ղեկավարի, նրա տեղակալների և սույն օրենքի 32-րդ հոդվածի 7-րդ և 8.1-ին մասերով սահմանված դեպքերի՝ մյուս փրկարարական ծառայողները ծառայության անցնում են մրցույթի արդյունքներով: Մրցույթի ժամանակ ստուգվում է մասնակցի մասնագիտական և ֆիզիկական պատրաստվածությունը: Մրցույթի անցկացման եղանակները և կարգը սահմանում է կառավարությունը:

7. Մրցույթին չեն կարող մասնակցել այն քաղաքացիները, ովքեր չեն բավարարում սույն օրենքի 32-րդ և 63-րդ հոդվածների պահանջները:

8. Փրկարարական ծառայողների առաջխաղացումն իրականացվում է սույն օրենքով սահմանված մրցույթի արդյունքների հիման վրա:

Հոդված 31. Ծառայողին պաշտոնի նշանակելը

1. Փրկարարական ծառայության վարչությունների պետերին, գլխավոր, ավագ, միջին պաշտոնների խմբերի ծառայողներին Փրկարար ծառայության տնօրենի առաջարկությամբ պաշտոնի նշանակում (ծառայության ընդունում) և պաշտոնից ազատում է համապատասխան նախարարը:

2. Փրկարարական ծառայության կրտսեր պաշտոնների խմբի ծառայողներին պաշտոնի նշանակում, պաշտոնից ազատում և փոխադրում է Փրկարար ծառայության տնօրենը՝ անմիջական ղեկավարի առաջարկությամբ:

3. Փրկարարական ծառայության պաշտոն զբաղեցնող ծառայողների համար Փրկարար ծառայության կադրային մարմինը վարում է ծառայողի անձնական գործ: Անձնական գործը վարվում է ծառայողի զինվորական գործի հիման վրա, որը կադրային մարմնի հարցման դեպքում տրամադրում է համապատասխան զինկոմիսարիատը: Փրկարարական ծառայությունից ազատվելու դեպքում գործն ուղարկվում է համապատասխան զինկոմիսարիատ՝ հետագա հաշվառման համար:

4. Փրկարարական ծառայության պաշտոն զբաղեցնող ծառայողների համար Փրկարար ծառայության կադրային ստորաբաժանումը վարում է ծառայողի անձնական գործ: Անձնական գործը վարելու կարգը և առանձնահատկությունները սահմանում է հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը:

Հոդված 32. Ծառայողին պաշտոնի նշանակելու պայմանները

1. Փրկարար ծառայության ղեկավար նշանակվում է փրկարարական ծառայության այն ծառայողը, որը մինչև նշանակումը զբաղեցրել է **փրկարար ծառայության ղեկավարի տեղակալի պաշտոն,** փրկարարական ծառայության բարձրագույն կամ վերջին հինգ տարիներին՝ գլխավոր խմբի պաշտոն և ունի փրկարարական ծառայության գնդապետից ոչ ցածր կոչում:

2. Փրկարար ծառայության ղեկավարի տեղակալ կարող է նշանակվել փրկարարական ծառայության այն ծառայողը, որը նշանակման պահին զբաղեցնում է **փրկարար ծառայության ղեկավարի պաշտոն,** փրկարարական ծառայության բարձրագույն խմբի պաշտոն կամ վերջին հինգ տարին զբաղեցրել է գլխավոր խմբի պաշտոն և ունի փրկարարական ծառայության գնդապետից ոչ ցածր կոչում:

2.1. Փրկարար ծառայության կենտրոնական ապարատի վարչության պետ կարող է նշանակվել փրկարարական ծառայության այն ծառայողը, որը նշանակման պահին զբաղեցնում է **փրկարար ծառայության ղեկավարի կամ տեղակալի պաշտոն,** բարձրագույն խմբի պաշտոն կամ մեկ տարի զբաղեցրել է գլխավոր խմբի պաշտոն **և ունի փրկարարական ծառայության փոխգնդապետից ոչ ցածր կոչում**:

~~3. Փրկարարական ծառայության վարչությունների պետերի, գլխավոր, ավագ, միջին խմբերի պաշտոնների համար կազմվում է պաշտոնի անձնագիր, որը հաստատում է համապատասխան նախարարը:~~

3. Փրկարարական ծառայության պաշտոնների համար կազմվում է պաշտոնի անձնագիր, որը «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով հաստատվում է լիազոր մարմնի ղեկավարի կողմից:

4. ~~Ատեստավորումից հետո~~ փրկարարական ծառայության գլխավոր խմբի պաշտոններում կարող են նշանակվել այն ծառայողները, որոնք մինչև նշանակումը վերջին երկու տարում զբաղեցրել են փրկարարական ծառայության գլխավոր խմբի այլ պաշտոն կամ երեք տարի՝ ավագ խմբի պաշտոն **և ունի փրկարարական ծառայության մայորից ոչ ցածր կոչում**: Գլխավոր խմբի պաշտոններում կարող է նշանակվել նաև **փրկարար ծառայության ղեկավարի կամ տեղակալի կամ** բարձրագույն խմբի պաշտոն զբաղեցրած ծառայողը:

5. Փրկարարական ծառայության ավագ և միջին խմբերի պաշտոններում ծառայողների առաջխաղացումը կատարվում է ~~ատեստավորման արդյունքում՝~~ տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո:

~~6. Փրկարարական ծառայության կրտսեր խմբի պաշտոններում նշանակումները կատարվում են ուսումնական փորձաշրջանի արդյունքներով, բացառությամբ փրկարարական ծառայությունից նախկինում ազատված և փրկարարական ծառայության ընդունվող ծառայողների:~~

7. Համապատասխան նախարարության կամ այլ բարձրագույն ուսումնական հաստատություններ ավարտած ու ծառայության գործուղված անձինք ~~համարվում են ատեստավորված և~~ նշանակվում են ծառայության միջին խմբից ոչ բարձր պաշտոններում:

8. Փրկարարական ծառայության միջին և ավելի բարձր խմբերի պաշտոններում նշանակումը կատարվում է միայն բարձրագույն կրթության առկայության դեպքում:

8.1. Ուսումնական հաստատություններ, ասպիրանտուրա (ադյունկտուրա), դոկտորանտուրա ավարտած փրկարարական ծառայության ծառայողները նշանակվում են իրենց կրթությանը համապատասխանող հաստիքով նախատեսված փրկարարական ծառայության պաշտոնի, իսկ նման թափուր պաշտոն չլինելու դեպքում՝ ուսման մեկնելուց առաջ զբաղեցրած պաշտոնից ոչ ցածր պաշտոնի:

~~9. Փրկարարական ծառայության կրտսեր խմբի պաշտոններում կարող են նշանակվել սույն օրենքի 29-րդ հոդվածի առաջին մասի պահանջներին համապատասխանող, առնվազն միջնակարգ կրթություն ունեցող (բացառությամբ քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումներում ծառայության ընդունվողների) այն քաղաքացիները, ովքեր համապատասխան նախարարության ուսումնական հաստատությունում սահմանված կարգով անցել են առնվազն եռամսյա ուսումնական փորձաշրջան: Այս դեպքում քաղաքացիների հետ կնքվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով նախատեսված ժամկետային (ուսումնական փորձաշրջանի ժամկետով) աշխատանքային պայմանագիր, և վճարվում է տվյալ պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափ:~~

9. Փրկարարական ծառայությունում պաշտոնի նշանակվելու համար դիմած և ծառայությունում պաշտոն զբաղեցնելու համար սույն հոդվածով սահմանված պահանջները բավարարող, առնվազն միջնակարգ կրթություն ունեցող (բացառությամբ՝ քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումներում ծառայության ընդունվողների) աշխատանքային փորձ չունեցող քաղաքացիները, մրցույթը հաղթահարելուց հետո, մինչև պաշտոնի նշանակվելը լիազոր մարմն ուսումնական հաստատությունում ներգրավվում են եռամսյա ուսումնական դասընթացների՝ նրանց պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից: Ուսումնական դասընթացներ անցնող քաղաքացիները ծառայողներ չեն համարվում և նրանց հետ կնքվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով նախատեսված ժամկետային (ուսումնական փորձաշրջանի ժամկետով) աշխատանքային պայմանագիր, և վճարվում է տվյալ պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափով: Ուսումնական դասընթացում ներգրավելու, դասընթաց անցնելու կարգը, պայմանները և դասընթացի ավարտից հետո պաշտոնի նշանակման կարգը սահմանում է հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը:

10. Փրկարարական ծառայության միջին և կրտսեր խմբի պաշտոններում կարող են նշանակվել նաև սույն օրենքի 29-րդ հոդվածի առաջին մասի պահանջներին

համապատասխանող, սակայն դիմելու պահին սահմանված կարգով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված կամ զորակոչի տարկետման իրավունքից օգտվող և կոչում չունեցող քաղաքացիները: ~~Նման քաղաքացիները պաշտոնի են նշանակվում կառավարության սահմանած կարգով և պայմաններով՝ համապատասխան նախարարության ուսումնական հաստատություններում եռամսյա վերապատրաստում անցնելուց հետո:~~ **Նման քաղաքացիները մրցույթի արդյունքում պաշտոնի են նշանակվում հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետի սահմանած կարգով և պայմաններով՝ լիազոր մարմնի ուսումնական հաստատություններում եռամսյա վերապատրաստում անցնելուց հետո:**

Եթե նշված քաղաքացիները մինչև պարտադիր զինվորական ծառայության համար սահմանային տարիքի լրանալը կորցնում են պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքը, ապա պարտադիր զինվորական ծառայության են զորակոչվում ընդհանուր հիմունքներով:

11. ***(մասն ուժը կորցրել է 07.04.16 ՀՕ-44-Ն)***

11.1. Փրկարարական ծառայողների ռոտացիայի կարգը սահմանում է կառավարությունը:

12. Փրկարարական ծառայության անցնող քաղաքացու և համապատասխան նախարարության միջև կնքվում է 1-ից 5 տարի ժամկետով պայմանագիր, որը ստորագրում է՝

ա) բարձրագույն, գլխավոր, ավագ և միջին խմբերի պաշտոն զբաղեցնող ծառայողների համար համապատասխան նախարարը.

բ) կրտսեր խմբի պաշտոն զբաղեցնող ծառայողների համար Փրկարար ծառայության տնօրենը:

13. ***(մասն ուժը կորցել է 08.12.11 ՀՕ-305-Ն)***

14. Պայմանագրի օրինակելի ձևը, կնքելու կարգը սահմանում է համապատասխան նախարարը:

15. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրելու օրվանից՝ սույն հոդվածի 12-րդ մասում նշված, պայմանագիրը ստորագրող պաշտոնատար անձի հրամանով:

16. Պայմանագրի գործողությունը դադարում է՝

ա) ծառայողին սույն օրենքով սահմանված կարգով և դեպքերում պաշտոնից ազատելու օրը.

բ) ծառայողին կադրերի ռեզերվից հանելու օրը.

գ) ծառայողի զոհվելու (մահանալու), նրան անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու օրը.

դ) ծառայողի հետ նոր պայմանագիր կնքելու օրը.

ե) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարելու օրը.

զ) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու օրը.

է) դատական կարգով փրկարարական կամ պետական այլ ծառայության պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկվելու օրը.

ը) օրենքով սահմանված այլ դեպքերում:

12.1. Պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում փրկարարական ծառայողի հետ պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվում է կողմերի համաձայնությամբ՝ սույն հոդվածի 12-րդ մասով սահմանված կարգով և ժամկետներով:

~~Հոդված 33.~~ ~~Ծառայողների ատեստավորման կարգը և պայմանները~~

~~1. Յուրաքանչյուր տարի ծառայողների առնվազն մեկ երրորդը ենթակա է պարտադիր ատեստավորման:~~

~~2. Ծառայողների հերթական ատեստավորումն անցկացվում է երեք տարին մեկ:~~

~~3. Ծառայողի արտահերթ ատեստավորումն անցկացվում է հերթական ատեստավորումից առնվազն մեկ տարի հետո:~~

~~4. Ծառայողի արտահերթ ատեստավորումն անցկացվում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի պատճառաբանված միջնորդության հիման վրա կամ ծառայողի ցանկությամբ:~~

~~5. Ատեստավորումն անցկացվում է ծառայողի անմիջական մասնակցությամբ, բացառությամբ երբ նա լքել է ծառայությունը կամ բացակայում է այլ անհարգելի պատճառներով:~~

~~6. Ատեստավորման ենթակա չեն՝~~

~~ա) փրկարարական ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնողները.~~

~~բ) տվյալ պաշտոնը մեկ տարուց պակաս ժամկետով զբաղեցնող ծառայողները, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել.~~

~~գ) հղի կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող ծառայողները, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել:~~

~~7. Հղիության կամ երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող ծառայողները ենթակա են ատեստավորման արձակուրդից վերադառնալուց հետո՝ ոչ շուտ, քան մեկ տարի հետո, եթե վերջիններս ցանկություն չեն հայտնել ավելի վաղ ատեստավորվելու համար:~~

~~8. Ատեստավորման ենթակա, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող կամ ժամանակավոր անաշխատունակ ծառայողները ենթակա են ատեստավորման՝ ծառայության անցնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:~~

~~9. Ատեստավորման ենթակա ծառայողները ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ, տեղեկացվում են ատեստավորման անցկացման մասին:~~

~~10. Ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ անմիջական ղեկավարը հանձնաժողովին է ներկայացնում ծառայողի ծառայողական բնութագիրը:~~

~~Ծառայողական բնութագիրը պետք է բովանդակի տվյալներ ծառայողի մասին, նրա գործնական հատկանիշների և ծառայողական գործունեության արդյունքների հիմնավորված գնահատականը: Այդ գնահատականը պետք է հիմնվի նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակահատվածում ծառայողի կողմից իր կատարած աշխատանքների մասին անմիջական ղեկավարին ներկայացված գրավոր հաշվետվության վերաբերյալ վերջինիս եզրակացության վրա:~~

~~11. Եթե ատեստավորումների միջև ընկած ժամանակահատվածում ծառայողի անմիջական ղեկավարն ազատվել է պաշտոնից՝ պաշտոնին չհամապատասխանելու հիմքով, ապա վերջինիս տված եզրակացություններն իրավական ուժ չունեն: Եթե նման ղեկավարի տված եզրակացություններն ընդգրկում են ատեստավորումների միջև ընկած ժամանակաշրջանի երկու երրորդից ավելին, ապա ծառայողի վերաբերյալ ծառայողական բնութագիր չի ներկայացվում: Այդ դեպքում ծառայողական բնութագիր չներկայացնելը չի կարող բացասաբար ազդել ծառայողի ատեստավորման արդյունքների վրա: Ծառայողն ատեստավորումն անցկացնելու օրվանից առնվազն մեկ շաբաթ առաջ ստորագրությամբ պետք է ծանոթանա իր ծառայողական բնութագրին:~~

~~12. Ատեստավորման անցկացման կարգը և պայմանները սահմանում է կառավարությունը:~~

~~13. Ատեստավորման հանձնաժողովը կազմավորվում է համապատասխան նախարարի կողմից:~~

~~14. Ատեստավորման արդյունքում ատեստավորման հանձնաժողովը ընդունում է հետևյալ որոշումներից միայն մեկը՝~~

~~ա) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին.~~

~~բ) կարող է զբաղեցնել ավելի բարձր պաշտոն.~~

~~գ) կարող է ներկայացվել խրախուսման.~~

~~դ) ատեստավորումը հետաձգել մինչև մեկ տարի ժամկետով և առաջարկել՝ ծառայողին գործուղել վերապատրաստման.~~

~~ե) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին:~~

~~15. Ծառայողն իրավունք ունի ծանոթանալու ատեստավորման արդյունքներին և բողոքարկելու դրանք ատեստավորման արդյունքներին ծանոթանալուց հետո ոչ ուշ, քան յոթ օրվա ընթացքում՝ վերադասության կարգով:~~

~~16. Ատեստավորման արդյունքներն ու կայացված որոշումները հանձնաժողովը, ատեստավորման օրվանից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, ներկայացնում է ատեստավորողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին, որն ընդունում է համապատասխան որոշում՝ հիմք ընդունելով ատեստավորման հանձնաժողովի որոշումները:~~

~~Սույն հոդվածի տասնչորսերորդ մասի «բ» և «գ» կետերին համապատասխան որոշումը ենթակա չէ պարտադիր կատարման ատեստավորվողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից:~~

~~17. Սույն հոդվածի տասնվեցերորդ մասով սահմանված որոշումն ընդունվում է ոչ ուշ, քան ատեստավորման արդյունքներն ստանալու օրվանից հետո՝ տասնօրյա ժամկետում:~~

~~18. Ծառայողի ժամանակավոր անաշխատունակության կամ արձակուրդում գտնվելու ժամանակ ատեստավորման արդյունքների հիման վրա համապատասխան որոշումն ընդունվում է նրա՝ աշխատանքի ներկայանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում:~~

~~19. Ատեստավորման արդյունքները պահվում են ծառայողի անձնական գործում:~~

Հոդված 33. Ծառայողների կատարողականի գնահատման և վերապատրաստման կարգը

1. Փրկարարական ծառայողի կատարողականի գնահատման և վերապատրաստման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

~~**Հոդված 35. Ծառայողին նրա ցանկությամբ այլ պաշտոնի փոխադրելը**~~

~~Ծառայողն իր ցանկությամբ կարող է փոխադրվել զբաղեցրած պաշտոնին համարժեք այլ պաշտոնի և (կամ) ծառայության այլ վայր՝ տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո:~~

Հոդված 35. Ծառայողին նրա ցանկությամբ այլ պաշտոնի փոխադրելը, տեղափոխելը

1. Փրկարարական ծառայողի տեղափոխման, փոխադրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով:

2. Փրկարարական ծառայողի տեղափոխում, փոխադրում իրականացվում է տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարվա ծառայությունից հետո:

~~Հոդված 37. Ծառայողի իրավունքները~~

~~1. Ծառայողի իրավունքներն են՝~~

~~ա) գբաղեցրած պաշտոնում իր իրավունքներն ու պարտականությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.~~

~~բ) իր անձնական գործի նյութերին՝ իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեությանը վերաբերող այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ ներկայացնելը.~~

~~գ) ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.~~

~~դ) իր իրավասությունների սահմաններում որոշումներ ընդունելը.~~

~~ե) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայողական քննություն պահանջելը՝ իր նկատմամբ անհիմն մեղադրանքների և կասկածանքների վերացման կամ իր նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու դեպքերում.~~

~~զ) ծառայության համար համարժեք վարձատրություն ստանալը.~~

~~է) առողջության պահպանությունը.~~

~~ը) սոցիալական պաշտպանվածությունը և ապահովվածությունը.~~

~~թ) իրավական պաշտպանությունը.~~

~~ժ) փրկարարական ծառայության պաշտոնի և կոչումի սահմանված կարգով բարձրացումը.~~

~~ժա) սահմանված կարգով և դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին վերապատրաստվելը.~~

~~ժբ) նշանակման և ատեստավորման արդյունքները բողոքարկելը.~~

~~ժգ) արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը.~~

~~ժդ) մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքում կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը:~~

~~2. Ծառայողը կարող է ունենալ օրենքով սահմանված այլ իրավունքներ:~~

Հոդված 37. Ծառայողի իրավունքները

1. «Հանրային ծառայության մասին» օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված հիմնական իրավունքներից բացի, փրկարարական ծառայողների հիմնական իրավունքներն են՝

ա)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայողական քննություն պահանջելը՝ իր նկատմամբ անհիմն մեղադրանքների և կասկածանքների վերացման կամ իր նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու դեպքերում.

բ) առողջության պահպանումը.

գ) փրկարարական ծառայության պաշտոնի և կոչումի՝ սահմանված կարգով բարձրացումը.

դ) նշանակման արդյունքները բողոքարկելը.

ե) արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը.

զ) մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում՝ կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը:

Հոդված 38. Ծառայողի պարտականությունները

~~1. Ծառայողի պարտականություններն են՝~~

1.«Հանրային ծառայության մասին» օրենքի 19-րդ հոդվածով նախատեսված հիմնական պարտականություններից բացի, փրկարարական ծառայողի հիմնական պարտականություններն են՝».

~~ա) Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները կատարելը.~~

բ) մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ ապահովելը.

~~գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները ճշգրիտ և ժամանակին կատարելը.~~

~~դ) վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ տրված հրամանները, հանձնարարականները և ընդունած որոշումները սահմանված կարգով կատարելը.~~

~~ե) կարգապահական կանոնները պահպանելը.~~

զ) սահմանված կարգով և ժամկետներում առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ քննության առնելը և դրանց ընթացք տալը.

է) պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները պահպանելը, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.

ը) իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն ստանալը.

թ) պահանջել արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից՝ պահպանել անվտանգության կանոնները:

~~2. Ծառայողի համար սույն օրենքով և այլ իրավական ակտերով կարող են սահմանվել այլ պարտականություններ:~~

~~**Հոդված 39. Ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները**~~

~~1. Ծառայողն իրավունք չունի՝~~

~~ա) կատարելու այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից.~~

~~բ) անձամբ զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ.~~

~~գ) լինելու երրորդ անձանց ներկայացուցիչն այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ ինքը գտնվում է ծառայության մեջ, կամ որն անմիջականորեն ենթակա է իրեն կամ անմիջականորեն վերահսկելի է իր կողմից.~~

~~դ) հոնորար ստանալու ծառայողական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների և ելույթների համար.~~

~~ե) ոչ ծառայողական նպատակներով օգտագործելու փրկարարական ծառայության նյութատեխնիկական, ֆինանսական ու տեղեկատվական միջոցները, պետական այլ գույքը և ծառայողական տեղեկատվությունը.~~

~~զ) ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալու նվերներ, գումար կամ ծառայություններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.~~

~~է) լինելու որևէ կուսակցության, հասարակական-քաղաքական, հասարակական (բացառությամբ գիտական, մշակութային, մարզական, որսորդական, վետերանների և նմանօրինակ շահերի ընդհանրության հիման վրա միավորված կազմակերպությունների), այդ թվում՝ կրոնական, արհեստակցական կազմակերպության անդամ.~~

~~ը) կազմակերպելու գործադուլներ կամ մասնակցելու դրանց:~~

~~2. Փրկարարական ծառայությունում պաշտոնի նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, ծառայողը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավոր է առևտրային կազմակերպությունների կանոնադրական (բաժնեհավաք, փայահավաք) կապիտալում բաժնեմաս (բաժնետոմս, փայ) ունենալու դեպքում դա հանձնել հավատարմագրային կառավարման: Ծառայողն իրավունք ունի հավատարմագրային կառավարման հանձնված գույքից ստանալու եկամուտ:~~

~~3. Ծառայողին արգելվում է համատեղ ծառայել մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ անմիջական վերահսկողության հետ:~~

~~4. Ծառայողին չի տրվում իր՝ պաշտոնի նշանակման, այլ պաշտոնի փոխադրման, ազատման կամ նրա նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու մասին հրամանի պատճենը, եթե հրամանը պարունակում է պետական կամ ծառայողական գաղտնիք կամ հրապարակման ոչ ենթակա տեղեկատվություն: Այդ դեպքում նրան տրվում է հրամանից քաղվածք, որից հանվում է պետական գաղտնիքը կամ հրապարակման ոչ ենթակա տեղեկատվությունը:~~

Հոդված 39. Փրկարարական ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները

1. Ի լրումն «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների՝ փրկարարական ծառայողն իրավունք չունի՝

1) լինելու ներկայացուցիչ դատարանում, բացառությամբ օրինական ներկայացուցիչ լինելու և ի պաշտոնե գործելու դեպքերի.

2) լինելու որևէ կուսակցության անդամ կամ այլ կերպ զբաղվելու քաղաքական գործունեությամբ: Փրկարարական ծառայողը ցանկացած հանգամանքում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն:

Հոդված 40. Ծառայողի վարձատրությունը

1. Փրկարարական ծառայության յուրաքանչյուր ծառայող ունի ծառայության համար համարժեք վարձատրության իրավունք:

2. Փրկարարական ծառայության ծառայողի վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ **և պետական**

ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Հոդված 57. Ծառայողների նկատմամբ կիրառվող խրախուսանքի տեսակները

~~1. Երկարամյա ծառայության, արտակարգ իրավիճակների դեպքում անձնուրաց ծառայության, ծառայողական պարտականությունները, ինչպես նաև առաջադրանքները պատշաճ կատարելու համար փրկարարական ծառայության ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ տեսակները.~~

~~ա) շնորհակալության հայտարարում.~~

~~բ) միանվագ դրամական պարգևատրում.~~

~~գ) հուշանվերով պարգևատրում.~~

~~դ) մեդալի կամ կրծքանշանի շնորհում.~~

~~ե) պարգևատրում պատվոգրով.~~

~~զ) *(կետն ուժը կորցրել է 17.09.09 ՀՕ-173-Ն)*~~

~~է) արտահերթ կոչումի շնորհում:~~

~~Ծառայողի նկատմամբ կիրառվող խրախուսանքները ձևակերպվում են գրավոր:~~

~~2. Ծառայողի նկատմամբ որպես խրախուսանք կարող է կիրառվել նախկինում նշանակված կարգապահական տույժը ժամկետից շուտ հանելը:~~

~~3. Ծառայողն օրենքով սահմանված կարգով և դեպքերում կարող է ներկայացվել Հայաստանի Հանրապետության պետական պարգևների:~~

~~4. Սույն հոդվածի առաջին և երկրորդ մասերով նախատեսված խրախուսանքները ծառայողի նկատմամբ կիրառելու կարգը սահմանվում է համապատասխան նախարարի կողմից՝ հաշվի առնելով «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջները:~~

1. Փրկարարական ծառայողների նկատմամբ կիրառվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված խրախուսանքի տեսակները: Փրկարարական ծառայողների նկատմամբ խրախուսանք կիրառում է պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձը:

2. Փրկարարական ծառայողների նկատմամբ կարող է կիրառվել նաև արտահերթ կոչման շնորհում խրախուսանքի տեսակը, որը փրկարարական ծառայողների նկատմամբ ծառայության ամբողջ ընթացքում կարող է կիրառվել միայն մեկ անգամ:

3. Երկարամյա ծառայության և (կամ) ծառայողական պարտականությունները և (կամ) հանձնարարականները (առաջադրանքները) բարեխղճորեն կատարելու համար փրկարարական ծառայողը պարգևատրվում է մեդալով կամ կրծքանշանով:

4. Մեդալի և կրծքանշանի տեսակները, ձևերը և շնորհման կարգը սահմանում է հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը:

5. Փրկարար ծառայության ղեկավարի և նրա տեղակալների նկատմամբ սույն հոդվածի առաջին և երկրորդ մասերով նախատեսված խրախուսանքները կիրառում է նրանց պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

~~6. Ծառայողի նկատմամբ միաժամանակ կարող է կիրառվել խրախուսանքի մի քանի տեսակ:~~

~~7. Համապատասխան նախարարության ուսումնական հաստատություններում սովորողների նկատմամբ, բացի սույն հոդվածի առաջին մասի «ա»-«գ» կետերով~~

~~նախատեսված խրախուսանքներից, համապատասխան նախարարը կիրառում է նաև խրախուսանքի հետևյալ միջոցները.~~

~~ա) հատուկ կրթաթոշակի նշանակում.~~

~~բ) կրթաթոշակի բարձրացում:~~

7. Լիազոր մարմնի ուսումնական հաստատություններում սովորողների նկատմամբ, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով նախատեսված շնորհակալության հայտարարում, դրամական պարգևատրում և հուշանվերով պարգևատրում խրախուսանքների տեսակներից բացի, լիազոր մարմնի ղեկավարը կիրառում է նաև խրախուսանքի հետևյալ միջոցները.

ա) հատուկ կրթաթոշակի նշանակում.

բ) կրթաթոշակի բարձրացում:

Հոդված 58. Ծառայողների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը

~~1. Կարգապահական զանցանքի՝ ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև ծառայողական լիազորությունների սահմանն անցնելու դեպքերում, եթե դրանք չեն պարունակում քրեորեն պատժելի արարքի հատկանիշներ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայողի նկատմամբ կիրառվում են հետևյալ կարգապահական տույժերը.~~

~~ա) նկատողություն.~~

~~բ) խիստ նկատողություն.~~

~~գ) պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով.~~

~~դ) ծառայողական ոչ լրիվ համապատասխանություն.~~

~~ե) կոչման իջեցում՝ մեկ աստիճանով.~~

~~զ) փրկարարական ծառայությունից ազատում.~~

~~Ծառայողի նկատմամբ կիրառվող տույժերը ձևակերպվում են գրավոր:~~

1. «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով փրկարարական ծառայողների նկատմամաբ կիրառվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգապահական տույժերը: Փրկարարական ծառայողի նկատմամաբ կարող է կիրառվել նաև կոչման իջեցում մեկ աստիճանով կարգապահական տույժը՝ ծառայության ամբողջ ընթացքում միայն մեկ անգամ:

~~2. Համապատասխան նախարարության ուսումնական հաստատությունում առկա ուսուցմամբ սովորողների նկատմամբ, բացի սույն հոդվածի առաջին մասի «ա» և «բ» կետերով նախատեսված տույժերից, կարող են կիրառվել նաև հետևյալ տույժերը.~~

~~ա) հերթական արձակման իրավունքից զրկում.~~

~~բ) հատուկ կրթաթոշակից զրկում.~~

~~գ) ազատում ուսումնական հաստատությունից:~~

2. Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում առկա ուսուցմամբ սովորողների նկատմամբ, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով նախատեսված նախազգուշացում և նկատողություն տույժերից բացի, կարող են կիրառվել նաև հետևյալ տույժերը.

ա) հերթական արձակման իրավունքից զրկում.

բ) հատուկ կրթաթոշակից զրկում.

գ) ուսումնական հաստատությունից ազատում:

3. Փրկարարական ծառայողների նկատմամբ կարգապահական տույժ կիրառում է լիազոր մարմնի ղեկավարը: Լիազոր մարմնի ղեկավարի հրամանով որոշ կարգապահական տուժերի նշանակման լիազորություն կարող է պատվիրակվել այլ պաշտոնատար անձանց:

4. Փրկարար ծառայության պաշտոնյաների նկատմամբ կարգապահական տույժեր կարող է կիրառել պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

Հոդված 59. ~~Կարգապահական տույժը կիրառելու կամ հանելու կարգը~~

Ծառայողական պարտականությունների կասեցումը

~~1. Կարգապահական տույժը նշանակվում է, եթե երեք ամսից ավելի չի անցել կարգապահական խախտման հայտնաբերման օրվանից՝ չհաշված հիվանդությունը կամ արձակուրդում գտնվելը, ընդ որում՝ նշանակվող տույժը պետք է համապատասխանի կատարված խախտման բնույթին և վտանգավորության աստիճանին:~~

~~2. Կարգապահական յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ:~~

~~3. Սույն օրենքի 58-րդ հոդվածով նախատեսված բոլոր կարգապահական տույժերը տալիս է համապատասխան նախարարը, իսկ փրկարարական ծառայության կրտսեր պաշտոնների խմբի համար՝ Փրկարար ծառայության տնօրենը:~~

~~4. Կարգապահական տույժի մասին ծառայողը տեղեկացվում է դրա նշանակումից հետո՝ եռօրյա ժամկետում:~~

~~5. Եթե կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, ծառայողը նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա դա համարվում է մարված:~~

~~6. Կարգապահական տույժը կարող է հանվել նաև մինչև մեկ տարին լրանալը, եթե ծառայողը թույլ չի տվել կարգապահական նոր խախտում:~~

~~7. Կարգապահական տույժերի կիրառման կարգը սահմանում է համապատասխան նախարարը:~~

~~8. Բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների նկատմամբ կարգապահական տույժեր կարող է կիրառել նրանց պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցողը:~~

~~9. Գլխավոր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների, բացառությամբ վարչությունների պետերի և նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող ծառայողների, նկատմամբ սույն օրենքի 58-րդ հոդվածի առաջին մասի «ա» և «բ» կետերով նախատեսված կարգապահական տույժեր կարող է կիրառել նաև Փրկարար ծառայության տնօրենը:~~

~~10. Ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողների նկատմամբ սույն օրենքի 58-րդ հոդվածի առաջին մասի «ա» և «բ» կետերով նախատեսված կարգապահական տույժերը կարող են կիրառել նաև Փրկարար ծառայության տնօրենը, տնօրենի տեղակալը և վարչության պետը:~~

~~11. Ծառայողի նկատմամբ սույն օրենքի 58-րդ հոդվածի առաջին մասի «ե» կետով նախատեսված տույժը նրան կոչում շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից կարող է կիրառվել միայն մեկ անգամ:~~

~~12. Ծառայողների նկատմամբ սույն օրենքի 58-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված կարգապահական տույժերը կիրառվում են ծառայողական քննության արդյունքների հիման վրա:~~

13. Ծառայողական քննության, ինչպես նաև ծառայողի նկատմամբ քրեական գործ հարուցելու ժամանակահատվածում ծառայողի լիազորությունները կարող են ժամանակավորապես դադարեցվել՝ վարձատրության պահպանմամբ, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ պաշտոնում մնալով՝ նա կխոչընդոտի ծառայողական քննության անցկացմանը:

14. Ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում իրականացվելիս լիազորությունների ժամանակավորապես կասեցումը կատարվում է մինչև քրեական գործի ավարտը կամ մինչև տվյալ գործով դատարանի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Այդ դեպքում ծառայողին աշխատավարձ վճարվում է մինչև երկու ամսվա համար, իսկ մնացած վճարումը կատարվում է գործի արդարացնող հիմքով ավարտի դեպքում:

~~**Հոդված 60. Ծառայողին հրամաններ տալու սահմանափակումները**~~

~~1. Ծառայողին չեն կարող տրվել այնպիսի բանավոր կամ գրավոր հրամաններ (հրահանգներ և կարգադրություններ), որոնք՝~~

~~ա) հակասում են Սահմանադրությանը և օրենքներին.~~

~~բ) հրամաններ (հրահանգներ և կարգադրություններ) տվողի կամ կատարողի լիազորությունների սահմաններից դուրս են:~~

~~2. Ծառայողը սույն հոդվածի առաջին մասում նշված հրամաններ (հրահանգներ և կարգադրություններ) ստանալիս պարտավոր է ղեկավարվել օրենքների պահանջներով՝ այդ մասին տեղյակ պահելով վերադասին:~~

Հոդված 60. Ծառայողների էթիկայի հանձնաժողովը

1. Փրկարարական ծառայողների էթիկայի հանձնաժողովի ձևավորման, գործունեության կարգը, վարքագծի կանոնները խախտելու, (կամ) հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու և (կամ) շահերի բախման կանոնները, նվերներ ընդունելու արգելքը խախտելու, անհամատեղելիության պահանջները չպահպանելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

2. Փրկարարական ծառայության անձնակազմի կառավարման ստորաբաժանումում նախատեսվում է բարեվարքության հարցերով կազմակերպչի քաղաքացիական ծառայության պաշտոն:

Հոդված 61. Փրկարարական ծառայությունից ազատելը

1. Ծառայողները փրկարարական ծառայությունից ազատվում են՝

ա) Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման դեպքում.

բ) անձնական նախաձեռնությամբ՝ գրավոր զեկուցագրի հիման վրա, այդ թվում՝ երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու, պետական այլ ~~հատուկ~~ ծառայություն տեղափոխվելու, հանրային ծառայության այլ պաշտոններում նշանակվելու կապակցությամբ.

բ.1) պայմանագրով ամրագրված՝ ծառայողի կողմից փրկարարական ծառայության անցման պայմանները և պայմանագիրը խախտելու դեպքում.

գ) ծառայության սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ.

դ) հիվանդության պատճառով՝ ծառայությանը ոչ պիտանի լինելու մասին բժշկական հանձնաժողովի որոշման հիման վրա.

ե) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու դեպքում.

~~զ) կարգապահական խախտումների համար, եթե մեկ տարվա ընթացքում նրա նկատմամբ կիրառվել է կարգապահական երեք տույժ, որոնցից գոնե մեկը սույն օրենքի 58-րդ հոդվածի առաջին մասի «գ», «դ», «ե» կետերով սահմանված տույժերից է, կամ սույն օրենքի 58-րդ հոդվածի առաջին մասին «զ» կետով նախատեսված կարգապահական տույժը կիրառելու դեպքում.~~

~~է) սույն օրենքի 39-րդ հոդվածի պահանջները խախտելու դեպքում.~~

զ) «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված կարգապահական տույժը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելու դեպքում կամ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված կարգապահական տույժերը մեկ տարվա ընթացքում կիրառելու դեպքում կամ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված կարգապահական տույժը կիրառելու դեպքում կամ կոչման իջեցում մեկ աստիճանով կարգապահական տույժը և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված տույժերից որևէ մեկը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելու դեպքում:

է) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու դեպքերում՝ համապատասխան եզրակացության հիման վրա.

ը) նրանց նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում՝ դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից.

թ) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում վեց ամսից ավելի ծառայության չներկայանալու դեպքում (բացառությամբ սույն օրենքի 53-րդ հոդվածի երրորդ մասի) չհաշված հղիության, ծննդաբերության և երեխային խնամելու արձակուրդը.

ժ) Փրկարար ծառայության ուսումնական հաստատության կուրսանտին ուսումնական հաստատությունից ազատելու կապակցությամբ.

ժա) սահմանված կարգով կադրերի ռեզերվից հանվելու դեպքում.

~~ժբ) ատեստավորման արդյունքով.~~

ժբ) երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում.

ժգ) պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ կամ պայմանագրի գործողության դադարման դեպքում:

Ծառայողի պարտականությունները համարվում են դադարած նրա մահվան կապակցությամբ:

2. Ծառայողին ծառայությունից ազատում է նրան համապատասխան պաշտոնին նշանակելու իրավունք ունեցող ղեկավարը՝ հրամանում նշելով սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ազատման հիմքը:

Հոդված 62. Փրկարարական ծառայությունում զբաղեցրած պաշտոնից ազատելը

1. Ծառայողները զբաղեցրած պաշտոնից ազատվում են՝

ա) հաստիքների կրճատման, ստորաբաժանման լուծարման կամ վերակազմակերպման դեպքում այլ պաշտոնի նշանակվելիս.

բ) հաստիքների կրճատման, ստորաբաժանման լուծարման կամ վերակազմակերպման դեպքում, եթե ծառայողին համապատասխան պաշտոնում նշանակելը հնարավոր չէ, և հաստիքների կրճատումը պայմանավորված է Փրկարար ծառայության հաստիքների ընդհանուր թվի կրճատմամբ.

գ) սահմանափակ առողջական վիճակի պատճառով՝ ծառայությանը սահմանափակ պիտանիության կապակցությամբ բժշկական հանձնաժողովի որոշման հիման վրա, համապատասխան թափուր հաստիքների բացակայության պատճառով տվյալ պաշտոնում հետագա ծառայությունը շարունակելու անհնարինության դեպքում.

~~դ) ատեստավորման արդյունքների հիման վրա այլ պաշտոնի նշանակվելիս.~~

~~ե) սույն օրենքի 58-րդ հոդվածի առաջին մասի «զ» կետով սահմանված կարգապահական տույժի ենթարկվելու դեպքում:~~

2. Ծառայողին պաշտոնից ազատում է նրան համապատասխան պաշտոնին նշանակելու իրավասություն ունեցող ղեկավարը:

Հոդված 64. Ծառայողների կադրերի ռեզերվը

1. Փրկարարական ծառայության կադրերի ռեզերվում գրանցվում են սույն օրենքի 62-րդ հոդվածի առաջին մասի «բ» և «գ» կետերով նախատեսված հիմքերով զբաղեցրած պաշտոնից ազատված ծառայողները:

2. Փրկարարական ծառայության կադրերի ռեզերվում ծառայողի մեկանգամյա գտնվելու առավելագույն ժամկետը վեց ամիս է (բացառությամբ սույն հոդվածի չորրորդ մասով սահմանված դեպքերի), բայց ոչ ավելի, քան համապատասխան խմբի համար սահմանված ծառայության առավելագույն ժամկետի լրանալը:

3. Փրկարար ծառայության կադրերի ռեզերվում գտնվելու առաջին չորս ամիսների համար ծառայողին վճարվում է նրա զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափը: Այն դեպքում, երբ փրկարար ծառայության կադրերի ռեզերվում գտնվելու ընթացքում ծառայողն անձնական նախաձեռնությամբ ազատվում է ծառայությունից, ապա փրկարար ծառայության ծառայողի վարձատրությունն իրականացվում է կադրերի ռեզերվում փաստացի գտնվելու ժամանակաշրջանին համապատասխան:

4. Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս վիրավորված, անհայտ կորած, գերի ընկած ծառայողները գրանցվում են փրկարարական ծառայության կադրերի ռեզերվում մինչև 3 տարի ժամկետով: Նշված ծառայողների վարձատրությունն իրականացվում է կառավարության սահմանած կարգով:

5. Սույն օրենքի հիման վրա փրկարարական ծառայության կադրերի ռեզերվում գտնվելու և ռեզերվից հանելու կարգը սահմանում է կառավարությունը:

6. Փրկարարական ծառայության կադրերի ռեզերվը վարվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմնված կարգով:

Հոդված 73. Ծառայողներին վճարվող պարգևատրումները և միանվագ օգնությունները

1. Ծառայողներին դրամական պարգևատրումներ վճարելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ **և պետական ծառայության պաշտոններ** զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

2. ***(մասն ուժը կորցրել է 12.12.13 ՀՕ-166-Ն)***

3. ***(մասն ուժը կորցրել է 12.12.13 ՀՕ-166-Ն)***

4. Ծառայողը կարող է պարգևատրվել հուշանվերով, որի արժեքը չպետք է գերազանցի պաշտոնային դրույքաչափի տասնապատիկի չափը:

Հոդված 25. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔ

Հոդված 7. Պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց հավելավճարները և դրանց հաշվարկման կարգը

(վերնագիրը փոփ. 23.03.18 ՀՕ-209-Ն)

1. Դասային, դիվանագիտական աստիճանների, կոչման (այդ թվում՝ դասային և հատուկ), ինչպես նաև սույն օրենքով սահմանված դեպքերում օտար լեզուների իմացության, աշխատանքային և(կամ) ծառայության ստաժի համար պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց տրվում են հավելավճարներ:

2. Պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց շնորհված դասային, դիվանագիտական աստիճանների և կոչման համար հավելավճարները սահմանվում են պաշտոնային դրույքաչափի նկատմամբ:

3. Տվյալ մարմնում ամենացածր դասային կամ դիվանագիտական աստիճանի համար հավելավճարը սահմանվում է պաշտոնային դրույքաչափի 3 տոկոսի չափով, իսկ դրան հաջորդող յուրաքանչյուր հերթական ավելի բարձր դասային կամ դիվանագիտական աստիճանի համար հավելավճարի չափը աճում է մեկ տոկոսով, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքի:

3~~.1. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի պետական ծառայողներին դասային աստիճանի համար հավելավճար է տրվում սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով:~~

«3.2. Տվյալ մարմնում (ծառայությունում) ամենացածր կոչման համար հավելավճարը սահմանվում է պաշտոնային դրույքաչափի 3 տոկոսի չափով, իսկ դրան հաջորդող յուրաքանչյուր հերթական ավելի բարձր կոչման համար հավելավճարի չափը աճում է մեկ տոկոսով:»

~~4. Կոչման համար հավելավճարը տրվում է հարկադիր կատարողներին, հարկային, մաքսային, ընդ որում, հարկային և մաքսային ծառայողներին հավելավճարը տրվում է միայն առավել բարձր հավելավճար նախատեսող կոչման համար, իսկ նույն չափով հավելավճար նախատեսող կոչումների համար հավելավճարը տրվում է այդ կոչումներից միայն մեկի համար: Տվյալ մարմնում ամենացածր կոչման համար հավելավճարը սահմանվում է պաշտոնային դրույքաչափի 3 տոկոսի չափով, իսկ դրան հաջորդող յուրաքանչյուր հերթական ավելի բարձր կոչման համար հավելավճարի չափը աճում է մեկ տոկոսով:~~

«4. Կոչման համար հավելավճար տրվում է հարկադիր կատարողներին, հարկային, մաքսային ծառայողներին, Պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության քննիչներին: Ընդ որում, հարկային ծառայողներին կոչման համար հավելավճար տրվում է այն դեպքում, եթե համապատասխան ծառայողը դասային աստիճանի համար հավելավճար չի ստանում կամ կոչման համար հաշվարկված հավելավճարի չափն ավելի բարձր է դասային աստիճանի համար հաշվարկված հավելավճարի չափից:».

~~4.1. Դասային աստիճանի համար հավելավճարը տրվում է հատուկ քննչական ծառայության ծառայողներին և քննչական կոմիտեի ծառայողներին: Տվյալ մարմնում ամենացածր դասային աստիճանի համար հավելավճարը սահմանվում է պաշտոնային դրույքաչափի 3 տոկոսի չափով, իսկ դրան հաջորդող յուրաքանչյուր հերթական ավելի բարձր դասային աստիճանի համար հավելավճարի չափը աճում է մեկ տոկոսով:~~

~~5. Քաղաքացիական ծառայողին հավելավճար է տրվում միայն յուրաքանչյուր ծառայությունում տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու դեպքում՝ նրա պաշտոնային դրույքաչափի 5 տոկոսի չափով, ընդ որում, քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին սույն մասով նախատեսված հավելավճարը տրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության 1-ին դասի պետական խորհրդականի դասային աստիճան ունենալու դեպքում:~~

«5. Քաղաքացիական ծառայողին, դատական ծառայողին հավելավճար է տրվում միայն համապատասխան ծառայությունում տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու

դեպքում՝ նրա պաշտոնային դրույքաչափի 5 տոկոսի չափով: Քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին սույն մասով նախատեսված հավելավճարը տրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության 1-ին դասի պետական խորհրդականի դասային աստիճան ունենալու դեպքում: Ընդ որում, 2018 թվականի հուլիսի 1-ից հետո պաշտոնի փոփոխության դեպքում քաղաքացիական ծառայողին դասային աստիճանի համար հավելավճարը այլևս չի տրվում:»:

6. Դասային, դիվանագիտական աստիճանների կամ կոչման համար հավելավճարները տրվում են բացառապես տվյալ մարմնում (ծառայությունում) աշխատելու ժամանակահատվածում:

7. Պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վճարվող հավելավճարների ընդհանուր չափը չի կարող գերազանցել սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը:

Հոդված 8. Պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց տրվող հավելումները և դրանց չափը

(վերնագիրը փոփ. 23.03.18 ՀՕ-209-Ն)

1. Բարձրլեռնային վայրերում, ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներ կատարելու դեպքերում պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց տրվում է հավելում, որի չափը և վճարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Արտաժամյա, գիշերային ժամերին, հանգստյան, տոնական օրերին աշխատելու համար պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց տրվում է հավելում Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված նվազագույն չափերով, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ և 3.1-ին մասերով նախատեսված դեպքերի:

3. Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողներին, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողներին արտաժամյա, գիշերային ժամերին, հանգստյան, տոնական օրերին աշխատանքի համար հավելումներ չեն տրվում, եթե դրանք չեն կարգավորվում սույն օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասով:

3.1. Դատախազին, ~~հատուկ քննչական ծառայության և քննչական կոմիտեի ծառայողներին~~ **հատուկ քննչական ծառայությունում և քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց** արտաժամյա, գիշերային ժամերին, հանգստյան, տոնական օրերին աշխատանքի համար հավելումներ չեն տրվում:

4. *(մասն ուժը կորցրել է 19.10.16 ՀՕ-168-Ն)*

5. Բացառությամբ Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողների, պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վճարվող հավելումների ընդհանուր չափը չի կարող գերազանցել սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը՝ հաշվի առնելով սույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված առանձնահատկությունները:

Հոդված 14. Դատախազի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանվող հավելավճարները

1~~. Դատախազին վճարվում է հավելավճար դատախազի, դատախազության քննիչի, քննիչի, հատուկ քննչական ծառայության կամ քննչական կոմիտեի ծառայողի պաշտոնում աշխատած յուրաքանչյուր տարվա համար 2 տոկոսի չափով:~~

«1. Դատախազին վճարվում է հավելավճար դատախազի, դատախազության քննիչի, քննիչի պաշտոնում աշխատած, հատուկ քննչական ծառայությունում և/կամ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնելու (այդ թվում՝ այդ պաշտոնը որպես պետական հատուկ ծառայող զբաղեցնելու) յուրաքանչյուր տարվա համար 2 տոկոսի չափով:»:

2. Դատախազը դասային աստիճանի համար ստանում է հավելավճար:

3. Դատախազներին վճարվող հավելավճարի ընդհանուր չափը չի կարող գերազանցել սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը:

(14-րդ հոդվածը խմբ. 11.06.14 ՀՕ-57-Ն)

Հոդված 4. Օրենքի 3-րդ գլուխը լրացնել նոր 14.1-ին, 14.2-րդ և 14.3-րդ հոդվածներով.

«Հոդված 14.1. Հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրությունը

1. Հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանվում են սույն օրենքի հավելված 1-ով:

2. Հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին վճարվում է հավելավճար՝ հատուկ քննչական ծառայությունում և/կամ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնելու (այդ թվում նաև այդ պաշտոնը որպես պետական հատուկ ծառայող զբաղեցնելու), դատախազի, դատախազության քննիչի կամ քննիչի պաշտոնում աշխատած յուրաքանչյուր տարվա համար 2 տոկոսի չափով:

3. Հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը դասային աստիճանի համար ստանում է հավելավճար:

4. Հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին վճարվող հավելավճարի ընդհանուր չափը չի կարող գերազանցել սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը:

Հոդված 14.2 Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրությունը

1. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանվում են սույն օրենքի հավելված 1-ով:

2. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին վճարվում է հավելավճար՝ քննչական կոմիտեում և/կամ հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնելու (այդ թվում՝ այդ պաշտոնը որպես պետական հատուկ ծառայող զբաղեցնելու), դատախազի, դատախազության քննիչի կամ քննիչի պաշտոնում աշխատած յուրաքանչյուր տարվա համար 2 տոկոսի չափով:

3. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը դասային աստիճանի համար ստանում է հավելավճար:

4. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին վճարվող հավելավճարի ընդհանուր չափը չի կարող գերազանցել սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը:

5. Քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց, ծառայության առանձնահատկություններով պայմանավորված, տրվում են հավելումներ, որոնց վճարման դեպքերը, չափերը և կարգը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 14.3 Պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության քննիչների վարձատրությունը

1. Պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության քննիչների հիմնական աշխատավարձի չափը որոշվում է սույն օրենքի 1-ին հավելվածով՝ տվյալ պաշտոնի համար սահմանված համապատասխան գործակցի և բազային աշխատավարձի արտադրյալով:

2. Պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության քննիչները կոչման համար ստանում են հավելավճար:

3. Պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության քննիչները հավելավճար են ստանում այդ վարչությունում քննիչի պաշտոնում աշխատած (այդ թվում՝ այդ պաշտոնում որպես պետական ծառայող աշխատած) յուրաքանչյուր տարվա համար՝ 2 տոկոսի չափով:

4. Պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության քննիչներին վճարվող հավելավճարի ընդհանուր չափը չի կարող գերազանցել սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը:»:

Գ Լ ՈՒ Խ 4

~~ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ, ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ, ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂՆԵՐԻ, ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ~~

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂՆԵՐԻ, ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ»:

~~**Հոդված 15. Հատուկ քննչական ծառայության ծառայողի վարձատրությունը**~~

~~1. Հատուկ քննչական ծառայության ծառայողների պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանվում են սույն օրենքի հավելված 1-ով:~~

~~2. Հատուկ քննչական ծառայության ծառայողին վճարվում է հավելավճար՝ հատուկ քննչական ծառայության ծառայողի, դատախազի, դատախազության քննիչի, քննչական կոմիտեի ծառայողի կամ քննիչի պաշտոնում աշխատած յուրաքանչյուր տարվա համար 2 տոկոսի չափով:~~

~~3. Հատուկ քննչական ծառայության ծառայողը դասային աստիճանի համար ստանում է հավելավճար:~~

~~4. Հատուկ քննչական ծառայության ծառայողին վճարվող հավելավճարի ընդհանուր չափը չի կարող գերազանցել սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը:~~

~~5. Սույն օրենքի 18-20-րդ հոդվածներով, 21-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված դրույթները չեն տարածվում հատուկ քննչական ծառայության ծառայողների վարձատրության հետ կապված հարաբերությունների վրա:~~

~~***(15-րդ հոդվածը լրաց., փոփ. 11.06.14 ՀՕ-57-Ն, խմբ. 23.03.18 ՀՕ-209-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-276-Ն)***~~

~~**Հոդված 15.1. Քննչական կոմիտեի ծառայողի վարձատրությունը**~~

~~1. Քննչական կոմիտեի ծառայողների պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանվում են սույն օրենքի հավելված 1-ով:~~

~~2. Քննչական կոմիտեի ծառայողին վճարվում է հավելավճար՝ քննչական կոմիտեի ծառայողի, հատուկ քննչական ծառայության ծառայողի, դատախազի, դատախազության քննիչի կամ քննիչի պաշտոնում աշխատած յուրաքանչյուր տարվա համար 2 տոկոսի չափով:~~

~~3. Քննչական կոմիտեի ծառայողը դասային աստիճանի համար ստանում է հավելավճար:~~

~~4. Քննչական կոմիտեի ծառայողին վճարվող հավելավճարի ընդհանուր չափը չի կարող գերազանցել սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը:~~

~~5. Քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ծառայողներին, ծառայության առանձնահատկություններով պայմանավորված, տրվում են հավելումներ, որոնց վճարման դեպքերը, չափերը և կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:~~

~~6. Սույն օրենքի 18-20-րդ հոդվածներով, 21-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված դրույթները չեն տարածվում քննչական կոմիտեի ծառայողների վարձատրության հետ կապված հարաբերությունների վրա:~~

(15.1-ին հոդվածը լրաց.~~ ~~11.06.14 ՀՕ-57-Ն, խմբ. 23.03.18 ՀՕ-209-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-276-Ն)***~~

Հոդված 18. Պետական ծառայողների հիմնական աշխատավարձի հաշվարկը

1. Պետական ծառայողի հիմնական աշխատավարձի չափը որոշվում է բազային աշխատավարձի և սույն օրենքի հավելված 9-ով սահմանված՝ նրա պաշտոնի ենթախմբի սանդղակում ստաժին համապատասխանող գործակցի արտադրյալով:

1.1 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության պետական ծառայողի հիմնական աշխատավարձի չափը որոշվում է սույն օրենքի 9-րդ հավելվածով՝ տվյալ ծառայողի համար սահմանված համապատասխան գործակցի և բազային աշխատավարձի արտադրյալով: Ընդ որում, այդ ծառայողների նկատմամբ չեն տարածվում սույն օրենքի 19-րդ, 20-րդ հոդվածներով և 21-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված դրույթները, սակայն այդ ծառայողները հավելավճար են ստանում համապատասխան վարչությունում ծառայության յուրաքանչյուր տարվա համար՝ 2 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը:
2. Պետական ծառայության պաշտոնների յուրաքանչյուր ենթախմբի համար նախատեսված է հիմնական աշխատավարձի՝ նվազագույն պաշտոնային դրույքաչափից մինչև առավելագույնը հաշվարկելու սանդղակների աղյուսակ, որը ներառում է պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները:
3. Յուրաքանչյուր սանդղակ բաղկացած է աշխատավարձի մակարդակներից, որոնցից յուրաքանչյուրում հիմնական աշխատավարձի հաշվարկման համար սահմանվում է բազային աշխատավարձի նկատմամբ բազմապատիկ գործակից:
(18-րդ հոդվածը լրաց. 11.06.14 ՀՕ-57-Ն, 01.12.14 ՀՕ-204-Ն, փոփ. 19.10.16 ՀՕ-168-Ն, 06.12.17 ՀՕ-245-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-209-Ն)

Հոդված 19. Պետական ծառայողի հիմնական աշխատավարձը պաշտոնում նշանակվելիս

1. Առաջին անգամ պետական ծառայության պաշտոնում նշանակված անձը վարձատրվում է տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող սանդղակի առաջին մակարդակի հիմնական աշխատավարձի չափով (պաշտոնային դրույքաչափով):
~~1.1. Մրցույթի արդյունքով, ինչպես նաև արտամրցութային կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ կարգով պետական ծառայության հավասար պաշտոնում նշանակված պետական ծառայողը աշխատավարձի համապատասխան սանդղակում վարձատրվում է իր նախորդ պաշտոնային դրույքաչափը որոշող գործակցով:~~
2. Մրցույթի արդյունքով, ինչպես նաև արտամրցութային կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ կարգով պետական ծառայության ավելի բարձր պաշտոնի նշանակված պետական ծառայողը նոր ենթախմբի սանդղակում իր նախորդ պաշտոնային դրույքաչափը որոշող գործակցին հավասար (0.01 միավորի տարբերությամբ) գործակցի առկայության դեպքում վարձատրվում է վերջինիս նկատմամբ երկու մակարդակ բարձր գործակցով, հակառակ դեպքում՝ նոր ենթախմբի սանդղակի նվազագույն գործակցով:
3. Մրցույթի արդյունքով, ինչպես նաև արտամրցութային կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ կարգով պետական ծառայության ավելի ցածր պաշտոնի նշանակված պետական ծառայողը աշխատավարձի համապատասխան սանդղակում վարձատրվում է իր նախորդ պաշտոնային դրույքաչափը որոշող գործակցին հավասար (0.01 միավորի տարբերությամբ) կամ առավել մոտ գործակցով:
3.1. Սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.1-ին, 2-րդ կամ 3-րդ մասերով սահմանված դրույթները կիրառելու նպատակով պետական ծառայության առանձին տեսակների համար

հավասար, բարձր կամ ցածր պաշտոնները որոշվում են սույն օրենքի 9-րդ հավելվածով հաստատված սանդղակների աղյուսակում տվյալ պաշտոնի զբաղեցրած դիրքով, ~~բացառությամբ սույն հոդվածի 3.2-րդ մասով նախատեսված դեպքի~~: Եթե համապատասխան պաշտոնների համար հիմնական աշխատավարձի հաշվարկման գործակիցները տվյալ սանդղակի 1-11-րդ մակարդակներում նույնն են, ապա պաշտոնները համարվում են հավասար: Ցածր են համարվում այն պաշտոնները, որոնց հիմնական աշխատավարձի հաշվարկման գործակիցները համապատասխան սանդղակի 1-11-րդ մակարդակներում ցածր են զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված գործակիցներից: Բարձր են համարվում այն պաշտոնները, որոնց հիմնական աշխատավարձի հաշվարկման գործակիցները համապատասխան սանդղակի 1-11-րդ մակարդակներում բարձր են զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված գործակիցներից:

~~3.2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության ծառայողների համար սույն օրենքի 19-րդ հոդվածի 3.1-ին մասով սահմանված հավասար, բարձր կամ ցածր պաշտոնները որոշվում են՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված տվյալ պետական ծառայության պաշտոնների անվանացանկում այդ պաշտոնի խումբը (ենթախումբը):~~

~~4. Վերակազմակերպման պահին վերակազմակերպվող մարմնի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող պետական ծառայող չհանդիսացող աշխատողներին պետական ծառայության պաշտոններում նշանակելիս պահպանվում է նրանց նախկին պաշտոնային դրույքաչափը, եթե պետական ծառայության պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափը ցածր է նախկին պաշտոնային դրույքաչափից: Սույն մասով սահմանված դեպքում հիմնական աշխատավարձի բնականոն աճը հաշվարկվում է սույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգով:~~

5. ***(մասն ուժը կորցրել է 06.12.17 ՀՕ-245-Ն)***

6.***(մասն ուժը կորցրել է 06.12.17 ՀՕ-245-Ն)***

~~7~~. Համապատասխան մարմնի վերակազմակերպման կամ կառուցվածքային փոփոխության արդյունքում զինվորական, քրեակատարողական կամ փրկարարական ծառայության ~~պաշտոնը քաղաքացիական հատուկ ծառայության կամ քաղաքացիական ծառայության պաշտոնի փոխվելու պարագայում տվյալ պաշտոնը զբաղեցնողին արտամրցութային կարգով քաղաքացիական հատուկ ծառայության կամ~~ **ծառայողին օրենքով սահմանված կարգով** քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակելու դեպքում պահպանվում է զինվորական, քրեակատարողական կամ փրկարարական ծառայության վերջին պաշտոնում համապատասխան ծառայողի համար սահմանված պաշտոնային դրույքաչափի (դրամական ապահովության) և լրավճարի չափը, եթե նոր պաշտոնի համար օրենքով սահմանված կարգով որոշվող պաշտոնային դրույքաչափը ցածր է: Տվյալ պետական ծառայողի հիմնական աշխատավարձի չափը որոշվում է բազային աշխատավարձի և սույն օրենքի 9-րդ հավելվածով սահմանված՝ այդ պաշտոնի ենթախմբի սանդղակում նրա զինվորական, քրեակատարողական կամ փրկարարական ծառայության ստաժին համապատասխանող մակարդակի գործակցի արտադրյալով: Սույն մասով սահմանված վարձատրության պահպանվող չափի և սույն օրենքով սահմանված կարգով որոշվող հիմնական աշխատավարձի չափի միջև տարբերությունը հաշվարկվում է մինչև այն պահը, երբ տվյալ պետական ծառայողի՝ սույն օրենքով սահմանված կարգով որոշվող հիմնական աշխատավարձի չափը կգերազանցի

վարձատրության պահպանված չափը, որն այդ պահին համարվում է նրա հիմնական աշխատավարձը:
8. Զինվորական, քրեակատարողական կամ փրկարարական ծառայության պաշտոնից ազատվելուց հետո Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական այլ ծառայության պաշտոնի նշանակվելու դեպքում պետական ծառայողի հիմնական աշխատավարձի չափը որոշվում է բազային աշխատավարձի և սույն օրենքի 9-րդ հավելվածով սահմանված՝ նրա պաշտոնի ենթախմբի սանդղակում նրա զինվորական, քրեակատարողական կամ փրկարարական ծառայության ստաժին համապատասխանող մակարդակի գործակցի արտադրյալով, եթե առկա է սույն օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պայմանը:
9. Համապատասխան մարմնի վերակազմակերպման կամ կառուցվածքային փոփոխության դեպքում պետական ծառայողին զինվորական ծառայության, քրեակատարողական կամ փրկարարական ծառայության պաշտոնում նշանակելու դեպքում հիմնական աշխատավարձը որոշելու համար հաշվի է առնվում միայն զինվորական, քրեակատարողական կամ փրկարարական ծառայության ստաժը՝ առկայության դեպքում:

Հոդված 25. Պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողների) տրամադրվող արտոնությունները և փոխհատուցումները

(վերնագիրը խմբ. 11.06.14 ՀՕ-57-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-209-Ն)

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական ծառայողների ատեստավորման, վերապատրաստման և պետական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթի ամբողջ ընթացքում պետական ծառայողի աշխատավարձը պահպանվում է:
2. ***(մասն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-209-Ն)***
3. Հիմնական արձակուրդային վճարից բացի, պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձին վճարվում է լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ իր միջին ամսական աշխատավարձի չափով: Աշխատանքից ազատվելու դեպքում միանվագ արձակուրդային վճարը տրվում է փաստացի աշխատած ամիսներին համամասնորեն:
4. Հանրաքվեի, տեղական հանրաքվեի, Ազգային ժողովի, Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանու ընտրությունների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում ընտրությունների անցկացման ժամանակահատվածի մեկ ամսվա համար կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի, հանձնաժողովի քարտուղարի, հանձնաժողովի անդամների, ինչպես նաև կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմի կենտրոնական ապարատի ~~ինքնավար ծառայողների,~~ **քաղաքացիական ծառայողների** ինքնավար և հայեցողական պաշտոն զբաղեցնողների պաշտոնային դրույքաչափերը կրկնապատկվում են: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների ինքնավար ծառայողների պաշտոնային դրույքաչափերը

կրկնապատկվում են հանրաքվեի, տեղական հանրաքվեի, Ազգային ժողովի, Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանու ընտրությունների, ինչպես նաև տարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում գտնվող 5 և ավելի համայնքներում կամ 5-ից պակաս համայնքներում, որոնց ընտրողների ընդհանուր թիվը միասին գերազանցում է 10.000-ը համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի ընտրություն անցկացվելու դեպքում: Սույն մասում նշված պաշտոնային դրույքաչափերի տարբերությունը նախատեսվում է ընտրությունների կամ հանրաքվեների կազմակերպման և անցկացման ծախսերում:
5. Պետական ծառայողների առանձին ծախսերի փոխհատուցումները (կացարան, համազգեստ, տրանսպորտային միջոցներ և այլն) տրամադրվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և դեպքերում:

Հոդված 32. Պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց աշխատանքի վարձատրության նոր համակարգի ներդրումը

(վերնագիրը փոփ. 23.03.18 ՀՕ-209-Ն)

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձին նշանակվում է զբաղեցրած պաշտոնին համապատասխանող պաշտոնային դրույքաչափ:
2. Սույն օրենքով սահմանված վարձատրության նոր համակարգի ներդրումը չի կարող հանգեցնել սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձի հիմնական աշխատավարձի չափի նվազեցման, բացառությամբ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո պաշտոնի փոփոխման և կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցվելու դեպքերի: Ընդ որում, սույն մասով նախատեսված պայմանը զինծառայողների, քրեակատարողական ծառայողների, փրկարար ծառայողների համար կիրառելու դեպքում հիմնական աշխատավարձ է համարվում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը զինծառայողներին, քրեակատարողական ծառայողներին, փրկարար ծառայողներին տրվող պաշտոնային դրույքաչափի, կոչման դրույքաչափի, ստաժի համար դրույքաչափի, պարենի փոխհատուցման գումարի, քսան օրացուցային տարվա զինվորական ծառայության, քրեակատարողական ծառայության կամ փրկարար ծառայության ստաժ ունեցող և զինվորական ծառայությունը, քրեակատարողական ծառայությունը կամ փրկարար ծառայությունը շարունակող զինծառայողներին, քրեակատարողական ծառայողներին, փրկարար ծառայողներին տրվող ամսական հավելման հանրագումարը:
2.1. Պետական ծառայողի համար սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված պաշտոնի փոփոխման պայմանը չի տարածվում համապատասխան մարմնի վերակազմակերպման կամ կառուցվածքային փոփոխության կամ անվանափոխության կամ օրենքով սահմանված այլ դեպքերում արտամրցութային կարգով կամ ռոտացիայի հիման վրա հավասար կամ բարձր պաշտոնի փոխադրման (նշանակման) դեպքերի վրա: Այս դեպքերում պետական ծառայողի հիմնական աշխատավարձը որոշվում է սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.1-ին կամ 2-րդ մասով սահմանված կարգով, ընդ որում՝
1) հավասար պաշտոնի փոխադրման (նշանակման) դեպքում 2014 թվականի հուլիսի 1-ից սահմանված (պահպանված) հիմնական աշխատավարձի չափը պահպանվում է մինչև այն պահը, երբ տվյալ պետական ծառայողի համար սույն օրենքով սահմանված կարգով

որոշված գործակցի և բազային աշխատավարձի արտադրյալը ավելի բարձր կլինի սույն հոդվածի համաձայն պահպանված հիմնական աշխատավարձի չափից.
2) բարձր պաշտոնի փոխադրման (նշանակման) դեպքում, եթե պետական ծառայողի հիմնական աշխատավարձը ցածր է լինում 2014 թվականի հուլիսի 1-ից սահմանված (պահպանված) հիմնական աշխատավարձի չափից, ապա սույն օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով որոշված հիմնական աշխատավարձի նկատմամբ պահպանվում է պետական ծառայողի՝ 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ հիմնական աշխատավարձի և սույն օրենքի 32-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված կարգով որոշված հիմնական աշխատավարձի (որը պետք է ներառի նաև սույն օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված բնականոն աճը) տարբերությունը մինչև այն պահը, երբ բազային աշխատավարձի փոփոխության դեպքում նրա հիմնական աշխատավարձի բարձրացված չափը կգերազանցի նաև այդ տարբերությունը: Ընդ որում, սույն հոդվածով նախատեսված կարգով պահպանված աշխատավարձի չափի տարբերությունը նվազեցվում է բազային աշխատավարձի փոփոխման և (կամ) սույն օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան աշխատավարձի բնականոն աճի կիրառման դեպքում՝ հիմնական աշխատավարձի բարձրացման չափով:

~~2.2. Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պետական ծառայողին քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակելու դեպքում համապատասխան ծառայողի համար վերջին պաշտոնում սահմանված պաշտոնային դրույքաչափը սույն հոդվածով սահմանված կարգով պահպանվում է, եթե նրա պաշտոնը չի փոխվում, սակայն փոխվում է հիմնական աշխատավարձի հաշվարկման սանդղակը, և այդ սանդղակում բացակայում է վերջին պաշտոնում նրա հիմնական աշխատավարձի հաշվարկման գործակցին հավասար (0.01 միավորի տարբերությամբ) գործակիցը: Այս դեպքում տվյալ պետական ծառայողի (քաղաքացիական ծառայողի) համար վերջին պաշտոնում սահմանված պաշտոնային դրույքաչափը պահպանվում է մինչև այն պահը, երբ տվյալ պետական ծառայողի (քաղաքացիական ծառայողի) համար սույն օրենքով սահմանված կարգով որոշված գործակցի (համապատասխան սանդղակի 11-րդ մակարդակի գործակից) և բազային աշխատավարձի արտադրյալը ավելի բարձր կլինի սույն հոդվածի համաձայն պահպանված հիմնական աշխատավարձի չափից:~~

«2.2. Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պետական ծառայողին քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակելու, ինչպես նաև պաշտոնների դասակարգման նոր համակարգին անցնելիս պաշտոնի նշանակելու դեպքերում, համապատասխան ծառայողի հիմնական աշխատավարձը և հավելավճարը պահպանվում է մինչև այն պահը, երբ տվյալ քաղաքացիական ծառայողի համար սույն օրենքով սահմանված կարգով որոշված գործակցի և բազային աշխատավարձի արտադրյալը՝ հիմնական աշխատավարձը, ավելի բարձր կլինի սույն հոդվածի համաձայն պահպանված աշխատավարձի չափից (հիմնական աշխատավարձի և հավելավճարի հանրագումարից): Ընդ որում, հավասար, բարձր կամ ցածր պաշտոններում նշանակվելու դեպքերում հիմնական աշխատավարձի հաշվարկման գործակիցը որոշվում է սույն օրենքի 19-րդ հոդվածի համապատասխանաբար 1.1-ին, 2-րդ կամ 3-րդ մասերով սահմանված կարգով:».

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցված անձը վարձատրվում է իր զբաղեցրած վերջին պաշտոնում ունեցած պաշտոնային դրույքաչափով, սակայն ոչ ավելի, քան մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը բարձրագույն խմբի 1-ին ենթախմբի համար սահմանված առավելագույն դրույքաչափը:
4. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձի գործող պաշտոնային դրույքաչափը սույն օրենքով սահմանված՝ տվյալ պետական պաշտոնի և պետական ծառայության պաշտոնի համար նախատեսված պաշտոնային դրույքաչափից բարձր լինելու դեպքում պահպանվում է պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնողի գործող՝ առավել բարձր պաշտոնային դրույքաչափը:
5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց հիմնական աշխատավարձի աճը կասեցվում է մինչև տվյալ պաշտոնում նրա գործող պաշտոնային դրույքաչափին հավասար պաշտոնային դրույքաչափ ստանալու իրավունք ձեռք բերելը, եթե սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձի հիմնական աշխատավարձը գերազանցում է սույն օրենքով սահմանված չափերը:
6. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձի համար հաշվարկված լրացուցիչ աշխատավարձը պահպանվում է, եթե սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված լրացուցիչ աշխատավարձի չափը ցածր է, քան մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձի համար հաշվարկված լրացուցիչ աշխատավարձի չափը, և այս դեպքում լրացուցիչ աշխատավարձը հիմնական աշխատավարձի 30 տոկոսը գերազանցելիս լրացուցիչ աշխատավարձի աճը կասեցվում է:
Սույն մասով սահմանված դրույթները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողների լրացուցիչ աշխատավարձի աճի և մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, ինչպես նաև քրեակատարողական ծառայողների և փրկարար ծառայության ծառայողների համար սահմանված լրավճարների հետ կապված հարաբերությունների վրա: Ընդ որում, սույն մասով նախատեսված լրավճարների դեպքերը, չափերը և վճարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
7. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը պետական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վերահաշվարկվում են բազային աշխատավարձի և սույն օրենքի համապատասխան հավելվածով սահմանված՝ տվյալ պաշտոնն ընդգրկող սանդղակի համապատասխան գործակցի միջոցով:
8. ***(մասն ուժը կորցրել է 29.06.16 ՀՕ-133-Ն)***
9. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո դատարանում դատավորների թվի կրճատման կամ օրենքով նախատեսված՝ դատարանի կամ վճռաբեկ դատարանի պալատի վերացման դեպքում դատավորին ստորադաս դատարանի դատավորի պաշտոնում

նշանակելիս պահպանվում է նրա նախկին պաշտոնում ստացած աշխատավարձը, բացառությամբ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը դատարանի նախագահի պաշտոնի համար ստացած հավելավճարների:
10. Աշխատավարձի բնականոն աճի հաշվարկի համար սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին տվյալ պաշտոնում պետական ծառայողի ստաժը հաշվարկվում է՝ հաշվի առնելով տվյալ պաշտոնում պետական ծառայողի աշխատանքի ողջ ժամանակահատվածը:

Հավելված 1
«Պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի
(գլխագիրը փոփ. 23.03.18 ՀՕ-209-Ն)

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ ԵՎ ԱՅԼ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ

(վերնագիրը փոփ. 11.06.14 ՀՕ-57-Ն, խմբ. 23.03.18 ՀՕ-209-Ն)

Ազգային ժողովի նախագահի ռեֆերենտ	6.00

«Ազգային ժողովի նախագահի տեղակալի խորհրդական	**5.50».**

Մարզային քննչական վարչության քննչական բաժնի քննիչ	

«Պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչություն	
Պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության պետ	8.00
Պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության պետի տեղակալ, քննչական վարչության բաժնի պետ	6.75
Պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ	6.50
Պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության ավագ քննիչ	6.00
Պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության քննիչ	5.50»

Հավելված 4
«Պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի

~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ~~ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հավելված 5
«Պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի
(գլխագիրը փոփ. 23.03.18 ՀՕ-209-Ն)

~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հավելված 9
«Պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի
(գլխագիրը փոփ. 23.03.18 ՀՕ-209-Ն)

ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Պետական ծառայություն, բացառությամբ քաղաքացիական, դիվանագիտական, հարկային, մաքսային և հարկադիր կատարման ծառայությունների												
Աշխա-տավարձի մակարդակ-ները	Հիմնական աշխատավարձի բնականոն աճը	Կրտսեր պաշտոններ			Առաջատար պաշտոններ			Գլխավոր պաշտոններ			Բարձրագույն պաշտոններ	
		3-րդ ենթա-խմբի սանդ-ղակ	2-րդ ենթա-խմբի սանդ-ղակ	1-ին ենթա-խմբի սանդ-ղակ	3-րդ ենթա-խմբի սանդ-ղակ	2-րդ ենթա-խմբի սանդ-ղակ	1-ին ենթա-խմբի սանդ-ղակ	3-րդ ենթա-խմբի սանդ-ղակ	2-րդ ենթա-խմբի սանդ-ղակ	1-ին ենթա-խմբի սանդ-ղակ	2-րդ ենթա-խմբի սանդ-ղակ	1-ին ենթա-խմբի սանդ-ղակ
11	Աճ չկա	1.68	1.95	2.28	2.66	3.11	3.64	4.40	5.34	6.49	7.91	9.65
10	Երեք տարին մեկ	1.63	1.90	2.21	2.58	3.01	3.53	4.27	5.17	6.29	7.65	9.33
9		1.58	1.84	2.14	2.50	2.92	3.42	4.13	5.01	6.09	7.41	9.03
8		1.54	1.79	2.08	2.42	2.83	3.31	4.01	4.85	5.89	7.17	8.74
7	Երկու տարին մեկ	1.49	1.73	2.02	2.35	2.75	3.21	3.88	4.70	5.71	6.94	8.46
6		1.45	1.68	1.96	2.28	2.66	3.11	3.76	4.55	5.52	6.72	8.18
5		1.41	1.63	1.90	2.21	2.58	3.02	3.64	4.41	5.35	6.50	7.92
4	Յուրաքանչյուր տարի	1.37	1.59	1.84	2.15	2.50	2.92	3.53	4.27	5.18	6.29	7.66
3		1.33	1.54	1.79	2.08	2.43	2.83	3.42	4.14	5.01	6.09	7.41
2		1.29	1.49	1.73	2.02	2.35	2.75	3.31	4.01	4.86	5.89	7.17
1		1.25	1.45	1.68	1.96	2.28	2.66	3.21	3.88	4.70	5.71	6.94

Քաղաքացիական ծառայություն														
Աշխատավարձ մակարդակները	Հիմնական աշխատավարձի բնականոն աճը	Մասնագիտական պաշտոններ									Ղեկավար պաշտոններ			
		8-րդ	7-րդ	6-րդ	5-րդ	4-րդ	3-րդ	2-րդ	1-ին	5-րդ	4-րդ	3-րդ	2-րդ	1-ին
11	*Աճ չկա*	1.68	1.95	2.28	2.66	3.11	3.64	4.40	5.34	4.40	5.34	6.49	7.91	9.65
10	*Երեք տարին մեկ*	1.63	1.90	2.21	2.58	3.01	3.53	4.27	5.17	4.27	5.17	6.29	7.65	9.33
9		1.58	1.84	2.14	2.50	2.92	3.42	4.13	5.01	4.13	5.01	6.09	7.41	9.03
8		1.54	1.79	2.08	2.42	2.83	3.31	4.01	4.85	4.01	4.85	5.89	7.17	8.74
7	*Երկու տարին մեկ*	1.49	1.73	2.02	2.35	2.75	3.21	3.88	4.70	3.88	4.70	5.71	6.94	8.46
6		1.45	1.68	1.96	2.28	2.66	3.11	3.76	4.55	3.76	4.55	5.52	6.72	8.18
5		1.41	1.63	1.90	2.21	2.58	3.02	3.64	4.41	3.64	4.41	5.35	6.50	7.92
4	*Յուրաքանչյուր տարի*	1.37	1.59	1.84	2.15	2.50	2.92	3.53	4.27	3.53	4.27	5.18	6.29	7.66
3		1.33	1.54	1.79	2.08	2.43	2.83	3.42	4.14	3.42	4.14	5.01	6.09	7.41
2		1.29	1.49	1.73	2.02	2.35	2.75	3.31	4.01	3.31	4.01	4.86	5.89	7.17
1		1.25	1.45	1.68	1.96	2.28	2.66	3.21	3.88	3.21	3.88	4.70	5.71	6.94

Դիվանագիտական ծառայություն									
Աշխատավարձի մակարդակները	*Հիմնական աշխատավարձի բնականոն աճը*		*1*	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*
			Կցորդ	*Երրորդ քարտու-*	*Երկրորդ քարտու-*	*Առաջին քարտու-*	*Խորհրդական, բաժնի*	*Վարչության պետ,*	*Առանձնաց-ված ստորա-*	*Գլխավոր քարտուղար*

			դար	*դար*	*դար*	*վարիչ(պետ)*	*առանձնաց-ված ստորա-բաժանման ղեկավարի տեղակալ*	*բաժանման ղեկավար*	
11	*Ամ չկա*	2.66	3.11	3.64	4.40	5.34	6.49	7.91	9.65
10	*Երեք տարին մեկ*	2.58	3.01	3.53	4.27	5.17	6.29	7.65	9.33
9		2.50	2.92	3.42	4.13	5.01	6.09	7.41	9.03
8		2.42	2.83	3.31	4.01	4.85	5.89	7.17	8.74
7	*Երկու տարին մեկ*	2.35	2.75	3.21	3.88	4.70	5.71	6.94	8.46
6		2.28	2.66	3.11	3.76	4.55	5.52	6.72	8.18
5		2.21	2.58	3.02	3.64	4.41	5.35	6.50	7.92
4	*Յուրաքանչյուր տարի*	2.15	2.50	2.92	3.53	4.27	5.18	6.29	7.66
3		2.08	2.43	2.83	3.42	4.14	5.01	6.09	7.41
2		2.02	2.35	2.75	3.31	4.01	4.86	5.89	7.17
1		1.96	2.28	2.66	3.21	3.88	4.70	5.71	6.94

Հարկային և մաքսային ծառայություն											
Աշխա-տա-վարձի մակար-դակները	*Հիմնական աշխատա-վարձի բնականոն աճը*	1	2	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*
		Հարկային տեսչության 2-րդ և 1-ին կարգի մասնագետ	Հարկա-յին տեսչու-թյան հարկային տեսուչ, տարած-քային բաժնի օպեր-լիազոր, վերադաս հարկային մարմնի 2-րդ կարգի մասնա-գետ, վերադաս հարկային մարմնի 1-ին կարգի մասնա-գետ, վերադաս մաքսային մարմնի մաքսա-տան կամ մաքսային կետի մաքսային տեսուչ	Հարկա-յին տեսչության առաջատար մասնագետ, հարկային տեսչու-թյան ավագ հարկա-յին տեսուչ, տարած-քային բաժնի ավագ օպեր-լիազոր, վերադաս մաքսա-յին մարմնի մաքսատան կամ մաքսա-յին կետի ավագ մաքսային տեսուչ	Վերադաս հարկային մարմնի հարկային տեսուչ, վերադաս հարկային մարմնի օպեր-լիազոր, վերադաս մաքսային մարմնի մաքսատան կամ մաքսային կետի հերթա-փոխի պետ, վերադաս մաքսային մարմնի մաքսատան կամ մաքսային կետի բաժան-մունքի պետի տեղակալ, վերադաս մաքսային մարմնի մաքսատան կամ մաքսային կետի հերթափոխի պետի տեղակալ, վերադաս մաքսային մարմնի տեսուչ	Հարկա-յին տեսչության գլխավոր մասնագետ, հարկային տեսչության գլխավոր հարկային տեսուչ, տարածքային բաժնի գլխավոր օպերլիա-զոր, վերադաս մաքսային մարմնի մաքսատան կամ մաք-սային կետի բաժանմուն-քի պետ, վերադաս մաքսային մարմնի մաքսատան բաժնի պետի տեղակալ, վերադաս մաքսային մարմնի մաքսատան կամ մաք-սային կետի գլխավոր մաքսային տեսուչ	Վերա-դաս հարկային մարմնի հետաքննիչ, վերադաս հարկային մարմնի առաջատար մասնա-գետ, վերադաս հարկային մարմնի ավագ հարկային տեսուչ, վերադաս հարկային մարմնի ավագ օպերլիազոր, վերադաս մաքսային մարմնի մաքսային կետի պետի տեղակալ, վերադաս մաքսային մարմնի բաժանմուն-քի պետի տեղակալ, վերադաս մաքսային մարմնի հերթափոխի պետ, վերա-դաս մաքսա-յին մարմնի հերթափոխի պետի տեղակալ, վերադաս մաքսային մարմնի ավագ մաքսային տեսուչ	Վերա-դաս հարկային մարմնի բաժնի պետի տեղակալ, հարկային տեսչու-թյան բաժնի պետ, վերադաս հարկային մարմնի ավագ հետաքննիչ, վերադաս հարկային մարմնի գլխավոր մասնա-գետ, վերադաս հարկային մարմնի գլխավոր հարկային տեսուչ, վերադաս հարկային մարմնի գլխավոր օպերլիազոր, վերադաս մաքսային մարմնի մաքսատան բաժնի պետ, վերադաս մաքսային մարմնի գլխավոր մաքսային տեսուչ, վերադաս մաքսային մարմնի բաժնի պետի տեղակալ, վերադաս մաքսային մարմնի բաժանմուն-քի պետ	Հար-կային տես-չու-թյան պետի տեղա-կալ, վերա-դաս հարկա-յին մարմ-նի բաժնի պետ, վերա-դաս մաքսա-յին մարմ-նի մաքսա-յին կետի պետ, վերա-դաս մաքսա-յին մարմ-նի մաքսա-տան պետի տեղա-կալ, վերա-դաս մաքսա-յին մարմ-նի բաժնի պետ	Հարկա-յին մարմնի վարչու-թյան պետի տեղակալ, վերա-դաս մաքսա-յին մարմնի վարչու-թյան պետի տեղա-կալ	Հարկային մարմնի վարչու-թյան պետ, հարկային տեսչության պետ, վերադաս մաքսային մարմնի վարչության պետ, վերադաս մաքսային մարմնի մաքսատան պետ
11	*Ամ չկա*	1.68	1.95	2.28	2.66	3.11	3.64	4.40	5.34	6.49	7.91
10	*Երեք տարին մեկ*	1.63	1.90	2.21	2.58	3.01	3.53	4.27	5.17	6.29	7.65
9		1.58	1.84	2.14	2.50	2.92	3.42	4.13	5.01	6.09	7.41
8		1.54	1.79	2.08	2.42	2.83	3.31	4.01	4.85	5.89	7.17
7	*Երկու տարին մեկ*	1.49	1.73	2.02	2.35	2.75	3.21	3.88	4.70	5.71	6.94
6		1.45	1.68	1.96	2.28	2.66	3.11	3.76	4.55	5.52	6.72
5		1.41	1.63	1.90	2.21	2.58	3.02	3.64	4.41	5.35	6.50

4	*Յուրա-քանչյուր տարի*	1.37	1.59	1.84	2.15	2.50	2.92	3.53	4.27	5.18	6.29
3		1.33	1.54	1.79	2.08	2.43	2.83	3.42	4.14	5.01	6.09
2		1.29	1.49	1.73	2.02	2.35	2.75	3.31	4.01	4.86	5.89
1		1.25	1.45	1.68	1.96	2.28	2.66	3.21	3.88	4.70	5.71

~~ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչություն~~	
~~ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության պետ~~	~~8.00~~
~~ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության պետի տեղակալ, քննչական վարչության բաժնի պետ~~	~~6.75~~
~~ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ~~	~~6.50~~
~~ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության ավագ քննիչ~~	~~6.00~~
~~ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության քննիչ~~	~~5.50~~

Հարկադիր կատարման ծառայություն								
Աշխա-տավարձի մակարդակ-ները	*Հիմնական աշխատավարձի բնականոն աճը*	1	2	3	4	5	6	7
		Տեսուչ	Հարկադիր կատարող	Ավագ հարկադիր կատարող, առաջատար խորհրդատու, առաջին կարգի խորհրդատու	Գլխավոր խորհրդատու	Բաժան-մունքի պետ, բաժնի պետի տեղակալ	Մարզային բաժնի պետ, Երևանի բաժնի պետ	Կենտրոն-ական մարմնի բաժնի պետ
11	*Աճ չկա*	2.28	2.66	3.11	3.64	4.40	5.34	6.49
10	*Երեք տարին մեկ*	2.21	2.58	3.01	3.53	4.27	5.17	6.29
9		2.14	2.50	2.92	3.42	4.13	5.01	6.09
8		2.08	2.42	2.83	3.31	4.01	4.85	5.89
7	*Երկու տարին մեկ*	2.02	2.35	2.75	3.21	3.88	4.70	5.71
6		1.96	2.28	2.66	3.11	3.76	4.55	5.52
5		1.90	2.21	2.58	3.02	3.64	4.41	5.35
4	*Յուրաքանչյուր տարի*	1.84	2.15	2.50	2.92	3.53	4.27	5.18
3		1.79	2.08	2.43	2.83	3.42	4.14	5.01
2		1.73	2.02	2.35	2.75	3.31	4.01	4.86
1		1.68	1.96	2.28	2.66	3.21	3.88	4.70

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2017 թվականի նոյեմբերի 15-ին

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Հոդված 3. Զինվորական ծառայությունը

1. Զինվորական ծառայությունը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում օրենքով սահմանված պետական ծառայության ~~հատուկ~~ տեսակ է: Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով զինվորական ծառայություն անցնող անձինք համարվում են զինծառայող: Օտարերկրյա պետությունների զինված ուժերում և այլ զորքերում կամ ռազմաուսումնական հաստատություններում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ծառայությունը կամ ուսումնառությունը, ինչպես նաև օտարերկրյա պետությունների քաղաքացիների ծառայությունը կամ ուսումնառությունը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում կամ ռազմաուսումնական հաստատություններում կարգավորվում են համապատասխան պայմանագրերով:

2. Զինվորական ծառայությունը ներառում է՝

1) զորակոչի՝ պարտադիր կամ զորահավաքային կամ պայմանագրի կնքման կամ վարժական հավաքի կանչվելու միջոցով զինվորական ծառայությանը ներգրավումը.

2) զինվորական պաշտոնի նշանակումը և զինվորական կոչման շնորհումը.

3) զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակից բխող պարտականությունների իրականացումը.

4) զինվորական ծառայությունից արձակումը:

3. Առաջին անգամ զինվորական ծառայություն անցնող քաղաքացին Հայաստանի Հանրապետության պետական դրոշի և զորամասի մարտական դրոշի առջև տալիս է հավատարմության երդում: Երդման տեքստը սահմանվում է օրենքով: Ուսումնառության ընթացքում ռազմական պատրաստություն անցնող անձինք զինվորական երդում են տալիս ուսումնական ծրագրի շրջանակում կազմակերպվող հավաքի ժամանակ:

Հոդված 9. Զինվորական ծառայության պաշտոնների դասակարգումը

1. Զինվորական ծառայության պաշտոնները դասակարգվում են հրամանատարական և ոչ հրամանատարական կազմերի:

2. Հրամանատարական կազմի պաշտոնները բաժանվում են հետևյալ խմբերի.

1) բարձրագույն հրամանատարական.

2) ավագ հրամանատարական.

3) միջին հրամանատարական.

4) կրտսեր հրամանատարական:

3. Ոչ հրամանատարական կազմի պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.

1) բարձրագույն սպայական.
2) ավագ սպայական.
3) կրտսեր սպայական.
4) ավագ ենթասպայական.
5) կրտսեր ենթասպայական.
6) շարքային:

4. Զինվորական ծառայության պաշտոնների առանձին խմբերում ընդգրկվող հիմնական պաշտոնների անվանացանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Զինվորական ծառայության բարձրագույն հրամանատարական և բարձրագույն սպայական հիմնական պաշտոններին հավասարեցված պաշտոնների անվանացանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ մյուս հիմնական պաշտոններին հավասարեցված պաշտոնների անվանացանկը սահմանում է պետական լիազոր մարմնի ղեկավարը:

~~5. Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության հիմնական պաշտոնների, քրեակատարողական և փրկարարական ծառայությունների հիմնական պաշտոնների միջև համապատասխանությունը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:~~

«5. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, ազգային անվտանգության, ոստիկանության մարմինների համակարգերում զինվորական ծառայության հիմնական պաշտոնների, քրեակատարողական և փրկարար ծառայությունների հիմնական պաշտոնների միջև համապատասխանությունը սահմանում է Կառավարությունը»:

6. Զինվորական պաշտոնները միմյանց նկատմամբ կարող են համարվել հավասար կամ բարձր կամ ցածր՝ ըստ պաշտոնների խմբերում իրենց զբաղեցրած դիրքի:

Հոդված 61. Զինծառայողների դրամական ապահովությունը

1. Զինծառայողների դրամական ապահովությունը զինծառայողների նյութական ապահովության և նրանց կողմից ծառայողական պարտականությունների կատարումը խթանելու միջոց է:

2. Զինծառայողների դրամական ապահովությունն իրականացվում է ~~«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»~~ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված սկզբունքներին և հիմնական պայմաններին համապատասխան: Սույն հոդվածով սահմանված՝ զինծառայողների դրամական ապահովությանը վերաբերող դրույթները տարածվում են նաև քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողների վրա՝ «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համապատասխան ոլորտները կարգավորող օրենքների պահանջներին համապատասխան:

3. Զորակոչի միջոցով պարտադիր զինվորական ծառայություն անցնող շարքային կազմի զինծառայողների (ներառյալ՝ ծառայության ընթացքում կրտսեր ենթասպայական կազմի զինվորական կոչում ստացած և պայմանագրային զինվորական ծառայություն

անցնելու պայմանագիր չկնքած զինծառայողների) և սույն օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պայմանագիր կնքած զինծառայողների, ինչպես նաև ռազմաուսումնական կամ ոստիկանական ուսումնական հաստատություններում սովորող կուրսանտների ու սովորողների դրամական ապահովության կարգը և չափերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Զինծառայողների դրամական ապահովությունը բաղկացած է զինվորական (այլ հատուկ) կոչումներին համապատասխանող զինվորական պաշտոնների դասակարգման խմբերին և զինվորական ծառայության ստաժներին համարժեք պաշտոնային դրույքաչափերից (այսուհետ՝ պաշտոնային դրույքաչափ), օրենքով սահմանված կարգով տրվող հավելումներից և լրավճարներից: Սույն հոդվածով զինծառայողների դրամական ապահովությունը սահմանող դրույթները տարածվում են նաև զորակոչի միջոցով պարտադիր զինվորական ծառայություն անցնող սպայական կազմի և զորահավաքային զորակոչի միջոցով զինվորական ծառայություն անցնող զինծառայողների վրա:

5. Զինծառայողների պաշտոնային դրույքաչափը որոշվում է ~~«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»~~ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխան հավելվածով սահմանված պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցների և պետական պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի արտադրյալով: Պետական պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը սահմանվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով:

6. Զինվորական ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է ~~«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»~~ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխան հավելվածով սահմանված՝ տվյալ պաշտոնի խմբի սանդղակի գործակիցների միջոցով:

7. Յուրաքանչյուր սանդղակ բաղկացած է յոթ մակարդակից, որոնցից յուրաքանչյուրում սահմանվում է նվազագույն պաշտոնային դրույքաչափից մինչև առավելագույնը հաշվարկելու՝ բազային աշխատավարձի նկատմամբ բազմապատիկ գործակից:

8. Առաջին անգամ զինվորական պաշտոնում նշանակված անձի պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբի սանդղակում՝ ունեցած զինվորական ծառայության ստաժին համապատասխանող գործակցի միջոցով:

9. Նախորդ պաշտոնի նկատմամբ սահմանված կարգով ավելի բարձր կամ ցածր պաշտոնի նշանակված զինծառայողի պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է նոր պաշտոնի խմբի սանդղակում՝ ունեցած զինվորական ծառայության ստաժին համապատասխանող գործակցի միջոցով:

10. Զինծառայողին զինվորական ծառայության ստաժի համար սահմանվում է պաշտոնային դրույքաչափի բնականոն աճ՝ պաշտոնային դրույքաչափի նվազագույն մեծությունից առավելագույնը:

11. Պաշտոնային դրույքաչափի բնականոն աճը յուրաքանչյուր սանդղակի ներսում իրականացվում է հետևյալ սխեմայով.

1) 1-7-րդ մակարդակների համար սահմանվում է պաշտոնային դրույքաչափի միավոր ավելացում՝ կախված զինվորական ծառայության ստաժից.

2) մինչև 2 տարվա զինվորական ծառայության ստաժի դեպքում պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբին համապատասխանող սանդղակի 1-ին մակարդակի գործակցի միջոցով.

3) 2-ից մինչև 5 տարվա զինվորական ծառայության ստաժի դեպքում պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբին համապատասխանող սանդղակի 2-րդ մակարդակի գործակցի միջոցով.

4) 5-ից մինչև 10 տարվա զինվորական ծառայության ստաժի դեպքում պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբին համապատասխանող սանդղակի 3-րդ մակարդակի գործակցի միջոցով.

5) 10-ից մինչև 15 տարվա զինվորական ծառայության ստաժի դեպքում պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբին համապատասխանող սանդղակի 4-րդ մակարդակի գործակցի միջոցով.

6) 15-ից մինչև 20 տարվա զինվորական ծառայության ստաժի դեպքում պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբին համապատասխանող սանդղակի 5-րդ մակարդակի գործակցի միջոցով.

7) 20-ից մինչև 25 տարվա զինվորական ծառայության ստաժի դեպքում պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբին համապատասխանող սանդղակի 6-րդ մակարդակի գործակցի միջոցով.

8) 25 և ավելի տարվա զինվորական ծառայության ստաժի դեպքում պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբին համապատասխանող սանդղակի 7-րդ մակարդակի գործակցի միջոցով.

9) սանդղակի 7-րդ մակարդակից պաշտոնային դրույքաչափը մնում է անփոփոխ:

12. Պաշտոնային դրույքաչափի բնականոն աճի հերթական միավոր ավելացումն իրականացվում է սահմանված զինվորական ծառայության ստաժը լրանալուն հաջորդող ամսվա 1-ից:

13. Սույն օրենքով սահմանված կարգով հաստիքների կրճատման, այդ թվում՝ ստորաբաժանման լուծարման կամ հիվանդանոցային բուժման մեջ գտնվող պայմանագրային զինծառայողի՝ զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու կամ պայմանագրային զինծառայողին այլ պետական մարմիններ տեղափոխելու պատճառով զինվորական պաշտոնից ազատված և կադրերի տրամադրության տակ թողնված զինծառայողների համար պահպանվում է պաշտոնային դրույքաչափը՝ օրենքով սահմանված կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ թողնելու ժամանակահատվածում:

14. Ռազմաուսումնական կամ ոստիկանական ուսումնական հաստատություններն ավարտած և սկզբնական սպայական զինվորական կոչում ստացած զինծառայողների համար՝ մինչև պաշտոնի նշանակումը, իսկ ռազմաբժշկական ուսումնական հաստատություններն ավարտած և ինտերնատուրայում կամ օրդինատուրայում սովորելու հրամանագրված զինծառայողների համար՝ նաև ինտերնատուրայում և օրդինատուրայում սովորելու ընթացքում, պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է ~~«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»~~ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված սպայական կազմի նվազագույն խմբի 2-րդ մակարդակի գործակցով:

15. Արձակուրդում (բացառությամբ երեխայի խնամքի համար արձակուրդի) կամ գործուղման մեջ գտնվող զինծառայողների, ինչպես նաև սույն օրենքով սահմանված կարգով վեց ամիսը գերազանցող ժամկետով ռազմաուսումնական (կամ առկա ուսուցմամբ ոստիկանական ուսումնական) հաստատություններ, համապատասխան սպայական կամ սերժանտական դասընթացներ, ասպիրանտուրա, դոկտորանտուրա, կլինիկական օրդինատուրա կամ ինտերնատուրա ընդունվելու կամ Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության ռազմաուսումնական կամ այլ հաստատությունում վերապատրաստման գործուղվելու պատճառով զինվորական պաշտոնից ազատված և կադրերի տրամադրության տակ թողնված զինծառայողների համար պահպանվում է դրամական ապահովությունը՝ արձակուրդում կամ գործուղման մեջ գտնվելու կամ օրենքով սահմանված կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ թողնելու ժամանակահատվածում:

16. Զինվորական ծառայությունից արձակվող և զինվորական ծառայության ընթացքում չօգտագործված արձակուրդ ունեցող զինծառայողներին տրվում է փոխհատուցում՝ ոչ ավելի, քան զինվորական ծառայությունից արձակվելու և դրան նախորդող երկու տարվա չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափով: Սույն մասում նշված դեպքում չօգտագործված արձակուրդի օրերի հաշվարկում չեն ներառվում զինծառայողի՝ սույն օրենքի համաձայն՝ զինվորական ծառայության ընդհանուր ժամկետում չներառվող ժամանակահատվածների օրերը:

17. Անհարգելի պատճառով ծառայության չներկայացած օրերի համար զինծառայողներին դրամական ապահովություն չի հաշվարկվում:

18. Զինծառայողներին տրվող հավելումը դրամական ապահովության բաղկացուցիչ մաս է, որը սահմանվում է պաշտոնային դրույքաչափի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ կամ բացարձակ դրամական մեծությամբ և տրվում է՝ ելնելով զինվորական ծառայության առանձնահատկություններից: Զինծառայողներին տրվող հավելումների դեպքերը, չափերն ու տրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

19. Ծառայողական գործունեության գնահատման և (կամ) հատուկ առաջադրանքների և (կամ) աշխատանքների որակյալ կատարման համար զինծառայողներին կարող են տրվել պարգևատրումներ՝ օրենքով սահմանված կարգով:

Հոդված 72. Զինծառայողները և զինծառայողներին հավասարեցված անձինք

1. ~~Սույն օրենքի 6-րդ բաժնի դրույթների կիրառման իմաստով՝ զինծառայողներ են համարվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության, հանրապետական գործադիր մարմինների համակարգերում համապատասխան ծառայության մեջ գտնվող անձինք:~~
«Սույն օրենքի 6-րդ բաժնի դրույթների կիրառման իմաստով՝ զինծառայողներ են համարվում պաշտպանության նախարարության, ազգային անվտանգության, ոստիկանության մարմինների համակարգերում համապատասխան ծառայության մեջ գտնվող անձինք:»

2. Զինծառայողներին հավասարեցված անձինք են՝

1) մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը վարժական հավաքների կանչված զինապարտները, ինչպես նաև սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին մասնակցող անձինք, որոնց վրա տարածվում են սույն օրենքի 64-րդ հոդվածի 5-րդ մասի, 65-րդ հոդվածի 3-րդ մասի, 66-րդ հոդվածի 1-ին մասի, 68-րդ հոդվածի, 69-րդ հոդվածի և 71-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները.

2) Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակցի կամ երկրապահ կամավորականի կարգավիճակ ունեցող անձինք, որոնց վրա տարածվում են սույն օրենքի 64-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասի, 65-րդ հոդվածի 3-րդ մասի, 66-րդ հոդվածի 1-ին մասի, 67-69-րդ հոդվածների և 71-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները.

3) ~~Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության~~ քրեակատարողական ծառայողները, որոնց վրա տարածվում են սույն օրենքի 6-րդ բաժնի դրույթները, և հարկադիր կատարողները, որոնց վրա տարածվում են սույն օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները.

4) ~~պաշտպանության հանրապետական գործադիր մարմնում, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունում և Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոններ զբաղեցնող կամ քաղաքացիական հատուկ ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք, որոնց վրա տարածվում են սույն օրենքի 64-րդ հոդվածի, 65-րդ հոդվածի 1-ին մասի, 67-69-րդ հոդվածների, 71-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի դրույթները, ինչպես նաև պաշտպանության հանրապետական գործադիր մարմնում հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք, որոնց վրա տարածվում են սույն օրենքի 64-րդ, 67-69-րդ հոդվածների դրույթները.~~
«պաշտպանության նախարարությունում, քրեակատարողական ծառայությունում և Ոստիկանությունում քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող կամ պաշտպանության նախարարության, քրեակատարողական ծառայության և Ոստիկանության քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք, որոնց վրա տարածվում են սույն օրենքի 64-րդ հոդվածի, 65-րդ հոդվածի 1-ին մասի, 67-69-րդ հոդվածների, 71-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի դրույթները, ինչպես նաև պաշտպանության նախարարությունում հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք, որոնց վրա տարածվում են սույն օրենքի 64-րդ, 67-69-րդ հոդվածների դրույթները.

5) ~~Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության~~ փրկարարական ծառայողները, որոնց վրա տարածվում են սույն օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները:

3. Հայաստանի Հանրապետության պաշտպանության մասնակցած անձանց մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ է տրվում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի ղեկավարին կից կարող է գործել անհայտ կորածների հարցերով խորհրդատվական հանձնաժողով:

4. Սույն օրենքի այն դրույթները, որոնք վերաբերում են զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին, տարածվում են նաև՝

1) ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո մահացած այն զինծառայողների ընտանիքների վրա, որոնց մահվան պատճառը ծառայության ընթացքում ստացած վնասվածքն է, խեղումը կամ առաջացած հիվանդությունը.

2) ծառայողական պարտականությունները կատարելիս կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ անհայտ կորելու հետևանքով դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված անձանց ընտանիքների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 3. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

~~1. Սույն օրենքի հիմնական հասկացություններն օգտագործվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով սահմանված հիմնական հասկացությունների իմաստով:~~

«1. Սույն օրենքի հիմնական հասկացություններն օգտագործվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հասկացությունների իմաստով:»:

Հոդված 4. Սույն օրենքի գործողության ոլորտը

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է համայնքապետարանների աշխատակազմերում (այսուհետ՝ աշխատակազմ) համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերով նախատեսված պաշտոններ զբաղեցնող բոլոր անձանց վրա:

2. ~~Քաղաքական, հայեցողական պաշտոններ զբաղեցնող, ինչպես նաև տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք համայնքային ծառայողներ չեն համարվում:~~

«Համայնքային քաղաքական, համայնքային վարչական, համայնքային հայեցողական պաշտոններ զբաղեցնող, ինչպես նաև տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք համայնքային ծառայողներ չեն համարվում:»:

Հոդված 5. Համայնքային ծառայության հիմնական սկզբունքները

1. Համայնքային ծառայության վրա տարածվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ~~6-րդ~~ 12-րդ հոդվածով սահմանված հանրային ծառայության հիմնական սկզբունքները:

Հոդված 10. Համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը

1. Համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը սույն օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագրի հիման վրա հաստատում է համապատասխան համայնքի ղեկավարը:

Համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերն ընդգրկում են նաև աշխատանքային ստաժի և փորձի առնվազն հետևյալ չափանիշները.

ա) համայնքային ծառայության գլխավոր պաշտոններ՝ բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության առնվազն առաջատար պաշտոնների 2-րդ ենթախմբի պաշտոններում կամ դրանց համապատասխանող՝ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա համայնքային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ առնվազն հինգ տարվա հանրային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճանին համապատասխանող՝ պետական ծառայության դասային աստիճան (կոչում) կամ վերջին չորս տարվա ընթացքում ~~քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում~~ **քաղաքական, վարչական, հայեցողական կամ ինքնավար պաշտոններում** առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երեք տարվա փորձ կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, իսկ ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի պաշտոնի դեպքում՝ առնվազն երեք տարվա մասնագիտական գործունեության փորձ աուդիտի ոլորտում.

բ) համայնքային ծառայության առաջատար պաշտոններ՝ բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում ~~քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում~~ **քաղաքական, վարչական, հայեցողական կամ ինքնավար պաշտոններում** առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, իսկ ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի պաշտոնի դեպքում՝ առնվազն երեք տարվա մասնագիտական գործունեության փորձ աուդիտի ոլորտում.

գ) համայնքային ծառայության կրտսեր պաշտոններ՝ միջնակարգ կրթություն՝ առանց աշխատանքային ստաժի և փորձի:

2. Մինչև 2018 թվականի հունվարի 1-ը համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի անձնագիրն ընդգրկում է համայնքային ծառայության, պետական և (կամ) համայնքային կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, առաջատար պաշտոնների անձնագրերը՝ համայնքային ծառայության, պետական և (կամ) համայնքային կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ:

Մինչև 2018 թվականի հունվարի 1-ը 1000-ից պակաս բնակչություն ունեցող համայնքի աշխատակազմի քարտուղարի պաշտոնի անձնագիրը Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի համաձայնությամբ կարող է չընդգրկել սույն հոդվածի 1-ին մասի «ա» կետով ներկայացվող բարձրագույն կրթության և (կամ) աշխատանքային ստաժի և փորձի չափանիշները:

3. Համայնքային ծառայության պաշտոնի անձնագիրը կարող է փոփոխվել, եթե դա տվյալ պաշտոնն զբաղեցնող համայնքային ծառայողի համար չի առաջացնում այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստումից

հետո, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությամբ սահմանված ժամկետի ավարտով պայմանավորված՝ 1000-ից պակաս բնակչություն ունեցող համայնքի աշխատակազմի քարտուղարի պաշտոնի անձնագրի փոփոխման դեպքի:

Հոդված 17. Համայնքային ծառայության ստաժը

1. Համայնքային ծառայության ստաժը ներառում է համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու, աշխատակազմերում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը, ինչպես նաև մինչև համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելն աշխատած ողջ ժամանակաշրջանը:

Համայնքային ծառայության ստաժը չի ներառում սույն օրենքով սահմանված կարգի խախտմամբ համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու, օրենքի խախտմամբ աշխատակազմերում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը, ինչպես նաև մինչև համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելն աշխատած ողջ ժամանակաշրջանը:

2. Համայնքային ծառայության ստաժը հաշվարկվում է համայնքային ծառայողի ընդհանուր աշխատանքային ստաժում: Համայնքային ծառայության ստաժը հաշվարկվում է նաև համայնքային ծառայողի մասնագիտական աշխատանքային ստաժում, եթե այն համապատասխանում է ստացած բարձրագույն կրթությանը:

~~3. «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված մարմիններում քաղաքական կամ հայեցողական, կամ քաղաքացիական պաշտոն զբաղեցնելու, ինչպես նաև ժամկետային աշխատանքային պայմանագրով համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու ժամանակաշրջանի աշխատանքային ստաժը հավասարեցվում է համայնքային ծառայության ստաժին:~~

«3. «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված հանրային պաշտոն զբաղեցնելու, ինչպես նաև ժամկետային աշխատանքային պայմանագրով համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու ժամանակաշրջանի աշխատանքային ստաժը հավասարեցվում է համայնքային ծառայության ստաժին:»:

Հոդված 22. Համայնքային ծառայողի հիմնական իրավունքները

1. Համայնքային ծառայողն ունի «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ~~20-րդ~~ **18-րդ** հոդվածով սահմանված հիմնական իրավունքները:

Հոդված 23. Համայնքային ծառայողի հիմնական պարտականությունները

1. Համայնքային ծառայողը կրում է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ~~21-րդ~~ **19-րդ** հոդվածով սահմանված հիմնական պարտականությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2007 թվականի նոյեմբերի 28-ին

ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է հատուկ քննչական ծառայության՝ որպես քննչական մարմնի, կազմավորման, գործունեության, դրանում ~~ծառայության անցնելու~~ **ինքնավար պաշտոն զբաղեցնելու** կարգը և պայմանները, պաշտոնների ու դասային աստիճանների դասակարգումը, ~~ծառայողների~~ **ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց** իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, իրավական ու սոցիալական երաշխիքները և ~~ծառայության~~ **պաշտոնավարման** հետ կապված մյուս հարաբերությունները:

Հոդված 2. Հատուկ քննչական ծառայությունը

~~1. Հատուկ քննչական ծառայությունն կազմակերպում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական ծառայություն իրականացնող անձանց իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև ընտրական գործընթացների հետ կապված քրեական գործերով նախաքննություն:~~

~~Անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը կարող է քննչական այլ մարմինների քննիչների վարույթից վերցնել և հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթին հանձնել քրեական գործեր, որոնք առնչվում են սույն~~

~~մասում թվարկված պաշտոնատար անձանց հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործություններին, կամ որոնցով այդ անձինք ճանաչված են որպես տուժող, ինչպես նաև ցանկացած այլ քրեական գործ, եթե դրա փաստական հանգամանքներով պայմանավորված՝ առկա է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունը երաշխավորելու անհրաժեշտություն:~~

~~2. Հատուկ քննչական ծառայությունում ծառայությունը պետական ծառայության տեսակ է, որի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով:~~

~~Հատուկ քննչական ծառայությունում ծառայող անձը պետական ծառայող է:~~

~~3. Հատուկ քննչական ծառայությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված՝ օրինականության, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պատիվը և արժանապատվությունը հարգելու, մարդասիրության ու հրապարակայնության սկզբունքների պահպանմամբ:~~

~~4. Հատուկ քննչական ծառայության կողմից իրականացվող նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնում են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը և նրա լիազորած դատախազները:~~

~~5. Հատուկ քննչական ծառայությունը ղեկավարում է ծառայության պետը:~~

~~5.1. Հատուկ քննչական ծառայությունում վարվում է հատուկ քննչական ծառայության գործունեության վերաբերյալ վիճակագրություն, որի հիման վրա յուրաքանչյուր կիսամյակ կազմվում են վիճակագրական հաշվետվություններ:~~

~~Վիճակագրության վարման համար պարտադիր վիճակագրական դասակարգիչները, վիճակագրական տվյալների (տեղեկությունների) ցանկը և վիճակագրական հաշվետվությունների բովանդակության նկարագրությունը սահմանում է Կառավարությունը:~~

~~6. Հատուկ քննչական ծառայությունը հրապարակում է տեղեկատվություն իր գործունեության մասին: Հատուկ քննչական ծառայության պետը յուրաքանչյուր տարի՝ մինչև հունվարի 31-ը, Կառավարություն է ներկայացնում գրավոր հաղորդում՝ հատուկ քննչական ծառայության նախորդ տարվա գործունեության մասին:~~

~~7. Հատուկ քննչական ծառայության նստավայրը Երևան քաղաքն է:~~

<u>Հատուկ քննչական ծառայությունում պաշտոնները համարվում են ինքնավար պաշտոններ:</u>

Հոդված 3. Հատուկ քննչական ծառայության մասին օրենսդրությունը

1. Հատուկ քննչական ծառայության մասին օրենսդրությունը բաղկացած է սույն օրենքից, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքից, այլ օրենքներից ու իրավական ակտերից, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից:

~~Հատուկ քննչական ծառայության վրա տարածվում է նաև «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն այնքանով, որքանով դրա նորմերը իրենց էությամբ կիրառելի են ծառայության այդ տեսակի նկատմամբ և չեն հակասում սույն օրենքի և պետական ծառայության էությանը:~~

<u>«Հատուկ քննչական ծառայության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման աշխատողները և գլխավոր քարտուղարը</u>

քաղաքացիական ծառայողներ են, որոնց վրա տարածվում է <Քաղաքացիական ծառայության մասին> օրենքը:

2. Օրենքով նախատեսված դեպքերում հատուկ քննչական ծառայության պետն ընդունում է ծառայության կազմակերպման ու գործունեության վերաբերյալ ներքին կամ անհատական իրավական ակտեր:

3. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հոդված 4. Սույն օրենքի հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1 ~~) հատուկ քննչական ծառայության ծառայող~~ հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ՝ հատուկ քննչական ծառայության պետը, նրա տեղակալները, հատուկ քննչական ծառայության պետին առընթեր հատկապես կարևոր գործերի ավագ քննիչները, հատուկ քննչական ծառայության վարչությունների պետերը, նրանց տեղակալները, հատկապես կարևոր գործերի ավագ քննիչները և հատկապես կարևոր գործերի քննիչները .

2) օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողներ՝ Հանրապետության նախագահը, վարչապետը, փոխվարչապետները, պատգամավորները, Սահմանադրական դատարանի դատավորները, դատարանների դատավորները, նախարարները, նրանց տեղակալները, Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարը, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը, վարչապետի աշխատակազմի ղեկավարը, Ոստիկանության պետը և նրա տեղակալները, Ազգային անվտանգության ծառայության տնօրենը և նրա տեղակալները, Պետական եկամուտների կոմիտեի նախագահը և նրա տեղակալները, մարզպետները, նրանց տեղակալները, Երևանի քաղաքապետը, նրա տեղակալները, Հաշվեքննիչ պալատի նախագահը և խորհրդի անդամները, Կենտրոնական բանկի խորհրդի անդամները, Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամները, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամները, Վիճակագրական կոմիտեի ղեկավարը և անդամները.

3) ~~պետական ծառայություն իրականացնող անձ~~ սույն օրենքի իմաստով՝ դատախազները, ~~քննչական կոմիտեի ծառայողները~~ **քննչական կոմիտեի քննիչները**, ոստիկանության (բացառությամբ ոստիկանության զորքերի), ազգային անվտանգության (բացառությամբ սահմանապահ զորքերի և զինված ստորաբաժանումների), հարկային, մաքսային մարմինների, հարկադիր կատարումն ապահովող, քրեակատարողական և փրկարար ծառայությունների պաշտոնատար անձինք.

4) ընտրական գործընթացների հետ կապված հանցագործություններ՝ հանցագործություններ, որոնք նախատեսված են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149-րդ, 150-րդ, 154^1-րդ և 154^2 -րդ հոդվածներով:

Գ Լ ՈՒ Խ 2

ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ~~ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ~~ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՈՒ ԱԶԱՏՄԱՆ, ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հոդված 5. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողների~~ ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոնների համակարգը

Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողների~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց** պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.

1) հատուկ քննչական ծառայության բարձրագույն խմբի պաշտոններ՝

- հատուկ քննչական ծառայության պետ,
- հատուկ քննչական ծառայության պետի տեղակալներ.

2) հատուկ քննչական ծառայության գլխավոր խմբի պաշտոններ՝

- հատուկ քննչական ծառայության պետին առընթեր հատկապես կարևոր գործերի ավագ քննիչներ.
- վարչության պետեր և նրանց տեղակալներ.
- հատկապես կարևոր գործերի ավագ քննիչներ.

3) հատուկ քննչական ծառայության առաջատար խմբի պաշտոններ՝

- հատկապես կարևոր գործերի քննիչներ:

Հոդված 6. ~~Ծառայության անցնելու~~ Հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնելու համար ներկայացվող հիմնական պահանջները

1. Հատուկ քննչական ծառայությունում ~~ծառայության կարող է անցնել~~ **ինքնավար պաշտոն կարող է զբաղեցնել** Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, Հայաստանի Հանրապետությունում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ նմանատիպ աստիճան օտարերկրյա պետությունում ձեռք բերած, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է օրենքով սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով՝

1) անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի անձանց կամ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի) կամ պահեստազորի սպա է.

2) տիրապետում է գրական հայերենին.

3) բավարարում է սույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված պահանջները:

2. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի պաշտոնում~~ **ծառայությունում ինքնավար պաշտոնի** նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների ցանկը սահմանում է Կառավարությունը:

3. Հատուկ քննչական ծառայության պաշտոնի կարող են նշանակվել նաև սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներին չհամապատասխանող, սակայն դիմելու պահին «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ-ե» կետերով նախատեսված հիմքերով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված կամ 13-րդ հոդվածի համաձայն՝ մինչև 27 տարին լրանալը

պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստացած և պահեստազորում հաշվառված անձինք:

4. Հատուկ քննչական ծառայությունում ~~ծառայության չի կարող անցնել~~ **ինքնավար պաշտոնի չի կարող նշանակվել** այն քաղաքացին, ով՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատական կարգով զրկվել է քաղաքացիական կամ այլ ծառայությունում պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3) դատապարտվել է հանցագործություն կատարելու համար՝ անկախ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից.

4) գտնվում է քրեական հետապնդման մեջ.

5) չի համապատասխանում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին:

5. Հատուկ քննչական ծառայությունում պաշտոն զբաղեցնելու սահմանային տարիք է համարվում 60 տարեկանը: Սահմանային տարիքը լրանալուց հետո հատուկ քննչական ծառայության պետը կարող է մինչև 5 տարի ժամկետով երկարաձգել ~~ծառայության ժամկետը~~ **պաշտոնավարման ժամկետը**: Հատուկ քննչական ծառայության պետի և պետի տեղակալի պաշտոնի սահմանային տարիքը համարվում է 65 տարեկանը, որը համապատասխանաբար Կառավարության և վարչապետի կողմից կարող է երկարաձգվել մինչև 2 տարի ժամկետով:

Հոդված 7. Հատուկ քննչական ~~ծառայության~~ ծառայությունում պաշտոնի նշանակելու պայմանները

1. Հատուկ քննչական ծառայության պետ կարող է նշանակվել այն անձը, ով մինչև նշանակումը զբաղեցրել է հատուկ քննչական ~~ծառայության բարձրագույն~~ **ծառայությունում բարձրագույն** խմբի կամ վերջին հինգ տարին գլխավոր խմբի պաշտոն կամ վերջին յոթ տարին առաջատար խմբի պաշտոն կամ ունի դատախազի կամ քննիչի առնվազն 10 տարվա ստաժ:

2. Հատուկ քննչական ծառայության պետի տեղակալ կարող է նշանակվել այն անձը, ով մինչև նշանակումը վերջին չորս տարին զբաղեցրել է հատուկ քննչական ~~ծառայության գլխավոր~~ **ծառայությունում գլխավոր** խմբի կամ վերջին հինգ տարին առաջատար խմբի պաշտոն կամ ունի դատախազի կամ քննիչի առնվազն 8 տարվա ստաժ:

2.1. Հատուկ քննչական ծառայության պետին առընթեր հատկապես կարևոր գործերի ավագ քննիչ և հատուկ քննչական ծառայության վարչության պետ կարող է նշանակվել այն անձը, որը մինչև նշանակումը զբաղեցրել է հատուկ քննչական ~~ծառայության գլխավոր~~ **ծառայությունում գլխավոր** կամ առաջատար խմբերի պաշտոններ կամ ունի դատախազի կամ քննիչի առնվազն 6 տարվա ստաժ:

2.2. Հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալ կարող է նշանակվել այն անձը, որը մինչև նշանակումը զբաղեցրել է հատուկ քննչական ~~ծառայության գլխավոր~~ **ծառայությունում գլխավոր** կամ առաջատար խմբերի պաշտոններ կամ ունի դատախազի կամ քննիչի առնվազն 5 տարվա ստաժ:

3. Հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի ավագ քննիչ կարող է նշանակվել այն անձը, որը մինչև նշանակումը վերջին 2 տարին զբաղեցրել է հատկապես կարևոր գործերի քննիչի պաշտոն կամ ունի դատախազի կամ քննիչի առնվազն 4 տարվա ստաժ:

4. Հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննիչ կարող է նշանակվել այն անձը, որը մինչև նշանակումն ունի դատախազի կամ քննիչի առնվազն 3 տարվա ստաժ:

5. Հատուկ քննչական ~~ծառայության~~ **ծառայությունում** գլխավոր և առաջատար խմբի պաշտոնները համալրվում են սույն օրենքով սահմանված կարգով անցկացվող մրցույթի արդյունքների հիման վրա:

6. Հատուկ քննչական ծառայությունում թափուր պաշտոնի կարող է նշանակվել պաշտոնակատար, բայց ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով:

Հոդված 8. Հատուկ քննչական ~~ծառայության~~ ծառայությունում պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը

1. Մրցույթի հիման վրա նշանակումներ կատարվում են միայն գլխավոր և առաջատար խմբի պաշտոններում:

2. Հատուկ քննչական ~~ծառայության~~ **ծառայությունում** գլխավոր և առաջատար խմբի թափուր պաշտոն առաջանալու դեպքում հատուկ քննչական ծառայության պետը նշանակում է մրցույթ պաշտոնը թափուր մնալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

3. Թափուր պաշտոնի մրցույթ անցկացնելու մասին տրվում է հայտարարություն մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով:

Մրցույթի հայտարարության ձևը հաստատում է հատուկ քննչական ծառայության պետը:

4. Մրցութային հանձնաժողովն անձին չի թույլատրում մասնակցել մրցույթին, եթե նա չի բավարարում սույն օրենքով պաշտոնի անցնելու համար ներկայացվող պահանջները:

5. Մրցույթն անցկացվում է նաև, եթե մրցույթին մասնակցելու համար դիմել է մեկ մասնակից:

6. Մրցույթն անցկացվում է մրցութային հանձնաժողովի կողմից հարցազրույցի ձևով՝ մասնակցի գործնական կարողություններն ստուգելու նպատակով:

7. Մրցութային հանձնաժողովը հարցազրույցից հետո յուրաքանչյուր մասնակցի համար անցկացնում է քվեարկություն: Մրցութային հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ քվեարկում է կողմ կամ դեմ:

8. Մրցույթի հաղթող են ճանաչվում այն մասնակիցները, ովքեր հավաքել են քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայները:

9. Մրցույթի արդյունքները հրապարակվում են մրցույթի անցկացման օրը:

10. Մրցույթի արդյունքները հրապարակվելուց հետո մասնակիցը՝ իր արդյունքների մասով, կամ մրցութային հանձնաժողովի անդամը մեկ ժամվա ընթացքում այդ արդյունքները կարող է գրավոր բողոքարկել հատուկ քննչական ծառայության պետին:

11. Մրցույթի արդյունքների հրապարակումից մեկ ժամ հետո գրավոր բողոքի բացակայության դեպքում համապատասխան մրցութային հանձնաժողովը մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցների վերաբերյալ եզրակացություն է ներկայացնում հատուկ քննչական ծառայության պետին, որը եզրակացությունն ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցներից մեկին նշանակում է համապատասխան պաշտոնում:

12. Եթե մասնակիցներից ոչ մեկը չի հավաքել մրցութային հանձնաժողովի՝ քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայներ ու մրցույթում հաղթող չի ճանաչվել, ապա անցկացվում է նոր մրցույթ:

13. Եթե մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ դիմողները չեն բավարարում սույն օրենքով պաշտոնի անցնելու համար ներկայացվող պահանջները, կամ դիմողներից ոչ մեկը չի ներկայացել մրցույթին, ապա մրցույթը համարվում է չկայացած, և անցկացվում է նոր մրցույթ, որը հայտարարվում և անցկացվում է սույն հոդվածով սահմանված կարգով:

14. Մրցութային հանձնաժողովը կազմավորում է հատուկ քննչական ծառայության պետը, իսկ դրա աշխատակարգը հաստատում է Կառավարությունը: Մրցութային հանձնաժողովը կազմավորվում է 7 անդամից, որոնցից 3-ը իրավաբան-գիտնականներ են, իսկ 4-ը՝ ~~պետական ծառայողներ~~ **պետական պաշտոն զբաղեցնող անձինք:**

15. Մրցութային հանձնաժողովը ղեկավարում է հանձնաժողովի նախագահը, որին հանձնաժողովի անդամների թվից նշանակում է հատուկ քննչական ծառայության պետը:

Հոդված 9. Հատուկ քննչական ծառայությունում պաշտոնի նշանակելը

1. Հատուկ քննչական ծառայության պետին պաշտոնի նշանակում է Կառավարությունը՝ վարչապետի ներկայացմամբ՝ վեց տարի ժամկետով:

2. Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել հատուկ քննչական ծառայության պետի պաշտոնում:

3. Հատուկ քննչական ծառայության պետի պաշտոնավարման ժամկետը չի կարող գերազանցել սույն օրենքով սահմանված պաշտոնավարման սահմանային տարիքը՝ անկախ վերանշանակման հանգամանքից, բացառությամբ սույն օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքի:

4. Հատուկ քննչական ծառայության պետի տեղակալներին հատուկ քննչական ծառայության պետի ներկայացմամբ նշանակում է վարչապետը:

5. Հատուկ քննչական ~~ծառայության~~ **ծառայությունում** մյուս պաշտոններում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է հատուկ քննչական ծառայության պետը:

Հոդված 10. Հատուկ քննչական ծառայության ծառայողի երդումը

1. Հատուկ քննչական ծառայությունում առաջին անգամ պաշտոնի նշանակվող անձինք հատուկ քննչական ծառայության պետի սահմանած կարգով Հայաստանի Հանրապետության դրոշի առջև տալիս են հետևյալ բովանդակությամբ երդում.

«Ես՝ (անուն, հայրանուն, ազգանուն), հատուկ քննչական ծառայությունում պաշտոն ստանձնելով, երդվում եմ՝

հավատարմորեն ծառայել Հայաստանի Հանրապետության ժողովրդին, խստագույնս պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները, հանցավոր ոտնձգություններից պաշտպանել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, հասարակական կարգը, անվտանգությունն ու սահմանադրական կարգը, անվերապահորեն և բարեխղճորեն կատարել իմ պարտականությունները»:

2. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողը~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը** երդում տալիս է մեկ անգամ՝ անհատական կարգով, երդման տեքստն ընթերցելու միջոցով:

3. Հատուկ քննչական ծառայության ծառայողը ստորագրում է իր ընթերցած երդման տեքստը, որը պահպանվում է նրա անձնական գործում:

Հոդված 11. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ կիրառվող սահմանափակումները

1. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** նկատմամբ կիրառվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված սահմանափակումները:

2. Հատուկ քննչական ծառայության ծառայողը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողը~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը** յուրաքանչյուր պարագայում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն:

Հոդված 12. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողին ծառայությունից~~ ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին պաշտոնից ազատելը

1. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողը ծառայությունից~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը** պաշտոնից ազատվում է՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման դեպքում.

2) անձնական նախաձեռնությամբ՝ գրավոր դիմումի հիման վրա.

3) սույն օրենքով նախատեսված սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ.

4) հաստիքների կրճատման, հատուկ քննչական ծառայության լուծարման կամ վերակազմակերպման դեպքում, եթե հատուկ քննչական ~~ծառայության ծառայողին~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին** համապատասխան պաշտոնում նշանակելը հնարավոր չէ, և հաստիքների կրճատումը պայմանավորված է հաստիքների ընդհանուր թվի կրճատմամբ.

5) հիվանդության կամ ֆիզիկական արատի պատճառով ~~ծառայությանը~~ **ինքնավար պաշտոն զբաղեցնելու** համար ոչ պիտանի լինելու դեպքում.

6) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու դեպքում.

7) կարգապահական խախտումների համար, եթե մեկ տարվա ընթացքում երկու անգամ նրա նկատմամբ կիրառվել է սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-5-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերից որևէ մեկը.

8) սույն օրենքով հատուկ քննչական ~~ծառայության ծառայողների~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց** նկատմամբ կիրառվող սահմանափակումները խախտելու դեպքում.

9) ~~ծառայողի~~ **հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելը ոչ արդարացնող հիմքով.

10) հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում.

11) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում ավելի քան 140 օր ~~ծառայության~~ **աշխատանքի** չներկայանալու դեպքում՝ չհաշված հղիության և ծննդաբերության կամ երեխային խնամելու համար արձակուրդը.

12) քաղաքական կամ հայեցողական պաշտոններում ընտրվելու կամ նշանակվելու դեպքում.

13) ատեստավորման արդյունքների հիման վրա, եթե համապատասխան թափուր պաշտոնի բացակայության պատճառով ավելի ցածր պաշտոնի նշանակելն անհնարին է.

14) սույն օրենքով նախատեսված ատեստավորմանը երկու անգամ չներկայանալու դեպքում:

2. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** պարտականությունները համարվում են դադարած նրա մահվան դեպքում:

Հոդված 13. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողների~~ ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց դասային աստիճանները

1. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողներին~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց** շնորհվում են հետևյալ դասային աստիճանները.

1) արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդական.

2) արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական.

3) արդարադատության առաջին դասի խորհրդական.

4) արդարադատության երկրորդ դասի խորհրդական.

5) արդարադատության երրորդ դասի խորհրդական.

6) առաջին դասի խորհրդական.

7) երկրորդ դասի խորհրդական.

8) երրորդ դասի խորհրդական:

2. Արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդականի և արդարադատության երրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճանները բարձրագույն դասային աստիճաններ են, որոնք շնորհվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

3. Հատուկ քննչական ծառայության մյուս դասային աստիճանները շնորհում է հատուկ քննչական ծառայության պետը:

4. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողներին~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց** դասային աստիճանները շնորհվում են անհատական կարգով՝ ցմահ:

~~5. Սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 10-րդ կետերով նախատեսված հիմքերով ծառայությունից ազատվելու դեպքում հատուկ քննչական ծառայության ծառայողը կարող է զրկվել հատուկ քննչական ծառայության դասային աստիճանից՝ տվյալ դասային աստիճանը շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ:~~

«5. Սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 10-րդ կետերով նախատեսված հիմքերով պաշտոնից ազատվելու դեպքում հատուկ քննչական

ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը կարող է զրկվել հատուկ քննչական ծառայության դասային աստիճանից՝ տվյալ դասային աստիճանը շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ:»:

Հոդված 14. Հատուկ քննչական ~~ծառայության~~ ծառայությունում պաշտոններին համապատասխանող դասային աստիճանները

1. Հատուկ քննչական ծառայության պետի պաշտոնին համապատասխանող դասային աստիճանի վերին սահմանն արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճանն է, իսկ ստորին սահմանը՝ արդարադատության երրորդ դասի պետական խորհրդականի:

2. Հատուկ քննչական ծառայության պետի տեղակալի պաշտոնին համապատասխանող դասային աստիճանի վերին սահմանն արդարադատության երրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճանն է, իսկ ստորին սահմանը՝ արդարադատության առաջին դասի խորհրդականի:

3. Հատուկ քննչական ~~ծառայության~~ **ծառայությունում** գլխավոր խմբի պաշտոններին համապատասխանող դասային աստիճանի վերին սահմանն արդարադատության առաջին դասի խորհրդականի դասային աստիճանն է:

4. Հատուկ քննչական ~~ծառայության~~ ծառայությունում առաջատար խմբի պաշտոններին համապատասխանող դասային աստիճանի վերին սահմանն արդարադատության երկրորդ դասի խորհրդականի դասային աստիճանն է:

5. Այլ պետական մարմիններում ծառայություն անցած (աշխատած) և զինվորական կամ հատուկ կոչում (դասային աստիճան, որակավորման դաս) ունեցող անձանց հատուկ քննչական ~~ծառայության~~ **ծառայությունում** պաշտոնի նշանակելիս երեք ամսվա ընթացքում շնորհվում է զինվորական կամ հատուկ կոչմանը (դասային աստիճան, որակավորման դաս) համապատասխան դասային աստիճան:

6. Այլ պետական մարմիններում շնորհված զինվորական կամ հատուկ կոչումների (դասային աստիճանների, որակավորման դասերի) համապատասխանությունը սույն օրենքով սահմանված դասային աստիճաններին սահմանում է Կառավարությունը:

Հոդված 15. Դասային աստիճանների շնորհման ժամկետները

1. Երրորդ դասի խորհրդականի դասային աստիճանն սկզբնական դասային աստիճան է և շնորհվում է հատուկ քննչական ~~ծառայության~~ **ծառայությունում** պաշտոնի նշանակվելիս, բացառությամբ սույն օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքի: Հատուկ քննչական ծառայությունում մյուս պաշտոններում նշանակվելիս ~~ծառայողին~~ **ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին** շնորհվում է սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված՝ տվյալ պաշտոնին համապատասխանող նվազագույն դասային աստիճանը:

2. Եթե սույն օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դասային աստիճանի համապատասխանեցման արդյունքում այն ավելի բարձր է հատուկ քննչական ծառայությունում տվյալ պաշտոնին նշանակվելու համար սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված առավելագույն դասային աստիճանից, ապա շնորհվում է տվյալ պաշտոնի համար սահմանված առավելագույն դասային աստիճանից մեկ աստիճան բարձր դասային աստիճան:

3. Հատուկ քննչական ծառայությունում ~~ծառայողներին~~ **ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց** դասային աստիճանները շնորհվում են հերթականության կարգով, զբաղեցրած պաշտոնի համար սահմանված առավելագույն դասային աստիճանի սահմաններում, նախորդ դասային աստիճանում ~~ծառայության~~ **պաշտոն զբաղեցնելու** սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

4. Սույն օրենքով սահմանված կարգով հերթական դասային աստիճանի շնորհման համար սահմանվում են ~~ծառայության~~ **հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնելու** հետևյալ ժամկետները.

1) երրորդ դասի խորհրդականի դասային աստիճան ունեցողի համար՝ 2 տարի.

2) երկրորդ դասի խորհրդականի դասային աստիճան ունեցողի համար՝ 3 տարի.

3) առաջին դասի խորհրդականի դասային աստիճան ունեցողի համար՝ 3 տարի.

4) արդարադատության երրորդ դասի խորհրդականի դասային աստիճան ունեցողի համար՝ 4 տարի.

5) արդարադատության երկրորդ դասի դասային աստիճան ունեցողի համար՝ 5 տարի:

5. Արդարադատության առաջին դասի խորհրդականի դասային աստիճան ունեցող ծառայողին բարձրագույն դասային աստիճան շնորհելու համար ծառայության ժամկետ չի սահմանվում:

6. Նախորդ դասային աստիճանը կրելու ժամկետը հաշվարկվում է այդ դասային աստիճանը շնորհելու մասին իրավական ակտն ստորագրելու հաջորդ օրվանից, իսկ սույն օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դասային աստիճանի համապատասխանեցման արդյունքում՝ զինվորական կամ այլ հատուկ կոչման շնորհման իրավական ակտի ստորագրման հաջորդ օրվանից:

7. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** հերթական դասային աստիճանի շնորհումը հետաձգվում է, եթե՝

1) ատեստավորումից հետո նրա նկատմամբ որոշում է ընդունվել ատեստավորումը հետաձգելու և վերապատրաստման գործուղելու մասին.

2) նա ունի կարգապահական տույժ.

3) նրա նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում կամ կատարվում է ծառայողական քննություն:

8. Հերթական դասային աստիճանի շնորհումը հետաձգելու դեպքում հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** հերթական դասային աստիճանը շնորհվում է սույն հոդվածի 7-րդ մասի 1-3-րդ կետերում նշված խոչընդոտների վերացումից հետո՝ 15-օրյա ժամկետում:

Գ Լ ՈՒ Խ 3

ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ~~ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ~~ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ, ԾԱՌԱՅՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Հոդված 16. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողների~~ ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց գործունեության

նկատմամբ վերահսկողությունը և լիազորությունները

1. Հատուկ քննչական ծառայության պետը սույն օրենքով սահմանված կարգով կազմակերպում, վերահսկում և ղեկավարում է հատուկ քննչական ~~ծառայության ծառայողների~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց** գործունեությունը:

2. Հատուկ քննչական ծառայության պետը՝

1) ղեկավարում և վերահսկողություն է իրականացնում հատուկ քննչական ~~ծառայության ծառայողներ~~ի **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց** գործունեության նկատմամբ.

2) ընդունում է հատուկ քննչական ծառայության գործունեության կազմակերպմանն ուղղված որոշումներ, տալիս է հրամաններ, հանձնարարականներ և ցուցումներ.

3) նշանակում է ծառայողական քննություններ կամ դադարեցնում դրանք, փոխում է ծառայողական քննություն կատարողին.

4) սույն օրենքով նախատեսված դեպքերում կարող է ժամանակավորապես դադարեցնել ~~ծառայողի~~ **ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** լիազորությունները.

5) հաստատում է հատուկ քննչական ծառայության կառուցվածքը, հաստիքացուցակը և կանոնադրությունը.

6) ***(կետն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-312-Ն)***

7) կազմակերպում է քաղաքացիների ընդունելություն, քննում է հատուկ քննչական ~~ծառայության ծառայողների~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց** դեմ բերված բողոքները և դիմումները.

8) կազմակերպում է հատուկ քննչական ծառայության նյութատեխնիկական ապահովությունը.

9) օրենսդրությամբ վերապահված լիազորությունների սահմաններում տնօրինում է հատուկ քննչական ծառայության դեպոզիտ հաշվի միջոցները.

10) կազմակերպում է հատուկ քննչական ~~ծառայության ծառայողների~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց** մասնագիտական և հատուկ ուսուցումը.

11) իր իրավասության սահմաններում խրախուսում կամ կարգապահական տույժի է ենթարկում հատուկ քննչական ~~ծառայության ծառայողներին~~ ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ .

12) առաջարկություններ է ներկայացնում հատուկ քննչական ծառայության կազմավորման ու գործունեության մասին օրենսդրության կատարելագործման վերաբերյալ.

13) ապահովում է հատուկ քննչական ծառայության համագործակցությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ.

14) իրականացնում է օրենքներով ու իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

3. Հատուկ քննչական ծառայության պետը պատասխանատվություն է կրում հատուկ քննչական ծառայության գործունեության համար:

4. Հատուկ քննչական ծառայության պետի տեղակալը փոխարինում է հատուկ քննչական ծառայության պետին վերջինիս բացակայության ժամանակահատվածում, ինչպես նաև պետի հանձնարարությամբ ապահովում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված լիազորությունների իրականացումը:

5. Հատուկ քննչական ծառայության պետին առընթեր հատկապես կարևոր գործերի ավագ քննիչները ծառայության պետի հանձնարարությամբ կազմակերպում և իրականացնում են նախաքննություն առանձնակի բարդություն ունեցող գործերով:

6. Հատուկ քննչական ծառայության վարչության պետը ղեկավարում է վարչության աշխատանքները: Հատուկ քննչական ծառայության վարչության պետը կարող է ունենալ տեղակալներ, որոնք փոխարինում են հատուկ քննչական ծառայության վարչության պետին վերջինիս բացակայության ժամանակահատվածում, ինչպես նաև վարչության պետի հանձնարարությամբ ապահովում են նրա լիազորությունների իրականացումը:

Հոդված 18. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի իրավունքները

1. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողն~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձն** իրավունք ունի՝

1) ծանոթանալու զբաղեցրած պաշտոնում իր իրավունքները և պարտականությունները սահմանող իրավական ակտերին.

2) ծանոթանալու անձնական գործի բոլոր նյութերին, իր գործունեության գնահատագրերին և այլ փաստաթղթերին, ներկայացնելու բացատրությո

ններ.

3) ստանալու ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր.

4) իր իրավասության սահմաններում ընդունելու որոշումներ.

5) ստանալու ~~ծառայության~~ **կատարած աշխատանքի** համար համարժեք վարձատրություն.

6) ունենալու սոցիալական պաշտպանություն և ապահովություն.

7) օգտվելու իրավական պաշտպանությունից.

8) դասային աստիճանի սահմանված կարգով բարձրացման.

9) բողոքարկելու ատեստավորման և ծառայողական քննության արդյունքները.

10) ներկայացնելու առաջարկություններ ~~ծառայության~~ **աշխատանքի** կազմակերպման ու կատարելագործման հարցերի վերաբերյալ:

2. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողը~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը** կարող է ունենալ սույն օրենքով և իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

Հոդված 19. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի պարտականությունները

1. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** պարտականություններն են՝

1) Սահմանադրության, սույն օրենքի, այլ օրենքների և իրավական ակտերի պահանջները կատարելը.

2) մասնագիտական և գործնական անհրաժեշտ գիտելիքներ ապահովելը.

3) աշխատանքային կարգապահությունը պահպանելը.

4) հաշվետվություն ներկայացնելը.

5) սահմանված կարգով տրված հանձնարարականները, հրամանները, ցուցումները և ընդունված որոշումները կատարելը.

6) սահմանված կարգով և ժամկետներում առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ քննության առնելը և դրանց ընթացք տալը.

7) պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները պահպանելը, այդ թվում՝ ~~ծառայությունը~~ **պաշտոնավարումը** դադարեցնելուց հետո.

8) օրենսդրությամբ սահմանված կարգով եկամուտների հայտարարագիր ներկայացնելը:

2. ~~Ծառայողի~~ **Հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց** համար սույն օրենքով, այլ օրենքներով ու իրավական ակտերով կարող են սահմանվել նաև այլ պարտականություններ:

Հոդված 20. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** նկատմամբ կիրառվող խրախուսման միջոցները

1. ~~Երկարամյա ծառայության~~ **երկարամյա պաշտոնավարման,** ինչպես նաև ծառայողական պարտականությունները և առաջադրանքները պատշաճ կատարելու և առանձնակի ցուցանիշների համար հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** նկատմամբ կարող են կիրառվել խրախուսման հետևյալ միջոցները.

1) շնորհակալության հայտարարում.

2) միանվագ դրամական պարգևատրում.

3) հուշանվերով պարգևատրում.

4) լրացուցիչ վճարովի տասնօրյա արձակուրդի տրամադրում.

5) արտահերթ դասային աստիճանի շնորհում.

6) տվյալ պաշտոնի համար նախատեսված դասային աստիճանի վերին սահմանից մեկ աստիճան բարձր դասային աստիճանի շնորհում.

7) մեդալով կամ կրծքանշանով պարգևատրում:

2. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** նկատմամբ, որպես խրախուսանք, կարող է կիրառվել նախկինում նշանակված կարգապահական տույժը ժամկետից շուտ հանելը:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված խրախուսման միջոցներ հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի նկատմամբ ծառայության~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** ամբողջ ընթացքում կարող են կիրառվել մեկ անգամ:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված խրախուսման միջոցները հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** նկատմամբ կիրառում է նրան պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող մարմինը կամ պաշտոնատար անձը, բացառությամբ սույն հոդվածի 5-6-րդ մասերով նախատեսված դեպքերի:

5. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված խրախուսանքի միջոցը հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** նկատմամբ կիրառում է հատուկ քննչական ծառայության պետը:

6. Եթե արտահերթ շնորհվող դասային աստիճանը կամ օրենքով նախատեսված դասային աստիճանի վերին սահմանից մեկ աստիճանով ավելի բարձր շնորհվող դասային աստիճանը բարձրագույն դասային աստիճան է, ապա սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված խրախուսման միջոցները կիրառում է Հանրապետության նախագահը՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

7. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** նկատմամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված խրախուսման միջոցը կիրառում է կարգապահական տույժ նշանակած մարմինը կամ պաշտոնատար անձը:

8. Հատուկ քննչական ~~ծառայության~~ **ծառայությունում** գլխավոր և առաջատար պաշտոնների խմբերում պաշտոն զբաղեցնող ~~ծառայողներին~~ **անձանց** խրախուսման ներկայացնելու կարգը սահմանում է հատուկ քննչական ծառայության պետը:

Հոդված 21. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը

1. Կարգապահական խախտման ծանրությունից ելնելով՝ հատուկ քննչական ~~ծառայության ծառայող~~ի **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը.

1) զգուշացում.
2) նկատողություն.
3) խիստ նկատողություն.
4) դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով.
5) պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով.
6) ~~ծառայությունից~~ **պաշտոնից** ազատում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգապահական տույժերը հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** նկատմամբ կիրառում է նրան պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող մարմինը կամ պաշտոնատար անձը:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը բարձրագույն դասային աստիճան ունեցող հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** նկատմամբ չի կիրառվում:

Հոդված 22. Կարգապահական տույժը կիրառելու և տույժը հանելու կարգը

1. Կարգապահական տույժը նշանակվում է, եթե վեց ամսից ավելի չի անցել կարգապահական խախտումը հայտնաբերելու օրվանից՝ չհաշված հիվանդության կամ արձակուրդում գտնվելու ժամանակաշրջանը. ընդ որում, նշանակվող տույժը պետք է համապատասխանի կատարված խախտման բնույթին:

2. Տույժերը ձևակերպվում են գրավոր: Կարգապահական յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ:

3. Կարգապահական տույժի մասին հատուկ քննչական ~~ծառայության ծառայողը~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը** տեղեկացվում է դրա նշանակումից հետո՝ հնգօրյա ժամկետում:

4. Եթե կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, հատուկ քննչական ~~ծառայության ծառայողը~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը** նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա այն համարվում է մարված:

Սույն մասի դրույթները չեն տարածվում սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 3-6-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերի վրա:

5. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** նկատմամբ կարգապահական տույժերը կարող են կիրառվել միայն ծառայողական քննության արդյունքների հիման վրա:

6. Ծառայողական քննության ժամանակահատվածում հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** լիազորությունները կարող են ժամանակավորապես դադարեցվել, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ պաշտոնում մնալով՝ նա կխոչընդոտի ծառայողական քննության անցկացմանը: Այդ դեպքում ~~ծառայողի~~ **հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** վարձատրությունը պահպանվում է:

7. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** նկատմամբ քրեական հետապնդում իրականացվելիս նրա լիազորությունները կարող են ժամանակավորապես դադարեցվել մինչև քրեական հետապնդման դադարեցումը կամ մինչև տվյալ գործով դատարանի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Հոդված 23. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** ատեստավորման կարգն ու պայմանները

1. Հատուկ քննչական ծառայության յուրաքանչյուր ~~ծառայող~~ **ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ** 3 տարին մեկ ենթակա է պարտադիր ատեստավորման:

2. Ատեստավորումն անցկացվում է հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** անմիջական մասնակցությամբ:

3. Ատեստավորման ենթակա չեն՝

1) հատուկ քննչական ծառայության պետը, նրա տեղակալը.

2) տվյալ պաշտոնը մեկ տարուց պակաս ժամկետով զբաղեցնող հատուկ քննչական ~~ծառայության ծառայողները~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք**, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել.

3) հղի կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող հատուկ քննչական ~~ծառայության ծառայողները~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք**, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել.

4) սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ տվյալ տարում ~~ծառայությունից~~ **պաշտոնից** ազատվողները:

4. Հղիության կամ երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող հատուկ քննչական ~~ծառայության ծառայողները~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք** ենթակա են ատեստավորման արձակուրդից վերադառնալուց հետո ոչ շուտ, քան մեկ տարի հետո, եթե վերջիններս ցանկություն չեն հայտնել ավելի վաղ ատեստավորվելու համար:

5. Հատուկ քննչական ծառայության՝ ատեստավորման ենթակա, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող կամ ժամանակավոր անաշխատունակ ~~ծառայողները~~ **աշխատողները** ենթակա են ատեստավորման ~~ծառայության~~ **աշխատանքի** ներկայանալուց հետո՝ երկամսյա ժամկետում:

6. Հատուկ քննչական ծառայության՝ ատեստավորման ենթակա ~~ծառայողները~~ **աշխատողները** ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ տեղեկացվում են ատեստավորման անցկացման մասին:

7. Ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ ~~ծառայողի~~ **հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** անմիջական ղեկավարը ներկայացնում է հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** ծառայողական բնութագիրը:

8. Ծառայողական բնութագիրը պետք է պարունակի տվյալներ հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի**, նրա գործնական, անձնական հատկանիշների մասին, ինչպես նաև ծառայողական գործունեության արդյունքների հիմնավորված գնահատագիրը, որը պետք է հիմնվի նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակաշրջանում հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** կողմից իր կատարած աշխատանքների մասին տարին մեկ անմիջական ղեկավարին ներկայացրած հաշվետվության հիման վրա վերջինիս կազմած եզրակացության վրա:

9. ~~Ծառայողն~~ **Հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձն** ատեստավորումից առնվազն մեկ շաբաթ առաջ պետք է ծանոթանա իր ծառայողական բնութագրին:

10. Սույն հոդվածով սահմանված կարգով ծառայողական բնութագիր չներկայացնելը չի կարող բացասաբար ազդել հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** ~~—~~ ատեստավորման արդյունքների վրա:

11. Ատեստավորման հանձնաժողովի գործառույթներն իրականացնում է սույն օրենքով նախատեսված մրցութային հանձնաժողովը:

12. Ատեստավորումից հետո ատեստավորման հանձնաժողովն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

1) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին.

2) կարող է զբաղեցնել ավելի բարձր պաշտոն.

3) կարող է ներկայացվել խրախուսման.

4) ատեստավորումը հետաձգել մինչև մեկ տարի ժամկետով և առաջարկել հատուկ քննչական ~~ծառայության ծառայողին~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին** գործուղելու վերապատրաստման.

5) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին:

13. Ատեստավորման հանձնաժողովը ատեստավորման օրվանից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, ատեստավորման արդյունքները և կայացրած որոշումները ներկայացնում է

հատուկ քննչական ծառայության պետին, որը տասնօրյա ժամկետում ընդունում է համապատասխան որոշում:

14. ~~Ծառայողն~~ **Հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձն** իրավունք ունի ծանոթանալու ատեստավորման արդյունքներին ու հանձնաժողովի կայացրած որոշմանը և դրանք 7 օրվա ընթացքում բողոքարկելու հատուկ քննչական ծառայության պետին:

15. ~~Ծառայողի~~ **Հատուկ քննչական ծառայությունում պաշտոն զբաղեցնող անձի** ժամանակավոր անաշխատունակության կամ արձակուրդում գտնվելու ժամանակ ատեստավորման արդյունքների հիման վրա համապատասխան որոշումն ընդունվում է նրա՝ ~~ծառայության~~ **աշխատանքի** ներկայանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում:

16. Ատեստավորման արդյունքները պահվում են հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** անձնական գործում:

Հոդված 24. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ ծառայությունում պաշտոն զբաղեցնող անձի վերապատրաստումը և հատուկ ուսուցումը

1. Հատուկ քննչական ~~ծառայության~~ **ծառայությունում** գլխավոր և առաջատար խմբերի պաշտոններ զբաղեցնող ~~ծառայողները~~ **անձինք** առնվազն 3 տարին մեկ ենթակա են պարտադիր վերապատրաստման:

2. Պարտադիր վերապատրաստման ժամկետը կարող է տևել մինչև 1 ամիս:

3. Ատեստավորումը հետաձգելու և ~~հատուկ քննչական ծառայության ծառայողին վերապատրաստման գործուղելու դեպքում ծառայողն~~ **հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին գործուղելու դեպքում անձը** անցնում է եռամսյա վերապատրաստում:

4. Հատուկ ուսուցում անցնելուց հետո հատուկ քննչական ~~ծառայության ծառայողներն~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք** իրավունք են ստանում սահմանված կարգով կրելու, պահելու և գործադրելու հրազեն ու օրենքով նախատեսված հատուկ միջոցներ:

5. Վերապատրաստում և հատուկ ուսուցում անցնելու կարգն ու պայմանները սահմանվում են «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրան համապատասխան ընդունված հատուկ քննչական ծառայության պետի որոշումներով:

Գ Լ ՈՒ Խ 4

ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ~~ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ~~ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՅՈՒՍ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Հոդված 25. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի վարձատրությունը

1. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** վարձատրության, այդ թվում՝ հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի հաշվարկների և չափերի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ~~«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»~~ **Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»** Հայաստանի Հանրապետության օրենքով:

2. ***(մասն ուժը կորցրել է 12.12.13 ՀՕ-176-Ն)***
3. ***(մասն ուժը կորցրել է 12.12.13 ՀՕ-176-Ն)***
4. ***(մասն ուժը կորցրել է 12.12.13 ՀՕ-176-Ն)***
5. ***(մասն ուժը կորցրել է 12.12.13 ՀՕ-176-Ն)***
6. ***(մասն ուժը կորցրել է 12.12.13 ՀՕ-176-Ն)***

Հոդված 26. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի արձակուրդը

1. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողներն~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք** ունեն ամենամյա հերթական վճարովի արձակուրդի իրավունք՝ 30 աշխատանքային օր տևողությամբ, և լրացուցիչ արձակուրդի իրավունք, որի տևողությունը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 27. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի կենսաթոշակային և սոցիալական ապահովությունը

1. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** կենսաթոշակային ապահովությունը, պաշտոնեական պարտականությունները կատարելիս կամ դրանք կատարելու առնչությամբ ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչվելու կամ զոհվելու դեպքում հատուկ քննչական ծառայության ծառայողի և նրա ընտանիքի անդամների սոցիալական ապահովությունը իրականացվում է ~~«Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին»~~ **«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին»** Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանած կարգով:

Հոդված 28. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** գործունեության այլ սոցիալական երաշխիքները

Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողներին~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց** երաշխավորվում են նաև՝

1) ~~ծառայության~~ **աշխատանքի** համար անվտանգ և անհրաժեշտ աշխատանքային պայմաններ.

2) ծառայողական պարտականությունները կատարելիս նրանց և ընտանիքի անդամներին պատճառված գույքային վնասի հատուցում պետության կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

3) *(կետն ուժը կորցրել է 11.06.14 ՀՕ-65-Ն)*

Հոդված 29. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** անվտանգությունը և անձնական պաշտպանության միջոցները

1. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողն~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձն** ունի ծառայողական հաշվեցուցակային զենք և անձնական պաշտպանության հատուկ միջոցներ պահելու և կրելու իրավունք: Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողներին~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց** ծառայողական հաշվեցուցակային զենք և անձնական պաշտպանության հատուկ միջոցներ տրամադրում է Կառավարության լիազորած մարմինը:

2. Ծառայողական հաշվեցուցակային զենքը և անձնական պաշտպանության հատուկ միջոցները պահելու և կրելու կարգը սահմանվում է հատուկ քննչական ծառայության պետի հրամանով:

3. *(մասն ուժը կորցրել է 19.05.14 ՀՕ-31-Ն)*

4. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի**, նրա ընտանիքի անդամների կամ նրա զբաղեցրած բնակելի և ծառայողական տարածքների անձեռնմխելիության նկատմամբ ոչ իրավաչափ ներգործության կամ դրա սպառնալիքի դեպքում ծառայողի պահանջով իրավասու պետական մարմինները պարտավոր են անհապաղ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի**, նրա ընտանիքի անդամների, զբաղեցրած բնակելի և ծառայողական շինությունների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ:

Հոդված 30. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողի~~ ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի համազգեստը, վկայականը և կնիքը

1. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողներին~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** պետական բյուջեի միջոցների հաշվին տրվում է համազգեստ: Համազգեստի, տարբերանշանների նկարագիրը և դրանք կրելու կարգը սահմանում է Կառավարությունը:

2. Հատուկ քննչական ~~ծառայության ծառայողներին~~ **ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի** տրվում են հատուկ քննչական ծառայության պետի հաստատած միասնական նմուշի վկայականներ, ինչպես նաև նրանց անվամբ հատուկ քննչական ծառայությունում գրանցված և համարակալված անձնական կնիքներ:

Հոդված 33. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի ապրիլի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2002 թվականի մայիսի 7-ին

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 29. Աշխատակազմի, համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների կազմավորումը

1. Համայնքի ղեկավարն իր պաշտոնն ստանձնելու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում, մշակում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում աշխատակազմի, համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները, կառուցվածքները (համապատասխան ստորաբաժանումներ նախատեսված լինելու դեպքում), աշխատողների քանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը:

2. Համայնքի նոր ղեկավարի լիազորություններն ստանձնելուց հետո ~~հայեցողական~~ **համայնքային վարչական և համայնքայի** պաշտոններ զբաղեցնող անձինք շարունակում են կատարել իրենց պարտականությունները մինչև այդ պաշտոններում նոր նշանակումներ կատարվելը: Համայնքի ղեկավարը աշխատակազմի և հիմնարկների կառուցվածքը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը ավագանու կողմից հաստատվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, նշանակումներ է կատարում ~~հայեցողական~~ **համայնքային վարչական և համայնքային** պաշտոններում:

3. Համայնքային ծառայողների նշանակման և զբաղեցրած պաշտոնից ազատման կարգը սահմանվում է «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

4. Համայնքի ղեկավարը իր ներկայացմամբ և ավագանու համաձայնությամբ նշանակում է համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին:

Հոդված 35. Համայնքի ղեկավարի ընդհանուր լիազորությունները

1. Համայնքի ղեկավարը սույն օրենքով սահմանված կարգով՝

1) հրավիրում և վարում է ավագանու նիստերը՝ սույն օրենքով և ավագանու կանոնակարգով սահմանված կարգով.

2) համայնքի ղեկավարը նորմատիվ իրավական ակտեր ընդունելուց հետո պարտավոր է երկօրյա ժամկետում այն ուղարկել համայնքի ավագանու անդամներին և փակցնել համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար տեսանելի ու մատչելի տեղում: Պաշտոնական համացանցային կայք ունեցող համայնքներում սույն կետով նախատեսված նորմատիվ ակտերը երկօրյա ժամկետում տեղադրվում են կայքում.

3) համայնքի զարգացման ծրագրերը ներկայացնում է ավագանու հաստատմանը.

4) հաստատում է աշխատակազմի գործավարության կարգը.

5) աշխատակազմի և համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների, կառուցվածքների վերաբերյալ որոշման նախագծերը և դրանցում առաջարկվող փոփոխությունները ներկայացնում է ավագանու հաստատմանը՝ սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքում.

6) համայնքային ծառայության մասով աշխատակազմի կառուցվածքների վերաբերյալ որոշման նախագիծը և դրանում առաջարկվող փոփոխությունները ներկայացնում է ավագանու հաստատմանը.

7) աշխատակազմի և համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ առևտրային և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծերն ու դրանցում առաջարկվող փոփոխությունները ներկայացնում է ավագանու հաստատմանը.

8) համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին որոշման նախագիծը ներկայացնում է ավագանու հաստատմանը.

9) համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ մարմինների և վերստուգիչ մարմինների կազմերի վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացնում է ավագանու հաստատմանը.

10) նշանակում և ազատում է ~~հայեցողական~~ **համայնքային վարչական և համայնքային** պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի քարտուղարին, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին.

11) համայնքի ավագանու որոշմամբ նշանակում և ազատում է համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին: Համայնքի բնակավայրերում գտնվող համայնքային հիմնարկների, կազմակերպությունների ղեկավարներին պաշտոնի նշանակելիս և պաշտոնից ազատելիս խորհրդակցում է վարչական ղեկավարի հետ: Ավագանու կողմից երկու անգամ համաձայնություն չտալու դեպքում համայնքի ղեկավարը նշանակում է կատարում առանց համաձայնեցնելու ավագանու հետ.

12) հանդես է գալիս տեղական հանրաքվե նշանակելու նախաձեռնությամբ.

12.1) օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ընդունում է տեղական հանրաքվե նշանակելու մասինորոշում.

13) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ.

14) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումներն ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ.

15) կնքում է Հայաստանի Հանրապետության համայնքների կամ այլ պետությունների համայնքների հետ պայմանագրերը, դրանք ներկայացնում է համայնքի ավագանու վավերացմանը: Ավագանու հաստատմանն է ներկայացնում միջհամայնքային միավորում ստեղծելու, ինչպես նաև համայնքների հիմնադրած միություններին անդամակցելու և դրանց անդամավճարները մուծելու մասին որոշման նախագծերը.

16) համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը.

17) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ համայնքի քաղաքաշինական ծրագրային և հողաշինարարական փաստաթղթերը կամ դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները հաստատելու մասին որոշում ընդունելու վերաբերյալ.

18) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օտարելու կամ օգտագործման տրամադրելու մասին.

19) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կազմում և Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում ընդգրկված ճանապարհների մաս հանդիսացող տարանցիկ ճանապարհներին վերաբերող մասով (բացառությամբ Երևան քաղաքի) լի

ազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման (համայնքային ենթակայության ճանապարհների մասով) և կայացնում է որոշումներ՝ այդ սխեմային համապատասխան անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ՝ երթևեկության անվտանգության մասով համաձայնեցնելով պետական լիազոր մարմնի հետ.

20) համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում առաջարկ՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու վերաբերյալ.

21) համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի անվանման և վերանվանման ենթակա փողոցները, պողոտաները, հրապարակները, զբոսայգիները, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկներն ու կազմակերպությունները և օրենքով սահմանված կարգով ներկայացնում է գրանցման (բացառությամբ պատմամշակութային ու բնապատմական հուշարձանների).

22) սահմանում է շենքերի և շինությունների համարակալումը.

23) սահմանված կարգով տալիս է քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և մատուցելու թույլտվություն, ինչպես նաև համայնքի բնակավայրերում այդ թույլտվության տրամադրումը կարող է լիազորել վարչական ղեկավարին.

24) իր իրավասության շրջանակում ընդունում է որոշումներ, կազմում է արձանագրություններ և արձակում կարգադրություններ.

25) ներկայացնում է համայնքի շահերն այլ անձանց հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում.

26) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության.

27) օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ կազմակերպում և ղեկավարում է պետության պատվիրակած լիազորությունների իրականացումը.

28) օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով վարում է համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրներ.

29) օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով մասնակցում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության, Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած՝ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների, ինչպես նաև բնածին և տեխնածին աղետների ռիսկերի նվազեցման ու հետևանքների վերացման, սեյսմիկ անվտանգության ապահովման հետ կապված աշխատանքների կազմակերպմանը և այդ ուղղությամբ ձեռնարկում համապատասխան միջոցներ.

30) իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և սույն օրենքով սահմանված այլ լիազորություններ:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-26-րդ կետերով նախատեսված լիազորությունները համարվում են համայնքի ղեկավարի սեփական լիազորություններ, իսկ 27-29-րդ կետերով նախատեսվածները՝ պետության պատվիրակած լիազորություններ:

3. Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է ~~հայեցողական~~ **համայնքային վարչական և համայնքային** պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի, համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:

Հոդված 59. Համայնքի ղեկավարի լիազորությունների ընդհանուր բնութագիրը

1. Համայնքի ղեկավարն իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

1) կազմակերպում է ավագանու և աշխատակազմի աշխատանքները.

2) օրենքով սահմանված կարգով նշանակում և ազատում է աշխատակազմի քարտուղարին, ~~հայեցողական~~ **համայնքային վարչական և համայնքային** պաշտոն զբաղեցնող անձանց, առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին.

3) սահմանում է համայնքի շենքերի և շինությունների համարակալումը.

4) ավագանուն է ներկայացնում համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման տարեկան ծրագիրը, դրան համապատասխան տնօրինում է համայնքի սեփականություն հանդիսացող գույքը.

5) պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է համայնքային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներին.

6) օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ կազմակերպում և ղեկավարում է պետության պատվիրակած լիազորությունների իրականացումը.

7) ամենամյա հաշվետվություններ է ներկայացնում հանրությանը ավագանու, իր գործունեության և համայնքի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի մասին: Այդ հաշվետվությունները տեղադրվում են համայնքի պաշտոնական համացանցային կայքում.

8) իրականացնում է համայնքի սեփականություն հանդիսացող ենթակառուցվածքների կառավարումը և ապահովում դրանց շահագործումը.

9) օրենքով սահմանված սեփական այլ լիազորություններ:

2. Համայնքի ղեկավարն իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունները.

1) օրենքով սահմանված կարգով լուծում է համայնքի տարածքում հավաքներ անցկացնելու հարցը.

2) համայնքի տարածքում ճանապարհային երթևեկության կարգավորումը՝ ճանապարհային գծանշումների, ինչպես նաև երթևեկության նշանների և լուսացույցների (բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ժամանակավոր տեղադրվածների) տեղադրման միջոցով.

3) օրենքով սահմանված կարգով մասնակցում է պետական սեփականություն հանդիսացող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների և մարզական կազմակերպությունների կառավարմանը.

4) համայնքի տարածքում իրականացնում է պետական սոցիալական ապահովության ծրագրերը.

5) իրականացնում է բնապահպանական պետական ծրագրերով նախատեսված աշխատանքները համայնքի տարածքում.

6) իրականացնում է օրենքով պատվիրակված այլ լիազորություններ:

Հոդված 31. Վարչական ղեկավարը

1. Բազմաբնակավայր համայնքների կազմում ընդգրկված յուրաքանչյուր բնակավայր, բացառությամբ համայնքի կենտրոնի, ունի մեկ վարչական ղեկավար:

2. Վարչական ղեկավարի պաշտոնը ~~հայեցողական~~ **համայնքային վարչական** պաշտոն է:

3. Վարչական ղեկավարի լիազորությունները սահմանվում են սույն օրենքով, իսկ գործառույթները՝ սույն օրենքով և աշխատակազմի կանոնադրությամբ:

4. Վարչական ղեկավարը տվյալ բնակավայրի հաշվառված բնակիչ է:

5. Վարչական ղեկավարը գործում է համայնքի ավագանու որոշած նստավայրում:

6. Վարչական ղեկավարի նստավայրի նկատմամբ գործում են սույն օրենքի 7-րդ հոդվածով տեղականինքնակառավարման մարմինների նստավայրի համար սահմանված պահանջները:

7. Վարչական ղեկավարի պահպանման ծախսերը առանձին տողով ներկայացվում են համայնքի բյուջեում:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2008 թվականի դեկտեմբերի 26-ին

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 9. Տարածքային կառավարումը Երևանում

1. Տարածքային կառավարումը Երևանում իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմինը: Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, իրավական ակտերով մարզպետներին վերապահված լիազորություններն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմինն այնքանով, որքանով դրանք չեն հակասում սույն օրենքին:

2. Կառավարության որոշմամբ Երևանում տարածքային կառավարման որոշակի գործառույթներ կարող են փոխանցվել ~~գործադիր իշխանության հանրապետական~~ **պետական կառավարման համակարգի** այլ մարմինների:

3. Երևանում տարածքային կառավարման առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով:

Հոդված 65. Քաղաքապետի հարաբերությունները ~~գործադիր իշխանության հանրապետական~~ պետական կառավարման համակարգի մարմինների և դրանց Երևանի տարածքային ծառայությունների հետ

1. Քաղաքապետը ~~գործադիր իշխանության հանրապետական~~ **պետական կառավարման համակարգի** մարմինների և դրանց Երևանի տարածքային ծառայությունների հետ հարաբերություններում՝

1) առաջարկություններ է ներկայացնում վերջիններիս իրավասությանը վերաբերող Երևանին առնչվող հարցերի վերաբերյալ.

2) ~~գործադիր իշխանության~~ **պետական կառավարման համակարգի** Երևանի տարածքային մարմինների ղեկավարների մասնակցությամբ կազմակերպում է խորհրդակցություններ, հրավիրում է մասնակիցների ուշադրությունը Երևանին առնչվող խնդիրների վրա.

3) Երևանի տարածքում ապօրինի շինարարության, ընդերքի օգտագործման, ինչպես նաև հողազավթումների, ապօրինի ծառահատման, որսագողության և ապօրինի ձկնորսության դեպքերի կանխման և արգելման հետ կապված՝ կարող է դիմել ոստիկանություն՝ համապատասխան աջակցություն ստանալու համար.

4) քաղաքապետը ոստիկանությանը տեղեկացնում է Երևանում կազմակերպվող միջոցառումների (ներառյալ՝ հավաքների և հանրային միջոցառումների) վերաբերյալ, որի պարագայում ոստիկանությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ այդ միջոցառումների ընթացքում հասարակական կարգը պահպանելու, ինչպես նաև Երևանի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով.

5) քաղաքապետն իրավունք ունի ~~հանրապետական գործադիր~~ **պետական կառավարման համակարգի** մարմին ներկայացնելու գրավոր, փաստարկված առաջարկություն՝ վերջինիս տարածքային ծառայության գործունեության վերաբերյալ:

Հոդված 87. Վարչական շրջանի ղեկավարին ներկայացվող պահանջները

1. Վարչական շրջանի ղեկավար կարող է նշանակվել 25 տարին լրացած, ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք:

2. Վարչական շրջանի ղեկավարի պաշտոնը ~~հայեցողական~~ **համայնքային վարչական** պաշտոն է:

Հոդված 102. Վարչական շրջանի ղեկավարի տեղակալը (տեղակալները)

1. Վարչական շրջանի ղեկավարի տեղակալը (տեղակալները) իրականացնում է (են) վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությամբ իրեն (իրենց) վերապահված լիազորությունները:

2. Վարչական շրջանի ղեկավարի բացակայության ժամանակ վարչական շրջանի ղեկավարի հանձնարարությամբ տեղակալը (տեղակալներից մեկը) իրականացնում է վարչական շրջանի ղեկավարի լիազորությունները:

Վարչական շրջանի ղեկավարի կողմից ժամանակավոր պաշտոնակատար նշանակվելու անհնարինության դեպքում վարչական շրջանի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակում քաղաքապետը:

3. Վարչական շրջանի ղեկավարի տեղակալի (տեղակալների) պաշտոնը ~~հայեցողական~~ **համայնքային վարչական** պաշտոն է:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2017 թվականի նոյեմբերի 17-ին

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 3. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **դատախազ**՝ գլխավոր դատախազը, նրա տեղակալները, զինվորական դատախազը, Երևան քաղաքի դատախազը, գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարները, զինվորական դատախազի տեղակալները, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազները, մարզերի դատախազները, կայազորների զինվորական դատախազները, գլխավոր դատախազության ավագ դատախազներն ու դատախազները, գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարների տեղակալները, Երևան քաղաքի դատախազի տեղակալները, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի և կայազորների զինվորական դատախազների տեղակալները, գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ավագ դատախազներն ու դատախազները, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի և կայազորների զինվորական դատախազությունների ավագ դատախազներն ու դատախազները, զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարները, զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազներն ու դատախազները, զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ավագ դատախազներն ու դատախազները.

2) **դատախազություն**՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը, զինվորական կենտրոնական դատախազությունը, Երևան քաղաքի դատախազությունը, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունները, մարզերի դատախազությունները, կայազորների զինվորական դատախազությունները.

3) **դատախազության կառուցվածքային ստորաբաժանում՝** գլխավոր դատախազության և զինվորական կենտրոնական դատախազության կազմում գործող վարչություն և բաժին.

4) **դատախազական ակտ՝** որոշում, հրաման, կարգադրություն, միջնորդագիր, հանձնարարական, ցուցում:

<u>5) աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում՝ դատախազներին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և</u>

օրենքներով վերապահված գործառույթների իրականացմանն աջակցող ստորաբաժանում:

Հոդված 6. Դատախազի ինքնուրույնությունը և նրա գործունեությանը միջամտելու անթույլատրելիությունը, դատախազի օրինական պահանջների կատարման պարտադիր լինելը

1. Յուրաքանչյուր դատախազ իր լիազորություններն իրականացնում է ինքնուրույն՝ հիմնվելով օրենքների և ներքին համոզմունքի վրա և պատասխանատու է այդ լիազորություններն իրականացնելիս իր ընդունած որոշումների համար:

2. Դատախազի գործունեությանը օրենքով չնախատեսված միջամտությունն արգելվում է և առաջացնում օրենքով սահմանված պատասխանատվություն:

~~3. Դատախազի օրինական պահանջները ենթակա են պարտադիր կատարման պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հանրային ծառայողների, կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից:~~

~~4. Հանրային ծառայողի (պաշտոնատար անձի) կողմից դատախազի օրինական պահանջները չկատարելու դեպքում, բացառությամբ սույն օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքի, բարձրաստիճան պաշտոնատար անձանց դեպքում՝ գլխավոր դատախազը, իսկ մյուս հանրային ծառայողների (պաշտոնատար անձանց) դեպքում՝ վերադաս դատախազը տվյալ հանրային ծառայողի (պաշտոնատար անձի) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու միջնորդությամբ դիմում է կարգապահական վարույթ հարուցելու լիազորություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ տվյալ հանրային ծառայողի (պաշտոնատար անձի) վերադասին: Կարգապահական վարույթ հարուցելու վերադաս դատախազի միջնորդությունը ողջամիտ ժամկետում ենթակա է պարտադիր քննության հանրային ծառայողի (պաշտոնատար անձի) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից: Միջնորդության քննարկման արդյունքների մասին համապատասխան իրավասու մարմինը կամ պաշտոնատար անձը տեղեկացնում է կարգապահական վարույթ հարուցելու միջնորդությամբ դիմած դատախազին:~~

«3. Դատախազի օրինական պահանջները ենթակա են պարտադիր կատարման պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հանրային պաշտոններ զբաղեցնող անձնաց, հանրային ծառայողների, կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից:

4. Հանրային պաշտոն զբաղեցնող անձի, հանրային ծառայողի կողմից դատախազի օրինական պահանջները չկատարելու դեպքում, բացառությամբ սույն օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքի, պետական քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանցդեպքում՝ գլխավոր դատախազը, իսկ մյուս հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների դեպքում՝ վերադաս դատախազը տվյալ հանրային պաշտոն զբաղեցնող անձի, հանրային ծառայողի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու միջնորդությամբ դիմում է կարգապահական վարույթ հարուցելու լիազորություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ տվյալ հանրային ծառայողի անմիջական ղեկավարին: Կարգապահական վարույթ հարուցելու միջնորդությունը

ողջամիտ ժամկետում ենթակա է պարտադիր քննության հանրային պաշտոն զբաղեցնող անձի, հանրային ծառայողի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից: Միջնորդության քննարկման արդյունքների մասին համապատասխան իրավասու մարմինը կամ պաշտոնատար անձը տեղեկացնում է կարգապահական վարույթ հարուցելու միջնորդությամբ դիմած դատախազին: »:

5. Դատախազի օրինական պահանջները չկատարելն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

~~6. Սույն հոդվածի իմաստով՝ հանրային ծառայող է հանդիսանում «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված որևէ պաշտոն զբաղեցնող անձը:~~

Հոդված 9. Գլխավոր դատախազը

1. Գլխավոր դատախազը ղեկավարում և վերահսկում է դատախազության գործունեությունը և պատասխանատու է դատախազության բնականոն գործունեության ապահովման համար:

2. Գլխավոր դատախազը՝

1) դատախազության կոլեգիայի առաջարկությամբ սահմանում է դատախազության լիազորությունների իրականացման ուղղությունները.

2) կատարում է աշխատանքի բաժանում իր տեղակալների, գլխավոր դատախազության ավագ դատախազների ու դատախազների միջև.

3) հաստատում է գլխավոր դատախազության և զինվորական դատախազության կառուցվածքը.

4) սահմանում է դատախազությունների, գլխավոր դատախազության ավագ դատախազների ու դատախազների լիազորությունների իրականացման շրջանակը.

5) սահմանում է օրենքով նախատեսված աշխատավարձի ֆոնդի շրջանակներում դատախազությանհաստիքների քանակը և հաստիքացուցակը.

6) հաստատում է «Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնակարգը».

7) իր իրավասության սահմաններում ընդունում է ներքին և անհատական իրավական ակտեր.

~~8) իրականացնում է «Դատախազության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի (այսուհետ՝ դատախազության աշխատակազմ) հիմնադրին օրենքով վերապահված լիազորություններ.~~

8. Իրականացնում է «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված լիազորություններ.

~~9) հաստատում և փոփոխում է դատախազության աշխատակազմի կանոնադրությունը և դատախազությանաշխատակազմի կառուցվածքը.~~

10) հաստատում և փոփոխում է հայեցողական պաշտոնների, ~~դատախազության աշխատակազմում դատախազական ծառայողների,~~

տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց անվանացանկը, հաստիքների քանակը և հաստիքացուցակը.

11) ստեղծում է գլխավոր դատախազին առընթեր խորհուրդներ, աշխատանքային խմբեր, հանձնաժողովներ, սահմանում դրանց գործունեության կարգը.

12) իրականացնում է դատախազության՝ Սահմանադրությամբ նախատեսված իրավասության շրջանակում օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

3. Գլխավոր դատախազն իրավասու է իրականացնելու Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված լիազորությունները Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

4. Գլխավոր դատախազի ժամանակավոր բացակայության դեպքում նրա հրամանով գլխավոր դատախազի տեղակալներից մեկը փոխարինում է գլխավոր դատախազին: Նման հրաման ընդունելու անհնարինության դեպքում, ինչպես նաև գլխավոր դատախազի պաշտոնն օրենքով սահմանված կարգով թափուր մնալու դեպքում գլխավոր դատախազին ժամանակավորապես փոխարինում է գլխավոր դատախազի՝ դատախազությանհամակարգում առավել երկար փորձառություն ունեցող տեղակալը:

Հոդված 11. Գլխավոր դատախազությունը

1. Գլխավոր դատախազությունը կազմված է կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների տեղակալներից և կառուցվածքային ստորաբաժանումների դատախազներից, գլխավոր դատախազության ավագ դատախազներից և դատախազներից, **<u>ինչպես նաև աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներից, գլխավոր քարտուղարից և գլխավոր քարտուղարի տեղակալից:</u>**

2. Գլխավոր դատախազության ավագ դատախազները և դատախազները գործում են գլխավոր դատախազի անմիջական ենթակայությամբ:

3. Գլխավոր դատախազության նստավայրը գտնվում է Երևան քաղաքում:

Հոդված 12. Գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումը և կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը

1. Գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումը կազմված է կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարից, կառուցվածքային ստորաբաժանման ավագ դատախազներից և դատախազներից, իսկ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքում՝ նաև տեղակալից (տեղակալներից):

2. Գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումը կարող է ունենալ կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի տեղակալ (տեղակալներ): Գլխավոր դատախազության վարչությունը կարող է ունենալ նաև բաժիններ:

3. Գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման (այսուհետ՝ ստորաբաժանում) ղեկավարը՝

1) ղեկավարում, կազմակերպում և համակարգում է իր ղեկավարած ստորաբաժանման գործունեությունը.

2) ապահովում է գլխավոր դատախազի հրամանների, հանձնարարականների, ինչպես նաև գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի հանձնարարականների կատարումը.

3) առաջարկություն է ներկայացնում գլխավոր դատախազին կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալին՝ կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի տեղակալի, կառուցվածքային ստորաբաժանման ավագ դատախազների և դատախազների (այսուհետ՝ ստորաբաժանման դատախազներ) միջև աշխատանքի բաժանում կատարելու վերաբերյալ.

4) առաջարկներ է ներկայացնում գլխավոր դատախազին կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալին՝ իր ղեկավարած ստորաբաժանման դատախազներին խրախուսելու կամ նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, ինչպես նաև նրանց առաջխաղացման վերաբերյալ.

~~5) առաջարկներ է ներկայացնում դատախազության աշխատակազմի ղեկավարին իր ղեկավարած ստորաբաժանման աշխատակիցներին խրախուսելու կամ նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ.~~

5) առաջարկներ է ներկայացնում դատախազության գլխավոր քարտուղարին իր կողմից նշանակված քաղաքացիական ծառայողներին խրախուսելու կամ նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ.

6) վերահսկողություն է իրականացնում ստորաբաժանման աշխատակիցների կողմից աշխատանքային կարգապահության պահպանման և ամրապնդման, նրանց կողմից պարտականությունների ժամանակին և պատշաճ կատարման նկատմամբ.

7) իրականացնում է դատախազության՝ Սահմանադրությամբ նախատեսված իրավասության շրջանակում օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

4. Գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը իր ղեկավարած ստորաբաժանման գործունեության համար պատասխանատվություն է կրում գլխավոր դատախազի և գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի առջև:

5. Գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի հանձնարարությամբ կամ իր նախաձեռնությամբ գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարն իր իրավասության շրջանակներում՝

1) կարող է Երևան քաղաքի դատախազից, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներից պահանջել գործեր և նյութեր, դրանց հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն.

2) գլխավոր դատախազին կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալին առաջարկություններ ներկայացնել Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազությունների կողմից դատախազության լիազորությունների կազմակերպման և իրականացման արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

6. Գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված լիազորություններն իրականացնում է անձամբ կամ ստորաբաժանման դատախազների միջոցով:

7. Գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված լիազորություններն իրականացնելիս խախտումներ հայտնաբերելու դեպքում սույն օրենքով սահմանված կարգով կարգապահական վարույթ

հարուցելու միջնորդությամբ օրենքով սահմանված կարգով դիմում է գլխավոր դատախազին կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալին:

8. Գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները և կառուցվածքային ստորաբաժանումների դատախազներն իրականացնում են սույն օրենքի 5-րդ գլխով սահմանված լիազորությունները:

Հոդված 13. Երևան քաղաքի դատախազությունը

1. Երևան քաղաքի դատախազությունը ապահովում է Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված լիազորությունների իրականացումը Երևան քաղաքում, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

2. Երևան քաղաքի դատախազությունը կազմված է Երևան քաղաքի դատախազից, Երևան քաղաքի դատախազի տեղակալներից, Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազներից և դատախազներից, **<u>ինչպես նաև աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումից</u>**:

3. Երևան քաղաքի դատախազության նստավայրը գտնվում է Երևան քաղաքում:

Հոդված 14. Երևան քաղաքի դատախազը

1. Երևան քաղաքի դատախազը՝

1) ղեկավարում և կազմակերպում է Երևան քաղաքի դատախազության գործունեությունը.

2) իրականացնում է Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունների գործունեության ընդհանուր ղեկավարում.

3) կատարում է իր տեղակալների, Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազների և դատախազների (այսուհետ՝ Երևան քաղաքի դատախազության դատախազներ) միջև աշխատանքի բաժանում.

4) առաջարկներ է ներկայացնում գլխավոր դատախազին կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալին՝ Երևան քաղաքի դատախազության դատախազներին, ինչպես նաև Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազության դատախազներին խրախուսելու կամ նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, ինչպես նաև նրանց առաջխաղացման վերաբերյալ.

5) առաջարկներ է ներկայացնում դատախազության ~~աշխատակազմի ղեկավարին~~ **<u>գլխավոր քարտուղարին</u>** Երևան քաղաքի դատախազության աշխատակիցներին խրախուսելու կամ նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ.

6) վերահսկողություն է իրականացնում Երևան քաղաքի դատախազության աշխատակիցների կողմից աշխատանքային կարգապահության պահպանման և ամրապնդման, նրանց կողմից պարտականությունների ժամանակին և պատշաճ կատարման նկատմամբ.

7) իրականացնում է սույն օրենքի 5-րդ գլխով սահմանված լիազորությունները.

8) իրականացնում է դատախազության՝ Սահմանադրությամբ նախատեսված իրավասության շրջանակում օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

Հոդված 15. Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազությունը

1. Երևան քաղաքի վարչական շրջանի (վարչական շրջանների) դատախազությունը ապահովում է Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված լիազորությունների իրականացումը Երևան քաղաքի վարչական շրջանում (վարչական շրջաններում), բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

2. Երևան քաղաքի վարչական շրջանի (վարչական շրջանների) դատախազությունը կազմված է Երևան քաղաքի վարչական շրջանի (վարչական շրջանների) դատախազից, Երևան քաղաքի վարչական շրջանի (վարչական շրջանների) դատախազի տեղակալից, Երևան քաղաքի վարչական շրջանի (վարչական շրջանների) դատախազության ավագ դատախազներից և դատախազներից, **<u>ինչպես նաև աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումից:</u>**

3. Երևան քաղաքի վարչական շրջանի (վարչական շրջանների) դատախազության նստավայրը գտնվում է համապատասխան վարչական շրջանում (վարչական շրջաններից որևիցե մեկում):

Հոդված 16. Մարզի դատախազությունը

1. Մարզի դատախազությունը ապահովում է Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված լիազորությունների իրականացումը մարզում, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

2. Մարզի դատախազությունը կազմված է մարզի դատախազից, մարզի դատախազի տեղակալներից, մարզի դատախազության ավագ դատախազներից և դատախազներից, **<u>ինչպես նաև աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումից:</u>**

3. Մարզի դատախազության նստավայրը գտնվում է մարզկենտրոնում: Գլխավոր դատախազի որոշմամբ մարզի դատախազությունը կարող է ունենալ նաև այլ նստավայրեր:

Հոդված 17. Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազը և մարզի դատախազը

1. Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազը՝

1) ղեկավարում և կազմակերպում է Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազության գործունեությունը.

2) կատարում է իր տեղակալի, Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազության ավագ դատախազների և դատախազների (այսուհետ՝ Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազության դատախազներ) միջև աշխատանքի բաժանում.

3) առաջարկներ է ներկայացնում գլխավոր դատախազին կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալին, Երևան քաղաքի դատախազին՝ Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազությանդատախազներին խրախուսելու կամ նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, ինչպես նաև նրանց առաջխաղացման վերաբերյալ.

4) առաջարկներ է ներկայացնում դատախազության ~~աշխատակազմի ղեկավարին~~ **<u>գլխավոր քարտուղարին</u>**

Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազության աշխատակիցներին խրախուսելու կամ նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ.

5) վերահսկողություն է իրականացնում Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազությանաշխատակիցների կողմից աշխատանքային կարգապահության պահպանման և ամրապնդման, նրանց կողմից պարտականությունների ժամանակին և պատշաճ կատարման նկատմամբ.

6) իրականացնում է սույն օրենքի 5-րդ գլխով սահմանված լիազորությունները.

7) իրականացնում է դատախազության՝ Սահմանադրությամբ նախատեսված իրավասության շրջանակում օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

2. Մարզի դատախազը՝

1) ղեկավարում և կազմակերպում է մարզի դատախազության գործունեությունը.

2) կատարում է իր տեղակալների, մարզի դատախազության ավագ դատախազների և դատախազների (այսուհետ՝ մարզի դատախազության դատախազներ) միջև աշխատանքի բաժանում.

3) առաջարկներ է ներկայացնում գլխավոր դատախազին կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալին մարզի դատախազության դատախազներին խրախուսելու կամ նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, ինչպես նաև նրանց առաջխաղացման վերաբերյալ.

4) առաջարկներ է ներկայացնում դատախազության ~~աշխատակազմի ղեկավարին~~ **գլխավոր քարտուղարին** մարզի դատախազությանաշխատակիցներին խրախուսելու կամ նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ.

5) վերահսկողություն է իրականացնում մարզի դատախազության աշխատակիցների կողմից աշխատանքային կարգապահության պահպանման և ամրապնդման, նրանց կողմից պարտականությունների ժամանակին և պատշաճ կատարման նկատմամբ.

6) իրականացնում է սույն օրենքի 5-րդ գլխով սահմանված լիազորությունները.

7) իրականացնում է դատախազության՝ Սահմանադրությամբ նախատեսված իրավասության շրջանակում օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

Հոդված 18. Զինվորական դատախազությունը

1. Զինվորական դատախազությունը ապահովում է Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված լիազորությունների իրականացումը զինված ուժերում և այլ զորքերում, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

2. Զինվորական դատախազությունը կազմված է զինվորական կենտրոնական դատախազությունից և կայազորների զինվորական դատախազություններից՝ ըստ զինված ուժերի կայազորների տեղաբաշխման:

3. Զինվորական կենտրոնական դատախազությունը կազմված է զինվորական դատախազի տեղակալներից, զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից, զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազներից և դատախազներից, զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ավագ դատախազներից և դատախազներից (այսուհետ՝

զինվորական կենտրոնական դատախազության դատախազներ), **<u>ինչպես նաև աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումից:</u>**

4. Զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը սույն օրենքով նախատեսված ենթակայության կանոնների պահպանմամբ իրականացնում է սույն օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված լիազորությունները և պատասխանատվություն է կրում գլխավոր դատախազի, զինվորական դատախազի և նրա՝ ոլորտը համակարգող տեղակալի առջև:

5. Զինվորական կենտրոնական դատախազության նստավայրը գտնվում է Երևան քաղաքում:

Հոդված 19. Զինվորական դատախազը

1. Զինվորական դատախազը՝

1) ղեկավարում, կազմակերպում և համակարգում է զինվորական կենտրոնական դատախազության և կայազորների զինվորական դատախազությունների գործունեությունը.

2) կատարում է զինվորական կենտրոնական դատախազության դատախազների միջև աշխատանքի բաժանում.

3) առաջարկներ է ներկայացնում գլխավոր դատախազին՝ զինվորական կենտրոնական դատախազությանդատախազներին, կայազորների զինվորական դատախազության դատախազներին խրախուսելու կամ նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, ինչպես նաև նրանց առաջխաղացման վերաբերյալ.

4) առաջարկներ է ներկայացնում դատախազության ~~աշխատակազմի ղեկավարին~~ **<u>գլխավոր քարտուղարին</u>** զինվորական դատախազության աշխատակիցներին խրախուսելու կամ նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ.

5) իրականացնում է սույն օրենքի 5-րդ գլխով սահմանված լիազորությունները.

6) իր իրավասության սահմաններում ընդունում է ներքին և անհատական իրավական ակտեր.

7) իրականացնում է դատախազության՝ Սահմանադրությամբ նախատեսված իրավասության շրջանակում օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

2. Զինվորական դատախազն ի պաշտոնե գլխավոր դատախազի տեղակալն է:

Հոդված 20. Կայազորի զինվորական դատախազությունը

1. Կայազորի զինվորական դատախազությունը ապահովում է Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված լիազորությունների իրականացումը զինվորական կայազորում, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

2. Կայազորի զինվորական դատախազությունը կազմված է կայազորի զինվորական դատախազից, կայազորի զինվորական դատախազի տեղակալից, կայազորի զինվորական դատախազության ավագ դատախազներից և դատախազներից, **<u>ինչպես նաև աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումից:</u>**

3. Կայազորի զինվորական դատախազության նստավայրը որոշում է զինվորական դատախազը՝ ըստ կայազորի տեղաբաշխման:

Հոդված 21. Կայազորի զինվորական դատախազը

1. Կայազորի զինվորական դատախազը՝

1) ղեկավարում և կազմակերպում է կայազորի զինվորական դատախազության գործունեությունը.

2) կատարում է իր տեղակալի, կայազորի զինվորական դատախազության ավագ դատախազների և դատախազների (այսուհետ՝ կայազորի զինվորական դատախազության դատախազներ) միջև աշխատանքի բաժանում.

3) առաջարկներ է ներկայացնում գլխավոր դատախազին կամ զինվորական դատախազին՝ կայազորի զինվորական դատախազության դատախազներին խրախուսելու կամ նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, ինչպես նաև նրանց առաջխաղացման վերաբերյալ.

4) առաջարկներ է ներկայացնում դատախազության ~~աշխատակազմի ղեկավարին~~ **գլխավոր քարտուղար** կայազորի զինվորական դատախազության աշխատակիցներին խրախուսելու կամ նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ.

5) վերահսկողություն է իրականացնում կայազորի զինվորական դատախազության աշխատակիցների կողմից աշխատանքային կարգապահության պահպանման և ամրապնդման, նրանց կողմից պարտականությունների ժամանակին և պատշաճ կատարման նկատմամբ.

6) իրականացնում է սույն օրենքի 5-րդ գլխով սահմանված լիազորությունները.

7) իրականացնում է դատախազության՝ Սահմանադրությամբ նախատեսված իրավասության շրջանակում օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

Հոդված 28. Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողությունը

1. Դատախազը հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:

2. Սույն հոդվածի իմաստով՝ պատիժ են համարվում քրեական օրենքով սահմանված պատժի տեսակները:

3. Սույն հոդվածի իմաստով՝ հարկադրանքի այլ միջոց է համարվում Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ կետերով սահմանված դեպքերում ազատությունից զրկումը:

4. Սույն հոդվածով սահմանված լիազորություններն իրականացնելիս դատախազն իրավունք ունի՝

1) ցանկացած ժամանակ անարգել այցելելու պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման վայրեր, ինչպես նաև դրանց կատարումն ապահովող իրավասու մարմիններ.

2) ծանոթանալու այն փաստաթղթերին, որոնց հիման վրա անձը ենթարկվել է պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների, պրոբացիայի շահառուի անձնական գործին.

3) ստուգելու ~~Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության~~ քրեակատարողական ծառայության մարմինների, դրանց կազմում գործող ստորաբաժանումների, ինչպես նաև պատիժները և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմերի պատիժները և հարկադրանքի այլ միջոցների կիրառմանը վերաբերող այն իրավական ակտերի համապատասխանությունը գործող օրենսդրությանը, որոնք վերաբերում են պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձի հիմնական իրավունքներին, պատժի կրման կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման՝ օրենքով սահմանված կարգին, հիմքերին ու պայմաններին: Օրենսդրությանը հակասող ակտ հայտնաբերելիս դատախազը միջնորդում է վերանայել այն, իսկ այն դեպքերում, երբ, դատախազի կարծիքով, հապաղումը կարող է հանգեցնել ծանր հետևանքների, դատախազն իրավունք ունի կասեցնելու այդ ակտի գործողությունը և այն վերանայելու միջնորդագիր ներկայացնելու ակտն ընդունած մարմին կամ ակտը վերացնելու միջնորդագիր է ներկայացնում ակտն ընդունած մարմնի համապատասխան վերադաս մարմին կամ պաշտոնատար անձին, իսկ գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը՝ նաև իրավասու ~~հանրապետական գործադիր~~ **պետական** մարմնի ղեկավարին.

4) հարցման ենթարկելու պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձանց.

5) անհապաղ ազատելու ազատությունից զրկելու վայրերում, ինչպես նաև այդ վայրերի պատժախցերում ապօրինի պահվող անձանց.

6) պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձանց իրավունքների և ազատությունների խախտման կասկածի կամ պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման՝ օրենքով սահմանված կարգի ու պայմանների խախտման դեպքում պաշտոնատար անձանցից պահանջելու բացատրություններ ձեռնարկված գործողությունների կամ անգործության մասին:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված լիազորությունները դատախազն իրականացնում է նաև պրոբացիայի ծառայության կողմից ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների և հարկադրանքի այլ միջոցների (այլընտրանքային խափանման միջոցների, անվտանգության միջոցների, պատիժը պայմանականորեն չկիրառելու և պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հետևանքով փորձաշրջան նշանակելու, պատժի կրումից ազատելու, պատժի կրումը հետաձգելու նկատմամբ վերահսկողության կատարման) կիրառման օրինականության նկատմամբ:

6. Դատախազն օրենքով սահմանված կարգով մասնակցում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու, ծանր հիվանդության կամ արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատելու վերաբերյալ միջնորդությունների քննությանը դատարանում:

Հոդված 55. Կարգապահական տույժ նշանակելու իրավասությունը

1. Սույն օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգապահական տույժերը նշանակում է գլխավոր դատախազը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքի: ~~Գլխավոր դատախազը, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով, բարձրաստիճան պաշտոնատար անձ~~

~~հանդիսացող դատախազների նկատմամբ կարգապահական տույժ նշանակում է բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների խախտման մասին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած եզրակացության հիման վրա՝ եզրակացությունն ստանալու պահից եռօրյա ժամկետում:~~ **Գլխավոր դատախազը սույն օրենքի 49-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները կամ անհամատեղելիության պահանջները չպահպանելու հիմքով տույժ նշանակում է միայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած եզրակացության հիման վրա՝ եզրակացությունն ստանալու պահից եռօրյա ժամկետում:**

2. Սույն օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված կարգապահական տույժը գլխավոր դատախազի տեղակալների և դատախազների նկատմամբ գլխավոր դատախազը նշանակում է էթիկայի հանձնաժողովի համապատասխան դրական եզրակացության հիման վրա:

3. Սույն օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված կարգապահական տույժը բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների նկատմամբ նշանակում է Հայաստանի Հանրապետության նախագահը՝ գլխավոր դատախազի ներկայացմամբ: Սույն օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված կարգապահական տույժը գլխավոր դատախազի նկատմամբ նշանակում է Հայաստանի Հանրապետության նախագահը:

Հոդված 56. Կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգը և ժամկետները

1. Սույն օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերով, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի, դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ կարող է հարուցել գլխավոր դատախազը՝

1) իր նախաձեռնությամբ կամ

2) սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դատախազների միջնորդությունների հիման վրա կամ

3) ֆիզիկական կամ իրավաբանական անձի, պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդումների, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների հիման վրա.

4) պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով գլխավոր դատախազին դիմելու մասինդատարանի սանկցիայի հիման վրա:

2. Սույն օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված հիմքով ~~բարձրաստիճան պաշտոնատար անձ համարվող դատախազին~~ **դատախազի նկատմամբ** կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ հաղորդում կամ միջնորդություն ստանալու դեպքում գլխավոր դատախազը, իսկ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում էթիկայի հանձնաժողովը եռօրյա ժամկետում հաղորդումը կամ միջնորդությունն ուղարկում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: Եթե բարձրաստիճան պաշտոնատար անձ համարվող դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու նախաձեռնողը գլխավոր դատախազն է, ապա նա եռօրյա ժամկետում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացնում տեղեկատվություն դատախազի կողմից սույն օրենքի 49-րդ հոդվածով սահմանված

սահմանափակումները կամ անհամատեղելիության պահանջները չպահպանելու փաստի մասին:

3. Կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ միջնորդություն գլխավոր դատախազին ներկայացնելու իրավունք ունեն՝

1) գլխավոր դատախազի տեղակալը՝ իր համակարգման ոլորտում գտնվող դատախազների կատարած կարգապահական խախտումների համար.

2) գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը՝ տվյալ ստորաբաժանման դատախազների կատարած կարգապահական խախտումների համար, ինչպես նաև սույն օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքերում.

3) զինվորական դատախազը՝ զինվորական կենտրոնական դատախազության և կայազորների զինվորական դատախազության դատախազների կատարած կարգապահական խախտումների համար.

4) Երևան քաղաքի դատախազը՝ Երևան քաղաքի դատախազության դատախազների, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազների և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունների դատախազների կատարած կարգապահական խախտումների համար.

5) Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազը՝ տվյալ վարչական շրջանի դատախազությանդատախազների կատարած կարգապահական խախտումների համար.

6) մարզի դատախազը՝ տվյալ մարզի դատախազության դատախազների կատարած կարգապահական խախտումների համար.

7) կայազորի զինվորական դատախազը՝ կայազորի զինվորական դատախազության դատախազների կատարած կարգապահական խախտումների համար:

4. Էթիկայի հանձնաժողով հասցեագրված՝ սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հաղորդումների հիման վրա, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի, դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավունք ունի նաև էթիկայի հանձնաժողովը նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ: Նիստի անցկացման կարգի վրա տարածվում են սույն օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով նախատեսված նորմերը:

5. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված միջնորդությունները, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հաղորդումներն ու հրապարակումներն ինքնին կարգապահական վարույթ հարուցելու հիմք չեն:

6. Կարգապահական վարույթը հարուցելու և իրականացնելու, այդ թվում՝ սույն հոդվածի 11-րդ և 12-րդ մասերով սահմանված իրավունքների և պարտականությունների իրականացման կարգը սահմանում է գլխավոր դատախազը:

7. Իր կամ էթիկայի հանձնաժողովի՝ կարգապահական վարույթ հարուցելու որոշման հիման վրա գլխավոր դատախազը եռօրյա ժամկետում ստեղծում է դատախազներից կազմված կարգապահական վարույթ իրականացնող հանձնախումբ կամ դրա իրականացումը հանձնարարում է մեկ դատախազի:

8. Կարգապահական վարույթը հարուցվում է կարգապահական խախտում հայտնաբերվելու օրվանից 30-օրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան այն կատարելու օրվանից 12 ամսվա ընթացքում:

9. Կարգապահական վարույթի տևողությունը չի կարող գերազանցել 21 օրը՝ սկսած կարգապահական վարույթ հարուցելու օրվանից, բացառությամբ կարգապահական

ստուգումների, դատախազի հարգելի պատճառով բացակայության, հիվանդության, գործուղման դեպքերի: Այս դեպքում կարգապահական վարույթի տևողությունը վարույթ հարուցած անձը կարող է երկարաձգել կարգապահական ստուգումների, հիվանդության, գործուղման կամ դատախազի հարգելի պատճառով բացակայության ժամանակահատվածով:

10. Կարգապահական վարույթի հարուցման և կարգապահական տույժի նշանակման որոշումների մասինդատախազին հաղորդվում է համապատասխանաբար կարգապահական վարույթ հարուցելու և կարգապահական տույժ նշանակելու որոշումները կայացնելու օրվանից ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում:

11. Առերևույթ կարգապահական խախտման մեջ կասկածվող դատախազն ունի՝

1) իրավունք՝ ծանոթանալու իր իրավունքներին և պարտականություններին.

2) իրավունք՝ իմանալու, թե ինչ կարգապահական խախտում է իրեն վերագրվում, պարզաբանում տալու իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի առնչությամբ.

3) իրավունք՝ միջնորդություններ ներկայացնելու կարգապահական վարույթի ընթացքում առանձին գործողություններ կատարելու համար, ինչպես նաև ներկայացնելու նյութեր, իր պարզաբանումները հիմնավորող փաստական տվյալներ՝ կարգապահական վարույթի նյութերին կցելու համար.

4) իրավունք՝ բացարկ հայտնելու կարգապահական վարույթ իրականացնող անձին, եթե կան հիմքեր ենթադրելու, որ կարգապահական վարույթ իրականացնող անձն ուղղակի կամ անուղղակի շահագրգռված է կարգապահական վարույթի ելքով: Բացարկը լուծում է գլխավոր դատախազը.

5) իրավունք՝ ծանոթանալու կարգապահական վարույթի նյութերին, բացառությամբ պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների, եթե չունի դրանց առնչվելու թույլտվություն, ինչպես նաև կարգապահական վարույթի ընթացքի, նյութերի վերաբերյալ ներկայացնելու առաջարկություններ, դիտողություններ և միջնորդություններ.

6) օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

12. Դատախազը պարտավոր է կարգապահական վարույթն իրականացնողի պահանջով ներկայացնել կարգապահական վարույթի իրականացման համար անհրաժեշտ իր մոտ եղած փաստաթղթեր, առարկաներ և նյութեր:

13. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հաղորդումը պետք է պարունակի՝

1) այն ներկայացնող անձի անուն, ազգանուն, ծանուցման հասցե և այն դատախազի վերաբերյալ տվյալներ, որի դեմ կարգապահական վարույթ կարող է հարուցվել,

2) կարգապահական խախտումներ համարվող արարքների և դրանց կատարման տեղի ու ժամանակի նկարագրություն,

3) հնարավորության դեպքում ներկայացվող տվյալները հիմնավորող նյութեր,

4) հաղորդումը ներկայացրած անձի կամ մարմնի ստորագրություն:

14. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված դեպքում կարգապահական վարույթ իրականացնողը կարող է վարույթի համար նշանակություն ունեցող տեղեկություններ պահանջել հաղորդումը ներկայացրած անձից կամ մարմնից:

15. Սույն հոդվածի 13-րդ մասով սահմանված պահանջներին չհամապատասխանող հաղորդումը այն ստանալու պահից յոթ օրվա ընթացքում վերադարձվում է հաղորդումը ներկայացրած անձին կամ մարմին:

16. Դատախազն իրավունք ունի իր նկատմամբ նշանակված կարգապահական տույժի մասին որոշումը օրենքով սահմանված կարգով բողոքարկելու դատարան:

Հոդված 64. Դատախազների վարձատրությունը

1. Դատախազների վարձատրության, այդ թվում՝ հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի հաշվարկների և չափերի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ~~«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»~~ **«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»** Հայաստանի Հանրապետության օրենքով:

Հոդված 65. Դատախազների կենսաթոշակային և սոցիալական ապահովությունը

1. Դատախազի կենսաթոշակային ապահովությունը, ինչպես նաև դատախազի կողմից իր պաշտոնեական պարտականությունները կատարելիս կամ դրանք կատարելու առնչությամբ ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով մահանալու (զոհվելու) դեպքում դատախազի և նրա ընտանիքի անդամների սոցիալական ապահովությունն իրականացվում է ~~«Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին»~~ **«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին»** Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2. Դատախազին կարող է տրվել միանվագ դրամական օգնություն՝ գլխավոր դատախազի սահմանած կարգով և չափով՝ աշխատավարձի ֆոնդի սահմաններում:

~~**ԳԼՈՒԽ 13**~~

~~***ԴԱՏԱԽԱԶԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ***~~

~~**Հոդված 75. Դատախազական ծառայությունը**~~

~~1. Դատախազական ծառայությունը Սահմանադրությամբ դատախազությանը վերապահված լիազորությունների իրականացումն ապահովելու նպատակով իրականացվող մասնագիտական գործունեություն է:~~

~~2. Դատախազական ծառայությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական ծառայության հատուկ տեսակ է, որն իրականացվում է «Դատախազության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկում:~~

~~**Հոդված 76. Դատախազական ծառայությունը կարգավորող իրավական ակտերը**~~

~~1. Դատախազական ծառայության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Դատախազական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով,~~

~~ինչպես նաև այլ օրենքներով, դրանց համապատասխան՝ գլխավոր դատախազի ընդունած այլ իրավական ակտերով:~~

«ԳԼՈՒԽ 13
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 75. Քաղաքացիական ծառայությունը

1. Աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում աշխատողները համարվում են քաղաքացիական ծառայողներ:

2. Դատախազության գլխավոր քարտուղարը քաղաքացիական ծառայող է, որին օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է գլխավոր դատախազը:

Հոդված 76. Քաղաքացիական ծառայությունը կարգավորող իրավական ակտերը

1. Դատախազությունում քաղաքացիական ծառայության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:»:

Հոդված 77. Դատախազության ֆինանսավորումը

~~1. Դատախազության ֆինանսավորումն իրականացվում է դատախազության աշխատակազմի միջոցով՝ պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին: Դատախազության աշխատակազմի ֆինանսավորումն արտացոլվում է բյուջետային հայտում և պետական բյուջեում առանձին տողով՝ որպես Հայաստանի Հանրապետության դատախազություն:~~

1. Դատախազության ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին: Դատախազության ֆինանսավորումն արտացոլվում է բյուջետային հայտում և պետական բյուջեում առանձին տողով՝ որպես Հայաստանի Հանրապետության դատախազություն:

2. Դատախազության բյուջետային հայտը կառավարության կողմից ընդունվելու դեպքում ընդգրկվում է պետական բյուջեի նախագծում, իսկ առարկության դեպքում պետական բյուջեի նախագծի հետ ներկայացվում է Ազգային ժողով:

3. Կառավարությունն Ազգային ժողով և գլխավոր դատախազություն է ներկայացնում բյուջետային հայտի վերաբերյալ առարկության հիմնավորումը:

4. Դատախազության բնականոն գործունեության ապահովման համար չկանխատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով նախատեսվում է դատախազության պահուստային ֆոնդ, որը ներկայացվում է բյուջեի առանձին տողով: Պահուստային ֆոնդի մեծությունը հավասար է տվյալ տարվա պետական բյուջեի մասինօրենքով դատախազության համար նախատեսված բյուջեի երկու տոկոսին:

5. Պահուստային ֆոնդից հատկացումները կատարվում են գլխավոր դատախազի որոշմամբ:

6. Բյուջետային հայտի և միջնաժամկետ ծախսերի ծրագրի վերաբերյալ դատախազության դիրքորոշումն Ազգային ժողովում ներկայացնում է դատախազության ~~աշխատակազմի ղեկավարը~~ **գլխավոր քարտուղարը**:

7. Դատախազության բնականոն գործունեության ապահովման համար դատախազության պահուստային ֆոնդի միջոցների անբավարարության դեպքում կառավարությունը պակասը լրացնում է կառավարության պահուստային ֆոնդից:

Հոդված 15. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին

ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 38. Արտոնագրի գործողության կասեցումը

1. Փաստաբանի արտոնագրի գործողությունը կասեցվում է, եթե փաստաբանը՝

1) ընտրվել է պետական ընտրովի մարմիններում, համայնքի ղեկավարի կամ ավագանու պաշտոնում՝ իր լիազորությունների ժամկետով.

2) զորակոչվել է ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մինչև ծառայության ժամկետի լրանալը.

3) մեկ տարուց ավելի ժամանակով առողջական վիճակի պատճառով ի վիճակի չէ կատարելու իր մասնագիտական պարտականությունները, եթե առկա են առողջական վիճակը հավաստող համապատասխան փաստաթղթեր, բայց ոչ ավելի, քան 5 տարի ժամկետով.

~~4) անցել է հանրային ծառայության՝ պետական ծառայության, համայնքային ծառայության մեջ գտնվելու ժամկետով, բայց ոչ ավելի, քան 5 տարի ժամկետով.~~

4) անցել է հանրային ծառայության՝ հանրային պաշտոն զբաղեցնելու, պետական ծառայության, համայնքային ծառայության մեջ գտնվելու ժամկետով, բայց ոչ ավելի, քան 5 տարի ժամկետով.

5) օրենքով սահմանված կարգով ճանաչվել է անհայտ բացակայող:

2. Փաստաբանի արտոնագրի գործողությունը կարող է կասեցվել դատարանի կողմից փաստաբանի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ նշանակվելու դեպքում:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայության մասին փաստաբանը պարտավոր է տասնօրյա ժամկետում տեղյակ պահել փաստաբանների պալատի խորհրդին:

4. Փաստաբանի արտոնագրի գործողությունը կասեցնում է փաստաբանների պալատի խորհուրդը:

5. Փաստաբանի արտոնագրի գործողության կասեցումը հանգեցնում է տվյալ փաստաբանի նկատմամբ սույն օրենքով նախատեսված երաշխիքների կասեցման:

6. Արտոնագիրը կասեցված պալատի անդամն իրավունք չունի մասնակցելու պալատի մարմինների և նախագահի ընտրություններին:

7. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը վերանալուց հետո փաստաբանի արտոնագրի գործողությունը վերականգնվում է փաստաբանների պալատի խորհրդի որոշմամբ՝ այն փաստաբանի դիմումի հիման վրա, որի արտոնագրի գործողությունը կասեցվել էր:

8. Փաստաբանի արտոնագրի գործողությունը վերականգնելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

9. Արտոնագիրը վերականգնած փաստաբանը պարտավոր է անցնել վերապատրաստման դասընթացներ՝ փաստաբանների պալատի խորհրդի սահմանած ժամաքանակով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2017 թվականի դեկտեմբերի 6-ին

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 18. Արտոնագրի գործողության կասեցումը

1. Արտոնագրի գործողությունը կասեցվում է Խորհրդի որոշմամբ՝ արտոնագրման հանձնաժողովի եզրակացության հիման վրա, եթե ճարտարապետը (ճարտարագետ-կոնստրուկտորը)՝

1) չի մուծել Պալատի կանոնադրությամբ սահմանված տարեկան անդամավճարը.

2) օրենքով սահմանված կարգով ճանաչվել է անհայտ բացակայող.

3) դիմել է կասեցման խնդրանքով.

4) շարունակական հինգ տարիների ընթացքում չի զբաղվել մասնագիտական գործունեությամբ և չի մասնակցել վերապատրաստման սահմանված ժամաքանակով դասընթացներին:

2. Պալատի նախագահը Խորհրդի որոշումը հինգ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է լիազորված մարմնի ղեկավարին, որը կարող է բողոքարկվել մեկամսյա ժամկետում:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքերով արտոնագիրը կասեցված անդամը Պալատի մարմինների ընտրություններին չի մասնակցում:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը վերանալուց հետո՝ 45 օրվա ընթացքում, ճարտարապետի (ճարտարագետ-կոնստրուկտորի) արտոնագրի գործողությունը վերականգնվում է իր դիմումի հիման վրա:

5. Արտոնագրի գործողությունը վերականգնելը մերժվում է միայն կեղծ տվյալներ ներկայացնելու պատճառով: Արտոնագրի գործողության վերականգնելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

6. ~~Հանրային ծառայության պաշտոն~~ **Հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն** զբաղեցնող ճարտարապետի կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների խախտում՝ պաշտոնատար անձի այլ գործունեությամբ զբաղվելու սահմանափակումների մասով, հայտնաբերվելու դեպքում Խորհուրդը երկու ամիս ժամկետով կասեցնում է ճարտարապետի արտոնագրի գործողությունը և հաղորդում ներկայացնում համապատասխան մարմին՝ խախտման փաստի վերաբերյալ ծառայողական քննություն իրականացնելու խնդրանքով: Ծառայողական քննության արդյունքների հիման վրա կասեցման մասին որոշումը չեղյալ է համարվում կամ հաստատվում է նոր ժամկետով՝ մինչև խախտման հիմքերի վերանալը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին

ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Փրկարարական ծառայության կանոնագիրքը

1. Սույն կանոնագրքով կարգավորվում են փրկարարական ծառայության կազմակերպման և անցկացման, փրկարարական աշխատանքների և մարտական առաջադրանքների ղեկավարման ու իրականացման, տեղեկատվության հաղորդման կարգը, փրկարարական ծառայողների իրավունքները և պարտականությունները, խրախուսանքները, կարգապահական և նյութական պատասխանատվության ու դրանց կիրառման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև ծառայության անցման հետ կապված այլ հարաբերություններ:

2. Սույն կանոնագրքի պահանջները տարածվում են արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ոլորտի ~~հանրապետական գործադիր~~ **լիազոր** մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) համակարգում կամ կառավարման ոլորտում գործող բոլոր փրկարարական ստորաբաժանումների, այդ թվում՝ պետական ոչ առևտրային կազմակերպությունների, փրկարարական ստորաբաժանումների վրա:

3. Բացի սույն հոդվածի 2-րդ մասում նշված փրկարար ուժերից, սույն կանոնագրքի փրկարարական աշխատանքների կատարմանը վերաբերող պահանջները տարածվում են լիազոր մարմնի Փրկարար ծառայության ստորաբաժանումների հետ փրկարարական աշխատանքներ իրականացնող մասնագիտացված և կամավոր փրկարար ուժերի վրա:

4. Միևնույն կայազորի տարածքում տեղակայված լիազոր մարմնի Փրկարար ծառայության և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստորաբաժանումների միջև փոխհամագործակցության կարգը սահմանվում է լիազոր մարմնի ~~ու պաշտպանության բնագավառի հանրապետական գործադիր մարմնի ղեկավարների~~ **ղեկավարի ու պաշտպանության նախարարի** համատեղ հրամանով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2003 թվականի դեկտեմբերի 25-ին

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ

Հոդված 7.1. Հանձնաժողովի նախագահը և անդամները

1. Հանձնաժողովի նախագահը՝

ա) համակարգում և ապահովում է հանձնաժողովի բնականոն աշխատանքը.

բ) հրավիրում և նախագահում է հանձնաժողովի նիստերը, ստորագրում է հանձնաժողովի որոշումներն ու նիստերի արձանագրությունները.

գ) իր լիազորությունների շրջանակում ընդունում է հրամաններ, հանձնաժողովի անունից ստորագրում է պաշտոնական փաստաթղթեր, տալիս լիազորագրեր և կնքում պայմանագրեր.

դ) իր իրավասությունների սահմաններում ներկայացնում է հանձնաժողովը Հայաստանի Հանրապետությունում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում, առանց լիազորագրի հանդես է գալիս հանձնաժողովի անունից:

2. Հանձնաժողովի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նրա հանձնարարությամբ

փոխարինում է հանձնաժողովի անդամներից որևէ մեկը, իսկ նման հանձնարարականի անհնարինության դեպքում՝ հանձնաժողովի այն անդամը, որն ավելի երկար է աշխատում այդ պաշտոնում:

2.1. Հանձնաժողովի անդամներն իրենց լիազորություններն իրականացնելիս անկախ են և գործում են Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

3. Հանձնաժողովի անդամն իրեն վերապահված լիազորությունների սահմաններում հանձնաժողովի անունից ստորագրում է պաշտոնական փաստաթղթեր, նշագրում հանձնաժողովի որոշումներ և այլ փաստաթղթեր:

4. Հանձնաժողովի անդամների միջև լիազորությունների և աշխատանքային պարտականությունների բաշխման հետ կապված հարցերը կարգավորվում են հանձնաժողովի որոշմամբ:

~~**Հոդված 8. Հանձնաժողովի աշխատակազմը**~~

~~1. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է հանձնաժողովի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) միջոցով, որի ղեկավարումն իրականացնում է աշխատակազմի ղեկավարը: Աշխատակազմի աշխատանքը կանոնակարգվում է սույն օրենքով և հանձնաժողովի որոշումներով:~~

~~2. Աշխատակազմն իր կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով ապահովում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով և այլ օրենքներով հանձնաժողովին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը և քաղաքացիաիրավական հարաբերություններին նրա մասնակցությունը:~~

~~3. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավասությունները, բացառությամբ հայցվոր և պատասխանող հանդես գալու իրավունքից, հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են պատվիրակվել աշխատակազմին:~~

~~4. Աշխատակազմի կառուցվածքը, կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթները, աշխատակիցների թիվը և աշխատակազմի գործունեության կազմակերպմանն առնչվող ներքին կանոնակարգային այլ հարցեր կարգավորվում են հանձնաժողովի որոշումներով: Աշխատակազմի աշխատակիցների թիվը համաձայնեցվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի հետ:~~

Հոդված 8. Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումները

1. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է գլխավոր քարտուղարի, գլխավոր քարտուղարի տեղակալի, ինչպես նաև հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների (այսուհետ՝ կառուցվածքային ստորաբաժանումներ) միջոցով, որոնց ղեկավարումն իրականացնում են կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները: Կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը կանոնակարգվում է սույն օրենքով և հանձնաժողովի որոշումներով:
2. Կառուցվածքային ստորաբաժանումներն ապահովում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով և այլ օրենքներով հանձնաժողովին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը:
3. Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթները, աշխատակիցների թիվը և կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կազմակերպմանն առնչվող ներքին կանոնակարգային այլ

հարցերը կարգավորվում են հանձնաժողովի որոշումներով: Հանձնաժողովի աշխատակիցների թիվը համաձայնեցվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի հետ:

Հոդված 9. Հանձնաժողովի անդամների և ~~աշխատակազմի~~ աշխատակիցների իրավունքների սահմանափակումները և պատասխանատվությունը

1. Հանձնաժողովի անդամը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն առևտրային կազմակերպություններում, զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական, ստեղծագործական աշխատանքից, պայմանով, որ այդ աշխատանքները չեն ֆինանսավորվում կարգավորվող անձանց կողմից:

2. Հանձնաժողովի անդամը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հանձնաժողովի անդամն իր հրապարակային ելույթներում պետք է ցուցաբերի քաղաքական զսպվածություն:

3. Հանձնաժողովի անդամները և ~~աշխատակազմի~~ աշխատակիցներն իրենց պաշտոնավարման ընթացքում չեն կարող ունենալ կարգավորվող անձանց արժեթղթեր, բաժնեմաս կամ դրանցում կատարել ներդրումներ:

4. Հանձնաժողովի անդամն իրավունք չունի իր պաշտոնավարման ժամկետը լրանալու կամ լիազորությունները վաղաժամկետ դադարելու պահից մեկ տարվա ընթացքում զբաղեցնելու հանրայինծառայությունների ոլորտի կարգավորվող ընկերության՝ ստորաբաժանումների համակարգման գործառույթներով օժտված կամ ստորաբաժանման ղեկավարի պաշտոն:

5. Սույն օրենքի պահանջները խախտելու համար հանձնաժողովի պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

Հոդված 18. Հանձնաժողովի անդամների և աշխատողների վարձատրությունը

1. Հանձնաժողովի անդամների և աշխատողների վարձատրության, այդ Հանձնաժողովի անդամների և աշխատողների վարձատրության, այդ թվում՝ հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի հաշվարկների և չափերի, աշխատավարձի բնականոն աճի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ~~«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»~~ **«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»** Հայաստանի Հանրապետության օրենքով:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2018 թվականի հունվարի 16-ին

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները սույն օրենքի իմաստով ունեն հետևյալ նշանակությունը.

1) **արտաքին պետական հաշվեքննություն** (այսուհետ՝ հաշվեքննություն)՝ հաշվեքննության առարկան կարգավորող իրավական ակտերով կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված գործարքներով սահմանված չափանիշների և պահանջների պահպանման գնահատում: Գնահատումն իրականացվում է հաշվեքննության առարկայի իրականացման համար իրավական ակտերով կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված գործարքներով սահմանված ժամանակաշրջանի կամ փուլի ավարտից հետո.

2) **հաշվեքննության առարկա՝** հաշվեքննության օբյեկտի կողմից իրականացվող ֆինանսատնտեսական գործունեություն.

3) **հաշվեքննության օբյեկտ՝** սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմիններ և հիմնարկներ.

4) **ֆինանսատնտեսական գործունեություն՝** հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում պետական և համայնքային բյուջեների միջոցների, ստացված փոխառությունների և վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործում.

5) **ծրագրային կետ՝** հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի (այսուհետ՝ գործունեության ծրագիր) 1-ին և 2-րդ մասերի միավոր, որում նշվում են հաշվեքննության օբյեկտը, առարկան.

6) **հաշվեքննության առաջադրանք՝** հաշվեքննիչ պալատի կողմից հաստատվող փաստաթուղթ, որում նշվում են ծրագրային կետում ներառված հաշվեքննության օբյեկտը, առարկան, կատարման ժամկետը, հաշվեքննությունը ընդգրկող ժամանակաշրջանը, հաշվեքննության տեսակը, ընթացակարգը, հաշվեքննություն իրականացնող **կառուցվածքային** ստորաբաժանումը, պաշտոնատար անձինք, այդ թվում՝ հաշվեքննողները, փորձագետները և մասնագետները.

7) **հաշվեքննության տեսակներ՝** ֆինանսական, համապատասխանության, կատարողականի.

8) **հաշվեքննության ընթացակարգեր՝** զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում.

9) **ստուգում՝** ստուգման առարկան կարգավորող իրավական ակտերով կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված գործարքներով սահմանված չափանիշների և պահանջների պահպանման գնահատում: Գնահատումն իրականացվում է ստուգման առարկայի իրականացման համար իրավական ակտերով կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված գործարքներով սահմանված ժամանակաշրջանի կամ փուլի ավարտից հետո: Ստուգումը կատարվում է հաշվեքննության օբյեկտին առնչվող իրավաբանական անձանց մոտ սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում, հաշվեքննության

տեսակներով ու զննման, դիտարկման, հարցման, արտաքին հաստատման, վերահաշվարկի և վերակատարման ընթացակարգերով.

10) **ստուգման առարկա՝** ստուգման օբյեկտի կողմից իրականացվող ֆինանսատնտեսական գործունեություն.

11) **ստուգման օբյեկտ՝** սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավաբանական անձ.

12) **ստուգման առաջադրանք՝** հաշվեքննիչ պալատի կողմից հաստատվող փաստաթուղթ, որում նշվում են ծրագրային կետում ներառված հաշվեքննության օբյեկտին առնչվող ստուգման օբյեկտը, առարկան, կատարման ժամկետը, ստուգումն ընդգրկող ժամանակաշրջանը, հաշվեքննության տեսակը, ընթացակարգը, ստուգումն իրականացնող **կառուցվածքային** ստորաբաժանումը, պաշտոնատար անձինք, այդ թվում՝ հաշվեքննողները, փորձագետները և մասնագետները.

13) **հաշվեքննող՝** հաշվեքննություն, ստուգում իրականացնող հաշվեքննիչ պալատի ~~աշխատակազմի~~ **կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական** ծառայող.

14) **մասնագետ՝** պայմանագրային կարգով հաշվեքննության, ստուգման գործընթացում ներգրավվող՝ համապատասխան բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ ունեցող ֆիզիկական անձ.

15) **փորձագետ՝** պայմանագրային կարգով հաշվեքննության, ստուգման գործընթացում ներգրավվող՝ հաշվեքննության և ստուգման վերաբերյալ հատուկ մասնագիտական գիտելիքներ ունեցող ֆիզիկական անձ:

Հոդված 10. Մասնագիտական կարողությունների ապահովման և շարունակական զարգացման սկզբունքը

1. Հաշվեքննիչ պալատը սահմանում է չափորոշիչներ հաշվեքննիչ պալատի ~~աշխատակազմում~~ **կառուցվածքային ստորաբաժանումներում** աշխատանքի ընդունվողների համար, ինչպես նաև հաստատում է հաշվեքննիչ պալատի ~~աշխատակազմի~~ **կառուցվածքային ստորաբաժանումներում քաղաքացիական** ծառայողների մասնագիտական կարողությունների շարունակական զարգացման ծրագիրը:

ԳԼՈՒԽ 3

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԿԱԶՄԸ, ՆԻՍՏԵՐԸ, ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ, ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ, ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ~~ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ~~ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հոդված 16. Հաշվեքննիչ պալատի նիստերը

1. Հաշվեքննիչ պալատն իր գործունեությունը կազմակերպում է հերթական և արտահերթ նիստերի (այսուհետ՝ նիստ) միջոցով: Հերթական նիստերը հրավիրվում են ամիսը մեկ՝ հաշվեքննիչ պալատի նախագահի կողմից: Արտահերթ նիստ հրավիրվում է հաշվեքննիչ պալատի նվազագույնը երեք անդամի նախաձեռնությամբ:

2. Նիստերի օրակարգը նիստի անցկացումից առնվազն երկու աշխատանքային օր առաջ ուղարկվում է հաշվեքննիչ պալատի անդամներին, նիստին հրավիրված անձանց, Ազգային ժողով և Հայաստանի Հանրապետության կառավարություն:

3. Նիստերը նախագահում է հաշվեքննիչ պալատի նախագահը:

4. Նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է հաշվեքննիչ պալատի առնվազն չորս անդամ:

5. Նիստում որոշումներն ընդունվում են քվեարկությամբ՝ առնվազն չորս կողմ ձայնի առկայության դեպքում:

6. Հաշվեքննիչ պալատի յուրաքանչյուր անդամ քվեարկում է անձամբ, ունի մեկ ձայն և քվեարկում է կողմ կամ դեմ:

7. Հաշվեքննիչ պալատի որոշումներն ստորագրում է նիստը նախագահողը: Որոշման վերաբերյալ հաշվեքննիչ պալատի անդամի կողմից հատուկ կարծիքի առկայության դեպքում կարծիքը կցվում է որոշմանը:

8. Նիստերն արձանագրվում են հաշվեքննիչ պալատի սահմանած կարգով: Արձանագրություններն ստորագրում է նիստը նախագահողը: Յուրաքանչյուր նիստի ավարտից հետո հաշվեքննիչ պալատն իր պաշտոնական կայքում տեղադրում է տեղեկատվություն նիստում քննարկված հարցերի և ընդունված որոշումների վերաբերյալ:

9. Հաշվեքննիչ պալատն իր նիստում քննարկում և հաստատում է՝

1) հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագիրը (այսուհետ՝ գործունեության ծրագիր).

2) գործունեության ծրագրի կազմման համար հիմք հանդիսացող ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությունը.

3) գործունեության ծրագրում փոփոխությունը և (կամ) լրացումը.

4) պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը.

5) ընթացիկ եզրակացությունները.

6) հաշվեքննիչ պալատի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը.

7) հաշվեքննիչ պալատի բյուջետային հայտը, ծախսերի նախահաշիվը և վերջինիս կատարողականը, սույն օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նշված ֆոնդերից ծախսերի կատարման վերաբերյալ որոշումները.

8) հաշվեքննության առաջադրանքը.

9) հաշվեքննիչ պալատի ներքին իրավական ակտերը և դրանցում փոփոխությունները և լրացումները.

10) հաշվեքննիչ պալատի կանոնակարգը.

11) հաշվեքննիչ պալատի ~~աշխատակազմի~~ կանոնադրությունը.

12) հաշվեքննության իրականացման մեթոդաբանությունը և ուղեցույցները, հաշվեքննիչ պալատի անդամների գործունեությանն առնչվող՝ միջազգային իրավական պրակտիկայով պայմանավորված ուղենշային չափանիշները, հաշվեքննողների համար ներքին ծառայողական հարաբերությունների շրջանակում կիրառվող էթիկայի կանոնները և որակի կառավարման համակարգի գործառույթի իրականացման մեթոդաբանությունը.

13) հաշվեքննիչ պալատի ~~աշխատակազմի~~ **կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական** ծառայողների՝ սույն օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան պաշտոնի անձնագրերը.

14) հաշվեքննիչ պալատի աշխատանքներում մասնագետների և փորձագետների ներգրավման կարգը.

~~15) հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ղեկավարի նշանակումը.~~

16) հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների միջև աշխատանքների պարբերական վերաբաշխումը.

17) հաշվեքննիչ պալատի անդամների միջև աշխատանքների պարբերական վերաբաշխումը.

18) հաշվեքննիչ պալատի անունից հանդես եկող անձի լիազորությունների շրջանակը, տալիս լիազորագիր.

19) օրենքով սահմանված իր լիազորությունների շրջանակում հաշվեքննիչ պալատի ~~աշխատակազմի~~ **կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական** ծառայողների նկատմամբ կիրառում է օրենքով նախատեսված կարգապահական տույժեր և խրախուսանքներ, ինչպես նաև լսում է հաշվեքննողների գործողությունների կամ անգործության դեմ բերված բողոքները և բավարար հիմքերի առկայության դեպքում ձեռնարկում միջոցներ պատասխանատվություն կիրառելու համար.

20) հաշվեքննիչ պալատի հաշվեքննություն իրականացնող և հաշվեքննության գործընթացին առնչվող գործառույթ իրականացնող ~~աշխատակազմի~~ **կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական** ծառայողների հաջորդ տարվա մասնագիտական կարողությունների շարունակական զարգացման ծրագիրը, որն իրականացվում է ինչպես ներքին կարողությունների օգտագործմամբ, այնպես էլ այլ կառույցներում վերապատրաստման միջոցով:

Հոդված 17. Հաշվեքննիչ պալատի անդամը

1. Հաշվեքննիչ պալատի անդամ, ներառյալ՝ պալատի նախագահ, կարող է ընտրվել Ազգային ժողովի պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող, բարձրագույն կրթություն և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աուդիտորի որակավորում ստացած այն քաղաքացին, որն ունի աուդիտորի նվազագույնը հինգ տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ունեցող իրավաբանական անձի ղեկավար պաշտոնի աշխատանքային ստաժ կամ հաշվեքննիչ պալատի անդամի նվազագույնը երեք տարվա աշխատանքային ստաժ կամ հաշվեքննիչ պալատի ~~աշխատակազմում գլխավոր պաշտոնների 1-ին խմբի~~ **կառուցվածքային ստորաբաժանումներում ղեկավար պաշտոնների առնվազն 3-րդ ենթախմբի** նվազագույնը հինգ տարվա աշխատանքային ստաժ կամ հանրային ֆինանսների կառավարման ոլորտի նվազագույնը 10 տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն հինգ տարին՝ ղեկավարի պաշտոնում:

2. Հաշվեքննիչ պալատի անդամի պաշտոնավարման ժամկետը լրանալուց երեք ամիս առաջ հաշվեքննիչ պալատի նախագահն այդ մասին տեղեկացնում է Ազգային ժողովին: Հաշվեքննիչ պալատի անդամի վաղաժամկետ թափուր տեղ առաջանալու դեպքում, եթե պաշտոնավարման ժամկետի ավարտին մնացել է վեց ամսից ավելի ժամանակահատված, ապա հաշվեքննիչ պալատի նախագահն այդ մասին հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է Ազգային ժողովին: Այս դեպքում հաշվեքննիչ պալատի նոր անդամն ընտրվում է նախկին անդամի պաշտոնավարման չլրացած ժամկետով: Հաշվեքննիչ պալատի անդամի վաղաժամկետ թափուր տեղ առաջանալու դեպքում այն չի համալրվում, եթե պաշտոնավարման ժամկետի ավարտին մնացել է վեց ամսից պակաս ժամանակահատված:

3. Հաշվեքննիչ պալատի նախագահը և մյուս անդամներն ընտրվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով:

4. Հաշվեքննիչ պալատի անդամ, ներառյալ՝ պալատի նախագահ, չի կարող ընտրվել այն անձը, որը՝

1) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) ենթարկվել է քրեական պատասխանատվության, և դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

3) օրենքով սահմանված կարգով զրկված է որոշակի պաշտոն զբաղեցնելու իրավունքից:

5. Հաշվեքննիչ պալատի անդամները, ներառյալ՝ պալատի նախագահը, չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպությունում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

6. Հաշվեքննիչ պալատի անդամի, այդ թվում՝ նախագահի լիազորությունները դադարեցնում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված անհամատեղելիության պահանջի խախտման կամ հաշվեքննիչ պալատի անդամի որևէ կուսակցության անդամ լինելու, քաղաքական գործունեությամբ զբաղվելու, հրապարակային ելույթներում քաղաքական զսպվածություն չցուցաբերելու դեպքերում:

7. Հաշվեքննիչ պալատի անդամի լիազորությունները դադարում են՝

1) պաշտոնավարման ժամկետը լրանալու դեպքում.

2) հաշվեքննիչ պալատի անդամի՝ հանցագործության կատարման համար դատապարտվելու կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչվելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի (վճռի) հիման վրա.

3) եթե ի հայտ է եկել հաշվեքննիչ պալատի անդամի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն, որը ներառված է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված՝ դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների ցանկում.

4) հաշվեքննիչ պալատի անդամի հրաժարականի դեպքում.

5) հաշվեքննիչ պալատի անդամի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարելու կամ օտարերկրյա քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում.

6) նրա մահվան դեպքում:

8. Հաշվեքննիչ պալատի անդամի հրաժարականի մասին դիմումը ներկայացվում է Ազգային ժողովի նախագահին, որի մասին տեղեկացվում է հաշվեքննիչ պալատը: Այդ տեղեկությունը տեղադրվում է հաշվեքննիչ պալատի պաշտոնական ինտերնետային կայքում: Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված՝ հաշվեքննիչ պալատի անդամի լիազորությունների դադարման այլ հիմքեր ի հայտ գալու պարագայում հաշվեքննիչ պալատի նախագահն այդ հիմքերն ի հայտ գալու վերաբերյալ տեղեկատվությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է Ազգային ժողով:

Հոդված 19. Հաշվեքննիչ պալատի նախագահը

1. Հաշվեքննիչ պալատի նախագահը՝

1) ապահովում է հաշվեքննիչ պալատի բնականոն գործունեությունը.

2) օրենքով սահմանված կարգով իր լիազորությունների շրջանակներում ~~աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողներին~~ **պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում համապատասխան քաղաքացիական ծառայողներին**.

3) իր լիազորությունների շրջանակներում արձակում է հրամաններ.

4) ներկայացնում է հաշվեքննիչ պալատը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.

5) հաշվեքննիչ պալատի անդամի պաշտոնը թափուր լինելու, լիազորությունների իրականացման անհնարինության, ինչպես նաև բացակայության դեպքերում հաշվեքննիչ պալատի անդամի պարտականությունների կատարումը դնում է հաշվեքննիչ պալատի մեկ այլ անդամի վրա:

2. Հաշվեքննիչ պալատի նախագահը հաշվեքննիչ պալատի անդամներից մեկի վրա նախապես դնում է իր բացակայության ժամանակ իրեն փոխարինելու պարտականությունը: Հաշվեքննիչ պալատի նախագահին փոխարինողի բացակայության դեպքում հաշվեքննիչ պալատի նախագահին փոխարինում է հաշվեքննիչ պալատի անդամի առավել երկար ստաժ ունեցող անդամը:

Հոդված 20. Հաշվեքննիչ պալատի գործունեության երաշխիքները

1. Հաշվեքննիչ պալատը, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում և հաշվեքննիչ պալատի կանոնակարգին համապատասխան, յուրաքանչյուր տարի կազմում ու Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում առաջիկա տարվա իր բյուջետային ֆինանսավորման հայտը (հաշվեքննիչ պալատի ծախսերի նախահաշվի նախագիծը)՝ առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծում ներառելու համար:

2. Հաշվեքննիչ պալատի բյուջետային հայտը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունվելու դեպքում անփոփոխ, իսկ առարկության դեպքում՝ փոփոխված, ընդգրկվում է պետական բյուջեի նախագծում: Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաշվեքննիչ պալատի՝ սույն հոդվածի 1-ին մասում նշված կարգով ներկայացված բյուջետային հայտը պետական բյուջեի նախագծի հետ միասին ներկայացնում է Ազգային ժողով:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությունը Ազգային ժողով և հաշվեքննիչ պալատ է ներկայացնում բյուջետային հայտի վերաբերյալ իր փոփոխությունների հիմնավորումը:

4. Պետական բյուջեով հաշվեքննիչ պալատի գծով նախատեսված տարեկան ծախսերի նախահաշիվները ներառում են հաշվեքննիչ պալատի անդամների և ~~աշխատակազմի~~ **քաղաքացիական** ծառայողների խրախուսման և համակարգի զարգացման նպատակային ֆոնդը, որը չի կարող գերազանցել ~~«Պետական պաշտոններ զբաղեցնող~~

~~անձանց վարձատրության մասին»~~ **«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»** Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված չափը:

5. Հաշվեքննիչ պալատի բնականոն գործունեության ապահովման համար չնախատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով նախատեսվում է հաշվեքննիչ պալատի պահուստային ֆոնդ, որը ներկայացվում է պետական բյուջեի առանձին տողով: Պահուստային ֆոնդի մեծությունը հավասար է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով հաշվեքննիչ պալատի համար նախատեսված ծախսերի (առանց աշխատակիցների խրախուսման և համակարգի զարգացման նպատակային ֆոնդի գծով ծախսերի) ընդհանուր գումարի երկու տոկոսին:

6. Աուդիտորի որակավորում ունեցող հաշվեքննիչ պալատի անդամները և ~~աշխատակազմի~~ **քաղաքացիական** ծառայողները սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում նշված ֆոնդերի միջոցների հաշվին ստանում են դրամական պարգևներ՝ օրենքով սահմանված կարգով:

Հոդված 21. Հաշվեքննիչ պալատի ~~աշխատակազմը~~ կառուցվածքային ստորաբաժանումները

~~1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ստեղծված պետական կառավարչական հիմնարկ է, որը գործում է սույն օրենքով, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով ու իրավական ակտերով սահմանված կարգով: Հիմնարկի հիմնադրի լիազորությունները Հայաստանի Հանրապետության անունից իրականացնում է հաշվեքննիչ պալատը:~~

2. Հաշվեքննիչ ~~պալատի աշխատակազմում~~ **պալատ պետական մարմնում** գործում են հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումներ, հաշվեքննության գործընթացին առնչվող գործառույթ իրականացնող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ, ինչպես նաև ~~այլ~~ **աջակցող մասնագիտական գործառույթներ իրականացնող** կառուցվածքային ստորաբաժանումներ: **Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումները և հաշվեքննության գործընթացին առնչվող գործառույթ իրականացնող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումները համարվում են հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ:**

~~3. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների հաստիքները համալրվում են, ինչպես նաև վերջիններիս ներկայացվող պահանջները սահմանվում են «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:~~

~~4. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմը ղեկավարում է աշխատակազմի ղեկավարը, որը նշանակվում է հաշվեքննիչ պալատի որոշմամբ:~~

4. Հաշվեքննիչ պալատի գլխավոր քարտուղարին պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում Հաշվեքննիչ պալատի նախագահը:

Հոդված 22. Հաշվեքննիչ պալատի ~~աշխատակազմի~~ հաշվեքննություն

իրականացնող քաղաքացիական ծառայողներին ներկայացվող պահանջները

1. Հաշվեքննիչ պալատի ~~աշխատակազմի~~ հաշվեքննություն իրականացնող **քաղաքացիական** ծառայողների պաշտոնների անձնագրերում պետք է ներառվեն նաև առնվազն հետևյալ պահանջները.

1) հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանման ղեկավար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված աուդիտորի որակավորում և աուդիտորի կամ հաշվեքննիչ պալատի ~~աշխատակազմի~~ հաշվեքննություն իրականացնող և դրանց հավասարեցված ստորաբաժանման ~~գլխավոր~~ **ղեկավար** պաշտոնների **խմբում** նվազագույնը հինգ տարվա աշխատանքային ստաժ.

2) հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի տեղակալ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստացած աուդիտորի որակավորում և աուդիտորի կամ հաշվեքննիչ պալատի ~~աշխատակազմի~~ հաշվեքննություն իրականացնող և դրանց հավասարեցված ստորաբաժանման ~~գլխավոր~~ **ղեկավար** պաշտոնների **խմբում** նվազագույնը չորս տարվա աշխատանքային ստաժ:

2. Հաշվեքննիչ պալատի հաշվեքննողները և հաշվեքննության գործընթացին առնչվող գործառույթ իրականացնող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների **քաղաքացիական** ծառայողներն առնվազն երեք տարին մեկ անցնում են վերապատրաստում՝ հաշվեքննիչ պալատում մասնագիտական կարողությունների շարունակական զարգացման ծրագրով սահմանված կարգով:

Հոդված 23. Հաշվեքննիչ պալատի որակի կառավարման համակարգը և արտաքին աուդիտը

1. Հաշվեքննիչ պալատը հաշվեքննությունն իրականացնում է օրինականության և տնտեսման, նպատակային ու ծախսային արդյունավետության սկզբունքների համաձայն:

2. Հաշվեքննիչ պալատի ֆինանսական, հսկողության և կառավարչական գործընթացների հետ կապված ռիսկերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հաշվեքննիչ ~~պալատի աշխատակազմում~~ **պալատ պետական մարմնում** ստեղծվում է որակի կառավարման համակարգ:

3. Հաշվեքննիչ պալատի տարեկան ֆինանսական հաշվետվությունները ենթակա են ամենամյա արտաքին աուդիտի՝ մրցութային հիմունքներով ընտրված արտաքին աուդիտորական կազմակերպության կողմից:

4. Հաշվեքննիչ պալատի տարեկան ֆինանսական հաշվետվությունների արտաքին աուդիտ իրականացնող աուդիտորական կազմակերպության մրցույթը կազմակերպում է Ազգային ժողովի աշխատակազմը՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

Հոդված 24. Հաշվեքննիչ պալատի կանոնակարգը և հաշվեքննիչ պալատի ~~աշխատակազմի~~ կանոնադրությունը

1. Հաշվեքննիչ պալատի գործունեության ներքին ընթացակարգը, հաշվեքննության կազմակերպման և իրականացման ներքին ընթացակարգերը, ինչպես նաև

գործունեության ծրագրի, գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդման, պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացության և ընթացիկ եզրակացության ձևանմուշները սահմանվում են հաշվեքննիչ պալատի կանոնակարգով: Կանոնակարգով մասնավորապես սահմանվում է հաշվեքննիչ պալատի անդամների, ինչպես նաև հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների միջև աշխատանքի պարբերական վերաբաշխման սկզբունքը՝

1) հաշվեքննիչ պալատի անդամը վեց տարվա ընթացքում առավելագույնը երկու տարի կարող է համակարգել հաշվեքննություն իրականացնող նույն կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքները, բացառությամբ սույն մասի 4-րդ ենթակետով սահմանված դեպքի.

2) հաշվեքննիչ պալատի անդամը վեց տարվա ընթացքում առավելագույնը երկու տարի կարող է համակարգել միևնույն պետական և տեղական ինքնակառավարման մարմնին վերապահված գործունեության ոլորտում հաշվեքննություն իրականացնող որևէ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքները, բացառությամբ սույն մասի 4-րդ ենթակետով սահմանված դեպքի.

3) հաշվեքննիչ պալատի ~~աշխատակազմի~~ հաշվեքննություն իրականացնող նույն կառուցվածքային ստորաբաժանումը վեց տարվա ընթացքում առավելագույնը երկու տարի կարող է միևնույն պետական և տեղական ինքնակառավարման մարմնին վերապահված գործունեության ոլորտում հաշվեքննություն իրականացնել, բացառությամբ սույն մասի 4-րդ ենթակետով սահմանված դեպքի.

4) հաշվեքննությունը հաջորդ տարում շարունակվելու դեպքում հաշվեքննությունն իրականացնում են այն սկսած հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումը և հաշվեքննիչ պալատի անդամը:

2. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի կառուցվածքը, ~~աշխատակազմի~~ կառուցվածքային ստորաբաժանումների միջև պարտականությունների բաշխումը, կազմակերպման և իրականացման կարգը հաստատվում են հաշվեքննիչ պալատի աշխատակազմի կանոնադրությամբ:

Հոդված 30. Հաշվեքննիչ պալատի կողմից տեղեկատվության տրամադրման կարգը

1. Հաշվեքննիչ պալատն իր գործունեության ծրագիրը, ընթացիկ եզրակացությունները, պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը և գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը հաստատելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնում է Ազգային ժողով և Հայաստանի Հանրապետության կառավարություն, միաժամանակ դրանք տեղադրում է հաշվեքննիչ պալատի պաշտոնական և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների www.azdarar.am պաշտոնական ինտերնետային կայքերում:

2. Մինչև հաշվեքննիչ պալատի կողմից հաշվեքննության արդյունքների վերաբերյալ որոշում ընդունելը հաշվեքննիչ պալատի անդամներին, հաշվեքննողներին, հաշվեքննիչ պալատի ~~աշխատակազմի~~ **քաղաքացիական** ծառայողներին, ներգրավված մասնագետներին ու փորձագետներին և հաշվեքննության օբյեկտի պաշտոնատար անձանց արգելվում է հաշվեքննության վերաբերյալ որևէ ձևով նախնական գնահատականների և եզրակացությունների հրապարակումը:

Հոդված 38. Հաշվեքննության օբյեկտի պաշտոնատար անձանց իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը

1. Հաշվեքննության կամ ստուգման առաջադրանքում նշված համապատասխան հաշվեքննության օբյեկտի ղեկավարը կամ պատասխանատու պաշտոնատար անձը, իսկ իրավաբանական անձանց մոտ հաշվեքննության իրականացման դեպքում նաև համապատասխան ծրագրային կետում նշված հաշվեքննության օբյեկտի ղեկավարը կամ պատասխանատու պաշտոնատար անձն իրավասու է՝

1) ծանոթանալու հաշվեքննության արձանագրությանը.

2) օրենքով սահմանված կարգով բողոքարկելու հաշվեքննողների գործողությունները:

2. Հաշվեքննության օբյեկտի ղեկավարը իրավասու է հաշվեքննության արձանագրության վերաբերյալ սույն օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնելու առարկություններ և բացատրություններ:

3. Հաշվեքննության օբյեկտի պաշտոնատար անձը պարտավոր է՝

1) անհրաժեշտ աշխատանքային պայմաններ ստեղծել հաշվեքննողների գործունեության համար.

2) հաշվեքննության ընթացքում հաշվեքննողի պահանջով երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել հաշվեքննության առարկայի վերաբերյալ առկա և հասանելի ամբողջական և ճշգրիտ տեղեկատվություն, փաստաթղթեր և գրանցումներ.

3) հաշվեքննության ընթացքում անհապաղ տեղեկացնել հաշվեքննողին տրամադրված տեղեկատվության, փաստաթղթերի և գրանցումների ցանկացած փոփոխության և լրացումների մասին.

4) չխոչընդոտել հաշվեքննության ընթացքին, կատարել հաշվեքննողների օրինական պահանջները:

4. Ծրագրային կետում նշված հաշվեքննության օբյեկտի ղեկավարը պարտավոր է մեկամսյա ժամկետում հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն:

5. Հաշվեքննիչ պալատի ~~աշխատակազմի~~ **քաղաքացիական** ծառայողների՝ հաշվեքննությանը վերաբերող օրինական պահանջները պարտադիր են հաշվեքննության օբյեկտի ղեկավար և այլ պաշտոնատար անձանց համար:

ԳԼՈՒԽ 7

~~ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ~~ ~~ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏՈՒՄ~~

~~**Հոդված 41. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայությունը**~~

~~**Հոդված 41. Ծառայությունը հաշվեքննիչ պալատի կառուցվածքային ստորաբաժանումներում**~~

~~1. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայությունը հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայողի կողմից սույն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով ու իր իրավասության սահմաններում հաշվեքննիչ պալատի~~

~~գործառույթներն իրականացնելու նպատակով հաշվեքննիչ պալատի աշխատակազմում կազմակերպվող մասնագիտական գործունեություն է:~~

~~2. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայությունն իրականացվում է «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:~~

~~3. Հաշվեքննիչ պալատի աշխատակազմում ծառայությանը վերաբերող՝ սույն օրենքով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:~~

4.Հաշվեքննիչ պալատ պետական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներում իրականացվում է քաղաքացիական ծառայություն՝ «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հոդված 42. Հաշվեքննիչ պալատի անդամների և պալատի ~~աշխատակազմի~~ քաղաքացիական ծառայողների վարձատրությունը

1. Հաշվեքննիչ պալատի անդամների, պալատի ~~աշխատակազմի~~ **քաղաքացիական** ծառայողների վարձատրության, այդ թվում՝ հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի հաշվարկների և չափերի, աշխատավարձի բնականոն աճի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ~~«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»~~ **«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»** Հայաստանի Հանրապետության օրենքով:

Հոդված 43. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության նորընտիր նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-4-Ն օրենքը:

3. Հաշվեքննիչ պալատի կանոնակարգը, ~~աշխատակազմի~~ կանոնադրությունը, հաստիքացուցակը, պաշտոնի անձնագրերը ենթակա են հաստատման հաշվեքննիչ պալատի կողմից սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Սույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ հաշվեքննիչ պալատի անդամին և հաշվեքննիչ ~~պալատի աշխատակազմում գլխավոր~~ **պալատում ղեկավար** պաշտոններ զբաղեցնող անձանց վերաբերող աուդիտորի որակավորման դրույթն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից, իսկ հաշվեքննիչ պալատում աշխատանքային ստաժի ժամանակահատվածն ընդգրկում է նաև մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատում աշխատելու ժամանակահատվածը:

5. Սույն օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ հաշվեքննիչ պալատի ~~աշխատակազմի~~ **քաղաքացիական** ծառայողներին վերաբերող աուդիտորի որակավորման դրույթն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից, իսկ հաշվեքննիչ պալատում աշխատանքային ստաժի ժամանակահատվածն ընդգրկում է նաև մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատում աշխատելու ժամանակահատվածը:

6. Սույն օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված՝ պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների հաշվեքննության մասին դրույթը, 26-րդ հոդվածի 4-րդ մասը և 27-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման նկատմամբ ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների ընթացիկ եզրակացություններն օգտագործելու մասին դրույթն ուժի մեջ են մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

7. Սույն օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 17-20-րդ կետերով սահմանված հաշվեքննիչ պալատին վերապահված լիազորությունները մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ն իրականացվում են հաշվեքննիչ պալատի նախագահի կողմից:

Հոդված 45. Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի ~~քաղաքացիական~~ ծառայողներին հաշվեքննիչ պալատի ծառայողներ համարելը

~~1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի աշխատակազմի հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների և հաշվեքննության գործընթացին առնչվող գործառույթ իրականացնող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողները համարվում են հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողներ, իսկ այլ կառուցվածքային ստորաբաժանումներում աշխատող քաղաքացիական ծառայողները՝ հաշվեքննիչ պալատի աշխատակազմի քաղաքացիական ծառայողներ:~~

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի աշխատակազմի քաղաքացիական ծառայողները համարվում են հաշվեքննիչ պալատ պետական մարմնի քաղաքացիական ծառայողներ:

Հոդված 20. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ

Հոդված 29. Խորհրդի անդամների նշանակման կարգը և լիազորությունների դադարումը

1. Խորհրդի անդամի թափուր տեղի համալրման մրցույթն անցկացնելու նպատակով Հանձնաժողովը ձևավորում է մրցութային հանձնաժողով, որը բաղկացած է 5 անդամից, ներառյալ՝ նախագահը:

2. Մրցութային հանձնաժողովի նախագահը և անդամները ընտրվում են 6 տարի ժամկետով:

3. Մրցութային հանձնաժողովի անդամ կարող են լինել լրագրության, հեռուստառադիոհեռարձակման կառավարման բնագավառի, գիտության, մշակույթի և արվեստի հեղինակավոր գործիչներ, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

4. Մրցութային հանձնաժողովի անդամների ընտրության կարգը սահմանում է Հանձնաժողովը:

5. Մրցութային հանձնաժողովի ընթացիկ գործունեությունն սպասարկում է ~~Հանձնաժողովի աշխատակազմը~~ **Հանձնաժողովը:**

6. Մրցութային հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Մրցութային հանձնաժողովի նիստերը հրավիրում և վարում է մրցութային հանձնաժողովի նախագահը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մրցութային հանձնաժողովի տարիքով ավագ անդամը:

7. Մրցութային հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է նրա անդամների կեսից ավելին:

8. Մրցութային հանձնաժողովի անդամները գործում են հասարակական հիմունքներով: Մրցութային հանձնաժողովի անդամներն ստանում եմ փոխհատուցում որպես մրցութային հանձնաժողովի անդամ կատարած ծախսերի համար: Փոխհատուցման չափը և կարգը սահմանում է վարչապետը:

9. Խորհրդի անդամի թափուր տեղի առկայության դեպքում Խորհրդի նախագահը, իսկ Խորհրդի նախագահի թափուր տեղի առկայության դեպքում Խորհրդի տարիքով ավագ անդամը թափուր տեղն առաջանալուց հետո 3-օրյա ժամկետում այդ մասին գրավոր տեղեկացնում են մրցութային հանձնաժողովի նախագահին:

10. Խորհրդի անդամի թափուր տեղի վերաբերյալ գրավոր տեղեկատվությունն ստացվելուց հետո մրցութային հանձնաժողովը մեկշաբաթյա ժամկետում հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, ինչպես նաև Հանձնաժողովի պաշտոնական կայքում հայտարարություն է տարածում թափուր տեղի համալրման համար մրցույթի անցկացման վերաբերյալ:

11. Հայտարարության մեջ նշվում են՝

1) թափուր պաշտոնի անվանումը.

2) թափուր պաշտոնին ներկայացվող պահանջները.

3) մրցույթին մասնակցելու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դրանք ներկայացնելու վայրը, ժամկետը, մրցույթի անցկացման օրը և ժամը:

12. Մրցույթն անցկացվում է նաև այն դեպքում, երբ դրան մասնակցելու համար դիմել է մեկ մասնակից:

13. Եթե մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել կամ մրցույթի արդյունքով հաղթող չի ճանաչվել, ապա մրցույթը համարվում է չկայացած և անցկացվում է կրկնակի մրցույթ:

14. Կրկնակի մրցույթն անցկացվում է ընդհանուր հիմունքներով՝ սույն հոդվածով սահմանված կարգով:

15. Փաստաթղթերը ներկայացվում են ~~Հանձնաժողովի աշխատակազմ~~ **Հանձնաժողով** մրցույթի անցկացման մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող 10 օրվա ընթացքում: Նշված ժամկետից հետո ներկայացված փաստաթղթերը մրցութային հանձնաժողովը չի քննարկում:

16. Մրցույթի արդյունքներով հաղթողին որոշելու նպատակով մրցութային հանձնաժողովի նիստը հրավիրվում է փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետի ավարտից հետո՝ 10 օրվա ընթացքում:

17. Մրցութային հանձնաժողովի նիստի մասին մրցութային հանձնաժողովի անդամներին նիստից առնվազն մեկ օր առաջ ծանուցում է ~~Հանձնաժողովի աշխատակազմը~~ **Հանձնաժողովը**:

18. Մրցութային հանձնաժողովը, ուսումնասիրելով մրցույթի մասնակիցների վերաբերյալ փաստաթղթերը, որոշում է մրցույթի հաղթողին: Անհրաժեշտության դեպքում մինչև մրցույթի հաղթողի վերաբերյալ որոշում կայացնելը մրցութային հանձնաժողովը կարող է թեկնածուի հետ անցկացնել հարցազրույց:

19. Մրցութային հանձնաժողովի նախագահի հրավերով նիստերին կարող են մասնակցել հեռուստատեսության և ռադիոյի ոլորտի մասնագետներ:

20. Մրցութային հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նրա անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Մրցութային հանձնաժողովի անդամները քվեարկում են «կողմ» կամ «դեմ»:

21. Մրցույթի արդյունքով մրցութային հանձնաժողովն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

1) մրցույթը չկայացած համարելու և կրկնակի մրցույթ անցկացնելու մասին.

2) մրցույթում հաղթող ճանաչելու մասին:

22. Մրցութային հանձնաժողովը մրցույթի արդյունքով հաղթող է ճանաչում մեկ մասնակցի:

23. Մրցութային հանձնաժողովի կողմից մրցույթում հաղթող ճանաչվելու մասին որոշումն ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում, վարչապետը Խորհրդի անդամ է նշանակում մրցույթում հաղթած մասնակցին:

24. Առաջին կրկնակի մրցույթը չկայացած համարվելու դեպքում մինչև մրցութային հանձնաժողովի կողմից կրկնակի մրցույթների արդյունքում հաղթող ճանաչելը վարչապետը տասնօրյա ժամկետում նշանակում է Խորհրդի անդամի ժամանակավոր պաշտոնակատար, որը պետք է բավարարի Խորհրդի անդամին սույն օրենքով ներկայացվող պահանջները:

25. Մրցույթի համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և դրանց ներկայացման կարգը սահմանում է Հանձնաժողովը:

26. Մրցութային հանձնաժողովի նիստերի նախապատրաստումը, արձանագրումը, ինչպես նաև ընդունված որոշումների առաքումն ապահովում է ~~Հանձնաժողովի աշխատակազմը~~ **Հանձնաժողովը**:

27. Խորհրդի անդամները նախքան պաշտոնավարման ժամկետը լրանալը չեն կարող հետ կանչվել իրենց պաշտոններից, բացառությամբ այն դեպքերի, երբ Խորհրդի անդամը՝

1) հրաժարական է տվել.

2) ընտրվել կամ նշանակվել է որևէ պաշտոնում.

3) վերջին մեկ տարվա ընթացքում անհարգելի պատճառով չի մասնակցել Խորհրդի՝ երկու անընդմեջ կամ ընդհանուր առմամբ երեք նիստերին.

4) նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ.

5) կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կամ ձեռք է բերել այլ պետության քաղաքացիություն.

6) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

7) չի կատարել սույն օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված պարտականությունը.

8) մահացել է:

Հոդված 36. Հանձնաժողովի լիազորությունները

1. Հանձնաժողովը՝

1) հրապարակային և մրցութային կարգով հատկացնում է վերգետնյա եթերային հաճախություններ.

2) իրականացնում է հեռուստառադիոհեռարձակողների վերգետնյա եթերային հեռարձակման լիցենզավորումը մրցույթի միջոցով և ապահովում մրցույթի արդյունքների մասին ամբողջական տեղեկատվության հրապարակումը.

3) իրականացնում է հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) ցանցով հեռարձակման լիցենզավորումը.

4) իրականացնում է հեռուստառադիոծրագրերի վերահեռարձակման լիցենզավորումը.

5) անցկացնում է մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզավորման մրցույթ և տրամադրում է մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզիա.

6) սահմանում է թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռարձակելու համար հեռուստաընկերությունների, մրցույթի անցկացման կարգը, մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզավորման մրցույթի կազմակերպման առանձնահատկությունները.

7) հաստատում է լիցենզիայի ձևերը.

8) տրամադրում է լիցենզիաներ.

9) տարին մեկ հրապարակում է վերգետնյա եթերային հաճախականությունների ամբողջական ցանկը՝ հիմք ընդունելով լիազորված պետական կառավարման մարմնի կազմած և պարբերաբար իրեն տրամադրվող՝ Հայաստանի Հանրապետության տարածքում հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման համար նախատեսված վերգետնյա եթերային հաճախությունների ցանկը.

10) կազմում և հրապարակում է լիցենզավորված անձանց ցուցակը, հսկողություն է իրականացնում լիցենզիայում նշված պայմանների կատարման նկատմամբ.

11) թույլատրում է հեռուստառադիոընկերությունների կողմից բաժանորդային հեռարձակումը.

12) հեռուստառադիոհաղորդումների տեսագրությունների և ձայնագրությունների ընտրանքային դիտարկման միջոցով պարզում է դրանց համապատասխանությունը օրենսդրության և լիցենզիայի պահանջներին.

13) վերահսկում է հեռուստառադիոհաղորդումների պատրաստման տեխնիկական չափանիշների, ինչպես նաև տեխնիկական միջոցների համապատասխանությունը գործող ստանդարտներին և տրված հավաստագրին.

14) սույն օրենքի խախտման կամ լիցենզիայի պայմանները կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ.

15) վերահսկում է հեռուստաընկերության և ռադիոընկերության կողմից նախընտրական քարոզչության «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված կարգի պահպանումը.

16) նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումներ հայտնաբերելու դեպքում դիմում է դատարան՝ տվյալ հեռուստառադիոընկերությանը օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու հայցով.

17) ուսումնասիրում և պատասխանում կամ եզրակացություն է տալիս հեռուստառադիոընկերությունների գործունեության վերաբերյալ բողոքներին, առաջարկություններին և հարցումներին.

18) իրականացնում է հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկում.

19) կարող է ներգրավվել հեռուստատեսության և ռադիոյի բնագավառին առնչվող միջազգային պայմանագրերի և իրավական ակտերի նախագծերի մշակմանը.

20) «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դեպքերում իրականացնում է ստուգումներ և ուսումնասիրություններ.

21) ուսումնասիրություն է իրականացնում հանրային հեռուստատեսությունում և ռադիոյում տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վերաբերյալ.

22) սահմանում է հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության կողմից սույն օրենքի 26-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված հաշվետվության ներկայացման կարգը և ձևը.

23) սահմանում է ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելու ժամանակ վարչապետին կամ վարչապետի լիազորած՝ Կառավարության այլ անդամին եթերաժամանակ հատկացնելու կարգը և պայմանները.

24) սահմանում է հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների կյանքի, մշակույթի, այդ թվում՝ իրենց լեզուների մասին հաղորդումների հեռարձակման համար տրամադրվող եթերային ժամանակի նվազագույն ժամաքանակները.

25) սահմանում է մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության ձևը.

~~26) օրենքով սահմանված կարգով ձևավորում է իր աշխատակազմը:~~

2. Հանձնաժողովն իրավասու մարմիններից, հանրային հեռուստաընկերությունից և հանրային ռադիոընկերությունից, այլ կազմակերպություններից և պաշտոնատար անձանցից պահանջում և ստանում է անհրաժեշտ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով նախատեսված ուսումնասիրության իրականացման ընթացքում թերություններ հայտնաբերելու դեպքում Հանձնաժողովն իրավասու է հանրային հեռուստաընկերությանը և հանրային ռադիոընկերությանը հանձնարարելու սահմանված ժամկետում վերացնել հայտնաբերված թերությունները:

4. Հանձնաժողովի սահմանած ժամկետում թերությունները չվերացնելու դեպքում Հանձնաժողովն իրավասու է դիմելու Խորհրդին հանրային հեռուստաընկերության կամ հանրային ռադիոընկերության գործադիր տնօրենի հետագա պաշտոնավարման հարցը լուծելու առաջարկով:

5. Հանձնաժողովն իր լիազորություններն իրականացնելիս կարող է հասարակական կամ պայմանագրային հիմունքներով ներգրավել մասնագետների և փորձագետների:

6. Սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ, 7-րդ, 22-24-րդ, սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ, 13-րդ հոդվածի 3-րդ մասով, 46-րդ հոդվածի 2-րդ, 49-րդ հոդվածի 3-րդ և 50-րդ հոդվածի 4-րդ մասերով նախատեսված լիազորություններն իրականացնելիս Հանձնաժողովն ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

Հոդված 40. Հանձնաժողովի նախագահը

1. Հանձնաժողովի նախագահը՝

1) ապահովում է Հանձնաժողովի բնականոն գործունեության կազմակերպումը.

2) ներկայացնում է Հանձնաժողովն այլ մարմինների հետ հարաբերություններում.

3) ձևավորում է նիստերի օրակարգը, հրավիրում և վարում է Հանձնաժողովի նիստերը, ընդ որում՝ Հանձնաժողովի անդամը մասնակցում է Հանձնաժողովի նիստերի օրակարգի ձևավորմանը օրակարգի վերաբերյալ Հանձնաժողովի նախագահին առաջարկություններ ներկայացնելու միջոցով.

4) ստորագրում և հրապարակում է Հանձնաժողովի որոշումները, արձակում է հրամաններ.

5) վերահսկում է Հանձնաժողովի ընդունած որոշումների կատարումը.

6) Հանձնաժողովի նախորդ տարվա գործունեության մասին հաղորդումը ներկայացնում է Ազգային ժողով.

7) իրականացնում է ~~աշխատակազմի ընդհանուր~~ **Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով պետական մարմնի** ղեկավարումը.

8) Հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում ~~աշխատակազմի~~ կանոնադրության նախագիծը, կառուցվածքը և հաստիքացուցակը.

9) օրենքով սահմանված կարգով նշանակում և ազատում է Հանձնաժողովի աշխատակիցներին:

2. Արձակուրդի կամ գործուղման դեպքում Հանձնաժողովի նախագահի լիազորությունները ժամանակավորապես կատարում է նրա նշանակած Հանձնաժողովի անդամը:

3. Հանձնաժողովի նախագահի կողմից արձակուրդի կամ գործուղման մեջ գտնվելու դեպքում իրեն փոխարինող չնշանակելու, ժամանակավոր անաշխատունակության, լիազորությունների դադարման կամ դադարեցման դեպքերում Հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարում է Հանձնաժողովի տարիքով ավագ անդամը:

Հոդված 44. Հանձնաժողովի գործունեության կարգը

1. Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի և աշխատանքային քննարկումների միջոցով:

2. Հանձնաժողովի նիստերը հրավիրում է Հանձնաժողովի նախագահը՝ իր նախաձեռնությամբ կամ Հանձնաժողովի առնվազն երեք անդամի պահանջով:

3. Հանձնաժողովի նիստերը դռնբաց են, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկատվության վերաբերյալ հարցերի քննարկման դեպքերի,

երբ դրանք Հանձնաժողովի նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ անցկացվում են դռնփակ:

4. Հանձնաժողովը զանգվածային լրատվության առնվազն մեկ միջոցով, ինչպես նաև իր կայքում հրապարակում է նիստերի անցկացման տեղը, ժամանակը և օրակարգը:

5. Հանձնաժողովի **գլխավոր քարտուղարը** Հանձնաժողովի նիստին կարող է մասնակցել խորհրդակցական ձայնի իրավունքով:

6. Հանձնաժողովի նիստը վարում է Հանձնաժողովի նախագահը կամ նրան փոխարինող անձը: Նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է Հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

7. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

8. Հանձնաժողովի նիստում քննարկվող որևէ հարցի վերաբերյալ շահերի բախում ունեցող Հանձնաժողովի անդամը պարտավոր է քննարկումից առաջ Հանձնաժողովի նախագահին և մյուս անդամներին տեղեկացնել շահերի բախման փաստի և բնույթի մասին, որը պետք է արձանագրվի նիստի արձանագրության մեջ:

9. Այդ տեղեկացումից հետո Հանձնաժողովի համապատասխան անդամը՝

1) պարտավոր է հրաժարվել տվյալ հարցի վերաբերյալ դիրքորոշում հայտնելուց և քվեարկությանը մասնակցելուց.

2) չպետք է հաշվառվի այդ նիստի իրավազորության ապահովման նպատակով:

10. Հանձնաժողովի նիստը հետաձգվում է՝

1) քվորում չլինելու,

2) աշխատանքային օրն ավարտվելու,

3) հարցի քննությունը տվյալ նիստում անհնարին դարձնող այլ բացառիկ հանգամանքների առկայության դեպքերում:

11. ~~Հանձնաժողովի նիստերն արձանագրում է Հանձնաժողովի աշխատակազմը:~~ **Հանձնաժողովի նիստերը արձանագրվում են:** Նիստերի արձանագրություններն ստորագրում է նիստը նախագահողը: Նիստի արձանագրությունը կամ դրա մի մասը Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ կարող է հրապարակվել: ~~Հանձնաժողովի աշխատակազմը վարում է Հանձնաժողովի որոշումների գրանցամատյան:~~ **Հանձնաժողովում վարվում է Հանձնաժողովի որոշումների գրանցամատյան:**

12. Հանձնաժողովն ընդունում է աշխատակարգ, որով սահմանվում են Հանձնաժողովի գործառույթների և լիազորությունների իրականացման ընթացակարգերը:

Հոդված 45. Հանձնաժողովի ~~աշխատակազմը~~ կառուցվածքային ստորաբաժանումները

1. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է ~~աշխատակազմի~~ **կառուցվածքային ստորաբաժանումների** միջոցով:

2. Հանձնաժողովի ~~աշխատակազմի~~ վարձատրությունն իրականացվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

Հոդված 45.1. Հեռուստառադիոընկերությունների գործունեության

մշտադիտարկման իրականացման կարգը

1. Հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ կաբելային (մալուխային) հեռուստառադիոհեռարձակման դեպքում նաև հեռուստառադիոընկերությունում տեղում դիտարկում իրականացնելու միջոցով: Ուղղակի դիտարկման արդյունքները կարող են համադրվել հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների ներկայացրած հաշվառման մատյանների տվյալների հետ:

2. Հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության գործունեության մշտադիտարկումը ներառում է նաև տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վերաբերյալ ուսումնասիրությունը, որն իրականացվում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված եղանակներով:

3. Կաբելային (մալուխային) հեռուստառադիոհեռարձակման դեպքում հեռուստառադիոընկերություններում մշտադիտարկումն իրականացվում է Հանձնաժողովի նախագահի հրամանի հիման վրա:

4. Մշտադիտարկում իրականացնելու մասին հրամանում նշվում են՝

1) մշտադիտարկում իրականացնող մարմնի անվանումը.

2) հեռուստաընկերության կամ ռադիոընկերության լրիվ անվանումը և գտնվելու վայրը.

3) մշտադիտարկում իրականացնող անձի անունը, ազգանունը և պաշտոնը.

4) մշտադիտարկման նպատակը, ժամանակահատվածը և իրավական հիմքերը:

5. Հեռուստաընկերությունում կամ ռադիոընկերությունում մշտադիտարկումն սկսելուց առաջ հրամանի մեկ օրինակը հանձնվում է հեռուստաընկերության կամ ռադիոընկերության ղեկավարին կամ նրան փոխարինող իրավասու այլ անձի:

6. Եթե հեռուստառադիոընկերության ղեկավարը կամ նրան փոխարինելու իրավունք ունեցող անձը հեռուստաընկերության կամ ռադիոընկերության գործունեության վայրում չէ կամ հրաժարվում է ստանալ մշտադիտարկում իրականացնելու վերաբերյալ հրամանը և ստորագրությամբ հավաստել այն ստանալու փաստը, ապա հրամանի պատճենը եռօրյա ժամկետում փոստային առաքման միջոցով ուղարկվում է հեռուստաընկերությանը կամ ռադիոընկերությանը, որն ստանալուց հետո միայն կարող է իրականացվել մշտադիտարկում: Անհապաղ մշտադիտարկում իրականացնելու անհրաժեշտության դեպքում մշտադիտարկում իրականացնելու վերաբերյալ հրամանի օրինակը և մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը փոստային առաքման միջոցով ուղարկվում են հեռուստաընկերություն կամ ռադիոընկերություն մշտադիտարկումն իրականացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

7. Հեռուստառադիոընկերությունում մշտադիտարկում իրականացնելու դեպքում հեռուստառադիոընկերությունը մշտադիտարկում իրականացնող անձանց պետք է ապահովի անհրաժեշտ աշխատանքային տարածքով և տեխնիկական միջոցներով:

8. Մշտադիտարկման արդյունքներով Հանձնաժողովի ներկայացուցիչը կազմում է մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները: Դիտարկման արդյունքների և հաշվառման մատյանների

տվյալների համադրման դեպքում մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են նաև դիտարկման արդյունքների և հաշվառման մատյանների տվյալների միջև անհամապատասխանությունը, անհամապատասխանությունների քանակը և տևողությունը:

10. Արձանագրությանը կցվում են մշտադիտարկման առարկային վերաբերող, իսկ հեռուստառադիոընկերությունում մշտադիտարկում իրականացնելու դեպքում՝ հեռուստառադիոընկերության տիրապետության տակ գտնվող ապացույցները, որի մասին նշում է կատարվում արձանագրության մեջ:

11. Մշտադիտարկման արդյունքների մասին արձանագրությունն ուղղակի դիտարկում իրականացնելու դեպքում ստորագրում է մշտադիտարկում իրականացրած անձը, իսկ հեռուստառադիոընկերությունում մշտադիտարկում իրականացնելու դեպքում՝ Հանձնաժողովի և հեռուստաընկերության կամ ռադիոընկերության ներկայացուցիչները:

12. Ուղղակի դիտարկման միջոցով իրականացված մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կազմելուց հետո՝ եռօրյա ժամկետում, ուղարկվում է հեռուստաընկերություն կամ ռադիոընկերություն:

13. Մշտադիտարկման արդյունքների մասին արձանագրության վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում հեռուստառադիոընկերությունը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կարող է դրանք ներկայացնել Հանձնաժողով:

14. Հեռուստառադիոընկերությունում իրականացված մշտադիտարկման արդյունքների մասին արձանագրության վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում հեռուստաընկերության կամ ռադիոընկերության ներկայացուցիչն այդ մասին նշում է կատարում արձանագրության մեջ և ստորագրում:

15. Եթե հեռուստառադիոընկերության ղեկավարը կամ նրան փոխարինելու իրավունք ունեցող անձը հրաժարվում է ստորագրել և ստանալ արձանագրության երկրորդ օրինակը կամ մշտադիտարկման իրականացման վայրում չէ, ապա արձանագրության երկրորդ օրինակը փոստով առաքվում է հեռուստաընկերություն կամ ռադիոընկերություն:

16. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը հեռուստառադիոընկերության ղեկավարին փոխարինելու իրավունք ունեցող անձի կողմից ստորագրվելու դեպքում դրա մասին համապատասխան նշում է կատարվում արձանագրության մեջ, և արձանագրությանը կցվում է այն իրավական փաստաթղթի պատճենը (կանոնադրություն, հրաման, որոշում, լիազորագիր կամ այլ փաստաթուղթ), որի հիման վրա տվյալ անձն իրավունք ունի փոխարինելու հեռուստաընկերության կամ ռադիոընկերության ղեկավարին:

17. Եթե հեռուստառադիոընկերության ներկայացուցիչը հրաժարվում է արձանագրությունն ստորագրել կամ այլ կերպ խոչընդոտում է մշտադիտարկման իրականացմանը, ապա Հանձնաժողովի ներկայացուցիչն այդ մասին նշում է կատարում արձանագրության մեջ, որում նշվում են նաև մշտադիտարկման իրականացմանը խոչընդոտած հեռուստաընկերության կամ ռադիոընկերության ներկայացուցչի անունը, ազգանունը և պաշտոնը:

18. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայել որպես վարչական վարույթի ապացույց:

19. Հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկման իրականացումն ապահովում է~~Հանձնաժողովի աշխատակազմը~~ **Հանձնաժողովը՝ կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով** :

20. Մշտադիտարկման իրականացման ընթացակարգը և մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության ձևը հաստատում է Հանձնաժողովը:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2000 թվականի նոյեմբերի 6-ին

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 20. Հանձնաժողովի կազմավորման կարգը և անդամներին ներկայացվող պահանջները

(վերնագիրը խմբ. 23.03.18 ՀՕ-249-Ն)

1. Հանձնաժողովը կազմված է յոթ անդամից՝ նախագահ և վեց անդամ: Հանձնաժողովի անդամների պաշտոնները համարվում են ~~քաղաքացիական~~ **ինքնավար** պաշտոններ:

2. Հանձնաժողովի նախագահին և մյուս անդամներին վարչապետի առաջարկությամբ, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով, նշանակում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ հինգ տարի պաշտոնավարման ժամկետով, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի: Հանձնաժողովի անդամի թափուր պաշտոն առաջանալու դեպքում Հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում՝ Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձը, դիմում է վարչապետին՝ ներկայացնելով տվյալ պաշտոնի թեկնածուի համար անհրաժեշտ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ պաշտոնավարման ամբողջ՝ հինգ տարի ժամկետով նշանակվել սույն օրենքով սահմանված կարգով ստեղծված Հանձնաժողովի անդամ:

3. Հանձնաժողովի անդամ կարող է նշանակվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, բարձրագույն կրթությամբ, առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ ունեցող (որից առնվազն երեք տարին՝ ստորաբաժանումների համակարգման գործառույթներով օժտված կամ ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում) և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք: Հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը պետք է ունենա բարձրագույն իրավաբանական, առնվազն մեկը՝ բարձրագույն տնտեսագիտական կրթություն:

4. Հանձնաժողովի անդամը պաշտոնավարում է մինչև 65 տարին լրանալը:

5. Հանձնաժողովի անդամները չեն կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացառությամբ գիտական, ստեղծագործական կամ մանկավարժական գործունեության: Հանձնաժողովի անդամն իր հրապարակային ելույթներում ցուցաբերում է քաղաքական զսպվածություն:

6. Հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման կամ դադարեցման դեպքում Հանձնաժողովի անդամի նշանակման համար սույն հոդվածով սահմանված ընթացակարգով նշանակվում է Հանձնաժողովի նոր անդամ՝ պաշտոնավարման չլրացած ժամկետի մնացած ժամանակահատվածի համար: Եթե պաշտոնավարման մնացած ժամանակը պակաս է մեկ տարուց, ապա Հանձնաժողովի նոր անդամի պաշտոնավարման ժամկետը սահմանվում է հինգ տարի՝ գումարած մնացած ժամանակահատվածը:

7. Այն դեպքում, երբ Հանձնաժողովի նախագահ է նշանակվում Հանձնաժողովի անդամներից մեկը, ապա նա պաշտոնավարում է մինչև իր՝ որպես Հանձնաժողովի

անդամի պաշտոնավարման ժամկետի ավարտը: Եթե պաշտոնավարման մնացած ժամանակը պակաս է մեկ տարուց, ապա Հանձնաժողովի նախագահի պաշտոնավարման ժամկետը սահմանվում է հինգ տարի՝ գումարած մնացած ժամանակահատվածը:

8. Հանձնաժողովի անդամ չի կարող նշանակվել այն անձը, որը՝

1) չի համապատասխանում սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջներին.

2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել է դիտավորությամբ կատարած հանցագործության համար.

4) օրենքով սահմանված կարգով զրկվել է որոշակի պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

5) ունի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկով նախատեսված՝ դատավորի նշանակմանը խոչընդոտող հիվանդություն:

Հոդված 22. Հանձնաժողովի ~~աշխատակազմը~~ աշխատանքների կազմակերպումը

~~1. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է աշխատակազմի միջոցով, որի կանոնադրությունը հաստատում է Հանձնաժողովը:~~

1. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է գլխավոր քարտուղարի, գլխավոր քարտուղարի տեղակալի և կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով: Կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունը հաստատում է Հանձնաժողովի նախագահը:

2. ~~Աշխատակազմի կառուցվածքը,~~ կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթները, աշխատակիցների թիվը և ~~աշխատակազմի գործունեության~~ **հանձնաժողովի աշխատանքների** կազմակերպմանն առնչվող ներքին կանոնակարգային այլ հարցեր կարգավորվում են Հանձնաժողովի որոշումներով: ~~Աշխատակազմի աշխատակիցների~~ **Հանձնաժողովի աշխատողների** թիվը համաձայնեցվում է վարչապետի հետ:

3. ~~Հանձնաժողովի աշխատակազմի~~ **Հանձնաժողովի անդամների և աշխատողների** վարձատրությունն իրականացվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

Հոդված 23. Հանձնաժողովի նախագահը

1. Հանձնաժողովի նախագահը՝

ա) իր իրավասության շրջանակներում ներկայացնում է Հանձնաժողովը Հայաստանի Հանրապետությունում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում.

բ) ղեկավարում և համակարգում է Հանձնաժողովի բնականոն գործունեությունը, այդ նպատակով Հանձնաժողովի անդամներին և ~~իր կողմից նշանակվող աշխատակիցներին~~ **Հանձնաժողովի նահագահի խորհրդականին, օգնականին, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին և գլխավոր քարտուղարին** տալիս է հանձնարարականներ, կատարում է աշխատանքային պարտականությունների բաշխում Հանձնաժողովի անդամների միջև.

գ) ***(կետն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-257-Ն)***

դ) հրավիրում և նախագահում է Հանձնաժողովի նիստերը, հաստատում նիստի օրակարգը.

ե) կազմակերպում է Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների կատարումը.

զ) ստորագրում է Հանձնաժողովի որոշումները և նիստերի արձանագրությունները.

է) հաստատում է Հանձնաժողովի ~~աշխատակազմի~~ հաստիքացուցակը, Հանձնաժողովի անդամների և իր կողմից նշանակվող ~~աշխատակիցների~~ **աշխատողների** համար հանդես է գալիս որպես գործատուի ներկայացուցիչ, իր իրավասությունների սահմաններում աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Հանձնաժողովի աշխատակազմի ~~աշխատակիցներին~~ **աշխատողներին**, դատարանում հանդես է գալիս Հանձնաժողովի անունից, տալիս է Հանձնաժողովի անունից հանդես գալու լիազորագրեր, ընդունում է հրամաններ, ներառյալ՝ ստուգում, ուսումնասիրություն (այդ թվում՝ հսկիչ գնում) կամ դիտանցում իրականացնելու վերաբերյալ հրամաններ, իրականացնում է սույն օրենքով, այլ իրավական ակտերով և Հանձնաժողովի կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

2. Հանձնաժողովի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ նրան փոխարինում է Հանձնաժողովի անդամներից մեկը, իսկ վերջինիս բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու կամ Հանձնաժողովի նախագահի հանձնարարության անհնարինության դեպքում՝ Հանձնաժողովի այն անդամը, որն ավելի երկար է աշխատում այդ պաշտոնում:

Հոդված 29. Հանձնաժողովի տարեկան ծախսերը

1. Հանձնաժողովի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին: Հանձնաժողովի նախագահը «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա սահմանված ժամկետում Հանձնաժողովի ծախսերի նախահաշիվը (բյուջետային հայտը) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար:

Բյուջետային հայտը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունվելու դեպքում անփոփոխ, իսկ առարկության դեպքում՝ փոփոխված, ընդգրկվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում, որի հետ միասին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով է ներկայացվում նաև հայտը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով է ներկայացնում նաև բյուջետային հայտի փոփոխությունների վերաբերյալ իր հիմնավորումը:

2. Հանձնաժողովի ծախսերի նախահաշիվը պետք է ապահովի սույն օրենքով սահմանված խնդիրների և գործառույթների պատշաճ իրականացման հնարավորությունը, այդ թվում՝ միջազգային կազմակերպություններում ներկայացուցչության ապահովումը, ինչպես նաև Հանձնաժողովի անդամներին աշխատավարձի վճարումը:

3. Հանձնաժողովի անդամների պաշտոնային դրույքաչափերը սահմանվում են ~~«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»~~ **«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»** Հայաստանի Հանրապետության օրենքով:

Հոդված 30. Աշխատանքների կազմակերպման կարգը

1. Հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով:

2. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են անդամներից առնվազն չորսը:

3. Հանձնաժողովը հարցերը քննում է դռնբաց նիստում, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է վնաս հասցնել շահագրգիռ անձանց շահերին:

4. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Արձանագրության մեջ նշվում են համառոտ տեղեկություններ նիստի անցկացման վայրի, ժամանակի, մասնակիցների, օրակարգի, ելույթների և քվեարկության արդյունքների վերաբերյալ:

5. Նիստերը գումարվում են որոշակի պարբերականությամբ կամ ըստ անհրաժեշտության՝ Հանձնաժողովի անդամներից որևէ մեկի պահանջով:

6. Քննարկման արդյունքում Հանձնաժողովի կողմից կայացվում է որոշում:

Ընթացակարգային հարցերի քննարկման կամ ըստ էության որոշում չկայացվելու (այդ թվում՝ դռնփակ նիստ գումարելու, հարցը քննարկումից հանելու, քննարկումը հետաձգելու, օրակարգում լրացուցիչ հարց ընդգրկելու, ~~աշխատակազմին~~ **աշխատողներին** հանձնարարություն տալու և այլն) դեպքում Հանձնաժողովի կողմից քվեարկությամբ կայացվում է բանավոր (արձանագրային) որոշում, ինչի մասին նշվում է արձանագրության մեջ:

Հանձնաժողովի նիստերում որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասար բաշխման դեպքում Հանձնաժողովի նախագահի կամ նրան փոխարինող անձի ձայնը որոշիչ է:

Քվեարկությունից ձեռնպահ մնալը կամ ձայնի փոխանցումը մեկ այլ անդամի չի թույլատրվում:

Ծանուցված անձանց չներկայանալը չի խոչընդոտում քննարկման անցկացմանը և որոշումների ընդունմանը:

7. Վարչական ակտի ընդունումից հետո հասցեատիրոջն է հանձնվում դրա պատճենը՝ 5 օրվա ընթացքում:

8. Հանձնաժողովի կողմից ընդունված վարչական ակտն ուժի մեջ է մտնում դրա պատճենը հասցեատիրոջը հանձնելուն հաջորդող օրվանից, եթե այդ ակտով ավելի ուշ ժամկետ սահմանված չէ: Վարչական ակտի՝ մեկից ավելի հասցեատերերի առկայության դեպքում վարչական ակտը նրանցից յուրաքանչյուրի նկատմամբ ուժի մեջ է մտնում իր մասով՝ տվյալ վարչական ակտի պատճենը համապատասխան հասցեատիրոջը հանձնելուն հաջորդող օրվանից, եթե այդ ակտով ավելի ուշ ժամկետ սահմանված չէ:

Հանձնաժողովի կողմից ընդունված մյուս անհատական իրավական ակտերն ուժի մեջ են մտնում ընդունման պահից, եթե դրանցով այլ ժամկետ սահմանված չէ:

9. Հանձնաժողովի ընդունած վարչական ակտը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու պահից 10-օրյա ժամկետում: Հանձնաժողովի ընդունած վարչական ակտը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ վարչական բողոքի քննարկման արդյունքներին համաձայն չլինելու դեպքում՝ բողոքի վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում, իսկ վարչական բողոք չբերելու դեպքում՝ Հանձնաժողովի ընդունած վարչական ակտն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

10. Հանձնաժողովի կողմից վարչական վարույթի իրականացման առավելագույն ժամկետը 90 օր է:

11. Հարուցված վարչական վարույթի իրականացման ժամկետի ընթացքը կարող է կասեցվել տնտեսվարող սուբյեկտի, վերջինիս պաշտոնատար անձի կամ իրավասու այլ աշխատակցի բացակայության պատճառով սույն օրենքով նախատեսված թղթակցությունը հանձնելու անհնարինության, Հանձնաժողով փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն չներկայացնելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացնելու կամ վարույթի իրականացմանն այլ կերպ խոչընդոտելու կամ վարչական վարույթի իրականացումն անհնար դարձնող այլ հանգամանքների առկայության դեպքում: Վարչական վարույթը վերսկսվում է սույն մասով նախատեսված հանգամանքների վերացումից հետո:

12. Հանձնաժողովի կողմից իրականացվող վարչական վարույթի ընթացքում սույն օրենքի խախտման փաստ չհայտնաբերվելու կամ վարչական ակտի ընդունումն անհնար դարձնող հանգամանքների առկայության դեպքում Հանձնաժողովի որոշմամբ վարույթը կարճվում է:

Հոդված 33. Հանձնաժողովի պարտավորություններն առևտրային, բանկային կամ ծառայողական գաղտնիքի պահպանման գործում

1. Առևտրային, բանկային կամ ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկությունները, որոնք ստացված են սույն օրենքով տրված լիազորությունների կատարման ժամանակ, Հանձնաժողովի կողմից պահպանվում են օրենքով սահմանված կարգով:

2. Հանձնաժողովի անդամները և ~~աշխատակիցներն~~ **աշխատողներն** իրավունք չունեն հրապարակել կամ այլ կերպ տարածել, ինչպես նաև անձնական շահադիտական նպատակով օգտագործել իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս ստացած գաղտնի տեղեկությունները և ծառայողական տեղեկատվությունը:

3. Առևտրային, բանկային կամ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակման դեպքում տնտեսվարող սուբյեկտին հասցված վնասը ենթակա է փոխհատուցման հանրապետական բյուջեի միջոցների հաշվին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է Ազգային ժողովի
կողմից
3 դեկտեմբերի 1996 թ.

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ

Հոդված 8. Տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու և դրանց պաշտպանության բնագավառում պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց լիազորությունները

1. Հայաստանի Հանրապետության Նախագահը՝

ա) որոշում է Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմում պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանության ապահովման ուղղությամբ պաշտոնատար անձանց լիազորությունները.

բ) իր իրավասության սահմաններում իրականացնում է տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու և դրանց պաշտպանության բնագավառում այլ լիազորություններ:

2. ***(կետն ուժը կորցրել է 20.03.02 ՀՕ-318)***

3. Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

ա) ապահովում է սույն օրենքի կատարումը.

բ) մշակում և հաստատում է պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանության բնագավառում պետական ծրագրերը և ապահովում այդ ծրագրերի գործնական իրականացումը.

գ) մշակում և հաստատում է տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու լիազորություններով օժտված պետական մարմինների պաշտոնատար անձանց ցանկը.

դ) մշակում և հաստատում է պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների ցանկը.

ե) ձեռնարկում է միջոցներ պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունները համատեղ օգտագործելու և պաշտպանելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կատարման ուղղությամբ և իր կողմից, սահմանված կարգով, որոշումներ է ընդունում պետական և ծառայողական գաղտնիքի տեղեկակիրներն այլ պետություններին փոխանցելու հնարավորության մասին.

զ) սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների հաշվառման, պահպանման և փոխանցման կարգը.

է) սահմանում է մամուլում և լրատվության մյուս միջոցներում, ինչպես նաև արտասահման առաքվող նյութերում պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների տարածման նկատմամբ պետական վերահսկողության իրականացման կարգը.

ը) ***(կետն ուժը կորցրել է 20.03.02 ՀՕ-317)***

թ) սահմանում է պետական և ծառայողական գաղտնիքի տեղեկակիրների հետ ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների և ֆիզիկական անձանց վարվելու կարգը.

ժ) հաստատում է պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանության կառուցվածքային ստորաբաժանումների ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը.

ժա) ***(կետն ուժը կորցրել է 06.12.17 ՀՕ-248-Ն)***

ժբ) որոշում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմում պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանության ապահովման ուղղությամբ պաշտոնատար անձանց լիազորությունները.

ժգ) իր իրավասության սահմաններում իրականացնում է տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու և դրանց պաշտպանության բնագավառում այլ լիազորություններ:

4. ~~Հանրապետական գործադիր~~ **Պետական կառավարման համակարգի**, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները՝

ա) ապահովում են պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանության բնագավառում համապատասխան ծրագրերի իրականացումը, ինչպես նաև պետական և ծառայողական գաղտնիքի մասին օրենսդրության պահանջների կատարումն իրենց ենթակա ձեռնարկություններում, հիմնարկներում և կազմակերպություններում.

բ) իրենց իրավասության սահմաններում ապահովում են պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանության կառուցվածքային ստորաբաժանումների ստեղծումը և գործունեությունն իրենց ենթակա ձեռնարկություններում, հիմնարկներում և կազմակերպություններում, որոշումներ են ընդունում այդպիսի ստորաբաժանումների վերակազմավորման կամ լուծարման մասին.

գ) ***(ենթակետն ուժը կորցրել է 20.03.02 ՀՕ-318)***

դ) ***(կետն ուժը կորցրել է 06.12.17 ՀՕ-248-Ն)***

ե) պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանության համակարգի ձևավորման և գործող համակարգի կատարելագործման վերաբերյալ կարող են մշակել առաջարկություններ և ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը.

զ) իրենց իրավասության սահմաններում իրականացնում են տեղեկությունները պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու և դրանց պաշտպանության բնագավառում այլ լիազորություններ:

5. Սահմանադրական դատարանը, դատական, քննչական և դատախազական մարմինները՝

ա) ապահովում են պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանությունն իրենց գործունեության ընթացքում.

բ) ***(կետն ուժը կորցրել է 06.12.17 ՀՕ-248-Ն)***

Հոդված 25. Պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանության միջգերատեսչական և գերատեսչական վերահսկողությունը

Պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանության ապահովման նպատակով սահմանվում է միջգերատեսչական և գերատեսչական վերահսկողություն:

Պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանության ապահովման միջգերատեսչական վերահսկողությունը ~~հանրապետական գործադիր~~ **պետական կառավարման համակարգի** և տարածքային կառավարման մարմիններում, ձեռնարկություններում, հիմնարկներում և կազմակերպություններում իրականացնում է ~~Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության բնագավառը կառավարող պետական~~ **ազգային անվտանգության հարցերով լիազորված պետական կառավարման** մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

Պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանության գերատեսչական վերահսկողությունը, սույն օրենքին համապատասխան, իրականացնում են պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններին տնօրինելու լիազորություններով օժտված ~~հանրապետական գործադիր~~ **պետական կառավարման համակարգի** մարմինները՝ կառավարության կողմից սահմանված կարգով: Նշված մարմինները պարտավոր են վերահսկել պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների պաշտպանության արդյունավետությունը, այդ տեղեկությունների օգտագործմամբ աշխատանքներ կատարող իրենց ենթակա բոլոր ձեռնարկություններում, հիմնարկներում և կազմակերպություններում:

Հայաստանի Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի և կառավարության աշխատակազմերում, սահմանադրական դատարանում, դատական, քննչական և դատախազական մարմիններում պետական և ծառայողական գաղտնիքի պաշտպանության ապահովման նկատմամբ վերահսկողությունը կազմակերպում են Հայաստանի Հանրապետության Նախագահը, Ազգային ժողովի նախագահը, վարչապետը, սահմանադրական դատարանի նախագահը և համապատասխան մարմինների ղեկավարները՝ ~~Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հանրապետական գործադիր~~ **ազգային անվտանգության հարցերով լիազորված պետական կառավարման** մարմնի աջակցությամբ:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է Ազգային ժողովի կողմից
2 դեկտեմբերի 1998 թ.

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 12. Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունը

Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

ա) ղեկավարում է բնակչության պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում.

բ) հաստատում է արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման ու վերացման, բնակչության պաշտպանության ծրագրերը և վերահսկում դրանց կատարումը.

գ) սահմանում է արտակարգ իրավիճակների առաջացման հնարավոր պատճառ համարվող օբյեկտների, առարկաների ու գործընթացների, նախագծերի և լուծումների պետական փորձաքննություն իրականացնելու կարգը.

դ) ապահովում է բնակչությանն ազդարարումը և տեղեկատվությունն արտակարգ իրավիճակներում.

ե) հայտարարում է աղետի գոտի և սահմանում դրա տարածքը, ինչպես նաև կազմակերպում է այդ տարածքին առավելագույն օգնություն և նյութական պաշարներ տրամադրելու աշխատանքները.

զ) հաստատում է արտակարգ իրավիճակների հետևանքով բնակչությանը պատճառված վնասի գնահատման և փոխհատուցման կարգը.

է) իրականացնում է բնակչության պաշտպանության բնագավառի վերաբերյալ ~~Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ~~ **օրենքներով** սահմանված այլ լիազորություններ.

ը) հաստատում է լիազորված մարմնի ներկայացրած արտակարգ իրավիճակներում տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով ֆինանսական, պարենային, բժշկական և նյութական այլ պաշարների, ֆոնդերի ստեղծման ու դրանց օգտագործման կարգը:

Հոդված 13. Լիազորված մարմնի իրավասությունը

Լիազորված մարմինը՝

ա) մշակում է արտակարգ իրավիճակների հետևանքների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, բնակչության պաշտպանության ծրագրեր և ապահովում դրանց կատարումը.

բ) ստեղծում և կուտակում է արտակարգ իրավիճակներում տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով ֆինանսական, պարենային, բժշկական և նյութական այլ պաշարներ, ֆոնդեր և ապահովում դրանց նպատակային օգտագործումը.

գ) կազմակերպում է արտակարգ իրավիճակների առաջացման հնարավոր պատճառ համարվող օբյեկտների, առարկաների, գործընթացների, նախագծերի և լուծումների պետական փորձաքննությունը.

դ) կազմակերպում է փրկարարների ատեստավորման աշխատանքները և բնակչության ուսուցումը՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հիմնահարցերով, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով.

ե) համակարգում և վերահսկում է ~~հանրապետական գործադիր, պետական կառավարման, տարածքային~~ **պետական կառավարման համակարգի, պետական կառավարման տարածքային** և տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների գործունեությունը բնակչության պաշտպանության բնագավառում.

զ) կազմակերպում է արտակարգ իրավիճակներում բնակչությանն ազդարարումը և տեղեկատվությունը.

է) իրականացնում է բնակչության պաշտպանության բնագավառի վերաբերյալ ~~Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ~~ **օրենքով** սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 14. ~~Հանրապետական գործադիր~~ Պետական կառավարման համակարգի մարմինների իրավասությունը

~~Հանրապետական գործադիր~~ **Պետական կառավարման համակարգի** մարմինները՝

ա) կազմակերպում են իրենց համակարգի աշխատողների պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում.

բ) կազմակերպում են ենթակա ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների գործունեությունն արտակարգ իրավիճակներում.

գ) իրենց լիազորությունների սահմաններում ապահովում են բնակչության պաշտպանությունը և այդ նպատակով ստեղծում են անհրաժեշտ մասնագիտացված կազմավորումներ.

դ) իրականացնում են բնակչության պաշտպանության բնագավառի վերաբերյալ ~~Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ~~ **օրենքով** սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 15. Պետական կառավարման տարածքային մարմինների իրավասությունը

Պետական կառավարման տարածքային մարմինները՝

ա) կազմակերպում են մարզի բնակչության պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում.

բ) կազմակերպում են մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման ծրագրերի մշակումը և համակարգում այդ ծրագրերում նախատեսված աշխատանքները.

գ) մասնակցում են պետական համապատասխան ծրագրերով նախատեսված՝ արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, ինչպես նաև օպերատիվ բնույթի միջոցառումների իրականացմանը.

դ) տեղական ինքնակառավարման մարմիններին և բնակչությանը ներգրավում են արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքներին.

ե) ~~ներքին գործերի և ազգային անվտանգության բնագավառների հանրապետական գործադիր մարմինների~~ **ոստիկանության և ազգային անվտանգության հարցերով լիազորված պետական կառավարման մարմնի** տարածքային ծառայություններին տալիս են հանձնարարականներ՝ բնակչության պաշտպանության, հակահամաճարակային և կարանտինային հատուկ միջոցառումների կազմակերպման վերաբերյալ.

զ) ~~հանրապետական գործադիր~~ **պետական կառավարման համակարգի** մարմինների տարածքային ծառայություններին տալիս են հանձնարարականներ՝ արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, բնակչության պաշտպանության վերաբերյալ.

է) պատասխանատու են մարզի տարածքում բնակչության պաշտպանությունն ապահովելու համար.

ը) իրականացնում են բնակչության պաշտպանության բնագավառի վերաբերյալ ~~Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ~~ **օրենքով** սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 16. Տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը

Տեղական ինքնակառավարման մարմինները՝

ա) կազմակերպում են համայնքի բնակչության պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում.

բ) իրականացնում են վթարային և վերականգնողական միջոցառումներ՝ արտակարգ իրավիճակներում համայնքային ենթակայության կենսաապահովման օբյեկտների անխափան աշխատանքն ապահովելու համար.

գ) կազմակերպում են փրկարարական աշխատանքներ համայնքի տարածքում.

դ) իրականացնում են արտակարգ իրավիճակների կանխման և հնարավոր հետևանքների նվազեցման միջոցառումներ համայնքի տարածքում.

ե) իրականացնում են համայնքի բնակչության ազդարարումն արտակարգ իրավիճակներում.

զ) իրականացնում են բնակչության պաշտպանության բնագավառի վերաբերյալ ~~Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ~~ **օրենքով** սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 22. Նյութատեխնիկական ապահովման և ֆինանսավորման հիմնական աղբյուրները

~~Հանրապետական գործադիր~~ **Պետական կառավարման համակարգի**, պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինները ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների, բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման նյութատեխնիկական ապահովումը և ֆինանսավորումն իրականացնում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ու համայնքների բյուջեների միջոցների հաշվին:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2002 թվականի հունիսի 12-ին

ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 13. Սեյսմիկ պաշտպանության ոլորտում ~~Հայաստանի Հանրապետության պետական կառավարման հանրապետական գործադիր~~ պետական կառավարման համակարգի մարմինների իրավասությունները

1. ~~Հայաստանի Հանրապետության հանրապետական գործադիր~~ պետական կառավարման համակարգի մարմիններն իրականացնում են սեյսմիկանվտանգության ապահովման վերաբերյալ սույն օրենքով, ինչպես նաև այլ օրենքներով ~~և իրավական ակտերով~~ սահմանված լիազորություններ:

Հոդված 14. Սեյսմիկ պաշտպանության ոլորտում պետական կառավարման տարածքային մարմինների իրավասությունները

1. Պետական կառավարման տարածքային մարմինները՝

1) կազմակերպում են մարզի բնակչության պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում.

2) իրականացնում են Հայաստանի Հանրապետության տարածքում երկրաշարժի առաջացման մասին բնակչության ազդարարումը.

3) կազմակերպում են սեյսմիկ պաշտպանության բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստումը և բնակչության ուսուցումը.

4) մշակում են ուժեղ երկրաշարժի կամ դրա սպառնալիքի դեպքում արագ արձագանքման և առաջնահերթ գործողությունների օրացուցային պլաններ, անցկացնում են դրանցով նախատեսվող ուսումնավարժանքներ.

5) կազմակերպում են մարզի տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման բնագավառում ծրագրերի մշակումն ու համակարգում այդ ծրագրերում նախատեսված աշխատանքները.

6) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերում և Հայաստանի Հանրապետության մարզերի զարգացման ծրագրերում ներառում են լիազոր մարմնի կողմից հաստատված սեյսմիկ շրջանացման և սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզներ:

Հաստատված սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզները ներառվում են մարզային, համայնքային զարգացման ծրագրերում և, առկայության դեպքում, տարածքային մակարդակի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի ելակետային նյութերի փաթեթում.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության մարզերի և բնակավայրերի զարգացման ծրագրերում ներառում են սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ.

8) մշակում են սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության օբյեկտների սեյսմիկխոցելիության նվազեցման միջնաժամկետ ծրագրեր.

9) մասնակցում են պետական ծրագրերով նախատեսված՝ սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների իրականացմանը.

10) տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական կազմակերպություններին ու բնակչությանը օրենքով սահմանված կարգով կարող են ներգրավել սեյսմիկ ռիսկի նվազեցման աշխատանքներում.

11) իրականացնում են սեյսմիկ անվտանգության ապահովման վերաբերյալ ~~Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ~~ **օրենքով** սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 15. Սեյսմիկ պաշտպանության բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները

1. Սեյսմիկ պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը սահմանվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն օրենքով և այլ օրենքներով:

2. Սեյսմիկ ռիսկի նվազեցման ուղղությամբ տեղական ինքնակառավարման մարմինները՝

1) կազմակերպում են համայնքի տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման բնագավառում տարվող աշխատանքները.

2) ապահովում են համայնքի տարածքում ուժեղ երկրաշարժերին բնակչությանը նախապատրաստելու աշխատանքները.

3) աջակցում են համայնքի տարածքում սեյսմիկ պաշտպանության բնագավառում պետական ծրագրերի կատարմանը.

4) մասնակցում են ուժեղ երկրաշարժի վտանգի մասին բնակչության ազդարարման գործընթացին.

5) սեյսմիկ աղետի դեպքում կազմակերպում են դրա հետևանքների վերացման աշխատանքները հասարակական կազմակերպությունների և բնակչության ներգրավմամբ.

6) իրականացնում են ~~Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ~~ **օրենքով** սահմանված այլ լիազորություններ:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված լիազորությունները տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են որպես պետության կողմից պատվիրակված լիազորություն:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2002 թվականի դեկտեմբերի 11-ին

ՄԱՐԴՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 5. Դեռահասների վերարտադրողական առողջության պահպանումը

1. Դեռահասներն իրավունք ունեն՝

1) սեռական դաստիարակության, ինչպես նաև սեռական և վերարտադրողական առողջության պահպանման.

2) իրազեկ լինել սեռական հասունացման, սեռական և վերարտադրողական առողջությանը վերաբերող հարցերին, ունենալ անհրաժեշտ գիտելիքներ հղիության արհեստական ընդհատման, սեռավարակների, այդ թվում՝ մարդու իմունային անբավարարության վարակի (ՄԻԱՎ) կանխարգելման ժամանակակից միջոցների վերաբերյալ.

3) բարյացակամ և մեկուսի պայմաններում ստանալ մատչելի ու լիարժեք բժշկական խորհրդատվություն, անհրաժեշտության դեպքում՝ նաև բուժօգնություն՝ սեռական հասունացման, սեռական և վերարտադրողական առողջության հարցերի հետ կապված:

2. Դեռահասների սեռական դաստիարակությունը հանրակրթական դպրոցներում և կրթական այլ հաստատություններում իրականացնում են մասնագիտական պատրաստվածություն ունեցող անձինք՝ ընտանիքի, առողջապահական ծառայությունների, հասարակական կազմակերպությունների, հանրության հետ սերտ համագործակցությամբ:

3. Դեռահասների սեռական և վերարտադրողական առողջության պահպանման հետ կապված կրթական ծրագրերը մշակվում և իրականացնում են կրթության ու առողջապահության ~~ոլորտների գործադիր~~ **հարցերով լիազորված պետական կառավարման** մարմինները՝ շահագրգիռ հասարակական և այլ կազմակերպությունների, համայնքների, ինչպես նաև իրենց՝ երիտասարդ մարդկանց գործուն մասնակցությամբ՝ հաշվի առնելով ազգային ավանդույթները, բարոյական արժեքներն ու միջազգային փորձը, ելնելով դեռահասների տարիքային, հոգեբանական և ֆիզիկական զարգացման առանձնահատկություններից:

Հոդված 12. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների

կիրառման հետ կապված իրավական հարաբերությունները

1. Մարդու վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեն՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ գտնվող ամուսինը (կինը)՝ միայն կնոջ (ամուսնու) հետ փոխադարձ համաձայնության առկայության դեպքում.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվող տղամարդը կամ կինը՝ իր ցանկությամբ: Սույն իրավունքը՝ փոխնակ մոր միջոցով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու մասով, չի տարածվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ չգտնվող՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ բնակվող օտարերկրացիների նկատմամբ:

2. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու դեպքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ գտնվող ամուսինները կամ նրանցից առնվազն մեկը, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ չգտնվող տղամարդը կամ կինը պետք է լինեն ապագա երեխայի կենսաբանական ծնողը:

3. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձինք իրավունք ունեն առողջապահության ~~ոլորտի հանրապետական գործադիր~~ **հարցերով լիազորված պետական կառավարման** մարմնի սահմանած կարգով նախապես իրազեկվել՝

1) վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման հետ կապված ժառանգաբանական, բժշկագիտական և իրավական հարցերի մասին.

2) վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման գործելակարգի մասին.

3) դոնորի կամ փոխնակ մոր արտաքին տվյալների, ազգային պատկանելության, ֆենոտիպի և բժշկագենետիկական հետազոտությունների արդյունքների մասին:

4. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձինք (ամուսինները) իրավունք ունեն ընտրել սեռաբջջի դոնորին և (կամ) փոխնակ մորը:

5. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներ իրականացնելիս հաշվառվում են միայն այն դոնորների և փոխնակ մայրերի վերաբերյալ տեղեկությունները, ովքեր բժշկագենետիկական հետազոտության են ենթարկվել համապատասխան առողջապահական հաստատություններում և չունեն դոնոր կամ փոխնակ մայր լինելու հակացուցումներ:

6. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձանց՝ որպես ծնողների և այդ տեխնոլոգիաների օգտագործման արդյունքում ծնված երեխայի (երեխաների) միջև իրավական փոխհարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Հոդված 14. Վերարտադրողականության (սեռաբջջի) դոնորությունը

1. Դոնոր լինելու իրավունք ունեն 18-35 տարեկան այն տղամարդիկ և կանայք, ովքեր ենթարկվել են բժշկագենետիկական հետազոտության և չունեն դոնոր լինելու բժշկական հակացուցումներ:

2. Ժամանակավոր դոնոր լինելու իրավունք ունեն նաև վերարտադրողական տարիքի (18 տարեկանից սկսած) այն տղամարդիկ և կանայք, ովքեր ցանկանում են իրենց սեռաբջիջը կամ սաղմը տրամադրել հարազատներին, ենթարկվել են բժշկագենետիկական հետազոտության և չունեն դոնոր լինելու բժշկական հակացուցումներ:

3. Վերարտադրողականության դոնոր լինելու բժշկական հակացուցումների ցանկը սահմանում է ~~Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտի գործադիր~~ **առողջապահության հարցերով լիազորված պետական կառավարման** մարմինը:

4. Դոնորական սերմի կամ ձվաբջջի տրամադրման և դրանց պահպանման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Դոնորն իր բեղմնունակ սերմը կամ ձվաբջիջը տրամադրելու համար կարող է ստանալ դրամական հատուցում համապատասխան առողջապահական հաստատության կամ սեռաբջիջն օգտագործող անձի կամ զույգի կողմից՝ նախապես կնքված և սահմանված կարգով վավերացված պայմանագրի համաձայն:

6. Դոնորը չունի որևէ իրավունք և չի կրում որևէ պարտականություն օժանդակ տեխնոլոգիաների օգտագործման արդյունքում իրենից սերված երեխայի նկատմամբ:

Հոդված 17. Դոնորի և (կամ) փոխնակ մոր մասին տեղեկությունները

1. Որպես դոնոր և (կամ) փոխնակ մայր հանդես գալու ցանկություն ունեցող անձինք կարող են դիմել համապատասխան առողջապահական հաստատություններ:

Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեցող անձինք կարող են առողջապահական հաստատություն ներկայացնել դոնորի և (կամ) փոխնակ մոր թեկնածուներ:

2. Դոնորի և փոխնակ մոր մասին տեղեկությունները հաշվառվում են համապատասխան առողջապահական հաստատություններում՝ առողջապահության ~~ոլորտի հանրապետական գործադիր~~ **հարցերով լիազորված պետական կառավարման** մարմնի սահմանած կարգով:

3. Սույն հոդվածի երկրորդ մասով սահմանված կարգով հաշվառվում են այն դոնորի կամ փոխնակ մոր մասին տեղեկությունները, ովքեր սահմանված կարգով ենթարկվել են բժշկագենետիկական հետազոտության և չունեն դոնոր և (կամ) փոխնակ մայր լինելու հակացուցումներ:

4. Դոնորի և փոխնակ մոր մասին տեղեկությունները տրամադրվում են վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեցող անձանց ցանկությամբ:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2006 թվականի հունիսի 15-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՄԱՍԻՆ

~~**Հոդված 4. Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերի գործածումը**~~

~~Հայաստանի Հանրապետության զինանշանի գունավոր պատկերը գործածվում է՝~~

~~Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումների, Հայաստանի Հանրապետության դատարանների որոշումների, վճիռների և դատավճիռների, Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրերի վրա, Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի, հանրապետական գործադիր մարմինների, Հայաստանի Հանրապետության դատարանների, Հայաստանի Հանրապետության դատախազության մարմինների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի, պետական կառավարման այլ մարմինների, մարդու իրավունքների պաշտպանի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների (այդ թվում՝ Երևանի քաղաքապետարանի), Հայաստանի Հանրապետության օրենքով ստեղծված մշտապես գործող մարմինների (ծառայությունների, խորհուրդների, հանձնաժողովների) ձևաթղթերի վրա։~~

~~Հայաստանի Հանրապետության զինանշանի միագույն պատկերը գործածվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների անձնագրերի կամ անձը հաստատող այլ փաստաթղթերի, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման այն մարմինների կնիքների և ձևաթղթերի վրա, որոնց՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը գործածելու իրավունքը վերապահված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ։~~

~~Հոդված 4.~~ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերի գործածումը

1. Հայաստանի Հանրապետության զինանշանի գունավոր պատկերը գործածվում է՝

Հայաստանի Հանրապետության օրենքների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Ազգային ժողովի, Կառավարության, վարչապետի, Սահմանադրական դատարանի որոշումների, դատարանների որոշումների, վճիռների և դատավճիռների, Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրերի վրա, Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի, Կառավարության, վարչապետի, պետական կառավարման համակարգի մարմինների, դատարանների, դատախազության մարմինների, Կենտրոնական բանկի, Հաշվեքննիչ պալատի, ինքնավար և անկախ պետական մարմինների, պետական այլ մարմինների, Մարդու իրավունքների պաշտպանի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների (այդ թվում՝ Երևանի քաղաքապետարանի) ձևաթղթերի վրա:

2. Հայաստանի Հանրապետության զինանշանի միագույն պատկերը գործածվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների անձնագրերի կամ անձը հաստատող այլ փաստաթղթերի, Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման այն մարմինների կնիքների և ձևաթղթերի վրա, որոնց՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը գործածելու իրավունքը վերապահված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:»:

~~Հոդված 5. Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերի տեղադրումը~~

~~Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը մշտապես տեղադրվում է՝~~

~~Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի, Հայաստանի Հանրապետության վարչապետի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահի, Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավարի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի, Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի նախագահի, մարդու իրավունքների պաշտպանի, հանրապետական գործադիր մարմինների, պետական կառավարման այլ մարմինների ղեկավարների, Հայաստանի Հանրապետության օրենքով ստեղծված մշտապես գործող մարմինների (ծառայությունների, խորհուրդների, հանձնաժողովների) ղեկավարների, Հայաստանի Հանրապետության դատավորների և դատախազների, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների (այդ թվում՝ Երևանի քաղաքապետի) աշխատասենյակներում, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նիստերի դահլիճում, Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի դահլիճում, Հայաստանի Հանրապետության դատարանների դատական նիստերի դահլիճներում, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մարմինների հանդիսությունների սրահներում և շենքերի վրա, Հայաստանի Հանրապետության Նախագահի նստավայրի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության~~

սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության դատախազության մարմինների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, մարդու իրավունքների պաշտպանի, հանրապետական գործադիր մարմինների, պետական կառավարման այլ մարմինների, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների (այդ թվում՝ Երևանի քաղաքապետի), Հայաստանի Հանրապետության նոտարական գրասենյակների շենքերի վրա, դիվանագիտական ծառայության մարմինների (դեսպանատների, ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների), օտարերկրյա պետությունների տարածքում գտնվող Հայաստանի Հանրապետության այլ պաշտոնական ներկայացուցչությունների շենքերի վրա և դրանց ղեկավարների աշխատասենյակներում, ուսումնական հաստատությունների սրահներից կամ նախասրահներից մեկում, Հայաստանի Հանրապետության պաշտոնական ինտերնետային կայքերում:

Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը տեղադրվում է նաև հիմնական սահմանային նշանների վրա, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցագրային կետերում:

Սույն օրենքով նախատեսված դեպքերից բացի, Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերի գործածման դեպքերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինանշանի ընդհանուր տեխնիկական պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

«Հոդված 5. Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերի տեղադրումը

1. Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը մշտապես տեղադրվում է՝

Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի նախագահի, վարչապետի, Սահմանադրական դատարանի նախագահի, Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի, Վարչապետի աշխատակազմի ղեկավարի, Կենտրոնական բանկի նախագահի, Հաշվեքննիչ պալատի նախագահի, Մարդու իրավունքների պաշտպանի, պետական կառավարման համակարգի մարմինների, ինքնավար և անկախ պետական մարմինների, պետական այլ մարմինների ղեկավարների, դատավորների և դատախազների, մարզպետների և համայնքների ղեկավարների (այդ թվում՝ Երևանի քաղաքապետի) աշխատասենյակներում, Ազգային ժողովի նիստերի դահլիճում, Կառավարության նիստերի դահլիճում, դատարանների դատական նիստերի դահլիճներում, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մարմինների հանդիսությունների սրահներում և շենքերի վրա, Հանրապետության նախագահի նստավայրի, Ազգային ժողովի, Սահմանադրական դատարանի, Կառավարության, դատախազության մարմինների, Կենտրոնական բանկի, Մարդու իրավունքների պաշտպանի, պետական կառավարման համակարգի մարմինների, ինքնավար և անկախ պետական մարմինների, պետական այլ մարմինների, մարզպետարանների և համայնքապետարանների (այդ թվում՝ Երևանի քաղաքապետարանի), Հայաստանի Հանրապետության նոտարական գրասենյակների շենքերի վրա, օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության

դիվանագիտական ծառայության մարմինների (Հայաստանի Հանրապետության դեսպանությունների, միջազգային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչությունների, Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկների), օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության այլ պաշտոնական ներկայացուցչությունների շենքերի վրա և դրանց ղեկավարների աշխատասենյակներում, ուսումնական հաստատությունների սրահներից կամ նախասրահներից մեկում, Հայաստանի Հանրապետության պաշտոնական ինտերնետային կայքերում:

2. Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը տեղադրվում է նաև հիմնական սահմանային նշանների վրա, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցագրային կետերում:

3. Սույն օրենքով նախատեսված դեպքերից բացի, Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերի գործածման դեպքերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինանշանի ընդհանուր տեխնիկական պայմանները սահմանում է Կառավարությունը:»:

~~Հոդված 7. Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերի գործածումը Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի կողմից~~

~~Հայաստանի Հանրապետության զինանշանը կարող է տեղադրվել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի դրոշների վրա, Հայաստանի Հանրապետության ոստիկանության զորքերի, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայողների, զինծառայողների և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության շարքային ու ղեկավար կազմի տարբերանշանների վրա:~~

Հոդված 7. Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերի գործածումը Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի կողմից

1. Հայաստանի Հանրապետության զինանշանը կարող է տեղադրվել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի, փրկարար ծառայության, դրոշների վրա, Ոստիկանության զորքերի, քրեակատարողական ծառայողների, փրկարարական ծառայողների, զինծառայողների և Ոստիկանության շարքային ու ղեկավար կազմի տարբերանշանների վրա:

Հոդված 11. Անցումային դրույթներ

~~1. Մինչև Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի ձևավորումը սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան պահանջը գործում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկիչ պալատի նախագահի համար:~~

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «ՀՍՍՀ պետական գերբի կանոնադրությունը հաստատելու մասին» Հայկական ՍՍՀ Գերագույն խորհրդի

նախագահության 1981 թվականի ապրիլի 29-ի հրամանագիրը և «Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի մասին» Հայաստանի Հանրապետության 1992 թվականի ապրիլի 19-ի ՀՆ-0580-1-ՀՕ-21 օրենքը:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2006 թվականի հունիսի 15-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻ ՄԱՍԻՆ

~~ողված 3. Հայաստանի Հանրապետության դրոշի գործածումը~~

~~Հայաստանի Հանրապետության դրոշը մշտապես բարձրացվում է՝~~

~~Հայաստանի Հանրապետության Նախագահի նստավայրի,~~

~~Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի,~~

~~Հայաստանի Հանրապետության կառավարության,~~

~~Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի,~~

~~Հայաստանի Հանրապետության դատարանների,~~

~~Հայաստանի Հանրապետության դատախազության մարմինների,~~

~~մարդու իրավունքների պաշտպանի,~~

~~Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի,~~

~~հանրապետական գործադիր մարմինների,~~

~~պետական կառավարման այլ մարմինների,~~

~~Հայաստանի Հանրապետության օրենքով ստեղծված մշտապես գործող մարմինների (ծառայությունների, խորհուրդների, հանձնաժողովների),~~

~~Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների (այդ թվում՝ Երևանի քաղաքապետարանի) շենքերի վրա:~~

~~Հայաստանի Հանրապետության դրոշը մշտապես պետք է բարձրացվի օտարերկրյա պետությունների տարածքում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինների (դեսպանատների, ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների) և Հայաստանի Հանրապետության այլ պաշտոնական ներկայացուցչությունների շենքերի վրա՝ միջազգային իրավունքի նորմերին, դիվանագիտական արարողակարգի կանոններին և ընդունող պետությունների սովորույթներին համապատասխան:~~

~~Հայաստանի Հանրապետության դրոշը բարձրացվում է Հայաստանի Հանրապետության մարզական պաշտոնական առաջնությունների բացման և իջեցվում է փակման արարողությունների ժամանակ:~~

~~Հայաստանի Հանրապետության դրոշը մշտապես տեղադրվում է՝~~

~~պաշտոնական, աշխատանքային և հանդիսավոր արարողությունների համար նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի նստավայրի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության կառավարության,~~

~~Հայաստանի Հանրապետության դատարանների դատական նիստերի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստերի դահլիճներում:~~

~~Հայաստանի Հանրապետության դրոշը տեղադրվում է՝~~

~~Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի այլ մարմինների, Հայաստանի Հանրապետության վարչապետի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահի, Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավարի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի, Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի նախագահի, մարդու իրավունքների պաշտպանի, հանրապետական գործադիր մարմինների, պետական կառավարման այլ մարմինների ղեկավարների, Հայաստանի Հանրապետության օրենքով ստեղծված մշտապես գործող մարմինների (ծառայությունների, խորհուրդների, հանձնաժողովների) ղեկավարների, Հայաստանի Հանրապետության դատավորների և դատախազների, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների (այդ թվում՝ Երևանի քաղաքապետի), օտարերկրյա պետությունների տարածքում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինների (դեսպանատների, ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների) ղեկավարների աշխատասենյակներում, ուսումնական հաստատությունների սրահներից կամ նախասրահներից մեկում:~~

~~Սույն հոդվածով նախատեսված դեպքերից բացի, Հայաստանի Հանրապետության դրոշը կարող է տեղադրվել այլ վայրերում, շենքերի, շինությունների, այդ թվում՝ բնակելի շենքերի վրա:~~

~~Հայաստանի Հանրապետության դրոշը կարող է ամրացվել՝~~

~~Հայաստանի Հանրապետության Նախագահի փոխադրամիջոցների վրա, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի, Հայաստանի Հանրապետության վարչապետի, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի փոխադրամիջոցների վրա՝ միայն արտասահմանյան պատվիրակությունների այցերի ժամանակ՝ Հայաստանի Հանրապետության պետական արարողակարգի հիմնադրույթներին համապատասխան, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտոնական պատվիրակությունների ղեկավարների, դիվանագիտական և մշտական ներկայացուցչությունների ղեկավարների փոխադրամիջոցների վրա՝ ընդունող պետությունների արարողակարգին համապատասխան:~~

~~Հայաստանի Հանրապետության սահմանադրական պաշտոններում նշանակվող անձանց կամ օրենքով սահմանված այլ անձանց երդման արարողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության դրոշի ներքո:~~

~~Սույն հոդվածով նախատեսված դեպքերից բացի, Հայաստանի Հանրապետության դրոշի և դրա պատկերի գործածման կարգը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դրոշի ընդհանուր տեխնիկական պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:~~

Հոդված 3. Հայաստանի Հանրապետության դրոշի գործածումը

1. Հայաստանի Հանրապետության դրոշը մշտապես բարձրացվում է՝ Հանրապետության նախագահի նստավայրի, Ազգային ժողովի,Կառավարության, Սահմանադրական դատարանի, դատարանների, դատախազության մարմինների, Մարդու իրավունքների պաշտպանի, Կենտրոնական բանկի, պետական կառավարման համակարգի մարմինների, ինքնավար պետական մարմինների, անկախ պետական մարմինների, պետական այլ մարմինների, մարզպետարանների և համայնքապետարանների (այդ թվում՝ Երևանի քաղաքապետարանի) շենքերի վրա:

2. Հայաստանի Հանրապետության դրոշը մշտապես պետք է բարձրացվի օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինների (Հայաստանի Հանրապետության դեսպանությունների, միջազգային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչությունների, Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկների) և օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության այլ պաշտոնական ներկայացուցչությունների շենքերի վրա՝ միջազգային իրավունքի նորմերին, դիվանագիտական արարողակարգի կանոններին և ընդունող պետությունների սովորույթներին համապատասխան, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության անդամակցությամբ միջազգային կազմակերպություններում և Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային միջոցառումներին՝ այդ կազմակերպություններում ընդունված ընթացակարգերին և գործելակերպին համապատասխան:

3. Հայաստանի Հանրապետության դրոշը բարձրացվում է Հայաստանի Հանրապետության մարզական պաշտոնական առաջնությունների բացման և իջեցվում է փակման արարողությունների ժամանակ:

4. Հայաստանի Հանրապետության դրոշը մշտապես տեղադրվում է՝

պաշտոնական, աշխատանքային և հանդիսավոր արարողությունների համար նախատեսված՝ Հանրապետության նախագահի նստավայրի, Ազգային ժողովի, Կառավարության, դատարանների դատական նիստերի, կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստերի դահլիճներում:

5. Հայաստանի Հանրապետության դրոշը տեղադրվում է՝

Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի նախագահի և Ազգային ժողովի այլ մարմինների, վարչապետի, Սահմանադրական դատարանի նախագահի, Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի, Վարչապետի աշխատակազմի ղեկավարի, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի, Կենտրոնական բանկի նախագահի, Հաշվեքննիչ պալատի նախագահի, Մարդու իրավունքների պաշտպանի, ինքնավար և անկախ պետական մարմինների, պետական կառավարման համակարգի մարմինների, պետական այլ մարմինների ղեկավարների, դատավորների և դատախազների, մարզպետների և համայնքների ղեկավարների, օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինների (Հայաստանի Հանրապետության դեսպանությունների, միջազգային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչությունների, Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկների) ղեկավարների աշխատասենյակներում, ուսումնական հաստատությունների սրահներից կամ նախասրահներից մեկում:

6. Սույն հոդվածով նախատեսված դեպքերից բացի, Հայաստանի Հանրապետության դրոշը կարող է տեղադրվել այլ վայրերում, շենքերի, շինությունների, այդ թվում՝ բնակելի շենքերի վրա:

7. Հայաստանի Հանրապետության դրոշը կարող է ամրացվել՝

Հանրապետության նախագահի փոխադրամիջոցների վրա, Ազգային ժողովի նախագահի, վարչապետի, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի փոխադրամիջոցների վրա՝ միայն արտասահմանյան պատվիրակությունների այցերի ժամանակ՝ Հայաստանի Հանրապետության պետական արարողակարգին համապատասխան, օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինների ղեկավարների փոխադրամիջոցների վրա՝ ընդունող պետությունների արարողակարգին համապատասխան:

8. Հայաստանի Հանրապետության սահմանադրական պաշտոններում նշանակվող անձանց կամ օրենքով սահմանված այլ անձանց երդման արարողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության դրոշի ներքո:

9. Սույն հոդվածով նախատեսված դեպքերից բացի, Հայաստանի Հանրապետության դրոշի և դրա պատկերի գործածման կարգը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դրոշի ընդհանուր տեխնիկական պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 12. Անցումային դրույթներ

~~1. Մինչև Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի ձևավորումը սույն օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասի համապատասխան պահանջը գործում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկիչ պալատի նախագահի համար:~~

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «ՀՍՍՀ պետական դրոշի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՍՍՀ Գերագույն խորհրդի նախագահության 1967 թվականի սեպտեմբերի 30-ի հրամանագիրը և «Հայաստանի Հանրապետության պետական դրոշի մասին» Հայաստանի Հանրապետության 1990 թվականի օգոստոսի 24-ի ՀՆ-0076-1 օրենքը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է Ազգային ժողովի կողմից
24 հունիսի 1997 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1.2. Սահմանումներ և հասկացություններ

Սույն օրենքի իմաստով՝

1. Բյուջետային եկամուտներն են օրենսդրությանը համապատասխան պետական և համայնքների բյուջեներ մուտքագրվող՝ համապատասխանաբար պետական **մարմնի** և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տնօրինվող դրամական միջոցները (բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասում թվարկված ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվող միջոցների և սույն օրենքով բյուջեների դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներին դասվող միջոցների):

2. Բյուջետային ծախսերն են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին օրենսդրությամբ վերապահված գործառույթների ֆինանսական ապահովման նպատակով (բացառությամբ վարկերի և փոխատվությունների տրամադրման, ներգրավված փոխառու միջոցների մարումների, ինչպես նաև բաժնետոմսերի և կապիտալում մասնակցության և այլ արժեթղթերի ձեռք բերման դեպքերի) համապատասխան բյուջեներից ուղղվող դրամական միջոցները:

3. Կապիտալ կամ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն են պետական և համայնքային նշանակության ծրագրերի շրջանակներում նախատեսվող այն ծախսերը, որոնք հանգեցնում են սույն հոդվածի 7-րդ մասում թվարկված ոչ ֆինանսական ակտիվների ստեղծմանը (ձեռք բերմանը) կամ դրանց արժեքի ավելացմանը:

4. Ընթացիկ ծախսերն են այն ծախսերը, որոնք ընդգրկված չեն կապիտալ ծախսերում:

5. Փոխառու միջոցներն են պետության կամ համայնքի կողմից թողարկված արժեթղթերի տեղաբաշխումից, ինչպես նաև վարկերի և բյուջետային փոխատվությունների տեսքով բյուջեներ ստացվող միջոցները:

6. Ֆինանսական ակտիվներն են պետությանը կամ համայնքին սեփականության իրավունքով պատկանող իրավաբանական անձանց բաժնետոմսերը, կապիտալում այլ մասնակցությունը և այլ արժեթղթերը, բյուջեներից տրամադրված բյուջետային վարկերը և փոխատվությունները, ինչպես նաև բյուջեների միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը:

7. Ոչ ֆինանսական ակտիվներն են պետությանը կամ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցները (հիմնական ֆոնդերը), բարձրարժեք ակտիվները, չարտադրված ակտիվները, պետական ռազմավարական և համայնքային նշանակության պահուստներում պահվող ապրանքանյութական արժեքները:

8. Բյուջետային մուտքերն են պետական կամ համայնքների բյուջեներ ստացվող դրամական միջոցները: Բյուջետային մուտքերը ներառում են տվյալ բյուջեին օրենքով ամրագրված բյուջետային եկամուտները, բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը, բյուջեից տրամադրված բյուջետային վարկերի և փոխատվությունների գումարների վերադարձից, ոչ դրամային տեսքով այլ ֆինանսական ակտիվների և ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվող, ինչպես նաև ներգրավված փոխառու և այլ դրամական միջոցները:

9. Բյուջետային ելքերն են Սահմանադրությամբ և օրենքներով պետական և համայնքների բյուջեներից պետությանը և տեղական ինքնակառավարման մարմիններին

վերապահված իրավասությունների իրականացմանն ուղղվող դրամական միջոցները: Բյուջետային ելքերը ներառում են բյուջետային ծախսերը, ինչպես նաև ֆինանսական ակտիվների (բացառությամբ բյուջեների միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի) ձեռքբերումները և ներգրավված փոխառու միջոցների մարումները:

10. Բյուջետային հատկացումներն են բյուջեն հաստատող իրավական ակտով բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների գծով նախատեսված միջոցները:

11. Բյուջեն հաստատող իրավական ակտն է պետական բյուջեի մասով Ազգային ժողովի ընդունած՝ տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքը, իսկ համայնքի բյուջեի մասով՝ համայնքի ավագանու ընդունած՝ համայնքի բյուջեի մասին որոշումը: Բյուջեն հաստատող իրավական ակտը սահմանում է համապատասխան բյուջեի տվյալ տարվա մուտքերը և ելքերը, բյուջետային հատկացումների բաշխումն ըստ դրանց գլխավոր կարգադրիչների, ինչպես նաև այլ նորմատիվ դրույթներ, որոնք գործում են միայն այն ժամանակահատվածում, որի համար ընդունվել է բյուջեն (եթե այլ բան չի նախատեսվում բյուջեն հաստատող իրավական ակտով):

12. Բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչներն են պետական բյուջեով նախատեսվող հատկացումների գծով տվյալ տարվա պետական բյուջեի ելքերի գերատեսչական կառուցվածքում նշված պետական մարմինները և (կամ) պետական հիմնարկները՝ իրենց գծով սահմանված հատկացումների մասով, իսկ համայնքի բյուջեով նախատեսվող հատկացումների գծով՝ համայնքի ղեկավարը: Բյուջեներով նախատեսվող ծրագրերի իրականացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով այդ ծրագրերի գծով բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչի լիազորություններն օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ (այդ ծրագրերը պետական բյուջեում նախատեսված լինելու դեպքում) կամ համայնքի ավագանու որոշմամբ (այդ ծրագրերը համայնքի բյուջեում նախատեսված լինելու դեպքում) կարող են վերապահվել համապատասխանաբար պետական **մարմնի** կամ համայնքային կառավարչական հիմնարկի առանձնացված ստորաբաժանմանը, այլ հիմնարկի: Բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչի իրավասությունը և պարտականությունները սահմանվում են օրենսդրությամբ:

13. Պետական լիազորված մարմինն է պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ կառավարություն) լիազորած պետական կառավարման մարմինը:

14. Նպատակային բյուջետային մուտքերն են՝

ա) օրենքով իրեն վերապահված իրավասության շրջանակներում, կառավարության (կամ համայնքի) և վերջիններիս միջոցներ հատկացնողի միջև կնքված գործարքով նախատեսված որոշակի բյուջետային ելքերի կատարման նպատակով կառավարությանը (կամ համայնքին) նվիրաբերվող կամ վարկի տեսքով տրամադրվող (կամ նվիրաբերվող կամ վարկի տեսքով տրամադրվող ապրանքների դրամայնացումից) պետական (կամ համայնքի) բյուջե մուտքագրվող գումարները.

բ) առանձին բյուջետային ելքերի ֆինանսավորման նպատակով օրենքով սահմանված պարտադիր վճարների գծով պետական կամ համայնքի բյուջե մուտքագրվող գումարները:

15. Նպատակային բյուջետային ֆոնդը համապատասխան բյուջեին օրենսդրությամբ ամրագրված բյուջետային մուտքերի կազմից օրենքով կամ կառավարության կամ համայնքի ավագանու որոշումներով առանձնացվող մուտքերի որոշ տեսակների (կամ դրանց հստակ սահմանված մասի) և բացառապես դրանց հաշվին ֆինանսավորվող

բյուջետային ելքերի ամբողջությունն է: Նպատակային բյուջետային ֆոնդը համապատասխան բյուջեի բաղկացուցիչ մասն է:

16. Արտաբյուջետային (այդ թվում՝ ավանդային) հաշիվներն են պետական կամ համայնքային հիմնարկի անվամբ գանձապետական միասնական հաշվում պետական բյուջեի միջոցների և համայնքների բյուջեների միջոցների ենթահաշվից դուրս գործող ենթահաշիվները, ինչպես նաև բանկային համակարգում գործող հաշիվները: Արտաբյուջետային հաշիվները բացվում են և նախատեսված են՝

ա) առանձին դեպքերում նպատակային բյուջետային մուտքերի և դրանց հաշվին կատարվող ելքերի (ներառյալ՝ նպատակային բյուջետային ֆոնդերի մուտքերի և ելքերի) կատարման և առանձնացված հաշվառման համար.

բ) օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը ապրանքային տեսքով տրամադրված վարկերի և դրամաշնորհների դրամայնացումից առաջացող միջոցների կուտակման համար.

գ) դատական, նախաքննական և ~~դատական ակտերի~~ հարկադիր կատարման մարմինների անվամբ դատավարական և կատարողական վարույթի նորմերի հիմքերով իրավաբանական և ֆիզիկական անձանցից բռնագանձվող, բռնագրավվող, առգրավվող, ի պահ վերցվող կամ գրավադրվող դրամական (նաև արտարժութային) միջոցների ստացման և դրանք օրենքի հիման վրա որոշված ստացողներին հետագա փոխանցումն ապահովելու համար.

դ) պետական լիազորված մարմնի անվամբ՝ բյուջեների ժամանակավորապես ազատ միջոցների ավանդադրման, առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի մասնավորեցումից (սեփականաշնորհումից) առաջացող միջոցների հավաքագրման և ավանդադրման համար.

ե) պետական կամ համայնքային հիմնարկի անվամբ՝ սակարկությունների կազմակերպման հետ կապված նախավճարների գանձումը և վերադարձն ապահովելու համար.

զ) պետական հիմնարկների անվամբ՝ իրավաբանական անձանց վճարահաշվարկային սպասարկման համար.

է) պետական մարմինների անվամբ՝ որոշակի ոլորտներում առանձին տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող տնտեսական գործունեության արդյունքում առաջացող բացասական հետևանքների վերացման և ռիսկերի կառավարման հետ կապված ծախսերի ֆինանսավորման նպատակով այդ սուբյեկտների կողմից կատարվող վճարների կամ մասհանումների տեսքով ստացվող միջոցների կուտակման համար.

ը) պետական և համայնքային հիմնարկների անվամբ՝ օրենքով կամ կառավարության (համայնքի ավագանու) որոշմամբ նախատեսված աղբյուրներից այլ նպատակներով միջոցների կուտակման համար:

17. Ծրագիրը միևնույն վերջնական արդյունքի հասնելուն ուղղված քաղաքականության իրագործման միջոցառումների (այսուհետ՝ ծրագրի միջոցառումներ) տրամաբանական խմբավորումն է:

17.1. Ծրագիրը միևնույն նպատակին հասնելուն ուղղված քաղաքականության իրագործման միջոցառումների (այսուհետ՝ ծրագրի միջոցառումներ) տրամաբանական խմբավորումն է:

17.2. Յուրաքանչյուր ծրագիր ներառում է տվյալ նպատակին ուղղված միայն մեկ՝ գլխավոր կարգադրիչի վերագրվող միջոցառումներ:

17.3. Ծրագրի նպատակը այն կոնկրետ սոցիալական կամ հասարակական խնդիրն է, որի լուծմանն ուղղված է ծրագիրը:

18. Ծրագրի միջոցառումը պետության միջամտությունն է, որը կարող է հանդես գալ պետական մարմինների, պետական կամ այլ կազմակերպությունների կողմից ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման, ապրանքների կամ տրանսֆերտների տրամադրման, կապիտալ (ոչ ֆինանսական) և ֆինանսական ակտիվների ստեղծման (ձեռք բերման) կամ օտարման, ինչպես նաև օրենքով սահմանված այլ ձևերով:

18.1. Ծրագրի միջոցառումը ծրագրի շրջանակներում քաղաքականության իրագործման նպատակով իրականացվող պետության միջամտությունն է, որն ուղղված է տվյալ ծրագրի համար սահմանված նպատակի իրագործմանը:

19. Վերջնական արդյունքները սոցիալական, տնտեսական և շրջակա միջավայրի այն փոփոխություններն են, որոնց ձգտում է հասնել պետությունը հանրության համար ծրագրերի միջոցառումների տեսքով սահմանված միջամտությունների միջոցով:

20. Տրանսֆերտները բյուջետային հիմնարկի կարգավիճակ չունեցող շահառուներին կամ բյուջետային համակարգի այլ մակարդակի բյուջեներին անհատույց և անվերադարձ տրամադրվող ֆինանսական և ոչ ֆինանսական միջոցներն են:

21. Սույն հոդվածի 17-20-րդ մասերում բերված սահմանումները վերաբերում են բացառապես սույն օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետով, 23-րդ հոդվածի 4-րդ մասով և 25-րդ հոդվածի 2-րդ մասի «դ1» կետով նախատեսված՝ բյուջետային ելքերը ծրագրային ձևաչափով ներկայացնող փաստաթղթերի կազմման գործընթացին:

(1.2-րդ հոդվածը լրաց. 30.04.13 ՀՕ-45-Ն, փոփ., լրաց. 14.12.17 ՀՕ-304-Ն)

(1.2-րդ հոդվածի 18-րդ և 21-րդ մասերի դրույթներն իրենց ուժը կորցնում են Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը հաստատելու օրը)

Հոդված 18. Պետական բյուջեի ծախսերի ուղղությունները

1. Պետական բյուջեի միջոցով ֆինանսավորվում են պետական նշանակության ծրագրերը և ծախսերը՝ հետևյալ հիմնական ուղղություններով՝

ա) ընդհանուր բնույթի պետական ծառայություններ.

բ) պաշտպանություն.

գ) հասարակական կարգի պահպանություն և անվտանգություն.

դ) կրթություն և գիտություն.

ե) առողջապահություն.

զ) սոցիալական ապահովություն.

է) բնակարանային կոմունալ տնտեսություն.

ը) մշակույթ, սպորտ և կրոն.

թ) վառելիքաէներգետիկ համալիր.

ժ) գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ջրային տնտեսություն և ձկնաբուծություն.

ժա) լեռնահանքային արդյունաբերություն և հանքային հանածոներ (բացառությամբ վառելիքի), վերամշակող արդյունաբերություն, շինարարություն և բնապահպանություն.

ժբ) տրանսպորտ և կապ, ճանապարհային տնտեսություն.

ժգ) կառավարությանը օրենքով վերապահված իրավասությունների իրականացման այլ ուղղություններ:

2. Պետական բյուջեի ծախսերում կարող են առանձին տողով նախատեսվել սոցիալական պաշտպանության ոլորտի, պետական լիազորված մարմնի~~, անշարժ գույքի պետական միասնական կադաստրի համակարգի~~ **Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի**, հարկային մարմնի, մաքսային մարմնի, ինչպես նաև այլ պետական մարմինների համար ստեղծվող՝ աշխատակիցների խրախուսման և (կամ) համակարգի զարգացման նպատակային ֆոնդեր, որոնց ձևավորման և օգտագործման կարգը սահմանվում է օրենքով: Ընդ որում, սոցիալական պաշտպանության ոլորտի, հարկային մարմնի և մաքսային մարմնի խրախուսման և (կամ) համակարգի զարգացման նպատակային ֆոնդերի գումարների օգտագործման՝ «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածին և «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 95-րդ հոդվածին համապատասխան և «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածին համապատասխան ուղղությունները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ տարեկան ծախսերի նախահաշվի ձևով: Պետական բյուջեում նախատեսման դեպքում պետական լիազորված մարմնի, անշարժ գույքի պետական միասնական կադաստրի համակարգի խրախուսման նպատակային ֆոնդի միջոցները օգտագործվում են պետական լիազորված մարմնի և անշարժ գույքի պետական միասնական կադաստրի համակարգի աշխատակիցների խրախուսման համար, ընդ որում՝ խրախուսման միջոցներն օգտագործվում են համապատասխանաբար՝ պետական լիազորված մարմնի ղեկավարի և անշարժ գույքի պետական միասնական կադաստրի համակարգի ղեկավարի սահմանած կարգով:

Պետական բյուջեի ծախսերում պետական մարմնի աշխատակիցների խրախուսման և (կամ) համակարգի զարգացման նպատակային ֆոնդ նախատեսված լինելու դեպքում պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչարարության հետևանքով պատճառված վնասը (բացառությամբ պետական բյուջե գանձված գումարները պետական բյուջեի մուտքերի համապատասխան հաշիվներից վերադարձնելու դեպքերի) հատուցվում է նշված ֆոնդի միջոցների, իսկ դրանց անբավարարության դեպքում՝ պետական բյուջեի այլ միջոցների հաշվին, եթե այլ բան սահմանված չէ օրենքով: Ընդ որում, օրենքով սահմանված կարգով պաշտոնատար անձանց ներկայացված հետադարձ պահանջների բավարարումից ստացվող գումարներն ուղղվում են խրախուսման և (կամ) համակարգի զարգացման նպատակային ֆոնդերի համալրմանը:

3. ***(մասն ուժը կորցրել է 30.04.13 ՀՕ-45-Ն)***

4. Բնապահպանական ծրագրերի գծով յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով նախատեսվող ծախսերը չեն կարող պակաս լինել, քան այդ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարվա բնապահպանական և բնօգտագործման վճարների, իսկ 2020 թվականից սկսած՝ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների գծով փաստացի մուտքերի հանրագումարը:

Հոդված 22. Ազգային ժողովում պետական բյուջեի նախագծի քննարկումը և հաստատումը

1. Ազգային ժողովում պետական բյուջեի նախագծի քննարկման և հաստատման կարգը սահմանվում է ~~«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ»~~ «**Ազգային ժողովի կանոնակարգ»** ~~Հայաստանի Հանրապետության օրենքով~~ **սահմանադրական օրենքով**:

2. Եթե պետական բյուջեի նախագծով նախատեսվում է բյուջեի կատարումն ապահովող օրենքների ընդունում, ապա բյուջեի մասին օրենքի նախագիծը քվեարկության է դրվում դրանց ընդունումից հետո:

Սույն մասով սահմանված պահանջը չի տարածվում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 2-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրենքների ընդունման վրա:

3. Մինչև բյուջետային տարվա սկիզբը պետական բյուջեն չհաստատվելու դեպքում՝ ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով:

Այդ դեպքում, մինչև այդ տարում բյուջետային միջոցների օգտագործումը կարգավորող օրենքի ընդունումը, կառավարությունն իրավասու է տվյալ տարում բյուջետային միջոցները ծախսելու՝ օրենսդրությամբ սահմանված նպատակներով կատարել նախկինում կնքված պայմանագրերից բխող պարտավորությունները, ֆինանսական համահարթեցման դոտացիաների հատկացումները տեղական ինքնակառավարման մարմիններին (նախորդ տարվա համար օրենքով սահմանված բաշխմամբ), շարունակել կենսաթոշակների և նպաստների վճարումները, ինչպես նաև ներդրումային ծրագրերի ֆինանսավորումը: Ընդ որում, նշված ծախսերը կարող են կատարվել, եթե դրանց ֆինանսավորման համար նախորդ տարվա պետական բյուջեով արդեն իսկ նախատեսված են եղել հատկացումներ: Այդ դեպքում կատարվող ծախսերի չափը (բացառությամբ կենսաթոշակների և նպաստների վճարման ծախսերի) չի կարող գերազանցել նախորդ տարվա հատկացումների մեկ քառորդը՝ եռամսյակի, կամ մեկ տասներկուերորդը՝ ամսվա կտրվածքով: Կառավարությունն իրավասու է չֆինանսավորել այն ծախսերը, որոնք չեն նախատեսվել տվյալ տարվա բյուջեի մասին իր կազմած օրենքի նախագծում:

4. Եթե մինչև բյուջետային տարվա սկիզբն այդ տարվա պետական բյուջեն չի հաստատվում, ապա մինչև դրա հաստատումը բյուջեից շարունակվում է օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակների և նպաստների ֆինանսավորումը՝ ամբողջ ծավալով:

Հոդված 25. Պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը

1. Կառավարությունը յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունն Ազգային ժողով է ներկայացնում մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը: Կառավարությունը յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության հետ Ազգային ժողով է ներկայացնում նաև դրա վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից կառավարություն ներկայացված Կենտրոնական բանկի պաշտոնական եզրակացությունը:

2. Պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը ներառում է՝

ա) տեղեկություններ հաշվետու տարում հարկաբյուջետային քաղաքականության և համապատասխան օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ, որոնք ազդել են պետական բյուջեի կատարման արդյունքների վրա.

բ) պետական բյուջեի եկամուտների, ծախսերի և դեֆիցիտի (հավելուրդի) հիմնավորվածությունը, դրանց համեմատական վերլուծությունը հաշվետու տարվան

նախորդող տարվա փաստացի, ինչպես նաև հաշվետու տարվա համար հաստատված և փաստացի կատարված համապատասխան ցուցանիշների նկատմամբ.

գ) տեղեկություններ հաշվետու տարում կառավարության պահուստային ֆոնդից կատարված ծախսերի ուղղությունների և չափերի մասին՝ համապատասխան հիմնավորումներով.

դ) տեղեկություններ հաշվետու տարում պետության արտաքին և ներքին պարտքերի և դրանց սպասարկման վերաբերյալ.

դ1) պետական մարմինների կողմից պետական լիազորված մարմին ներկայացված տարեկան հաշվետվությունների համապատասխան տեղեկություններն այդ մարմինների գծով հաշվետու բյուջետային տարվա պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բյուջետային ելքերը ծրագրային ձևաչափով ներկայացնող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած փաստաթղթի մաս կազմող գերատեսչական տարեկան ծրագրերով նախատեսված արդյունքների կատարման վերաբերյալ.

դ2) պետական մարմինների կողմից պետական լիազորված մարմին ներկայացված տարեկան հաշվետվությունների համապատասխան տեղեկություններն այդ մարմինների գծով հաշվետու բյուջետային տարվա պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված ծրագրերի և ծրագրերի միջոցառումների գծով կառավարության սահմանած արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ.

ե) այլ տեղեկություններ, որոնք կառավարությունն անհրաժեշտ է համարում պետական բյուջեի կատարման արդյունքները ներկայացնելու և հիմնավորելու համար:

3. Պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության պետական և ծառայողական գաղտնիք պարունակող ծախսային հոդվածները, բացված տեսքով, սույն օրենքով սահմանված դասակարգմամբ, ներկայացվում են Ազգային ժողով՝ առանձին փակ ծրարով:

4. Պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ Հաշվեքննիչ պալատի եզրակացությունը բաղկացած է հետևյալ մասերից՝

1) պետական բյուջեի կատարման վերաբերյալ կարծիք.

2) հայտնաբերված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների, ինչպես նաև առաջարկությունների վերաբերյալ տեղեկատվություն:

5. Ազգային ժողովի նիստում պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը քննարկվում և հաստատվում է «~~Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով~~ **«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով** սահմանված կարգով՝ մինչև ընթացիկ տարվա հունիսի երկրորդ չորեքշաբթին:

Հոդված 41.2. Պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով, ինչպես նաև պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բյուջետային ելքերը ծրագրային ձևաչափով ներկայացնող փաստաթղթի բաղկացուցիչ մասերը

1. Պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նախատեսված բյուջետային ելքերը Հայաստանի Հանրապետության կառավարության բյուջետային ուղերձի կազմում ծրագրային ձևաչափով ներկայացնող փաստաթուղթը, ինչպես նաև պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով

նախատեսված բյուջետային ելքերը ծրագրային ձևաչափով ներկայացնող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատվող փաստաթուղթը բաղկացած է երկու մասից՝

ա) առաջին մասում ներկայացվում են բյուջետային ելքերը՝ ծրագրային (ծրագրերի միջոցառումների մակարդակով) դասակարգմամբ.

բ) երկրորդ մասում ներկայացվում են գերատեսչական տարեկան ծրագրերը, որոնք պարունակում են յուրաքանչյուր գերատեսչության ռազմավարական նպատակների համառոտ շարադրանքը և գերատեսչության կողմից իրականացվող միջոցառումների ծրագրային խմբավորումը ~~պետական կառավարչական հիմնարկի~~ **պետական մարմնի** գործունեության արդյունքները բնութագրող կատարողական չափորոշիչներով:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2001 թվականի հունիսի 29-ին

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ՝ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ԱՅՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՑ ՆԵՐՄՈՒԾՈՒՄՆ ԱԶԱՏՎԱԾ Է ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻՑ**

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքով հաստատվում է կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա ներքոհիշյալ այն ապրանքների ցանկը, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից:

Սույն հոդվածում նշված՝ ԱՏԳ ԱԱ 0602 10 100 0, 0701 10 000 0, 0713 10 100 0, 0713 33 100 0, 1001 91 100 0, 1001 91 200 0, 1003 10 000 0 ծածկագրերին դասվող ապրանքների ներմուծումն ազատվում է ավելացված արժեքի հարկից, եթե նշված ապրանքները ներմուծվել են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Սույն հոդվածով սահմանված ցանկում ներառված «Ծածկագիրը՝ ըստ ԱՏԳ ԱԱ-ի» 0105, 07 14 90 900, 2710 19 210, 2710 19 980 0 և 8702 ապրանքային դիրքերի մասով սույն հոդվածի դրույթները տարածվում են միայն այն ապրանքների վրա, որոնք նկարագրված են «Ապրանքի համառոտ անվանումը» սյունակում:

Ավելացված արժեքի հարկ վճարող համարվողների կողմից ԱՏԳ ԱԱ 84 և 85 ապրանքային ենթախմբերին դասվող ապրանքների (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 8418 10 200 1, 8418 10 800 1, 8418 30 200 1, 8418 40 200 1, 8422 11 000 0, 8447 90 000 1, 8450 11, 8451 21, 8452 10, 8508 11 000 0, 8508 19 000 1, 8509 4, 8516 31 000, 8516 33 000 0, 8516 40, 8516 50, 8516 60 101 0, 8516 71, 8516 72, 8519 20, 8521 90 000 1, 8528 72 ծածկագրերին դասվող ապրանքների) ներմուծումը, անկախ սույն հոդվածով սահմանված ցանկում կատարված բացառություններից, ինչպես նաև ԱՏԳ ԱԱ 2505100000, 250900, 2517102000, 2518200000, 2529100000, 2807, 2817000000, 2836, 3901, 3902, 3903, 3904, 3905, 3906, 3921903000, 4002, 4003, 4004, 4005, 4007, 7201, 7202, 7203, 7204, 7205, 7206, 7207, 7402, 7403, 7404, 7405, 7406, 7407, 7408, 7409, 7410, 7411, 7412, 7413, 7415, 7419991000, 7501, 7502, 7503, 7504, 7505, 7506, 7507, 7508, 7603, 7604, 7605, 7801, 7802, 7804, 7901, 7902, 7903, 7904, 7905, 7907, 8001, 8002, 8003, 8101, 8103, 8104, 8105, 8106, 8107, 8108, 8109, 8110, 8111, 8112, 8113, 8704 10 ծածկագրերին դասվող ապրանքների ներմուծումն ազատվում է ավելացված արժեքի հարկից: Սույն պարբերությունը կիրառվում է նաև ~~պետական կառավարչական հիմնարկների~~ **պետական մարմինների** նկատմամբ՝ անկախ վերջիններիս՝ ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու հանգամանքից:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2005 թվականի հոկտեմբերի 4-ին

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ (ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ) ՊԱՐՏԱԴԻՐ ՕՐԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Հոդված 8. Տպագիր արտադրանք պատրաստողների և լիազոր մարմնի պարտականությունները պարտադիր անվճար օրինակի հատկացման գործում

1. Տպագիր արտադրանք պատրաստողները իրենց պատրաստած փաստաթղթերի բոլոր տեսակների տպաքանակի (անկախ քանակից) առաջին խմբաքանակից հնգօրյա ժամկետում, իսկ օտար երկրներում իրականացված հրատարակությունները, սկսած Հայաստանի Հանրապետության տարածքում իրացնելու օրվանից, լիազորված մարմնին են փոխանցում սույն օրենքով սահմանված պարտադիր անվճար օրինակ համարվող փաստաթղթերի տեսակները՝ 6 օրինակից ոչ պակաս:

Հայաստանի Հանրապետությունում տպագրված լրատվության միջոցների պարտադիր օրինակների հատկացումը իրականացվում է «Ձանգվածային լրատվության միջոցների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2. Անկախ պատրաստված փաստաթղթի քանակից և տեսակից՝ բոլոր տեսակի փաստաթղթերը լիազորված մարմինը յոթնօրյա ժամկետում հատկացնում է՝

ա) երկու պարտադիր անվճար օրինակ՝ Հայաստանի ազգային գրապալատին.

բ) երկու պարտադիր անվճար օրինակ՝ Հայաստանի ազգային գրադարանին:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած փաստաթղթերի անվճար օրինակի բաշխման կազմակերպման կարգի համաձայն՝ լիազորված մարմինը, ըստ փաստաթղթերի համապատասխան տեսակների, մնացած օրինակները հատկացնում է՝

ա) Գիտությունների ազգային ակադեմիայի հիմնարար գիտական գրադարանին կամ

բ) Գիտատեխնիկական լրատվության կենտրոնին կամ

գ) Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարանին կամ

դ) Երևանի մշակույթի տան Բրայլյան գրադարանին կամ

ե) 6 պարտադիր օրինակից ավելին ստանալու կամ վճարովի պարտադիր օրինակ ձեռք բերելու դեպքում՝ մեկական պարտադիր անվճար օրինակ՝ մարզային (Հայաստանի Հանրապետության վարչական միավորումների) համապատասխան գրադարաններին.

զ) օրենսդրությամբ սահմանված այլ համապատասխան կազմակերպությունների:

4. Պետական պատվերի շրջանակներում, ինչպես նաև ~~պետական կառավարչական հիմնարկների~~ **պետական մարմինների** և պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից պետական բյուջեից տրված հատկացումներով իրականացված հրատարակությունների (ներառյալ պաշտոնական հրատարակությունները) պարտադիր անվճար օրինակի հատկացումը, բացառությամբ սույն հոդվածի առաջին մասում նշված կազմակերպությունների, կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

5. Պարտադիր օրինակ պատրաստող անձինք առնվազն տարին մեկ անգամ լիազորված մարմնին ներկայացնում են հաղորդում նախորդող ժամանակահատվածի իրենց պատրաստած փաստաթղթերի, թողարկումների, հրատարակությունների և հրապարակումների վերաբերյալ, որն էլ պարտավորվում է դրանք տպագրել տեղեկատուի տեսքով:

6. Լիազորված մարմինը պարտադիր վճարովի օրինակներով կարող է համալրել համապատասխան գրադարանների, կազմակերպությունների հավաքածուները:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2008 թվականի դեկտեմբերի 26-ին

ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ԿԱՄ ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԵՐՈՎ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 6. Իրավախախտման հատկանիշների պարզումը

1. Իրավախախտման հատկանիշների պարզումը վարույթ իրականացնող վարչական մարմնի կողմից տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների համադրումն է իրավախախտման հատկանիշների հետ:

2. Իրավախախտման հատկանիշները համարվում են պարզված, երբ տեսանյութում կամ լուսանկարում ամրագրված արարքի հատկանիշների և իրավախախտման հատկանիշների համապատասխանությունը կասկած չի հարուցում, իսկ կասկածի դեպքում մեկնաբանվում է հօգուտ անձի: Իրավախախտման հատկանիշները պարզվում են 15 աշխատանքային օրում:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն չի կազմվում:

4. Եթե իրավախախտումը կատարվել է պետական (պետական մարմին, ~~պետական կառավարչական հիմնարկ,~~ պետական հիմնարկ կամ որևէ այլ կարգավիճակ ունեցող պետական կազմակերպություն) կամ համայնքային (համայնքային կառավարչական հիմնարկ կամ որևէ այլ կարգավիճակ ունեցող համայնքային կազմակերպություն) կազմակերպությանն ամրացված (պատկանող) տրանսպորտային միջոցով, բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված տրանսպորտային միջոցների, ապա վարչական ակտի հասցեատիրոջը պարզելու նպատակով վարչական մարմինը, իրավախախտման հատկանիշները պարզելուց հետո՝ հինգ օրվա ընթացքում, գրավոր հարցում է կատարում համապատասխան կազմակերպությանը (հարցումը կարող է ուղարկվել նաև կազմակերպության պաշտոնական էլեկտրոնային փոստին):

5. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված հարցումն ստացած կազմակերպության ղեկավարը կամ նրա լիազորած պաշտոնատար անձը պարտավոր է հնգօրյա ժամկետում վարչական մարմնին գրավոր հայտնել, թե իրավախախտման կատարման պահին ում է ամրացված եղել (ով է վարել) տրանսպորտային միջոցը: Գրավոր պատասխանում նշվում են անձի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը, բնակության վայրը, վարորդական վկայականի սերիան և համարը, և կցվում է աշխատանքային պայմանագրի և տրանսպորտային միջոցի ամրացման փաստաթղթի պատճենը (եթե հարցումն ուղարկվել է կազմակերպության պաշտոնական էլեկտրոնային փոստին, ապա դրա պատասխանը ևս կարող է ներկայացվել էլեկտրոնային փոստով):

6. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ կապույտ գույնի առկայծող փարոսիկով կահավորման ենթակա տրանսպորտային միջոցներով կատարված և տեխնիկական միջոցներով հայտնաբերված իրավախախտումների գործերով վարչական վարույթ չի իրականացվում (չի հարուցվում):

7. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության ոստիկանության, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության՝ սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված

պահանջներին չհամապատասխանող տրանսպորտային միջոցներով կատարված և տեխնիկական միջոցներով հայտնաբերված իրավախախտումների վերաբերյալ նյութերը մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 5-ը վարչական մարմինն ուղարկում է համապատասխան պետական կառավարման մարմին՝ կարգապահական պատասխանատվության հարցը լուծելու համար:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2016 թվականի մայիսի 17-ին

ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) դեղ՝ դեղաբանական և (կամ) իմունաբանական և (կամ) նյութափոխանակային ակտիվությամբ օժտված մարդկային և (կամ) կենդանական և (կամ) բուսական և (կամ) քիմիական և (կամ) կենսատեխնոլոգիական ծագման միջոց՝ համապատասխան դեղաչափով և դեղաձևով, անհրաժեշտ փաթեթավորմամբ և մակնշմամբ, որը նախատեսված է կիրառել մարդկանց և կենդանիների հիվանդությունները բուժելու, կանխարգելելու և (կամ) օրգանիզմի ֆիզիոլոգիական ֆունկցիաները փոփոխելու, վերականգնելու, կարգավորելու համար կամ ներմուծվում է մարդու և կենդանու օրգանիզմ հիվանդությունը ախտորոշելու նպատակով.

2) իմունաբանական դեղ՝ պատվաստանյութեր կամ շիճուկներ կամ տոքսիններ կամ գլոբուլիններ կամ ալերգածին նյութեր պարունակող դեղ.

3) ռադիոակտիվ դեղ՝ մեկ կամ մի քանի ռադիոնուկլիդներ պարունակող դեղ.

4) բուսական դեղ՝ որպես ակտիվ բաղադրատարր մեկ կամ մի քանի բացառապես դեղաբուսական հումք և (կամ) դեղաբուսական հումքի մշակման արդյունքում ստացված պատրաստուկ պարունակող դեղ.

5) հոմեոպաթային դեղ՝ սույն օրենքով սահմանված կարգով հաստատված ցանկում ներառված դեղագրքերում նկարագրված հոմեոպաթային արտադրական գործընթացներով ստացված դեղ.

6) դեղաձև՝ դեղի ֆիզիկական, քիմիական և դեղաբանական հատկանիշների համալիր բնութագրով օժտված, ախտորոշիչ կամ կանխարգելիչ կամ բուժական արդյունք ապահովող, կիրառելու համար հարմար թողարկման ձև.

7) դեղաչափ՝ դեղի մեջ դեղանյութ(եր)ի (ակտիվ բաղադրատարր(եր)ի) հաստատված քանակ՝ արտահայտված յուրաքանչյուր դեղաձևի համար սահմանված չափի միավորներով.

8) դեղանյութ՝ դեղեր պատրաստելու կամ արտադրելու համար օգտագործվող դեղաբանական կամ իմունաբանական կամ նյութափոխանակային ակտիվությամբ օժտված մարդկային (մարդու արյուն, արյան պատրաստուկ, մարդկային ծագման այլ նյութեր) և (կամ) կենդանական (միկրոօրգանիզմ, ինտակտ կենդանի, օրգանների մասեր, կենդանիների արտազատուկներ, տոքսիններ, հանուկներ, արյունից ստացված արտադրանք, կենդանական ծագման այլ նյութեր) և (կամ) բուսական (միկրոօրգանիզմներ, բույսեր, բույսերի մասեր, բուսական արտազատուկներ, հանուկներ, բուսական ծագման այլ նյութեր) և (կամ) քիմիական (տարրեր, բնական քիմիական նյութեր, քիմիական փոխակերպման կամ սինթեզի արդյունքում ստացված քիմիական արտադրանք, քիմիական ծագման այլ նյութեր) ծագման նյութ.

9) դեղաբուսական հումք՝ չմշակված, չորացված կամ թարմ վիճակում դեղեր պատրաստելու կամ արտադրելու համար օգտագործվող ամբողջական, մասնատված կամ կտրված բույսեր, բույսերի առանձին հատվածներ կամ ջրիմուռներ կամ սնկեր կամ քարաքոսներ.

10) օժանդակ նյութ՝ ցանկացած բաղադրիչ, որը չի հանդիսանում դեղի ակտիվ բաղադրատարր կամ փաթեթանյութ.

11) հետազոտվող դեղագործական արտադրանք՝ կլինիկական փորձարկման ընթացքում որպես փորձանմուշ կամ համեմատական նմուշ օգտագործվող որոշակի

դեղաձևով ակտիվ բաղադրատարր կամ պլացեբո (ակտիվ բաղադրատարր չպարունակող արտադրանք), ինչպես նաև այն գրանցված դեղը, որի կիրառման ուղին կամ արտադրությունը տարբերվում է գրանցված դեղից (դեղաձևով կամ փաթեթավորմամբ), կամ կիրառման տվյալ ցուցումը գրանցված չէ կամ հետազոտվում է գրանցված դեղաձևի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու նպատակով.

12) նոր (օրիգինալ) դեղ՝ առաջին անգամ ստեղծված նոր ակտիվ բաղադրատարր(եր)ով դեղ.

13) վերարտադրված (գեներիկ) դեղ՝ օրիգինալ դեղին իր ազդեցությամբ համարժեք, նույն ակտիվ բաղադրատարր(եր)ով, նույն դեղաչափով, նույն դեղաձևով արտադրված դեղ, որի կենսահամարժեքությունը օրիգինալի հետ ապացուցված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

14) կենսանմանակ՝ կենսատեխնոլոգիական և կենսաբանական ծագման վերարտադրված դեղ.

15) կեղծ դեղ, կեղծ դեղանյութ՝ արտադրանք, որը կանխամտածված և (կամ) խաբեությամբ ներկայացված է իսկության (ներառյալ՝ փաթեթավորում, պիտակավորում, անվանում, բաղադրակազմ, առանձին բաղադրատարրերի քանակներ) և (կամ) ծագման (ներառյալ՝ արտադրող, արտադրման երկիր, ծագման երկիր, գրանցման հավաստագրի իրավատեր) և (կամ) բաշխման շղթայի տվյալների (ներառյալ՝ արձանագրություններ, ուղեկցող փաստաթղթեր) մասին ոչ ճիշտ տեղեկատվությամբ.

16) հսկվող դեղեր և դեղանյութեր՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգում անվանաքանակական հաշվառման ենթակա դեղեր և դեղանյութեր, որոնց ցանկը սահմանում է առողջապահության ~~բնագավառում պետական կառավարման լիազոր~~ **հարցերով լիազորված պետական կառավարման** մարմինը.

17) հիմնական դեղեր՝ Հայաստանի Հանրապետության բնակչության առողջապահական առաջնահերթ կարիքները բավարարելու համար անհրաժեշտ, համընդհանուր անվանմամբ նշվող դեղեր.

18) արտադրություն՝ սերիական թողարկման գործունեություն, որն ընդգրկում է կամ ելանյութերի ձեռք բերումը կամ արտադրական տեխնոլոգիական գործընթացները կամ որակի հսկումը կամ փաթեթավորումը կամ վերափաթեթավորումը կամ պիտակավորումը, վերապիտակավորումը կամ պահպանումը կամ սերիայի բաց թողնումը և հարակից հսկողությունը.

19) դեղ արտադրող՝ դեղերի արտադրության լիցենզիա ստացած իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր.

20) դեղերի շրջանառություն՝ դեղի ստեղծում կամ նախակլինիկական հետազոտություն կամ կլինիկական փորձարկում կամ ստանդարտացում կամ արտադրություն կամ պատրաստում կամ դեղաբուսական հումքի մշակում կամ որակի հսկողություն կամ գրանցում կամ ներմուծում կամ արտահանում կամ փոխադրում, պահպանում կամ իրացում կամ բաշխում կամ կիրառում կամ արդյունավետության, անվտանգության և կողմնակի ազդեցությունների դիտարկում կամ տեղեկատվության կամ գովազդի տարածում կամ ոչնչացում.

21) դեղերի շրջանառության սուբյեկտներ՝ դեղերի շրջանառության որևէ փուլն իրականացնող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերեր.

22) դեղային քաղաքականություն՝ առողջապահության բնագավառում իրականացվող քաղաքականության բաղկացուցիչ մաս, որի նպատակը բնակչությանն անվտանգ,

արդյունավետ, որակյալ, մատչելի դեղերով, ինչպես նաև դրանց ռացիոնալ կիրառումն ապահովելն է.

23) անվտանգություն՝ առողջությանը վնասելու հնարավոր անթույլատրելի ռիսկի բացակայություն.

24) արդյունավետություն՝ դեղի սպասվելիք դրական ազդեցության դրսևորման աստիճանի բնութագիր.

25) որակ՝ համապատասխանությունը սույն օրենքով սահմանված կարգով հաստատված ցանկում ներառված դեղագրքերի պահանջներին և (կամ) սույն օրենքով նախատեսված կարգով հաստատված որակի հատկորոշիչներին (սպեցիֆիկացիաներին).

26) պատշաճ լաբորատորային գործունեություն՝ առողջության և շրջակա միջավայրի անվտանգության ոչ կլինիկական հետազոտությունների պլանավորման, իրականացման, դիտարկման, արձանագրման, արխիվացման և հաշվետվության կազմակերպչական գործընթացներին և պայմաններին վերաբերող որակի ապահովման համակարգ.

27) պատշաճ կլինիկական գործունեություն՝ կլինիկական փորձարկումների նախագծման, ղեկավարման, անցկացման, դիտարկման, վերստուգումների, տվյալների գրանցման, վերլուծության, հաշվետվության պահանջներ, որոնցով երաշխավորվում են տվյալների և արձանագրված արդյունքների հավաստիությունն ու ճշգրտությունը, ինչպես նաև փորձարկվողների իրավունքների, անվտանգության և տվյալների գաղտնիության պաշտպանության ապահովումը.

28) պատշաճ արտադրական գործունեություն՝ որակի ապահովման համակարգի բաղադրիչ, որով երաշխավորվում է, որ արտադրանքն անփոփոխ արտադրվում և հսկվում է նախատեսված նշանակմանը և գրանցման պահանջներին համապատասխանող որակի հատկորոշիչների (սպեցիֆիկացիաների) համաձայն.

29) պատշաճ բաշխման գործունեություն՝ որակի ապահովման համակարգի բաղադրիչ, որը բաշխման գործընթացում իրականացվող գործողությունների համապատասխան հսկողության միջոցով երաշխավորում է արտադրանքի հաստատուն որակը, ինչպես նաև միջոց է բաշխման շղթա կեղծ, չգրանցված, անօրինական ներմուծված, գողացված, անորակ, չհայտարարագրված բաղադրատարրեր պարունակող և (կամ) սխալ մակնշված արտադրանքի ներթափանցումը կանխելու համար.

30) դեղաբույսերի պատշաճ մշակման և հավաքման գործունեություն՝ որակի ապահովման համակարգի բաղադրիչ, որով երաշխավորվում է դեղաբուսական հումքի որակը բուսական դեղի անփոփոխ արտադրության համար.

31) պատշաճ պահպանման գործունեություն՝ որակի ապահովման համակարգի բաղադրիչ, որով պահման ընթացքում համապատասխան հսկողության միջոցով երաշխավորվում է արտադրանքի հաստատուն որակը.

32) պիտանիության ժամկետ՝ կայունության ուսումնասիրությունների արդյունքում որոշված ժամանակահատված, որի ընթացքում սույն օրենքով սահմանված կարգով հաստատված ցանկում ներառված դեղագրքերի և (կամ) որակի հատկորոշիչներին (սպեցիֆիկացիաներին) համապատասխան պայմաններում պահպանելու դեպքում որակի ցուցանիշները մնում են անփոփոխ կամ փոփոխվում են հաստատված սահմաններում.

33) դեղագիրք (ֆարմակոպեա)՝ դեղագրքային հոդվածների, դեղերի և դրանց բաղադրատարրերի որակը վերլուծելու, հսկելու մեթոդների և այլ չափորոշիչ պահանջների ժողովածու: Հայաստանի Հանրապետությունում գործող դեղագրքերի ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

34) դեղագրքային հոդված՝ դեղերի և դրանց բաղադրատարրերի որակի ցուցանիշների և հսկելու մեթոդների նկարագրություն.

35) նախակլինիկական հետազոտություններ՝ դեղաբանական ակտիվ բաղադրատարրի անվտանգությունը և արդյունավետությունը գնահատելու նպատակով լաբորատորային պայմաններում ակտիվ բաղադրատարրի ֆիզիկական, քիմիական, կենսաբանական, մանրէաբանական, դեղագործական, դեղաբանական, թունաբանական և այլ հետազոտություններ՝ առանց մարդու ներգրավման.

36) կլինիկական փորձարկումներ (հետազոտություններ)՝ մարդկանց կամ կենդանիների վրա (անասնաբուժական դեղերի դեպքում) իրականացվող փորձարկում (հետազոտություն), որով նախատեսվում է հայտնաբերել կամ հաստատել հետազոտվող դեղագործական արտադրանք(ներ)ի կլինիկական, դեղաբանական և (կամ) այլ ֆարմակոդինամիկական հատկությունները և (կամ) հայտնաբերել դրա (դրանց) կողմնակի ազդեցությունները և (կամ) ուսումնասիրել մեկ կամ մի քանի հետազոտվող դեղագործական արտադրանքի՝ օրգանիզմում ներծծման, բաշխման, մետաբոլիզմի և (կամ) արտազատման գործընթացը՝ դրա (դրանց) անվտանգությունը և (կամ) արդյունավետությունը գնահատելու նպատակով.

37) դեղատոմս՝ դեղի՝ թղթային կամ էլեկտրոնային կարգով գրավոր նշանակում այդ իրավասությունն ունեցող բժշկի կողմից՝ դեղը պատրաստելու և (կամ) պատրաստի դեղը բաց թողնելու նպատակով.

38) դեղագրություն՝ դեղի հաստատուն բաղադրակազմ՝ դեղաձևի նկարագրությամբ, որում ակտիվ և այլ բաղադրատարրերը թվարկված են դեղի նպատակային ազդեցության կարևորության հաջորդականությամբ և դեղը պատրաստելու համար անհրաժեշտ քանակներով.

39) գրանցամատյան՝ Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով գրանցում ստացած դեղերի ռեգիստր.

40) գրանցման հավաստագիր՝ Հայաստանի Հանրապետությունում դեղի՝ օրենքով սահմանված կարգով գրանցում ստանալու փաստը հաստատող պաշտոնական փաստաթուղթ.

41) դեղերի մեծածախ իրացում՝ գործունեության տեսակ, որը ներառում է մատակարարի կողմից դեղ արտադրողից կամ դեղի գրանցման հավաստագրի իրավատիրոջից կամ այլ մատակարարից դեղեր ձեռք բերելը կամ ներմուծելը կամ արտահանելը կամ պահպանելը կամ իրացնելը (բաշխելը), բացառությամբ սպառողներին դեղերի իրացման.

42) մատակարար՝ սահմանված կարգով մեծածախ իրացման լիցենզիա ստացած իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր.

43) դեղերի մանրածախ իրացում՝ դեղերի իրացում կամ բաց թողնում սպառողներին.

44) դեղատնային գործունեություն՝ սույն օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան՝ դեղերի և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած այլ ապրանքատեսակների մեծածախ ձեռքբերում, պահպանում և մանրածախ իրացում կամ բաց թողնում, տեղեկատվություն և խորհրդատվություն, առողջ ապրելակերպի քարոզչություն, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմանների առկայության դեպքում դեղերի պատրաստում կամ առաքում.

45) դեղատուն՝ դեղատնային գործունեության իրականացման վայր.

46) բժշկական հաստատության դեղատուն՝ բժշկական հաստատության կառուցվածքային ստորաբաժանում, որն իրականացնում է դեղատնային գործունեություն բժշկական հաստատության կարիքների համար, բացառությամբ դեղերի իրացման: Բժշկական հաստատության դեղատան շրջանակներում իրականացվող գործունեությունը ենթակա է լիցենզավորման բժշկական օգնության և սպասարկման գործունեության համապատասխան տեսակի շրջանակներում.

47) բուժական ցուցում՝ ցուցում հիվանդության բուժման և դեղաբանական ազդեցության վերաբերյալ.

48) զուգահեռ ներմուծում՝ գրանցված դեղի ներմուծումը (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու միջոցով դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումքի և հետազոտվող դեղագործական արտադրանքի ներս բերում) Հայաստանի Հանրապետություն ոչ անմիջապես Հայաստանի Հանրապետությունում գրանցման հավաստագրի իրավատիրոջից կամ նրանից պատշաճ լիազորություններ ստացած անձից.

49) համընդհանուր անվանում՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից դեղի ակտիվ բաղադրատարրին տրված միջազգային չպատենտավորվող անուն կամ դրա բացակայության դեպքում համընդհանուր կիրառվող (գիտական կամ քիմիական) անվանում: Եթե դեղը պարունակում է մեկից ավելի ակտիվ բաղադրատարրեր, ապա որպես տվյալ դեղի համընդհանուր անվանում թվարկվում են բոլոր ակտիվ բաղադրատարրերի համընդհանուր անվանումները.

50) հիմնական դեղերի ցանկ՝ հիմնական դեղերի համընդհանուր անվանումը, դեղաձևը, դեղաչափն ընդգրկող ցանկ.

51) փոխհատուցվող դեղեր՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շահառուներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին պետության կողմից երաշխավորված կարգով դեղերի արժեքի լրիվ կամ մասնակի փոխհատուցմամբ տրամադրվող դեղեր.

52) փոխհատուցվող դեղի հենակետային գին՝ փոխհատուցվող դեղի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գնում իրականացնելու համար սույն օրենքով նախատեսված կարգով հաստատված ելակետային գին.

53) փոխհատուցվող դեղի մեծածախ առավելագույն հավելագին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ մեծածախ կարգով գնում իրականացնելու դեպքում փոխհատուցվող դեղի հենակետային գնի նկատմամբ սույն օրենքով նախատեսված կարգով հաստատված առավելագույն թույլատրելի հավելյալ գնի չափ՝ տոկոսային արտահայտությամբ.

54) փոխհատուցվող դեղի մանրածախ առավելագույն հավելագին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ մանրածախ կարգով գնում իրականացնելու դեպքում փոխհատուցվող դեղի հենակետային գնի նկատմամբ սույն օրենքով նախատեսված կարգով հաստատված առավելագույն թույլատրելի հավելյալ գնի չափ՝ տոկոսային արտահայտությամբ.

55) փոխհատուցվող դեղերի գների ցանկ՝ առողջապահության ~~բնագավառում պետական կառավարման լիազոր~~ **հարցերով լիազորված պետական կառավարման** մարմնի հաստատած ցուցակ, որտեղ սահմանվում են փոխհատուցվող դեղերի համընդհանուր անվանումը, դեղաձևը, դեղաչափը, հենակետային գինը, մեծածախ և մանրածախ առավելագույն հավելագները.

56) դեղի առևտրային անվանում՝ գրանցված դեղի անվանում, որը կարող է համընկնել կամ չհամընկնել դեղի համընդհանուր անվանման հետ և կարող է ներառել նաև ապրանքային նշան կամ գրանցման հավաստագրի իրավատիրոջ անվանումը կամ դեղաձևը կամ դեղաչափը:

Հոդված 6. Առողջապահության ~~բնագավառում պետական կառավարման լիազոր~~ **հարցերով լիազորված պետական կառավարման** մարմնի իրավասությունը դեղերի շրջանառության պետական կարգավորման բնագավառում

1. Առողջապահության ~~բնագավառում պետական կառավարման լիազոր~~ **հարցերով լիազորված պետական կառավարման** մարմինը (այսուհետ՝ Լիազոր մարմին) դեղերի շրջանառության պետական կարգավորման բնագավառում իրականացնում է՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը դեղերի շրջանառության ոլորտում.

2) իր իրավասության շրջանակներում դեղերի շրջանառության կարգավորում.

3) դեղերի շրջանառության ոլորտի՝ օրենքով նախատեսված գործունեության տեսակների լիցենզավորում.

4) դեղերի պետական գրանցում.

5) դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննությունների կազմակերպում և իրականացում.

6) դեղի գրանցման, պատշաճ արտադրական գործունեության, պատշաճ բաշխման գործունեության հավաստագրի տրամադրման համար և սույն օրենքով նախատեսված մասնագիտական այլ դիտարկումների ապահովում.

7) դեղերի գրանցամատյանի վարման ապահովում.

8) դեղերի արդյունավետ կիրառման և դեղերի կողմնակի ազդեցությունների մասնագիտական դիտարկման և համապատասխան երաշխավորությունների մշակման ապահովում.

9) միջազգային համագործակցություն.

10) միջգերատեսչական համագործակցություն.

11) դեղային պետական քաղաքականության ծրագրերի մշակում և դրանց իրականացման դիտարկում.

12) սույն օրենքով և այլ օրենքներով իրեն վերապահված գործառույթներ:

Հոդված 21. Դեղերի, դեղանյութերի, հետազոտվող դեղագործական արտադրանքի և դեղաբուսական հումքի ներմուծումը և արտահանումը

1. Հայաստանի Հանրապետության տարածք դեղերը, դեղանյութերը, դեղաբուսական հումքը և հետազոտվող դեղագործական արտադրանքը ներմուծվում (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու միջոցով դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի և հետազոտվող դեղագործական արտադրանքի ներս բերում (այսուհետ՝ ներմուծում)) և Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանվում են (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու միջոցով դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումքի և հետազոտվող դեղագործական արտադրանքի

դուրս բերում (այսուհետ՝ արտահանում)) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգի համաձայն:

2. Հայաստանի Հանրապետության տարածք դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումք և հետազոտվող դեղագործական արտադրանք ներմուծելու իրավունք ունեն՝

1) մատակարարները՝ դեղերի մեծածախ իրացման լիցենզիայի առկայության դեպքում.

2) առանց սույն օրենքով նախատեսված մեծածախ իրացման լիցենզիայի առկայության՝

ա. իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը, որոնց գործունեությունն առնչվում է դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումք հետազոտելու, փորձարկումներ անցկացնելու, որակի, արդյունավետության, անվտանգության հսկողության հետ՝ այդ աշխատանքների համար պահանջվող ծավալների և տեսականու սահմաններում,

բ. օրենսդրությամբ սահմանված կարգով բարեգործական կամ մարդասիրական որակված ծրագրերի շրջանակներում դեղեր ներմուծող իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը,

գ. Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրության լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը՝ արտադրական նպատակներով դեղանյութեր և դեղաբուսական հումք ներմուծելու դեպքում,

դ. օտարերկրյա արտադրողների ներկայացուցչությունները կամ ներկայացուցիչները՝ գրանցման և (կամ) փորձարկման նմուշներ (դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումք, հետազոտվող դեղագործական արտադրանք) և (կամ) ցուցահանդեսային նմուշներ ներմուծելիս կամ արտահանելիս,

ե. ~~պետական կառավարչական հիմնարկները~~ **պետական մարմինները**:

3. Արտադրական նպատակով թույլատրվում է ներմուծել այն դեղանյութերը և դեղաբուսական հումքը, որոնց տվյալները ներկայացված են վերջնական արտադրանքի գրանցման փաստաթղթերում, բացառությամբ դեղաձևի մշակման և միայն արտահանման նպատակով արտադրվող դեղերի համար ներմուծվող դեղանյութերի և դեղաբուսական հումքի: Դեղ արտադրողի կողմից դեղանյութեր կամ դեղաբուսական հումք ներմուծելու դեպքում ներմուծման հավաստագիր տրամադրելիս չի կատարվում լաբորատոր փորձաքննություն:

4. Դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումք, հետազոտվող դեղագործական արտադրանք ներմուծել թույլատրվում է ներմուծման հավաստագրի հիման վրա, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի: Արտահանման դեպքում հավաստագիր տրամադրվում է արտահանողի ցանկությամբ: Ներմուծման կամ արտահանման հավաստագրերը տրվում են համապատասխան փորձագիտական եզրակացության հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, հետազոտվող դեղագործական արտադրանքի ներմուծման կամ արտահանման համար իրականացվող փորձաքննության կարգը և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

5. Հայաստանի Հանրապետության տարածք կարող են ներմուծվել Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերը, սույն օրենքի համաձայն, Հայաստանի Հանրապետություն կարող են ներմուծվել դեղերի մեծածախ իրացման լիցենզիա ունեցող ցանկացած սուբյեկտի կողմից:

6. Ներմուծման հավաստագրի տրամադրման համար դեղի գրանցված լինելը պարտադիր չէ՝

1) արտակարգ իրավիճակների կամ դրանց առաջացման վտանգի առկայության դեպքում.

2) բարեգործական և մարդասիրական ծրագրերի շրջանակներում ներմուծվող դեղերի համար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված միջազգային մասնագիտական կազմակերպության անդամ երկրում գրանցումը կամ Առողջապահության համաշխարհային կազմակերպության նախաորակավորումը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում՝ Լիազոր մարմնի հետ սահմանված կարգով համաձայնեցնելուց հետո.

3) սույն օրենքի 16-րդ հոդվածի 23-րդ մասի 4-6-րդ կետերով նախատեսված դեպքերում.

4) Լիազոր մարմնի գրավոր որոշման առկայության դեպքում՝ պետության կարիքների կամ առանձին հիվանդների համար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու նպատակով դեղերի ներմուծման դեպքում.

5) այն դեղերի մեծաքանակ կիսաարտադրանքների համար, որոնք անցել են արտադրության բոլոր փուլերով, բացառությամբ վերջնական փաթեթավորման ու մակնշման, և որոնց վերջնական արտադրանքը Հայաստանի Հանրապետությունում գրանցված է կամ ներմուծվում է գրանցման նպատակով.

6) կենդանաբանական այգիների կենդանիների համար նախատեսված դեղերի ներմուծման դեպքում:

7. Ներմուծման կամ արտահանման հավաստագիր չի պահանջվում՝

1) օտարերկրյա պետություն մեկնող և օտարերկրյա պետությունից ժամանող ֆիզիկական անձի բուժման կուրսի կամ անձնական օգտագործման դեղերի համար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած քանակներով.

2) միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցիչների, դրանց աշխատակազմի և նրանց հետ համատեղ ապրող ընտանիքների անդամների կողմից իրենց սեփական կարիքների բավարարման նպատակով ներմուծվող դեղերի համար.

3) Հայաստանի Հանրապետություն ժամանող տրանսպորտային միջոցների վարորդների, անձնակազմի անդամների և ուղևորների բժշկական օգնության և սպասարկման անհրաժեշտ դեղերի համար.

4) միջազգային մշակութային և սպորտային միջոցառումների, միջազգային հետազոտական խմբերի մասնակիցների բժշկական օգնության և սպասարկման անհրաժեշտ դեղերի համար:

8. Հայաստանի Հանրապետությունում դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, հետազոտվող դեղագործական արտադրանքի ներմուծումն ու արտահանումը մերժվում են, եթե՝

1) ներկայացված տվյալները կամ փաստաթղթերը թերի են կամ ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված, կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով պահանջվող փաստաթղթերից որևէ մեկը բացակայում է, և եթե սահմանված ժամկետում թերությունները չեն վերացվել.

2) ներմուծվող դեղերը Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում չունեն, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի.

3) ներմուծվող դեղերի կամ դեղանյութերի կամ դեղաբուսական հումքի կամ հետազոտվող դեղագործական արտադրանքի (այսուհետ՝ ներմուծվող արտադրանք) որակական ցուցանիշները չեն համապատասխանում սույն օրենքով սահմանված կարգով հաստատված ցանկում ներառված դեղագրքերի և որակի հատկորոշիչների (սպեցիֆիկացիաների) պահանջներին.

4) ներմուծվող արտադրանքը ժամկետանց է.

5) ներմուծվող արտադրանքի պիտանիության մնացորդային ժամկետը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջներին.

6) արտադրանքը և դրան ուղեկցող փաստաթղթերի տվյալները չեն համապատասխանում միմյանց.

7) ներմուծվող դեղի փաթեթավորման գրառումներում բացակայում կամ գրանցանմուշի հետ չեն համապատասխանում դեղը բնութագրող այն ցուցանիշները, որոնք արտացոլված են գրանցամատյանում.

8) ներմուծվող արտադրանքի փաթեթավորման գրառումներում կամ ներդիր-թերթիկում բացակայում են դրա բաղադրության մեջ օգտագործված և Լիազոր մարմնի սահմանած փաթեթի վրա պարտադիր նշման ենթակա օժանդակ նյութերը, իսկ ներարկման, տեղային օգտագործման և ակնաբուժության մեջ կիրառվող դեղերի համար բացակայում կամ գրանցանմուշի հետ չի համապատասխանում որևէ օժանդակ նյութի նշումը.

9) ներմուծվող արտադրանքի փաթեթավորման գրառումներում բացակայում կամ գրանցանմուշի հետ չի համապատասխանում դեղի պիտանիության ժամկետի նշումը.

10) ներմուծվող արտադրանքի փաթեթավորման գրառումներում բացակայում կամ գրանցանմուշի հետ չեն համապատասխանում դեղի պահպանման հատուկ պայմանների նշումները.

11) ներմուծվող արտադրանքի փաթեթավորման գրառումներում բացակայում է արտադրական սերիայի նշումը.

12) ներմուծվող արտադրանքի փաթեթավորման գրառումներում հատուկ նախազգուշացումները բացակայում են կամ չեն համապատասխանում գրանցանմուշին.

13) ներմուծվող արտադրանքի փաթեթավորման գրառումներում առաջնային փաթեթը բացելուց հետո դրա օգտագործման թույլատրելի ժամկետը բացակայում է կամ չի համապատասխանում գրանցանմուշին.

14) խախտված է դեղի և (կամ) դեղանյութի տեղափոխման և պահպանման ջերմաստիճանային ռեժիմը («սառցային շղթան»).

15) ներմուծվող դեղի փաթեթավորման գրառումների լեզուն չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ դեղերի փաթեթավորման համար ընդունված լեզուներից որևէ մեկին:

9. Ներմուծվող գրանցված դեղի հայերեն ներդիր-թերթիկի բացակայությունը հիմք չէ դեղի ներմուծումը մերժելու համար: Եթե դեղը Հայաստանի Հանրապետություն ներմուծելիս ապահովված չէ հայերեն ներդիր-թերթիկով, ապա դրա՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներմուծումից հետո հայերեն ներդիր-թերթիկն ապահովվում է սույն օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն:

10. Դեղերի զուգահեռ ներմուծման թույլտվության տրամադրման կարգն ու առանձնահատկությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

11. Դեղերի զուգահեռ ներմուծման թույլտվության տրամադրումը մերժվում է, եթե՝

1) դեղի արտադրության երկիրը կամ արտադրողը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի արտադրության երկրին կամ արտադրողին.

2) դեղաձևը կամ դեղաչափը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի դեղաձևին կամ դեղաչափին.

3) դեղի պիտանիության ժամկետը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի պիտանիության ժամկետին.

4) դեղի ակտիվ բաղադրատարրը այլ է, քան Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի ակտիվ բաղադրատարրը.

5) դեղի՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության սահմանած անատոմիական, բուժական, քիմիական դասակարգումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի անատոմիական, բուժական, քիմիական դասակարգմանը.

6) դեղի առևտրային անվանումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի առևտրային անվանմանը.

7) դեղի կիրառման ցուցումները կամ հակացուցումները չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի կիրառման ցուցումներին կամ հակացուցումներին.

8) դեղը գրանցված չէ այն երկրում, որտեղից ձեռք է բերվել և ներմուծվում է Հայաստանի Հանրապետություն.

9) Հայաստանի Հանրապետությունում կամ այն երկրում, որից դեղը ներմուծվում է, դադարեցվել է տվյալ դեղի շրջանառությունը՝ դեղի անվտանգության, արդյունավետության և որակի նկատառումներից ելնելով:

12. Եթե զուգահեռ ներմուծվող դեղի փաթեթավորման կամ պիտակավորման լեզուն տարբերվում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի փաթեթավորման կամ պիտակավորման լեզվից, ապա դեղի մեծածախ իրացման լիցենզիա ստացած մատակարարը մինչև իրացումը իրականացնում է վերափաթեթավորում և վերապիտակավորում:

13. Զուգահեռ ներմուծվող դեղը դեղի մեծածախ իրացման լիցենզիա ստացած մատակարարի կողմից պետք է ապահովվի Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի ներդիր-թերթիկով՝ գրառումներում ավելացնելով իր անվանումը, գտնվելու վայրը, տվյալներ՝ սպառողների հետ կապը ապահովելու համար:

14. Զուգահեռ ներմուծման դեպքում դեղի մեծածախ իրացման լիցենզիա ստացած մատակարարը կրում է պատասխանատվություն՝ սույն օրենքի 16-րդ հոդվածի 22-րդ մասին համապատասխան:

15. Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրության լիցենզիա ունեցող անձը մինչև յուրաքանչյուր տարվա հունվարի 31-ը Լիազոր մարմին է ներկայացնում հաշվետվություն նախորդ տարում արտահանված արտադրանքի վերաբերյալ՝ ներառելով արտադրանքի անվանման, դեղաչափի, դեղաձևի, արտադրողի, սերիայի համարի, արտահանված քանակի, արտահանման երկրի տվյալներ: Հաշվետվության ձևը և ներկայացման կարգը սահմանում է Լիազոր մարմինը:

16. Դեղերի մեծածախ իրացման լիցենզիա ունեցող անձը լիցենզիայի գործողության ժամանակահատվածում (այդ թվում՝ լիցենզիայի գործողության կասեցման ժամանակահատվածում) չի կարող իրականացնել օրենքով նախատեսված դեղատնային

գործունեություն, բացառությամբ այն դեպքերի, երբ ստեղծվում է առանձին իրավաբանական անձ, որն ունի համապատասխան մանրածախ իրացման լիցենզիա:

17. Դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի և հետազոտվող դեղագործական արտադրանքի ներմուծման կամ արտահանման հավաստագիր տալու համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափով և կարգով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին

ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **անձնավորված հաշվառում՝** ըստ «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.

2) **անհատ ձեռնարկատեր՝** ըստ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, բացառությամբ «Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի ցանկում ընդգրկված գործունեության տեսակներով զբաղվող անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ բացառապես ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվող անհատ ձեռնարկատերերի.

3) **անուիտետ՝** ըստ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.

4) **աշխատավարձ՝** աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ, ինչպես նաև պայմանագրային եկամուտ (աշխատավարձի ու դրան հավասարեցված այլ վճարումների ցանկը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի, կենսաթոշակային ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի և հարկային մարմնի համատեղ հրամանով).

5) **ապահովագրական ընկերություն՝** ըստ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.

6) **գործատու՝** Հայաստանի Հանրապետության պետական ռեգիստրում գրանցված իրավաբանական անձ, օտարերկրյա իրավաբանական անձի հիմնարկ, օտարերկրյա իրավաբանական անձի մասնաճյուղ կամ ներկայացուցչություն, անհատ ձեռնարկատեր, հիմնարկ, տեղական ինքնակառավարման մարմին, ինչպես նաև նոտար, որն աշխատանքային կամ աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա կամ օրենքով սահմանված կարգով փաստացի օգտագործում է քաղաքացիների աշխատանքը (ծառայությունները)՝ նրանց վճարելով եկամուտներ.

Գործատու է համարվում նաև այն միջազգային կազմակերպությունը, որը միջազգային պայմանագրով նախատեսված դեպքերում այդ միջազգային կազմակերպությունում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող (պաշտոնեական պարտականությունները կատարող) Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն կատարում է կենսաթոշակի իրավունք տվող վճարներ.

7) ***(կետն ուժը կորցրել է 21.12.17 ՀՕ-291-Ն)***

8) **երաշխիքային ֆոնդ՝** սույն օրենքի 46-րդ հոդվածի համաձայն ստեղծված ֆոնդ.

9) **ինքնազբաղված անձ՝** օրենքով չարգելված որևէ գործունեությունից եկամուտ ստացող (բացառությամբ աշխատավարձի և դրան հավասարեցված եկամտի, ձեռնարկատիրական եկամտի և պայմանագրային եկամտի)՝ վարձու աշխատող, անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձ (այդ թվում՝ գյուղատնտեսական արտադրանքի իրացումից եկամուտ ստացող գյուղատնտեսական արտադրանք արտադրող, քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա եկամուտ

ստացող, «Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N1 հավելվածի ցանկում ընդգրկված գործունեության տեսակներով զբաղվող), ինչպես նաև «Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N1 հավելվածի ցանկում ընդգրկված գործունեության տեսակներով զբաղվող անհատ ձեռնարկատեր և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ բացառապես ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվող անհատ ձեռնարկատեր.

10) **ծրագրային վճար՝** մասնակցի կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո նրա անունով բացված կենսաթոշակային հաշվում հաշվառված կենսաթոշակային ֆոնդի փայերի մարման հաշվին ամսական կտրվածքով սահմանված կարգով տրամադրվող գումար.

11) **կամուրջ հաշիվ՝** ֆինանսական ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնի միասնական գանձապետական հաշվում բացված ենթահաշիվ, որին միասնական հաշվից մուտքագրվում են սոցիալական վճարները՝ մասնակիցների ռեեստրին փոխանցելու համար.

11.1) **միասնական հաշիվ՝** ըստ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի.

12) **կենսաթոշակային գաղտնիք՝** կուտակային բաղադրիչին կամ կամավոր կենսաթոշակային բաղադրիչին անձի մասնակցության հետ կապված՝ գործատուին, պետական լիազոր մարմիններին, Կենտրոնական բանկին, մասնակիցների ռեեստրը վարողին, հաշվի օպերատորին, կենսաթոշակային ֆոնդի կառավարչին, պահառուին, ինչպես նաև երաշխիքային ֆոնդը կառավարող անձին կենսաթոշակային հաշվի, անձի համար (օգտին) կատարված կուտակային հատկացումների, կամավոր կենսաթոշակային վճարների վերաբերյալ հայտնի դարձած որևէ տեղեկություն, անձի առևտրային, ապահովագրական, բանկային կամ ծառայողական գաղտնիքը, ինչպես նաև մասնակցի վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը մասնակիցը մտադիր է եղել գաղտնի պահել, և գործատուն, պետական լիազոր մարմինները, Կենտրոնական բանկը, մասնակիցների ռեեստրը վարողը, հաշվի օպերատորը, կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը, պահառուն, ինչպես նաև երաշխիքային ֆոնդը կառավարող անձը տեղյակ են եղել կամ պարտավոր էին տեղյակ լինել այդ մասին.

13) **կամավոր կենսաթոշակային վճար՝** կամավոր կենսաթոշակ ստանալու նպատակով մասնակցի և(կամ) այլ անձի կողմից մասնակցի համար (օգտին) կատարվող վճար.

14) **կամավոր կենսաթոշակ՝** կամավոր կենսաթոշակային բաղադրիչի շրջանակներում սույն օրենքով սահմանված կանոնների համաձայն վճարվող կենսաթոշակ.

15) **կենսաթոշակային հաշիվ՝** մասնակիցների ռեեստրը վարողի մոտ սոցիալական վճար կատարող կամ օրենքով սահմանված կարգով կենսաթոշակային ֆոնդի փայեր ձեռք բերած անձի անունով բացված հաշիվ, որտեղ հաշվառվում են ձեռք բերված պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերը, ինչպես նաև տեղեկություններ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի քանակի, այդ փայերի հաշվարկային արժեքի, այդ փայերը ձեռք բերելու համար կատարված կուտակային հատկացումների վերաբերյալ, օրենքով կամ իրավական այլ ակտերով սահմանված այլ տեղեկություններ.

16) **կենսաթոշակային տարիք՝** «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիք.

17) **կենսաթոշակային ֆոնդ՝** ֆոնդ, որի ակտիվները ձևավորվում են «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից պարտադիր կարգով կատարվող կուտակային հատկացումների (պարտադիր կենսաթոշակային ֆոնդ) կամ կամավոր կենսաթոշակային վճարների (կամավոր կենսաթոշակային ֆոնդ) և դրանց ներդրման հաշվին, և որի մասնակիցներին ֆոնդի ակտիվներից վճարումները կատարվում են (վերադարձվում են ֆոնդի ակտիվներում մասնակցի փային համապատասխանող դրամական միջոցները) կենսաթոշակի ձևով մասնակցի կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո, ինչպես նաև «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ դեպքերում.

18) **կենսաթոշակային ֆոնդի ակտիվներ՝** տվյալ կենսաթոշակային ֆոնդի փայերի ձեռք բերման նպատակով կատարված կուտակային հատկացումների և կամավոր կենսաթոշակային վճարների, դրանց հաշվին ձեռք բերված ակտիվների և դրանց կառավարման արդյունքում ստացված եկամուտների հանրագումար.

19) **կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ՝** «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ կենսաթոշակային ֆոնդի կառավարման իրավունք ունեցող իրավաբանական անձ.

20) **Կենտրոնական բանկ՝** Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ.

21) **կուտակային հատկացում՝** սույն օրենքով սահմանված կանոնների համաձայն՝ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայեր ձեռք բերելու նպատակով սոցիալական վճար կատարող անձի համար (օգտին) կատարվող դրամական հատկացում, որը ձևավորվում է այդ սոցիալական վճարներից և սույն օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող միջոցներից.

22) **կուտակային կենսաթոշակ՝** կուտակային բաղադրիչի շրջանակներում սույն օրենքի 11-րդ գլխով սահմանված կանոնների համաձայն վճարվող կենսաթոշակ.

23) **հաշվի օպերատոր՝** Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնի և Կենտրոնական բանկի համատեղ հրամանով սահմանված կազմակերպություն, որը միջնորդավորում է մասնակիցների ռեեստրը վարողի կողմից մասնակիցներին մատուցվող ծառայությունները.

24) **հիմնական կենսաթոշակ՝** ըստ «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.

25) **հանրային ծառայության համարանիշ՝** «Հանրային ծառայությունների համարանիշի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված համարանիշ.

26) **հարկային գործակալ՝** ըստ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի.

27) **ձեռնարկատիրական եկամուտ՝** անհատ ձեռնարկատիրոջ և նոտարի կողմից իրականացվող ձեռնարկատիրական և նոտարական գործունեությունից Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի համաձայն ստացման ենթակա շահութահարկի հարկման բազա (մինչև 2018 թվականը՝ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստացման ենթակա տարեկան հարկվող եկամուտ).

28) **մասնակից՝** սույն օրենքով սահմանված կարգով սոցիալական վճար կատարող (կատարած) անձ, որի համար (օգտին) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից կատարվել է կուտակային հատկացում, կամ որի համար (օգտին) կատարվում են

կամավոր կենսաթոշակային վճարներ, կամ անձ, որն օրենքով սահմանված կարգով ձեռք է բերել պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայեր: Սույն օրենքի իմաստով՝ մասնակից չի հանդիսանում կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը.

29) **մասնակիցների ռեեստր՝** մասնակիցների և նրանց անունով բացված կենսաթոշակային հաշիվներում հաշվառվող պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերի վերաբերյալ տվյալների միասնական համակարգ: Մասնակիցների ռեեստրում առկա ամբողջ տեղեկատվությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության սեփականությունը.

30) **մասնակիցների ռեեստրը վարող՝** իրավաբանական անձ, որը Հայաստանի Հանրապետության կառավարության հետ կնքված պայմանագրի հիման վրա վարում է մասնակիցների ռեեստրը, ինչպես նաև իրականացնում է սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության հետ կնքված պայմանագրով նախատեսված այլ գործառույթներ.

31) **նոտար՝** ըստ «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.

32) **պահառու՝** ըստ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կենսաթոշակային ֆոնդի ակտիվների պահառություն իրականացնող անձ.

33) **պայմանագրային եկամուտ՝** քաղաքացիաիրավական պայմանագրերի համաձայն՝ աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) դիմաց գործատուից ստացված եկամուտ (բացառությամբ ձեռնարկատիրական եկամտի).

34) **«Սահմանված կենսաթոշակներ» սխեմա՝** կամավոր կենսաթոշակային սխեմա, որի դեպքում ապահովագրական ընկերությունը խոստանում է մասնակցին հստակ չափով կենսաթոշակ, կամավոր կենսաթոշակային վճարները կախված են ապահովագրական ընկերության հետ կնքված պայմանագրից և կարող են լինել ոչ կանոնավոր, իսկ կենսաթոշակի չափը ուղղակիորեն կախված չէ կատարված կամավոր կենսաթոշակային վճարների չափից և այդ վճարների ներդրումների եկամտաբերությունից.

35) **«Սահմանված կենսաթոշակային վճար» սխեմա՝** կամավոր կենսաթոշակային սխեմա, որի դեպքում մասնակիցների համար կատարված կամավոր կենսաթոշակային վճարները հաշվարկվում են իրենց եկամտի որոշակի տոկոսի չափով կամ որևէ այլ կանոնավոր հիմքով, իսկ կենսաթոշակի չափը կախված է կատարված կամավոր կենսաթոշակային վճարներից և այդ վճարների ներդրումից ստացված եկամուտների չափից.

36) **սոցիալական վճար՝** սույն օրենքով սահմանված կարգով և չափով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող նպատակային վճար.

37) **սոցիալական վճարի պարտավորություն՝** մասնակից հանդիսացող վարձու աշխատողի համար սոցիալական վճարներ հաշվարկելու և փոխանցելու պարտավորություն ունեցող հարկային գործակալի կողմից վճարվող սոցիալական վճարի և սույն օրենքի դրույթները խախտելու համար հաշվարկված տույժի գումար: Մասնակից հանդիսացող անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի, ինքնազբաղված անձի և հարկային գործակալի պարտականություններից ազատված գործատուի վարձու աշխատողի սոցիալական վճարի գումար.

38) **վարձու աշխատող՝** գործատուի (այդ թվում՝ հարկային գործակալի պարտականություններից ազատված գործատուի) հետ օրենքով սահմանված կարգով աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող անձ, այդ թվում՝ հանրային ծառայող ~~(բացառությամբ Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմինների և Հայաստանի~~

~~փրկարար ծառայության համակարգի հրամանատարական և ոչ հրամանատարական կազմի ծառայողների, քրեակատարողական ծառայողների և դատական ակտերի հարկադիր կատարողների)~~ **(բացառությամբ պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության մարմինների և փրկարար ծառայության համակարգի հրամանատարական և ոչ հրամանատարական կազմի ծառայողների, քրեակատարողական ծառայողների և հարկադիր կատարողների)**, ինչպես նաև քաղաքացիաիրավական պայմանագրերի համաձայն՝ աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) դիմաց գործատուից եկամուտ (բացառությամբ ձեռնարկատիրական եկամտի) ստացող անձ, միջազգային կազմակերպությունում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող (պաշտոնեական պարտականությունները կատարող) Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի համար միջազգային պայմանագրով նախատեսված դեպքերում միջազգային կազմակերպությունը կատարում է կենսաթոշակի իրավունք տվող վճարներ.

39) **փոխկապակցված անձինք՝** ըստ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

Սույն օրենքում օգտագործվող այլ հասկացությունները կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Ներդրումային ֆոնդերի մասին» և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված իմաստով, եթե սույն օրենքի դրույթներից չի բխում դրանց օգտագործման այլ իմաստ:

Հավելված
«Կուտակային կենսաթոշակների մասին»
Հայաստանի Հանրապետության
օրենքի

ՄԱՍՆԱԿՑԻ ԿԱՏԱՐԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՄԲՈՂՋ ԳՈՒՄԱՐԻ՝ ԳՆԱՃՈՎ ՃՇԳՐՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Մասնակցի կողմից սոցիալական վճարներ կատարելու ամբողջ ժամանակահատվածի կատարված սոցիալական վճարների՝ գնաճով ճշգրտումը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ԿՎ}_{\text{գնաճով ճշգրտված ընդհանուր}} = \sum_{n=1}^{N} \left[\text{ԿՎ}_n * \prod_{m=n}^{N-1} (1+i_n)\right],$$

որտեղ՝

1) $\text{ԿՎ}_{\text{գնաճով ճշգրտված ընդհանուր}}$-ը մասնակցի կողմից սոցիալական վճարներ կատարելու ամբողջ ժամանակահատվածի համար նրա կատարած սոցիալական վճարների՝ գնաճով ճշգրտված մեծությունն է.

2) N-ը մասնակցի կողմից սոցիալական վճարներ կատարելու տարիների թիվն է.

3) ԿՎ_n -ն n-րդ տարվա ընթացքում մասնակցի կատարած սոցիալական վճարների գումարն է՝ տարեվերջի դրությամբ.

4) i_n -ն n-րդ տարվան համապատասխանող տարվա տարեկան միջին գնաճի տեմպի պաշտոնական ցուցանիշն է՝ արտահայտված միավորի մասերով: Ընդ որում, n-ը փոփոխվում է տարիների հետընթաց հաշվարկով:

2. Սույն հավելվածի 1-ին կետով սահմանված բանաձևում մասնակցի կողմից օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կենսաթոշակ ստանալու մասին դիմում ներկայացվելու տարվա համար կատարված սոցիալական վճարը գնաճով չի ճշգրտվում: Այն դեպքում, երբ մասնակցի կատարած սոցիալական վճարների գնաճով ճշգրտման ժամանակ դեռևս առկա չէ տվյալ տարվա տարեկան միջին գնաճի տեմպի պաշտոնական ցուցանիշը, ապա հիմք է ընդունվում նախորդ տարվա տարեկան միջին գնաճի տեմպի պաշտոնական ցուցանիշը:

3. Սույն հավելվածում օգտագործված տարեկան միջին գնաճի տեմպի պաշտոնական ցուցանիշ է համարվում ~~Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության~~ **Վիճակագրական կոմիտեի** հրապարակած գնաճի միջին ցուցանիշը տվյալ տարվա համար:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2005 թվականի մարտի 22-ին

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 7. Ահաբեկչության դեմ պայքար իրականացնող մարմինները

Ահաբեկչության դեմ պայքարն իրականացնում են պետական կառավարման համակարգի մարմինները՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում:

Ահաբեկչության դեմ պայքարն անմիջականորեն իրականացնող սուբյեկտներն են՝

~~1) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության պետական կառավարման համակարգի մարմինը.~~

~~2) Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետական կառավարման համակարգի մարմինը.~~

~~3) Հայաստանի Հանրապետության պաշտպանության պետական կառավարման համակարգի մարմինը:~~

1) Ազգային անվտանգության ծառայությունը,

2) Ոստիկանությունը,

3) Պաշտպանության նախարարությունը:

Ահաբեկչության դեմ պայքարին օրենքով ամրագրված իրենց լիազորությունների սահմաններում մասնակցում են նաև պետական կառավարման համակարգի մյուս մարմինները:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հոդված 5. Ազգային ժողովի նախագահը

1. Ազգային ժողովի նախագահը ներկայացնում է Ազգային ժողովը և ապահովում նրա բնականոն գործունեությունը:

2. Ազգային ժողովի նախագահը՝

1) նախագահում է Ազգային ժողովի նիստերը.

2) գումարում է Ազգային ժողովի արտահերթ նիստեր և նստաշրջաններ.

3) շրջանառության մեջ է դնում Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված հարցերը և նշանակում է գլխադասային հանձնաժողով.

4) Հանրապետության նախագահին է ուղարկում Ազգային ժողովի ընդունած Սահմանադրության փոփոխությունները, օրենքները, ինչպես նաև Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ Ազգային ժողովի որոշումները.

4.1) Սահմանադրության 129-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում ստորագրում և հրապարակում է Ազգային ժողովի ընդունած օրենքը.

5) ստորագրում և հրապարակում է Ազգային ժողովի որոշումները, հայտարարությունները և ուղերձները.

6) հրավիրում և նախագահում է Խորհրդի նիստերը.

7) Ազգային ժողովի և Խորհրդի հաստատմանն է ներկայացնում հերթական նստաշրջանի և նիստերի օրակարգերի նախագծերը.

8) ստորագրում և հրապարակում է Խորհրդի որոշումները.

9) հաստատում է Ազգային ժողովի հանձնաժողովների կազմերը և դրանցում փոփոխությունները.

10) կարող է Ազգային ժողովի նախագահի տեղակալին տալ Ազգային ժողովի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված հանձնարարություններ.

11) ըստ անհրաժեշտության հրավիրում է քաղաքական խորհրդակցություններ.

12) տնօրինում է Ազգային ժողովի նյութական միջոցները.

~~13) նշանակում է Ազգային ժողովի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) ղեկավարին, ինչպես նաև Աշխատակազմում պետական ծառայության բարձրագույն պաշտոններում, նրանց ազատում այդ պաշտոններից.~~

13) նշանակում և ազատում է զբաղեցրած պաշտոններից՝ Ազգային ժողովի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) ղեկավարին, աշխատակազմի ղեկավարի տեղակալներին, ինչպես նաև Աշխատակազմում քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին, 2-րդ և 3-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին.

~~14) հաստատում է Աշխատակազմում պետական ծառայության պաշտոնների անվանացանկը, անձնագրերը, ինչպես նաև Աշխատակազմի հաստիքացուցակը և աշխատողների պաշտոնային դրույքաչափերը.~~

14) հաստատում է Աշխատակազմում քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը, ինչպես նաև Աշխատակազմի հաստիքացուցակը և աշխատողների պաշտոնային դրույքաչափերը.

15) իրավասու մշտական հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ հաստատում է Ազգային ժողովի բյուջետային գրասենյակի (այսուհետ՝ Բյուջետային գրասենյակ) փորձագետներին ներկայացվող պահանջները, ինչպես նաև նրանց պաշտոնների ~~նկարագրերը~~ **անձնագրերը**.

~~16) հաստատում է «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգերը.~~

17) կարող է հրավիրել խորհրդարանական լսումներ՝ սահմանելով դրանց անցկացման կարգը.

18) կարող է ձևավորել հասարակական հիմունքներով գործող խորհրդակցական մարմիններ.

19) նշանակում է Սահմանադրական դատարանում Ազգային ժողովի ներկայացուցիչ.

20) կարող է ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնելու հրավեր ուղարկել դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունք ունեցող միջազգային կազմակերպություններին և օտարերկրյա հասարակական կազմակերպություններին.

21) հաստատում է Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում գործող անվտանգության կանոնները.

22) պարգևատրում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատվո մեդալով, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատվոգրով, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի շնորհակալագրով, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի հուշամեդալով, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի հուշանվերով, ինչպես նաև խրախուսում է դրամական պարգևատրմամբ:

3. Իր լիազորություններն իրականացնելիս Ազգային ժողովի նախագահն ընդունում է որոշումներ և կարգադրություններ, որոնք երկու աշխատանքային օրվա ընթացքում տեղադրվում են Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում (www.parliament.am):

Հոդված 28. Խորհրդի լիազորությունները

1. Խորհուրդը՝

1) հաստատում է Ազգային ժողովի հերթական նստաշրջանների և նիստերի օրակարգերի նախագծերը.

2) սահմանում է Ազգային ժողովի հերթական նիստերի օրակարգային հարցերի քննարկման հաջորդականությունը.

3) սահմանում է մշտական և ժամանակավոր հանձնաժողովների հերթական նիստերի գումարման օրերի ժամկետացանկը.

4) կարող է ընդունել Ազգային ժողովի հերթական նիստում հարցի քննարկման տևողությունը մեկից մինչև վեց ժամ սահմանելու մասին որոշում.

5) կարող է Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնել հերթական նիստերի ընթացքում լրացուցիչ նիստ անցկացնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ.

6) Սահմանադրության 168-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված դեպքում պատգամավորի լիազորությունները դադարեցնելու հարցով դիմում է Սահմանադրական դատարան.

7) սահմանում է Ազգային ժողովի հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերը.

8) հաստատում է Աշխատակազմի կառուցվածքը և կանոնադրությունը.

~~9) իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ հաստատում է Բյուջետային գրասենյակի աշխատակարգը, փորձագետների պաշտոնավարման պայմանների, ընտրության (նշանակման), ինչպես նաև Բյուջետային գրասենյակի փորձագետներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգերը.~~

9) իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ հաստատում է Բյուջետային գրասենյակի աշխատակարգը, բյուջետային գրասենյակի քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի և պաշտոնի նշանակման առանձնահատկությունները , ինչպես նաև Բյուջետային գրասենյակի քաղաքացիական ծառայողների կարգապահական պատասխանատվության ենթարկելու առանձնահատկությունները

10) հաստատում է Ազգային ժողովում լրագրողների հավատարմագրման, ինչպես նաև Ազգային ժողովի նստավայրում մամուլի ասուլիսների, ճեպազրույցների անցկացման կարգերը.

11) հաստատում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատվո մեդալի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատվոգրի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի շնորհակալագրի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի հուշամեդալի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի հուշանվերի նկարագրությունը և պարգևատրման կարգը.

12) հաստատում է «Ազգային ժողովի պատգամավոր» կրծքանշանի նկարագրությունը.

13) հաստատում է մշտական հանձնաժողովներում և դրանց համատեղ նիստերում պետական բյուջեի նախագծի նախնական քննարկումների անցկացման, առաջարկների ներկայացման և Կառավարության կողմից փոփոխություններ կատարելու ժամկետացանկը.

14) հաստատում է մշտական հանձնաժողովներում բյուջեի տարեկան հաշվետվության նախնական քննարկումների անցկացման ժամկետացանկը.

15) համաձայնություն է տալիս միջխորհրդարանական համաձայնագիր ստորագրելու համար.

16) հաստատում է միջազգային խորհրդարանական կազմակերպություններում, միջխորհրդարանական հանձնաժողովներում Ազգային ժողովի պատվիրակությունների կազմերը, դրանց կազմավորման և գործունեության կարգերը.

17) ստեղծում և լուծարում է Ազգային ժողովի բարեկամական խմբեր, ինչպես նաև հաստատում է դրանց կազմերը և գործունեության կարգերը.

18) սահմանում է Կանոնակարգի 40-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 5-րդ կետերում նախատեսված նիստերի, ինչպես նաև «Խորհրդարանական շաբաթ» հեռուստահաղորդաշարի հեռարձակման համար մրցույթի պայմանները:

Հոդված 139. Հանրապետության նախագահի ընտրությունը

1. Հանրապետության նախագահի հերթական ընտրությունն անցկացվում է Հանրապետության նախագահի լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան քառասուն, և ոչ ուշ, քան երեսուն օր առաջ, իսկ արտահերթ ընտրությունը՝ Հանրապետության նախագահի պաշտոնանկության, լիազորությունների կատարման անհնարինության, հրաժարականի կամ մահվան դեպքերում Հանրապետության նախագահի պաշտոնը թափուր մնալուց ոչ շուտ, քան քսանհինգ, և ոչ ուշ, քան երեսունհինգ օր հետո:

2. Հերթական ընտրության դեպքում Հանրապետության նախագահի թեկնածուները կարող են առաջադրվել Հանրապետության նախագահի լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան հիսուն օր, և ոչ ուշ, քան քառասուն օր առաջ, իսկ արտահերթ ընտրության դեպքում Հանրապետության նախագահի պաշտոնը թափուր մնալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

~~3. Հանրապետության նախագահի թեկնածու չեն կարող առաջադրվել դատավորները, դատախազները, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության ծառայողները, ոստիկանությունում, ազգային անվտանգությունում, դատական ակտերի հարկադիր կատարման, փրկարարական, հարկային, մաքսային մարմիններում, քրեակատարողական ծառայությունում ծառայողները, զինծառայողները:~~

3. Հանրապետության նախագահի թեկնածու չեն կարող առաջադրվել դատավորները, դատախազները, քննչական մարմիններում ինքնավար պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձինք, ոստիկանության ծառայողը, ազգային անվտանգության ծառայողը, հարկադիր կատարողը, փրկարար ծառայողը, հարկային ծառայողը, մաքսային ծառայողը, քրեակատարողական ծառայողը, զինծառայողները:

4. Հանրապետության նախագահի թեկնածու առաջադրելու իրավունք ունի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը:

5. Հանրապետության նախագահի թեկնածուն առաջադրվում է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի գրավոր դիմումով, որտեղ նշվում են Հանրապետության նախագահի թեկնածուի, ինչպես նաև նրան ներկայացնելու իրավասություն ունեցող պատգամավորների ներկայացուցչի անունները, ազգանունները: Դիմումին կցվում են Սահմանադրությամբ սահմանված պահանջների ապահովումը հավաստող փաստաթղթերը: Սահմանադրության կամ սույն հոդվածի 3-րդ մասի պահանջներին չհամապատասխանելու դեպքում Ազգային ժողովի նախագահը դիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը վերադարձնում է պատգամավորների ներկայացուցչին՝ նշելով պատճառների մասին:

6. Հանրապետության նախագահի ընտրության հարցը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետների ապահովման դեպքում քննարկվում է թեկնածուների առաջադրման ժամկետը լրանալուց հետո Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստերում, իսկ այդ ժամկետներում Ազգային ժողովի հերթական նիստեր չանցկացվելու դեպքում՝ իրավունքի ուժով անհապաղ գումարվող Ազգային ժողովի հատուկ նիստում, որի մասին հայտարարությամբ հանդես է գալիս Ազգային ժողովի նախագահը:

7. Հարցը քննարկվում է Կանոնակարգի 135-րդ հոդվածով սահմանված կարգով հետևյալ տարբերությամբ.

1) թեկնածուներին ներկայացնելու համար հատկացվում է մինչև տասնհինգական րոպե.

2) թեկնածուների ելույթների համար հատկացվում է մինչև մեկ ժամ.

3) թեկնածուների եզրափակիչ ելույթների համար հատկացվում է մինչև երեսնական րոպե:

8. Հանրապետության նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որը գաղտնի քվեարկությամբ ստացել է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք քառորդը:

9. Եթե Հանրապետության նախագահ չի ընտրվում, ապա անցկացվում է ընտրության երկրորդ փուլ, որին կարող են մասնակցել առաջին փուլին մասնակցած բոլոր թեկնածուները: Հարցը քննարկվում է Կանոնակարգի 135-րդ հոդվածով սահմանված կարգով հետևյալ տարբերությամբ.

1) թեկնածուներին ելույթի համար հատկացվում է մինչև տասնհինգական րոպե.

2) մտքերի փոխանակության ընթացքում մինչև տասական րոպե տևողությամբ ելույթներով կարող են հանդես գալ միայն խմբակցությունների ներկայացուցիչները:

10. Երկրորդ փուլում Հանրապետության նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որը գաղտնի քվեարկությամբ ստացել է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդը: Եթե Հանրապետության նախագահ չի ընտրվում, ապա անցկացվում է ընտրության երրորդ փուլ, որին կարող են մասնակցել երկրորդ փուլում առավել ձայներ ստացած երկու թեկնածուները: Հարցը քննարկվում է սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգով:

11. Երրորդ փուլում Հանրապետության նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որը գաղտնի քվեարկությամբ ստանում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը:

12. Եթե Սահմանադրության 125-րդ հոդվածով սահմանված ժամկետում Հանրապետության նախագահ չի ընտրվում, ապա քվեարկությունից հետո՝ հնգօրյա ժամկետում, կարող են առաջադրվել Հանրապետության նախագահի նոր թեկնածուներ, իսկ տասնօրյա ժամկետում անցկացվում է Հանրապետության նախագահի նոր ընտրություն:

13. Հանրապետության նախագահը պաշտոնը ստանձնում է Ազգային ժողովի հատուկ նիստում՝ Կանոնակարգի 49-րդ հոդվածով սահմանված կարգով:

~~**Հոդված 160. Աշխատակազմը**~~

~~-~~

~~1. Ազգային ժողովի և նրա մարմինների լիազորությունների ու գործառույթների իրականացմանն ուղղված մասնագիտական սպասարկումը, այդ թվում՝ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվող նախագծերի կամ այլ փաստաթղթերի ձևակերպմանն ուղղված մասնագիտական աջակցությունը, ինչպես նաև նյութատեխնիկական ապահովումն իրականացնում է Աշխատակազմը, որն ստեղծվում է օրենքով սահմանված կարգով և գործում է օրենքների և իր կանոնադրության հիման վրա:~~

~~2. Աշխատակազմում ծառայությունը պետական ծառայության տեսակ է, որի առանձնահատկությունները սահմանվում են Կանոնակարգով և «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:~~

Հոդված 160. Աշխատակազմը

1. Ազգային ժողովի և նրա մարմինների լիազորությունների ու գործառույթների իրականացմանն ուղղված մասնագիտական սպասարկումը, այդ թվում՝ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվող նախագծերի կամ այլ փաստաթղթերի ձևակերպմանն ուղղված մասնագիտական աջակցությունը, ինչպես նաև նյութատեխնիկական ապահովումն իրականացնում է Աշխատակազմը, որը գործում է օրենքների և իր կանոնադրության հիման վրա:

2. Աշխատակազմում ծառայությունը քաղաքացիական ծառայություն է, որի առանձնահատկությունները սահմանվում են «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում ծառայության առանձնահատկությունների մասին» օրենքով:

Հոդված 162. Հանձնաժողովների գործունեության ապահովումը

1. Աշխատակազմը Ազգային ժողովի հանձնաժողովներին ապահովում է նրանց գործունեության համար անհրաժեշտ միջոցներով:

2. Մշտական հանձնաժողովի գործունեության մասնագիտական սպասարկումն իրականացնում է հանձնաժողովի քարտուղարությունը, որը Աշխատակազմի ստորաբաժանում է, գործում է մշտական հանձնաժողովի աշխատակարգով և Աշխատակազմի կանոնադրությամբ սահմանված կարգով՝ մշտական հանձնաժողովի նախագահի ղեկավարությամբ:

3. Մշտական հանձնաժողովներից յուրաքանչյուրն ունի Աշխատակազմի հաստիքացուցակով սահմանված մեկ համակարգող փորձագետ, առնվազն երկու փորձագետ (մասնագետ) և մեկ գործավար (օգնական): Մշտական հանձնաժողովի գործավարը (օգնականը) աշխատանքի է ընդունվում և ազատվում աշխատանքից համապատասխան հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ, իսկ համակարգող փորձագետը և մյուս փորձագետները (մասնագետները)՝ ~~Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին օրենսդրությանը համապատասխան~~ **«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում ծառայության առանձնահատկությունների մասին» օրենքով սահմանված կարգով:**: Մշտական հանձնաժողովի փորձագետների թիվը կարող է ավելացվել հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ՝ Խորհրդի որոշմամբ:

4. Վերակազմակերպված կամ անվանափոխված մշտական հանձնաժողովների փորձագետների (մասնագետների) իրավական վիճակը որոշվում է ~~«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով~~ **«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում ծառայության առանձնահատկությունների մասին» օրենքով սահմանված կարգով:**:

5. Առանձին օրենքի նախագծի հարցով ժամանակավոր հանձնաժողովի, ինչպես նաև քննիչ հանձնաժողովի գործունեության մասնագիտական սպասարկումն իրականացնում են համապատասխան հանձնաժողովի անդամների վճարովի հիմունքներով աշխատող օգնականները կամ Աշխատակազմի համապատասխան մասնագետները:

6. Մինչև պատգամավորական էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողով ստեղծելը պատգամավորական էթիկայի հարցերով դիմումներն ուսումնասիրում և երկշաբաթյա ժամկետում խմբակցություններին եզրակացություն է ներկայացնում Աշխատակազմի իրավասու փորձագետը (մասնագետը), որը հանձնաժողով ստեղծվելուց

հետո իրականացնում է հանձնաժողովի գործունեության մասնագիտական սպասարկումը: Աշխատակազմի իրավասու փորձագետը (մասնագետը) աշխատանքի է ընդունվում և ազատվում աշխատանքից ~~Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան~~ **«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում ծառայության առանձնահատկությունների մասին» օրենքով սահմանված կարգով:**

Հոդված 163. Բյուջետային գրասենյակը

1. Սահմանադրության 111-րդ հոդվածի 1-ին մասով Ազգային ժողովին վերապահված վերահսկողական լիազորությունների, ինչպես նաև Կանոնակարգի 20-րդ գլխով, 114-118-րդ հոդվածներով սահմանված դրույթների արդյունավետ իրականացմանը նպաստելու և պատգամավորներին, մշտական հանձնաժողովներին, խմբակցություններին մասնագիտական աջակցություն ու տեղեկատվություն տրամադրելու համար կազմավորվում է Բյուջետային գրասենյակ, որն օժտված է գործառութային անկախությամբ:

2. Բյուջետային գրասենյակի գործունեության ընդհանուր համակարգումը և մշտադիտարկումը իրականացնում է իրավասու մշտական հանձնաժողովը:

3. Բյուջետային գրասենյակը գործում է Կանոնակարգին, Աշխատակարգին և իր աշխատակարգին համապատասխան:

4. Բյուջետային գրասենյակում ծառայության առանձնահատկությունները սահմանվում են «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում ծառայության առանձնահատկությունների մասին» օրենքով:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2009 թվականի հունիսի 11-ին

~~**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**~~

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան

~~1. Սույն օրենքով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում (այսուհետ՝ Աշխատակազմ) պետական ծառայության հիմնական~~

սկզբունքները, և կարգավորվում են Աշխատակազմում պետական ծառայության պաշտոնների դասակարգման, պետական ծառայության դասային աստիճանների, պետական ծառայության պաշտոնի նշանակման, պետական ծառայողների ատեստավորման և վերապատրաստման, պետական ծառայության կադրերի ռեզերվի, պետական ծառայողների իրավական վիճակի, պետական ծառայության կառավարման և ղեկավարման, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերություններ:

1. Սույն օրենքով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում (այսուհետ՝ Աշխատակազմ) քաղաքացիական ծառայության առանձնահատկությունները:

Հոդված 2. Աշխատակազմում պետական ծառայությունը

1. Աշխատակազմում պետական ծառայությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական ծառայության տեսակ է:

1. Աշխատակազմում ծառայությունը քաղաքացիական ծառայություն է, որի իրականացման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ սույն օրենքով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ:

Հոդված 3. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստները.

1) **Աշխատակազմում պետական ծառայություն (այսուհետ՝ պետական ծառայություն)՝** քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունից անկախ մասնագիտական գործունեություն, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի (այսուհետ՝ Ազգային ժողով) և նրա մարմինների լիազորությունների ու գործառույթների իրականացման մասնագիտական սպասարկմանը.

2) **պետական ծառայության պաշտոն՝** պետական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն.

3) **պետական ծառայության պաշտոնների անվանացանկ՝** սույն օրենքով սահմանված կարգով հաստատվածպետական ծառայության բոլոր պաշտոնների ցանկ.

4) **Աշխատակազմում պետական ծառայող (այսուհետ՝ պետական ծառայող)՝** պետական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված որևէ պաշտոն (բացառությամբ ժամանակավոր թափուր պաշտոնի) զբաղեցնող կամ պետական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գտնվող անձ.

5) **պետական ծառայության պաշտոնի անձնագիր՝** տվյալ պաշտոնն զբաղեցնող պետական ծառայողի համար սույն օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները նկարագրող և տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար պետական ծառայողին մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող, ինչպես նաև պետական ծառայության դասային համապատասխան աստիճան ունենալու պահանջները սահմանող, սույն օրենքով սահմանված կարգով հաստատված փաստաթուղթ.

~~6) **պետական ծառայության դասային աստիճան՝** պետական ծառայողի մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխանող որակավորման չափանիշ.~~

~~7) **պետական ծառայողի ատեստավորում՝** զբաղեցրած պաշտոնին պետական ծառայողի մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների համապատասխանության որոշմանն ուղղված գործընթաց (միջոցառում).~~

~~8) **պետական ծառայողի վերապատրաստում՝** պետական ծառայողի աշխատանքային պարտականությունների կատարման արդյունավետության բարձրացման նպատակով մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործմանն ուղղված գործընթաց (միջոցառում).~~

~~9) **պետական ծառայության կադրերի ռեզերվ՝** սույն օրենքով սահմանված կարգով պետական ծառայության պաշտոններ չզբաղեցնող պետական ծառայողների և սույն օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասում նշված անձանց հանրույթ.~~

~~10) **ծառայողական քննություն՝** սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով պետական ծառայողի պարտականությունների կատարմանն ու նրա գործունեությանն առնչվող հարցերի քննություն.~~

~~11) **մասնագիտական աշխատանքային ստաժ՝** բարձրագույն կրթության, իսկ պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով բարձրագույն մասնագիտական կրթություն նախատեսված լինելու դեպքում այդ կրթության մասին վկայող փաստաթղթում նշված որակավորմանը համապատասխանող աշխատանքային ստաժ՝ անկախ պետական կամ մասնավոր ոլորտներում կատարած աշխատանքից: Մասնագիտական աշխատանքային ստաժը ներառում է համապատասխան որակավորում ստանալուց հետո աշխատած ժամանակահատվածը:~~

~~***(3-րդ հոդվածը խմբ. 08.12.17 ՀՕ-243-Ն)***~~

Հոդված 3. Պաշտոնների անձնագրերի հաստատման առանձնահատկությունները

1. **Քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնությունն ստանալուց հետո Ազգային ժողովի նախագահը հաստատում է Ազգային ժողովի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերը:**

~~**Հոդված 4. Սույն օրենքի գործողության ոլորտը**~~

~~1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական ծառայողների վրա:~~

~~2. Սույն օրենքը չի տարածվում Աշխատակազմում քաղաքացիական աշխատանք կատարող, ինչպես նաև տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց վրա:~~

Հոդված 4. Համակարգող փորձագետի և մյուս փորձագետների (մասնագետների) պաշտոնների առանձնահատկությունները

1. **Համակարգող փորձագետի և մյուս փորձագետների պաշտոնների անձնագրերի նախագծերը կազմելիս կրթության և (կամ) աշխատանքային ստաժի և (կամ) աշխատանքի բնագավառի չափանիշները ներկայացնում է համապատասխան հանձնաժողովի նախագահը:**
2. **Համակարգող փորձագետի և մյուս փորձագետների կատարողականի գնահատումն իրականացվում է հանձնաժողովի նախագահի կողմից:**

3. Վերակազմակերպված կամ անվանափոխված մշտական հանձնաժողովների համակարգող փորձագետը և մյուս փորձագետները (մասնագետները) օգտվում են աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքից, եթե բավարարում են նոր պաշտոնի անձնագրով սահմանված պահանջները:
4. Վերակազմակերպված կամ անվանափոխված մշտական հանձնաժողովում քաղաքացիական ծառայության պաշտոնի չնշանակվելու դեպքում վերջիններս գրանցվում են քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում:

~~Հոդված 5. Պետական ծառայության հիմնական սկզբունքները~~

~~1. Պետական ծառայության հիմնական սկզբունքներն են՝~~

~~1) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների գերակայությունը, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների առաջնահերթությունը.~~

~~2) պետական ծառայության կայունությունը.~~

~~3) պետական ծառայողներին ներկայացվող հիմնական պահանջների միասնականությունը և օրենքի առջև պետական ծառայողների իրավահավասարությունը.~~

~~4) պետական ծառայության հրապարակայնությունը.~~

~~5) պետական ծառայողների քաղաքական զսպվածությունը.~~

~~6) քաղաքացիների համար պետական ծառայության հավասար մատչելիությունը՝ իրենց մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան.~~

~~7) պետական ծառայողների պրոֆեսիոնալիզմը.~~

~~8) պետական ծառայողների իրավական և սոցիալական պաշտպանվածությունը.~~

~~9) պետական ծառայողների պատասխանատվությունը իրենց ծառայողական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար.~~

~~10) պետական ծառայողների գործունեության վերահսկելիությունը և հաշվետու լինելը:~~

Հոդված 5. Ծառայության առանձնահատկությունները բյուջետային գրասենյակում

1. Բյուջետային գրասենյակի փորձագետները քաղաքացիական ծառայողներ են, որոնց աշխատանքային հարաբերություններին վերաբերող հարցերը, որոնք կարգավորված չեն «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով, սույն օրենքով, կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով և «Հանրային ծառայության մասին» օրենքով:

2. Բյուջետային գրասենյակի քաղաքացիական ծառայողները պաշտոնի նշանակվում են մրցույթի արդյունքներով՝ 5 տարի ժամկետով, որը կարող է երկարաձգվել պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ՝ 5 տարի ժամկետով:

~~Հոդված 6. Պետական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը~~

~~1. Պետական ծառայության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության~~

միջազգային պայմանագրերով, սույն օրենքով, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով, ինչպես նաև այլ օրենքներով և իրավական ակտերով:

2. Պետական ծառայողների աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ, եթե սույն օրենքով այդ հարաբերությունները կարգավորող առանձնահատկություններ սահմանված չեն:

3. Պետական ծառայողների միջև ծառայողական փոխհարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, այլ օրենքներով և Աշխատակազմի ղեկավարի հաստատած ներքին կարգապահական կանոններով:

(6-րդ հոդվածը փոփ. 26.05.11 ՀՕ-189-Ն)

-

Գ Լ Ո Ւ Խ 2

-

ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

-

Հոդված 7. Պետական ծառայության պաշտոնների դասակարգումը

-

1. Պետական ծառայության պաշտոնները դասակարգվում են խմբերի՝ ելնելով այդ պաշտոններն զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման պահանջի, ինչպես նաև գիտելիքների և հմտությունների անհրաժեշտ մակարդակից:

2. Պետական ծառայության պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.

1) պետական ծառայության բարձրագույն պաշտոններ.

2) պետական ծառայության գլխավոր պաշտոններ.

3) պետական ծառայության առաջատար պաշտոններ.

4) պետական ծառայության կրտսեր պաշտոններ:

3. Պետական ծառայության բարձրագույն պաշտոնների խումբը դասակարգվում է 1-ին և 2-րդ ենթախմբերի, իսկ պետական ծառայության գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոնների խմբերը դասակարգվում են 1-ին, 2-րդ և 3-րդ ենթախմբերի: Պետական ծառայության պաշտոնների խմբերում 1-ին ենթախումբը տվյալ խմբի բարձրագույն ենթախումբն է:

-

Հոդված 8. Պետական ծառայության դասային աստիճանները

-

1. Պետական ծառայողներին շնորհվում են հետևյալ դասային աստիճանները.

1) պետական ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող պետական ծառայողներին՝ Հայաստանի Հանրապետության պետական ծառայության 1-ին կամ 2-րդ դասի պետական խորհրդականի դասային աստիճաններ.

2) պետական ծառայության գլխավոր պաշտոնների՝

ա. 1-ին ենթախմբի պաշտոն զբաղեցնող պետական ծառայողներին՝ Հայաստանի Հանրապետության պետական ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան, ինչպես նաև ավելի բարձր՝ Հայաստանի Հանրապետության պետական ծառայության 2-րդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան,

~~բ. 2-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող պետական ծառայողներին՝ Հայաստանի Հանրապետության պետական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան, ինչպես նաև ավելի բարձր՝ Հայաստանի Հանրապետության պետական ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան,~~

~~գ. 3-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող պետական ծառայողներին՝ Հայաստանի Հանրապետության պետական ծառայության 3-րդ դասի խորհրդականի դասային աստիճան, ինչպես նաև ավելի բարձր՝ Հայաստանի Հանրապետության պետական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան.~~

~~3) պետական ծառայության առաջատար պաշտոնների՝~~

~~ա. 1-ին ենթախմբի պաշտոն զբաղեցնող պետական ծառայողներին՝ Հայաստանի Հանրապետության պետական ծառայության 1-ին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, ինչպես նաև ավելի բարձր՝ Հայաստանի Հանրապետության պետական ծառայության 3-րդ դասի խորհրդականի դասային աստիճան,~~

~~բ. 2-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող պետական ծառայողներին՝ Հայաստանի Հանրապետության պետական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, ինչպես նաև ավելի բարձր՝ Հայաստանի Հանրապետության պետական ծառայության 1-ին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան,~~

~~գ. 3-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող պետական ծառայողներին՝ Հայաստանի Հանրապետության պետական ծառայության 3-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, ինչպես նաև ավելի բարձր՝ Հայաստանի Հանրապետության պետական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան.~~

~~4) պետական ծառայության կրտսեր պաշտոնների՝~~

~~ա. 1-ին ենթախմբի պաշտոն զբաղեցնող պետական ծառայողներին՝ Հայաստանի Հանրապետության պետական ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան, ինչպես նաև ավելի բարձր՝ Հայաստանի Հանրապետության պետական ծառայության 3-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան,~~

~~բ. 2-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող պետական ծառայողներին՝ Հայաստանի Հանրապետության պետական ծառայության 2-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան, ինչպես նաև ավելի բարձր՝ Հայաստանի Հանրապետության պետական ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան,~~

~~գ. 3-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնող պետական ծառայողներին՝ Հայաստանի Հանրապետության պետական ծառայության 3-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան, ինչպես նաև ավելի բարձր՝ Հայաստանի Հանրապետության պետական ծառայության 2-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան:~~

~~2. Բարձրագույն՝ Հայաստանի Հանրապետության պետական ծառայության 1-ին և 2-րդ դասի պետական խորհրդականի դասային աստիճանները շնորհում, դասային աստիճանն իջեցնում, ինչպես նաև դասային աստիճանից զրկում է Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ:~~

~~3. Հայաստանի Հանրապետության պետական ծառայության 1-ին, 2-րդ և 3-րդ դասի խորհրդականի դասային աստիճանները շնորհում է Ազգային ժողովի նախագահը՝ Աշխատակազմի ղեկավարի առաջարկությամբ:~~

~~4. Հայաստանի Հանրապետության պետական ծառայության 1-ին, 2-րդ և 3-րդ դասի առաջատար ծառայողի և Հայաստանի Հանրապետության պետական ծառայության 1-ին, 2-րդ և 3-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճանները շնորհում է Աշխատակազմի ղեկավարը:~~

5. Պետական ծառայության պաշտոնի, բացառությամբ պետական ծառայության բարձրագույն պաշտոնի, նշանակման հետ միաժամանակ (բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքի) պետական ծառայողին շնորհվում է պետական ծառայության համապատասխան դասային աստիճան, եթե նա չունի պետական ծառայության համապատասխան կամ ավելի բարձր դասային աստիճան:

6. Պետական ծառայողին իր զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված պետական ծառայության դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան, բացառությամբ պետական ծառայության բարձրագույն դասային աստիճանի, շնորհվում է համապատասխան դասային աստիճանն ստանալուց ոչ շուտ, քան երեք տարի հետո:

7. Պետական ծառայության պաշտոն, բացառությամբ պետական ծառայության բարձրագույն պաշտոնի, առաջին անգամ զբաղեցնող անձին պետական ծառայության համապատասխան դասային աստիճան շնորհվում է սույն օրենքով նախատեսված փորձաշրջանի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում:

8. Սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 16-րդ և 18-րդ կետերով նախատեսված հիմքերով զբաղեցրած պաշտոնից ազատվելու հետ միաժամանակ պետական ծառայողը զրկվում է պետական ծառայության դասային աստիճանից՝ տվյալ դասային աստիճանը շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ:

9. Պետական ծառայողների դասային աստիճանները պահպանվում են պետական կառավարման այլ մարմիններում պետական (քաղաքացիական) ծառայողների պաշտոններում նշանակվելիս, իսկ պետական (քաղաքացիական) ծառայողների այլ դասային աստիճանները՝ Աշխատակազմում պետական ծառայության պաշտոններում նշանակվելիս:

-

Հոդված 9. Պետական ծառայության պաշտոնների անվանացանկը, պետական ծառայության պաշտոնների անձնագրերը և Աշխատակազմի հաստիքացուցակը հաստատելը

-

1. Պետական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատում է Ազգային ժողովի նախագահը՝ պետական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու իրավական հիմքի առաջացման պահից մեկ ամսվա ընթացքում:

2. Պետական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատում է Ազգային ժողովի նախագահը:

3. Աշխատակազմի հաստիքացուցակը Ազգային ժողովի նախագահի կողմից հաստատվում է պետական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելուց հետո՝ 15-օրյա ժամկետում:

-

Հոդված 10. Պետական ծառայության պաշտոնի անձնագիրը

-

1. Պետական ծառայության պաշտոնների անձնագրերն ընդգրկում են նաև աշխատանքային ստաժի և փորձի առնվազն հետևյալ չափանիշները.

1) պետական ծառայության բարձրագույն պաշտոններ՝ բարձրագույն կամ բարձրագույն մասնագիտական կրթություն, պետական ծառայության գլխավոր պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա պետական ծառայության ստաժ և Հայաստանի Հանրապետության

~~պետական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական (բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների, ռեֆերենտների և Երևանի վարչական շրջանների ղեկավարների և նրանց տեղակալների պաշտոնների) կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ կամ քաղաքացիական ծառայության առնվազն հինգ տարվա ստաժ և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան.~~

~~2) պետական ծառայության գլխավոր պաշտոններ՝ բարձրագույն կամ բարձրագույն մասնագիտական կրթություն, պետական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա պետական ծառայության ստաժ և Հայաստանի Հանրապետության պետական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական (բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների, ռեֆերենտների և Երևանի վարչական շրջանների ղեկավարների և նրանց տեղակալների պաշտոնների) կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ քաղաքացիական ծառայության առնվազն երեք տարվա ստաժ և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան.~~

~~3) պետական ծառայության առաջատար պաշտոններ՝ բարձրագույն կամ բարձրագույն մասնագիտական կրթություն, պետական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական (բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների, ռեֆերենտների և Երևանի վարչական շրջանների ղեկավարների և նրանց տեղակալների պաշտոնների) կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.~~

~~4) պետական ծառայության կրտսեր պաշտոններ՝ առնվազն բարձրագույն կրթություն:~~

~~2. Մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական ծառայության պաշտոնների անձնագրերն ընդգրկում են նաև աշխատանքային ստաժի և փորձի հետևյալ չափանիշները.~~

~~1) պետական ծառայության բարձրագույն պաշտոններ՝ հանրային ծառայության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ.~~

~~2) պետական ծառայության գլխավոր պաշտոններ՝ հանրային ծառայության առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.~~

~~3) պետական ծառայության առաջատար պաշտոններ՝ հանրային ծառայության առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ:~~

~~3. Պետական ծառայության պաշտոնի անձնագրում աշխատանքային ստաժի և փորձի չափանիշները կարող են փոփոխվել միայն այն դեպքում, եթե տվյալ պաշտոնը թափուր է:~~

(10-րդ հոդվածը փոփ. 08.12.17 ՀՕ-243-Ն)

-

Գ Լ ՈՒ Խ 3

-

ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼԸ

-

Հոդված 11. **Պետական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեցող անձինք**

-

1. Սույն օրենքով սահմանված կարգով պետական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:

-

Հոդված 12. **Պետական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք չունեցող անձը**

-

1. Պետական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք չունի այն անձը, որը՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատական կարգով զրկվել է պետական (քաղաքացիական) ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը պետական ծառայության պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանը և լիազորությունների իրականացմանը: Այդ հիվանդությունների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

5) խուսափել է ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից:

-

Հոդված 13. **Պետական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելը**

-

1. Պետական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցվում է արտամրցութային կարգով կամ մրցույթով:

-

Հոդված 14. **Պետական ծառայության թափուր պաշտոնն արտամրցութային կարգով զբաղեցնելու դեպքերը**

-

1. Պետական ծառայության թափուր պաշտոն (բացառությամբ նոր ստեղծված պետական ծառայության պաշտոնների) առաջանալու դեպքում (ներառյալ՝ սույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերի) մեկշաբաթյա ժամկետում տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն իրավասու է տվյալ թափուր պաշտոնում նշանակելու՝

1) Աշխատակազմի այն պետական ծառայողին, որը միաժամանակ՝

ա. բավարարում է տվյալ թափուր պաշտոնի անձնագրի պահանջները,

~~բ. համարվում է պետական ծառայության միևնույն խմբի պաշտոն զբաղեցնող կամ առնվազն ունի տվյալ թափուր պաշտոնի համար նախատեսված պետական ծառայության դասային աստիճան կամ զբաղեցնելու է պետական ծառայության իր զբաղեցրած խմբին հաջորդող բարձր խմբի 3-րդ կամ 2-րդ ենթախմբերի, իսկ բարձրագույն պաշտոնների խմբի դեպքում՝ 2-րդ ենթախմբի պաշտոն,~~

~~գ. այդ մասին տվել է գրավոր համաձայնություն.~~

~~2) պետական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվից տվյալ պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնող անձին:~~

~~2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արտամրցութային կարգով պետական ծառայության թափուր պաշտոնում նշանակում չի կարող կատարվել, եթե տվյալ թափուր պաշտոնի համար հայտարարվել է մրցույթ:~~

-

~~Հոդված 15. Պետական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը~~

-

~~1. Նոր (բացառությամբ սույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերի) ստեղծված պետական ծառայության պաշտոնները, ինչպես նաև պետական ծառայության թափուր պաշտոններում սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով և 31-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով և ժամկետներում նշանակումներ չկատարվելու դեպքերում այդ պաշտոնները զբաղեցվում են մրցույթով:~~

~~2. Պետական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար Աշխատակազմը մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակում է մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով:~~

~~3. Պետական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթն անցկացնում է սույն օրենքով սահմանված կարգով ստեղծված մրցութային հանձնաժողովը, իսկ անցկացվող մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնում է Աշխատակազմը:~~

~~4. Մրցութային հանձնաժողովը քաղաքացուն չի թույլատրում մասնակցել մրցույթին, եթե նա չի բավարարում սույն օրենքի 11-րդ հոդվածով և 36-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, կամ առկա է սույն օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը:~~

~~5. Մրցույթն անցկացվում է նաև, եթե մրցույթին մասնակցելու համար դիմել է մեկ մասնակից:~~

~~6. Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:~~

~~7. Թեստավորումը կարող է անցկացվել համակարգչի միջոցով կամ գրավոր:~~

~~Թեստերը կազմվում են Ազգային ժողովի նախագահի սահմանած կարգով՝ համակարգչում զետեղված հարցաշարից և դրանցից պատահական ընտրված հարցերից՝ մասնակիցների գիտելիքները հետևյալ բնագավառներում ստուգելու համար.~~

~~1) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության.~~

~~2) պետական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության.~~

~~3) Աշխատակազմի գործառույթներին վերաբերող Հայաստանի Հանրապետության օրենսդրության:~~

~~Թեստավորման առաջադրանքները բաղկացած են հարցերից և խնդիրներից: Յուրաքանչյուր հարց (խնդիր) պետք է ունենա երեք կամ չորս ենթադրյալ պատասխան: Յուրաքանչյուր հարց (խնդիր) պետք է ունենա մեկ միանշանակ ճիշտ պատասխան:~~

~~Համակարգչում գետեղված հարցաշարը, ոչ ուշ, քան մրցույթ անցկացնելուց մեկ ամիս առաջ, պետք է հրապարակվի: Հարցաշարում ընդգրկված հարցերի (խնդիրների) ճիշտ պատասխանները հրապարակման ենթակա չեն:~~

~~Թեստավորման փուլն անցկացվում է մասնակիցների համար ծածկագրերի կիրառմամբ՝ գաղտնիությունն ապահովելու նպատակով:~~

~~8. Մրցույթի երկրորդ՝ հարցազրույցի փուլին մասնակցելու իրավունք են ձեռք բերում թեստավորման առաջադրանքների առնվազն 90 տոկոսին ճիշտ պատասխանած մասնակիցները:~~

~~Մասնակիցների հետ հարցազրույցն անցկացվում է հարցատոմսերով՝ պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրի դրույթների շրջանակներում նրանց գործնական կարողություններն ստուգելու նպատակով:~~

~~Մրցութային հանձնաժողովը հարցազրույցի արդյունքում յուրաքանչյուր մասնակցի համար անցկացնում է քվեարկություն: Մրցութային հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ քվեարկում է կողմ կամ դեմ:~~

~~Մրցույթի հաղթող են ճանաչվում այն մասնակիցները, որոնք քվեարկության արդյունքում հավաքել են մրցութային հանձնաժողովի՝ քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայները:~~

~~9. Մրցույթի արդյունքները հրապարակվում են մրցույթն անցկացնելուց հետո՝ նույն օրը:~~

~~10. Մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցների վերաբերյալ մրցութային հանձնաժողովի եզրակացությունն ուղարկվում է տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին: Եզրակացությունն ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, պետական ծառայության տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցներից մեկին նշանակում է համապատասխան պաշտոնում:~~

~~11. Եթե մրցույթի արդյունքում մասնակիցներից ոչ մեկը թեստավորման առաջադրանքների առնվազն 90 տոկոսին ճիշտ պատասխան չի տվել, կամ հարցազրույցի մասնակիցներից ոչ մեկը քվեարկության արդյունքում չի հավաքել մրցութային հանձնաժողովի՝ քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայներ ու մրցույթի արդյունքում հաղթող չի ճանաչվել, ապա անցկացվում է նոր մրցույթ:~~

~~12. Եթե մրցութային հանձնաժողովն իրավազոր չէ (նիստին չի մասնակցում հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելին), ապա մրցույթը համարվում է չկայացած, և անցկացվում է կրկնակի մրցույթ:~~

~~Կրկնակի մրցույթի ժամանակ մրցույթին մասնակցելու համար նոր դիմումներ չեն ընդունվում: Այն անցկացվում է 10-օրյա ժամկետում ընդհանուր հիմունքներով:~~

~~13. Եթե մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ ներկայացված բոլոր դիմումներում առկա է սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված հիմքերից որևէ մեկը, ինչպես նաև, եթե մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացրած անձանցից ոչ մեկը չի ներկայացել, ապա մրցույթը համարվում է չկայացած, և անցկացվում է նոր մրցույթ:~~

~~14. Սույն հոդվածով սահմանված կարգի խախտմամբ անցկացված մրցույթն անվավեր է ճանաչվում դատական կարգով։~~

~~15. Նոր մրցույթ է անցկացվում նաև մրցույթն անվավեր ճանաչվելու դեպքում։~~

~~Նոր մրցույթն անցկացվում է ընդհանուր հիմունքներով։~~

~~16. Եթե նոր կամ կրկնակի մրցույթը համարվում է չկայացած (անվավեր), ինչպես նաև նոր կամ կրկնակի մրցույթի արդյունքում հաղթող չի ճանաչվում, ապա պետական ծառայության տվյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարվում է նոր մրցույթ։~~

~~17. Սույն օրենքի հիման վրա մրցույթ անցկացնելու կարգը հաստատում է Ազգային ժողովի նախագահը։~~

-

~~Հոդված 16.~~ ~~Պետական ծառայության պաշտոնի նշանակումը~~

-

~~1. Պետական ծառայության պաշտոնում նշանակվող անձն անփոփոխելի է, բացառությամբ սույն օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված դեպքերի։~~

~~2. Պետական ծառայության բարձրագույն պաշտոններում նշանակում և այդ պաշտոններից ազատում է Ազգային ժողովի նախագահը։~~

~~3. Պետական ծառայության գլխավոր, առաջատար և կրտսեր, ինչպես նաև ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի և աուդիտորների պաշտոններում նշանակում և այդ պաշտոններից ազատում է Աշխատակազմի ղեկավարը։~~

~~4. Պետական ծառայության պաշտոն առաջին անգամ զբաղեցնող անձի նշանակումն իրականացվում է մինչև վեց ամիս փորձաշրջանով՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով։~~

~~(16-րդ հոդվածը լրաց. 26.05.11 ՀՕ-189-Ն, 08.12.17 ՀՕ-243-Ն)~~

-

~~Հոդված 17.~~ ~~Պետական ծառայության պաշտոն զբաղեցնելու առանձնահատուկ դեպքերը~~

-

~~1. «Դիվանագիտական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դեպքերում գործուղված դիվանագետները կարող են զբաղեցնել պետական ծառայության պաշտոններ։~~

~~2. Պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ առնչվող պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց պաշտոնի նշանակման և պաշտոնից ազատման, ծառայողական քննությունների, նրանց վերապատրաստման, ատեստավորման, կատարած աշխատանքների մասին կիսամյակային հաշվետվություններ ներկայացնելու, ինչպես նաև պետական ծառայության այլ գործընթացների հետ կապված առանձնահատկությունները և պետական ծառայության այդ պաշտոնների ցանկը հաստատում է Ազգային ժողովի նախագահը՝ հաշվի առնելով ազգային անվտանգության պետական կառավարման լիազոր մարմնի առաջարկությունները։~~

-

~~Հոդված 18.~~ ~~Պետական ծառայության պաշտոնի նշանակվելիս պետական ծառայողի երդումը~~

-

1. Պետական ծառայության պաշտոն առաջին անգամ զբաղեցնող անձն իր պաշտոնն ստանձնում է հանդիսավոր պայմաններում՝ տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի և նրա հրավիրած անձանց ներկայությամբ տրված հետևյալ երդմամբ. «Ստանձնելով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի պետական ծառայողի պաշտոնը՝ հանդիսավոր երդվում եմ հավատարիմ ծառայել Հայաստանի Հանրապետության ժողովրդին, խստագույնս պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները, մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները, աջակցել սահմանադրական կարգի պահպանմանը, արժանապատվորեն կրել պետական ծառայողի բարձր կոչումը, անվերապահորեն կատարել ծառայողական պարտականություններս»:

2. Երդումը տրվում է անհատական կարգով՝ յուրաքանչյուր պետական ծառայողի կողմից երդման տեքստն ընթերցելու միջոցով:

3. Պետական ծառայողն ստորագրում է երդման՝ իր ընթերցած տեքստը, որը կցվում է նրա անձնական գործին:

-

Հոդված 19. Պետական ծառայության ստաժը

-

1. Պետական ծառայության ստաժը ներառում է պետական ծառայության պաշտոն, այդ թվում՝ ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու, պետական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գտնվելու, պետական կառավարման մարմիններում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը, ինչպես նաև մինչև պետական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելն աշխատած ողջ ժամանակահատվածը:

Պետական ծառայության ստաժը չի ներառում սույն օրենքով սահմանված կարգի խախտմամբ պետական ծառայության պաշտոն զբաղեցնելու, պետական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գտնվելու, ինչպես նաև օրենքի խախտմամբ պետական կառավարման մարմիններում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը, մինչև պետական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելն աշխատած ողջ ժամանակահատվածը:

2. Պետական ծառայության ստաժը հաշվարկվում է պետական ծառայողի ընդհանուր և մասնագիտական աշխատանքային ստաժում:

3. Սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված հիմքով պետական ծառայության պաշտոնից ազատված անձի քաղաքական կամ հայեցողական (բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների, ռեֆերենտների, Երևանի վարչական շրջանների ղեկավարների և նրանց տեղակալների պաշտոնների) կամ քաղաքացիական պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածի աշխատանքային ստաժը հավասարեցվում է պետական ծառայության ստաժին:

-

Հոդված 20. Պետական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելը

-

1. Պետական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի, պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու, մինչև պետական ծառայության թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը, պետական ծառայողի կողմից իր

~~ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության, սույն օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասով, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում այդ պաշտոնն զբաղեցվում է՝~~

~~1) պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հայեցողությամբ՝ տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված փոխարինող պետական ծառայողի կողմից մինչև վեց ամիս ժամկետով կամ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով սույն մասի 2-րդ կետով նախատեսված անձի կողմից, բացառությամբ հղիության, ծննդաբերության և երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդի, պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու, ինչպես նաև վեց ամիսը գերազանցող ժամկետով սույն օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված գործուղման դեպքերի: Այդ ժամկետի ավարտից հետո կամ փոխարինողի բացակայության կամ սույն կետով նախատեսված մյուս դեպքերում մեկշաբաթյա ժամկետում՝~~

~~2) պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հայեցողությամբ՝ պետական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գտնվող՝ տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող պետական ծառայողի կամ հաշվի առնելով սույն օրենքի 11-րդ, 12-րդ հոդվածների, 26-րդ հոդվածի 3-րդ մասի և 36-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ պետական ծառայության կադրերի երկարաժամկետ ռեզերվում գտնվող անձի կամ հաշվի առնելով սույն օրենքի 11-րդ, 12-րդ հոդվածների, 26-րդ հոդվածի 3-րդ մասի և 36-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ մեկ այլ անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելով:~~

~~Չի թույլատրվում սույն մասի 2-րդ կետով նախատեսված այլ անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքել, եթե պետական ծառայության ժամանակավոր թափուր տվյալ պաշտոնն առաջացել է նրա տվյալ պաշտոնից սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 16-րդ և 18-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով ազատվելու հետևանքով:~~

~~2. Սույն օրենքի հիման վրա ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը հաստատում է Ազգային ժողովի նախագահը:~~

-

~~Գ Լ ՈՒ Խ 4~~

-

~~*ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ, ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎԸ*~~

-

~~Հոդված 21. Պետական ծառայողի ատեստավորումը~~

-

~~1. Յուրաքանչյուր տարի պետական ծառայողների առնվազն մեկ երրորդը ենթակա է պարտադիր ատեստավորման:~~

~~2. Պետական ծառայողի հերթական ատեստավորումն անցկացվում է երեք տարին մեկ:~~

~~3. Պետական ծառայողի արտահերթ ատեստավորումը կարող է անցկացվել հերթական ատեստավորումից առնվազն մեկ տարի հետո:~~

~~4. Պետական ծառայողի արտահերթ ատեստավորումն անցկացվում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի գրավոր պատճառաբանված որոշման հիման վրա:~~

~~5. Ատեստավորումն անցկացվում է պետական ծառայողի անմիջական մասնակցությամբ:~~

~~6. Ատեստավորման ենթակա չեն՝~~

~~1) տվյալ պաշտոնը երեք տարուց պակաս ժամկետով զբաղեցնող պետական ծառայողները.~~

~~2) հղի և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող պետական ծառայողները.~~

~~3) պարտադիր զինվորական ծառայությունից վերադարձած պետական ծառայողները վերադառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:~~

~~Հղիության և երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող պետական ծառայողները ենթակա են ատեստավորման արձակուրդից վերադառնալուց հետո՝ ոչ շուտ, քան մեկ տարի անց:~~

~~Ատեստավորման ենթակա, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակ պետական ծառայողները ենթակա են ատեստավորման աշխատանքի ներկայանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում:~~

~~Սույն մասի 1-ին կետը չի տարածվում սույն օրենքի 14-րդ հոդվածով և սույն օրենքի 31-րդ հոդվածով սահմանված կարգով պետական ծառայության պաշտոն զբաղեցնելու դեպքերի վրա:~~

~~7. Ատեստավորման ենթակա պետական ծառայողները ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ տեղեկացվում են ատեստավորման անցկացման մասին:~~

~~8. Ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ անմիջական ղեկավարը ներկայացնում է պետական ծառայողի ծառայողական բնութագիրը:~~

~~Ծառայողական բնութագիրը պետք է բովանդակի տվյալներ պետական ծառայողի մասին, նրա գործնական, մարդկային հատկանիշների և ծառայողական գործունեության արդյունքների հիմնավորված գնահատականը: Այդ գնահատականը պետք է հիմնվի նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակահատվածում պետական ծառայողի կողմից իր կատարած աշխատանքների մասին յուրաքանչյուր կիսամյակ անմիջական ղեկավարին ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ վերջինիս եզրակացությունների հիման վրա:~~

~~Եթե ատեստավորումների միջև ընկած ժամանակահատվածում պետական ծառայողի անմիջական ղեկավարն ազատվել է պաշտոնից՝ ատեստավորման արդյունքում զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու հիմքով (քաղաքական, հայեցողական և քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող ղեկավարների դեպքում՝ հեռացման կամ պաշտոնանկության հիմքով), ապա վերջինիս տված եզրակացություններն իրավական ուժ չունեն: Եթե նման ղեկավարի տված եզրակացություններն ընդգրկում են ատեստավորումների միջև ընկած ժամանակահատվածի երկու երրորդից ավելին, ապա պետական ծառայողի վերաբերյալ ծառայողական բնութագիր չի ներկայացվում:~~

~~Պետական ծառայողն ատեստավորում անցկացնելու օրվանից առնվազն մեկ շաբաթ առաջ պետք է ծանոթանա իր ծառայողական բնութագրին:~~

~~Սույն հոդվածով սահմանված կարգով ծառայողական բնութագիր չներկայացնելը չի կարող բացասաբար ազդել պետական ծառայողի ատեստավորման արդյունքների վրա:~~

~~9. Ատեստավորումն անցկացվում է հետևյալ եղանակներով.~~

~~1) փաստաթղթային.~~

~~2) թեստավորման և հարցազրույցի:~~

~~10. Պետական ծառայողի ատեստավորումն անցկացնում է սույն օրենքով սահմանված կարգով ստեղծված ատեստավորման հանձնաժողովը:~~

~~11. Այն պետական ծառայողները, որոնք ունեն զբաղեցրած պաշտոնի ենթախմբի համար սույն օրենքով նախատեսված առավելագույն պետական ծառայության դասային աստիճան, ենթակա են փաստաթղթային ատեստավորման:~~

~~Փաստաթղթային ատեստավորումն անցկացվում է ծառայողական բնութագրի հիման վրա՝ հարցազրույցի միջոցով: Հարցազրույցն անցկացվում է հարցատոմսերով՝ պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրի դրույթների շրջանակներում նրանց գործնական կարողություններն ստուգելու նպատակով:~~

~~Ատեստավորման հանձնաժողովը յուրաքանչյուր պետական ծառայողի համար քվեարկության է դնում սույն մասի չորրորդ պարբերության 1-ին կետի որոշումը, որը հանձնաժողովի քվեարկությանը մասնակցած անդամների ձայների մեծամասնությամբ չընդունվելու դեպքում ընդունված է համարվում սույն մասի չորրորդ պարբերության 2-րդ կետով նախատեսված որոշումը:~~

~~Փաստաթղթային ատեստավորման արդյունքում ատեստավորման հանձնաժողովն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.~~

~~1) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին.~~

~~2) ենթակա է ատեստավորման թեստավորման և հարցազրույցի միջոցով:~~

~~12. Թեստավորման և հարցազրույցի միջոցով ատեստավորման ենթակա են այն պետական ծառայողները՝~~

~~1) որոնք փաստաթղթային ատեստավորման ենթակա չեն.~~

~~2) որոնց վերաբերյալ ատեստավորման հանձնաժողովն ընդունել է սույն հոդվածի 11-րդ մասի չորրորդ պարբերության 2-րդ կետով նախատեսված որոշումը:~~

~~Թեստավորումը կարող է անցկացվել համակարգչի միջոցով կամ գրավոր:~~

~~Թեստերը կազմում, հարցազրույցն անցկացնում և արդյունքները գնահատում է ատեստավորման հանձնաժողովը՝ սույն օրենքի 15-րդ հոդվածով սահմանված կարգով:~~

~~13. Ատեստավորման հանձնաժողովը թեստավորման և հարցազրույցի արդյունքներով ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.~~

~~1) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին.~~

~~2) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին:~~

~~Քվեարկության արդյունքում ընդունված է համարվում այն որոշումը, որն ստացել է ատեստավորման հանձնաժողովի քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայները:~~

~~Ատեստավորման հանձնաժողովի որոշումները պարտադիր են պետական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի համար:~~

~~14. Ատեստավորման արդյունքները, սույն օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված կարգով, եռօրյա ժամկետում ներկայացվում են պետական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին, որը պետական ծառայողի զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու արդյունքի դեպքում ընդունում է նրան զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին որոշում:~~

~~15. Պետական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը սույն հոդվածի 14-րդ մասով նախատեսված որոշումն ընդունում է ոչ ուշ, քան ատեստավորման արդյունքներն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում:~~

Պետական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը պետական ծառայողի ժամանակավոր անաշխատունակության և արձակուրդում գտնվելու ժամանակ սույն հոդվածի 14-րդ մասով նախատեսված որոշումն ընդունում է նրա՝ աշխատանքի ներկայանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

16. Սույն օրենքի հիման վրա պետական ծառայողի ատեստավորում անցկացնելու կարգը հաստատում է Ազգային ժողովի նախագահը:

-

Հոդված 22. Պետական ծառայողի վերապատրաստումը, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով գործուղումը

-

1. Յուրաքանչյուր պետական ծառայող առնվազն երեք տարին մեկ ենթակա է պարտադիր վերապատրաստման:

Վերապատրաստումն անցկացվում է պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով պետական ծառայողի իրավունքների ու պարտականությունների, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման կոնկրետ պահանջների կատարելագործման կամ այդ պահանջների փոփոխության դեպքում՝ պետական ծառայողի կամ Աշխատակազմի ղեկավարի նախաձեռնությամբ:

2. Պետական ծառայողի վերապատրաստումն անցկացվում է Աշխատակազմի ղեկավարի հայտի հիման վրա:

3. Պետական ծառայողներին վերապատրաստողների թեկնածությունը և վերապատրաստման ծրագրերը հաստատում է Աշխատակազմի ղեկավարը:

4. Պետական ծառայողների վերապատրաստման հետ կապված ծախսերը կատարվում են պետական բյուջեի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

5. Մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով պետական ծառայողի գործուղումն իրականացնում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում պահպանվում են պետական ծառայողի պաշտոնը և ստաժը, իսկ նրա վարձատրությունը կարող է պահպանվել նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հայեցողությամբ:

7. Սույն օրենքի հիման վրա պետական ծառայողների վերապատրաստման, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով գործուղելու կարգը հաստատում է Ազգային ժողովի նախագահը:

-

Հոդված 23. Պետական ծառայության կադրերի ռեզերվը

-

1. Պետական ծառայության կադրերի ռեզերվի տեսակներն են՝

1) կադրերի կարճաժամկետ ռեզերվը.

2) կադրերի երկարաժամկետ ռեզերվը:

2. Պետական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցվում են սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 6-րդ կետով նախատեսված հիմքով պետական ծառայության պաշտոնից ազատված անձինք.

2) 19-րդ կետով նախատեսված հիմքով պետական ծառայության պաշտոնում չնշանակված անձինք:

3. Պետական ծառայության կադրերի երկարաժամկետ ռեզերվում գրանցվում են՝

1) սույն հոդվածի 4-րդ մասում նշված՝ կադրերի կարճաժամկետ ռեզերվում միանգամյա գտնվելու ժամկետը լրացած անձինք.

2) պետական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացված մրցույթում օրենքով սահմանված կարգով հաղթող ճանաչված, սակայն պաշտոնի չնշանակված անձինք:

4. Պետական ծառայության կադրերի կարճաժամկետ և երկարաժամկետ ռեզերվներում միանգամյա գտնվելու առավելագույն ժամկետը վեց ամիս է, բայց ոչ ավելի, քան կադրերի ռեզերվում գրանցված անձի 65 տարին լրանալը:

5. Սույն օրենքի հիման վրա պետական ծառայության կադրերի ռեզերվում գրանցելու և կադրերի ռեզերվից հանելու կարգը հաստատում է Ազգային ժողովի նախագահը:

-

Գ Լ ՈՒ Խ 5

-

ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

-

Հոդված 24. Պետական ծառայողի հիմնական իրավունքները

-

1. Պետական ծառայողի հիմնական իրավունքներն են՝

1) զբաղեցրած պաշտոնում իր իրավունքները և պարտականությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.

2) իր անձնական գործի բոլոր նյութերին, իր գործունեության գնահատականներին և այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ ներկայացնելը.

3) ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.

4) սահմանված կարգով որոշումներ ընդունելը.

5) սահմանված կարգով և դեպքերում ծառայողական քննություն անցկացնել պահանջելը.

6) աշխատանքի, վարձատրության, առողջության պաշտպանությունը, անվտանգ և անհրաժեշտ աշխատանքային պայմանների ապահովվածությունը.

7) սոցիալական պաշտպանությունը և ապահովությունը.

8) իրավական պաշտպանությունը, այդ թվում՝ քաղաքական հետապնդումներից.

9) պետական ծառայության դասային աստիճանի՝ սահմանված կարգով բարձրացումը.

10) պետական բյուջեի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին վերապատրաստվելը.

11) դատական կարգով մրցույթի և ատեստավորման արդյունքները բողոքարկելը.

12) պետական ծառայության կազմակերպման ու կատարելագործման հարցերի քննությանը մասնակցելը և առաջարկություններ ներկայացնելը:

Պետական ծառայողն ունի օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

(24-րդ հոդվածը խմբ. 26.05.11 ՀՕ-189-Ն)

-

Հոդված 25. Պետական ծառայողի հիմնական պարտականությունները

1. Պետական ծառայողի հիմնական պարտականություններն են՝

1) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները կատարելը.

2) մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ ապահովելը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները ճշգրիտ ու ժամանակին կատարելը և հաշվետվություններ ներկայացնելը.

4) վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները կատարելը.

5) ներքին կարգապահական կանոնները պահպանելը.

6) սահմանված կարգով և ժամկետներում առաջարկություններ, դիմումներ և բողոքներ քննության առնելը և դրանց ընթացք տալը.

7) պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները պահպանելը, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.

8) պետական ծառայողի էթիկայի կանոնները պահպանելը, որոնք հաստատվում են Ազգայի ժողովի նախագահի կողմից.

9) օրենքով սահմանված կարգով և դեպքերում իր եկամուտների հայտարարագիրը ներկայացնելը.

10) սահմանված կարգով և ժամկետներում ատեստավորմանը և վերապատրաստմանը մասնակցելը:

Պետական ծառայողն ունի օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

(25-րդ հոդվածը փոփ., խմբ. 26.05.11 ՀՕ-189-Ն)

Հոդված 26. Պետական ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները

1. Պետական ծառայողն իրավունք չունի՝

1) կատարելու վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից.

2) անձամբ զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ.

3) լինելու երրորդ անձանց ներկայացուցիչն այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ ինքը գտնվում է ծառայության մեջ, կամ որն անմիջականորեն ենթակա է իրեն կամ անմիջականորեն վերահսկելի է իր կողմից.

4) խախտելու պետական ծառայողների քաղաքական զսպվածության սկզբունքը՝ իր ծառայողական դիրքն օգտագործելու կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների շահերի համար, նրանց նկատմամբ վերաբերմունք քարոզելու, ինչպես նաև իր ծառայողական պարտականությունները կատարելիս այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնել.

5) հոնորար ստանալու ծառայողական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար.

~~6) ոչ ծառայողական նպատակներով օգտագործելու նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական այլ գույքը և ծառայողական տեղեկատվությունը.~~

~~7) ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալու նվերներ, գումարներ կամ ծառայություններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.~~

~~8) որպես պետության ներկայացուցիչ՝ գույքային գործարքներ կնքելու սույն հոդվածի 3-րդ մասում նշված անձանց հետ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:~~

~~2. Պետական ծառայության պաշտոնի նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, պետական ծառայողը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավոր է առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում բաժնեմաս ունենալու դեպքում դա հանձնել հավատարմագրային կառավարման: Պետական ծառայողն իրավունք ունի հավատարմագրային կառավարման հանձնված գույքից ստանալու եկամուտ:~~

~~3. Պետական ծառայողին արգելվում է համատեղ աշխատել մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ:~~

~~***(26-րդ հոդվածը փոփ. 19.03.12 ՀՕ-124-Ն)***~~

-

~~Հոդված 27.~~ ~~**Պետական ծառայողին հանձնարարականներ տալու սահմանափակումները**~~

-

~~1. Պետական ծառայողին չեն կարող տրվել բանավոր կամ գրավոր այնպիսի հանձնարարականներ, որոնք՝~~

~~1) հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին.~~

~~2) հանձնարարականներ տվողի կամ կատարողի լիազորությունների շրջանակներից դուրս են:~~

~~2. Սույն հոդվածի 1-ին մասի խախտմամբ հանձնարարականներ տալու դեպքերում պետական ծառայողը պարտավոր է ստացած հանձնարարականի օրինականության վերաբերյալ իր կասկածների մասին անհապաղ գրավոր զեկուցել հանձնարարականը տվողին և նրա վերադասին կամ նրանց փոխարինող անձանց: Եթե վերադասը (նրա բացակայության դեպքում՝ նրան փոխարինող անձը կամ հանձնարարական տվողը) գրավոր հաստատում է տրված հանձնարարականը, ապա պետական ծառայողը պարտավոր է դա կատարել, բացառությամբ այն դեպքերի, երբ հանձնարարականի կատարումը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քրեական կամ վարչական պատասխանատվության, և այդ մասին գրավոր տեղեկացնել Աշխատակազմի ղեկավարին, եթե վերջինը վերադաս չէ, իսկ այդ դեպքում՝ Ազգային ժողովի նախագահին: Պետական ծառայողի կողմից այդ հանձնարարականի կատարման համար պատասխանատվությունը կրում է հանձնարարականը գրավոր հաստատած անձը:~~

-

~~Հոդված 28.~~ ~~**Պետական ծառայողի սոցիալական երաշխիքները**~~

-

~~1. Պետությունը պետական ծառայողի համար երաշխավորում է՝~~

~~1) ծառայողական պարտականությունների կատարման համար անվտանգ և անհրաժեշտ աշխատանքային պայմաններ.~~

~~2) վարձատրություն և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ վճարներ.~~

~~3) ամենամյա վճարովի արձակուրդ.~~

~~4) վերապատրաստում.~~

~~5) օրենքով սահմանված դեպքերում և կարգով պարտադիր պետական սոցիալական ապահովագրություն.~~

~~6) ծառայողական պարտականությունները կատարելիս հաշմանդամության դեպքում՝ նրան, իսկ զոհվելու դեպքում՝ նրա ընտանիքի անդամներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան վճարով ապահովում.~~

~~7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով, պետական ծառայողի դիմումի հիման վրա ծառայողական պարտականությունների կատարման հետ կապված նրա և նրա ընտանիքի անդամների անվտանգության պաշտպանության ապահովում՝ բռնությունից, ահաբեկումից, այլ ոտնձգություններից.~~

~~8) ծառայողական գործուղումների հետ կապված տրանսպորտային, բնակարանային և այլ ծախսերի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցում:~~

~~2. Ազգային ժողովի նախագահի սահմանած դեպքերում և կարգով պետական ծառայողին հատկացվում է տրանսպորտային միջոց, կամ տրվում է տրանսպորտային ծախսերի հատուցում:~~

-

~~Հոդված 29.~~ ~~Պետական ծառայողի վարձատրությունը~~

-

~~1. Յուրաքանչյուր պետական ծառայող, առանց որևէ խտրականության, ունի համարժեք աշխատանքի համար համարժեք վարձատրության իրավունք:~~

~~2. Պետական ծառայողների վարձատրության, այդ թվում՝ հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի հաշվարկների և չափերի, աշխատավարձի բնականոն աճի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:~~

~~(29-րդ հոդվածը խմբ. 12.12.13 ՀՕ-167-Ն)~~

-

~~Հոդված 30.~~ ~~Պետական ծառայողի սոցիալական ապահովությունը~~

-

~~1. Պետական ծառայողի սոցիալական, այդ թվում՝ կենսաթոշակային ապահովությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:~~

-

~~Հոդված 31.~~ ~~Պետական ծառայողի իրավական վիճակը Աշխատակազմի կառուցվածքային փոփոխության (անվանափոխության) ժամանակ~~

-

~~1. Աշխատակազմի կառուցվածքային փոփոխությունը (անվանափոխությունը) պետական ծառայողին պաշտոնից ազատելու հիմք չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ~~

դրանք ուղեկցվում են Աշխատակազմի կառուցվածքային փոփոխությամբ (անվանափոխությամբ) պայմանավորված հաստիքների կրճատմամբ: Հաստիքների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը տրվում է հոի կամ մինչև երեք տարեկան երեխա խնամող կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչված պետական ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության դեպքում պետական ծառայության ավելի բարձր դասային աստիճան ունեցող պետական ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության դեպքում՝ պետական ծառայության առավել երկար ստաժ ունեցող պետական ծառայողին:

2. Աշխատակազմի կառուցվածքային փոփոխության (անվանափոխության) հետևանքով պետական ծառայության պաշտոնների անվանացանկում առաջացած նոր պաշտոնները զբաղեցվում են անվանացանկում փոփոխություններ կատարելուց հետո սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված կարգով՝ 15-օրյա ժամկետում:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով և ժամկետում նշանակումներ չկատարելու դեպքում այդ պաշտոններն զբաղեցվում են սույն օրենքով նախատեսված մրցույթով:

-

Հոդված 32. Պետական ծառայողի անձնական գործը

-

1. Պետական ծառայողի ծառայողական գործունեության ընթացքն արտացոլվում է նրա անձնական գործում:

2. Պետական ծառայողների անձնական գործերը վարելու կարգը հաստատում է Աշխատակազմի ղեկավարը:

-

Գ Լ ՈՒ Խ 6

-

ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼԸ, ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐԻ ԵՆԹԱՐԿԵԼԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼԸ

-

Հոդված 33. Պետական ծառայողի նկատմամբ կիրառվող խրախուսանքի տեսակները

-

1. Երկարամյա ծառայության, ինչպես նաև ծառայողական պարտականությունները և հատուկ առաջադրանքները գերազանց կատարելու համար պետական ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ տեսակները.

1) շնորհակալության հայտարարում.

2) միանվագ դրամական պարգևատրում.

3) հուշանվերով պարգևատրում.

4) լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում.

5) կարգապահական տույժի հանում:

Պետական ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել նաև օրենքով սահմանված խրախուսման այլ տեսակներ:

2. Պետական ծառայողի նկատմամբ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված խրախուսանքները կիրառում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

-

~~Հոդված 34.~~ ~~Պետական ծառայողի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը~~

-

~~1. Ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև ծառայողական լիազորությունները վերազանցելու, ներքին կարգապահական կանոնները խախտելու դեպքերում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, պետական ծառայողի նկատմամբ կիրառվում են հետևյալ կարգապահական տույժերը.~~

~~1) նախազգուշացում.~~

~~2) նկատողություն.~~

~~3) խիստ նկատողություն.~~

~~4) օրենքով սահմանված կարգով աշխատավարձի իջեցում.~~

~~5) պետական ծառայության ավելի բարձր դասային աստիճանի, բացառությամբ պետական ծառայության բարձրագույն դասային աստիճանի, իջեցում՝ մեկ աստիճանով.~~

~~6) զբաղեցրած պաշտոնից ազատում:~~

~~2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգապահական տույժերը պետական ծառայողի նկատմամբ կիրառում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:~~

~~3. Սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը պետական ծառայողի նկատմամբ կիրառում է պետական ծառայության տվյալ դասային աստիճանը շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:~~

~~4. Մինչև կարգապահական տույժ նշանակելը կարգապահական տույժ կիրառելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարգապահական խախտման վերաբերյալ պետք է գրավոր բացատրություն պահանջի կարգապահական խախտում թույլ տված պետական ծառայողից: Գրավոր բացատրություն տալուց հրաժարվելու փաստը պետք է ամրագրվի արձանագրությամբ:~~

~~5. Կարգապահական տույժը նշանակվում է, եթե երեք ամսից ավելի չի անցել կարգապահական խախտման հայտնաբերման օրվանից՝ չհաշված հիվանդությունը կամ արձակուրդում գտնվելը:~~

~~Կարգապահական տույժ նշանակվել չի կարող, եթե վեց ամսից ավելի է անցել կարգապահական խախտում կատարելու օրվանից:~~

~~6. Կարգապահական տույժը պետական ծառայողին հաղորդվում է ոչ ուշ, քան կարգապահական տույժ նշանակելուց հետո՝ եռօրյա ժամկետում:~~

~~7. Կարգապահական յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ:~~

~~8. Պետական ծառայողի նկատմամբ պաշտոնից ազատման հանգեցնող կարգապահական տույժ կիրառվում է ծառայողական քննություն անցկացնելուց հետո:~~

~~Ծառայողական քննություն անցկացնելու ընթացքում պետական ծառայողի ծառայողական պարտականությունների կատարումը մինչև մեկ ամիս ժամկետով կարող է կասեցվել՝ պետական ծառայողի վարձատրության պահպանմամբ:~~

~~Սույն օրենքի հիման վրա ծառայողական քննություն անցկացնելու կարգը հաստատում է Ազգային ժողովի նախագահը:~~

~~9. Եթե պետական ծառայողը կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա նա համարվում է կարգապահական տույժի չենթարկված: Կարգապահական տույժը կարող է հանվել մինչև~~

մեկ տարին լրանալը, եթե պետական ծառայողը թույլ չի տվել կարգապահական նոր խախտում և դրսևորել է իրեն որպես բարեխիղճ ծառայող:

(34-րդ հոդվածը փոփ. 26.05.11 ՀՕ-189-Ն)

-

Հոդված 35. Պետական ծառայողին պաշտոնից ազատելու հիմքերը

-

1. Պետական ծառայողին պաշտոնից ազատելու հիմքերն են՝

1) անձնական դիմումը.

2) օրենքով սահմանված կարգով և դեպքերում իր եկամուտների հայտարարագիրը չներկայացնելը.

3) սույն օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և (կամ) 4-րդ կամ 3-րդ և 5-րդ կամ 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելը.

4) սույն օրենքով նախատեսված ատեստավորմանը երեք անգամ չներկայանալը.

5) սույն օրենքով նախատեսված ատեստավորման արդյունքները.

6) հաստիքների կրճատումը.

7) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան վեց ամիս աշխատանքի չներկայանալը՝ չհաշված հղիության և ծննդաբերության արձակուրդը.

8) քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում ընտրվելը կամ նշանակվելը.

9) պետական ծառայության պաշտոնի նշանակելու՝ սույն օրենքով սահմանված կարգի խախտումը.

10) սույն օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումները չպահպանելը.

11) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելը.

12) ազատազրկման դատապարտվելը.

13) պետական ծառայության պաշտոն զբաղեցնելու՝ սույն օրենքով սահմանված առավելագույն տարիքը լրանալը.

14) սույն օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելը.

15) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող ճանաչվելը.

16) դատական կարգով պետական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկվելը.

17) սույն օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված հիվանդություններից որևէ մեկով հիվանդանալը.

18) սույն օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված կարգապահական տույժ կիրառելը.

19) սույն օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում նշանակում չկատարելը.

20) սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված արտամրցութային կարգով պետական ծառայության թափուր պաշտոնում նշանակվելը:

2. Պետական ծառայողի պարտականությունները համարվում են դադարած՝ նրա մահվան կապակցությամբ:

3. Պետական ծառայողը պաշտոնից ազատման ենթակա չէ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով, եթե առկա է սույն հոդվածի 1-ին մասի 2-20-րդ կետերով նախատեսված պաշտոնից ազատման հիմքերից որևէ մեկը։

4. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով պետական ծառայողն ազատվում է զբաղեցրած պաշտոնից անձնական դիմում ներկայացնելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, եթե այդ դիմումում այլ ժամկետ նշված չէ։

5. Սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ և 19-րդ կետերով նախատեսված հիմքերով պաշտոնից ազատելու դեպքում պետական ծառայողին այդ մասին նախազգուշացնելը պարտադիր չէ։

-

Հոդված 36. Պետական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը

-

1. Պետական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը 65 տարին է։

2. Պետական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալու դեպքում տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ պետական ծառայողը կարող է մինչև մեկ տարի ժամկետով շարունակել զբաղեցնել իր պաշտոնը։

-

Հոդված 37. Պետական ծառայողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու որոշումը դատական կարգով բողոքարկելը

-

1. Պետական ծառայողն իր նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու (այդ թվում՝ պետական ծառայության պաշտոնից ազատելու) որոշումը կարող է բողոքարկել դատական կարգով։

2. Պետական ծառայության պաշտոնից ազատելու որոշումն անվավեր ճանաչվելու դեպքում պետական ծառայողը վերականգնվում է իր պաշտոնում դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ ինգօրյա ժամկետում, և հարկադիր պարապուրդի դիմաց ստանում է հատուցում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով։

-

ԳԼՈՒԽ 7

-

ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

-

Հոդված 38. Պետական ծառայության կառավարման մարմինը

-

1. Պետական ծառայության կառավարման մարմինը Ազգային ժողովի նախագահն է։

2. Ազգային ժողովի նախագահի՝ որպես պետական ծառայության կառավարման մարմնի լիազորությունները սահմանվում են սույն օրենքով, այլ օրենքներով և այլ իրավական ակտերով։

-

Հոդված 39. Պետական ծառայության ղեկավարման մարմինը

-

1. Պետական ծառայության ղեկավարման մարմինը Աշխատակազմի ղեկավարն է, որն ի պաշտոնե Ազգային ժողովի գլխավոր քարտուղարն է:

2. Աշխատակազմի ղեկավարի պաշտոնը հայեցողական պաշտոն է: Աշխատակազմի ղեկավարին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է Ազգային ժողովի նախագահը:

3. Աշխատակազմի ղեկավարի լիազորությունները սահմանվում են սույն օրենքով, այլ օրենքներով, Աշխատակազմի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

(39-րդ հոդվածը խմբ. 26.05.11 ՀՕ-189-Ն)

Հոդված 40. Պետական ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովները

1. Պետական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթը և պետական ծառայողների ատեստավորումն անցկացնում են համապատասխանաբար մրցութային և ատեստավորման հանձնաժողովները:

2. Սույն օրենքի հիման վրա մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը և կազմերը հաստատում է Ազգային ժողովի նախագահը:

3. Մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերում կարող են ընդգրկվել նաև Ազգային ժողովի պատգամավորներ և համապատասխան բնագավառների մասնագետներ:

(40-րդ հոդվածը փոփ. 26.05.11 ՀՕ-189-Ն)

ԳԼՈՒԽ 8

ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հոդված 41. Վեճերի լուծումը և պատասխանատվությունը պետական ծառայության մասին օրենսդրությունը խախտելու համար

1. Պետական ծառայության մասին օրենսդրության կիրառման հետ կապված վեճերը լուծվում են պետական ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև դատական կարգով:

2. Պետական ծառայության մասին օրենսդրությունը խախտող անձինք կրում են պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 9

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 42. Անցումային դրույթ

1. Սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված դրույթը տարածվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո առաջացած հարաբերությունների վրա:

~~Հոդված 43. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը~~

-

~~1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:~~

~~2. Սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 4 ի ՀՕ-472 Ն օրենքը:~~

Հոդված 8. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. **Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:**
2. **Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո աշխատակազմի պետական ծառայողները համարվում են քաղաքացիական ծառայողներ և նշանակվում քաղաքացիական ծառայության պաշտոններում՝ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 44-րդ հոդվածով սահմանված կարգով:**
3. **Բյուջետային գրասենյակի աշխատողների քաղաքացիական ծառայողներ համարելու և պաշտոնի նշանակելու հարաբերությունները կարգավորվում են Ազգային ժողովի խորհրդի որոշմամբ:**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2018 թվականի հունվարի 17-ին

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Հոդված 21. Սահմանադրական դատարանի աշխատակազմը

1. Սահմանադրական դատարանն իր աշխատակազմը ձևավորում է ինքնուրույն օրենքով և իր աշխատակարգով սահմանված կարգով:

2. Սահմանադրական դատարանի աշխատակազմն ապահովում է անհրաժեշտ խորհրդատվական, կազմակերպչական, տեղեկատվական, տեխնիկական և այլ պայմաններ Սահմանադրական դատարանի լիազորությունների իրականացման համար և կազմակերպում է Սահմանադրական դատարանում քաղաքացիների ընդունելությունը:

~~3. Սահմանադրական դատարանի աշխատակազմում ծառայությունը Հայաստանի Հանրապետությունում նախատեսված պետական ծառայության հատուկ տեսակ է՝ դատական ծառայություն, որի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով և Սահմանադրական դատարանի աշխատակարգով:~~

~~4. Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Սահմանադրական դատարանի նախագահը:~~

3. Սահմանադրական դատարանի աշխատակազմում առանձին պաշտոնների առանձնահատկություններից ելնելով՝ պաշտոնները զբաղեցվում են «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով:

4. Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարին պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում Սահմանադրական դատարանի նախագահը: Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնը պետական վարչական պաշտոն է:

5. Սահմանադրական դատարանի աշխատակազմի կանոնադրությունը սահմանվում է Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ:

~~**ԳԼՈՒԽ 9**~~
~~***ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ***~~

-

~~**Հոդված 87. Դատական ծառայությունը և դատական ծառայողները**~~

-

~~1. Սահմանադրական դատարանի աշխատակազմում մասնագիտական գործունեությունը, բացառությամբ տեխնիկական սպասարկման գործառույթների հետ կապված աշխատանքային գործունեության, դատական ծառայություն է, իսկ աշխատակազմում համապատասխան հաստիքներ զբաղեցնող աշխատողները դատական ծառայողներ են:~~

~~2. Սահմանադրական դատարանում դատական ծառայության վրա տարածվում են դատական ծառայության հարաբերությունները կարգավորող օրենքներն այնքանով, որքանով դրանք չեն հակասում սույն օրենքին:~~

«ԳԼՈՒԽ 9

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ

Հոդված 87. Ծառայության առանձնահատկությունները

1. Սահմանադրական դատարանի աշխատակազմում մասնագիտական գործունեությունը, բացառությամբ՝ տեխնիկական սպասարկման գործառույթների հետ կապված աշխատանքային գործունեության, քաղաքացիական ծառայություն է:Աշխատակազմում համապատասխան հաստիքներ զբաղեցնող աշխատողները քաղաքացիական ծառայողներ են, իսկ դատավորին կցված ծառայողները՝ դատական ծառայողներ:

2. Սահմանադրական դատարանում իրականացվող դատական ծառայության հետ կապված իրավահարաբերությունների վրա «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» օրենքի դրույթները տարածվում են այնքանով, որքանով դրանք չեն հակասում սույն օրենքին:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2001 թվականի հոկտեմբերի 23-ին

~~ՊԵՏԱԿԱՆ~~ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը սահմանում է ~~պետական կառավարչական հիմնարկների (այսուհետ՝ հիմնարկ) և~~ համայնքային կառավարչական հիմնարկների **(այսուհետ՝ հիմնարկ)** իրավական վիճակը, դրանց ստեղծման, գործունեության, վերակազմակերպման և գործունեության կարգը:

Հոդված 2. Հիմնարկի մասին օրենսդրությունը

Հիմնարկի մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից, այլ օրենքներից և իրավական ակտերից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից: ~~Համայնքային կառավարչական հիմնարկների մասով~~ սույն օրենքի դրույթները գործում են այնքանով, որքանով չեն հակասում «Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» և «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության և այլ օրենքներին:

Հոդված 3. Հիմնական դրույթներ հիմնարկի մասին

~~1. Հիմնարկն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն է, որն ստեղծվում է Հանրապետության Նախագահին, օրենսդիր, գործադիր, դատական իշխանության մարմիններին, դատախազությանը, տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև օրենքի հիման վրա ստեղծված՝ պետական կառավարչական գործառույթներ իրականացնող այլ պետական մարմիններին (այսուհետ՝ պետական մարմին) վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման և քաղաքացիական իրավահարաբերություններին նրանց մասնակցության ապահովման նպատակով:~~

1. Հիմնարկն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն է, որն ստեղծվում է տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման և քաղաքացիական իրավահարաբերություններին նրանց մասնակցության ապահովման նպատակով:

2. Հիմնարկն իր իրավասության սահմաններում, ~~Հայաստանի Հանրապետության~~ **համայնքի** անունից, կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

~~3. Հիմնարկն ունի անվանում, որը ներառում է համապատասխան պետական մարմնի անվանումը, իսկ հիմնարկի կանոնադրությամբ նախատեսված դեպքում՝ նաև «աշխատակազմ» բառը:~~

~~Համայնքային կառավարչական հիմնարկի անվանումը ներառում է մարզի, համայնքի անվանումը, ինչպես նաև համայնքապետարանի աշխատակազմ (Երևանի դեպքում՝ Երևանի քաղաքապետարանի) բառերը:~~

3. Հիմնարկն ունի անվանում, որը ներառում է մարզի, համայնքի անվանումը, ինչպես նաև համայնքապետարանի (Երևանի դեպքում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմ բառերը:

4. Հիմնարկի գտնվելու վայրը նրա մշտական գործող մարմնի գտնվելու վայրն է:

5. Հիմնարկն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և հիմնարկի հայերեն անվանմամբ կլոր կնիք: Հիմնարկը կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

6. Հիմնարկն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

~~7. Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության և ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների հիմնարկների իրավական վիճակի առանձնահատկությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով:~~

Հոդված 4. Հիմնարկի գույքը

1. Հիմնարկի գույքը ձևավորվում է հիմնադրի կողմից նրա տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից: Հիմնարկին գույքը հանձնվում է ~~վարչական~~ **իրավական** ակտին համապատասխան, որը հաշվառվում է նրա հաշվեկշռում:

Հիմնադիրն իրավունք ունի ցանկացած ժամանակ հետ վերցնել իր կողմից հիմնարկին հանձնված գույքը:

Հիմնադրի որոշմամբ հիմնարկին կարող է վերապահվել նաև ~~պետական~~ բաժնետոմսերի կամ բաժնեմասերի տիրապետման իրավասություն:

2. Հիմնարկն իրավունք ունի սույն օրենքով, իրավական այլ ակտերով և իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, իր գործունեության նպատակներին և գույքի նշանակությանը համապատասխան օգտագործել, տիրապետել և տնօրինել իրեն հանձնված գույքը:

3. Հիմնադրի կողմից հիմնարկին հանձնված գույքը ենթակա է հաշվառման՝ կառավարության սահմանած կարգով:

Հոդված 5. Հիմնարկի գործունեությունը

1. Հիմնարկն իրավունք ունի իրականացնել միայն այնպիսի գործունեություն, որը նպատակաուղղված է համապատասխան ~~պետական կամ~~ տեղական ինքնակառավարման մարմնին վերապահված լիազորությունները լիարժեք և արդյունավետ իրականացնելուն, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունն ապահովելուն:

2. Հիմնարկը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Հիմնարկի կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների համար կարող է գանձվել միայն ~~պետական կամ~~ տեղական տուրք կամ տեղական վճար՝ օրենքով սահմանված չափով և կարգով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

3. Հիմնարկի պահպանման ծախսերն ամբողջությամբ ֆինանսավորվում են պետական կամ համայնքի բյուջեի միջոցներից~~, բացառությամբ դիվանագիտական և հյուպատոսական մարմինների~~: Հիմնարկն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է գանձապետական համակարգի միջոցով:

4. Հիմնարկի կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

Հոդված 6. Հիմնարկի պատասխանատվությունը

~~Հիմնարկի պարտավորությունների համար պատասխանատվությունը կրում է Հայաստանի Հանրապետությունը (համայնքային կառավարչական հիմնարկի դեպքում՝ համայնքը):~~

Հիմնարկի պարտավորությունների համար պատասխանատվությունը կրում է համայնքը:

Հոդված 7. Հիմնարկի ստեղծումը

~~1. Հիմնարկի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է (համայնքային կառավարչական հիմնարկի դեպքում՝ համայնքը):~~

~~Հայաստանի Հանրապետության անունից հիմնարկի հիմնադիր (այսուհետ՝ հիմնադիր) հանդես են գալիս համապատասխանաբար՝~~

~~Հանրապետության Նախագահի աշխատակազմի և Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի հիմնարկներինը՝ Հանրապետության Նախագահը.~~

~~Ազգային ժողովի աշխատակազմի հիմնարկինը՝ Ազգային ժողովի նախագահը.~~

~~սահմանադրական դատարանի աշխատակազմի հիմնարկինը՝ սահմանադրական դատարանի նախագահը.~~

~~Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հիմնարկինը՝ Մարդու իրավունքների պաշտպանը.~~

~~դատական դեպարտամենտ հիմնարկինը՝ վճռաբեկ դատարանի նախագահը.~~

~~քննչական կոմիտեի դեպարտամենտ հիմնարկինը՝ Քննչական կոմիտեի նախագահը.~~

~~օրենքի հիման վրա ստեղծված պետական կառավարչական գործառույթներ իրականացնող կոլեգիալ պետական մարմինների հիմնարկներինը՝ տվյալ կոլեգիալ մարմինները.~~

~~կառավարության աշխատակազմի, գործադիր իշխանության մարմինների, դատախազության և սույն հոդվածով չնշված այլ հիմնարկներինը (այսուհետ՝ գործադիր իշխանության և այլ մարմինների հիմնարկներ)՝ կառավարությունը.~~

~~համայնքապետարանի (Երևանի դեպքում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի հիմնարկինը՝ համայնքի ավագանին:~~

1. Հիմնարկի հիմնադիրը համայնքն է:

2. Հիմնարկն ստեղծվում է հիմնադրի որոշմամբ: Հիմնարկի ստեղծման մասին հիմնադրի որոշմամբ սահմանվում են հիմնարկի անվանումը, նրա գործունեության նպատակները և խնդիրները, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված կամ օրենքին չհակասող այլ դրույթներ: ~~Գործադիր իշխանության և այլ մարմինների հիմնարկի ստեղծման մասին հիմնադրի որոշմամբ սահմանվում են նաև համապատասխան պետական մարմնի լիազորությունները:~~

3. Հիմնարկը ~~կառավարության սահմանած~~ **օրենքով սահմանված** կարգով ենթակա է հաշվառման՝ իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից:

4. ~~Հիմնարկի կանոնադրությունը հաստատում է հիմնադիրը, եթե օրենքով կամ Հանրապետության Նախագահի հրամանագրերով այլ բան նախատեսված չէ:~~ **Հիմնարկի կանոնադրությունը հաստատում է հիմնադիրը:**

Հիմնարկն ստեղծված է համարվում նրա կանոնադրությունը հաստատելու մասին հիմնադրի իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Հոդված 9. Հիմնարկի կառուցվածքը

1. ~~Հիմնարկի կառուցվածքը հաստատում է նրա հիմնադիրը, եթե օրենքով կամ Հանրապետության Նախագահի հրամանագրերով այլ բան նախատեսված չէ:~~

1. Հիմնարկի կառուցվածքը հաստատում է նրա հիմնադիրը:

Հիմնարկը կարող է ունենալ կառուցվածքային ստորաբաժանումներ:

2. Հիմնարկը կարող է ունենալ նաև նրա գտնվելու վայրից դուրս առանձնացված ստորաբաժանումներ:

3. Հիմնարկից առանձնացված ստորաբաժանումն ստեղծված է համարվում դրա հիմնադրման մասին որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

Հիմնարկի առանձնացված ստորաբաժանումը կարող է ունենալ կանոնադրություն, որը հաստատվում է օրենսդրությամբ կամ հիմնարկի կանոնադրությամբ նախատեսված կարգով:

~~4. Հիմնարկի առանձնացված ստորաբաժանումն իրականացնում է հիմնարկի առանձին գործառույթները կամ դրանց մի մասը և հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից (համայնքային կառավարչական հիմնարկի դեպքում՝~~

~~համայնքի անունից): Միայն օրենսդրությամբ կամ հիմնարկի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում առանձնացված ստորաբաժանումն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության անունից (համայնքային կառավարչական հիմնարկի դեպքում՝ համայնքի անունից) ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:~~

4. Հիմնարկի առանձնացված ստորաբաժանումն իրականացնում է հիմնարկի առանձին գործառույթները կամ դրանց մի մասը և հանդես է գալիս համայնքի անունից: Միայն օրենսդրությամբ կամ հիմնարկի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում առանձնացված ստորաբաժանումն իրավունք ունի համայնքի անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Հիմնարկի առանձնացված ստորաբաժանումը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և հիմնարկի հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

Հիմնարկի առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները նշանակվում և ազատվում են օրենքով կամ հիմնարկի կանոնադրությամբ սահմանված կարգով և գործում են օրենսդրության, հիմնարկի և առանձնացված ստորաբաժանման կանոնադրության հիման վրա:

~~6. Հիմնադրի որոշմամբ հիմնարկի ենթակայությանը կարող են հանձնվել պետական (համայնքային) ոչ առևտրային կազմակերպություններ:~~

Հոդված 10. Հիմնարկի կառավարման մարմինները

~~1. Հիմնարկի կառավարումն իրականացնում է հիմնադիրը, իսկ գործադիր իշխանության և այլ մարմնի հիմնարկի կառավարումը՝ նաև համապատասխան պետական մարմնի ղեկավարը (այսուհետ՝ պետական մարմնի ղեկավար):~~

~~Հիմնարկի ղեկավարումն իրականացնում է հիմնարկի գործադիր մարմնի աշխատակազմի ղեկավարը:~~

~~Համայնքային կառավարչական հիմնարկի ղեկավարումն իրականացվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:~~

1. Հիմնարկի կառավարումն իրականացնում է հիմնադիրը:

Համայնքային կառավարչական հիմնարկի ղեկավարումն իրականացվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

~~2. Հիմնարկի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում ստեղծվում են կոլեգիալ խորհրդակցական մարմիններ:~~

~~Հիմնարկի կոլեգիալ խորհրդակցական մարմնի ձևավորման, գործունեության կարգը և լիազորությունները սահմանվում են հիմնարկի կանոնադրությամբ:~~

~~3. Տեսչական մարմինների կառավարման առանձնահատկությունները սահմանվում են «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:~~

Հոդված 11. Հիմնարկի հիմնադիրը

1. Հիմնադիրը՝

ա) ստեղծում է, ինչպես նաև վերակազմակերպում և դադարեցնում է հիմնարկի գործունեությունը.

բ) հաստատում է հիմնարկի կանոնադրությունը և դրանում կատարվող փոփոխությունները, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ.

գ) որոշում է հիմնարկին հանձնվող գույքի կազմը և չափը.

~~դ) պետական մարմնի՝ օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված գործունեության բնագավառին, նպատակներին և խնդիրներին համապատասխան սահմանում է հիմնարկի գործունեության հիմնական ուղղությունները.~~

դ) սահմանում է հիմնարկի գործունեության հիմնական ուղղությունները.

~~ե) նշանակում և ազատում է հիմնարկի աշխատակազմի ղեկավարին, ինչպես նաև հիմնարկի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում՝ հիմնարկի այլ աշխատողներին, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, իսկ համայնքապետարանի (Երևանի դեպքում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի քարտուղարին նշանակում է համայնքի ղեկավարը.~~

զ) հաստատում է հիմնարկի կառուցվածքը, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ.

է) իրականացնում է հիմնարկի գործունեության ընթացիկ գործունեության վերահսկողությունը.

~~ը) կասեցնում է կամ ուժը կորցրած է ճանաչում հիմնարկի աշխատակազմի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.~~

թ) լսում է հիմնարկի գործունեության մասին հաշվետվությունները, քննում է դրանց գործունեության ստուգման արդյունքները.

ժ) վերահսկողություն է իրականացնում հիմնարկին ամրացված կամ օգտագործման հանձնված պետական **կամ համայնքային** սեփականության պահպանության նկատմամբ.

ժա) օրենքով սահմանված կարգով որոշում է հիմնարկին ամրացված գույքի օգտագործման, տնօրինման և տիրապետման կարգը.

ժբ) հաստատում է հիմնարկի տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

ժգ) հաստատում է հիմնարկի առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները.

ժդ) իրականացնում է օրենքով և հիմնարկի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

~~2. Կառավարությունը հիմնարկի հիմնադրի՝ սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված իր լիազորությունները կարող է վերապահել համապատասխան պետական մարմնի ղեկավարին, բացառությամբ 1-ին կետի «ա»-«դ» և «զ» ենթակետերով սահմանվածների:~~

~~Սույն կետի դրույթը չի տարածվում համայնքային կառավարչական հիմնարկի վրա:~~

~~**Հոդված 12. Պետական մարմնի ղեկավարը**~~

-

~~Պետական մարմնի ղեկավարը՝~~

~~ա) օրենքով, իրավական այլ ակտերով և հիմնարկի կանոնադրությամբ նախատեսված հիմնարկի գործունեության բնագավառին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ հիմնարկի գործունեության հիմնական ուղղությունների մասին առաջարկություններ է ներկայացնում հիմնադրին.~~

~~բ) իր իրավասության սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից, ինչպես նաև տալիս է Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.~~

~~գ) օրենքով, իրավական այլ ակտերով կամ հիմնարկի կանոնադրությամբ նախատեսված իր լիազորությունների սահմաններում նշանակում և ազատում է հիմնարկի աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.~~

~~դ) օրենքով, իրավական այլ ակտերով կամ հիմնարկի կանոնադրությանը համապատասխան սահմանում է հիմնարկի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը.~~

~~ե) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.~~

~~զ) օրենքով կամ հիմնարկի կանոնադրությամբ նախատեսված իր լիազորությունների սահմաններում հաստատում է հիմնարկի տարածքային ստորաբաժանումների կանոնադրությունները.~~

~~է) օրենքով կամ հիմնարկի կանոնադրությամբ նախատեսված իր լիազորությունների սահմաններում նշանակում և ազատում է հիմնարկի տարածքային ստորաբաժանումների ղեկավարներին.~~

~~ը) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հիմնարկի աշխատակազմի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.~~

~~թ) լսում է հիմնարկի գործունեության մասին հաշվետվությունները, քննում է դրանց գործունեության ստուգման արդյունքները.~~

~~ժ) վերահսկողություն է իրականացնում հիմնարկին ամրացված կամ օգտագործման հանձնված պետական սեփականության պահպանության նկատմամբ.~~

~~ժա) իրականացնում է օրենքով, իրավական այլ ակտերով և հիմնարկի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:~~

Հոդված 13. ~~**Հիմնարկի աշխատակազմի ղեկավարը**~~
Հիմնարկի աշխատակազմի քարտուղարը

1. ~~Հիմնարկի աշխատակազմի ղեկավարը~~ **Հիմնարկի աշխատակազմի քարտուղարը** օրենքով, իրավական այլ ակտերով, հիմնադրի և ~~պետական մարմնի~~ **համայնքի** ղեկավարի որոշումներով, հիմնարկի կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հիմնարկի ընթացիկ գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրի և ~~պետական մարմնի~~ **համայնքի** ղեկավարի որոշումների, հիմնարկի կանոնադրության պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

~~Հիմնարկի աշխատակազմի ղեկավարին նշանակում և ազատում է հիմնադիրը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:~~

2. ~~Հիմնարկի աշխատակազմի ղեկավարը~~ **Հիմնարկի աշխատակազմի քարտուղարը** չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

3. ~~Հիմնարկի աշխատակազմի ղեկավարը~~ **Հիմնարկի աշխատակազմի քարտուղարը** օրենքով սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով՝ պետությանը պատճառված վնասի համար: Հիմնարկի աշխատակազմի ղեկավարի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառված վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

~~Հիմնարկի աշխատակազմի ղեկավար~~ի **Հիմնարկի աշխատակազմի քարտուղարի** լիազորությունները դադարեցնող անձը պարտավոր է լուծել նաև նրա՝ **համայնքին կամ** պետությանը պատճառած վնասի հատուցման հարցը: Սույն պահանջը չկատարելու հետևանքով պետությանը պատճառված վնասը հատուցում է սույն կետի պահանջը խախտած անձը:

4. ~~Հիմնարկի աշխատակազմի ղեկավարը~~ **Հիմնարկի աշխատակազմի քարտուղարը** պարտավոր է չկատարել հիմնադրի, ~~պետական մարմնի~~ **համայնքի** ղեկավարի՝ օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները ու հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

~~5. Հիմնարկի աշխատակազմի ղեկավարի բացակայության դեպքում նրան փոխարինում է նրա տեղակալներից մեկը հիմնադրի որոշմամբ, իսկ գործադիր իշխանության և այլ մարմնի հիմնարկինը՝ համապատասխան պետական մարմնի~~ **~~համայնքի~~** ~~ղեկավարի որոշմամբ:~~

5. Հիմնարկի աշխատակազմի քարտուղարի բացակայության դեպքում նրան փոխարինելու հարցը կարգավորվում է «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով:

Հոդված 14. Հիմնարկի աշխատակազմի ~~ղեկավարի~~ քարտուղարի լիազորությունները

~~1. Հիմնարկի աշխատակազմի ղեկավարը՝~~

~~ա) առանց լիազորագրի իր իրավասության սահմաններում հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից և ներկայացնում է նրա շահերը, կնքում է գործարքներ.~~

~~բ) օրենքով, իրավական այլ ակտերով հիմնադրի և հիմնարկի կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հիմնարկին ամրացված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.~~

~~գ) տալիս է Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.~~

~~դ) օրենքով, իրավական այլ ակտերով կամ հիմնարկի կանոնադրությամբ նախատեսված իր լիազորությունների սահմաններում նշանակում և ազատում է հիմնարկի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.~~

~~ե) օրենքով, իրավական այլ ակտերով կամ հիմնարկի կանոնադրությանը համապատասխան սահմանում է հիմնարկի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը, նշանակում և ազատում է դրանց ղեկավարներին.~~

~~գ) օրենքով, իրավական այլ ակտերով և հիմնարկի կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ.~~

~~է) հիմնադրի հաստատմանն է ներկայացնում հիմնարկի տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.~~

~~ը) հիմնադրին և պետական մարմնի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ՝ հիմնարկի գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ.~~

~~թ) իրականացնում է օրենքով, իրավական այլ ակտերով և հիմնարկի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:~~

~~2. Գործադիր իշխանության և այլ մարմնի հիմնարկի աշխատակազմի ղեկավարը սույն հոդվածի 1-ին կետի «է» և «ը» ենթակետերով նախատեսված հաշվետվությունը, հաշվեկշիռը և առաջարկությունները ներկայացնում է համապատասխան պետական մարմնի ղեկավարին: Գործադիր իշխանության և այլ մարմնի աշխատակազմի ղեկավարը չի իրականացնում սույն հոդվածի 1-ին կետի «ե» ենթակետով նախատեսված լիազորությունները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:~~

3. Համայնքապետարանի (Երևանի դեպքում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի քարտուղարի լիազորությունները սահմանվում են «Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» և «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով:

~~**Հոդված 15. Հիմնարկի աշխատակազմի ղեկավարի նշանակումը և ազատումը**~~

~~1. Հիմնարկի աշխատակազմի ղեկավարի պաշտոնում կարող է նշանակվել Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, որն ունի բարձրագույն կրթություն և ղեկավարման բնագավառի ոչ պակաս, քան հինգ տարվա աշխատանքային ստաժ:~~

~~2. Հիմնարկի աշխատակազմի ղեկավար չի կարող նշանակվել այն անձը՝~~

~~ա) որը դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ.~~

~~բ) որին օրենքի համաձայն արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնելը.~~

~~գ) որը եղել է սնանկանալու պատճառով լուծարված և իրենց պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար:~~

~~3. Հիմնարկի աշխատակազմի ղեկավարի լիազորությունները դադարեցվում են, եթե՝~~

~~ա) նա դիմում է այդ մասին.~~

~~բ) լրացել է նրա 65 տարին.~~

~~գ) նա իր գրավոր համաձայնությամբ ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում կամ անցել է իր պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքի.~~

~~դ) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով նա ավելի քան 4 ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի.~~

~~ե) նա ավելի քան երեք օր չի ներկայացել աշխատանքի.~~

~~զ) նշանակվել է օրենսդրության պահանջների խախտմամբ, կամ առաջ են եկել սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված հանգամանքները.~~

~~է) նա իր գործառույթներն իրականացնելիս պետությանը հասցրել է նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից ավելի վնաս.~~

~~ը) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած.~~

~~թ) օրինական ուժի մեջ է մտել նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը.~~

~~ժ) նա կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.~~

~~ժա) մեկ տարվա ընթացքում օրենսդրության պահանջների խախտման համար ենթարկվել է կրկնակի կարգապահական պատասխանատվության.~~

~~ժբ) դադարել է հիմնարկի գործունեությունը:~~

~~Հիմնարկի աշխատակազմի ղեկավարի լիազորությունները դադարում են նրա մահվամբ:~~

~~3. Սույն հոդվածի պահանջները չեն տարածվում քաղաքացիական ծառայող հանդիսացող աշխատակազմի ղեկավարի վրա, ինչպես նաև համայնքապետարանի (Երևանի դեպքում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի քարտուղարի վրա:~~

Հոդված 17. Հիմնարկի վերակազմակերպումը

1. Հիմնարկը վերակազմակերպվում՝ միաձուլվում, միացվում, բաժանվում, առանձնացվում, վերակազմավորվում է օրենքի, իրավական այլ ակտի կամ հիմնադրի որոշման (այսուհետ՝ որոշում) հիման վրա:

~~Հիմնարկը կարող է միացվել, միաձուլվել նաև ոչ կառավարչական հիմնարկի հետ: Հիմնարկից կարող են առանձնացվել ոչ կառավարչական հիմնարկներ, կամ դա կարող է բաժանվել նաև ոչ կառավարչական հիմնարկի (հիմնարկների): Հիմնարկը կարող է վերակազմավորվել ոչ կառավարչական հիմնարկի, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև իրավաբանական անձի:~~

2. Հիմնարկը վերակազմակերպված է համարվում նոր ստեղծված հիմնարկի կանոնադրությունն ուժի մեջ մտնելու պահից: Բացի առանձնացման դեպքերից, վերակազմակերպված հիմնարկի կանոնադրությունն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցնում են նախկին հիմնարկների կանոնադրությունները:

3. Հիմնարկի միաձուլման դեպքում դրանցից յուրաքանչյուրի իրավունքները և պարտականություններն անցնում են նոր առաջացած հիմնարկին՝ միաձուլման մասին որոշմանը և փոխանցման ակտին համապատասխան, եթե այդ որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

4. Հիմնարկի՝ այլ հիմնարկին միանալու դեպքում միացած հիմնարկի իրավունքները և պարտականություններն անցնում են վերջինիս՝ միացման մասին որոշմանը և փոխանցման ակտին համապատասխան, եթե այդ որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

5. Հիմնարկի բաժանման դեպքում դրա իրավունքները և պարտականություններն անցնում են նոր առաջացած հիմնարկին՝ բաժանման մասին որոշմանը և բաժանիչ հաշվեկշռին համապատասխան, եթե այդ որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

6. Հիմնարկի կազմից մեկ կամ մի քանի հիմնարկ առանձնանալու դեպքում վերակազմակերպված հիմնարկի իրավունքները և պարտականությունները դրանցից յուրաքանչյուրին են անցնում՝ առանձնացման մասին որոշմանը և բաժանիչ հաշվեկշռին համապատասխան, եթե այդ որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

~~7. Հիմնարկը ոչ կառավարչական հիմնարկի կամ իրավաբանական անձի վերակազմավորվելու դեպքում նոր առաջացած հիմնարկին կամ իրավաբանական անձին են անցնում վերակազմավորված հիմնարկի իրավունքները և պարտականությունները՝ վերակազմավորման մասին որոշմանը և փոխանցման ակտին համապատասխան:~~

Հոդված 18. Հիմնարկի գործունեության դադարումը

~~1. Համապատասխան կառավարչական պետական մարմնի գործունեության դադարման, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում հիմնարկի գործունեությունը դադարում է հիմնադրի որոշմամբ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:~~

~~Հիմնարկի գործունեությունը դադարեցված է համարվում դրա վերաբերյալ հիմնադրի, իսկ գործադիր իշխանության և այլ մարմնի գործունեությունը դադարեցված լինելու դեպքում՝ կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց երկու ամիս հետո, եթե այդ որոշմամբ ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ:~~

~~Գործունեությունը դադարեցրած հիմնարկի քաղաքացիաիրավական իրավունքները և պարտականությունները փոխանցվում են Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս կառավարության:~~

~~Համայնքային կառավարչական հիմնարկի գործունեությունը կարող է դադարեցվել, եթե օրենքով սահմանված կարգով տվյալ համայնքը վերակազմակերպվում է որպես այլ վարչատարածքային միավոր: Գործունեությունը դադարեցրած համայնքային կառավարչական հիմնարկի քաղաքացիաիրավական իրավունքները և պարտականությունները փոխանցվում են վերակազմակերպված համայնքին:~~

1. Հիմնարկի գործունեությունը դադարում է հիմնադրի որոշմամբ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Հիմնարկի գործունեությունը դադարեցված է համարվում դրա վերաբերյալ հիմնադրի, որոշումն ուժի մեջ մտնելուց երկու ամիս հետո, եթե այդ որոշմամբ ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ:

Հիմնարկի գործունեությունը կարող է դադարեցվել, եթե օրենքով սահմանված կարգով տվյալ համայնքը վերակազմակերպվում է որպես այլ վարչատարածքային միավոր: Գործունեությունը դադարեցրած համայնքային կառավարչական հիմնարկի քաղաքացիական իրավունքները և պարտականությունները փոխանցվում են վերակազմակերպված համայնքին:

2. Հիմնարկի գործունեությունը դադարելու դեպքում դրան ամրացված գույքի տնօրինման կարգը սահմանվում է հիմնարկի գործունեությունը դադարելու վերաբերյալ որոշմամբ:

Հոդված 17. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք

Ընդունված է 2004 թվականի նոյեմբերի 9-ին

Հոդված 7. Աշխատանքային օրենսդրության գործողության ոլորտը

1. Աշխատանքային օրենսդրությունը և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերը տարածվում են Հայաստանի Հանրապետության տարածքում ծագած աշխատանքային հարաբերությունների վրա, անկախ նրանից, թե որտեղ է կատարվում աշխատանքը՝ Հայաստանի Հանրապետությունում, թե գործատուի հանձնարարությամբ՝ այլ պետությունում:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթները ենթակա են պարտադիր կատարման բոլոր գործատուների (քաղաքացիներ կամ կազմակերպություններ) համար՝ անկախ նրանց կազմակերպական-իրավական և սեփականության ձևից:

3. Նավերում կամ օդանավերում (թռչող սարքերում) իրականացվող աշխատանքների ժամանակ ծագող աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, եթե այդ նավերը լողում են, կամ օդանավերը (թռչող սարքերը) թռիչք են կատարում Հայաստանի Հանրապետության դրոշի ներքո կամ նշագրված են Հայաստանի Հանրապետության զինանշանով:

Տրանսպորտային այլ միջոցներում կատարվող աշխատանքի ժամանակ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությունը և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերը կիրառվում են, եթե գործատուի սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցները գտնվում են Հայաստանի Հանրապետության դատազորության ներքո:

4. Եթե գործատուն օտարերկրյա պետությունն է կամ նրա դիվանագիտական ներկայացուցչությունը, օտարերկրյա կազմակերպությունը կամ օտարերկրյա անձը, ապա Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությունը և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերը տարածվում են Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող աշխատողների հետ ծագած աշխատանքային հարաբերությունների վրա այնքանով, որքանով չի խախտվում դիվանագիտական անձեռնմխելիությունը:

5. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությունը և այլ նորմատիվ իրավական ակտերը չեն տարածվում օտարերկրյա գործատուների և Հայաստանի Հանրապետությունում մշտապես չբնակվող աշխատողների միջև ծագած աշխատանքային հարաբերությունների վրա, անկախ այն հանգամանքից, որ աշխատողները գործատուի հանձնարարությամբ աշխատանք են կատարում Հայաստանի Հանրապետությունում:

6. Եթե դատական կարգով հաստատված է, որ գործատուի և աշխատողի միջև կնքված քաղաքացիաիրավական բնույթի պայմանագրով փաստացի կարգավորվում են աշխատանքային հարաբերություններ, ապա նման հարաբերությունների նկատմամբ

կիրառվում են աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթները:

~~7. Քաղաքական, հայեցողական կամ քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև քաղաքացիական, օրենքով սահմանված այլ պետական (հատուկ) ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատողների աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, եթե համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ:~~

7. Հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատողների աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, եթե համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ:

8. Սույն օրենսգիրքը չի կարգավորում ուղղիչ հիմնարկներում պատիժը կրող քաղաքացիների մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունները, բացառությամբ այն հարաբերությունների, որոնք վերաբերում են աշխատաժամանակի և հանգստի ռեժիմին, աշխատանքի վարձատրությանը, աշխատողների անվտանգությանը և առողջությանը:

Հոդված 44. Սույն օրենսգրքի 2-րդ բաժնի նորմերի կիրառման առանձնահատկությունները

1. Օրենքով սահմանված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատողների նկատմամբ սույն օրենսգրքի 2-րդ բաժնի նորմերը կիրառվում են սույն օրենսգրքով սահմանված կարգով:

~~2. Հատուկ ծառայողների, քաղաքական, հայեցողական և քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձանց մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների նկատմամբ չեն կիրառվում սույն օրենսգրքի 2-րդ բաժնով սահմանված նորմերը:~~

2. Զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության մարմինների ծառայողների և հանրային պաշտոն (բացառությամբ հայեցողական պաշտոնների) զբաղեցնող անձանց մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների նկատմամբ չեն կիրառվում սույն օրենսգրքի 2-րդ բաժնով սահմանված նորմերը:

Հոդված 48. Հանրապետական, ճյուղային և տարածքային կոլեկտիվ պայմանագրերի կողմերը

1. Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կողմերն են արհեստակցական կազմակերպությունների հանրապետական միությունը, գործատուների հանրապետական միությունը և Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Ճյուղային կոլեկտիվ պայմանագրի կողմերն են տնտեսության (արտադրության, ծառայության, մասնագիտության) համապատասխան ճյուղի գործատուների միությունը և արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը:

Եթե գործատուն Հայաստանի Հանրապետությունն է կամ համայնքը, ապա ճյուղային կոլեկտիվ պայմանագրի կողմերն են արհեստակցական կազմակերպությունների

ճյուղային հանրապետական միությունը և համապատասխան պետական ~~կառավարման~~ մարմինը կամ համայնքի ղեկավարը:

3. Տարածքային կոլեկտիվ պայմանագրի կողմերն են որոշակի տարածքում գործունեություն ծավալող գործատուների տարածքային միությունը և արհեստակցական կազմակերպությունների տարածքային միությունը:

Հոդված 86. Աշխատանքային պայմանագրի կնքման նախադրյալները

1. Գործատուն իրավունք ունի ինքնուրույն, ուղղակիորեն (առանց մրցութային կամ այլ ընթացակարգերի) համալրելու թափուր կամ նոր ստեղծված աշխատատեղերը՝ կնքելով սույն օրենսգրքով նախատեսված աշխատանքային պայմանագրեր: Աշխատող փնտրող գործատուն կարող է թափուր կամ նոր ստեղծված աշխատատեղերը համալրել նաև իր կազմակերպած մրցույթով կամ օգտվել համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների ծառայություններից: Թափուր աշխատատեղերի համալրման նպատակով մրցույթի կազմակերպման և անցկացման, ինչպես նաև մրցույթում հաղթած անձանց հետ աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանում է գործատուն:

~~2. Քաղաքացիական, օրենքով սահմանված պետական (հատուկ) այլ ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների թափուր պաշտոնները համալրելու կարգը և պայմանները սահմանվում են «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով ու իրավական ակտերով:~~

2. Հանրային ծառայության թափուր պաշտոնները համալրելու կարգը և պայմանները սահմանվում են օրենքով և այլ իրավական ակտերով:

Հոդված 116. Զանգվածային ազատումները

1. Կազմակերպության լուծարման կամ աշխատողների թվաքանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում գործատուն պարտավոր է ոչ ուշ, քան երկու ամիս առաջ՝ մինչև աշխատանքային պայմանագրերը լուծելը, ազատվող աշխատողների թվաքանակի մասին տվյալները (ըստ մասնագիտությունների և սեռատարիքային կազմի) ներկայացնել զբաղվածության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական ~~կառավարման~~ մարմին և աշխատողների ներկայացուցչին, եթե նախատեսվում է երկու ամսվա ընթացքում աշխատանքից ազատել աշխատողների ընդհանուր թվի ավելի քան տասը տոկոսը, սակայն 10 աշխատողից ոչ պակաս (զանգվածային ազատումներ):

(պարբերությունն ուժը կորցրել է 22.06.15 ՀՕ-96-Ն)

2. Որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրով և սեզոնային աշխատանքային պայմանագրով աշխատողների ազատման դեպքերը, եթե դրանք կատարվել են առանց պայմանագրերում նշված ժամկետների խախտման, աշխատողների զանգվածային ազատումներ չեն համարվում:

Հոդված 176. Չվճարվող արձակուրդը

1. Աշխատողի պահանջով չվճարվող արձակուրդ տրամադրվում է՝

1) հղիության և ծննդաբերության արձակուրդում գտնվող, ինչպես նաև մինչև մեկ տարեկան երեխային խնամելու համար արձակուրդում գտնվող կնոջ ամուսնուն: Այդ արձակուրդի ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել երկու ամիսը.

2) հաշմանդամ աշխատողին կամ ընտանիքի հիվանդ անդամին խնամող աշխատողին՝ բժշկական եզրակացությամբ սահմանված ժամկետներում, սակայն ոչ ավելի, քան 30 օր տարվա ընթացքում.

3) ամուսնության համար՝ երեք աշխատանքային օր.

4) ընտանիքի մահացած անդամի թաղման դեպքում՝ ոչ պակաս երեք օրից:

2. Կոլեկտիվ պայմանագրով կարող են սահմանվել չվճարվող արձակուրդի այլ պատճառներ:

3. Կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում աշխատողին կարող է տրամադրվել չվճարվող արձակուրդ՝ մեկ տարվա ընթացքում ոչ ավելի, քան 60 օր տևողությամբ: ~~Քաղաքացիական, օրենքով սահմանված այլ պետական (հատուկ) ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողներին կարող է մեկ տարվա ընթացքում տրամադրվել չվճարվող արձակուրդ ոչ ավելի, քան երեսուն օր:~~

Հանրային պաշտոն զբաղեցնողներին և հանրային ծառայողներին կարող է մեկ աշխատանքային տարվա ընթացքում տրամադրվել չվճարվող արձակուրդ ոչ ավելի, քան երեսուն օր, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Հոդված 181. Պաշտոնատար անձանց և ծառայողների աշխատանքի վարձատրությունը

~~Քաղաքական, հայեցողական կամ քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև քաղաքացիական, օրենքով սահմանված այլ պետական (հատուկ) ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների, պետական պաշտոնատար այլ անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատողների աշխատանքի վարձատրության կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:~~

Հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատողների աշխատանքի վարձատրության կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2001 թվականի ապրիլի 3-ին

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 2. Պետական գրանցման և պետական հաշվառման մասին օրենսդրությունը

1. Պետական գրանցման և պետական հաշվառման ոլորտում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, սույն օրենքով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով:

2. Եթե իրավաբանական անձանց առանձին տեսակներին վերաբերող հատուկ օրենքներով սահմանված են պետական գրանցման կամ պետական հաշվառման ավելի երկար ժամկետներ, պետական գրանցման և պետական հաշվառման համար անհրաժեշտ փաստաթղթերի այլ ծավալ, գրանցման գործընթացի այլ կարգ, քան սույն օրենքով, ապա կիրառվում են այդ օրենքներով սահմանված նորմերը:

3. Սույն օրենքով սահմանված կարգով պետական գրանցման, պետական հաշվառման կամ տեղեկատվության տրամադրման գործառույթների վրա չեն տարածվում «~~Պետական~~

Համայնքային կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությամբ և 3-րդ մասի առաջին նախադասությամբ սահմանված պահանջները:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2008 թվականի մայիսի 26-ին

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքի իմաստով՝

1) **գույքը** Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 103.1-ին հոդվածի 4-րդ մասով սահմանված գույքն է.

2) **փողերի լվացումը** Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված արարքն է.

3) **ահաբեկչության ֆինանսավորումը** Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 217.1-ին հոդվածով նախատեսված արարքն է.

3.1) **զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորումը** գույքի տրամադրումն է կամ ֆինանսական ծառայությունների մատուցումը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 386-րդ հոդվածով և 387-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքների կատարման նպատակով.

4) **հաշվետվություն տրամադրող անձինք են՝**

ա. բանկերը,

բ. վարկային կազմակերպությունները,

գ. արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի, արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնող անձինք,

դ. դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող անձինք,

ե. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձինք, բացառությամբ կորպորատիվ ներդրումային ֆոնդերի կառավարիչների՝ ներդրումային ֆոնդերի կառավարման գործունեության մասով,

զ. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված Կենտրոնական դեպոզիտարիան,

է. ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) ընկերությունները և ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) միջնորդային գործունեություն իրականացնող անձինք,

ը. կորպորատիվ ներդրումային ֆոնդերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված կառավարիչ չունեցող ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդերը,

թ. գրավատները,

ժ. ռիելթորական գործունեություն իրականացնող անձինք,

ժա. նոտարները,

ժբ. փաստաբանները, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերը և իրավաբանական անձինք,

ժգ. անհատ ձեռնարկատեր հաշվապահները և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք,

ժդ. աուդիտորական կազմակերպությունները և աուդիտորները,

ժե. թանկարժեք մետաղների դիլերները,

ժզ. թանկարժեք քարերի դիլերները,

ժէ. արվեստի գործերի դիլերները,

ժը. սակարկությունների կազմակերպիչները,

ժթ. խաղատների, շահումով խաղերի, ներառյալ՝ ինտերնետ շահումով խաղերի, վիճակախաղերի կազմակերպիչները,

ի. հավատարմագրային կառավարման և իրավաբանական անձանց գրանցման ծառայություններ մատուցող անձինք,

իա. վարկային բյուրոները, որոնց նկատմամբ սույն օրենքը տարածվում է միայն 6-8-րդ հոդվածներով սահմանված կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության ներկայացման պարտականության, 9-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված հաշվառման պարտականության և 30-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով սահմանված պատասխանատվության մասերով,

իբ. անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող լիազորված մարմինը, որի նկատմամբ սույն օրենքը տարածվում է միայն 6-8-րդ հոդվածներով սահմանված հաշվետվությունների տրամադրման պարտականության, 9-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված հաշվառման պարտականության և 30-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված պատասխանատվության մասերով,

իգ. իրավաբանական անձանց գրանցող պետական մարմինը (պետական ռեգիստրը), որի նկատմամբ սույն օրենքը տարածվում է միայն 6-8-րդ հոդվածներով սահմանված հաշվետվությունների տրամադրման պարտականության մասով՝ 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերում, ինչպես նաև 9-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով սահմանված պարտականությունների և 30-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված պատասխանատվության մասերով.

5) **ֆինանսական հաստատությունները** սույն մասի 4-րդ կետի «ա»-«թ» ենթակետերով սահմանված հաշվետվություն տրամադրող անձինք են.

6) **ոչ ֆինանսական հաստատությունները** կամ անձինք սույն մասի 4-րդ կետի «ժ»-«ի» ենթակետերով սահմանված հաշվետվություն տրամադրող անձինք են:

Սույն օրենքի 4-րդ, 23-րդ և 25-րդ հոդվածները ոչ ֆինանսական հաստատությունների կամ անձանց նկատմամբ տարածվում են միայն դրանց՝ 10-ից ավելի աշխատակից ունենալու դեպքում.

7) **լիազոր մարմինը** Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն է.

8) **վերահսկող մարմինը** հաշվետվություն տրամադրող անձին լիցենզավորող (նշանակող, որակավորում տվող կամ այլ կերպ գործունեության թույլտվություն տրամադրող) և վերահսկողություն իրականացնող իրավասու մարմինն է.

9) **գործարքը** հաշվետվություն տրամադրող անձի և հաճախորդի կամ լիազորված անձի միջև, ինչպես նաև հաճախորդի կամ լիազորված անձի և այլ անձի միջև գործարքն է, որը կատարվում է հաշվետվություն տրամադրող անձի միջոցով կամ հանդիսանում է հաշվետվություն տրամադրող անձի ուսումնասիրության (դիտարկման) առարկա: Գործարք կարող է համարվել նաև որոշակի գործարքի հիման վրա կամ դրա արդյունքում

իրավունքներ և պարտականություններ առաջացնող, փոփոխող կամ դադարեցնող յուրաքանչյուր գործողություն.

10) **միանգամյա գործարքը** գործարք է, որի արդյունքում պարբերական ծառայությունների տրամադրման պարտավորություններ չեն առաջանում, և (կամ) որը գործարար հարաբերության հաստատում չի ենթադրում.

11) **փոխկապակցված միանգամյա գործարքները** միևնույն կողմի մասնակցությամբ միատեսակ բնույթի միանգամյա գործարքներն են, որոնք կատարվում են 24 ժամվա ընթացքում.

12) **գործարար հարաբերությունը** հաշվետվություն տրամադրող անձի կողմից հաճախորդին մատուցվող պարբերական ծառայություններն են, որոնք չեն սահմանափակվում մեկ կամ մի քանի միանգամյա գործարքներով: Գործարար հարաբերությունը չի ներառում հաշվետվություն տրամադրող անձի այն գործունեությունը, որի շրջանակներում հաշվետվություն տրամադրող անձը սեփական կարիքների համար իրականացնում է տվյալ տեսակի հաշվետվություն տրամադրող անձանց համար օրենքով սահմանված գործունեությունից տարբեր այլ գործունեություն.

13) **հաճախորդը** հաշվետվություն տրամադրող անձի հետ գործարար հարաբերություն հաստատող կամ այդպիսի հարաբերությունների մեջ գտնվող անձն է, ինչպես նաև այն անձը, որը հաշվետվություն տրամադրող անձին առաջարկում է կատարել կամ կատարում է միանգամյա գործարք.

14) **իրական շահառուն** ֆիզիկական անձ է, որի անունից կամ օգտին հաճախորդն իրականում գործում է, և (կամ) որն իրականում վերահսկում է հաճախորդին կամ այն անձին, որի անունից կամ օգտին գործարքը կամ գործարար հարաբերությունը իրականացվում է և (կամ) որին պատկանում է իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդը կամ այն անձը, որի անունից կամ օգտին գործարքը կամ գործարար հարաբերությունն իրականացվում է: Իրավաբանական անձի մասով իրական շահառու է համարվում նաև այն ֆիզիկական անձը, որը փաստացի (իրական) հսկողություն է իրականացնում իրավաբանական անձի կամ գործարքի կամ գործարար հարաբերության նկատմամբ, և (կամ) որի օգտին իրականացվում է գործարքը կամ գործարար հարաբերությունը: Իրավաբանական անձի իրական շահառու կարող է համարվել նաև այն ֆիզիկական անձը, որը՝

ա. քվեարկելու իրավունքով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) քսան և ավելի տոկոսին (բացառությամբ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով հաշվետու թողարկողների) կամ իր մասնակցության ուժով կամ իրավաբանական անձի հետ կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշելու դրա որոշումները կամ

բ. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի կառավարման և (կամ) ղեկավար մարմնի անդամ կամ

գ. գործում է տվյալ իրավաբանական անձի հետ համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.

15) **լիազորված անձը** հաճախորդի հանձնարարությամբ և հաճախորդի անունից գործարքի կատարման կամ գործարար հարաբերությունում որոշակի իրավաբանական կամ փաստացի գործողությունների իրականացման լիազորություն ունեցող, այդ թվում՝ լիազորագրով կամ օրենքով սահմանված այլ հիմքով հաճախորդի կողմից տրված լիազորությունների հիման վրա ներկայացուցչություն իրականացնող անձն է.

16) **իրավաբանական անձը** Հայաստանի Հանրապետության և (կամ) օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպությունը կամ հիմնարկն է, ինչպես նաև օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող իրավաբանական կազմավորումը.

17) **հաճախորդի գործարար բնութագիրը** հաճախորդի գործունեության բնույթի, ազդեցության ու նշանակության, գործարար հարաբերությունների և միանգամյա գործարքների առկա ու ակնկալվող շարժի, ծավալների և ոլորտների, լիազորված անձանց և իրական շահառուների առկայության, ինքնության ու փոխկապակցվածության բնույթի, ինչպես նաև հաճախորդի գործունեությանը վերաբերող այլ փաստերի և հանգամանքների վերաբերյալ հաշվետվություն տրամադրող անձի տեղեկությունների (պատկերացումների) ամբողջությունն է.

18) **գործարքի մյուս կողմը** հաճախորդի կողմից իրականացվող գործարքի այլ մասնակից է, որը տրամադրում (փոխանցում) կամ որին հասցեագրվում է գործարքից բխող գույքը.

19) **հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունը** հաշվետվություն տրամադրող անձի կողմից հաճախորդի վերաբերյալ պատշաճ պատկերացում կազմելու նպատակով նրա ինքնության և գործարար բնութագրի վերաբերյալ ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառմամբ տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր) ձեռք բերելու ու վերլուծության գործընթաց է, որը ներառում է՝

ա. հաճախորդի (այդ թվում՝ լիազորված անձի և իրական շահառուի) նույնականացումը և ինքնության ստուգումը,

բ. գործարքի կամ գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի պարզումը,

գ. գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրությունը.

20) **ռիսկը** փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման վտանգավորության և դրա հավանականության մասին վկայող հանգամանք է, որը կարող է բնութագրվել ըստ երկրների կամ աշխարհագրական տեղակայման, հաճախորդների տեսակի, գործարքների կամ գործարար հարաբերությունների տեսակի, ծառայությունների տեսակի կամ այլ չափանիշների.

21) **բարձր ռիսկի չափանիշը** սույն օրենքով, լիազոր մարմնի իրավական ակտերով, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող անձի ներքին իրավական ակտերով սահմանված այնպիսի չափանիշ է, որը վկայում է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման բարձր հավանականության մասին, այդ թվում՝ քաղաքական ազդեցություն ունեցող անձ, նրա ընտանիքի անդամ կամ նրա հետ այլ կերպ փոխկապակցված անձ (հայր, մայր, ամուսին, տատ, պապ, քույր, եղբայր, երեխաներ, ամուսնու ծնողներ) հանդիսացող հնարավոր կամ առկա հաճախորդները կամ իրական շահառուները, անձինք (ներառյալ՝ ֆինանսական հաստատությունները), որոնք գտնվում կամ բնակվում են չհամապատասխանող երկրներում կամ տարածքներում կամ այդպիսի երկրներից կամ տարածքներից են, բոլոր բարդ կամ անսովոր մեծ գումարով գործարքները, ինչպես նաև անսովոր պայմաններով գործարքները կամ գործարար հարաբերությունները, որոնց տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներն ակնհայտ չեն: Ընդ որում, գործարքում կամ գործարար հարաբերությունում բարձր ռիսկի չափանիշի առկայությունը լիազոր մարմնի նախատեսած դեպքերում կարող է բնորոշվել սահմանված չափանիշների համակցությամբ.

22) **հաճախորդի հավելյալ ուսումնասիրությունը** հաշվետվություն տրամադրող անձի կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացի ընդլայնված կիրառումն է, որի դեպքում, ի լրումն հաճախորդի պատշաճ ուսումնասիրությամբ սահմանված գործողությունների, անհրաժեշտ է նաև առնվազն՝

ա. ստանալ ավագ ղեկավարության հավանությունը՝ հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելուց առաջ, գործարար հարաբերությունը շարունակելու համար, ինչպես նաև այն դեպքերում, երբ հետագայում պարզվում է, որ հաճախորդը կամ իրական շահառուն բնութագրվում է բարձր ռիսկի չափանիշով, կամ գործարքը կամ գործարար հարաբերությունը ներառում են այդպիսի չափանիշ,

բ. ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրը պարզելու համար,

գ. հնարավորին չափ մանրամասն ուսումնասիրել գործարքի կամ գործարար հարաբերության նախապայմանները և նպատակը,

դ. քաղաքական ազդեցություն ունեցող անձի դեպքում իրականացնել ընթացիկ հավելյալ դիտարկում.

23) **ցածր ռիսկի չափանիշը** սույն օրենքով կամ լիազոր մարմնի իրավական ակտերով սահմանված այնպիսի չափանիշ է, որը վկայում է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման ցածր հավանականության մասին, այդ թվում՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեսանկյունից արդյունավետորեն վերահսկվող ֆինանսական հաստատությունները, պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, պետական ոչ առևտրային կազմակերպությունները, ~~պետական կառավարչական հիմնարկները~~ **համայնքային կառավարչական հիմնարկները**, բացառությամբ չհամապատասխանող երկրներում կամ տարածքներում գտնվող մարմինների կամ կազմակերպությունների: Ընդ որում, գործարքում կամ գործարար հարաբերությունում ցածր ռիսկի չափանիշի առկայությունը լիազոր մարմնի նախատեսած դեպքերում կարող է բնորոշվել սահմանված չափանիշների համակցությամբ.

24) **հաճախորդի պարզեցված ուսումնասիրությունը** հաշվետվություն տրամադրող անձի կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացի սահմանափակ կիրառումն է, որի դեպքում նույնականացում և ինքնության ստուգում իրականացնելիս հավաքվում են հետևյալ տեղեկությունները՝

ա. ֆիզիկական անձի համար՝ անունը, ազգանունը և անձը հաստատող փաստաթղթի տվյալները,

բ. իրավաբանական անձի համար՝ անվանումը և անհատականացման համարը (պետական գրանցման, հաշվառման համարը և այլն),

գ. պետական մարմնի և տեղական ինքնակառավարման մարմնի համար՝ լրիվ պաշտոնական անվանումը.

25) **քաղաքական ազդեցություն ունեցող անձը** արտասահմանյան երկրի կամ տարածքի նախկին կամ գործող բարձրաստիճան պետական պաշտոնատար անձ է, որն իրականացրել կամ իրականացնում է պետական, քաղաքական կամ հանրային բնույթի նշանակալից գործառույթներ: Ընդ որում, քաղաքական ազդեցություն ունեցող անձանց շրջանակը չի ընդգրկում միջին և ցածր դասի հանրային գործառույթներ իրականացնող անձանց: Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք են մասնավորապես՝

ա. պետության ղեկավարները, կառավարության ղեկավարները, նախարարները և նախարարի տեղակալները,

բ. խորհրդարանի անդամները,

գ. բարձրագույն ատյանի դատարանի, սահմանադրական դատարանի կամ այլ բարձր դատական ատյանների դատավորները, անդամները, որոնց որոշումները բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ առանձնահատուկ հանգամանքներով պայմանավորված բողոքարկման դեպքերի,

դ. աուդիտորների դատարանի անդամները կամ կենտրոնական բանկի խորհրդի անդամները,

ե. դեսպանները, գործերի հավատարմատարները և զինված ուժերի բարձրաստիճան սպաները,

զ. քաղաքական կուսակցության ակնառու գործիչները,

է. պետական սեփականություն հանդիսացող կազմակերպության վարչական, կառավարման կամ վերահսկողական մարմինների անդամները.

26) **չհամապատասխանող երկիրը կամ տարածքը** լիազոր մարմնի հրապարակած ցանկերին համապատասխան՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային պահանջները չկիրառող կամ ոչ պատշաճ կիրառող արտասահմանյան երկիրը կամ տարածքն է.

27) **կենսական շահերի կենտրոնը** այն վայրն է, որտեղ կենտրոնացած են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Ընտանեկան կամ տնտեսական շահը կարող է դրսևորվել այն վայրում, որտեղ գտնվում է անձի բնակելի տունը (բնակարանը), որտեղ բնակվում է անձը և (կամ) նրա ընտանիքը, որտեղ գտնվում է նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը կամ հիմնական տնտեսական (մասնագիտական) գործունեության իրականացման վայրը.

28) **ավագ ղեկավարությունը** հաշվետվություն տրամադրող անձի այն մարմինը կամ աշխատակիցն է, որն իրավասու է հաշվետվություն տրամադրող անձի անունից փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման կանխարգելման հարցերով որոշումներ կայացնելու և գործողություններ կատարելու.

29) **ներքին դիտարկումների մարմինը** սույն օրենքով և լիազոր մարմնի իրավական ակտերով սահմանված՝ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման կանխարգելման գործառույթներ իրականացնող հաշվետվություն տրամադրող անձի ստորաբաժանումը կամ աշխատակիցն է, բացառությամբ լիազոր մարմնի սահմանած ստորաբաժանումների կամ աշխատակիցների, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող այն անձը, որն իր գործառույթներն իրականացնում է միանձնյա: Լիազոր մարմնի սահմանած դեպքերում և կարգով հաշվետվություն տրամադրող անձի ներքին դիտարկումների մարմնի գործառույթները կարող են վերապահվել մասնագիտացված գործունեություն իրականացնող անձի.

30) **կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը** այն գործարքը կամ գործարար հարաբերությունն է, այդ թվում՝ գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման փորձը, որի դեպքում կասկածվում է կամ բավարար հիմքեր կան կասկածելու, որ գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով կամ կապված է ահաբեկչության, ահաբեկչական գործողությունների, ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների հետ կամ օգտագործվել է կամ առկա է մտադրություն այն

օգտագործելու ահաբեկչության նպատակով կամ ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների կողմից.

31) **կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը** լիազոր մարմնի իրավական ակտերով, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող անձի ներքին իրավական ակտերով սահմանված՝ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հնարավորության մասին վկայող իրավիճակը կամ ազդակն է.

32) **տիպաբանությունը** լիազոր մարմնի իրավական ակտերով, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող անձի ներքին իրավական ակտերով սահմանված՝ փողերի լվացմանը կամ ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գործողությունների և (կամ) քայլերի տրամաբանությունն ու հաջորդականությունը նկարագրող հնարավոր սխեմա է.

33) **ահաբեկչության հետ կապված անձը** ցանկացած անհատ ահաբեկիչ, ներառյալ՝ ահաբեկչության կամ ահաբեկչության փորձի մեջ կասկածվող, մեղադրվող կամ դրանց համար դատապարտված անձ կամ ահաբեկչական կազմակերպություն է, նրանց հետ փոխկապակցված անձ, նրանց կողմից կամ նրանց անունից կամ նրանց ցուցումների ներքո գործող կամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն նրանց պատկանող կամ նրանց կողմից կառավարվող այլ անձը, որը ներառվել է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն կամ լիազոր մարմնի հրապարակած ցանկերում.

33.1) **զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձը** ցանկացած անձ է, որը ներառվել է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի՝ զանգվածային ոչնչացման զենքի տարածման և (կամ) դրա ֆինանսավորման համար թիրախային ֆինանսական պատժամիջոցներ սահմանող բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ցանկերում.

34) **գործարքի կամ գործարար հարաբերության կասեցումը** կասկածելի գործարքի և (կամ) գործարար հարաբերության առարկա գույքի փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելքն է.

35) **գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժումը** գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման համար նախատեսված գործողություններ չիրականացնելն է.

36) **գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցումը** գործարքի կատարման կամ գործարար հարաբերության իրականացման ընդհատումն է.

37) **գույքի սառեցումը** ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող գույքի փաստացի և (կամ) իրավաբանական շարժի անորոշ ժամկետով արգելքն է, այդ թվում՝ այդ գույքի ուղղակի կամ անուղղակի տիրապետման, օգտագործման կամ տնօրինման արգելքը, ինչպես նաև որևէ գործարար հարաբերության (ներառյալ՝ ֆինանսական ծառայությունների) կամ միանգամյա գործարքների հաստատման կամ իրականացման արգելքը.

38) **արժեթուղթը** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված արժեթղթերը, այդ թվում՝ պարտատոմսը, չեկը (չեկային գրքույկը), մուրհակը (վճարագիրը), բաժնետոմսը, կոնոսամենտը, բանկային վկայագիրը (բանկային գրքույկը, բանկային սերտիֆիկատը), պահեստային վկայագիրն է և այլ օրենքներով սահմանված արժեթղթերը.

39) **կեղծ («շել») բանկը** բանկն է, որը հիմնադրված, գրանցված, լիցենզավորված կամ այլ կերպ ինկորպորացված լինելով որևէ երկրում, իրականում դրա տարածքում չի

կառավարվում կամ չունի փաստացի գտնվելու կամ գործունեության վայր, և որը փոխկապակցված չէ արդյունավետ համախմբված վերահսկողության ենթակա, կարգավորվող գործունեություն իրականացնող ֆինանսական հաստատությունների որևէ խմբի հետ.

40) **տարանցիկ հաշիվը** ֆինանսական հաստատությունում բացված այն թղթակցային հաշիվն է, որն ուղղակիորեն օգտագործում է թղթակից ֆինանսական հաստատության հաճախորդը՝ իր անունից գործարքներ կատարելու համար.

41) **Ֆինանսական խումբը** խումբ է, որի կազմում առկա է այնպիսի իրավաբանական անձ, որը ղեկավարում և համակարգում է խմբի անդամ՝ սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա», «ե», «զ» կամ «է» ենթակետերով նախատեսված գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց (այդ թվում՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի՝ ամբողջ խմբի համար կիրառելի քաղաքականություն և ընթացակարգեր իրականացնող մասնաճյուղերի և (կամ) ներկայացուցչությունների) գործառույթները՝ խմբի մակարդակով արդյունավետ, համախմբված վերահսկողություն իրականացնելու նպատակով:

42) **Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ցանկերը** Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված՝ ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ցանկերն են:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2013 թվականի դեկտեմբերի 11-ին

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 20. Գործատուների մասնակցությունը զբաղվածության պետական քաղաքականության իրականացմանը

1. Լիազորված մարմինը զբաղվածության պետական քաղաքականության մշակման և իրականացման շրջանակներում համագործակցում է գործատուների հետ՝ գործընկերային, փոխշահավետ և մշտական հարաբերությունների հաստատման, հետևողական ընդլայնման, խորացման և հետադարձ կապի ապահովման միջոցով:

2. Կազմակերպությունների համար, անկախ սեփականության ձևից, սահմանվում է աշխատատեղերի պարտադիր ապահովման նորմատիվ (այսուհետ՝ քվոտա)՝ հաշմանդամություն ունեցող և տարիքային կենսաթոշակի իրավունք տվող՝ տարիքը չլրացած անձի աշխատանքի տեղավորման համար:

3. Տվյալ հարկային տարվան հաջորդող հարկային տարում (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ) ~~պետական կառավարչական հիմնարկների~~ **պետական մարմինների** և համայնքային կառավարչական հիմնարկների, Կենտրոնական բանկի, պետական ոչ առևտրային և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների համար քվոտայի պահանջն առաջանում է կազմակերպության աշխատողների միջին տարեկան քանակի 3 տոկոսի չափով, եթե տվյալ հարկային տարում կազմակերպության աշխատողների միջին տարեկան քանակը 100 և ավելի է:

4. Տվյալ հարկային տարվան հաջորդող հարկային տարում (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ) ոչ պետական կազմակերպությունների համար, բացառությամբ համայնքային կառավարչական հիմնարկների և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, քվոտայի պահանջն առաջանում է կազմակերպության աշխատողների միջին տարեկան քանակի 1 տոկոսի չափով, եթե տվյալ հարկային տարում կազմակերպության աշխատողների միջին տարեկան քանակը 100 և ավելի է:

4.1. Կազմակերպությունների աշխատողների միջին տարեկան քանակը որոշվում է տվյալ հարկային տարում յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ կազմակերպության աշխատողների քանակների հանրագումարը հարաբերելով 12-ի, իսկ տվյալ տարում նոր ստեղծված կազմակերպությունների աշխատողների միջին տարեկան քանակը՝ ստեղծման օրվանից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում, յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ՝ կազմակերպության աշխատողների քանակների հանրագումարը հարաբերելով կազմակերպության ստեղծման օրվանից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի ամիսների թվի վրա:

4.2. Եթե կազմակերպությունն ստեղծվել է տվյալ տարվա դեկտեմբեր ամսին, ապա աշխատողների միջին տարեկան քանակ է համարվում տվյալ հարկային տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմակերպությունում առկա աշխատողների քանակը:

4.3. Կազմակերպությունների աշխատողների միջին տարեկան քանակի նկատմամբ սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված տոկոսների կիրառման արդյունքում տասնորդական կոտորակային թիվ ստացվելու դեպքում այն կլորացվում է մինչև միավորները, ընդ որում՝ տասնորդական կոտորակի ստորակետից հետո 5-ից ցածր թվանշանի դեպքում հավասարեցվում է իրենից ցածր բնական թվին, իսկ տասնորդական կոտորակի ստորակետից հետո 5 և բարձր թվանշանի դեպքում՝ իրենից վերև ընկած բնական թվին:

5. Քվոտայի պահանջը կատարված է համարվում, եթե մեկ հարկային տարում (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող 12-ամսյա ցանկացած ժամանակահատվածում առնվազն 183 օր քվոտավորման ենթակա յուրաքանչյուր աշխատատեղ զբաղեցված է եղել հաշմանդամություն ունեցող և տարիքային կենսաթոշակի իրավունք տվող՝ տարիքը չլրացած անձի կողմից՝ առանց ամենամյա ծրագրով հաշմանդամություն ունեցող գործազուրկի համար նախատեսված աջակցության:

6. Հաշմանդամություն ունեցող և տարիքային կենսաթոշակի իրավունք տվող՝ տարիքը չլրացած անձի կողմից քվոտավորման ենթակա աշխատատեղը լրացված լինելու մասին տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հարկային մարմին է ներկայացվում՝ «Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված գրանցման հայտի հիման վրա:

7. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված քվոտայի պահանջի չկատարման դեպքում կազմակերպությունը կատարում է մասհանում՝ մինչև քվոտայի պահանջն առաջանալու տարվան հաջորդող տարվա հունվարի 30-ը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

8. Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված մասհանումը կատարվում է քվոտավորման ենթակա յուրաքանչյուր աշխատատեղի համար՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

9. Մասհանումներ չկատարելը կազմակերպության նկատմամբ առաջացնում է օրենքով սահմանված վարչական պատասխանատվություն:

10. Մասհանվող գումարները փոխանցվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ բացված արտաբյուջետային միջոցների հաշվին:

11. Մասհանումները հանդիսանում են նպատակային միջոցներ և օգտագործվում են հաշմանդամություն ունեցող անձանց առողջական, սոցիալական, աշխատանքային, մասնագիտական վերականգնման, հաշմանդամների աշխատանքի տեղավորման նպատակներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

12. Զբաղվածության պետական կարգավորման ոլորտում գործատուներն իրավունք ունեն՝

1) աշխատուժի ազատ ընտրության.

2) իրենց մոտ առկա թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի, աշխատատեղերի հնարավոր կրճատումների վերաբերյալ տրամադրելու տեղեկություններ լիազորված մարմնին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ձևով և եղանակով.

3) լիազորված մարմնից զբաղվածության պետական ծրագրերի, ինչպես նաև աշխատաշուկայի իրավիճակի վերաբերյալ տեղեկատվության և մասնագիտական խորհրդատվության ստացման.

4) սույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված տեղեկատվական շտեմարանում առկա տեղեկատվության ստացման.

5) աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորելիս պետական աջակցության՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

13. Լիազորված մարմնի կողմից գործատուներին մատուցվող ծառայությունները տրամադրվում են անվճար:

14. Գործատուի կողմից ներկայացված թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերը համալրելու նպատակով լիազորված մարմինն իրականացնում է միջնորդություն՝ աշխատանք փնտրող անձին ուղեգրով ուղարկելով գործատուի մոտ:

15. Սույն հոդվածի 14-րդ մասով նախատեսված ուղեգրի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

16. Գործատուները զանգվածային ազատումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնում են լիազորված մարմին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2014 թվականի հունիսի 21-ին

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 2. Օրենքի գործողության ոլորտը

1. Սույն օրենքը տարածվում է Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունների, ներառյալ՝ նրանց ստեղծած հիմնարկների (այսուհետ՝ կազմակերպություններ) վրա:

2. Սույն օրենքի իմաստով հանրային հատվածի կազմակերպություններ են համարվում ~~պետական կառավարչական հիմնարկները~~ **պետական մարմինները (բացառությամբ՝ Կենտրոնական բանկի)**, համայնքների ղեկավարների աշխատակազմերը և Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով գրանցված պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2016 թվականի հոկտեմբերի 4-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Հոդված 64. Ավելացված արժեքի հարկից ազատված գործարքներն ու գործառնությունները

1. ԱԱՀ-ից ազատելը Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ չհաշվարկելն է:

2. ԱԱՀ-ից ազատվում են Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հետևյալ գործարքներն ու գործառնությունները.

1) հանրակրթական ուսումնական հաստատությունների, մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների, երաժշտական, նկարչական, արվեստի և գեղարվեստի ուսումնական հաստատությունների, մարզադպրոցների, արհեստագործական ուսումնարանների, որակավորման և վերաորակավորման, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսուցման ծառայությունների մատուցումը: Սույն կետում նշված հասկացությունները կիրառվում են «Կրթության մասին», «Հանրակրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում նույն հասկացությունների կիրառության իմաստով ու նշանակությամբ.

2) դպրոցական գրերի և նոտայի տետրերի, նկարչական ալբոմների, մանկական և դպրոցական գրականության, դպրոցական ուսումնական հրատարակությունների, բուհերի, մասնագիտացված գիտական կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հրատարակած գիտական և ուսումնական հրատարակությունների օտարումը: Սույն կետով սահմանված արտոնությունների կիրառության շրջանակը սահմանում է Կառավարությունը.

3) Կառավարության սահմանած չափանիշներին համապատասխանող գիտահետազոտական աշխատանքների կատարումը.

4) հանրակրթական հիմնական ծրագրերի շրջանակներում աշխատանքների կատարումը: Սույն կետով սահմանված արտոնության կիրառության շրջանակը սահմանում է Կառավարությունը.

5) հանրակրթության ոլորտում իրականացվող՝ կրթության և գիտության բնագավառում Կառավարության լիազոր մարմնի ճանաչած, երաշխավորած և Կառավարության սահմանած չափորոշիչներին համապատասխանող կրթական բնույթի առարկայական մրցույթներին, մրցաշարերին, օլիմպիադաներին մասնակցության իրավունքի տրամադրումը.

6) նախադպրոցական հիմնարկներում երեխաներին պահելու, տուն-ինտերնատներում, մանկատներում, արատներ ունեցող երեխաներ կամ հաշմանդամներ խնամող հաստատություններում, ծերանոցներում գտնվող անձանց խնամքի հետ կապված ծառայությունների մատուցումը, ինչպես նաև խնամվողների կողմից այնտեղ

պատրաստված ապրանքների օտարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը: Սույն կետով սահմանված արտոնությունների կիրառության շրջանակը սահմանում է Կառավարությունը.

7) հասարակական, բարեգործական և կրոնական կազմակերպությունների կողմից ապրանքների անհատույց մատակարարումը, աշխատանքների անհատույց կատարումը և (կամ) ծառայությունների անհատույց մատուցումը.

8) թաղման բյուրոների, գերեզմանատների, ինչպես նաև մահվան և հուղարկավորության հետ կապված ծիսական բնույթի այլ աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը և համապատասխան պարագաների օտարումը.

9) կրոնական ծիսակատարությունների կազմակերպման ծառայությունների մատուցումը, կրոնական կազմակերպություններին կրոնական պարագաների օտարումը, ինչպես նաև կրոնական կազմակերպությունների կողմից այդ պարագաների օտարումը.

10) օտարերկրյա պետությունների, միջազգային միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների, միջազգային, օտարերկրյա և Հայաստանի Հանրապետության հասարակական, բարեգործական, կրոնական կազմակերպությունների, առանձին բարերարների կողմից ապրանքների ներմուծումը, ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցումը՝ մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի (գործունեության) շրջանակներում, ինչպես նաև նման ծրագրերի իրականացման հետ անմիջականորեն կապված և դրանց համար զգալի նշանակություն ունեցող ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցումը: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով) ուղղակիորեն նշված չլինելու դեպքում ծրագրի (գործունեության) տարբերակումն ըստ մարդասիրական օգնության և բարեգործական բնույթի, ինչպես նաև սույն կետի համաձայն, ԱԱՀ-ից ազատվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների շրջանակները որոշում է Կառավարության լիազոր մարմինը.

11) բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների, մասնավորապես հիվանդությունների կանխարգելման, ախտորոշման, բժշկական խորհրդատվության, բուժական, վերականգնողական, բժշկական փորձաքննության անցկացման ծառայությունների մատուցումը.

12) դոնորային արյան և դրա բաղադրամասերի, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և բժշկական նշանակության ապրանքների օտարումը, բժշկական կազմակերպություններում բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում պացիենտների պատրաստած ապրանքների օտարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը: Սույն կետով սահմանված արտոնությունների կիրառության շրջանակը սահմանում է Կառավարությունը.

13) պետության կամ համայնքի կողմից կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում գույքի ներդրումը.

14) բռնագրավման կամ նվիրատվության ձևով ապրանքի մատակարարումը պետությանը: Սույն կետը չի տարածվում բռնագանձման ձևով պետությանը ապրանքի մատակարարման գործարքների վրա, որոնց դեպքում ապրանքի մատակարարման գործարքը ենթակա է ԱԱՀ-ով հարկման Օրենսգրքով սահմանված կարգով.

15) հողամասից կամովին հրաժարվելու դեպքում սեփականության իրավունքով պատկանող հողամասի օտարումը համայնքին կամ պետությանը.

16) հողամասի կամ այլ անշարժ գույքի փոխանակությունը, եթե այդ գործարքի կողմ են հանդիսանում պետությունը և (կամ) համայնքը.

17) սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող՝ ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը և (կամ) ծառայության մատուցումը, եթե նշված ծրագրերն արժանացել են Կառավարության ձևավորած մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացությանը: Սույն կետում նշված մասնագիտական հանձնաժողովի գործունեության կարգը և կազմը, ինչպես նաև հանձնաժողովի կողմից սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի՝ որպես արտոնյալ որակավորման, փոփոխման կամ կասեցման կարգերը սահմանում է Կառավարությունը.

18) պետական կառավարման մարմինների և (կամ) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այն ծառայությունների մատուցումը, որոնց համար օրենքով սահմանված է պետական տուրքի և (կամ) տեղական տուրքի վճարում, ~~ինչպես նաև պետական կառավարչական~~ **ինչպես նաև պետական մարմինների** և (կամ) համայնքային կառավարչական հիմնարկների կողմից ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը և (կամ) ծառայության մատուցումն այն մասով, որից հասույթը հաշվեգրվել է պետական կամ համայնքների բյուջեների օգտին: Սույն կետի կիրառության իմաստով՝ հասույթի կամ դրա մի մասի հաշվեգրումը պետական կամ համայնքների բյուջեների օգտին պետք է հիմնավորվի դրանց համապատասխան գանձապետական հաշվին փոխանցմամբ.

19) կոնցեսիոների (օպերատորի) կողմից Կառավարության սահմանած չափանիշների համաձայն Կառավարության լիազոր մարմնի կողմից որպես կոնցեսիայի պայմանագիր որակված գործարքի պայմանների շրջանակներում կոնցեդենտին (շնորհատուին) պատկանող ենթակառուցվածքային ակտիվների, դրանց առանձին տարրերի վրա կատարված բարելավման արդյունքի կամ գնված կամ կառուցված կամ փոխարինված ենթակառուցվածքային ակտիվների (նյութական կամ ոչ նյութական), դրանց կազմում առանձին տարրերի՝ կոնցեսիայի պայմանագրի գործողության ընթացքում կամ ավարտին կոնցեդենտին (շնորհատուին) օտարումը, ինչպես նաև կոնցեդենտին (շնորհատուին) կոնցեսիոն ծառայությունների մատուցումը: Սույն կետի կիրառության իմաստով՝

ա. կոնցեդենտ (շնորհատու) է համարվում պետական կամ համայնքային մարմինը, որը որոշակի ժամանակահատվածով կոնցեսիոներին (օպերատորին) է տրամադրում հանրային ծառայությունների ենթակառուցվածքներ՝ դրանք շահագործելու և (կամ) սպասարկելու նպատակով,

բ. կոնցեսիոներ (օպերատոր) է համարվում ռեզիդենտ կազմակերպությունը, որին կոնցեդենտի (շնորհատուի) կողմից տրամադրվում են հանրային ծառայությունների ենթակառուցվածքներ՝ հանրային ծառայություն մատուցելու և (կամ) այն բարելավելու նպատակով, և որը շահագործում և (կամ) սպասարկում է այդ ենթակառուցվածքները սահմանված ժամանակաշրջանի ընթացքում.

20) ԱՏԳԱԱ 8432, 8433, 8434, 8436, 8701 ծածկագրերին դասվող տեխնիկայի և մասերի, 31 ապրանքախմբի ծածկագրերին դասվող պարարտանյութերի, 3808 91, 3808 92, 3808 93, 3808 94, 3808 99 ապրանքախմբի ծածկագրերին դասվող թունաքիմիկատների, 0106 41 000, 0106 90 00 90, 5305 00 000 0, 9406 00 310 0 ծածկագրերին դասվող ապրանքների, ինչպես նաև գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների սերմերի և տնկանյութի օտարումը.

21) անմիջական արտադրողի կողմից Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ ԱՏԳԱԱ 570110, 570210 ծածկագրերին դասվող ձեռագործ գորգերի օտարումը.

22) ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման ջրի օտարումը.

23) ազատ տնտեսական գոտու կազմակերպչին և ազատ տնտեսական գոտու շահագործողին ծառայությունների մատուցումը, ազատ տնտեսական գոտու տարածքում ապրանքների մատակարարումը.

24) թերթերի և ամսագրերի օտարումը.

25) Կառավարության սահմանած ցանկում նշված թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի օտարումը.

26) թանկարժեք մետաղների և թանկարժեք մետաղներից պատրաստված՝ ԱՏԳԱԱ 7106, 7108, 7109, 7110, 7113, 7115 ծածկագրերին դասվող՝ ոսկերչական նշանակության կիսապատրաստուկների օտարումը.

27) ծխախոտի արտադրանք արտադրող չհանդիսացող և ծխախոտի արտադրանք ներմուծող չհանդիսացող հարկ վճարողների կողմից ծխախոտի արտադրանքի օտարումը.

28) Շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայով տարայավորված ապրանք արտադրողի կողմից Կառավարության սահմանած չափանիշները բավարարող շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայի օտարումը.

29) խաղատների գործունեության կազմակերպումը.

30) շահումով խաղերի (այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղերի) կազմակերպումը.

31) ապրանքի մատակարարման հրապարակային պայմանագրով սահմանված երաշխիքային ժամանակահատվածում տվյալ ապրանքի հետ կապված սպասարկման ծառայությունների անհատույց մատուցումը, այդ ծառայությունների շրջանակներում սահմանված որակին չհամապատասխանող ապրանքների, դրանց լրակազմող տարրերի փոխարինման նպատակով ապրանքի անհատույց մատակարարումը, այն ապրանքների մատակարարումն ու ծառայությունների մատուցումը, որոնց արժեքը ներառված է հրապարակային պայմանագրերի համաձայն մատակարարվող ապրանքների արժեքում: Սույն կետը կարող է կիրառվել այն դեպքում, երբ կնքված պայմանագրի պայմանները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 442-րդ հոդվածով սահմանված՝ հրապարակային պայմանագրերին ներկայացվող պահանջներին: Այն դեպքերում, երբ ապրանքի մատակարարման հրապարակային պայմանագրով նախատեսվում է այլ ապրանքների մատակարարում և (կամ) ծառայությունների մատուցում, ապա հրապարակային պայմանագրով մատակարարվող ապրանքի արժեքում այլ ապրանքների և (կամ) ծառայությունների արժեքը ներառելու փաստը պետք է հիմնավորվի հաշվապահական հաշվառման մեջ կիրառվող սկզբնական հաշվառման փաստաթղթերով և ԱԱՀ վճարողի կողմից հաստատված փաստաթղթերով (հրաման, հաստատված ինքնարժեքի հաշվարկ և այլն).

32) կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում բաժնեմասի կամ փայի նկատմամբ սեփականության իրավունքի օտարումը.

33) օրենքով սահմանված կարգով իրականացվող՝ կազմակերպության վերակազմակերպման շրջանակներում ապրանքի մատակարարումը և (կամ) ծառայության մատուցումը.

34) սեփականաշնորհման կամ ապապետականացման գործարքների շրջանակներում ապրանքի մատակարարումը.

35) Հայաստանի Հանրապետության տարածք մշակութային արժեքների ներմուծումը.

36) Հայաստանի Հանրապետության տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգից տարբերվող մաքսային ընթացակարգով (բացառությամբ «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգով ներմուծված ապրանքների նկատմամբ «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգի կիրառման դեպքերի) արտահանված ապրանքների մատակարարումը.

37) օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ ունեցող հարկ վճարողի կամ Կառավարության հավանությանն արժանացած ծրագիր իրականացնող ռեզիդենտ շահութահարկ վճարողների խմբի կողմից ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ապրանքների ներմուծումը, եթե այդ ապրանքները կամ դրանց վերամշակման արդյունքում ստացված ապրանքները ներմուծման օրվանը հաջորդող 180 օրվա ընթացքում արտահանվում են (այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետություններ).

38) Հայաստանի Հանրապետության տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգով ԵՏՄ անդամ չհամարվող պետություն արտահանված կամ Հայաստանի Հանրապետության տարածքից ԵՏՄ անդամ պետություն արտահանված սև և գունավոր մետաղների ջարդոնի մատակարարումը.

39) անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի կողմից իրենց անձնական գույքի օտարման գործարքները.

40) անհատ ձեռնարկատիրոջը կամ նոտարին պատկանող՝ ժառանգության զանգվածում ներառվող գույքի՝ ժառանգին օտարումը.

41) Հայաստանի Հանրապետություն ժամանող ֆիզիկական անձանց կողմից «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ իրենց անձնական օգտագործման գույքի ներմուծումը.

42) Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց կողմից «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ իրենց անձնական օգտագործման գույքի ներմուծումը.

43) օտարերկրյա պետություններում գործող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններում ծառայող դիվանագետների և Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայությանը կից գործող ռազմական, առևտրական և այլ կցորդների, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու այլ երկրների թեմերում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից հոգևոր ծառայության նշանակված քաղաքացիների կողմից ծառայության ավարտից հետո «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ իրենց անձնական օգտագործման գույքի ներմուծումը.

44) ապահովագրական և վերաապահովագրական ծառայությունների, ներառյալ՝ դրանց հետ կապված՝ ապահովագրական միջնորդների և գործակալների կողմից ծառայությունների մատուցումը.

45) կենսաթոշակային ապահովման ծառայությունների, ներառյալ՝ դրանց հետ կապված՝ միջնորդների և գործակալների կողմից ծառայությունների մատուցումը.

46) «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով նախաձեռնողի կողմից ակտիվների օտարումն արժեթղթավորման հիմնադրամին կամ վաճառողին, վաճառողի կողմից ակտիվների օտարումն արժեթղթավորման հիմնադրամին, «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում նախաձեռնողի կողմից

արժեթղթավորման հիմնադրամից ակտիվների հետգնումը կամ արժեթղթավորման հիմնադրամի հետ ակտիվների փոխանակումը, ինչպես նաև ակտիվների օտարումը «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված արժեթղթավորման ֆոնդին, արժեթղթավորման ֆոնդին ակտիվն օտարած անձի կողմից արժեթղթավորման ֆոնդից ակտիվների հետգնումը կամ արժեթղթավորման ֆոնդի հետ ակտիվների փոխանակումը.

47) բանկերի, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների, վճարահաշվարկային կազմակերպությունների, վարկային կազմակերպությունների, ինչպես նաև սույն կետով սահմանված դեպքերում՝ այլ հարկ վճարողների կողմից հետևյալ ֆինանսական գործարքների ու գործառնությունների կատարումը.

ա. ցպահանջ, ժամկետային, խնայողական և նման այլ ավանդների ընդունման, բանկային և այլ հաշիվների բացման, վարման ու սպասարկման ծառայությունների, այդ թվում՝ վճարահաշվարկային ծառայությունների մատուցումը,

բ. բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ հարկ վճարողների կողմից վարկերի կամ փոխառությունների տրամադրման, այդ թվում՝ պարտքերի կամ առևտրային գործարքների ֆինանսավորման ու ֆակտորինգային այլ ծառայությունների մատուցումը,

գ. երաշխավորությունների, բանկային երաշխիքների տրամադրման, ակրեդիտիվների բացման ծառայությունների մատուցումը,

դ. բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ հարկ վճարողների կողմից արժեթղթերի օտարումը, արժեթղթերի ի պահ ընդունման և հաշվառման ծառայությունների մատուցումը,

ե. մուրհակների, չեկերի, վճարագրերի, վճարային այլ արժեթղթերի, վճարային փաստաթղթերի, քարտերի և այլ գործիքների թողարկման, զեղչման, փոխանցման, զիջման կամ սպասարկման ծառայությունների մատուցումը, ինչպես նաև այլ հարկ վճարողների կողմից մուրհակների, չեկերի, վճարագրերի, վճարային այլ արժեթղթերի, վճարային փաստաթղթերի օտարումը,

զ. բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ հարկ վճարողների կողմից արտարժույթի (թղթադրամի և մետաղադրամի, բացառությամբ դրամագիտական նշանակություն ունեցող և այդ նպատակով օգտագործվող մետաղադրամների և բանկային տոմսերի) օտարումը և (կամ) փոխանակումը հայկական դրամի հետ, բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ հարկ վճարողների կողմից կնքվող ածանցյալ ֆինանսական գործիքների օտարումը, փոխանցումը, փոխանակումը կամ այլ կերպ օտարումը և այդ գործարքներով նախատեսված բոլոր վճարումների կատարումը, բացառությամբ այն վճարումների, որոնք իրականացվում են այնպիսի գույքի փաստացի մատակարարման դիմաց, որի օտարումը Օրենսգրքի համաձայն ենթակա է ԱԱՀ-ով հարկման,

է. կանխիկի տրամադրման ծառայությունների մատուցումը,

ը. բանկերի, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների և այլ հարկ վճարողների կողմից ներդրումային ֆոնդի կառավարման, ներառյալ՝ իր կողմից կառավարվող (այդ թվում՝ պատվիրակման արդյունքում) ներդրումային ֆոնդի թողարկած արժեթղթերի տեղաբաշխման և (կամ) հետգնման (մարման) ծառայությունների մատուցումը,

թ. ներդրումային ֆոնդի պահառության ծառայության մատուցումը,

ժ. արժեթղթերի հավատարմագրային կառավարման ծառայության մատուցումը,

ժա. բանկային ոսկու օտարումը, բանկային ոսկով արտահայտված հաշիվների բացման ու վարման, դրանցով այլ գործառնությունների կատարման ծառայությունների մատուցումը, ինչպես նաև բանկերին և վարկային կազմակերպություններին բանկային ձուլակտորների օտարումը,

ժբ. օրենքով սահմանված կարգով բանկի կամ վարկային կազմակերպության սեփականությունը դարձած՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհամարվող ֆիզիկական անձանց մինչ այդ պատկանող գրավի առարկայի օտարումը: Սույն ենթակետի կիրառության իմաստով՝ գրավի առարկան մինչև բանկի կամ վարկային կազմակերպության սեփականությունը դառնալը համարվում է անհատ ձեռնարկատեր և նոտար չհամարվող ֆիզիկական անձանց պատկանող, եթե գրավի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքի վկայականում նշված չէ, որ այն պատկանում է տվյալ անհատ ձեռնարկատիրոջը կամ նոտարին,

ժգ. գումարների (հասույթների, պարտադիր, կոմունալ և այլ վճարների) ընդունման, ինչպես նաև աշխատավարձի, թոշակների, նպաստների, ապահովագրական և այլ վճարների կատարման ծառայությունների մատուցումը,

ժդ. լիզինգային պայմանագրի շրջանակներում բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ներմուծված այն ապրանքների ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով) օտարումը, որոնց ներմուծման ժամանակ ԱԱՀ-ն օրենսդրությամբ սահմանված կարգով չի հաշվարկվել և չի վճարվել,

ժե. բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ֆինանսական վարձակալության (լիզինգի) ծառայության մատուցումը, եթե ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով չի նախատեսվում, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտին լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել վարձակալին:

ԱԱՀ-ից չեն ազատվում սույն կետով սահմանված ծառայությունների հետ կապված քաղվածքների և այլ տեղեկությունների ձևակերպման և տրամադրման, արժեթղթերի, չեկերի, վճարագրերի, վճարային փաստաթղթերի, քարտերի, թղթադրամի, մետաղադրամի, բանկային ոսկու պատրաստման, ֆաքսիմիլային ծառայությունների մատուցումը.

48) օտարերկրյա զբոսաշրջիկին մատուցվող զբոսաշրջության ոլորտի ծառայությունները, ինչպես նաև զբոսաշրջիկային գործակալությունների կողմից մատուցվող գործակալական ծառայությունները, եթե այդ ծառայությունների շրջանակներում ուղևորությունները, ճանապարհորդությունները, էքսկուրսիաներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության տարածքում.

49) ներդրումային ֆոնդի կողմից անշարժ գույքի օտարումը տվյալ ներդրումային ֆոնդում մասնակցություն ունեցող անձին, եթե անշարժ գույքը նախկինում ներդրումային ֆոնդի կողմից, որպես ներդրումային ֆոնդում փայի կամ բաժնետոմսի դիմաց ներդրում, ձեռք է բերվել տվյալ անձից.

50) «Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգի գործողությունը եզրափակելու նպատակով անմաքս առևտրի խանութի կազմակերպչի կողմից այն օտարերկրյա ապրանքների՝ «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ներմուծումը, որոնք իրացվել են «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրի 1-ին հավելվածով հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 243-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետում նշված անձանց.

51) ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետությունում գործող անմաքս առևտրի խանութներ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծումը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2001 թվականի մարտի 7-ին

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ

Հոդված 20. Գաղտնիությունը

1. Լիցենզավորված անձի կողմից հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունները հրապարակային են, եթե դրանք լիցենզավորված անձի կողմից չեն համարվում գաղտնի և նշված չեն որպես «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն»:

2. Լիցենզավորված անձն իրավունք ունի ապացուցել, որ իր ներկայացրած տվյալների (ներառյալ՝ «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվության») հրապարակումը կարող է վնասել ընկերության մրցակցային գործունեության շահերին, որը գերակա է հրապարակման հասարակական շահից: Հանձնաժողովն իրավասու է ընդունել կամ մերժել նման տեղեկատվության չհրապարակման վերաբերյալ լիցենզավորված անձի խնդրանքը:

3. Հանձնաժողովի անդամներն ու ~~աշխատակազմը~~ **աշխատողները** Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում գաղտնի տվյալների հրապարակման և դրանք իրենց անձնական շահերին ծառայեցնելու համար:

4. Լիցենզավորված անձը պարտավոր է իր սպառողների կողմից օգտագործվող ծառայությունների տեսակի, վայրի, նպատակի, քանակի և տեխնիկական պայմանների, ծառայությունների դիմաց վճարումների, պարտքերի, վճարումների սովորությունների կամ պարտավորությունների կամ դրանց կատարման մասին տեղեկությունների վերաբերյալ տեղեկատվությունը համարել և պահել գաղտնի:

5. Լիցենզավորված անձինք իրավասու են բացահայտելու սույն հոդվածի 4-րդ կետում նշված տեղեկությունները՝

ա) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝ հանցագործության բացահայտման, քրեական հետապնդման առնչությամբ կամ ազգային անվտանգության դեմ սպառնալիքի դեպքում.

բ) հանձնաժողովի պահանջով՝ հանձնաժողովին վերապահված իրավասությունների իրականացման շրջանակում.

գ) եթե բացահայտումն անհրաժեշտ է ի պաշտպանություն լիցենզավորված անձի (ընթանում են վարույթներ ընդդեմ այդ լիցենզավորված անձի): Սպառողը կարող է պահանջել, որ բացահայտումը կատարվի գաղտնիության կարգով՝ դռնփակ վարույթների միջոցով.

դ) «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված վարկային բյուրոներին՝ այդ օրենքով նախատեսված կարգով և սահմաններում:

6. Լիցենզավորված անձը պատասխանատվություն չի կրում սույն հոդվածի 5-րդ կետի համաձայն տեղեկությունների բացահայտման հետևանքով պատճառված որևէ վնասի համար:

Հոդված 1. «Էներգետիկայի մասին» 2001 թվականի մարտի 7-ի ՀՕ-148 օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասում «աշխատակազմը» բառը փոխարինել «**աշխատողները**» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2001 թվականի հուլիսի 27-ին

ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հոդված 3. Գանձապետարանը

1. ***(մասն ուժը կորցրել է 14.12.17 ՀՕ-305-Ն)***

2. Գանձապետարանը, պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված ~~պետական կառավարման մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) աշխատակազմի~~ **պետական մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին)**՝ սույն օրենքով նախատեսված խնդիրների իրականացման կազմակերպումն ապահովող կառուցվածքային ստորաբաժանումների (այսուհետ՝ գանձապետարանի ստորաբաժանումներ) ամբողջությունն է:

3. Գանձապետարանը ղեկավարվում է լիազոր մարմնի ղեկավարի տեղակալի (այսուհետ՝ գլխավոր գանձապետ) կողմից:

4. Գանձապետարանի ստորաբաժանումների թվաքանակը, կառուցվածքն ու տեղաբաշխումը սահմանում է լիազոր մարմինը:

5. ***(մասն ուժը կորցրել է 14.12.17 ՀՕ-305-Ն)***

6. Սույն օրենքով նախատեսված խնդիրների իրագործման ժամանակ գանձապետարանը հանդես է գալիս լիազոր մարմնի անունից:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2004 թվականի հունիսի 8-ին

ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **արխիվային գործ՝** պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց գործունեությունը Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի և արխիվային այլ փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման բնագավառում.

1.1) **փաստաթուղթ՝** նյութական կրիչի վրա գրառված տեղեկություն՝ վավերապայմաններով, որոնք թույլ են տալիս այն նույնականացնել.

2) **արխիվային փաստաթուղթ՝** պետության և հասարակության համար պատմամշակութային ու փաստավավերագրական նշանակությամբ պահպանության ենթակա՝ նյութական կրիչի վրա գրանցված վավերապայմաններով տեղեկություն, որը թույլ է տալիս դա նույնականացնել.

3) **արխիվային այլ փաստաթղթեր՝** Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմի մեջ չմտնող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում պահպանվող արխիվային փաստաթղթեր.

4) **անձնակազմին վերաբերող փաստաթղթեր՝** գործատուի հետ քաղաքացիների աշխատանքային հարաբերությունների ընթացքում աշխատանքային ստաժի, աշխատավարձի չափի և աշխատանքային գործունեության մասին տեղեկություններ պարունակող արխիվային փաստաթղթեր.

5) **մարդու անձնական և ընտանեկան գաղտնիքի մասին տեղեկություններ պարունակող արխիվային փաստաթղթեր՝** ֆիզիկական անձի առողջական վիճակի, ընտանեկան և նեղ անձնական հարաբերությունների, ծննդյան, որդեգրման, ամուսնության և ամուսնալուծության հանգամանքների, անձնական տվյալների, անձնական գրագրության և թղթակցության, նոտարական գործարքների, գույքային իրավունքի, եկամտի աղբյուրների մասին տեղեկություններ պարունակող արխիվային փաստաթղթեր.

6) **առանձնապես արժեքավոր փաստաթուղթ՝** պատմամշակութային կամ գիտական արժեք, պետության և հասարակության համար հատուկ կարևորություն ունեցող արխիվային փաստաթուղթ, որի համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է հաշվառման, պահպանության և օգտագործման հատուկ պայմաններ.

7) **հազվագյուտ փաստաթուղթ՝** առանձնապես արժեքավոր փաստաթուղթ, որը եզակի է իր բովանդակած տեղեկատվությամբ կամ արտաքին հատկանիշներով.

8) **Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածու՝** Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող, պատմականորեն ձևավորված և մշտապես համալրվող արխիվային փաստաթղթերի (այդ թվում՝ էլեկտրոնային) ամբողջություն, որը Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգության և տեղեկատվական պաշարների անբաժանելի բաղկացուցիչ մասն է և ենթակա է մշտական պահպանության.

9) **Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթուղթ՝** հայ ժողովրդի նյութական և հոգևոր կյանքն արտացոլող, գիտապատմական, սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակութային նշանակություն ունեցող՝ փորձաքննությամբ արժեքավորված, պետության կողմից հաշվառված և մշտական պահպանության ենթակա արխիվային փաստաթուղթ (այդ թվում՝ էլեկտրոնային).

10) **արխիվ՝** իրավաբանական անձ կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների~~ աշխատակազմերի~~, պետական հիմնարկի կամ կազմակերպության, իրավաբանական անձի կառուցվածքային ստորաբաժանում կամ կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող միավոր, նոտար կամ անհատ ձեռնարկատեր, որն իրականացնում է արխիվային փաստաթղթերի (այդ թվում՝ էլեկտրոնային) համալրում, հաշվառում, պահպանում և օգտագործում մինչև պետական կամ համայնքային արխիվ մշտական պահպանության հանձնելը կամ օրենսդրությամբ սահմանված կարգով ոչնչացնելը.

11) ***(կետն ուժը կորցրել է 19.10.16 ՀՕ-174-Ն)***

12) **պետական արխիվ՝** պետական ոչ առևտրային կազմակերպություն, որն ստեղծում է պետությունը՝ Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի և արխիվային այլ փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման, ինչպես նաև գիտական, մշակութային և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ գործունեություն իրականացնելու նպատակով.

13) **համայնքային արխիվ՝** համայնքային ոչ առևտրային կազմակերպություն, որն ստեղծում է համայնքը՝ Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերի և արխիվային այլ փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման նպատակով.

14) **արխիվային փաստաթղթերի մշտական պահպանություն՝** արխիվային փաստաթղթերի պահպանություն՝ առանց պահպանության ժամկետի սահմանման.

15) **արխիվային փաստաթղթերի ժամանակավոր՝ կարճաժամկետ և երկարաժամկետ, պահպանություն՝** արխիվային փաստաթղթերի պահպանություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում.

16) **Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերի ավանդատվական պահպանություն՝** Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերի պահպանությունը պետական մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով.

17) **արխիվային փաստաթղթերի պահատվությամբ պահպանություն՝** արխիվային փաստաթղթերի պահպանությունը պետական կամ համայնքային արխիվներում դրանց սեփականատերերի հետ՝ համապատասխան պայմանագրով սահմանված որոշակի ժամկետում և պայմաններով.

18) **արխիվային փաստաթղթերի սեփականատեր՝** Հայաստանի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետության համայնք, իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որն

ունի արխիվային փաստաթղթերի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունք.

19) **արխիվային փաստաթղթերից օգտվող՝** պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը, սահմանված կարգին համապատասխան, օգտվում է արխիվային փաստաթղթերից իրեն անհրաժեշտ տեղեկությունն ստանալու և օգտագործելու նպատակով.

20) **արխիվի համալրման աղբյուր՝** պետական կամ համայնքային արխիվներին արխիվային փաստաթղթեր և նյութական կրիչի վրա այլ տեղեկություններ հանձնող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձ.

21) **տեղեկատու-որոնողական միջոցներ՝** արխիվային փաստաթղթերի բովանդակությանը վերաբերող տեղեկատվության և դրանց որոնման ապահովման նպատակով կազմված փաստաթղթերի ամբողջություն.

22) **գրանցամատյան՝** պետական հաշվառման հիմնական փաստաթուղթ, որն ապահովում է հազվագյուտ փաստաթղթի հաշվառումը՝ նրան բնութագրող առանձնահատուկ նշանների հակիրճ նկարագրությամբ և որոնողական տվյալներով:

Հոդված 15. Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերի պահպանությունը

1. Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի՝ պետության սեփականություն համարվող փաստաթղթերի պահպանությունն իրականացվում է հետևյալ կերպ.

1) մշտական պահպանություն՝ պետական արխիվներում.

2) ժամանակավոր պահպանություն՝ մինչև մշտական պահպանության հանձնելը պետական մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների ~~աշխատակազմերի~~ արխիվներում՝ սույն օրենքով սահմանված ժամկետների ընթացքում:

2. Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի համայնքի սեփականություն համարվող փաստաթղթերի պահպանությունն իրականացվում է հետևյալ կերպ.

1) մշտական պահպանություն՝ համայնքային արխիվներում.

2) ժամանակավոր պահպանություն՝ տեղական ինքնակառավարման մարմիններում, համայնքային կազմակերպություններում՝ սույն օրենքով սահմանված ժամկետների ընթացքում:

3. Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականություն համարվող փաստաթղթերը սույն օրենքով սահմանված կարգով պահպանում են դրանց սեփականատերերը կամ պայմանագրի հիման վրա պահպանության կարող են հանձնվել արխիվներ:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2007 թվականի ապրիլի 9-ին

ԻՆՏԵՐՆԵՏՈՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 5. Հրապարակային ծանուցում ներկայացնելը

1. Հրապարակող անձը հրապարակային ծանուցման տեքստը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած էլեկտրոնային ձևաչափով ներկայացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ~~աշխատակազմի~~ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն (այսուհետ՝ գործակալություն):

2. Օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով հրապարակային ծանուցման հրապարակման համար ժամկետ սահմանված լինելու դեպքում հրապարակային ծանուցման տեքստը պետք է ներկայացվի գործակալություն սահմանված ժամկետից առնվազն մեկ օր առաջ:

3. Հրապարակային ծանուցումը պետք է ներկայացնի այն հրապարակելու լիազորություն ունեցող անձը կամ նրա լիազորած անձը:

4. Հրապարակային ծանուցման բովանդակության համար պատասխանատու է այն հրապարակող անձը: Հրապարակային ծանուցումը ենթակա չէ հրապարակման, եթե օրենքով արգելված է նման բովանդակությամբ ծանուցման հրապարակումը:

5. Հրապարակային ծանուցման ներկայացման և կայքը վարող անձին փոխանցելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Հրապարակային ծանուցումը պետք է շարադրված լինի Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզվով՝ գրական հայերենով:

7. Տեքստը պետք է գրված լինի պարզ և հստակ: Արգելվում է կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, օգտագործել բարոյականության սկզբունքներին հակասող բառեր: Թույլատրվում է բառերի կամ տերմինների համընդհանուր օգտագործման հապավումների օգտագործում:

8. Հրապարակային ծանուցման անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում կայքը վարող անձը պարտավոր է ինքնուրույն ուղղել այն սխալները և վրիպակները, որոնց ուղղման դեպքում չի արատավորվի հրապարակային ծանուցման բովանդակությունը, և այդ մասին պարտավոր է մեկօրյա ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկացնել հրապարակային ծանուցում հրապարակող անձին:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2008 թվականի նոյեմբերի 27-ին

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Հոդված 32. Հայաստանի Հանրապետությունում ապաստանի հարցերով իրավասու պետական մարմինները

1. Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ օտարերկրացիներ) ապաստանի տրամադրման, փախստականի ճանաչման, ապաստան հայցողների և Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչվածների իրավունքների իրացման և սույն օրենքով սահմանված այլ իրավահարաբերությունների հարցերով իրավասու պետական մարմիններն են՝

1) Կառավարությունը.

2) լիազոր մարմինը.

3) Ազգային անվտանգության ծառայությունը.

4) Ոստիկանությունը.

5) արտաքին գործերի բնագավառում լիազորված մարմինը (այսուհետ՝ Արտաքին գործերով լիազոր մարմին).

6) աշխատանքի և սոցիալական հարցերով լիազորված պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ Աշխատանքի և սոցիալական հարցերով լիազոր մարմին).

7) կրթության հարցերով լիազորված պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ Կրթության հարցերով լիազոր մարմին).

8) առողջապահության հարցերով լիազորված պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ Առողջապահության հարցերով լիազոր մարմին).

9) խնամակալության և հոգաբարձության մարմինները (այսուհետ՝ Խնամակալության մարմիններ).

10) Հայաստանի Հանրապետության մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) ~~աշխատակազմի~~՝ երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները (այսուհետ՝ Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժիններ).

11) այլ իրավասու պետական մարմիններ (այսուհետ՝ այլ մարմիններ):

2. Ապաստանի շնորհումը սույն հոդվածի 1-ին մասում թվարկված պետական մարմինների կողմից պետք է դիտարկվի Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների ներքո, և սույն օրենքի կամ ապաստանի և փախստականների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության այլ օրենսդրական ակտերի կիրառման ընթացքում որևէ պարագայում չպետք է ապաստան հայցողի կամ փախստականի մասին տեղեկություններ փոխանակվեն նրա քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության երկրի իշխանությունների հետ:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2014 թվականի դեկտեմբերի 17-ին

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 9. Հավաստագրման հանձնաժողովը

1. Հավաստագրումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ձևավորված հանձնաժողովը:

Հանձնաժողովը բաղկացած է 7 անդամից, որում ընդգրկվում են՝

1) Հայաստանի Հանրապետության ~~կառավարության~~ **վարչապետի** աշխատակազմի ներկայացուցիչը.

2) ոլորտի զարգացման համար պատասխանատու՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ներկայացուցիչը.

3) պետության եկամուտների ձևավորման, պետական ֆինանսների կառավարման բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ներկայացուցիչը.

3.1) հարկային և մաքսային ոլորտներում վարչարարություն իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ներկայացուցիչը.

4) ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների շահերը ներկայացնող միավորումների և ոչ առևտրային կազմակերպությունների երեք ներկայացուցիչ:

Հանձնաժողովի կազմում ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների շահերը ներկայացնող միավորումների և ոչ առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչների ընդգրկման կարգը և պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

2. Հանձնաժողովի նիստն իրավազոր է հանձնաժողովի բոլոր անդամների մասնակցության դեպքում, իսկ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի բացակայության դեպքում նիստը համարվում է չկայացած, և նշանակվում է նոր նիստ: Հանձնաժողովի անդամները կարող են օրենքով սահմանված կարգով լիազորել այլ անձանց իրենց անունից հանձնաժողովի նիստին մասնակցելու համար, ընդ որում, եթե հանձնաժողովի անդամը 2 անգամ անընդմեջ բացակայում է և չի լիազորում այլ անձանց իր անունից հանձնաժողովի նիստին մասնակցելու համար, ապա նշված հանգամանքը հանձնաժողովի նիստը չկայացած համարելու հիմք չէ:

3. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

4. Հանձնաժողովի յուրաքանչյուր նիստի համար կազմվում է արձանագրություն: Արձանագրությունները ստորագրում են նիստին մասնակցած անդամները:

5. Հանձնաժողովի նիստերի հրավիրման և այլ ընթացիկ աշխատանքները կազմակերպում է հանձնաժողովի քարտուղարությունը: Հանձնաժողովի

քարտուղարություն է հանդիսանում ոլորտի զարգացման համար պատասխանատու Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

6. Հանձնաժողովը հավաստագրի տրամադրման կամ մերժման մասին որոշումը պարտավոր է ընդունել հավաստագրի տրամադրման մասին դիմումը ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2013 թվականի մայիսի 20-ին

ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՎԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 9. Գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործման մշտադիտարկումը

1. Գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործման մշտադիտարկումն ու գնահատումն իրականացնում են պետական ~~կառավարման~~ մարմինները Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

2. Գենդերային հավասարության ապահովման ծրագրեր և միջոցառումներ իրականացնող պետական ~~կառավարման~~ և տեղական ինքնակառավարման մարմինները գենդերային հավասարության ուղղությամբ իրենց իրականացրած գործունեության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով ամենամյա տեղեկատվություն են ներկայացնում գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործման համար պատասխանատու Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին (այսուհետ՝ պետական լիազոր մարմին) և կարող են դա հրապարակել զանգվածային լրատվության միջոցներով:

Հոդված 13. Գենդերային հավասարության երաշխիքները հանրային ծառայության մեջ

1. Կանայք և տղամարդիկ հանրային ծառայության ընդունվելու և մասնագիտական գործունեություն իրականացնելու համար ունեն հավասար իրավունքներ, պարտականություններ, պատասխանատվություն և հավասար հնարավորություններ:

2. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են ապահովել կանանց և տղամարդկանց՝ հանրային ծառայության ընդունվելու հավասար հնարավորություններ՝ իրենց ընդունակություններին և մասնագիտական պատրաստվածությանը համապատասխան:

3. ~~Պետական~~ **Պետական մարմնում** և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմերում աշխատողներին պաշտոններում նշանակելիս, աշխատանքային առաջխաղացում կամ մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով վերապատրաստման, ուսուցման գործուղում իրականացնելիս բացառվում են գենդերային խտրականության դրսևորումները:

4. Կանայք և տղամարդիկ հանրային ծառայության թափուր պաշտոնների համալրմանը իրավունք ունեն մասնակցելու օրենքով սահմանված կարգով՝ հավասարապես և հավասար պայմաններում:

5. Արգելվում է միայն մեկ սեռի անձանց համար հանրային ծառայության ընդունվելու մրցույթներ հայտարարելը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա ուղղակիորեն բխում է այլ անձանց իրավունքների և շահերի պաշտպանությունից:

6. Սույն հոդվածով սահմանված պահանջների խախտմամբ ընդունված ակտը կամ թափուր պաշտոնների համալրման համար անցկացված մրցույթն անվավեր է ճանաչվում դատական կարգով:

Հոդված 14. Գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործումը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր լիազորությունների սահմաններում՝

1) իրագործում է գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականությունը.

2) ապահովում է գենդերային հավասարության ապահովման քաղաքականության իրագործման ոլորտում պետական կառավարման **համակարգի** մարմինների գործունեության վերահսկողությունը.

3) մինչև յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի վերջը հաղորդում է ներկայացնում նախորդող տարում գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործման արդյունքների և Հայաստանի Հանրապետությունում գենդերային հավասարության ոլորտում ստեղծված իրավիճակի վերաբերյալ, որը հրապարակում է զանգվածային լրատվության միջոցներով.

4) Միավորված ազգերի կազմակերպության «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա) սահմանված կարգով և ժամկետներում Գլխավոր քարտուղարին է ներկայացնում Կոնվենցիայի դրույթների կատարման վերաբերյալ զեկույցը.

5) հաստատում է գենդերային հավասարության վրա պետական քաղաքականության, ծրագրերի ամիջոցառումների ազդեցության գնահատման կարգը.

6) ստեղծում է իրավական և կազմակերպական գործուն մեխանիզմներ գենդերային հավասարության պետական քաղաքականության ապահովման և իրագործման համար:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ

Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք

Ընդունված է 2004 թվականի նոյեմբերի 9-ին

Հոդված 60. Ծնողական իրավունքներից զրկելու կարգը

1. Ծնողական իրավունքներից զրկելը կատարվում է դատական կարգով: Ծնողական իրավունքներից զրկելու մասին հայց կարող է ներկայացնել՝

ա. ծնողներից մեկը (երեխայի այլ օրինական ներկայացուցիչը),

բ. խնամակալության և հոգաբարձության մարմինը,

գ. այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններն ու կազմակերպությունները, որոնց վրա օրենքով դրված են երեխաների իրավունքների ու շահերի պաշտպանության պարտականություններ.

1.1. Սույն հոդվածի 1-ին մասի «բ» և «գ» ենթակետերով նախատեսված մարմինները և կազմակերպությունները սույն օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում պարտավոր են ծնողական իրավունքներից զրկելու մասին հայց ներկայացնել դատարան ոչ ուշ, քան 59-րդ հոդվածով սահմանված հիմքերն իրենց հայտնի դառնալու օրվանից մեկ ամիս հետո:

2. Ծնողական իրավունքներից զրկելու մասին գործերը քննվում են խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ:

2.1. Ծնողական իրավունքներից զրկելու մասին գործերը քննելիս հաշվի է առնվում սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած ~~պետական կառավարման մարմնի աշխատակազմում~~ **պետական մարմնում** չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի կողմից խնամակալության և հոգաբարձության մարմիններին տրամադրված՝ երեխայի և ծնողի սոցիալական կարիքների գնահատման մասին եզրակացությունը (դիրքորոշումը):

3. Եթե դատարանը ծնողական իրավունքներից զրկելու գործը քննելիս ծնողների կամ նրանցից մեկի գործողություններում հայտնաբերում է քրեորեն պատժելի արարքի հատկանիշներ, ապա այդ մասին պարտավոր է տեղեկացնել համապատասխան իրավասու մարմիններին:

4. Ծնողական իրավունքներից զրկելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից երեք օրվա ընթացքում դատարանը պարտավոր է այդ վճռի քաղվածքն ուղարկել երեխայի ծննդի պետական գրանցման վայրի քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմին:

Հոդված 67. Խնամակալության և հոգաբարձության մարմնի մասնակցությունը երեխաների խնամքի և դաստիարակության հետ կապված վեճերը դատարանի կողմից քննելիս

1. Դատարանը երեխաների խնամքի և դաստիարակության հետ կապված վեճերը քննելիս գործին պետք է մասնակից դարձնի խնամակալության և հոգաբարձության մարմնին, անկախ նրանից, թե ով է ներկայացրել երեխայի պաշտպանության մասին հայց:

2. Խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է անցկացնել երեխայի և այն անձի (անձանց) կյանքի պայմանների հետազոտություն, որը (որոնք) հավակնում է (են) երեխայի խնամքի և դաստիարակության կազմակերպմանը և դատարան ներկայացնել հետազոտության ակտն ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը, իսկ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների դեպքում՝ նաև

սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած ~~պետական կառավարման մարմնի աշխատակազմում~~ **պետական մարմնում** չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի կողմից խնամակալության և հոգաբարձության մարմիններին տրված եզրակացությունը երեխայի որդեգրման, խնամակալության կամ հոգաբարձության, խնամատարության կամ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն ուղեգրելու մասին:

Հոդված 118. Երեխային որդեգրելու համար ծնողների հրաժարումը կամ համաձայնությունը

1. Երեխային որդեգրելու համար անհրաժեշտ է՝

1) ծնողների գրավոր հրաժարումը՝ երեխայի նկատմամբ ծնողական իրավունքներից կամ

2) ծնողի գրավոր համաձայնությունը՝ երեխային որդեգրման տալու վերաբերյալ:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքում երեխա որդեգրելու համաձայնություն կարող է տրվել միայն այն դեպքում, երբ երեխան ունի միայն մեկ ծնող: Ծնողի գրավոր համաձայնության դեպքում երեխան կարող է որդեգրվել միայն խորթ հոր կամ խորթ մոր կամ մերձավոր ազգականների կողմից: Երեխա որդեգրելու համար համաձայնությունը կարող է տրվել միայն երեխայի ծնվելուց հետո:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դեպքերում անչափահաս ծնողների երեխային որդեգրելիս անհրաժեշտ է նաև նրանց ծնողների կամ խնամակալների (հոգաբարձուների) համաձայնությունը, իսկ ծնողների կամ խնամակալի (հոգաբարձուի) բացակայության դեպքում՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի համաձայնությունը:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում որդեգրման գործընթացն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

5. Երեխայի նկատմամբ ծնողական իրավունքներից հրաժարումը կամ ծնողների՝ երեխային որդեգրման տալու վերաբերյալ գրավոր համաձայնությունն արտահայտվում է երեխայի ծնողների ներկայացրած դիմումով, որը կազմվում է բացառապես երեխայի գտնվելու վայրի կամ դրա անհնարինության դեպքում՝ ծնողների գտնվելու վայրի տարածքի սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած ~~պետական կառավարման մարմնի աշխատակազմում~~ **պետական մարմնում** չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի ներկայացուցչի ներկայությամբ, հաստատվում այն կազմակերպության ղեկավարի կողմից, որտեղ գտնվում է երեխան, կամ նոտարի կողմից, եթե դիմումը կազմվում է երեխայի խնամատար ընտանիքի, երեխայի խնամակալի (հոգաբարձուի) կամ ծնողների գտնվելու վայրում:

6. Դիմումի ձևը հաստատվում է կառավարության լիազորած մարմնի իրավական ակտով:

7. Ծնողները կարող են հետ վերցնել երեխային որդեգրելու համար իրենց տված գրավոր հրաժարումը կամ համաձայնությունը մինչև նրան որդեգրելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2011 թվականի նոյեմբերի 28-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Հոդված 3. Օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենսգրքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

1) ընդերք՝ հողածածկույթից ներքև, իսկ դրա բացակայության դեպքում՝ երկրի մակերևույթից, ջրավազանների կամ ջրհոսքերի հատակից ներքև՝ ըստ խորության տեղադրված երկրակեղևի մաս, որը մատչելի է ընդերքօգտագործման համար.

2) երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել օգտակար հանածոների պաշարները.

3) ընդերքօգտագործում՝ երկրաբանական ուսումնասիրությունների, օգտակար հանածոների արդյունահանման նպատակներով ընդերքի օգտագործում կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակում.

4) ընդերքօգտագործող՝ իրավաբանական անձ (այդ թվում՝ օտարերկրյա պետության առևտրային կազմակերպություն), որը, սույն օրենսգրքին համապատասխան, իրականացնում է ընդերքօգտագործում.

5) ընդերքի երկրաբանական ուսումնասիրության համաձայնություն՝ համաձայնություն, որն իրավունք է տալիս ընդերքի որոշակի տեղամասում իրականացնելու՝

ա. ռեգիոնալ երկրաբանական ուսումնասիրություն՝ ռեգիոնալ երկրաբանաերկրաֆիզիկական աշխատանքներ, երկրաբանական հանույթ (քարտեզագրում), երկրաքիմիական, սեյսմաբանական, հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական հետազոտություններ, գիտահետազոտական, հնէաբանական և այլ աշխատանքներ՝ ուղղված ընդերքի ընդհանուր երկրաբանական ուսումնասիրությանը,

բ. հրաբխային գործունեության ուսումնասիրության երկրաբանական աշխատանքներ, արտածին երկրաբանական պրոցեսների մշտադիտարկումներ,

գ. միներալոգիական, հնէաբանական և երկրաբանական այլ հավաքածուների ստեղծում, գեղագիտական և կիսաթանկարժեք քարերի հավաքում,

դ. գիտական, մշակութային, գեղագիտական և այլ նշանակություն ունեցող երկրաբանական օբյեկտների (եզակի երկրաբանական առաջացումներ, բնության հուշարձաններ, քարանձավներ և այլն) նկարագրում ու պահպանում.

6) օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն՝ թույլտվություն, որն իրավունք է տալիս ընդերքի որոշակի տեղամասում իրականացնելու երկրաբանական ուսումնասիրություններ օգտակար հանածոների հայտնաբերման համար.

7) օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն՝ թույլտվություն, որն իրավունք է տալիս ընդերքի որոշակի տեղամասում իրականացնելու օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման աշխատանքներ.

8) ընդերքօգտագործման իրավունք՝ համապատասխան ընդերքօգտագործման համաձայնությունով կամ թույլտվությունով, ծրագրով կամ նախագծով, ընդերքօգտագործման պայմանագրով, լեռնահատկացման ակտով հավաստվող՝ ընդերքի

որոշակի տեղամասի երկրաբանական ուսումնասիրության կամ օգտակար հանածոների արդյունահանման բացառիկ իրավունքներ.

9) ընդերքի տեղամաս՝ որոշակի աշխարհագրական սահմանանշում պարունակող ընդերքի մաս, որում պետք է իրականացվեն ընդերքօգտագործման աշխատանքներ.

10) օգտակար հանածո՝ ընդերքում պարփակված պինդ հանքային գոյացումներ, հեղուկ կամ գազային բաղադրամասեր, այդ թվում՝ ստորերկրյա ջրեր (քաղցրահամ և հանքային) և երկրաջերմային էներգիա, ջրավազանների, ջրհոսքերի հատակային նստվածքներ, որոնց քիմիական կազմը և ֆիզիկական հատկանիշները թույլ են տալիս դրանք օգտագործել ուղղակիորեն կամ վերամշակումից հետո.

11) օգտակար հանածոյի պաշարներ՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են.

12) հանքավայր՝ ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական.

13) արտադրական լցակույտեր՝ օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման կամ վերամշակման արդյունքում առաջացած ընդերքօգտագործման թափոններ (այդ թվում՝ պոչանքներ)՝ տեղադրված երկրի մակերևույթի վրա կամ լեռնային փորվածքներում.

14) օգտակար հանածոյի երևակում՝ ընդերքի տեղամաս, որում հայտնաբերվել է օգտակար հանածոյի առկայություն, որի քանակը, որակը և արդյունաբերական նշանակությունը դեռ որոշված չեն.

15) օգտակար հանածոների պաշարների հաշվեկշիռ՝ հայտնաբերված օգտակար հանածոների պաշարների պետական հաշվառման ձև՝ յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ի դրությամբ, որը պարունակում է տվյալներ ուսումնասիրված հանքավայրերի պաշարների քանակի, որակի և ուսումնասիրվածության աստիճանի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանում դրանց փոփոխության մասին.

16) հանքավայրերի և օգտակար հանածոների երևակումների կադաստր՝ հանքավայրերի և օգտակար հանածոների երևակումների մասին համակարգված ամփոփ տեղեկատվություն, որն ընդգրկում է բոլոր հայտնաբերված օբյեկտները՝ անկախ դրանց տիպից, չափերից, ուսումնասիրվածության աստիճանից ու արդյունաբերական նշանակությունից.

17) օգտակար հանածոյի արդյունահանում՝ օգտակար հանածոյի դուրսբերումը հանքավայրերից և դրանց մեջ պարփակված օգտակար բաղադրիչների կորզմանն ուղղված աշխատանքների համալիր.

18) լեռնահատկացում՝ օգտակար հանածոյի արդյունահանման համալիրի տեղադրման նպատակով տրամադրվող ընդերքի տեղամասի եզրակետերի կոորդինատներն ամրագրող՝ լիազոր մարմնի կողմից ընդերքօգտագործողին տրվող փաստաթուղթ, որն ընդերքօգտագործման իրավունքի անբաժանելի մասն է.

19) երկրաբանական տեղեկություն՝ ընդերքի տեղամասի կառուցվածքի, կազմի, դրանում օգտակար հանածոների առկայության, քանակի և այլ հատկությունների, ինչպես նաև ընդերքօգտագործման տեխնիկատնտեսական ցուցանիշների մասին տվյալներ.

20) օգտակար հանածոյի արդյունահանման համալիր՝ օգտակար հանածոյի արդյունահանման և վերամշակման նպատակով կառուցված շենքի, շինության, տեղակայված սարքավորումների, հաղորդակցության ուղիների կամ այլ ենթակառուցվածքների ամբողջություն.

21) նախագիծ՝ օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների իրականացման նպատակով մշակված և օրենսդրությամբ սահմանված կարգով փորձաքննություններ անցած փաստաթուղթ.

22) երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագիր՝ լիազոր մարմնի հետ համաձայնեցված փաստաթուղթ՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման վերաբերյալ.

23) ընդերքօգտագործման պայմանագիր՝ լիազոր մարմնի և ընդերքօգտագործողի միջև կնքված գրավոր համաձայնություն, որով սահմանվում են տվյալ ընդերքօգտագործման (երկրաբանական ուսումնասիրությունների կամ օգտակար հանածոների արդյունահանման) իրավունքի տրամադրման պայմանները, կողմերի իրավունքներն ու պարտականությունները.

24) լիազոր մարմին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ կառավարություն) լիազորած և սույն օրենսգրքով ընդերքօգտագործման ոլորտում իրեն վերապահված լիազորություններն իրականացնող պետական կառավարման մարմին.

25) ռեկուլտիվացիոն աշխատանքներ՝ օգտակար հանածոների արդյունահանման նախագծով կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրով շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումներ.

26) կոնդիցիաներ՝ օգտակար հանածոյի որակին ու քանակին, հանքավայրի շահագործման տեխնիկատնտեսական ցուցանիշները կանխորոշող բնական պայմաններին ներկայացվող պահանջներ.

27) արտոնյալ դիմումատու՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելու ընդերքօգտագործման իրավունք կրող, որը տվյալ տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման համար իրավունք ձեռք բերելու դիմում է ներկայացրել լիազոր մարմին.

28) հատուկ թույլտվություն՝ թույլտվություն, որն իրավունք է տալիս համապատասխան մասնագիտական փորձ ունեցող իրավաբանական անձանց իրականացնելու ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ.

28.1) շրջակա միջավայրի պահպանության դրամագլուխ՝ կենտրոնական գանձապետարանում լիազոր մարմնի անվամբ բացված արտաբյուջետային հաշվին ընդերքօգտագործողների հատկացրած գումարներ, որոնք ուղղվում են սույն օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված նպատակների իրականացմանը.

28.2) ֆինանսական երաշխիք՝ ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված՝ ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների և ընդերքօգտագործման թափոնների մշակման օբյեկտների շահագործման, փակման, փակումից հետո օրենքով նախատեսված միջոցառումների իրականացման, թափոնների վերամշակման, օգտագործման կամ վնասազերծման, ինչպես նաև նշված գործողությունների արդյունքում առաջացող թերությունների կամ պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափանիշները բավարարող իրավաբանական անձանց կողմից տրվող և ընդերքի օգտագործման հետ

կապված՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին ներկայացվող երաշխիք.

28.3) ֆինանսական այլ առաջարկներ և երաշխիքներ՝ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ստանալու նպատակով ներկայացվող ֆինանսական առաջարկներ և երաշխիքներ, որոնք ներառում են մանրամասներ հանքի աշխատանքի, կապիտալ և գործառնական ծախսերի վերաբերյալ.

28.4) հանքի փակման ծրագրի իրականացման ֆինանսական երաշխիքներ՝ ֆինանսական երաշխիքներ, որոնք ներկայացվում են հանքի փակման ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով.

29) ***(կետն ուժը կորցրել է 18.10.16 ՀՕ-161-Ն)***

30) լրահետախուզում՝ շահագործվող հանքավայրերի թևերի, խոր հորիզոնների, տարանջատ տեղամասերի երկրաբանահետախուզական աշխատանքներ, որի արդյունքում իրականացվում են ցածր կարգերի պաշարների ավելի բարձր կարգերի վերագրում և նոր բացահայտված պաշարների հաշվարկ.

31) շահագործական հետախուզում՝ իրականացվում է հանքավայրի շահագործման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում, որի հետևանքով ճշգրտվում են հանքային մարմինների ձևաբանության, տեղադրման պայմանների ու օգտակար հանածոների որակական և տեխնոլոգիական հատկանիշները, շահագործման լեռնատեխնիկական և հիդրոերկրաբանական պայմանները, ինչպես նաև կատարվում է պաշարների շարժի օպերատիվ հաշվառում.

32) շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական՝ երկրաբանական ուսումնասիրությունների ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում.

33) բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում.

34) ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործում՝ ընդերքօգտագործման ընթացքում այնպիսի տեխնոլոգիաների կիրառում, որի դեպքում հնարավորինս կնվազեն օգտակար հանածոյի կորուստները, և կստացվի տնտեսական առավելագույն շահույթ.

35) ընդերքօգտագործման թափոններ՝ կիրառվում են այն իմաստով, որը սահմանված է «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով.

36) պոչամբար՝ օգտակար հանածոների հարստացման արդյունքում առաջացած պինդ կամ հեղուկ թափոնների պահման հիդրոտեխնիկական կառուցվածք.

37) պոչանքներ՝ պինդ կամ կիսահեղուկ թափոններ, որոնք առաջանում են օգտակար հանածոների մշակման (այդ թվում՝ մանրացման, աղացման, չափային տեսակավորման, հարստացման և այլ ֆիզիկաքիմիական տեխնոլոգիաների կիրառման) ընթացքում.

38) ընդերքօգտագործման թափոնների օբյեկտ՝ տարածք, տեղ, ներառյալ՝ ցանկացած պատվար կամ որևէ այլ կառույց (ներառյալ՝ պոչամբարները), որը նախատեսված է տարածքն իր մեջ պարունակելու, սահմանափակելու կամ այլ կերպ որպես հենարան պահելու նպատակին, որտեղ հավաքվում, կուտակվում, պահվում, հեռացվում, վնասազերծվում, տեղադրվում կամ թաղվում են ընդերքօգտագործման

թափոնները (պինդ, հեղուկ կամ կիսահեղուկ վիճակում): Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտ չեն հանդիսանում այն տարածքները (ներառյալ՝ փորված հորերը), որտեղ ընդերքօգտագործման թափոնները տեղափոխվել են օգտակար հանածոյի արդյունահանումից հետո՝ վերականգնման կամ շինարարական նպատակներով: Վերջիններս հանդիսանում են թափոններ «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով, և դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով.

39) ընդերքօգտագործման վտանգավոր թափոններ՝ ընդերքօգտագործման թափոններ, որոնք իրենց ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական հատկություններով վտանգ են ստեղծում կամ կարող են ստեղծել մարդու առողջության և շրջակա միջավայրի համար, և պահանջվում են դրանց հետ վարվելու հատուկ մեթոդներ, եղանակներ, միջոցներ.

40) ընդերքօգտագործման թափոնների կառավարում՝ ընդերքօգտագործման թափոնների հավաքման, փոխադրման, վնասազերծման, կուտակման, պահման, հեռացման, տեղադրման, թաղման, մշակման, օգտահանման գործողություններ, որոնք ուղղված են ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների և ընդերքօգտագործման թափոնների կառավարման միջոցով շրջակա միջավայրի կամ մարդու առողջության վրա ընդերքօգտագործման թափոնների բացասական ազդեցության հնարավորության դեպքում կանխմանը կամ հնարավորինս նվազեցմանը.

41) ընդերքօգտագործման թափոնների վերամշակում՝ տեխնոլոգիական գործողությունների իրականացում, որոնք կապված են թափոնների մեխանիկական, ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական հատկությունների փոփոխման հետ, և որի նպատակն է ընդերքօգտագործման թափոններից օգտակար հանածոյի կորզումը, այդ թվում՝ դրա չափերի փոփոխումը, դասակարգումը, առանձնացումը, թափոնների վերամշակումը.

42) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման օբյեկտ՝ ընդերքօգտագործման թափոնների օբյեկտներ, որտեղ գտնվող ընդերքօգտագործման թափոնները ենթարկվում են մշակման, վերամշակման կամ օգտահանման.

43) ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլան՝ ընդերքօգտագործման թափոնների կառավարման համապարփակ փաստաթուղթ, որը նկարագրում է ընդերքօգտագործման թափոնների օբյեկտներում թափոնների հավաքման, փոխադրման, վնասազերծման, կուտակման, պահման, հեռացման, տեղադրման, թաղման այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են սույն օրենսգրքով նախատեսված նպատակների իրականացման համար: Ընդ որում, ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանը մշակում և ընդերքի օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին են ներկայացնում բոլոր ընդերքօգտագործողները.

44) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլան՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման համապարփակ փաստաթուղթ, որը նկարագրում է ընդերքօգտագործման թափոնների վերամշակման օբյեկտների կառավարման և դրանցում գտնվող ընդերքօգտագործման թափոնների կառավարման, մշակման, վերամշակման կամ օգտահանման այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են սույն օրենսգրքով նախատեսված նպատակների իրականացման համար: Ընդ որում, ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլան մշակում և ընդերքի

օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին են ներկայացնում միայն այն ընդերքօգտագործողները, որոնք ցանկանում են վերամշակել ընդերքօգտագործման թափոնները.

45) լավագույն հնարավոր տեխնոլոգիա՝ սույն օրենսգրքով նախատեսված գործունեության իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների և մեթոդների ամբողջություն, որոնք հնարավորինս կանխում կամ նվազագույնի են հասցնում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները, այդ թվում՝ շրջակա միջավայր վտանգավոր նյութերի արտանետումները.

46) նախնական պայմանագիր՝ լիազոր մարմնի և ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման համար հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված անձի միջև կնքված գրավոր համաձայնություն, որով սահմանվում են ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման իրավունքի ձեռքբերման համար ներկայացվող դիմումը, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը և երկր5) սույն օրենսգրքի 9-րդ հոդվածով նախատեսված՝ ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնության շրջանակներում:աբանական ուսումնասիրության նյութերը փորձաքննության ներկայացնելու ժամկետները:

47) ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկում՝ ժամանակի և տարածության մեջ պարբերաբար ուսումնասիրությունների միջոցով շրջակա միջավայրի ու բնական ռեսուրսների վիճակի և դրանց վրա ազդեցություն ունեցող գործոնների դիտարկման, վիճակի գնահատման ու կանխատեսման գործընթաց:

48) հրապարակային հաշվետվություն՝ սույն օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված ընդերքօգտագործողների և պետական մարմինների կողմից լիազոր մարմին և ~~կառավարության աշխատակազմ~~ **վարչապետի աշխատակազմ** ներկայացվող հաշվետվություն, որը բաց է հրապարակման համար:

Հոդված 9. Ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնությունը

1. Ընդերքօգտագործման հետ կապված գործունեության վերաբերյալ լիազոր մարմինն իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է օգտակար հանածոյի արդյունահանման և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության մասով գործունեության վերաբերյալ առնվազն հետևյալ տեղեկատվությունը.

1) թույլտվություն ստացած իրավաբանական անձի անվանումը.

2) թույլտվություն ստանալու համար ներկայացված դիմումի տարին, ամիսը, ամսաթիվը.

3) թույլտվության հերթական համարը, տրման տարին, ամիսը, ամսաթիվը և ժամկետը.

4) թույլտվության երկարաձգման դեպքում՝ համապատասխան փաստաթղթի համարը, տրման տարին, ամիսը, ամսաթիվը, թույլտվության երկարաձգման ժամկետը.

5) ընդերքի տեղամասի ծայրակետերի կոորդինատները և ընդհանուր մակերեսը.

6) հանքավայրի (տեղամասի) անվանումը.

7) օգտակար հանածոյի անվանումը.

8) ընդերքօգտագործման պայմանագրի համարը, կնքման տարին, ամիսը, ամսաթիվը, ընդերքօգտագործման պայմանագրում փոփոխություններ կատարելու դեպքում՝ յուրաքանչյուր փոփոխության համար համապատասխան փաստաթղթի համարը, կնքման տարին, ամիսը, ամսաթիվը.

9) օգտակար հանածոյի արդյունահանման մասով գործունեության վերաբերյալ նաև՝

ա. տրամադրված օգտակար հանածոյի մարվող պաշարների քանակը՝ ըստ հիմնական և ուղեկից բաղադրիչների,

բ. հանքի տարեկան արտադրողականությունը.

10) օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության մասով գործունեության վերաբերյալ՝ նաև օգտակար հանածոյի երևակման կամ օբյեկտի անվանումը:

2. Լիազոր մարմինն իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է նաև մետաղական օգտակար հանածո արդյունահանող ընդերքօգտագործողների հետ կնքված ընդերքօգտագործման պայմանագրերը և դրանցում կատարվող փոփոխությունները՝ բացառելով «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հրապարակման ոչ ենթակա տեղեկատվության (տվյալների) հրապարակումը:

3. Մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործողը կառավարության որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում պարտավոր է թղթային կամ էլեկտրոնային եղանակով լիազոր մարմին և ~~կառավարության աշխատակազմ~~ **վարչապետի աշխատակազմ** ներկայացնել տարեկան հրապարակային հաշվետվություն ընդերքօգտագործման հետ կապված գործունեության վերաբերյալ, որը ներառում է տեղեկատվություն առնվազն՝

1) արդյունահանման տարեկան ծավալների վերաբերյալ.

2) արտահանման տարեկան ծավալների վերաբերյալ.

3) ընդերքօգտագործողի կողմից Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեներ վճարված բոլոր տեսակի պետական և տեղական հարկերի և վճարների (ներառյալ՝ ռոյալթին) վերաբերյալ՝ առանձին-առանձին.

4) ընդերքօգտագործողի կողմից համայնքային արտաբյուջեներ կատարած վճարների, հողի վարձակալության վճարների, բարեգործական հատկացումների, նվիրատվությունների կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումների վերաբերյալ.

5) ընդերքօգտագործման հետ կապված գործունեության շրջանակներում ոչ առևտրային իրավաբանական անձանց տրամադրված նվիրատվությունների, նվիրաբերությունների կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումների վերաբերյալ.

6) ընդերքօգտագործման հետ կապված գործունեության շրջանակներում ֆիզիկական անձանց տրամադրված նվիրատվությունների, նվիրաբերությունների կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումների վերաբերյալ՝ նշելով տրամադրված ընդհանուր գումարը և ֆիզիկական անձանց ընդհանուր թիվը.

7) շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին օրենսդրությամբ սահմանված չափով կատարված հատկացումների վերաբերյալ.

8) օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների

բնակչության անվտանգության և առողջության ապահովման համար մշտադիտարկումների իրականացման վճարների վերաբերյալ.

9) օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ֆինանսական առաջարկների վերաբերյալ.

10) համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ընդերքօգտագործման իրավունքները հավաստող փաստաթղթերով սահմանված պարտավորությունների վերաբերյալ:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված տեղեկատվությունն ընդերքօգտագործողը ներկայացնում է իր կողմից շահագործվող յուրաքանչյուր հանքավայրի մասին առանձին:

5. Ընդերքօգտագործողը հրապարակային հաշվետվությունը կարող է հրապարակել նաև իր պաշտոնական կայքում (առկայության դեպքում):

6. Սնանկ ճանաչված ընդերքօգտագործողն ազատվում է սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված տեղեկատվությունը ներկայացնելու պարտավորությունից:

7. Մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործողների գործունեության վերաբերյալ լիազոր մարմին և ~~կառավարության աշխատակազմ~~ **վարչապետի աշխատակազմ** հրապարակային հաշվետվություններ են ներկայացնում համապատասխան տեղեկությանը տիրապետող պետական մարմինները, որոնց ցանկը սահմանում է կառավարությունը:

8. Համայնքի ղեկավարը կառավարության սահմանած կարգով տարածքային կառավարման բնագավառի համապատասխան լիազոր մարմնին է տրամադրում, ինչպես նաև հրապարակում է համայնքի պաշտոնական կայքում (առկայության դեպքում) կամ համայնքի ավագանու նստավայրում փակցնելու միջոցով, ըստ յուրաքանչյուր մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման իրավունք ստացած ընդերքօգտագործողի կողմից՝

1) համայնքի բյուջե վճարված բոլոր տեղական հարկերի և վճարների վերաբերյալ տեղեկատվությունը՝ յուրաքանչյուր հարկի և վճարի մասով առանձին.

2) համայնքի արտաբյուջեներ կատարած վճարների, ընդերքօգտագործման իրավունքի պայմանագրով նախատեսված համայնքի զարգացման նպատակով հատկացումների, հողի վարձակալության վճարների, բարեգործական հատկացումների, նվիրատվությունների կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումների վերաբերյալ տեղեկատվությունը:

9. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկատվությունը հրապարակելու և 3-րդ ու 6-րդ մասերով նախատեսված հրապարակային հաշվետվությունը ներկայացնելու կարգերը, ժամկետները և ձևերը սահմանում է կառավարությունը:

10. Սույն հոդվածի 7-րդ մասում նշված տեղեկատվության տրամադրման և հրապարակման կարգը սահմանում է կառավարությունը:

11. Սույն հոդվածի իմաստով հրապարակման է ենթակա հետևյալ տեղեկատվությունը, բացառությամբ «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ հրապարակման ոչ ենթակա տեղեկատվության՝

1) ընդերքօգտագործողի կողմից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ֆինանսական առաջարկները.

2) պետական տուրքի և ընդերքօգտագործման վճարների վերաբերյալ տեղեկատվությունը.

3) համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում օրենսդրությամբ և ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2018 թվականի հունիսի 13-ին

ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 11. Դատական ծառայություն» հասկացությունը

1. Դատական ծառայությունը ~~դատարանի~~ **դատավորի** լիազորությունների իրականացումն ապահովելու նպատակով իրականացվող մասնագիտական գործունեություն է:

2. Դատական ծառայությունը պետական ծառայության տեսակ է:

3.Դատական ծառայության պաշտոններն են՝ դատավորի օգնականի, դատավորի գործավարի և դատական նիստերի քարտուղարի պաշտոնները, ընդ որում՝ դատավորին կցված դատական ծառայության պաշտոններն են՝ դատավորի օգնականի և դատավորի գործավարի պաշտոնները:

Հոդված 12. Դատական ծառայության պաշտոնները

1. Դատական ծառայության պաշտոնը Բարձրագույն դատական խորհրդի հաստատած պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն է:

2. Դատական ծառայության պաշտոնները դասակարգվում են ըստ հետևյալ խմբերի.

~~1) դատական ծառայության բարձրագույն պաշտոններ.~~

2) դատական ծառայության գլխավոր պաշտոններ.

3) դատական ծառայության առաջատար պաշտոններ.

4) դատական ծառայության կրտսեր պաշտոններ:

3. Յուրաքանչյուր խմբի դատական ծառայության պաշտոնները դասակարգվում են 1-ին և 2-րդ ենթախմբերի:

4. Դատական ծառայության պաշտոնների խմբերում 1-ին ենթախումբը տվյալ խմբի բարձրագույն ենթախումբն է:

Հոդված 13. Դատական ծառայության դասային աստիճանները

1. Դատական ծառայողներին շնորհվում են հետևյալ դասային աստիճանները.

~~1) դատական ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող դատական ծառայողներին՝ Հայաստանի Հանրապետության դատական ծառայության բարձրագույն խորհրդականի 1-ին և 2-րդ դասի դասային աստիճաններ.~~

2) դատական ծառայության գլխավոր պաշտոններ զբաղեցնող դատական ծառայողներին՝ Հայաստանի Հանրապետության դատական ծառայության 1-ին և 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճաններ.

3) դատական ծառայության առաջատար պաշտոններ զբաղեցնող դատական ծառայողներին՝ Հայաստանի Հանրապետության դատական ծառայության 1-ին և 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճաններ, ինչպես նաև 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան.

4) դատական ծառայության կրտսեր պաշտոններ զբաղեցնող դատական ծառայողներին՝ Հայաստանի Հանրապետության դատական ծառայության 1-ին և 2-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճաններ, ինչպես նաև 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

~~2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դատական ծառայության դասային աստիճանը շնորհում է Հանրապետության նախագահը՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:~~

3. Սույն հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերով նախատեսված դատական ծառայության դասային աստիճանները շնորհում, ինչպես նաև դասային աստիճանից զրկում է Դատական դեպարտամենտի ղեկավարը:

4. Դատական ծառայության պաշտոնի նշանակման հետ միաժամանակ դատական ծառայողին շնորհվում է դատական ծառայության համապատասխան դասային աստիճան, եթե նա չունի դատական կամ պետական ծառայության ավելի բարձր դասային աստիճան, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դատական ծառայության դասային աստիճանների:

5. Դատական ծառայողին իր զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան շնորհվում է սույն օրենքով սահմանված կարգով գործունեության (կատարողականի) գնահատման արդյունքով:

6. Դատական ծառայության պաշտոն առաջին անգամ զբաղեցնող անձին դատական ծառայության համապատասխան դասային աստիճան շնորհվում է սույն օրենքով նախատեսված փորձաշրջանի ավարտից հետո:

7. Դատական ծառայողների դասային աստիճանները պահպանվում են աշխատանքից ազատվելիս, պետական ծառայության այլ պաշտոնի տեղափոխվելիս, այդ թվում՝ դատական ծառայության համակարգում:

8. Դատական ծառայության դասային աստիճանն իջեցվում է դատական կարգով՝ մեկ աստիճանով՝ տվյալ դասային աստիճանը շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի դիմումի հիման վրա՝ որպես կարգապահական տույժի տեսակ:

9. Դատական ծառայողը դատական ծառայության դասային աստիճանից զրկվում է սույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 6-րդ, 7-րդ, 9-րդ, 10-րդ կետերով նախատեսված հիմքերով պաշտոնից ազատվելու դեպքում:

Հոդված 14. Դատական ծառայության պաշտոնի անձնագիրը

1. Դատական ծառայության պաշտոնի անձնագիրը փաստաթուղթ է, որը սահմանում է այդ պաշտոնն զբաղեցնող ծառայողի գործառույթները, նրա պաշտոնական իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու ներկայացուցչությունը, տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների, կարողությունների ու աշխատանքային հմտությունների, ինչպես նաև դատական ծառայության համապատասխան փորձի պահանջները:

2. Դատական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատում է Բարձրագույն դատական խորհուրդը:

3. Դատական ծառայության պաշտոնների անձնագրերը պետք է առնվազն ներառեն սույն հոդվածի 4 5-6-րդ մասերով նախատեսված պահանջները:

~~4. Դատական ծառայության բարձրագույն պաշտոնների անձնագրերը ներառում են հետևյալ պահանջները.~~

~~1) բարձրագույն իրավաբանական կրթություն.~~

~~2) դատական (պետական) ծառայության գլխավոր պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա դատական ծառայության ստաժ կամ դատական ծառայության առնվազն 2-րդ~~

~~դասի գլխավոր ծառայողի դասային աստիճան կամ գիտական աստիճան կամ վեց տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին հինգ տարվա ընթացքում պետական պաշտոններում կամ քաղաքացիական ծառայության պաշտոններում առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.~~

~~3) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:~~

5. Դատական ծառայության գլխավոր պաշտոնների անձնագրերը ներառում են հետևյալ պահանջները.

1) բարձրագույն իրավաբանական կրթություն.

2) դատական (պետական) ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն երեք տարվա դատական ծառայության ստաժ կամ դատական ծառայության առնվազն 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ գիտական աստիճան կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում պետական պաշտոններում կամ քաղաքացիական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ.

3) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

6. Դատական ծառայության առաջատար պաշտոնների անձնագրերը ներառում են հետևյալ պահանջները.

1) բարձրագույն իրավաբանական կամ այլ մասնագիտական (եթե աշխատանքի բնույթն իրավաբանական չէ) կրթություն.

2) դատական (պետական) ծառայության պաշտոններում երկու տարվա ստաժ կամ դատական ծառայության առնվազն 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում պետական պաշտոններում կամ քաղաքացիական ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ:

7. Դատական ծառայության կրտսեր պաշտոնների անձնագրերը ներառում են առնվազն միջնակարգ կրթության պահանջը:

Հոդված 31. Դատական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը

1. Դատական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը 65 տարին է:

2. Դատական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալու դեպքում Դատականդեպարտամենտի ղեկավարի առաջարկությամբ և Բարձրագույն դատական խորհրդի նախագահի որոշմամբ դատական ծառայողը կարող է մինչև ~~հինգ~~ **մեկ** տարի ժամկետով շարունակել պաշտոնավարումը:

Հոդված 4. Անցումային դրույթներ

Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը դատական ծառայողի ծառայության ժամկետը օրենքով սահմանված կարգով երկարացված լինելու դեպքում դատական ծառայողը շարունակում է զբաղեցնել պաշտոնը մինչև ժամկետի ավարտը:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2014 թվականի դեկտեմբերի 17-ին

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **կյանքի դժվարին իրավիճակ՝** հաշմանդամության, հիվանդության, տարիքի հետ կապված ինքնասպասարկման ունակությունների կորստի, առանց ծնողական խնամքի մնալու, աղքատության, գործազրկության, ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, բռնության, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկվելու, անօգնականության, միայնակության, սոցիալական մեկուսացման, վնասակար սովորույթների, դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ազատազրկման վայրերում գտնվելու կամ այդ վայրերից վերադառնալու հանգամանքներից որևէ մեկով կամ դրանց համակցմամբ, մարդու կենսագործունեությանը խանգարող օբյեկտիվ իրավիճակ, որն անձն ինքնուրույն հաղթահարել չի կարող.

2) **սոցիալական աջակցություն՝** ըստ սույն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի.

3) **հիմնական պահանջմունքներ՝** ֆիզիկական անձի կեցության համար անհրաժեշտ նվազագույն պայմանների (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում, միջնակարգ կրթություն կամ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն, բնակարանային կոմունալ ծառայություններ) ամբողջություն.

4) **տարեց՝** 65 տարին լրացած անձ.

5) **բռնություն՝** անձի ֆիզիկական և (կամ) հոգեկան և (կամ) սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված արարք կամ դրա սպառնալիք.

6) **ընտանիք՝** միևնույն բնակության վայրում փաստացի բնակվող անձանց ամուսնական, ազգակցական, խնամիական կապերի վրա հիմնված փոքր սոցիալական խումբ, որի անդամները վարում են ընդհանուր տնտեսություն, ունեն ընդհանուր բյուջե, ընդհանուր շահեր, կապված են փոխօգնության, բարոյական ու

իրավական փոխադարձ պատասխանատվության հիմունքներով, ինչպես նաև միայնակ ապրող անձ.

7) ***(կետն ուժը կորցրել է 13.12.17 ՀՕ-326-Ն)***

8) **նախնական նույնացում՝** ուղղակի և անուղղակի չափորոշիչների կիրառման միջոցով «ենթադրյալ» ընտանեկան բռնության ենթարկված անձի հայտնաբերում.

9) **սոցիալական կարիք՝** կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի (ընտանիքի, այլ սոցիալականխմբի)՝ իր սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-աշխատանքային, սոցիալ-իրավական խնդիրների լուծման համար անհրաժեշտ հմտությունների և կարողությունների բացակայություն կամ ապագայում դրա առաջացման հավանականությունը կանխատեսելու համար հիմքերի առկայություն.

9.1) **ընտանիքի սոցիալական գնահատում՝** ընտանիքի սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-աշխատանքային, սոցիալ-իրավական խնդիրների և գույքային և ոչ գույքային ռեսուրսների հետազոտման բազմակողմանի գործընթաց, որն ուղղված է բացահայտելու, հայտնաբերելու և գնահատելու պատճառների, հետևանքների և հարաբերությունների միջև այն կապերը, որոնք բնութագրում են ընտանիքի կյանքում ստեղծված իրավիճակը.

10) **սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններ (այսուհետ՝ տարածքայինմարմին)՝** սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության ~~լիազորած պետական կառավարման մարմնի և գործադիր իշխանության տարածքային կառավարման մարմնի ստորաբաժանումներ~~ **լիազորած պետական մարմնի և տարածքային կառավարման պետական մարմնի տարածքային ստորաբաժանումներ**, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում, որոնք իրենց սպասարկման տարածքում բնակչությանը տրամադրում են օրենքով նախատեսված սոցիալական ծառայություններ, այդ թվում՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի կամ ընտանիքի օրինական շահերի պաշտպանությանը կամ նրանց՝ նման իրավիճակում հայտնվելու կանխարգելմանն ուղղված սոցիալական ծառայություններ.

11) **սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություններ (այսուհետ նաև՝կազմակերպություն)՝** սույն օրենքով սահմանված սոցիալական ծառայությունների տրամադրման սկզբունքներին համապատասխան կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի կամ ընտանիքի օրինական շահերի պաշտպանությանը կամ նրանց՝ նման իրավիճակում հայտնվելու կանխարգելմանն ուղղված սոցիալականծառայությունը դրա կարիքն ունեցողին մատուցող կազմակերպություն (անկախ կազմակերպական-իրավական ձևից, բացառությամբ տարածքային մարմինների).

12) **սոցիալական ծառայություններ՝** սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ծառայություններ.

13) **ինտեգրված սոցիալական ծառայություններ՝** ըստ սույն օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի.

14) **համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոն՝** Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ տարածքային մարմինների գտնվելու վայր, որտեղ մեկ պատուհանի սկզբունքով տարածքային մարմնի սպասարկման տարածքի բնակչությանը տրամադրվում են սոցիալական ծառայություններ.

15) **աջակցող ցանց՝** պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց փոխգործակցության, համատեղ գործունեության համակարգ՝ ուղղված անձանց, անձանց որոշակի խմբերի և ընտանիքների իրավունքների պաշտպանությանն ու իրականացմանը, օրինական շահերի և ազատությունների ապահովմանը, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան սոցիալական ծառայությունների տրամադրման միջոցով.

16) **սոցիալական դեպք՝** կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի (ընտանիքի) մոտ մեկ կամ միմյանց հետ փոխկապակցված տարբեր սոցիալական կարիքների ամբողջությամբ պայմանավորված օբյեկտիվ իրավիճակ.

17) **սոցիալական դեպքի վարում՝** համագործակցության և հասանելի ռեսուրսների որոնման միջոցով և անձի (ընտանիքի) սոցիալական կարիքների գնահատման հիման վրա իրականացվող գործընթաց, որը ներառում է սոցիալական աջակցություն ստացողների կարիքներին համարժեք սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի ծրագրավորումը, դրանք ստանալու հարցում աջակցությունը՝ նպատակ ունենալով բավարարել սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական կարիքները.

18) **անհատական սոցիալական ծրագիր (այսուհետ՝ անհատական ծրագիր)՝** սոցիալա կան դեպքի վարման արդյունքներով կազմված ծրագիր, որում ներառվում են սոցիալական աջակցություն ստացողի սոցիալականկարիքները, դրանց համարժեք սոցիալական ծառայությունների տեսակներն իրենց տրամադրման ժամկետով, ակնկալվող արդյունքով, ինչպես նաև սոցիալական դեպքի շարունակական հսկողության ժամանակացույցը.

19) **սոցիալական պատրոնաժ՝** հասարակական կյանքում լիարժեք գործունեության ապահովման, այդ թվում՝ աշխատանքի իրավունքի իրականացման համար անհրաժեշտ առանձնահատուկ պահանջների առկայության դեպքում սոցիալական պատրոնի (օգնականի) կողմից տրամադրվող սոցիալական ծառայությունների ամբողջություն.

20) **սոցիալական ծառայությունների տրամադրում՝** սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված սոցիալական ծառայությունների կազմակերպում և (կամ) մատուցում, ինչպես նաև այդ ծառայությունների կազմակերպմանը և (կամ) մատուցմանն ուղղված ցանկացած գործունեություն.

21) **սոցիալական աշխատանք՝** սույն օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մասնագիտական գործունեություն:

Հոդված 22. Սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած ~~պետական կառավարման մարմնի~~ պետական մարմնի լիազորությունները

1. Սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած ~~պետական կառավարման մարմինը~~ **պետական մարմինը** (այսուհետ՝ լիազորած պետական մարմին)՝

1) իր իրավասությունների շրջանակներում մշակում և իրականացնում է սոցիալական աջակցության բնագավառում պետական քաղաքականությունը.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնում է առաջարկություններ՝ սոցիալական աջակցության զարգացման ուղղությունների և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների մասին.

3) հաստատում է լիազորած ~~պետական մարմնի աշխատակազմում~~ **պետական մարմնում** չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմինների օրինակելի կանոնադրությունը և իրականացնում է այդ տարածքային մարմինների գործունեության մեթոդական ղեկավարումը.

4) ապահովում է համալիր կենտրոններում մեկ պատուհանի սկզբունքով դիմումների ընդունումը, հաշվառումը և միասնական փաստաթղթաշրջանառությունը.

5) հաստատում է սոցիալական աշխատանքի մասնագետների պաշտոնների օրինակելի բնութագրերը, տվյալ պաշտոնը զբաղեցնողի պաշտոնեական պարտականությունները, գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ներկայացվող ընդհանրական պահանջները, որակավորման պահանջները.

6) կազմակերպում է «Սոցիալական աշխատանք» մասնագիտացման, ինչպես նաև սոցիալականաշխատանքի մասնագետների որակավորման բարձրացման դասընթացներ.

7) հաստատում է «Սոցիալական աշխատանք» մասնագիտացման, ինչպես նաև սոցիալական աշխատանքի մասնագետների որակավորման բարձրացման դասընթացների արդյունքում տրվող վկայականների օրինակելի ձևերը.

8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցում է «Սոցիալականաշխատանք» մասնագիտության պետական կրթական չափորոշչի ձևավորմանը.

9) կազմակերպում է սոցիալական պաշտպանության ոլորտի մասնագետների որակավորման բարձրացման դասընթացներ, ինչպես նաև սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված դեպքում հավաստագրում է սոցիալականծառայություններ տրամադրող կազմակերպությունների և ֆիզիկական անձանց գործունեությունը.

10) սահմանում է տնային այցելություն կատարելու, սոցիալական դեպքի վարման, տեղական սոցիալականծրագրերի մշակման մեթոդական ցուցումները, սույն օրենքի 35-րդ հոդվածով սահմանված սոցիալականհամագործակցության համաձայնագրի օրինակելի ձևը և դրա ընդունման ընթացակարգը.

11) լիազորած ~~պետական մարմնի աշխատակազմում~~ **պետական մարմնում** չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմիններում, սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություններում իրականացնում է պետական վերահսկողություն սոցիալական աջակցության բնագավառին վերաբերող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ.

12) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով ստուգում է այլ մարմիններից և կազմակերպություններից (անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից) տրված՝ սոցիալական աջակցության տրամադրման համար պահանջվող փաստաթղթ(եր)ի հավաստիությունը.

13) լիազորած ~~պետական մարմնի աշխատակազմում~~ **պետական մարմնում** չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմիններից պահանջում է տեղեկատվություն՝ տրամադրվող սոցիալական ծառայությունը սույն օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանելու վերաբերյալ, իսկ դրա անհամապատասխանության դեպքում՝

ա. պահանջ է ներկայացնում լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմիններ՝ սահմանված ժամկետում վերացնելու հայտնաբերված անհամապատասխանությունը,

բ. համապատասխան սոցիալական աշխատանքի մասնագետին ենթարկում է օրենքով սահմանված պատասխանատվության կամ դիմում է լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող համապատասխան տարածքային մարմնի վերադասին՝ համապատասխան սոցիալական աշխատանքի մասնագետին օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ.

14) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով հանդես է գալիս սոցիալական աջակցություն ստացողի օրինական շահերի և իրավունքների պաշտպանությամբ նրա դիմելու դեպքում կամ իր նախաձեռնությամբ.

15) սահմանում է սոցիալական ծառայությունների որակի վերահսկման հետադարձ կապի մեխանիզմները.

16) ստեղծում և վարում է սոցիալական աջակցության բնագավառի տեղեկատվական շտեմարաններ, սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների ռեգիստր.

17) ուսումնասիրում է տարածքային մարմինների և սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների կողմից տրամադրվող սոցիալական ծառայությունների հետ կապված բողոքները, խախտումներ հայտնաբերելու դեպքում ձեռնարկում է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված միջոցառումներ դրանք վերացնելու ուղղությամբ.

18) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կազմակերպում է սոցիալականծառայություններ տրամադրելու գործընթացում կիրառվող համակարգչային ծրագրերի ուսուցման դասընթացներ և տրամադրում է այդ ծրագրերով աշխատելու կարողությունները հաստատող հավաստագրեր.

19) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 25. Սոցիալական աջակցության տրամադրման մասին որոշումը

1. Սոցիալական աջակցությունը տրամադրվում է սույն օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասում նշված ֆիզիկական և իրավաբանական անձանց, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գրավոր և բանավոր դիմումների, ներկայացրած տեղեկությունների, ահազանգերի, զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ տարածքային մարմինների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությամբ գործող կազմակերպությունների նախաձեռնությամբ:

2. Սոցիալական աջակցություն հայցող անձը այն ստանալու համար անձամբ կամ ներկայացուցչի միջոցով դիմում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ իր բնակության վայրի տարածքը սպասարկող տարածքային մարմնին, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

3. Սոցիալական աջակցություն ստանալու համար այն հայցող անձը կամ նրա ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում դիմումին կից ներկայացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ սոցիալականաջակցություն ստանալու (տվյալ սոցիալական ծառայության կամ

ծառայությունների տրամադրման) համար անհրաժեշտ փաստաթղթերը, եթե դրանք (կամ դրանցում նշված տվյալները) ներառված չեն համապատասխան մարմինների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարաններում:

4. Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում սոցիալական աջակցության շրջանակներում մեկ կամ մի քանի սոցիալական ծառայությունները կարող են տրամադրվել բացառապես այն հայցող անձի կողմից գրավոր դիմումը և սոցիալական ծառայության (ծառայությունների) տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերն անձամբ ներկայացվելու դեպքում:

5. Սոցիալական աջակցություն տրամադրելու կամ սոցիալական աջակցության տրամադրումը մերժելու մասին որոշումն ընդունում է տվյալ սոցիալական ծառայությունը տրամադրելու իրավազորություն ունեցող տարածքային մարմինը կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությամբ գործող համապատասխան կազմակերպությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Լիազորած ~~պետական մարմնի աշխատակազմում~~ **պետական մարմնում** ընդգրկված և կառավարման ոլորտում գործող տարածքային մարմինների կողմից սոցիալական աջակցություն տրամադրվելու կամ սոցիալական աջակցության տրամադրումը մերժելու մասին որոշման ընդունման կարգը, պայմանները և ժամկետը սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով և դրանց համապատասխան ընդունված այլ նորմատիվ իրավական ակտերով:

7. Լիազորած ~~պետական մարմնի աշխատակազմում~~ **պետական մարմնում** չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմինները սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքում սոցիալական աջակցություն տրամադրելու կամ այն մերժելու մասին որոշումը կայացնում են դիմումը ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան 30 օրացուցային օրվա ընթացքում, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով:

8. Լիազորած ~~պետական մարմնի աշխատակազմում~~ **պետական մարմնում** չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմինները սոցիալական աջակցություն տրամադրելու մասին որոշում ընդունելու համար լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտության կամ դիմումին կից ոչ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման դեպքում նույն օրը դիմողին գրավոր տեղեկացնում են լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտության կամ պակասող փաստաթղթերի ցանկի և դրանք սահմանված ժամկետում ներկայացնելու անհրաժեշտության մասին, եթե Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված չեն տեղեկացման այլ կարգ և ժամկետներ: Սույն մասով սահմանված դեպքում, եթե դիմողը տեղեկացվելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնում է անհրաժեշտ փաստաթղթերը, ապա դիմելու օր է համարվում դիմումի սկզբնական ներկայացման օրը, իսկ նշված ժամկետից ուշ փաստաթղթերը ներկայացնելու դեպքում դիմելու օր է համարվում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու օրը:

9. Լիազորած ~~պետական մարմնի աշխատակազմում~~ **պետական մարմնում** չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմինները սոցիալական աջակցություն տրամադրելու կամ այն մերժելու մասին գրավոր տեղեկացնում են դիմողին ոչ ուշ, քան այդ որոշման ընդունումից հետո՝ եռօրյա

ժամկետում, եթե տեղեկացման այլ կարգ և ժամկետներ նախատեսված չեն Հայաստանի Հանրապետության օրենքներով:

10. Այլ ֆիզիկական և իրավաբանական անձանց, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գրավոր և բանավոր դիմումների, ահազանգերի, զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ սոցիալական աջակցություն տրամադրելու մասին որոշումների ընդունման կարգը, պայմանները, ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով:

11. Լիազորած ~~պետական մարմնի աշխատակազմում~~ **պետական մարմնում** չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմինները արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև անհետաձգելի լուծում պահանջող՝ կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող դեպքերում սոցիալական աջակցությունը տրամադրում են անհապաղ՝ այդ մասին տեղեկատվությունը ստանալուց հետո:

12. Տարածքային մարմնի ընդունած որոշումը, գործողությունը կամ անգործությունը կարող են բողոքարկվել վարչական և (կամ) դատական կարգով:

Հոդված 26. Սոցիալական աջակցության տրամադրման մերժումը

1. Սոցիալական աջակցության տրամադրումը մերժվում է՝

1) սոցիալական աջակցության (տվյալ սոցիալական ծառայության) տրամադրման համար օրենքով սահմանված բավարար հիմք(եր)ի բացակայության դեպքում.

2) սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում դիմողի կողմից անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը (տվյալները) չներկայացնելու դեպքում.

3) սոցիալական աջակցություն ստանալու համար դիմողի կողմից ոչ հավաստի տեղեկություններ ներկայացվելու դեպքում.

4) Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ դեպքերում:

2. Լիազորած ~~պետական մարմնի աշխատակազմում~~ **պետական մարմնում** չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմինները սոցիալական աջակցություն տրամադրելը մերժելու մասին որոշման մեջ նշում են մերժման հիմք(եր)ը, բողոքարկման ժամկետը և մարմինը, որին կարող է այդ որոշումը բողոքարկվել, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ տեղեկություններ:

Հոդված 30. Սոցիալական աջակցություն ստանալուց հրաժարվելու և սոցիալական աջակցություն ստանալու անձի իրավունքի սահմանափակումները

1. Անձի (նրա օրինական ներկայացուցչի)՝ սոցիալական աջակցություն ստանալուց հրաժարվելու դեպքում անձը տեղավորվում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում, եթե չի ստանում անհրաժեշտ խնամք և

1) ինքնասպասարկման և (կամ) ակտիվ տեղաշարժվելու ունակության կորստով պայմանավորված՝ անկարող է ինքնուրույն բավարարել իր հիմնական պահանջմունքները) կամ

2) օրենքով սահմանված կարգով ճանաչվել է անգործունակ:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերով, առանց անձի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության անձին բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն տեղավորելու որոշումը կայացնում է խնամակալության և հոգաբարձության մարմինը՝ լիազորած ~~պետական մարմնի աշխատակազմում~~ **պետական մարմնում** չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի եզրակացության հիման վրա:

3. Սույն օրենքի 13-րդ հոդվածով սահմանված խնամքի տրամադրումն անձին կարող է մերժվել, եթե նա քրոնիկ ալկոհոլամոլ և (կամ) թմրամոլ է, վարակակիր է, տառապում է այնպիսի հիվանդություններով, որոնց բուժումը հնարավոր է միայն հատուկ մասնագիտացված բժշկական հաստատություններում: Հիվանդությունների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքերով սոցիալական աջակցության տրամադրումը մերժելու մասին որոշումը լիազորած ~~պետական մարմնի աշխատակազմում~~ **պետական մարմնում** չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմինն ընդունում է համապատասխան մասնագիտացված բժշկական հաստատության եզրակացության հիման վրա:

Հոդված 31. Սոցիալական աջակցության տեղեկատվական շտեմարանները

1. Սոցիալական աջակցության տեղեկատվական շտեմարանները ստեղծվում են ընտանիքի սոցիալականգնահատման, տվյալ սոցիալական ծառայության տրամադրման համար անհրաժեշտ տվյալներն առցանց ինքնաշխատ ստանալու եղանակով կամ դրա անհնարինության դեպքում՝ սոցիալական աջակցություն ստանալու համար դիմող անձի ներկայացրած փաստաթղթերում ներառված, ինչպես նաև լիազորած ~~պետական մարմնի աշխատակազմում~~ **պետական մարմնում** չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի սոցիալականաշխատանքի մասնագետի կատարած տնային այցելության ընթացքում ձեռք բերված տվյալներով:

2. Սոցիալական աջակցության տեղեկատվական շտեմարաններն ստեղծվում են՝

1) սոցիալական աջակցության չափերի, հեռանկարային զարգացման ուղղությունների, դրանց ֆինանսավորման հնարավոր միջոցների կանխատեսման նպատակով.

2) սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի համակարգման նպատակով:

3. Սոցիալական աջակցության տեղեկատվական շտեմարանները տիրապետում է լիազորած պետական մարմինը, սպասարկում և շահագործում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած կազմակերպությունը:

4. Սոցիալական աջակցության տեղեկատվական շտեմարանները պարունակում են ընտանիքի սոցիալականվիճակը նկարագրող տվյալները, ընտանիքի անդամների անձնական տվյալները, սոցիալական ծառայությունը ստանալու հիմքը կամ մերժելու պատճառը, տրամադրվող սոցիալական ծառայությունը, սոցիալականծառայության ստացման ժամկետները, դրա պարբերականությունը, սոցիալական ծառայության ծավալը (չափը), տրամադրման և դադարեցման ժամկետները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ:

5. Տարածքային մարմինները և կազմակերպությունները պարտավոր են սոցիալական ծառայություններ տրամադրելու մասին տվյալները ներկայացնել

լիազորած պետական մարմին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում և կարգով, իսկ լիազորած պետական մարմնի ենթակայությամբ գործող կամ լիազորած պետական մարմնի հետ կնքած պայմանագրի հիման վրա սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները՝ համապատասխանաբար լիազորած պետական մարմնի սահմանած կամ լիազորած պետական մարմնի հետ կնքած պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:

Հոդված 35. Սոցիալական համագործակցության համաձայնագիրը

1. Սոցիալական համագործակցության համաձայնագիրն (այսուհետ՝ համաձայնագիր) ընդունվում է ազգային և տարածքային մակարդակներում:

2. Համաձայնագրի ընդունումը ազգային մակարդակում կազմակերպում է լիազորած պետական մարմինը, իսկ տարածքային մակարդակում՝ լիազորած ~~պետական մարմնի աշխատակազմում~~ **պետական մարմնում** չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմինը:

3. Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացում համագործակցությունն իրականացվում է աջակցող ցանցի միջոցով՝ տարածքային մակարդակում ընդունված համաձայնագրի հիման վրա: Աջակցող ցանցում ներառվում են տարածքային մարմինները, իսկ սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները, տարածքային կառավարման պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև ֆիզիկական անձինք (այսուհետ՝ աջակցող ցանցի մասնակից) միանում են կամավոր հիմունքներով:

4. Համաձայնագիրը ներառում է համագործակցության նպատակներն ու սկզբունքները, կողմերի պարտավորությունները, համակարգող խորհրդի ձևավորման, ինչպես նաև պարտավորությունների կատարման հսկողության և դրանց չկատարման դեպքում՝ համապատասխան միջոցառումների իրականացման մեխանիզմները:

5. Համագործակցության հիմնական նպատակներն են՝

1) սոցիալական ծառայությունների համալիր և ամբողջական տրամադրման ապահովումը.

2) սոցիալական աջակցության անհրաժեշտություն առաջացնող գործոնների, դրանց փոխկապակցվածության և պատճառահետևանքային կապերի բացահայտումը, բացասական ազդեցության չեզոքացումը.

3) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի կամ ընտանիքի օրինական շահերի պաշտպանությունը և նման իրավիճակում նրանց հայտնվելու կանխարգելումը.

4) սոցիալական ծառայությունների մատչելիության և կողմնորոշման բարձրացումը դեպի սոցիալականաջակցություն ստացողները, դրանց որակի բարելավումը, սոցիալական համախմբվածության ամրապնդումը՝ խոցելի խմբերի սոցիալական մեկուսացվածությունը նվազեցնելով.

5) սոցիալական դեպքի վարման շրջանակներում փոխգործակցության ապահովումը, սոցիալական դեպքի վարման գործընթացի արդյունավետության մեծացումը.

6) ռեսուրսների արդյունավետ ներգրավմամբ և օգտագործմամբ սոցիալական ծառայությունների տրամադրումը.

7) արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև անհետաձգելի լուծում պահանջող՝ կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող, կյանքի դժվարին իրավիճակում

հայտնված սոցիալական աջակցություն ստացողի խնդիրներին արագ արձագանքման, ինչպես նաև սոցիալական ծառայությունների անհապաղ տրամադրման հնարավորությունների ստեղծումը.

8) աղքատ, սոցիալապես անապահով, ինչպես նաև մեկուսացված խմբերի տնտեսական և սոցիալականխոցելիության նվազեցումը.

9) սոցիալական ոլորտում սոցիալական աշխատանքի դերի ու նշանակության բարձրացումը.

10) վստահության մթնոլորտի ձևավորումը:

6. Համագործակցության հիմնական սկզբունքներն են համակառավարումը, հավասար պատասխանատվությունը, թափանցիկության ապահովումը և ժողովրդավարությունը:

7. Աջակցող ցանցի մասնակիցների հիմնական իրավունքներն են՝

1) ստանալ տեղեկատվություն աջակցող ցանցի մյուս մասնակիցներից՝ իրենց կողմից իրականացվող ծրագրերի (տրամադրվող սոցիալական ծառայությունների) և առկա ռեսուրսների մասին.

2) ակնկալել անհապաղ աջակցություն աջակցող ցանցի մասնակիցներից իրենց հնարավորությունների շրջանակում, սույն հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետով նախատեսված դեպքերում.

3) առաջարկություններ ներկայացնել սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի բարելավման նպատակով:

8. Աջակցող ցանցի մասնակիցների հիմնական պարտականություններն են՝

1) իրազեկել աջակցող ցանցի մյուս մասնակիցներին իրականացվող ծրագրերի (տրամադրվող սոցիալականծառայությունների) և առկա ռեսուրսների մասին.

2) արագ արձագանքել սույն հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետով նախատեսված դեպքերում՝ իրենց հնարավորությունների շրջանակներում.

3) մասնակցել համայնքների սոցիալական կարիքների վերհանման, ինչպես նաև դրանց համարժեք՝ տեղական սոցիալական ծրագրերի մշակման աշխատանքներին.

4) համագործակցել սոցիալական դեպքի վարման շրջանակներում.

5) առաջարկություններ ներկայացնել աջակցող ցանցի մասնակիցներին՝ անհատական սոցիալականծառայությունների տրամադրման գործընթացի հայեցողական լիազորությունների շրջանակներում որոշումների կայացման համար:

9. Համաձայնագրում կարող են ներառվել սույն օրենքով սահմանված նպատակներին և սկզբունքներին չհակասող այլ նպատակներ, սկզբունքներ, իրավունքներ և պարտականություններ:

10. Համաձայնագրի օրինակելի ձևը հաստատում է լիազորած մարմինը:

Հոդված 36.1 Ընտանիքի սոցիալական գնահատումը

1. Ընտանիքի սոցիալական գնահատումն իրականացնում է լիազորած ~~պետական մարմնի աշխատակազմում~~ **պետական մարմնում** չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմինը:

2. Ընտանիքի սոցիալական գնահատումն իրականացվում է ընտանիքի սոցիալական գնահատման համակարգի միջոցով, որը ներառում է՝

1) ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառումը.

2) ընտանիքի սոցիալական գնահատման տեղեկատվական ենթահամակարգը.

3) ընտանիքի անապահովության գնահատումը.

4) ընտանիքի անապահովության միավորի որոշումը:

3. Լիազորած ~~պետական մարմնի աշխատակազմում~~ **պետական մարմնում** չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմինն ընտանիքի սոցիալական գնահատման արդյունքներով՝

1) տալիս է սույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված եզրակացությունները.

2) որոշում է կայացնում դիմողին՝

ա. սույն օրենքով սահմանված կարգով սոցիալական աջակցություն տրամադրելու կամ մերժելու մասին,

բ. ինտեգրված սոցիալական ծառայություններ տրամադրելու կամ մերժելու մասին:

Հոդված 36.2. Ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառվելը և ընտանիքի սոցիալական գնահատման տեղեկատվական ենթահամակարգը

1. Լիազորած ~~պետական մարմնի աշխատակազմում~~ **պետական մարմնում** չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմինը սույն օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով սոցիալական աջակցություն հայցողի կամ խնամակալ ճանաչելու կամ խնամատար ծնող կամ որդեգրել ցանկացող անձ հաշվառելու (այսուհետ՝ դիմող) դիմումը կամ հայտը ստանալուց հետո՝

1) ընթացք է տալիս դրանց սույն օրենքի 25-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում.

2) ընտանիքին հաշվառում է ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում ընտանիքի չափահաս անդամներից մեկի, մյուս չափահաս անդամների գրավոր համաձայնությամբ տրված դիմումի հիման վրա.

3) դիմումը (անհրաժեշտ փաստաթղթերով) հաշվառում է դիմումների հաշվառման մատյանում, իսկ հայտարարագրում և փաստաթղթերում ներառված կամ ինքնաշխատ եղանակով ստացված տվյալները մուտքագրում է ընտանիքի սոցիալական գնահատման տեղեկատվական ենթահամակարգ.

4) տնային այցելության ընթացքում ձեռք բերված տվյալները ներառվում են ընտանիքի սոցիալականգնահատման տեղեկատվական ենթահամակարգ՝ տնային այցելության ընթացքում.

5) կատարում է առաջին տնային այցելությունը դիմումն ստանալու օրվան հաջորդող՝

ա. 15 աշխատանքային օրվա ընթացքում,

բ. մեկ աշխատանքային օրվա ընթացքում, եթե տեղեկությունն ստացվել է այն դիմումների, ահազանգերի, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների միջոցով, եթե դրանցում առկա է անձի (ընտանիքի) անձնական տվյալների և (կամ) գտնվելու վայրի մասին տեղեկություն՝ ահազանգում կամ հրապարակման մեջ նշված անձի (ընտանիքի) բնակության (գտնվելու) վայրը.

6) տնային այցելությունը կատարվում է դիմողի և (կամ) նրա ընտանիքի սոցիալական և նյութական պայմաններն ուսումնասիրելու նպատակով.

7) տնային այցելության ընթացքում գնահատվում են՝

ա. դիմողի (ընտանիքի) սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-աշխատանքային, սոցիալ-իրավական

խնդիրների առկայությունը կամ բացակայությունը, սոցիալական կարիքները կամ դրանց բացակայությունը, առկա կարողությունները և հմտությունները, ինչպես նաև այդ կարողությունների և հմտությունների հետագա զարգացման հնարավորությունների առկայությունը կամ բացակայությունը,

բ. դիմողի (ընտանիքի) կենսապայմանները, մասնավորապես բարեկեցությունը կամ աղքատությունը, բնակության պայմանները, կենսագործունեության սահմանափակումները, ընտանիքում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը, ընտանեկան բռնության առկայությունը կամ բացակայությունը կամ դրա սպառնալիքը,

գ. տրամադրված սոցիալական ծառայությունների ազդեցությունը դիմողի (ընտանիքի) կենսապայմանների վրա,

դ. խնամակալ ճանաչելու կամ խնամատար ծնող կամ որդեգրել ցանկացող անձ հաշվառելու նպատակահարմարությունը:

2. Ընտանիքի սոցիալական գնահատման տեղեկատվական ենթահամակարգը՝

1) ներառում է՝

ա. դիմողի (ընտանիքի յուրաքանչյուր անդամի) անձնական տվյալները, սոցիալական վիճակը, զբաղվածությունը, եկամուտը, գույքային և ոչ գույքային ռեսուրսները բնութագրող այլ տվյալներ,

բ. դիմողի (ընտանիքի յուրաքանչյուր անդամի) սոցիալական խնդիրների, կարիքների նկարագրությունը,

գ. դիմողի (ընտանիքի յուրաքանչյուր անդամի) անհատական սոցիալական ծրագիրը,

դ. աջակցող ցանցի անդամների տվյալները,

ե. դիմողի (ընտանիքի յուրաքանչյուր անդամի) մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրված եզրակացությունները.

զ. սոցիալական աջակցություն տրամադրելու կամ տրամադրելը մերժելու մասին որոշումը, սոցիալականաջակցության ծավալը, տրամադրման ժամկետները, դադարեցման հիմքերը.

2) ինքնաշխատ եղանակով որոշում է ընտանիքի անապահովության միավորը:

3. Ընտանիքի սոցիալական գնահատման տեղեկատվական ենթահամակարգում հաշվառվելու, հայտարարագրի, դիմումների հաշվառման մատյանի ձևերը, տեղեկատվական ենթահամակարգի ստեղծման, ձևավորման, դրանում ներառվող անձնական տվյալների՝ սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած ~~պետական կառավարման մարմնի~~ **պետական մարմնի** և տարածքային կենտրոնների միջև փոխանակման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Ընտանիքի սոցիալական գնահատման տեղեկատվական ենթահամակարգ ներառված տվյալները պաշտպանվում են օրենքով:

Հոդված 37. Տեղական սոցիալական ծրագրերը

1. Տեղական սոցիալական ծրագրերը կազմվում են տարածքային առանձնահատկությունների, տարածքում առկա խնդիրների հաշվառմամբ՝ կարճաժամկետ և միջնաժամկետ կտրվածքով՝ համայնք(ներ)ի սոցիալականկարիքների գնահատման հիման վրա:

2. Տեղական սոցիալական ծրագրերը մշակվում են համայնքի ղեկավարի կողմից, լիազորած ~~պետական մարմնի աշխատակազմում~~ **պետական մարմնում** չընդգրկված և

կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի սոցիալական դեպք վարողի մասնագիտական աջակցությամբ՝ գործընթացին մասնակից դարձնելով համայնքի տարածքում գործող աջակցող ցանցի մասնակիցներին և համայնքի բնակչության ներկայացուցիչներին:

3. Տեղական սոցիալական ծրագրերը կարող են կազմվել մեկ համայնքի կամ մեկից ավելի համայնքների կողմից համատեղ՝ ընդհանուր խնդիրների լուծման և ընդհանրական սոցիալական կարիքների բավարարման նպատակով:

4. Տեղական սոցիալական ծրագրերն իրականացվում են տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմի կամ պայմանագրային հիմունքներով՝ համայնքում գործող աջակցող ցանցի մասնակցի կողմից:

5. Տեղական սոցիալական ծրագրերը կարող են ֆինանսավորվել՝

1) համայնքի բյուջեի միջոցներից.

2) իրավաբանական և ֆիզիկական անձանց հատկացրած միջոցներից.

3) սոցիալական աջակցության վճարովի (համավճարով) ծառայություններից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված միջոցների հաշվին:

6. Տեղական սոցիալական ծրագրերի շրջանակներում սոցիալական աջակցությունը տրամադրվում է սույն օրենքով սահմանված սկզբունքների համաձայն, համայնքի ավագանու հաստատած կարգով՝ սոցիալականաջակցություն ստացողի անհատական ծրագրին համապատասխան:

Հոդված 40. Լիազորած ~~պետական մարմնի աշխատակազմում~~ պետական մարմնում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի սոցիալական աշխատանքի մասնագետի հիմնական իրավունքներն ու պարտականությունները

1. Լիազորած ~~պետական մարմնի աշխատակազմում~~ **պետական մարմնում** չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի սոցիալական աշխատանքի մասնագետները քաղաքացիական կամ համայնքային ծառայողներ են:

2. Լիազորած ~~պետական մարմնի աշխատակազմում~~ **պետական մարմնում** չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմինն ունի սոցիալական աշխատող, որը սոցիալական դեպք վարողն է, և սոցիալականսատարող:

3. Սոցիալական դեպք վարողը և սոցիալական սատարողն իրավունք ունեն՝

1) կատարելու տնային այցելություններ, անհրաժեշտության դեպքում ուսումնասիրելու սոցիալականաջակցություն ստանալու նպատակով կամ խնամակալ ճանաչելու կամ խնամատար ծնող կամ որդեգրել ցանկացող անձ հաշվառելու համար դիմած անձանց (ընտանիքների) սոցիալական և նյութական պայմանները.

2) ներկայացնելու առաջարկություններ սոցիալական աջակցության ծրագրերի ձևավորման և դրանց կատարելագործման վերաբերյալ:

4. Սոցիալական դեպք վարողը՝

1) տիրապետում է խնամակալի կամ խնամատար ծնողի կամ որդեգրել ցանկացող անձի, սոցիալականաջակցություն հայցողի, ինչպես նաև ստացողի իրավունքների ու

օրինական շահերի պաշտպանությանն առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նրա սոցիալական կարիքների գնահատման, այդ կարիքների բավարարմանն ուղղված անհատական ծրագրերի կազմման մեթոդներին ու տեխնիկային, առկա ռեսուրսների և հնարավորությունների մասին տեղեկատվությանը.

2) համագործակցում է աջակցող ցանցի մասնակիցների հետ:

5. Սոցիալական դեպք վարողը պարտավոր է՝

1) պաշտպանել սոցիալական աջակցություն ստացողի իրավունքներն ու օրինական շահերը.

2) ապահովել սոցիալական աջակցություն ստացողի ներգրավվածությունը և ակտիվ մասնակցությունն իր խնդիրների լուծման գործընթացին, որոշումների կայացմանը՝ զարգացնելով սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական հմտությունները և ինքնիրացումը (ինքնորոշումը).

3) գնահատել սոցիալական աջակցություն հայցողի, խնամակալ ճանաչելու կամ խնամատար ծնող կամ որդեգրել ցանկացող անձ հաշվառելու համար դիմողի (ընտանիքի), սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական խնդիրները, գույքային և ոչ գույքային ռեսուրսները, սոցիալական կարիքները.

4) կազմել սոցիալական աջակցություն ստացողի անհատական ծրագիրը՝ ներգրավելով աջակցող ցանցի մասնակիցների մասնագետներին.

5) օգտագործել տվյալ տարածաշրջանում առկա աջակցող ցանցը՝ սոցիալական անհատական ծրագիր կազմելու և իրականացնելու նպատակով.

6) համակարգել սոցիալական անհատական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը, կազմակերպել խմբային (բազմամասնագիտական) քննարկումներ և ուղղորդել սոցիալական աջակցություն ստացողին տարբեր մասնագիտացված կազմակերպություններ՝ իրենց իրավունքների մասին իրազեկելու, ինչպես նաև դրանք իրականացնելու համար.

7) ստանձնել միջնորդի դեր տարբեր և երբեմն միմյանց հակասող շահեր ունեցող կազմակերպությունների միջև՝ ապահովելով կազմակերպությունների միջև համագործակցությունը և տեղեկատվության փոխանակումը, ինչպես նաև սոցիալական աջակցություն ստացողի օրինական շահերի պաշտպանության առաջնային դերը.

8) կազմակերպությունների և համայնքի սոցիալական աշխատանքի մասնագետի հետ մշակել կանխարգելող ծրագրեր՝ ուղղված համայնքներում բացահայտված ռիսկային գործոնների նվազեցմանը, սոցիալականիրավունքների կոլեկտիվ պաշտպանության մեխանիզմների ձևավորման խթանմանը և պաշտպանությանը.

9) ապահովել անձանց համար սոցիալական աջակցության տրամադրման հավասար հնարավորություններ.

10) պահանջել սոցիալական աջակցություն հայցող կամ սոցիալական աջակցություն ստացող անձից միայն սոցիալական աջակցության տրամադրման համար անհրաժեշտ տեղեկությունները, աջակցել անհրաժեշտ փաստաթղթերի (տվյալների) ճիշտ ներկայացմանը.

11) աջակցել իր սպասարկման տարածքում բնակվող անձանց (ընտանիքների) սոցիալական աջակցության իրավունքի իրականացմանը և

12) տնային այցելությունների ժամանակ ներկայացնել սույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված վկայականը:

6. Սոցիալական սատարողը պարտավոր է՝

1) սոցիալական աջակցություն հայցող անձին օգնել հայտնաբերելու և օգտագործելու դժվարություններ հաղթահարելու իր կարողությունը.

2) միջոցներ ձեռնարկել հայտնաբերելու սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց, ընտանիքներին և աջակցել նրանց դիմելու տարածքային մարմնին.

3) տնային այցելությունների ժամանակ ներկայացնել սույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված վկայականը:

7. Սոցիալական աշխատանքի մասնագետն ունի սույն օրենքով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ իրավունքներ և կրում է պարտականություններ:

8. ~~Պետական կառավարման~~ **Պետական մարմինները**, տեղական ինքնակառավարման մարմինները և տարածքային մարմնի սպասարկման տարածքում գործող կազմակերպությունները պարտավոր են աջակցել սոցիալական աշխատանքի մասնագետին իր ծառայողական պարտականությունները կատարելիս:

9. Սոցիալական աշխատանքի մասնագետն ունի վկայական, որը տալիս է լիազորած ~~պետական մարմնի աշխատակազմում~~ **պետական մարմնում** չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի վերադասը:

10. Սոցիալական աշխատանքի մասնագետին սոցիալական ծառայությունների տրամադրման ընթացքում հայտնի դարձած անձնական տեղեկությունները համարվում են մասնագիտական գաղտնիք, և այն հրապարակող կամ տարածող սոցիալական աշխատանքի մասնագետը պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերի:

Հոդված 41. Խնամք տրամադրող կազմակերպությունների սոցիալական աշխատանքի մասնագետների հիմնական իրավունքներն ու պարտականությունները

1. Խնամք տրամադրող կազմակերպությունների սոցիալական աշխատանքի մասնագետներն ունեն հետևյալ հիմնական իրավունքները.

1) կատարել տնային այցելություններ՝ սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված պարտականությունները կատարելու նպատակով.

2) համագործակցել աջակցող ցանցի մասնակից կազմակերպությունների հետ.

3) մասնակցել տեղական սոցիալական ծրագրերի մշակման աշխատանքներին:

2. Խնամք տրամադրող կազմակերպությունների սոցիալական աշխատանքի մասնագետներն ունեն հետևյալ հիմնական պարտականությունները.

1) գնահատել սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական կարիքները և իրականացնել նրա անհատական ծրագրով՝ իր կազմակերպությանը վերապահված իրավասությունների շրջանակներում նախատեսված միջոցառումները, անհատական ծրագրով նախատեսված ժամկետներում մասնակցել խմբային (բազմամասնագիտական) քննարկումներին.

2) մատուցել սույն օրենքի 13-րդ հոդվածով սահմանված համապատասխան սոցիալական ծառայությունները՝ սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական կարիքին համապատասխան.

3) պահպանել իր կողմից սպասարկվող անձանց (ընտանիքների) սոցիալական աջակցություն տրամադրելու ընթացքում իրեն հայտնի

դարձած տեղեկությունների գաղտնիությունը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերի.

4) տեղեկացնել լիազորած ~~պետական մարմնի աշխատակազմում~~ **պետական մարմնում** չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի սոցիալական աշխատողին (սոցիալական դեպք վարողին) սոցիալականաջակցություն ստացողի համար իրավիճակի ակնկալվող բնականոն փոփոխություններից տարբերվող ընթացք առաջանալու մասին:

3. Խնամք տրամադրող կազմակերպությունների սոցիալական աշխատանքի մասնագետն ունի սույն օրենքով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ իրավունքներ և կրում է պարտականություններ:

Հոդված 42. Համայնքի սոցիալական աշխատանքի մասնագետի հիմնական իրավունքներն ու պարտականությունները

1. Համայնքի սոցիալական աշխատանքի մասնագետն իրավունք ունի կատարելու տնային այցելություններ, անհրաժեշտության դեպքում ուսումնասիրելու սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած անձանց (ընտանիքների) սոցիալական և նյութական պայմանները:

2. Համայնքի սոցիալական աշխատանքի մասնագետը պարտավոր է՝

1) սոցիալական աջակցություն ստանալու համար դիմած անձին օգնել հայտնաբերելու և օգտագործելու դժվարություններ հաղթահարելու իր կարողությունը.

2) միջոցներ ձեռնարկել հայտնաբերելու սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց, ընտանիքներին և այլ սոցիալական խմբերին, աջակցել նրանց դիմելու տարածքային մարմնին.

3) պահպանել իր կողմից սպասարկվող անձանց (ընտանիքների) սոցիալական աջակցություն տրամադրելու ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերի.

4) որպես աջակցող ցանցի ներկայացուցիչ՝ մասնակցել սույն օրենքի 40-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ և 8-րդ կետերով նախատեսված աշխատանքներին.

5) տնային այցելությունների ժամանակ ներկայացնել սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված վկայականը:

3. Համայնքի սոցիալական աշխատանքի մասնագետն ունի սույն օրենքով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ իրավունքներ և պարտականություններ:

4. ~~Պետական կառավարման~~ **Պետական մարմինները**, տեղական ինքնակառավարման մարմինները և տվյալ տարածքում գործող կազմակերպությունները պարտավոր են աջակցել համայնքի սոցիալական աշխատանքի մասնագետին իր ծառայողական պարտականությունները կատարելիս:

5. Համայնքի սոցիալական աշխատանքի մասնագետն ունի վկայական, որը տրամադրում է համայնքի ղեկավարը:

Հոդված 46. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով նախատեսված դեպքերի:

2. Մինչև սոցիալական աջակցության իրավունքի նորմեր պարունակող իրավական ակտերը սույն օրենքին համապատասխանեցնելը դրանք կիրառվում են այնքանով, որքանով չեն հակասում սույն օրենքին:

3. Մինչև սույն օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված համալիր կենտրոնների ստեղծումը տարածքային մարմինները սոցիալական ծառայությունները տրամադրում են իրենց գտնվելու վայրերում: Համալիր սոցիալական ծառայությունների յուրաքանչյուր տարածքային կենտրոնի ստեղծումից հետո տվյալ սպասարկման տարածքի բնակչությանը սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները տեղակայվում են համալիր կենտրոնում:

4. Սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված կենսաթոշակների, նպաստների և այլ դրամական վճարների վճարումը 2017 թվականի հունվարի 1-ից իրականացվելու է մեկ միասնական պետական մարմնի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվան նախորդող օրվա դրությամբ «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-207-Ն օրենքի 19-րդ հոդվածով սահմանված՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններում աշխատող քաղաքացիական կամ համայնքային ծառայողների, ինչպես նաև խնամք տրամադրող կազմակերպությունների սոցիալական աշխատանքի մասնագետների վրա սույն օրենքի 39-րդ հոդվածը տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից:

6. Լիազորած ~~պետական մարմնի աշխատակազմում~~ **պետական մարմնում** չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմիններում, ինչպես նաև սույն օրենքի 13-րդ հոդվածով նախատեսված կազմակերպություններում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2017 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում, աշխատանքի ընդունված սոցիալական աշխատանքի մասնագետներն օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով սահմանված «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ դասընթացները պետք է ավարտեն աշխատանքի ընդունվելուց հետո՝ առավելագույնը 12 ամիսների ընթացքում:

7. Տարածքային մարմինների համայնքային ծառայող հանդիսացող սոցիալական աշխատանքի մասնագետների վարձատրությունը մինչև 2017 թվականի հունվարի 1-ն իրականացվում է «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան: 2017 թվականի հունվարի 1-ից տարածքային մարմինների համայնքային ծառայող հանդիսացող սոցիալական աշխատանքի մասնագետների հիմնական աշխատավարձը սահմանվում է տարածքային մարմինների քաղաքացիական ծառայող հանդիսացող սոցիալական աշխատանքի մասնագետների հիմնական աշխատավարձին հավասար չափով, իսկ լրացուցիչ աշխատավարձի և պարգևատրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

8. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-207-Ն օրենքը:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2013 թվականի մայիսի 2-ին

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Հոդված 2. Ակադեմիայի իրավական կարգավիճակը և նպատակները

1. Ակադեմիան պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

2. Ակադեմիայի հիմնադիր փաստաթուղթը Ակադեմիայի կանոնադրությունն է (այսուհետ՝ Կանոնադրություն), որն ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ կառավարություն): Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը (այսուհետ՝ արդարադատության նախարար) Ակադեմիայի կառավարման խորհրդից սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին համապատասխան ստացած Կանոնադրությունը կամ դրանում առաջարկված փոփոխությունները ստանալու օրվան հաջորդող մեկամսյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնում է կառավարություն:

3. Հիմնադրի անունից հանդես եկող պետական լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունն է (այսուհետ՝ արդարադատության նախարարություն):

4. Ակադեմիայի գործունեության նպատակներն են՝

1) դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մեջ դատավորի կամ դատախազի պաշտոն զբաղեցնելու համար անհրաժեշտ հմտությունների ձևավորումը, մասնագիտական գիտելիքների ընդլայնումը.

2) դատավորների, դատախազների, ինչպես նաև դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված՝ Ակադեմիայի շրջանավարտ անձանց, դատական ծառայողների, ~~դատախազության աշխատակազմում~~ **դատախազությունում** պետական ծառայողների, դատական կարգադրիչների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործումը.

3) դատավորների, դատախազների, դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց կրթական ծրագրերի աստիճանական մերձեցումը, համատեղ կրթական ծրագրերի իրականացումը:

4) քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մեջ քննիչի պաշտոն զբաղեցնելու համար անհրաժեշտ հմտությունների ձևավորումը, մասնագիտական գիտելիքների ընդլայնումը.

5) Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ քննչական կոմիտե) և Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության (այսուհետ՝ հատուկ քննչական ծառայություն) քննիչների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործումը:

Հոդված 3. Ակադեմիայի գործառույթները

1. Ակադեմիան՝

1) կազմակերպում և անցկացնում է որակավորման ստուգման արդյունքներով դատավորների թեկնածուների հավակնորդների, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի և հատուկ քննչական ծառայության քննիչների (այսուհետ՝ քննիչներ), և դատախազների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումը.

2) կազմակերպում և անցկացնում է դատավորների, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի և հատուկ քննչական ծառայության քննիչների (այսուհետ՝ քննիչներ), դատախազների, դատավորների թեկնածուների ցուցակում գտնվող անձանց վերապատրաստումը.

3) կազմակերպում և անցկացնում է դատական ծառայողների, քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայողների, ~~դատախազության աշխատակազմում~~ **դատախազությունում** պետական ծառայողների և դատական կարգադրիչների վերապատրաստումը.

4) կազմակերպում է դատավորների, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի և հատուկ քննչական ծառայության քննիչների (այսուհետ՝ քննիչներ), դատախազների և դատական կարգադրիչների հատուկ ուսուցումը՝ հատուկ միջոցների և հրազենի գործադրման ունակություններն ուսուցանելու նպատակով.

5) իր իրավասության սահմաններում կնքում է պայմանագրեր Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական ու ֆիզիկական անձանց հետ, համագործակցում օտարերկրյա կազմակերպությունների հետ, անդամակցում միջազգային կառույցներին.

6) սույն օրենքով նախատեսված կրթական ծրագրերի իրականացման համար մշակում է ուսումնամեթոդական նյութեր.

7) իր գործունեության նպատակներին համապատասխան՝ կարող է իրականացնել Կանոնադրությամբ նախատեսված ձեռնարկատիրական գործունեության տեսակներ:

2. Սույն օրենքով նախատեսված քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց, քննիչների, քննչական կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայողների ուսուցումը Ակադեմիայում իրականացվում է «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին», «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության մասին» և «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին և սույն օրենքին համապատասխան:

3. Սույն օրենքով նախատեսված քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց, քննիչների, քննչական կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայողների ուսուցումը Ակադեմիայում ֆինանսավորում են համապատասխանաբար քննչական կոմիտեն և հատուկ քննչական ծառայությունը:

Հոդված 8. Խորհրդի նիստերը և որոշումներ կայացնելու կարգը

1. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են տարեկան առնվազն չորս անգամ:

2. Խորհրդի արտահերթ նիստերը կարող է հրավիրել Խորհրդի նախագահը՝ իր նախաձեռնությամբ, ինչպես նաև արդարադատության նախարարի, գլխավոր դատախազի, Դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Ուսումնական հարցերի հանձնաժողով), Խորհրդի առնվազն երեք անդամների կամ Ռեկտորի պահանջով: Արդարադատության նախարարը կարող է արտահերթ նիստեր հրավիրելու նախաձեռնությամբ հանդես գալ միայն սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-6-րդ, 8-11-րդ կետերով նախատեսված հարցեր քննարկելու համար:

3. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է Խորհրդի առնվազն 4 անդամ, իսկ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում՝ առնվազն երեք անդամ:

4. Խորհուրդը սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 12-19-րդ կետերով նախատեսված հարցերը քննարկում և դրանց մասին որոշում է կայացնում հետևյալ կազմերով.

1) սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված անձանց, դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց, դատավորների, դատական ծառայողների, դատական կարգադրիչների վերաբերյալ՝ միայն դատավոր և սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված անդամներով.

2) սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց, դատախազների, ~~դատախազության աշխատակազմում~~ **դատախազությունում** պետական ծառայողների, դատական կարգադրիչների վերաբերյալ՝ միայն դատախազ և սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված անդամներով:

5. Սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված կազմերով հարցեր քննարկելիս Խորհրդի՝ համապատասխանաբար դատախազ կամ դատավոր անդամները խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում են նիստին:

6. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված հարցերի քննարկման ժամանակ Խորհրդի նիստը նախագահում է Խորհրդի նախագահը, եթե նա նաև Խորհրդի համապատասխան կազմի անդամ է: Հակառակ դեպքում Խորհրդի տվյալ կազմի անդամները ձայների մեծամասնությամբ իրենց կազմից սույն օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ժամկետով ընտրում են Խորհրդի նիստը նախագահող:

7. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահը, գլխավոր դատախազը, արդարադատության նախարարը և Ռեկտորն իրավունք ունեն խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու Խորհրդի նիստերին: Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել Խորհրդի որոշմամբ հրավիրված այլ անձինք:

8. Բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի, Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ, իսկ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված կազմերով գործելիս՝ առնվազն 3 ձայնով՝ կողմ կամ դեմ քվեարկելով:

9. Խորհրդի նախագահը, իսկ սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքում՝ նիստը նախագահողը իր նախաձեռնությամբ և (կամ) ստացված առաջարկությունների հիման վրա սահմանում է Խորհրդի նիստերի օրակարգերը:

10. Խորհրդի արձանագրություններն ու որոշումները ստորագրում է Խորհրդի նախագահը, իսկ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում ստորագրում են նիստը նախագահողը և նիստին մասնակցող անդամները:

11. Ռեկտորը Խորհրդի նիստերի օրակարգի և ժամի մասին գրավոր տեղեկացնում է Խորհրդի անդամներին առնվազն 3 աշխատանքային օր առաջ:

12. Խորհրդի աշխատանքների տեխնիկական սպասարկումը և գործավարությունը կազմակերպում է Ռեկտորը:

Հոդված 14. Ակադեմիայի ունկնդիրները

1. Ակադեմիայի ունկնդիրներն (այսուհետ՝ ունկնդիր) են՝

1) դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված անձինք.

1.1) «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 123-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետով նախատեսված անձինք, որոնք ընդգրկված են Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար դատավորների առաջխաղացման ցուցակում.

2) դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք, բացառությամբ «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ուսումնառությունից ազատված անձանց.

3) դատավորները, քննիչները, դատախազները, դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձինք, դատական ծառայողները, քննչական կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայողները, ~~դատախազության աշխատակազմում~~ **դատախազությունում** պետական ծառայողները և դատական կարգադրիչները.

4) քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք, բացառությամբ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ուսումնառությունից ազատված անձանց:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված ունկնդիրներն Ակադեմիայում մասնագիտական պատրաստման ընթացքում ստանում են ընդհանուր իրավասության դատարանի նիստերի քարտուղարի վարձատրությանը համապատասխան կրթաթոշակ:

3. Վերապատրաստման ընթացքում սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված ունկնդիրներն ազատվում են իրենց պաշտոնեական պարտականությունների կատարումից՝ վարձատրության իրավունքի պահպանմամբ:

4. Վերապատրաստման վայրից դուրս մշտապես բնակվող սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված ունկնդիրներին Ակադեմիան պետական բյուջեի միջոցների հաշվին տալիս է տրանսպորտային, գիշերավարձի և այլ ծախսերի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցում կամ կազմակերպում նրանց փոխադրումն ու բնակության ապահովումը:

Հոդված 15. Ակադեմիայի շրջանավարտների աշխատանքի կազմակերպումը

1. Ակադեմիայում ուսումնառությունն ավարտելուց հետո դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձինք պարտավոր են անցնել իրավաբանի մասնագիտական որակավորում պահանջող աշխատանքի դատարանների աշխատակազմերում, եթե նրանք

ավելի քան երկու ամիս անընդմեջ կամ օրացուցային տարվա ընթացքում ավելի քան երեք ամիս չեն զբաղվում իրավաբանի մասնագիտական որակավորում պահանջող աշխատանքով: Սույն մասի դրույթները չեն տարածվում մայրության, երեխայի ծննդյան կամ երեխայի որդեգրման դեպքում արձակուրդում լինելու կամ պատգամավոր ընտրված լինելու պատճառով օրենքով սահմանված իրավաբանի մասնագիտական որակավորում պահանջող աշխատանքով չզբաղվելու դեպքերի վրա:

2. Ակադեմիայում ուսուցման ավարտից հետո Ակադեմիայի շրջանավարտ՝ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք կարող են դիմել ~~դատախազության աշխատակազմում~~ **դատախազությունում** իրավաբանի որակավորում պահանջող աշխատանքի ընդունվելու համար: Դիմում ներկայացրած անձը օգտվում է դատախազության աշխատակազմում համապատասխան թափուր տեղ առաջանալու դեպքում այդ պաշտոնում առանց մրցույթի նշանակվելու նախապատվությունից:

3. Ակադեմիայում ուսուցման ավարտից հետո Ակադեմիայի շրջանավարտ՝ քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք կարող են դիմել քննչական կոմիտեի դեպարտամենտում իրավաբանի որակավորում պահանջող աշխատանքի ընդունվելու համար: Դիմում ներկայացրած անձը օգտվում է քննչական կոմիտեի դեպարտամենտում համապատասխան թափուր տեղ առաջանալու դեպքում այդ պաշտոնում առանց մրցույթի նշանակվելու նախապատվությունից:

Հոդված 19. Ուսուցման ծրագիրը

1. Ուսումնական գործընթացն անցկացվում է Խորհրդի հաստատած կրթական չափորոշիչների հիման վրա կազմված և սույն օրենքով նախատեսված կարգով հաստատված ուսուցման ծրագրերով՝ սույն օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված բացառությունների հաշվառմամբ:

2. Ակադեմիայում իրականացվող ուսուցման ծրագրերն են՝

1) դատավորների թեկնածուների հավակնորդների, դատավորների թեկնածուների, քննիչների և դատախազների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրերը.

2) սույն օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված անձանց վերապատրաստման ծրագրերը.

3) սույն օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված անձանց լրացուցիչ վերապատրաստման ծրագրերը.

4) դատավորների, քննիչների դատախազների և դատական կարգադրիչների հատուկ ուսուցման ծրագրերը:

3. Կրթական չափորոշիչները հաստատվում են Խորհրդի՝ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանած կարգով:

4. Մինչև ընթացիկ տարվա օգոստոսի 1-ը Ուսումնական հարցերի հանձնաժողովը, արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը, իսկ դատական կարգադրիչների դեպքում՝ նաև դատական դեպարտամենտի ղեկավարը Ռեկտորին են ներկայացնում առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ իրենց առաջարկությունները՝ սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված անձանց հաջորդ տարվա ուսուցման ծրագրերում ներառելու համար: Ներկայացված առաջարկությունների և Խորհրդի հաստատած կրթական չափորոշիչների հիման վրա Ռեկտորը մինչև ընթացիկ տարվա հոկտեմբերի 1-ը Խորհրդի հաստատմանն է

ներկայացնում սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված անձանց հաջորդ տարվա ուսուցման ծրագրերը:

5. Ոչ ուշ, քան դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակի համալրման համար որակավորման ստուգում անցկացնելու մասին հայտարարության հրապարակման օրվան հաջորդող մեկամսյա ժամկետում Ուսումնական հարցերի հանձնաժողովը, արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը Ռեկտորին են ներկայացնում առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ իրենց առաջարկությունները՝ դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրերում ներառելու համար: Ներկայացված առաջարկությունների և Խորհրդի հաստատած կրթական չափորոշիչների հիման վրա Ռեկտորը կազմում և Խորհրդի հաստատմանն է ներկայացնում դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման համապատասխան տարվա ուսուցման ծրագիրը Ակադեմիայում դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումը սկսելուց առնվազն մեկ ամիս առաջ:

5.1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 123-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետով նախատեսված անձանց մասնագիտական պատրաստումը սկսելուց ոչ ուշ, քան մեկ շաբաթ առաջ Ռեկտորը կազմում և Խորհրդի հաստատմանն է ներկայացնում դատավորների թեկնածուների մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագիրը:

6. Ոչ ուշ, քան դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով հայտերի ընդունման մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող երկշաբաթյա ժամկետում գլխավոր դատախազը, արդարադատության նախարարը և Ուսումնական հարցերի հանձնաժողովը Ռեկտորին են ներկայացնում առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ իրենց առաջարկությունները՝ դատախազների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման հաջորդ տարվա ծրագրերում ներառելու համար: Ներկայացված առաջարկությունների և Խորհրդի հաստատած կրթական չափորոշիչների հիման վրա Ռեկտորը կազմում և դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման հայտարարության հրապարակմանը հաջորդող մեկամսյա ժամկետում Խորհրդի հաստատմանն է ներկայացնում դատախազների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման համապատասխան տարվա ուսուցման ծրագիրը:

7. Խորհուրդը հաստատում է Ռեկտորի ներկայացրած ծրագրերը կամ իր որոշմամբ Ռեկտորին առաջարկում է դրանցում կատարել փոփոխություններ: Ծրագրերում առաջարկված փոփոխությունների վերաբերյալ Ռեկտորի անհամաձայնության դեպքում Խորհուրդն իրավունք ունի ծրագրերը իր հաստատմանը կրկին ներկայացնելու օրվան հաջորդող երկշաբաթյա ժամկետում հաստատելու ծրագրերը իր համար նախընտրելի տարբերակով: Ծրագրերը սահմանված ժամկետում Խորհրդի կողմից չհաստատվելու դեպքում դրանք ընդունված են համարվում Ռեկտորի ներկայացրած տարբերակով:

7.1. Մինչև ընթացիկ տարվա օգոստոսի 1-ը քննչական կոմիտեի նախագահը և հատուկ քննչական ծառայության պետը Ռեկտորին են ներկայացնում առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ իրենց առաջարկությունները՝ սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված անձանց հաջորդ տարվա

ուսուցման ծրագրերում ներառելու համար: Ներկայացված առաջարկությունների և համապատասխանաբար քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի ու հատուկ քննչական ծառայության պետի հաստատած կրթական չափորոշիչների հիման վրա Ռեկտորը մինչև ընթացիկ տարվա հոկտեմբերի 1-ը կազմում և համապատասխանաբար քննչական կոմիտեի նախագահին ու հատուկ քննչական ծառայության պետին է ներկայացնում սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված անձանց հաջորդ տարվա ուսուցման ծրագրերը:

7.2. Սույն հոդվածի 7.1-ին մասին համապատասխան կազմված ուսուցման ծրագրերը ստանալու օրվան հաջորդող երկշաբաթյա ժամկետում համապատասխանաբար քննչական կոմիտեի նախագահը և հատուկ քննչական ծառայության պետը Ռեկտորին են ներկայացնում իրենց համաձայնությունը կամ առարկություններն ու դիտողությունները ներկայացված ծրագրերի վերաբերյալ: Ներկայացված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա Ռեկտորը ըստ անհրաժեշտության վերանայում է ուսուցման ծրագրերը և դրանք ներկայացնում Խորհրդին: Եթե Խորհուրդը իր անդամների ձայների 2/3-ով սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված անձանց ուսուցման ծրագրերը համարում է ամբողջությամբ կամ մասնակի անընդունելի, ապա Խորհրդի որոշումը կայացնելու օրվան հաջորդող երկշաբաթյա ժամկետում համապատասխանաբար քննչական կոմիտեի նախագահը և հատուկ քննչական ծառայության պետը պետք է ներկայացնեն ուսուցման ծրագրի վերաբերյալ նոր առաջարկներ, որոնք քննարկվում են սույն հոդվածի 7.1-ին և 7.2-րդ մասերով սահմանված կարգով:

8. Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում համապատասխան մարմինների կողմից ատեստավորման կամ գործունեության գնահատման արդյունքներով դատախազների, քննիչների, դատական ծառայողների, ~~դատախազության աշխատակազմում~~ **դատախազությունում** պետական ծառայողների, քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայողների և դատական կարգադրիչների նկատմամբ լրացուցիչ վերապատրաստում անցնելու վերաբերյալ որոշում կայացնելու դեպքում որոշման կայացումից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, այն ուղարկվում է Ռեկտորին՝ առաջարկություն ներկայացնելով սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված լրացուցիչ վերապատրաստման առարկայական կուրսի կամ թեմաների վերաբերյալ: Նման առաջարկության հետ Ռեկտորին է ներկայացվում նաև լրացուցիչ վերապատրաստման ունկնդիրների ցուցակը:

9. Գործնական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Ուսումնական հարցերի հանձնաժողովը, Բարձրագույն դատական խորհուրդը, գլխավոր դատախազը, քննչական կոմիտեի նախագահը, հատուկ քննչական ծառայության պետը կամ արդարադատության նախարարը Ռեկտորին կարող են առաջարկություններ ներկայացնել սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված լրացուցիչ վերապատրաստման առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ: Նման առաջարկության հետ Ռեկտորին է ներկայացվում նաև լրացուցիչ վերապատրաստման ունկնդիրների ցուցակը, կամ նշվում է թիրախային խումբը: Ռեկտորն իրավունք ունի իր նախաձեռնությամբ Խորհուրդ ներկայացնելու լրացուցիչ վերապատրաստման առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ առաջարկություններ:

10. Սույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերով նախատեսված առաջարկության առկայության դեպքում Ռեկտորը ողջամիտ ժամկետում կազմում և սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով Խորհրդի հաստատմանն է ներկայացնում լրացուցիչ

վերապատրաստման ուսուցման ծրագիրը: Խորհուրդը կարող է մերժել լրացուցիչ վերապատրաստման ծրագրի իրականացումը:

11. Ուսուցման ծրագիրը առնվազն ներառում է՝

1) կրթական չափորոշիչները.

2) ուսուցման ձևը.

3) ուսումնառության ժամաքանակը և ժամկետը, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի.

4) գնահատման եղանակը, եթե ուսուցման ավարտին նախատեսվում է գնահատում.

5) դասավանդվող առարկայական կուրսերի և դրանցում ներառվող թեմաների նկարագիրը:

12. Ուսուցման ծրագրի կատարումն ապահովելու համար կազմվում են ուսումնական պլան և դասավանդման սեղմագրեր:

Հոդված 20. Ունկնդիրներին ուսուցման ներգրավելու ընթացակարգը

1. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված անձանց ուսուցման ծրագրերը սույն օրենքի 19-րդ հոդվածին համապատասխան Խորհրդի կողմից հաստատվելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, Ռեկտորը ուղարկում է համապատասխանաբար Ուսումնական հարցերի հանձնաժողով, քննչական կոմիտե, հատուկ քննչական ծառայություն, դատական դեպարտամենտ և գլխավոր դատախազություն՝ վերապատրաստում անցնող անձանց կողմից սույն օրենքի 21-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան առարկայական կուրսերի ընտրություն կատարելու նպատակով:

2. Ուսումնական հարցերի հանձնաժողովը՝ դատավորների ու դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց մասով, դատական դեպարտամենտը՝ դատական ծառայողների և դատական կարգադրիչների մասով, գլխավոր դատախազությունը՝ դատախազների ու ~~դատախազության աշխատակազմում~~ **դատախազությունում** պետական ծառայողների մասով, քննչական կոմիտեն՝ քննիչների ու քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայողների մասով, հատուկ քննչական ծառայությունը՝ հատուկ քննչական ծառայության քննիչների մասով, յուրաքանչյուր տարի՝ մինչև դեկտեմբերի 1-ը, Ակադեմիա են ներկայացնում հաջորդ տարվա ընթացքում վերապատրաստման ենթակա անձանց ցուցակը՝ սույն օրենքի 21-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան առարկայական կուրսերի ընտրության նշումով:

3. Դատավորների թեկնածուների հավակնորդների, քննիչների, դատախազների թեկնածությունների և Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի համալրման օրվան հաջորդող եռօրյա ժամկետում համապատասխանաբար Դատական դեպարտամենտը, քննչական կոմիտեն, գլխավոր դատախազությունը և Բարձրագույն դատական խորհուրդը՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 123-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետով նախատեսված անձանց մասով, Ակադեմիա են ներկայացնում մասնագիտական պատրաստման ենթակա անձանց ցուցակը:

4. Ռեկտորը վերապատրաստման և լրացուցիչ վերապատրաստման ենթակա ունկնդիրների ներկայացված ցուցակների հիման վրա կազմում է սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված ունկնդիրների ուսուցման ընդհանուր

ժամանակացույց և ներկայացնում համապատասխանաբար Խորհրդի, քննչական կոմիտեի նախագահի և հատուկ քննչական ծառայության պետի հաստատմանը:

5. Վերապատրաստման և լրացուցիչ վերապատրաստման ենթակա ունկնդիրներն ուսուցման դասընթացներն անցնում են ըստ ժամանակացույցում նշված խմբերի:

6. Վերապատրաստման և լրացուցիչ վերապատրաստման ենթակա ունկնդիրների ուսուցման ընդհանուր ժամանակացույցն ուղարկվում է համապատասխան պետական մարմին ուսուցումը սկսվելուց առնվազն 10 օր առաջ:

7. Ուսումնական հարցերի հանձնաժողովը՝ դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց մասով, Դատական դեպարտամենտը՝ դատական ծառայողների և դատական կարգադրիչների մասով, գլխավոր դատախազությունը՝ դատախազների ու ~~դատախազության աշխատակազմում~~ **դատախազությունում** պետական ծառայողների մասով, քննչական կոմիտեն՝ քննիչների ու քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայողների մասով, հատուկ քննչական ծառայությունը՝ ծառայության քննիչների մասով պատասխանատու են ուսուցման դասընթացներին ներկայանալու վերաբերյալ ունկնդիրների ծանուցումն ապահովելու համար:

Հոդված 22. Ուսումնառության ժամաքանակը և ժամկետները

1. Ուսումնառության ժամաքանակի չափման միավորը մեկ ակադեմիական ժամն է, որի տևողությունը 40 րոպե է:

2. Դատավորների, դատախազների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց պարտադիր վերապատրաստման ուսումնառության ժամաքանակը կազմում է առնվազն 80, բայց ոչ ավելի, քան 120 ակադեմիական ժամ:

2.1. Քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման, քննչական կոմիտեի քննիչների, քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայողների վերապատրաստման, ինչպես նաև ըստ ատեստավորման կամ գնահատման արդյունքների՝ լրացուցիչ վերապատրաստման ուսումնառության ժամաքանակը և ուսումնառության ժամկետի տևողությունը սահմանում է քննչական կոմիտեի նախագահը: Մասնագիտական պատրաստման, վերապատրաստման ժամաքանակը և ուսումնառության ժամկետի տևողությունը չեն կարող գերազանցել սույն հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով նախատեսված պահանջները 30 տոկոսից ավելի չափով:

2.2. Հատուկ քննչական ծառայության քննիչների վերապատրաստման, ինչպես նաև ըստ ատեստավորման կամ գնահատման արդյունքների՝ լրացուցիչ վերապատրաստման ուսումնառության ժամաքանակը և ուսումնառության ժամկետի տևողությունը սահմանվում են «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

3. Դատական ծառայողների, դատական կարգադրիչների և ~~դատախազության աշխատակազմում~~ **դատախազությունում** պետական ծառայողների վերապատրաստման, ինչպես նաև ըստ ատեստավորման կամ գնահատման արդյունքների՝ լրացուցիչ վերապատրաստման կարիք ունեցող դատական ծառայողների, դատական կարգադրիչների և դատախազների, դատախազության աշխատակազմում պետական ծառայողների ուսումնառության ժամաքանակը սահմանում են համապատասխանաբար Բարձրագույն դատական խորհուրդը և հանրապետության գլխավոր դատախազը:

4. Դատավորների թեկնածուների հավակնորդների և դատախազների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց ուսումնառության ժամկետի տևողությունը առնվազն 7 ամիս է, բայց ոչ ավելի, քան 10 ամիս, բացառությամբ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 109-րդ հոդվածի 11-րդ մասով և 124-րդ հոդվածի 13-րդ մասով սահմանված գործնական հմտությունների զարգացման մասով ուսուցման, որի ժամկետները սահմանում է Խորհուրդը:

5. Դատավորների թեկնածուների հավակնորդների, քննիչների և դատախազների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման գործընթացը, որպես կանոն, սկսվում է թեկնածուների և թեկնածությունների ցուցակների համալրումն ավարտվելու ամսվան հաջորդող ամսվանից:

6. Դատավորների թեկնածուների մասնագիտական պատրաստումը, որպես կանոն, սկսվում է Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար դատավորների առաջխաղացման ցուցակում ընդգրկված՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 123-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետով նախատեսված անձանց ցուցակի համալրումն ավարտելուն հաջորդող ամսվանից:

Հոդված 26. Գնահատման և բողոքարկման հանձնաժողովները

1. Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ընթացքում դասավանդվող առարկայական կուրսի արդյունքները գնահատելու համար ձևավորվում է գնահատման հանձնաժողով: Հանձնաժողովի կազմի մեջ են մտնում Ուսումնական հարցերի հանձնաժողովի կողմից իրենց համաձայնությամբ նշանակված հինգ դատավոր և արդարադատության նախարարի նշանակած՝ գիտության համապատասխան բնագավառի երկու մասնագետ:

2. Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ընթացքում դասավանդվող առարկայական կուրսի արդյունքները գնահատելու համար ձևավորվում է գնահատման հանձնաժողով: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են գլխավոր դատախազի նշանակած հինգ դատախազ և արդարադատության նախարարի նշանակած՝ գիտության համապատասխան բնագավառի երկու մասնագետ:

2.1. Քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ընթացքում դասավանդվող առարկայական կուրսի արդյունքները գնահատելու համար ձևավորվում է գնահատման հանձնաժողով: Հանձնաժողովի կազմի մեջ են մտնում քննչական կոմիտեի նախագահի նշանակած երեք քննիչ և արդարադատության նախարարի նշանակած՝ գիտության համապատասխան բնագավառի երկու մասնագետ:

3. Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում, քննիչների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց գնահատման հանձնաժողովը ղեկավարում է հանձնաժողովի կազմից ձայների մեծամասնությամբ ընտրված անդամը:

4. Դատական ծառայողների և դատական կարգադրիչների վերապատրաստման և լրացուցիչ վերապատրաստման ընթացքում դասավանդվող առարկայական կուրսի արդյունքները գնահատելու համար ձևավորվում է գնահատման հանձնաժողով: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են դատական դեպարտամենտի ղեկավարի՝

դատական դեպարտամենտից նշանակած չորս անդամ և գիտության համապատասխան բնագավառի մասնագետ՝ նշելով հանձնաժողովի նախագահին:

5. ~~Դատախազության աշխատակազմի~~ **Դատախազությունում** պետական ծառայողների վերապատրաստման և լրացուցիչ վերապատրաստման արդյունքները գնահատելու համար ձևավորվում է գնահատման հանձնաժողով: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են գլխավոր դատախազի նշանակած չորս անդամ և գիտության համապատասխան բնագավառի մասնագետ՝ նշելով հանձնաժողովի նախագահին:

5.1. Քննչական կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայողների վերապատրաստման և լրացուցիչ վերապատրաստման արդյունքները գնահատելու համար ձևավորվում է գնահատման հանձնաժողով: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են քննչական կոմիտեի նախագահի նշանակած չորս անդամ և գիտության համապատասխան բնագավառի մասնագետ՝ նշելով հանձնաժողովի նախագահին:

6. Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման քննությունների արդյունքների հետ կապված բողոքները քննելու և լուծելու համար ձևավորվում է բողոքարկման հանձնաժողով: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Ուսումնական հարցերի հանձնաժողովի կողմից իրենց համաձայնությամբ նշանակված երկու դատավոր և արդարադատության նախարարի նշանակած՝ իրավունքի համապատասխան բնագավառի մեկ մասնագետ:

7. Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման քննությունների արդյունքների հետ կապված բողոքները քննելու և լուծելու համար ձևավորվում է բողոքարկման հանձնաժողով: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են գլխավոր դատախազի նշանակած երկու դատախազ և արդարադատության նախարարի նշանակած՝ գիտության համապատասխան բնագավառի մեկ մասնագետ:

7.1. Քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման քննությունների արդյունքների հետ կապված բողոքները քննելու և լուծելու համար ձևավորվում է բողոքարկման հանձնաժողով: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են քննչական կոմիտեի նախագահի նշանակած երկու ներկայացուցիչ և արդարադատության նախարարի նշանակած՝ գիտության համապատասխան բնագավառի մեկ մասնագետ:

8. Դատական ծառայողների և դատական կարգադրիչների վերապատրաստման և լրացուցիչ վերապատրաստման ընթացքում դասավանդվող առարկայական կուրսի արդյունքների հետ կապված բողոքները քննելու և լուծելու համար ձևավորվում է բողոքարկման հանձնաժողով: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են դատական դեպարտամենտի ղեկավարի՝ դատական դեպարտամենտից նշանակած երկու անդամ և գիտության համապատասխան բնագավառի մասնագետ:

9. ~~Դատախազության աշխատակազմի~~ **Դատախազությունում** պետական ծառայողների վերապատրաստման և լրացուցիչ վերապատրաստման արդյունքների հետ կապված բողոքները քննելու և լուծելու համար ձևավորվում է բողոքարկման հանձնաժողով: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են գլխավոր դատախազի նշանակած երկու անդամ և գիտության համապատասխան բնագավառի մասնագետ:

9.1. Քննչական կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայողների վերապատրաստման և լրացուցիչ վերապատրաստման արդյունքների հետ կապված բողոքները քննելու և լուծելու համար ձևավորվում է բողոքարկման հանձնաժողով: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության քննչական

կոմիտեի նախագահի նշանակած երկու անդամ և գիտության համապատասխան բնագավառի մասնագետ:

10. Խորհրդի անդամը չի կարող ընդգրկվել սույն հոդվածով նախատեսված հանձնաժողովների կազմում:

11. Գնահատման և բողոքարկման հանձնաժողովների կազմերը ձևավորելիս պետք է ապահովվի դրանց կազմում ստուգման ենթակա առարկայական կուրսի (կուրսերի) վերաբերյալ համապատասխան գիտելիքների տիրապետող անձանց նշանակումը:

12. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 2.1-ին, 6-րդ, 7-րդ և 7.1-ին մասերով նախատեսված մասնագիտական պատրաստման արդյունքների գնահատման և բողոքարկման հանձնաժողովները ձևավորվում են մասնագիտական պատրաստման արդյունքների ստուգումից ոչ շուտ, քան մեկ շաբաթ առաջ, և լուծարվում են արդյունքների ամփոփման և բողոքարկման ժամկետները լրանալուց հետո: Սույն հոդվածի 4-րդ, 5-րդ, 5.1-ին, 8-րդ, 9-րդ և 9.1-ին մասերով նախատեսված հանձնաժողովները ձևավորվում են յուրաքանչյուր տարվա սկզբին:

13. Սույն հոդվածով նախատեսված հանձնաժողովների անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են՝

1) իր հիմնական պաշտոնում լիազորությունները դադարելու և նույն համակարգում այլ պաշտոնի չնշանակվելու դեպքում.

2) իր դիմումի համաձայն.

3) եթե համապատասխան անդամին նշանակած մարմինը, քննարկելով սույն հոդվածի 14-րդ մասին համապատասխան ներկայացված փաստերը կամ հանգամանքները, գտնում է, որ դրանք կարող են ողջամիտ կասկած հարուցել հանձնաժողովի անդամի անկողմնակալության հարցում:

14. Հանձնաժողովի անդամը պարտավոր է իրեն նշանակած մարմնին գրավոր հայտնել, եթե տեղյակ է այնպիսի փաստերի կամ հանգամանքների մասին, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել գնահատման կամ բողոքարկման գործընթացին նրա մասնակցության անկողմնակալության հարցում:

15. Հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման դեպքում նոր անդամը նշանակվում է համապատասխան հանձնաժողովի անդամի նշանակման համար սույն հոդվածով սահմանված կարգով՝ հանձնաժողովի կազմից դուրս եկած անդամի լիազորությունների մնացած ժամանակահատվածով:

16. Հանձնաժողովի անդամները վարձատրվում են Ակադեմիայի միջոցների հաշվին:

Հոդված 27. Քննությունների անցկացման և արդյունքների բողոքարկման կարգը

1. Ակադեմիայում մասնագիտական պատրաստման ընթացքում դասավանդվող առարկայական կուրսի արդյունքները, որպես կանոն, գնահատվում են գրավոր քննությունների միջոցով: Գրավոր քննության համար նախատեսված կարգից բացառություններ կարող են նախատեսվել Խորհրդի որոշմամբ այն առարկայական կուրսերից հանձնվող քննությունների համար, որոնք չեն կարող անցկացվել գրավոր եղանակով:

2. Գրավոր քննության արդյունքների ստուգումը և գնահատումը գնահատման հանձնաժողովն իրականացնում է անանուն:

3. Գրավոր քննության յուրաքանչյուր աշխատանքի ստուգումը իրականացնում են սույն օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված գնահատման հանձնաժողովի կազմից

վիճակահանությամբ ընտրված երկու ստուգողները, որոնցից մեկը պետք է լինի համապատասխանաբար դատավոր, քննիչ, դատախազ, դատական դեպարտամենտի ղեկավարի, քննչական կոմիտեի նախագահի կամ գլխավոր դատախազի նշանակած անձը, իսկ մյուսը՝ գիտության համապատասխան բնագավառի մասնագետ:

4. Եթե դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում, քննիչների կամ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ընթացքում նախատեսված գրավոր քննության՝ սույն հոդվածի 3-րդ մասին համապատասխան ստուգման արդյունքներով ստուգողների նշանակած միավորներում առկա է առնվազն 20 տոկոսից ավելի շեղում, նշանակվում է լրացուցիչ ստուգում, որին մասնակցում են գնահատման հանձնաժողովի կազմից վիճակահանությամբ ընտրված համապատասխանաբար մեկ այլ դատավոր, քննիչ կամ դատախազ և գիտության համապատասխան բնագավառի՝ արդարադատության նախարարի նշանակած մյուս մասնագետը, իսկ քննչական կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայողների, դատական ծառայողների, ~~դատախազության աշխատակազմում~~ **դատախազությունում**—պետական ծառայողների և դատական կարգադրիչների պարագայում ստուգումն իրականացնում են հանձնաժողովի կազմից վիճակահանությամբ ընտրված երկու այլ ստուգողներ:

5. Գնահատման հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի ծանոթանալու ստուգված գրավոր աշխատանքին և ներկայացնելու իր նկատառումները:

6. Ակադեմիայում գրավոր քննության ստուգման արդյունքներով վերջնական գնահատականը որոշում է գնահատման հանձնաժողովը՝ առնվազն 4 ձայնով ընդունված որոշմամբ: Եթե գնահատման հանձնաժողովը անհրաժեշտ ձայներով որոշում չի կայացնում վերջնական գնահատականի վերաբերյալ, ապա այն որոշվում է համապատասխանաբար 2, իսկ լրացուցիչ ստուգում նշանակված լինելու դեպքում՝ 4 ստուգողների նշանակած գնահատականների միջինով:

7. Ակադեմիայում քննության ժամանակ ունկնդրին տրվող հարցերը պետք է բխեն ուսումնական ծրագրի շրջանակներում մատուցված նյութից:

8. Ստուգված գրավոր աշխատանքները պետք է պարունակեն դրանցում առկա թերությունների վերաբերյալ ստուգողների կատարած համապատասխան նշումներ, որոնք հնարավորություն կտան եզրահանգումներ անելու գնահատման հիմքում ընկած հանգամանքների մասին:

9. Ունկնդիրն իրավունք ունի դիմելու և գնահատման հանձնաժողովի անդամներից ստանալու իր գնահատականի վերաբերյալ լրացուցիչ բանավոր պարզաբանումներ:

10. Յուրաքանչյուր ունկնդիր գնահատման հանձնաժողովի որոշման հրապարակման օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում կարող է դիմել բողոքարկման հանձնաժողով, եթե համարում է, որ խախտվել է քննությունների անցկացման ընթացակարգը, կամ վիճարկում է քննության գնահատականը:

11. Քննության ընթացակարգը կամ գնահատականը բողոքարկելիս ունկնդիրը հստակ նշում է բողոքի հիմքում ընկած հանգամանքները և իր հիմնավորումները:

12. Գրավոր աշխատանքը և բողոքը բողոքարկման հանձնաժողովին տրամադրվում են անանուն:

13. Բողոքարկման արդյունքներով կայացված որոշումները պատճառաբանվում են:

14. Քննության հետ կապված որոշումները կարող են բողոքարկվել վարչական դատարան միայն քննությունների անցկացման ընթացակարգի,

գրավոր աշխատանքների ստուգման, գնահատման և բողոքարկման ընթացակարգային նորմերի խախտման հիմքով:

15. Ռեկտորը ապահովում է գրավոր քննությունների ողջ ընթացքի տեսաձայնագրումը:

16. Ունկնդիրն իրավունք ունի ստանալու գրավոր քննության ողջ ընթացքի տեսաձայնագրության կրկնօրինակը, ինչպես նաև գրավոր քննության ստուգված ցանկացած աշխատանքի պատճենները:

17. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահը և արդարադատության նախարարը՝ դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց պարագայում, դատական դեպարտամենտի ղեկավարը՝ դատական ծառայողների և դատական կարգադրիչների պարագայում, քննչական կոմիտեի նախագահը՝ քննիչների, քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց և քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայողների պարագայում, իսկ գլխավոր դատախազը՝ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց և ~~դատախազության աշխատակազմում~~ **դատախազությունում** պետական ծառայողների պարագայում, կարող են ցանկացած ժամանակ դիմել և եռօրյա ժամկետում ստանալ քննության տեսագրության կրկնօրինակը և գրավոր քննության ստուգված աշխատանքների պատճենները:

Հոդված 28. Ուսուցման արդյունքների ամփոփումը

1. Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում, քննիչների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձը համարվում է մասնագիտական պատրաստումն անցած, եթե նա առարկայական կուրսերից բոլոր քննությունների արդյունքներով ստացել է դրական գնահատական և դրական է գնահատվել փորձաշրջանի արդյունքներով:

1.1. Որպես գիտական աստիճան ունեցող հավակնորդ դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկված անձը համարվում է մասնագիտական պատրաստումն անցած, եթե նա դրական է գնահատվել փորձաշրջանի արդյունքներով, իսկ Խորհրդի կողմից սահմանված կարգով առարկայական կուրս անցնելու դեպքում՝ առարկայական կուրսերից բոլոր քննությունների արդյունքներով ստացել է դրական գնահատական:

1.2. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 123-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետով նախատեսված անձը, որն ընդգրկված է Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար դատավորների առաջխաղացման ցուցակում, համարվում է մասնագիտական պատրաստումն անցած, եթե նա անցել է փորձաշրջան, իսկ Խորհրդի կողմից սահմանված դեպքերում մասնակցել է առարկայական կուրսի բոլոր ժամերին, այդ թվում, երբ նրա բացակայությունը Ռեկտորը ճանաչել է հարգելի:

2. Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում, քննիչների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձի՝ Ակադեմիան ավարտելու հանրագումարային միավորը հաշվարկվում է առարկայական կուրսերից հանձնած բոլոր քննությունների գնահատականների հիման վրա:

3. Դատական ծառայողները, դատական կարգադրիչները, քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայողները, ~~դատախազության աշխատակազմում~~

դատախազությունում պետական ծառայողները համարվում են վերապատրաստումը կամ լրացուցիչ պատրաստումն անցած դրական գնահատման դեպքում:

4. Դատավորը, քննիչը, դատախազը, դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձը համարվում են վերապատրաստումը կամ լրացուցիչ վերապատրաստումն անցած, եթե նրանք մասնակցել են վերապատրաստման կամ լրացուցիչ վերապատրաստման համապատասխան առարկայական կուրսի բոլոր ժամերին, այդ թվում, երբ նրանց բացակայությունը Ռեկտորը ճանաչել է հարգելի:

5. Ունկնդրի՝ համապատասխան առարկայական կուրսով անցած վերապատրաստումը չի գնահատվում, եթե սույն հոդվածի 4-րդ մասին համապատասխան հարգելի ճանաչված բացակայությունները գերազանցում են վերապատրաստման և լրացուցիչ վերապատրաստման առարկայական կուրսի ժամաքանակի քսան տոկոսը: Այս դեպքում ունկնդրին հնարավորություն է տրվում կրկին անցնելու նույնաբովանդակ առարկայական կուրսը կամ Խորհրդի սահմանած կարգով անցնելու Խորհրդի կողմից համարժեք սահմանված այլ առարկայական կուրս:

Հոդված 29. Ունկնդիրների վերաբերյալ տեղեկատվության հաշվառումը

1. Ուսումնառության ժամանակ Ակադեմիան վարում է ունկնդիրների հաճախելիության մատյաններ:

2. Ուսումնառության արդյունքների վերաբերյալ Ակադեմիան վարում է հաշվառման մատյան, որտեղ նշվում են ունկնդրի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը, ուսումնառության ժամկետները և Խորհրդի որոշմամբ սահմանված այլ տեղեկություններ:

2.1. Ուսումնառության ավարտից հետո Ակադեմիան դատավորի յուրաքանչյուր թեկնածուի վերաբերյալ տեղեկություններ է տրամադրում Բարձրագույն դատական խորհրդին՝ Արդարադատության ակադեմիայում ուսանելու ընթացքում առաջադիմության և դատարաններում փորձաշրջանի արդյունքների վերաբերյալ:

3. Ակադեմիան յուրաքանչյուր ուսումնական ծրագրի ավարտից հետո համապատասխանաբար Բարձրագույն դատական խորհրդին՝ դատավորների ու դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց մասով, դատական դեպարտամենտին՝ դատական ծառայողների և դատական կարգադրիչների մասով, քննչական կոմիտեի նախագահին՝ քննիչների և քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայողների մասով, հատուկ քննչական ծառայության պետին՝ ծառայության քննիչների մասով, գլխավոր դատախազին՝ դատախազների ու ~~դատախազության աշխատակազմում~~ **դատախազությունում** պետական ծառայողների մասով, ամփոփ տեղեկանք է ներկայացնում՝ Ակադեմիայում ուսուցումն անցած ունկնդիրների ուսումնառության արդյունքների վերաբերյալ:

Հոդված 2. Օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ և 9-րդ մասերի «դատախազության աշխատակազմի» բառերը փոխարինել «դատախազությունում» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՄԱՍԻՆ

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

1) **հանրային հատվածի կազմակերպություններ (այսուհետ՝ կազմակերպություններ)՝**

ա. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված ~~պետական կառավարման~~ **պետական մարմիններ** և տեղական ինքնակառավարման մարմիններ,

բ. պետության կամ համայնքների հիմնարկներ,

գ. պետական կամ համայնքների ոչ առևտրային կազմակերպություններ,

դ. հիսուն տոկոսից ավելի պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններ.

2) **ներքին աուդիտ՝** անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործառույթ, որն ուղղված է կազմակերպության գործունեության արդյունքի մեծացմանը և բարելավմանը: Այն աջակցում է կազմակերպությանը հասնել իր նպատակներին՝ կազմակերպության ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով:

Ներքին աուդիտն իրականացվում է ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերի հիման վրա՝ կազմակերպության ղեկավարությանը հավաստիացման կամ խորհրդատվական ծառայություններ մատուցելու միջոցով.

3) **ներքին աուդիտի համակարգ՝** ներքին աուդիտի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, պահանջների և ներքին աուդիտիմասնակիցների իրավունքների և պարտականությունների ամբողջությունը.

4) **ֆինանսական կառավարման, հսկողության համակարգեր՝** կազմակերպության ղեկավարության կողմից սահմանված կանոնների (քաղաքականության), ընթացակարգերի և գործողությունների ամբողջությունը, որով ողջամիտ ձևով երաշխավորվում է հետևյալ պայմաններին համապատասխան կազմակերպության նպատակների իրականացումը՝

ա. Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և կազմակերպության գործունեությանն առնչվող այլ պայմաններին (պայմանագրերին և այլնին) համապատասխանություն,

բ. տնտեսող, արդյունավետ և օգտավետ գործառույթներ,

գ. տեղեկությունների ամբողջականություն և վստահելիություն,

դ. կորուստներից, չարաշահումներից և վնասներից ակտիվների ու ռեսուրսների պահպանման հուսալիություն.

5) **տնտեսող՝** նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների նվազեցում՝ պահպանելով նախապես սահմանված որակը.

6) **արդյունավետ՝** գործառույթի արդյունքի կամ նպատակի իրագործման աստիճան, այսինքն՝ գործառույթի արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը.

7) **օգտավետ՝** տրված ռեսուրսների (ներդրումների) պարագայում գործառույթի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում.

8) **ռիսկ՝** իրադարձության տեղի ունենալու հավանականություն, որը կարող է ազդել կազմակերպության նպատակների իրագործման վրա: Ռիսկը չափվում է ազդեցությամբ և տեղի ունենալու հավանականությամբ.

9) **ռիսկերի կառավարում՝** կազմակերպության նպատակների իրականացման համար ռիսկերի բացահայտման, գնահատման և հսկման գործընթաց.

10) **հսկողություն՝** կազմակերպության ղեկավարության գործողություններ՝ ուղղված կազմակերպության նպատակների իրականացման ռիսկերի կանխմանը կամ նվազեցմանը.

11) **անկախություն՝** ներքին աուդիտի գործառույթի՝ կազմակերպության այլ գործառույթներից առանձնացված իրականացում.

12) **օբյեկտիվություն՝** ներքին աուդիտորների կողմից աուդիտի ընթացքում տեղեկությունների հավաքագրման, գնահատման և փոխանակման գործընթացում մասնագիտական անշահախնդրության անվերապահ ցուցաբերում: Ներքին աուդիտորները իրականացնում են բոլոր հանգամանքների հավասարակշռված և համարժեք գնահատում և չեն ենթարկվում սեփական հետաքրքրությունների կամ այլ անձանց դատողությունների անհարկի ազդեցությանը.

13) **կարողունակություն՝** ներքին աուդիտորների կողմից համապատասխան գիտելիքների, հմտությունների, փորձառության և իրենց պարտականությունները կատարելու համար անհրաժեշտ այլ կարողությունների տիրապետումը և կիրառումը.

14) **անկողմնակալություն՝** ներքին աուդիտորների՝ իրենց աշխատանքի ազնիվ և պատասխանատու իրականացում.

15) **գաղտնիություն՝** ներքին աուդիտորների՝ աշխատանքի ընթացքում ստացած տեղեկությունների հուսալի պահպանումը: Ներքին աուդիտորները պարտավոր են առանց համապատասխան լիազորության չհրապարակել և չտրամադրել գործունեության ընթացքում կամ արդյունքում իրենց հայտնի դարձած տեղեկությունները, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.

16) **ներքին աուդիտի ստանդարտներ՝** միջազգայնորեն ճանաչված ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտների հիման վրա հաստատված Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտիմասնագիտական գործունեության ստանդարտները.

17) **վարքագծի կանոններ՝** միջազգայնորեն ճանաչված ներքին աուդիտորների վարքագրքի հիման վրա հաստատված Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտորների վարքագծի կանոնները: Վարքագծի կանոնները տարածվում են ինչպես անհատ ներքին աուդիտորների, այնպես էլ ներքին աուդիտ իրականացնող կազմակերպությունների վրա.

18) **ներքին աուդիտի կանոնակարգ՝** կազմակերպության ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի ներկայացմամբ կազմակերպության ղեկավարի հաստատած փաստաթուղթ, որով սահմանվում են ներքինաուդիտի նպատակը, լիազորությունները և պարտականությունները: Այլ պայմաններից բացի, կանոնակարգը նաև՝

ա. մատնանշում է կազմակերպությունում ներքին աուդիտի դիրքը,

բ. սահմանում է ներքին աուդիտի շրջանակը,

գ. կարգավորում է ներքին աուդիտորների համար աուդիտորական առաջադրանքների կատարման նպատակով անհրաժեշտ փաստաթղթերի, ~~աշխատակազմի~~ **պետական մարմնի** և գույքի հետ կապված հարցերը.

19) **աուդիտորական առաջադրանք՝** ներքին աուդիտի կոնկրետ առաջադրանքը կամ ուսումնասիրությունը, որը ներառում է հավաստիացման կամ խորհրդատվության ծառայություն.

20) **լիազոր մարմին՝** Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պետական մարմին.

21) **ներքին աուդիտի կոմիտե՝** կազմակերպության ղեկավարի ձևավորած և նրա կողմից ղեկավարվող կոլեգիալ մարմին, որն աջակցում է կազմակերպության ներքին աուդիտի համակարգին և այդ նպատակով իրականացնում է սույն օրենքով նախատեսված լիազորություններ:

Հոդված 5. Ներքին աուդիտի կազմակերպումը

~~1. Ներքին աուդիտի համակարգը գործում է կազմակերպության ղեկավարի ենթակայությամբ: Ընդ որում՝~~

~~1) Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմում, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմում, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության խորհրդում և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմում ներքին աուդիտի համակարգը գործում է տվյալ մարմնի աշխատակազմի ղեկավարի, իսկ Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտում՝ վերջինիս ղեկավարի ենթակայությամբ.~~

~~2) Հայաստանի Հանրապետության օրենքների հիման վրա ստեղծված պետական մարմիններում՝ հանձնաժողովներում և խորհուրդներում, ներքին աուդիտի համակարգը գործում է տվյալ հանձնաժողովի կամ խորհրդի ենթակայությամբ.~~

~~3) Հայաստանի Հանրապետության նախարարություններում ներքին աուդիտի համակարգը գործում է նախարարի, Հայաստանի Հանրապետության կառավարության ենթակա պետական կառավարման այլ մարմիններում՝ մարմնի ղեկավարի, Հայաստանի Հանրապետության համայնքներում՝ համայնքի ղեկավարի, իսկ Հայաստանի Հանրապետության օրենքների հիման վրա ստեղծված այլ պետական մարմիններում՝ տվյալ մարմնի ղեկավարի ենթակայությամբ:~~

1. Ներքին աուդիտի համակարգը գործում է կազմակերպության ղեկավարի ենթակայությամբ: Ընդ որում՝

1) Հանրապետության Նախագահի աշխատակազմում, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմում, վարչապետի աշխատակազմում ներքին աուդիտի համակարգը գործում է տվյալ մարմնի աշխատակազմի ղեկավարի ենթակայությամբ.

2) Անկախ պետական մարմիններում և ինքնավար մարմիններում ներքին աուդիտի համակարգը գործում է այդ կոլգիալ մարմնի ենթակայությամբ.

3) պետական կառավարման համակարգի մարմիններում ներքին աուդիտի համակարգը գործում է տվյալ մարմնի ղեկավարի ենթակայությամբ:

2. Ներքին աուդիտն իրականացնում են կազմակերպության կառուցվածքում գործող ներքին աուդիտիստորաբաժանման կամ հրավիրված՝ սույն օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով նախատեսված ցանկում ընդգրկված անձինք: Եթե աուդիտն իրականացնում են հրավիրված անձինք, ապա վերջիններս են ապահովում սույն օրենքով աուդիտի ստորաբաժանման, ներառյալ՝ ստորաբաժանման ղեկավարի համար սահմանված իրավունքների և պարտականությունների կատարումը:

3. Կազմակերպության ղեկավարն ապահովում է կազմակերպությունում ներքին աուդիտի համակարգի առկայությունը և գործունեությունը:

4. Կազմակերպության ղեկավարը և կազմակերպության այլ պաշտոնատար անձինք պարտավոր են համագործակցել ներքին աուդիտորների հետ և իրավունք չունեն չբացահայտելու կազմակերպությանը վերաբերող տեղեկությունները կամ մերժելու դրանց տրամադրումը:

5. Այն կազմակերպություններում, որտեղ ներքին աուդիտն իրականացնում է ներքին աուդիտիստորաբաժանումը, սահմանվում է, իսկ այլ կազմակերպություններում կարող է սահմանվել ներքին աուդիտիկոմիտե:

6. Ներքին աուդիտի ստորաբաժանմանը և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացվող հիմնական պահանջները սահմանում է լիազոր մարմինը:

Հոդված 9. Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարին և ներքին աուդիտորներին ներկայացվող պահանջները

~~1. Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և ներքին աուդիտորները Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում և դրանց ենթակա հիմնարկներում համապատասխանաբար քաղաքացիական կամ օրենքով սահմանված այլ պետական, այդ թվում՝ հատուկ ծառայողներ կամ համայնքային ծառայողներ են, ովքեր ընդգրկված են սույն օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով նախատեսված ցանկում:~~

1. Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և ներքին աուդիտորները պետական մարմիններում և տեղական ինքնակառավարման մարմիններում համապատասխանաբար քաղաքացիական կամ համայնքային ծառայողներ են, իսկ պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների ենթակա հիմնարկներում՝ պայմանագրային աշխատողներ, ովքեր ընդգրկված են սույն օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով նախատեսված ցանկում:

2. Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի պաշտոնը զբաղեցնում է այն անձը, որը բավարարում է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջները և ունի առնվազն երեք տարվա մասնագիտական գործունեության փորձ աուդիտի ոլորտում:

3. Անձը, որն ընդգրկված չէ սույն օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով նախատեսված ցանկում, կարող է մինչև երեք տարի ժամկետով նշանակվել որպես ուսուցանվող աուդիտոր: Անձը կարող է միայն մեկ անգամ նշանակվել որպես ուսուցանվող աուդիտոր: Ուսուցանվող աուդիտորները և աուդիտորներն ունեն սույն օրենքով սահմանված նույն իրավունքներն ու պարտականությունները:

4. Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար չեն կարող նշանակվել այն անձինք, որոնք՝

1) պաշտոնի նշանակմանը նախորդող երկու տարվա ընթացքում կազմակերպությունում կամ կազմակերպության համակարգում զբաղեցրել են կառուցվածքային, այդ թվում՝ ինքնուրույն ստորաբաժանման ղեկավար պաշտոններ.

2) պաշտոնի նշանակման պահին կամ դրան նախորդող երկու տարվա ընթացքում կազմակերպության կամ կազմակերպության համակարգի կառուցվածքային, այդ թվում՝ ինքնուրույն ստորաբաժանման ղեկավար պաշտոններ զբաղեցրած պաշտոնատար անձանց փոխկապակցված անձինք են: Սույն օրենքի իմաստով՝

ա. փոխկապակցված անձինք են համարվում այն ֆիզիկական անձինք, ովքեր միևնույն ընտանիքի անդամ են կամ վարում են ընդհանուր տնտեսություն կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն,

բ. միևնույն ընտանիքի անդամ են համարվում երեխան, ամուսինը, ծնողը, քույրը, եղբայրը, պապը, տատը, թոռը, քրոջ, եղբոր ամուսինն ու երեխաները, ինչպես նաև ամուսնու երեխան, ծնողը, քույրը, եղբայրը, պապը, տատը, թոռը:

5. Մինչև ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի պաշտոնին նշանակվելը հավակնորդը ստորագրում և կազմակերպության ղեկավարին է փոխանցում սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված սահմանափակումների բացակության մասին գրավոր հայտարարություն:

6. Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարին և աուդիտորին պաշտոնի նշանակում կամ պաշտոնից ազատում, ինչպես նաև վերջիններիս նկատմամբ կարգապահական տույժ է կիրառում կազմակերպության ղեկավարը:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

« 1. Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և ներքին աուդիտորները պետական մարմիններում և տեղական ինքնակառավարման մարմիններում համապատասխանաբար քաղաքացիական կամ համայնքային ծառայողներ են, իսկ պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների ենթակա հիմնարկներում՝ պայմանագրային աշխատողներ, ովքեր ընդգրկված են սույն օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով նախատեսված ցանկում:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 2. Պետական պաշտոն զբաղեցրած անձի կենսաթոշակային ապահովությունը և այլ սոցիալական երաշխիքները

1. Սույն օրենքով սահմանված կենսաթոշակի իրավունք ունի՝

1) ***(կետն ուժը կորցրել է 04.03.15 ՀՕ-14-Ն)***

2) Սահմանադրական դատարանի դատավորը՝

ա. «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով լիազորությունների դադարման դեպքում՝ անկախ տարիքից,

բ. «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հիմքերով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով լիազորությունների դադարման կամ դադարեցման դեպքերում,

գ. «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում.

2.1) Ազգային ժողովի ընտրած Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոնում առնվազն հինգ տարի պաշտոնավարած անձը, որի լիազորությունները դադարել կամ դադարեցվել են համապատասխանաբար դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու կամ իր պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու հիմքով.

2.2) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Ազգային ժողովի ընտրած Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոնում պաշտոնավարած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

2.3) առնվազն մեկ ժամկետ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

3) դատավորի պաշտոնում առնվազն 10 տարի պաշտոնավարած անձը, որի լիազորությունները դադարեցվել կամ դադարել են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու կամ դատավորի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու հիմքերով.

4) դատախազի պաշտոնում առնվազն 10 տարի պաշտոնավարած անձը, որը պաշտոնից ազատվել է «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու կամ դատախազի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու հիմքերով.

5) ~~հատուկ քննչական ծառայությունում առնվազն 10 տարի ծառայած ծառայողը~~ **հատուկ քննչական ծառայությունում առնվազն 10 տարի ինքնավար պաշտոն զբաղեցրած անձը**, որը պաշտոնից ազատվել է «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերով սահմանված հիմքերով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով.

5.1) ~~Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում առնվազն 10 տարի ծառայած ծառայողը~~ **Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում առնվազն 10 տարի ինքնավար պաշտոն զբաղեցրած անձը**, որի լիազորությունները դադարել են «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերով սահմանված հիմքերով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով.

6) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնը զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

7) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոն զբաղեցրած կամ հինգ տարի Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավորի պաշտոն զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

7.1) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի նախագահի պաշտոնն զբաղեցրած կամ վեց տարի Ազգային ժողովի

վերահսկիչ պալատի նախագահի պաշտոնն զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

8) սույն օրենքի հավելված N 1-ով սահմանված պաշտոններում, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմինների ղեկավարի պաշտոնում առնվազն 10 տարի պաշտոնավարած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

9) Հանրապետության նախագահը, Ազգային ժողովի պատգամավորները, Կառավարության անդամները, Սահմանադրական դատարանի և այլ դատարանների դատավորները, Ազգային ժողովի ընտրած Բարձրագույն դատական խորհրդի անդամները, Մարդու իրավունքների պաշտպանը, Հաշվեքննիչ պալատի նախագահը, դատախազները, հատուկ քննչական ծառայության, քննչական կոմիտեի ծառայողները՝ իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս կամ դրանք կատարելու առնչությամբ ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչվելու դեպքում:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 9-րդ կետում նշված դեպքում պետական պաշտոն զբաղեցրած անձը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բժշկական կազմակերպություններում ապահովվում է բժշկական սպասարկմամբ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

3. Պետական պաշտոն զբաղեցրած անձը կենսաթոշակի իրավունք ունի, եթե չի զբաղեցնում հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն:

Հոդված 3. Պետական պաշտոն զբաղեցրած անձի ընտանիքի անդամների սոցիալական երաշխիքները պետական պաշտոն զբաղեցրած անձի մահանալու (զոհվելու) դեպքում

1. Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի պատգամավորի, Կառավարության անդամի, Սահմանադրական դատարանի և այլ դատարանների դատավորի, Ազգային ժողովի ընտրած Բարձրագույն դատական խորհրդի անդամի, Մարդու իրավունքների պաշտպանի, Հաշվեքննիչ պալատի նախագահի, դատախազի, ~~հատուկ քննչական ծառայության ծառայողի, քննչական կոմիտեի ծառայողի~~ **հատուկ քննչական ծառայությունում, քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձի** կողմից իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս կամ դրանք կատարելու առնչությամբ ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով մահանալու (զոհվելու) դեպքում՝

1) նրա հուղարկավորությունը կազմակերպած անձին վճարվում է հուղարկավորության նպաստ,

2) նրա ընտանիքին տրվում է միանվագ դրամական օգնություն,

3) նրա ընտանիքի՝ «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեցող անդամներին նշանակվում և վճարվում է կենսաթոշակ:

2. Միանվագ դրամական օգնություն, հուղարկավորության նպաստ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, նշանակելու և վճարելու կարգը, հուղարկավորության նպաստի չափը, միանվագ դրամական օգնության չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 9. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը, պաշտոնատար անձին (պաշտոնատար անձի ընտանիքի անդամին) նշանակված կենսաթոշակները հաշվարկվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո սահմանված կարգով: Եթե հաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը նշանակված (հաշվարկված) կենսաթոշակի չափից, ապա կենսաթոշակը շարունակվում է վճարվել նախկին չափով:

2. 1999 թվականի հոկտեմբերի 27-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի շենքում տեղի ունեցած ոճրագործության հետևանքով զոհվածների այրիներին և ծնողներին նշանակված կենսաթոշակը շարունակվում է վճարվել՝ անկախ նրանց տարիքից և Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված այլ պետական կենսաթոշակ ստանալու իրավունք ունենալու հանգամանքից: Կենսաթոշակի իրենց բաժնեմասն առանձնացնելիս զոհվածների այրիներին վճարվում է նշանակված կենսաթոշակի 70 տոկոսը:

Սույն մասում նշված՝ կենսաթոշակն ստացող անձի մահվան դեպքում կենսաթոշակը շարունակվում է վճարվել զոհվածի ընտանիքի՝ «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեցող մյուս անդամին՝ նրա դիմումի հիման վրա՝ հաշվի առնելով սույն հոդվածի 1-ին մասի դրույթները: Ընդ որում, այս դեպքում զոհվածի այրուն և ծնողին կենսաթոշակը շարունակվում է վճարվել՝ անկախ նրանց տարիքից և Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված այլ պետական կենսաթոշակ ստանալու իրավունք ունենալու հանգամանքից:

3. 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու դեպքում կենսաթոշակ է նշանակվում նաև՝

1) «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերով դատախազի պաշտոնից ազատված անձին, եթե նա ծնվել է մինչև 1974 թվականի հունվարի 1-ը.

2) «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված հիմքերով ~~հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոնից ազատված անձին~~ **հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոնից ազատված անձին**:

Սույն մասով սահմանված մասնագիտական աշխատանքային ստաժում օրացուցային հաշվարկով հաշվառվում են Հայաստանի Հանրապետությունում դատախազի (մինչև 2007 թվականի դեկտեմբերի 1-ը՝ դատախազի տեղակալի, դատախազի օգնականի և դատախազության գիտաուսումնական հաստատությունների՝ դասային աստիճան շնորհված աշխատողների), Հայաստանի Հանրապետության ոստիկանության քննիչի, պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի քննիչի, ազգային անվտանգության մարմիններում քննիչի (ներառյալ՝ մինչև 2007 թվականի դեկտեմբերի 1-ը՝ դատախազության քննիչի, քննչական վարչության, բաժնի կամ բաժանմունքի պետի, պետի տեղակալի), ~~հատուկ քննչական ծառայության ծառայողի~~ **հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնելու**, ԽՍՀՄ դատախազության համակարգում դատախազի և քննիչի պաշտոնում աշխատած ժամանակահատվածը,

Հայաստանի Հանրապետությունում և ԽՍՀՄ-ում դատավորի պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածը, ինչպես նաև պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ժամանակահատվածը:

Սույն մասով սահմանված կենսաթոշակի չափը հաշվարկվում է հաշվարկային աշխատավարձի 70 տոկոսի չափով. 20 տարուց ավելի մասնագիտական աշխատանքային ստաժի յուրաքանչյուր լրիվ տարվա համար կենսաթոշակին ավելանում է հաշվարկային աշխատավարձի 2 տոկոսը, իսկ մինչև դատախազի պաշտոն զբաղեցնելը աշխատած և մասնագիտական աշխատանքային ստաժում չհաշվառվող յուրաքանչյուր տարվա համար՝ մեկ տոկոսը: Սույն մասով սահմանված կենսաթոշակի չափը չի կարող գերազանցել հաշվարկային աշխատավարձի չափը:

Դատախազի պաշտոն զբաղեցրած անձի հաշվարկային աշխատավարձի չափը որոշվում է դատախազի զբաղեցրած վերջին պաշտոնի համար մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի և դատախազի, դատավորի, դատախազության քննիչի պաշտոնում աշխատած տարիների համար տրվող հավելավճարի հանրագումարի) 90 տոկոսի չափով՝ հաշվի առնելով վերջին պաշտոնը, դասային աստիճանը և դատախազի, դատավորի, դատախազության քննիչի պաշտոնում աշխատած տարիները դատախազի պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ:

Հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոն զբաղեցրած անձի հաշվարկային աշխատավարձի չափը որոշվում է հատուկ քննչական ծառայության ծառայողի զբաղեցրած վերջին պաշտոնի համար մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի, դասային աստիճանի համար տրվող հավելման և հատուկ քննչական ծառայության ծառայողի, դատախազի կամ քննիչի պաշտոնում աշխատած տարիների համար տրվող հավելման հանրագումարի) և այդ գումարից հաշվարկված եկամտային հարկի տարբերության չափով՝ հաշվի առնելով վերջին պաշտոնը, դասային աստիճանը և հատուկ քննչական ծառայության ծառայողի, դատախազի կամ քննիչի պաշտոնում աշխատած տարիները հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ:

Հաշվարկային աշխատավարձը հաշվարկելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ սահմանադրական դատարանի անդամի պաշտոն զբաղեցրած անձի կենսաթոշակի չափը հաշվարկվում է «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու դեպքում կենսաթոշակ է նշանակվում նաև սույն մասի 1-ին և 2-րդ կետերում նշված այն անձանց, որոնք դատախազի կամ հատուկ քննչական ծառայության ծառայողի **(հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոնում)** պաշտոնում նշանակվել են մինչև 2017 թվականի հունիսի 1-ը՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն քննչական կոմիտեի ծառայողի պաշտոն զբաղեցնելուց հետո:

4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի անդամին, դատավորին, դատախազին, ~~հատուկ~~

~~քննչական ծառայության ծառայողին~~ **հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնողին (հատուկ քննչական ծառայության ծառայողին)** Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը նշանակված կենսաթոշակները, սույն օրենքի 9-րդ հոդվածով նշանակված կենսաթոշակները համարվում են սույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն նշանակված կենսաթոշակներ և հաշվարկվում են սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով՝ հաշվի առնելով հիմնական կենսաթոշակի չափը, «Պետական պաշտոններ **և պետական ծառայության պաշտոններ** զբաղեցնող անձանցվարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով անձի զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված գործակիցը և մասնագիտական ստաժի մեկ տարվա արժեքը:

Եթե հաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է նախկին (սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված) չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին (սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված) չափով:

5. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի և 6-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները չեն տարածվում այն դեպքերի վրա, երբ սույն օրենքով սահմանված կենսաթոշակը նշանակվել է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը, կամ դատախազի, ~~հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոն զբաղեցրած անձին~~ **հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձին** կենսաթոշակ է նշանակվել սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերով:

Սույն մասով սահմանված դեպքերում կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է, եթե պետական պաշտոն զբաղեցրած անձը կենսաթոշակ նշանակվելուց հետո անցել է զինվորական ծառայության, նշանակվել է քրեակատարողական ծառայողի, դատական ակտերի հարկադիր կատարողի, դատախազի, ~~քննչական կոմիտեի ծառայողի, հատուկ քննչական ծառայության ծառայողի կամ դատավորի պաշտոնում~~ **դատավորի պաշտոնում կամ ինքնավար պաշտոնի է նշանակվել քննչական կոմիտեում, հատուկ քննչական ծառայությունում**:

6. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը չի տարածվում այն անձանց վրա, որոնք սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առնվազն 10 տարի պաշտոնավարել են դատավորի պաշտոնում:

Սույն մասով նախատեսված անձանց՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու կամ դատավորի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու հիմքերով դատավորի լիազորությունների դադարեցման դեպքերում նշանակվող կենսաթոշակի չափը հաշվարկվում է դատավորի զբաղեցրած վերջին պաշտոնի համար մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարի հանրագումարի) գումարի և զրո ամբողջ ինը տասնորդական գործակցի արտադրյալի 55 տոկոսի չափով:

Եթե սույն մասով սահմանված կարգով հաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով հաշվարկվող կենսաթոշակի չափից, ապա կենսաթոշակը նշանակվում է սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով: Սույն մասով սահմանված կարգով հաշվարկված կենսաթոշակի չափը չի կարող գերազանցել

որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող օրենսդրությամբ սահմանված պաշտոնային դրույքաչափի 92 տոկոսը:

Սույն մասում նշված աշխատավարձը հաշվարկելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7. 2014 թվականի հուլիսի 1-ից հետո դատավորի պաշտոն զբաղեցրած անձին մինչև 2018 թվականի ապրիլի 9-ը նշանակված կենսաթոշակը վերահաշվարկվում է 2018 թվականի մարտի 1-ից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ հաշվի առնելով որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձը (պաշտոնային դրույքաչափի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարի հանրագումարը):

8. Եթե Օրենքով սահմանված կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվել է վճարովի աշխատանք կատարելու հիմքով (բացառությամբ այն դեպքերի, երբ անձն զբաղեցնում է հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն), ապա կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվում է կենսաթոշակառուի դիմումի հիման վրա՝ Օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն: Եթե սույն մասում նշված՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու դիմումը ներկայացվում է մինչև 2018 թվականի դեկտեմբերը 30-ը, ապա կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվում է (չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է) 2018 թվականի մարտի 1-ից:

9. Մինչև նորընտիր Հանրապետության նախագահի կողմից պաշտոնի ստանձնման օրը պաշտոնաթող Հանրապետության նախագահներին Կառավարության որոշմամբ տրամադրվում են «Հայաստանի Հանրապետության նախագահի վարձատրության, սպասարկման և անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված համապատասխան երաշխիքները:

10. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ և 9-րդ կետերով և 3-րդ հոդվածով նախատեսված երաշխիքները կիրառվում են նաև մինչև նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը պաշտոնաթող Վերահսկիչ պալատի նախագահների նկատմամբ:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2003 թվականի ապրիլի 11-ին

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 19. Ազգային անվտանգության մարմինների ծառայողին պաշտոնի նշանակելու պայմանները

1. Պետական լիազոր մարմնի ղեկավար կարող է նշանակվել ազգային անվտանգության մարմինների այն ծառայողը, ով մինչև նշանակումն զբաղեցրել է ազգային անվտանգության մարմինների ծառայողների բարձրագույն խմբի պաշտոն կամ առնվազն 3 տարի զբաղեցրել է գլխավոր խմբի պաշտոն և ունի գնդապետից ոչ ցածր կոչում:

2. Պետական լիազոր մարմնի ղեկավարի տեղակալ կարող է նշանակվել ազգային անվտանգության մարմինների այն ծառայողը, ով մինչև նշանակումն զբաղեցրել է ազգային անվտանգության մարմինների ծառայողների բարձրագույն խմբի պաշտոն կամ մինչև նշանակումը առնվազն 3 տարի զբաղեցրել է ազգային անվտանգության մարմինների ծառայողների գլխավոր խմբի պաշտոն և ունի գնդապետից ոչ ցածր կոչում:

3. Ազգային անվտանգության մարմինների ծառայողների գլխավոր խմբի պաշտոններում ատեստավորման արդյունքում կարող են նշանակվել այն ծառայողները, ովքեր մինչև նշանակումը վերջին մեկ տարին զբաղեցրել են ազգային անվտանգության մարմինների ծառայողների գլխավոր խմբի այլ պաշտոն կամ մինչև նշանակումը վերջին

երեք տարին զբաղեցրել են ազգային անվտանգության մարմինների ծառայողների ավագ խմբի որևէ պաշտոն:

Ազգային անվտանգության մարմինների ծառայողների գլխավոր խմբի պաշտոններում կարող է նշանակվել նաև ազգային անվտանգության մարմինների ծառայողների բարձրագույն խմբի պաշտոն զբաղեցրած ծառայողը:

4. Ազգային անվտանգության մարմինների ծառայողների ավագ և միջին խմբերի պաշտոններում ծառայողների առաջխաղացումը կատարվում է ատեստավորման արդյունքում՝ տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո:

5. Ազգային անվտանգության մարմինների ծառայողների կրտսեր խմբի պաշտոններում նշանակումները կատարվում են առանց ատեստավորման:

6. Ազգային անվտանգության մարմինների ծառայողների ավագ և միջին խմբերի պաշտոններում նշանակումը կատարվում է միմիայն բարձրագույն կրթության առկայության դեպքում:

Ազգային անվտանգության մարմինների ծառայողների կրտսեր խմբերի պաշտոններում նշանակումը կատարվում է առնվազն միջնակարգ կրթության առկայության դեպքում:

6.1. Պետական լիազոր մարմնում թափուր պաշտոն առաջանալու դեպքում ծառայության կարող են նշանակվել նաև զինված ուժերի, ոստիկանության, ~~Հարկադիր կատարումն ապահովող~~ **փրկարար** ծառայության, քրեակատարողական ծառայության մարմինների~~, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության և արդարադատության նախարարության պետական~~ ծառայողներ, դատախազներ, **քննչական կոմիտեում, հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք (այդ թվում՝ նշված մարմիններում և պաշտոններում նախկինում ծառայած կամ աշխատած անձինք)**, ինչպես նաև ազգային անվտանգության մարմինների պահեստազորի սպաներ, որոնք բավարարում են տվյալ պաշտոնին նշանակվելու համար ազգային անվտանգության մարմինների ծառայողներին ներկայացվող պահանջները:

6.2. Սույն հոդվածի 6.1-րդ մասով նախատեսված պետական մարմինների և ազգային անվտանգության ծառայության պաշտոնների համապատասխանությունը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7. Ազգային անվտանգության մարմիններում ծառայողը կարող է նշանակվել առաջին պաշտոնի, բարձր պաշտոնի, հավասար պաշտոնի և ցածր պաշտոնի:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2016 թվականի մայիսի 25-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Հոդված 23. Նախընտրական քարոզչության սահմանափակումները
(վերնագիրը փոփ. 30.06.16 ՀՕ-119-Ն, խմբ. 04.05.18 ՀՕ-318-Ն)

1. Արգելվում է նախընտրական քարոզչություն կատարելը, ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելը, նախընտրական քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցները, տարածքները, տրանսպորտային և կապի միջոցները, նյութական ու մարդկային ռեսուրսները, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների, օգտագործելը՝

1) հանրային ծառայողներին, առողջապահական կամ բժշկական կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողներին իրենց լիազորություններն իրականացնելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս.

2) պետական հիմնարկների կամ կազմակերպությունների, համայնքային հիմնարկների կամ կազմակերպությունների, կանոնադրական կապիտալում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների 20 և ավելի տոկոս մասնակցությամբ կազմակերպությունների աշխատակիցներին իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս.

3) դատավորներին, դատախազներին, ~~քննչական մարմիններում,~~ ոստիկանությունում, ազգային անվտանգության ծառայությունում, քրեակատարողական հիմնարկներում, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում, պրոբացիոն ծառայությունում, փրկարար ծառայությունում ծառայողներին, զինծառայողներին, **քննչական մարմիններում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց**.

4) ընտրական հանձնաժողովների անդամներին.

5) բարեգործական և կրոնական կազմակերպություններին, միջազգային կազմակերպություններին.

6) օտարերկրյա քաղաքացիներին և կազմակերպություններին, քաղաքացիություն չունեցող անձանց, բացառությամբ սույն օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված անձանց.

7) Մարդու իրավունքների պաշտպանին.

8) Կենտրոնական բանկի խորհրդի անդամներին.

9) Հաշվեքննիչ պալատի անդամներին.

10) Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներին.

11) ինքնավար մարմինների անդամներին:

2. Ազգային ժողովի պատգամավորին և անմիջականորեն ընտրողների կողմից ընտրված համայնքների ղեկավարներին և ավագանու անդամներին չի արգելվում քարոզչություն կատարելը կամ քարոզչական նյութ տարածելը՝ բացառելով սույն հոդվածի 1-ին մասում նշված վարչական ռեսուրսների օգտագործումը:

3. Հանրային ծառայող հանդիսացող թեկնածուները, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուները նախընտրական քարոզչությունն իրականացնում են հետևյալ սահմանափակումների հաշվառմամբ.

1) արգելվում է թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցությանը, կողմ կամ դեմ քվեարկելուն ուղղված ուղղակի կամ անուղղակի կոչերը պաշտոնեական լիազորություններն իրականացնելիս կամ պաշտոնեական դիրքի ցանկացած չարաշահումը՝ ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու համար.

2) արգելվում է նախընտրական քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցների, տարածքների, տրանսպորտային և կապի միջոցների, նյութական ու մարդկային ռեսուրսների օգտագործումը, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների:

4. Եթե իրականացվում է ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակում ընդգրկված՝ սույն հոդվածի 3-րդ մասում նշված թեկնածուի այլ գործունեության լուսաբանում, ապա վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող զանգվածային լրատվության միջոցն այն հաշվի է առնում մյուս թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների գործունեությունը լուսաբանելիս՝ սույն

օրենսգրքի 20-րդ հոդվածով սահմանված լուսաբանման հավասարության ոչ խտրական սկզբունքը պահպանելու համար:

Հոդված 24. Ընտրությունների կազմակերպման և անցկացման ֆինանսավորումը

1. Ընտրությունների կազմակերպման և անցկացման (ներառյալ՝ ընտրողների ցուցակները կազմելը, ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացները կազմակերպելը), ինչպես նաև ընտրական հանձնաժողովների գործունեության համար անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեի միջոցների հաշվին: Այդ ծախսերը նախատեսվում են պետական բյուջեում առանձին հոդվածով և պետության կարիքների համար գնումների պլանում ներառվում մեկ տողով:

Ընտրությունների կազմակերպման և անցկացման համար հատկացված ֆինանսական միջոցների հաշվին գնումներ կատարելիս գնման ընթացակարգը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

2. Արտահերթ, նոր հերթական, նոր ընտրությունների, վերաքվեարկությունների, ինչպես նաև Ազգային ժողովի ընտրության երկրորդ փուլի անցկացման դեպքում ընտրությունները ֆինանսավորվում են պետական բյուջեի պահուստային ֆոնդից, իսկ դրա անհնարինության դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովն օգտագործում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ ընտրական գրավների հատուկ հաշվեհամարում առկա միջոցները: Եթե ընտրական գրավների հատուկ հաշվեհամարում առկա միջոցները բավարար չեն, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մրցութային հիմունքներով կարող է վարկ ստանալ մասնավոր բանկերից: Այդ դեպքում օրենքի ուժով համարվում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը այդ գումարի չափով, ներառյալ՝ վարկի սպասարկման գումարը, բանկերին տրամադրել է 3 տարի ժամկետով բյուջետային երաշխիք՝ առանց ապահովման միջոցի: Ընտրական գրավների հատուկ հաշվեհամարից օգտագործված միջոցները և վարկը կառավարությունը եռամյա ժամկետում փոխհատուցում է:

3. Ընտրությունների կազմակերպման և անցկացման համար նախատեսված ֆինանսական միջոցները (այդ թվում՝ հանձնաժողովների պահպանման համար նախատեսված միջոցները) հատկացվում են ~~«Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին~~ **Կենտրոնական ընտրական հանձնաժողով պետական մարմնին**: ~~«Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը~~ **«Կենտրոնական ընտրական հանձնաժողով պետական մարմինը»** սույն օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է ֆինանսական միջոցները և պատասխանատու է այդ միջոցները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած նախահաշիվներին համապատասխան օգտագործելու համար:

Հոդված 29. Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը

1. Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունն իրականացնում է նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների, ծախսերի և դրանց հաշվարկման, ինչպես նաև կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ

վերահսկողություն: Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը գործում է ընտրական հանձնաժողովներից անկախ և հաշվետու չէ նրանց:

2. Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավարի պաշտոնը~~ քաղաքացիական պաշտոն է~~ **ինքնավար պաշտոն է**, ծառայության մյուս երկու աշխատակիցները քաղաքացիական ծառայողներ են: Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավարը նշանակվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ՝ 7 տարի ժամկետով: Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավարի պաշտոնային դրույքաչափը սահմանվում է «Պետական պաշտոններ **և պետական ծառայության պաշտոններ** զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Ծառայության ղեկավարը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ:

3. Նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովելու նպատակով Ազգային ժողովի ընտրությունները նշանակվելուց հետո՝ տասնօրյա ժամկետում, Ազգային ժողովի յուրաքանչյուր խմբակցություն վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունում կարող է նշանակել Հայաստանի Հանրապետությունում աուդիտորի որակավորում ստացած ընտրական իրավունք ունեցող մեկ աուդիտորի: Ազգային ժողովի խմբակցությունների՝ վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունում նշանակած աուդիտորները վարձատրվում են երկու ամսվա համար, յուրաքանչյուր ամսվա համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի եռապատիկի չափով: Նրանց գործունեությունն ավարտվում է ընտրությունների արդյունքների հրապարակումից հետո՝ 5-րդ օրը:

4. Ազգային ժողովի, Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանիների և տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների ժամանակ վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունում մինչև մեկ ամիս ժամկետով պայմանագրային հիմունքներով կարող են ընդգրկվել մինչև 5 մասնագետ:

5. Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը ստանալուց հետո՝ 7 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան ընտրության արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից մեկ օր առաջ ստուգում, ստուգման արդյունքներով կազմում է եզրակացություն և ներկայացնում Կենտրոնական ընտրական հանձնաժողով: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարտավոր է այն անհապաղ հրապարակել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում: Եզրակացության մեջ խախտումներ արձանագրված լինելու դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարտավոր է քննարկել այն: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի այդ նիստին հրավիրվում է վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ներկայացուցիչը:

6. Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության լիազորություններն են՝

1) ստանալ համապատասխան տեղեկություններ, տեղեկանքներ, փաստաթղթերի պատճեններ՝ թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ այն բանկերից, որտեղ նախընտրական հիմնադրամներ ձևավորելու համար բացվել են ժամանակավոր հատուկ հաշվեհամարներ.

2) բանկերից, կուսակցություններից և ապրանքներ մատակարարող, ծառայություններ մատուցող կամ աշխատանքներ կատարող այլ կազմակերպություններից ստանալ համապատասխան տեղեկություններ, տեղեկանքներ, փաստաթղթերի պատճեններ՝

կուսակցությանը վճարված անդամակցության վճարների, կուսակցությանը կատարված նվիրատվությունների, բյուջետային ֆինանսավորման, քաղաքացիական իրավական գործարքներից ստացված դրամական միջոցների և օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերի և ծախսերի վերաբերյալ.

3) իր գործունեությանն առնչվող հարցերի վերաբերյալ նախապատրաստել որոշումների նախագծեր և դրանք ներկայացնել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի քննարկմանը:

7. Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության գործունեության կարգը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ սույն օրենսգրքի և «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

Հոդված 33. Վստահված անձի կարգավիճակը

1. Ընտրություններին մասնակցող կուսակցություններն ընտրական ցուցակները գրանցելուց, իսկ թեկնածուները՝ գրանցվելուց հետո ընտրական հանձնաժողովներում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների հետ փոխհարաբերություններում իրենց շահերը պաշտպանելու նպատակով կարող են ունենալ վստահված անձինք: Վստահված անձ կարող են լինել միայն ընտրական իրավունք ունեցող անձինք:

2. Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի (բացառությամբ Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանու անդամների) թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակները գրանցելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, գրանցում իրականացրած ընտրական հանձնաժողովը թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցչին տալիս է կազմավորված ընտրական տեղամասերի թվի եռապատիկին հավասար թվով վստահված անձանց վկայականներ: Համապատասխան հանձնաժողովը վկայականում նշում է ընտրություններին մասնակցող կուսակցության անվանումը, համայնքի ղեկավարի, ավագանու անդամի թեկնածուի անունը, հայրանունը, ազգանունը: Թեկնածուն կամ նրա լիազոր ներկայացուցիչը կամ ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցիչը վկայականները լրացնում և տրամադրում է վստահված անձանց:

3. Վստահված անձ չեն կարող լինել դատավորները, դատախազները, ~~քննչական մարմիններում ծառայողները~~ **քննչական մարմիններում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք**, ոստիկանությունում, ազգային անվտանգության ծառայությունում, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում, քրեակատարողական ծառայությունում, պրոբացիայի ծառայությունում, փրկարար ծառայությունում ծառայողները, զինծառայողները, դիտորդները, թեկնածուները, ընտրական հանձնաժողովների անդամները:

Հոդված 40. Ընտրական հանձնաժողովների ֆինանսավորումը, ընտրական հանձնաժողովների անդամների վարձատրությունը

1. Ընտրական հանձնաժողովների ֆինանսավորումը և ընտրական հանձնաժողովների անդամների վարձատրությունը կատարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին՝ «Պետական պաշտոններ **և պետական ծառայության պաշտոններ** զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն հոդվածով

սահմանված կարգով: Ընտրական վարչարարության բարձրացմանն ու ընտրական հանձնաժողովների տեխնիկական վերազինմանն ուղղված ծրագրերի իրականացման համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կարող է ունենալ նաև արտաբյուջետային հաշիվ:

2. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների պաշտոնային դրույքաչափերը սահմանվում են «Պետական պաշտոններ **և պետական ծառայության պաշտոններ** զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

3. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, հանձնաժողովի քարտուղարին կամ անդամին վարձատրություն չի տրվում, եթե նա չի ստորագրել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունը, կամ եթե նրա լիազորությունները վաղաժամկետ դադարել են:

4. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ ընտրական գրավների հատուկ հաշվեհամարում առկա միջոցների մինչև 30 տոկոսը՝ յուրաքանչյուր տարվա համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ հաստատված նախահաշվին համապատասխան, կարող է օգտագործվել ընտրական վարչարարության փորձի ուսումնասիրման, ընտրական վարչարարության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացման, ընտրական հանձնաժողովների տեխնիկական վերազինման և ընտրական օրենսդրությանը վերաբերող նյութերի պատրաստման և հրատարակման համար:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ ընտրական գրավների հատուկ հաշվեհամարում մնացած մյուս միջոցները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ կարող են օգտագործվել ընտրական հանձնաժողովների տեխնիկական վերազինման և ընտրական օրենսդրությանը վերաբերող նյութերի պատրաստման և հրատարակման համար:

Հոդված 41. Ընտրական հանձնաժողովներ կազմավորելու հիմունքները

1. Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովների կազմում կարող են ընդգրկվել սույն օրենսգրքի՝ համապատասխանաբար 42-րդ և 43-րդ հոդվածների պահանջներին համապատասխանող ընտրական իրավունք ունեցող քաղաքացիները:

2. Ընտրական հանձնաժողովի անդամ չեն կարող լինել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149-154.6-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների, ինչպես նաև դիտավորությամբ կատարված միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների համար դատվածություն ունեցող անձինք: Տարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամ չեն կարող լինել Ազգային ժողովի պատգամավորները, նախարարները և նրանց տեղակալները, համայնքների ղեկավարները, մարզպետները և նրանց տեղակալները, դատավորները, դատախազները, ~~քննչական մարմիններում ծառայողները~~ **քննչական մարմիններում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք**, ոստիկանությունում, ազգային անվտանգության, դատական ակտերի հարկադիր կատարման, քրեակատարողական, պրոբացիայի, փրկարար ծառայություններում ծառայողները, զինծառայողները, վստահված անձինք, ընտրություններին մասնակցող կուսակցության, համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուի լիազոր ներկայացուցիչները, դիտորդները,

թեկնածուները: Տարածքային ընտրական հանձնաժողովների անդամ չեն կարող լինել նաև ավագանու անդամները:

3. Տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել ընտրական իրավունք ունեցող և ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայական ունեցող անձինք: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի և քարտուղարի համար կարող է սահմանել որակավորման ավելի բարձր չափանիշներ, քան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների համար:

4. Տարածքային ընտրական հանձնաժողովների կազմավորումից հետո Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրականացնում է այդ հանձնաժողովների անդամների ուսուցումը:

5. Ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար կազմակերպում և անցկացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ իր սահմանած կարգին համապատասխան: Դասընթացները կազմակերպվում են Երևանում և մարզերում տարին առնվազն մեկ անգամ՝ քաղաքացիների դիմումների, կուսակցությունների ներկայացրած ցուցակների հիման վրա: Ներկայացված ցուցակներում ընդգրկված, ինչպես նաև դիմում ներկայացրած անձինք մասնակցում են մասնագիտական դասընթացներին՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նախապես հրապարակված գրաֆիկին (օր, ժամ, վայր) համապատասխան: Նշված անձինք կարող են մասնակցել ստուգարքին՝ անկախ դասընթացին մասնակցելու հանգամանքից՝ հրապարակված գրաֆիկին համապատասխան: Որակավորման վկայականները տրվում են ստուգարքի հիման վրա: Ստուգարքն անցկացվում է համակարգչային կամ թեստային ստանդարտ եղանակով: Դասընթացների, ստուգարքի ընթացքին կարող են հետևել զանգվածային լրատվության միջոցների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

6. Քաղաքացին միաժամանակ կարող է ընդգրկվել միայն մեկ ընտրական հանձնաժողովի կազմում, բացառությամբ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի համար սույն մասով սահմանված դեպքի:

Քաղաքացին կարող է լինել միաժամանակ մեկից ավելի տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամ, եթե սահմանված են ընտրությունների քվեարկության անցկացման տարբեր օրեր:

7. Ընտրական հանձնաժողովների կազմերի վերաբերյալ տեղեկությունները հրապարակվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով:

Հոդված 42. Կենտրոնական ընտրական հանձնաժողով կազմավորելու կարգը

1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմված է յոթ անդամից:

2. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին և մյուս անդամներին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն 3/5-ով՝ 6 տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ, ներառյալ՝ հանձնաժողովի նախագահը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է պակաս լինի երկուսից:

3. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ կարող է ընտրվել պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող յուրաքանչյուր ոք, ով ունի՝

1) բարձրագույն իրավաբանական կրթություն և վերջին 5 տարում առնվազն 3 տարվա մասնագիտական ստաժ.

2) իրավունքի ոլորտում գիտական աստիճան և վերջին 5 տարում առնվազն երկու տարվա մասնագիտական ստաժ.

3) բարձրագույն կրթություն և վերջին 10 տարում պետական մարմիններում առնվազն 5 տարվա հանրային ծառայության աշխատանքային ստաժ կամ

4) բարձրագույն կրթություն և վերջին 5 տարում մշտապես գործող ընտրական հանձնաժողովում 3 տարվա աշխատանքային փորձ կամ ~~հանձնաժողովի աշխատակազմում~~ **Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կառուցվածքում** առնվազն 3 տարվա աշխատանքային ստաժ:

4. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունների ավարտի ժամկետի մասին Ազգային ժողովի նախագահին տեղեկացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունների ավարտից ոչ ուշ, քան 60 օր առաջ:

5. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը և անդամներն ընտրվում են «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Ընտրությունն անցկացվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի կամ անդամի լիազորությունների՝

1) ավարտից ոչ շուտ, քան երեք ամիս առաջ, և ոչ ուշ, քան մեկ օր առաջ: Այդ դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նորընտիր նախագահը կամ անդամն իր պաշտոնը ստանձնում է համապատասխանաբար՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի կամ անդամի լիազորությունների ավարտման օրը.

2) դադարման կամ դադարեցման դեպքում՝ համապատասխան պաշտոնը թափուր մնալուց հետո՝ եռամսյա ժամկետում:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում Ազգային ժողովի կողմից Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ կամ անդամ չընտրվելու դեպքում Հանրապետության նախագահը, խորհրդակցելով խորհրդարանական խմբակցությունների հետ, հնգօրյա ժամկետում նշանակում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի կամ անդամի ժամանակավոր պաշտոնակատար: Պաշտոնակատարը պաշտոնավարում է մինչև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ կամ անդամ ընտրելը:

7. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի կամ անդամի հրաժարականի դիմում ներկայացնելու դեպքում թափուր տեղը համալրվում է ոչ ուշ, քան 30-օրյա ժամկետում՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման դեպքում հանձնաժողովի նոր անդամն ընտրվում է 6 տարի ժամկետով:

8. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունները Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն 3/5-ով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով դադարեցնում է անհամատեղելիության պահանջները խախտելու, որևէ կուսակցության անդամագրվելու, որևէ այլ կերպ քաղաքական գործունեությամբ զբաղվելու, հրապարակային ելույթներում քաղաքական զսպվածություն չցուցաբերելու դեպքում:

9. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալի և հանձնաժողովի քարտուղարի թեկնածուների առաջադրման իրավունքը պատկանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներին:

10. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը և քարտուղարն ընտրվում են բաց քվեարկությամբ:

Եթե Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալի կամ քարտուղարի պաշտոնի համար քվեարկվել է մեկ թեկնածու, ապա նա ընտրվում է, եթե ստացել է քվեարկության մասնակիցների ձայների կեսից ավելին: Եթե Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալի կամ քարտուղարի պաշտոնի համար քվեարկվել է մեկից ավելի թեկնածու, ապա ընտրվում է առավել թվով կողմ ձայներ ստացած թեկնածուն: Ձայների հավասարության դեպքում առավել թվով կողմ ձայներ ստացած թեկնածուների միջև անցկացվում է վիճակահանություն:

Հոդված 43. Տարածքային ընտրական հանձնաժողով կազմավորելու կարգը

1. Տարածքային ընտրական հանձնաժողովը կազմված է 7 անդամից: Տարածքային ընտրական հանձնաժողովը կազմավորվում է 6 տարի ժամկետով: Տարածքային ընտրական հանձնաժողովի անդամներին նշանակում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մինչև տարածքային ընտրական հանձնաժողովի լիազորությունների ավարտը:

2. Տարածքային ընտրական հանձնաժողովի կազմում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է պակաս լինի երկուսից:

3. Տարածքային ընտրական հանձնաժողովների կազմում ընդգրկվելու համար կարող է դիմել ընտրական իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որը հրապարակային քաղաքական գործունեություն չի ծավալում և ունի՝

1) բարձրագույն իրավաբանական կրթություն և վերջին 5 տարում առնվազն 2 տարվա մասնագիտական ստաժ.

2) իրավունքի ոլորտում գիտական աստիճան և վերջին 4 տարում առնվազն մեկ տարվա մասնագիտական ստաժ.

3) բարձրագույն կրթություն և վերջին 6 տարում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ պետական ոչ առևտրային կազմակերպություններում համապատասխանաբար պետական ծառայության կամ համայնքային ծառայության կամ ղեկավար պաշտոնում աշխատանքի առնվազն 3 տարվա աշխատանքային ստաժ կամ

4) բարձրագույն կրթություն և վերջին 5 տարում մշտապես գործող ընտրական հանձնաժողովում 2 տարվա աշխատանքային փորձ կամ ~~հանձնաժողովի աշխատակազմում~~ **Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կառուցվածքում** առնվազն 2 տարվա աշխատանքային ստաժ:

4. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը տարածքային ընտրական հանձնաժողովների անդամների թեկնածուներին ընտրելու համար զանգվածային լրատվության միջոցներով հայտարարություն է տարածում քաղաքացիների դիմումների ներկայացման ժամկետների և տարածքային ընտրական հանձնաժողովի անդամին ներկայացվող պահանջների մասին: Դիմումի ձևը և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

5. Տարածքային ընտրական հանձնաժողովների անդամ կարող են նշանակվել այն քաղաքացիները, որոնք սահմանված ժամկետում Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են դիմում՝ տարածքային ընտրական հանձնաժողովների կազմում ընդգրկվելու համար, և որոնք համապատասխանում են սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջներին:

6. Եթե դա չի խախտի սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված տարբեր սեռերի հավասարության չափանիշը, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը միաձայն լինելու դեպքում կարող է՝

1) նշանակել տարածքային ընտրական հանձնաժողովի կազմն ամբողջությամբ.

2) նշանակել տարածքային ընտրական հանձնաժողովի կազմը մասնակի կամ

3) կրճատել քննարկման ենթակա թեկնածուների ցանկը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում տարածքային ընտրական հանձնաժողովի կազմի չձևավորված մասն ընտրում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ սույն օրենսգրքի 143-րդ հոդվածով սահմանված նախապատվության քվեակարգով:

8. Եթե տարածքային ընտրական հանձնաժողովի կազմում ընդգրկվելու համար դիմում ներկայացրած քաղաքացիների թիվը բավարար չէ հանձնաժողովի կազմավորման, այդ թվում՝ տարբեր սեռերի հավասարության չափանիշի պահպանման համար, ապա հանձնաժողովի անդամների թափուր տեղերը լրացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ անցած և որակավորման վկայականներ ստացած անձանցից:

9. Տարածքային ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման կամ դադարեցման դեպքում թափուր տեղը համալրում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը տարածքային ընտրական հանձնաժողովի կազմավորման համար սույն հոդվածով սահմանված կարգով՝ 21-օրյա ժամկետում:

10. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը տարածքային ընտրական հանձնաժողովների անդամներ նշանակելու մասին ընդունվում է տարածքային ընտրական հանձնաժողովի լիազորությունների ավարտման օրվանից ոչ ուշ, քան 14 օր առաջ:

11. Տարածքային ընտրական հանձնաժողովի առաջին նիստի օրը և ժամը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Տարածքային ընտրական հանձնաժողովի առաջին նիստը մինչև հանձնաժողովի նախագահի ընտրվելը վարում է հանձնաժողովի՝ տարիքով ավագ անդամը: Կազմավորված տարածքային ընտրական հանձնաժողովն իր լիազորություններն ստանձնում է գործող տարածքային ընտրական հանձնաժողովի լիազորությունների ավարտման օրը՝ ժամը 12.00-ին:

12. Տարածքային ընտրական հանձնաժողովների նախագահներին, հանձնաժողովների նախագահների տեղակալներին և հանձնաժողովների քարտուղարներին ընտրում են համապատասխան հանձնաժողովներն իրենց կազմերից՝ Կենտրոնական ընտրական

հանձնաժողովի նախագահի տեղակալի և քարտուղարի ընտրության համար սահմանված կարգով:

Հոդված 46. Ընտրական հանձնաժողովի աշխատանքների կազմակերպումը

1. Ընտրական հանձնաժողովի աշխատանքները ղեկավարում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա հանձնարարության կամ բացակայության դեպքում՝ նախագահի տեղակալը, տեղամասային ընտրական հանձնաժողովի դեպքում՝ հանձնաժողովի քարտուղարը:

2. Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովների նախագահները սահմանում են հերթական նիստերի անցկացման ժամանակացույցը: Տեղամասային ընտրական հանձնաժողովները հերթական նիստեր գումարում են սույն օրենսգրքով սահմանված ժամկետներում:

3. Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովի արտահերթ նիստ հրավիրում է հանձնաժողովի նախագահը՝ իր նախաձեռնությամբ կամ հանձնաժողովի անդամների առնվազն 1/3-ի գրավոր պահանջով նրանց նշած ժամկետում՝ այդ մասին կապի հնարավոր միջոցներով տեղեկացնելով հանձնաժողովի անդամներին: Տեղամասային ընտրական հանձնաժողովի արտահերթ նիստ հրավիրում է հանձնաժողովի նախագահը՝ տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի պահանջով:

4. Ընտրական հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի անդամը պարտավոր է մասնակցել քվեարկությանը: Որոշումն ընդունվում է, եթե կողմ է քվեարկել նիստին ներկա հանձնաժողովի անդամների թվի կեսից ավելին, բացառությամբ սույն օրենսգրքով սահմանված դեպքերի:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստի օրակարգում, հանձնաժողովի անդամներից բացի, հարցեր կարող են ներկայացնել վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավարը՝ ծառայությանը վերապահված իրավասության շրջանակներում, և հանձնաժողովի ~~աշխատակազմի ղեկավարը~~ **գլխավոր քարտուղարը**՝ ֆինանսատնտեսական հարցերի վերաբերյալ:

5. Ընտրության արդյունքների վերաբերյալ որոշում ընդունելիս ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

6. Ընտրական հանձնաժողովներն ստանում են վերադաս հանձնաժողովի կնքած գրանցամատյան՝ համարակալված էջերով:

Գրանցամատյանին ներկայացվող պահանջները, ինչպես նաև այն լրացնելու կարգը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

7. Գրանցամատյանում նշվում են նիստերին հանձնաժողովի անդամների մասնակցության, ինչպես նաև նիստերին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայության մասին: Այդ գրառման տակ ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

8. Ընտրական հանձնաժողովների անդամներն ընտրական հանձնաժողովների նիստերին, քվեարկության օրը քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք, մասնագետը (բացառությամբ քվեարկողների և տեղամասային կենտրոնում ծառայություն իրականացնող ոստիկանության ծառայողների) վերնազգեստի վրա պարտադիր կարգով տեսանելի ձևով կրում են ներկա գտնվելու իրավունքը

հավաստող վկայական: Հանձնաժողովի նախագահն արգելում է ընտրական հանձնաժողովներում, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև վերնազգեստի վրա առանց համապատասխան վկայականի անձանց ներկայությունն ընտրական հանձնաժողովում (քվեարկության սենյակում):

9. Ընտրական հանձնաժողովի անդամները պարտավոր են մասնակցել հանձնաժողովի նիստերին:

10. Ընտրական հանձնաժողովների որոշումների, արձանագրությունների, գրանցամատյանների գրառումների պատճենները և քաղվածքները (բացառությամբ վերահաշվարկի ժամանակ քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակներից քաղվածքների) կնքում և ստորագրում են հանձնաժողովի նախագահը և քարտուղարը: Տեղամասային ընտրական հանձնաժողովից ստացված փաստաթղթերը կնքվում են միայն քվեարկության օրը կամ քվեարկության հաջորդ օրը՝ մինչև կնիքը տարածքային ընտրական հանձնաժողովին հանձնելը:

Հոդված 82. Առաջադրման սահմանափակումները

1. Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու չեն կարող առաջադրվել դատավորները, դատախազները, ~~քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության ծառայողները,~~ ոստիկանությունում, ազգային անվտանգությունում, դատական ակտերի հարկադիր կատարման, փրկարարական, հարկային, մաքսային մարմիններում, քրեակատարողական ծառայությունում, պրոբացիայի ծառայությունում, փրկարար ծառայությունում ծառայողները, զինծառայողները, ընտրական հանձնաժողովների անդամները**, քննչական կոմիտեում, հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք**:

Հոդված 91. Պատգամավորի թեկնածուների կարգավիճակը

1. Պատգամավորի թեկնածուն իր կարգավիճակը ձեռք է բերում ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցման պահից:

Սույն օրենսգրքով սահմանված իրավունքները և պարտականությունները պատգամավորի թեկնածուի վրա տարածվում են մինչև Ազգային ժողով ընտրվելու մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշման վիճարկման համար սահմանված ժամկետի ավարտը, իսկ այդ որոշման վիճարկման դեպքում՝ մինչև սահմանադրական դատարանի որոշում ընդունելը:

Պատգամավորի թեկնածուն կորցնում է թեկնածուի կարգավիճակի հետ կապված իր իրավունքները և ազատվում է պարտականություններից նաև սույն օրենսգրքի 87-րդ կամ 88-րդ հոդվածով սահմանված դեպքերում՝ կուսակցության ընտրական ցուցակի կամ ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուի գրանցումը համապատասխանաբար անվավեր կամ ուժը կորցրած ճանաչվելու պահից: Կուսակցության ընտրական ցուցակի կամ ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուի գրանցումն անվավեր կամ ուժը

կորցրած ճանաչելու մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը դատական կարգով բողոքարկվելու դեպքում թեկնածուն կորցնում է պատգամավորի թեկնածուի կարգավիճակի հետ կապված իր իրավունքները և ազատվում է պարտականություններից դատական ակտի ուժի մեջ մտնելու պահից:

2. Հանրային ծառայող հանդիսացող պատգամավորի թեկնածուներն իրավունք չունեն օգտագործելու իրենց պաշտոնեական կամ ծառայողական դիրքի առավելությունները:

Հանրային ~~ծառայողներ հանդիսացող~~ **ծառայության մեջ գտնվող** պատգամավորի թեկնածուները (բացառությամբ Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի պատգամավորների և կառավարության անդամների) սույն օրենսգրքով սահմանված նախընտրական քարոզչության պաշտոնական մեկնարկի օրվանից մինչև քվեարկության օրն օրենքի ուժով ազատվում են իրենց ծառայողական պարտականությունների կատարումից: Այդ ժամանակահատվածում նշված թեկնածուների բացակայությունն աշխատանքից համարվում է հարգելի՝ առանց վարձատրության պահպանման:

3. Պատգամավորի թեկնածուի նկատմամբ քրեական հետապնդման հարուցումը չի կարող հիմք հանդիսանալ թեկնածուի՝ իր ընտրվելու իրավունքի իրացումն արգելելու համար:

Հոդված 107. Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուներին առաջադրվող պահանջները

1. Համայնքի ղեկավար և ավագանու անդամ կարող են ընտրվել սույն օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձինք:

2. Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածու չեն կարող առաջադրվել դատավորները, դատախազները, ~~քննչական կոմիտեի, հատուկ քննչական,~~ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության ծառայողները, ոստիկանությունում, ազգային անվտանգությունում, փրկարարական, հարկային, մաքսային մարմիններում, քրեակատարողական ծառայությունում, պրոբացիայի ծառայությունում, փրկարար ծառայությունում ծառայողները, զինծառայողները, ընտրական հանձնաժողովների անդամները**, քննչական կոմիտեում, հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք**:

Հոդված 126. Ընտրվելու իրավունքը

1. Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանու անդամ կարող են ընտրվել սույն օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձինք:

2. Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանու անդամի թեկնածու չեն կարող առաջադրվել դատավորները, դատախազները~~, քննչական կոմիտեի, հատուկ քննչական,~~ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության ծառայողները, ոստիկանությունում, ազգային անվտանգությունում, փրկարարական, հարկային, մաքսային մարմիններում, քրեակատարողական ծառայությունում, պրոբացիայի ծառայությունում, փրկարար ծառայությունում ծառայողները, զինծառայողները,

ընտրական հանձնաժողովի անդամները**, քննչական կոմիտեում, հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք** :

Հոդված 137. Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանու անդամի թեկնածուների իրավունքները, պարտականությունները, գործունեության երաշխիքները

1. Թեկնածու հանդիսացող պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցներն ու պաշտոնատար անձինք, ~~բացառությամբ քաղաքական և հայեցողական~~ **բացառությամբ համայնքային քաղաքական, համայնքային վարչական և համայնքային հայեցողական** պաշտոն զբաղեցնողների, սույն օրենսգրքով սահմանված նախընտրական քարոզչության պաշտոնական մեկնարկի օրվանից մինչև քվեարկության օրը օրենքի ուժով ազատվում են իրենց ծառայողական պարտականությունների կատարումից: Այդ ժամանակահատվածում նշված թեկնածուների բացակայությունն աշխատանքից համարվում է հարգելի՝ առանց վարձատրության պահպանման:

2. Կուսակցությունը քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն, իրավունք ունի ներկայացնելու ինքնաբացարկի մասին դիմում:

Թեկնածուն քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն, ինչպես նաև քվեարկության օրվանից հետո իրավունք ունի հանելու իր թեկնածությունը: Կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված քաղաքացու անունը, ազգանունը ցուցակից հանվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով: Թեկնածուի ինքնաբացարկի մասին դիմումը վավերացվում է նոտարական կարգով, կամ թեկնածուն ինքնաբացարկի մասին իր դիմումը հաստատում է ընտրական հանձնաժողովի նիստում:

Հոդված 12. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք

Ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից
1 հուլիսի 1998 թ.

Հոդված 6. Քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած հիմնական հասկացությունները

Քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած ներքոհիշյալ հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը՝

1) *դեպք*՝ հանցագործության հատկանիշներ պարունակող իրադարձություն, որի կապակցությամբ իրականացվում է քրեական դատավարություն.

2) *քրեական գործ*՝ քրեական հետապնդման մարմնի կամ դատարանի կողմից իրականացվող առանձին վարույթ՝ քրեական օրենսգրքով չթույլատրված մեկ կամ մի քանի ենթադրաբար կատարված արարքների կապակցությամբ.

3) *նյութեր*՝ փաստաթղթեր և այլ առարկաներ, որոնք գործի բաղկացուցիչ մասն են կամ ներկայացված են գործին կցվելու համար, հաղորդումներ, ինչպես նաև փաստաթղթեր և այլ առարկաներ, որոնք կարող են նպաստել գործով վարույթի ընթացքում նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելուն.

4) *գործով վարույթ*՝քրեական դատավարական ընթացակարգ, որն սկսվում է քրեական գործի հարուցման հարցը լուծելիս և իր մեջ ներառում է գործով իրականացվող և ընդունվող դատավարական որոշումները և գործողությունները.

5) *քրեական գործով մինչդատական վարույթ*՝քրեական գործով վարույթը քրեական գործ հարուցելու հարցի լուծման պահից մինչև գործն ըստ էության քննելու համար դատարան ուղարկելը.

6) *դատավարական գործողություններ*՝գործով վարույթի ընթացքում սույն օրենսգրքով նախատեսված գործողություններ.

7) *դատավարական որոշումներ*՝քրեական դատավարության ընթացքում իրավասու մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից ընդունվող՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումներ՝ դատավճիռներ, որոշումներ.

8) *դատավճիռ*՝դատական նիստում կայացված առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի որոշումները ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության, նրա նկատմամբ պատիժ կիրառելու կամ չկիրառելու և այլ հարցերով.

9) *որոշում*՝քրեական գործով դատարանի որոշումները, բացի դատավճռից, ինչպես նաև մինչդատական վարույթի ընթացքում հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կայացրած որոշումները.

10) *վերջնական որոշում*՝քրեական վարույթ իրականացնող մարմնի յուրաքանչյուր որոշում, որը բացառում է գործով վարույթն սկսելը կամ շարունակելը, ինչպես նաև լուծում է գործն ըստ էության.

10[1]) *գործն ըստ էության լուծող դատական ակտեր*՝առաջին ատյանի դատարանի դատավճիռ, քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին որոշում, ինչպես նաև այդ ակտերի վերաքննիչ բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտեր, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում վճռաբեկ դատարանի դատական ակտերը.

11) *դատարան*՝օրենքով սահմանված կարգով կազմավորված դատարան, որը գործերը քննում է կոլեգիալ կազմով կամ միանձնյա. առաջին ատյանի դատարան, վերաքննիչ դատարան, վճռաբեկ դատարան.

12) *ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ առաջին ատյանի դատարան)*՝ դատարան, որն իրավասու է քննելու բոլոր քրեական գործերը, քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ գործեր (նյութեր), ինչպես նաև վերահսկողություն իրականացնելու քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ.

13) *վերաքննիչ դատարան*՝դատարան, որը վերաքննության կարգով գործը քննում է վերաքննիչ բողոքի հիման վրա.

14) *վճռաբեկ դատարան*՝դատարան, որը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյան է և կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը:

Վճռաբեկ դատարանը օրենքով նախատեսված դեպքերում գործը քննում է վճռաբեկ բողոքի հիման վրա.

15) *դատավոր*՝դատարանի նախագահ, դատարանի պալատի նախագահ, պալատի դատավոր, դատարանի այլ դատավոր.

16) *կողմ*՝մարմինները և անձինք, որոնք քրեական դատավարությունում մրցակցային հիմունքներով իրականացնում են քրեական հետապնդում կամ պաշտպանություն.

17) *քրեական հետապնդում*՝ այն բոլոր դատավարական գործողությունները, որոնք իրականացնում են քրեական հետապնդման մարմինները, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում տուժողը՝ նպատակ ունենալով բացահայտել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարած անձին, վերջինիս մեղավորությունը հանցանքի կատարման մեջ, ինչպես նաև ապահովել այդպիսի անձի նկատմամբ պատժի և հարկադրանքի այլ միջոցներ կիրառելը.

18) *քրեական հետապնդման հարուցում*՝ քրեական հետապնդման մարմնի որոշումն անձին որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև մինչև այդ նրան ձերբակալելու կամ նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու մասին.

19) *քրեական հետապնդման դադարեցում*՝ քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի որոշումը՝ առաջադրված մեղադրանքը վերացնելու կամ մեղադրանքից հրաժարվելու մասին.

20) *մեղադրանք*՝ սույն օրենսգրքով նախատեսված կարգով ներկայացված հիմնավորում՝ որոշակի անձի կողմից քրեական օրենսգրքով չթույլատրված կոնկրետ արարքի կատարման մասին.

21) *մեղադրանքի կողմ*՝ քրեական հետապնդման մարմինները, ինչպես նաև տուժողը, քաղաքացիական հայցվորը և նրանց օրինական ներկայացուցիչներն ու ներկայացուցիչները.

22) *քրեական հետապնդման մարմիններ*՝ դատախազը (մեղադրողը), քննիչը, հետաքննության մարմինը.

23) *դատախազ*՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը և նրան ենթակա դատախազները, նրանց տեղակալները և օգնականները.

24) *մեղադրող*՝ դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազը.

25) *քննիչ*՝ քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության, ազգային անվտանգության, հարկային կամ մաքսային մարմինների պաշտոնատար անձ, որն իր իրավասության սահմաններում քրեական գործով կատարում է նախաքննություն.

26) *քննչական բաժնի պետ*՝ քննչական կոմիտեի նախագահը և նրա տեղակալները, հատուկ քննչական ծառայության պետը և նրա տեղակալները, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության, ազգային անվտանգության, հարկային կամ մաքսային մարմինների քննչական վարչության, բաժնի, բաժանմունքի պետը և նրա տեղակալները, որոնք գործում են իրենց իրավասության սահմաններում.

26.1) *օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողներ*՝ Հանրապետության նախագահը, վարչապետը, փոխվարչապետները, պատգամավորները, Սահմանադրական դատարանի դատավորները, դատարանների դատավորները, նախարարները, նրանց տեղակալները, Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարը, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը, վարչապետի աշխատակազմի ղեկավարը, Ոստիկանության պետը և նրա տեղակալները, Ազգային անվտանգության ծառայության տնօրենը և նրա տեղակալները, Պետական եկամուտների կոմիտեի նախագահը և նրա տեղակալները, մարզպետները, նրանց տեղակալները, Երևանի քաղաքապետը, նրա տեղակալները, Հաշվեքննիչ պալատի նախագահը և խորհրդի անդամները, Կենտրոնական բանկի խորհրդի անդամները, Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամները, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամները, Վիճակագրական կոմիտեի ղեկավարը և անդամները.

26.2) *պետական ծառայություն իրականացնող անձ*՝դատախազները, ~~քննչական կոմիտեի ծառայողները,~~ **քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք,** ոստիկանության (բացառությամբ ոստիկանության զորքերի), ազգային անվտանգության (բացառությամբ սահմանապահ զորքերի և զինված ստորաբաժանումների), հարկային, մաքսային մարմինների, հարկադիր կատարումն ապահովող, քրեակատարողական և փրկարար ծառայությունների պաշտոնատար անձինք.

27) *հետաքննության մարմին*՝սույն օրենսգրքով հետաքննության իրավասություն ունեցող պետական մարմնի համապատասխան ստորաբաժանման պետը (այսուհետ՝ հետաքննության մարմնի պետ) և աշխատակիցները.

28) *պաշտպանություն*՝դատավարական գործունեություն, որն իրականացնում է պաշտպանության կողմը՝ նպատակ ունենալով հերքել մեղադրանքը կամ մեղմացնել պատասխանատվությունը, պաշտպանել այն անձանց իրավունքները և շահերը, որոնց վերագրվում է քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի կատարումը, ինչպես նաև նպաստել ապօրինաբար քրեական հետապնդման ենթարկված անձանց իրավունքների վերականգնմանը.

29) *պաշտպանության կողմ*՝կասկածյալը, մեղադրյալը, նրանց օրինական ներկայացուցիչները, պաշտպանը, քաղաքացիական պատասխանողը և նրա ներկայացուցիչը.

30) *քրեական վարույթն իրականացնող մարմին*՝դատարանը, իսկ քրեական գործի մինչդատական վարույթում՝ հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը.

31) *դատավարության մասնակիցներ*՝դատախազը (մեղադրողը), քննիչը, հետաքննության մարմինը, ինչպես նաև տուժողը, քաղաքացիական հայցվորը, նրանց օրինական ներկայացուցիչները և ներկայացուցիչները, կասկածյալը, մեղադրյալը, նրանց օրինական ներկայացուցիչները, պաշտպանը, քաղաքացիական պատասխանողը և նրա ներկայացուցիչը.

32) *քրեական դատավարությանը մասնակցող անձինք*՝դատավարության մասնակիցները, ընթերական, դատական նիստի քարտուղարը, թարգմանիչը, մասնագետը, փորձագետը, վկան.

33) *դիմող*՝յուրաքանչյուր անձ, որը դիմել է դատարան, քրեական հետապնդման մարմնին՝ քրեական դատավարության կարգով խախտված իրավունքների պաշտպանության համար.

34) *միջնորդություն*՝կողմի կամ դիմողի խնդրանքը՝ ուղղված քրեական վարույթն իրականացնող մարմնին.

35) *բացատրություն*՝բանավոր կամ գրավոր փաստարկումներ, որոնք բերում են դատավարության մասնակիցները և դիմողները՝ հիմնավորելու համար իրենց կամ ներկայացվող անձի պահանջները, ինչպես նաև այլ անձանց բանավոր կամ գրավոր հաղորդումները, որոնք տրվում են մինչև քրեական գործ հարուցելը.

36) *արգելանքի վերցնել*՝գործողություն, որն սկսվում է անձին ազատությունից փաստացի հարկադրական զրկելու պահից՝ ձերբակալելիս, կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս, ազատազրկման ձևով դատավճիռն ի կատար ածելիս.

37) *կալանավորում*՝որպես խափանման միջոց կալանքն ընտրելը.

38) *անազատության մեջ պահել*՝անձին ազատությունից հարկադրաբար զրկելը, ինչ պատճառներով էլ որ դա իրականացված լինի.

38.1) *ժամանակավոր կալանավորում*՝ անձին անազատության մեջ պահել հանձնելու վերաբերյալ միջնորդությունն ստանալու և հանձնումը բացառող հանգամանքները պարզելու նպատակով.

38.2) *հանձնելու համար կալանավորում*՝ անձին անազատության մեջ պահել նրա հանձնումն ապահովելու նպատակով.

39) *ազգականներ*՝ ազգակցական կապի մեջ գտնվող և մինչև նախապապը կամ նախատատն ընդհանուր նախնիներ ունեցող անձինք.

40) *մերձավոր ազգականներ*՝ ծնողները, զավակները, որդեգրողները, որդեգրվածները, հարազատ և ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբայրները և քույրերը, պապը, տատը, թոռները, ինչպես նաև ամուսինը և ամուսնու ծնողները, վերջիններիս համար՝ փեսան և հարսը.

41) *պաշտպանյալ*՝ կասկածյալը կամ մեղադրյալը՝ իրենց պաշտպանի համար.

42) *արդարացված*՝ այն անձը, որի նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ, կամ որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է անմեղության հիմքով.

43) *լիազորող*՝ տուժողը, քաղաքացիական հայցվորը, քաղաքացիական պատասխանողն իրենց ներկայացուցչի համար.

44) *Հայաստանի Հանրապետության փաստաբանների միություն*՝ փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպություն.

45) *վնաս*՝ դրամական չափման ենթակա բարոյական, ֆիզիկական, գույքային վնասը.

46) *բնակարան*՝ շենք կամ շինություն, որը մշտապես կամ ժամանակավորապես օգտագործվում է որոշակի անձի կամ անձանց բնակության համար, այդ թվում՝ սեփական կամ վարձակալած բնակարանը, այգետնակը, հյուրանոցային համարը, նավախցիկը, գնացքի ճամփորդախցիկը, համապատասխանաբար նրանց անմիջական հարող ծածկապատշգամբերը, սանդղավանդակները, վերնասրահները, պատշգամբները, ընդհանուր օգտագործման տարածքը, ինչպես նաև դրանց այլ բաղկացուցիչ մասերը, որոնք օգտագործվում են հանգստի, գույքը պահելու, ինչպես նաև որոշակի անձի կամ անձանց այլ պահանջմունքները բավարարելու համար, բնակելի շինության նկուղը և ձեղնահարկը: «Բնակարան» հասկացությունն իր մեջ ընդգրկում է նաև մասնավոր ավտոմեքենան, գետային կամ ծովային նավը, ինչպես նաև ծառայողական անձնական աշխատասենյակը և ավտոմեքենան, արվեստանոցը.

47) *այլ տեղանք*՝ տեղանք որը գտնվում է համապատասխան դատարանի, հետաքննության մարմնի, նախաքննության մարմնի, դատախազության իրավասության և գտնվելու վայրի սահմաններից դուրս կամ քրեական դատավարությանը մասնակցող անձի բնակության վայրի սահմաններից դուրս.

48) *գիշերային ժամանակ*՝ ժամը 22.00-ից մինչև 7.00-ը:

Հոդված 190. Քննչական ենթակայությունը

1. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 104-164, 166-187, 190.1, 190.2, 191, 192, 195-201, 204, 212-214, 218, 222, 223, 225, 225[1], 227-232, 235-249 (բացառությամբ 235.1 հոդվածի), 251-298 (բացառությամբ 267.1 հոդվածի), 300, 300.1, 300.2, 301, 301.1, 308-328 (բացառությամբ 310.1 հոդվածի), 331-332.5, 336, 341, 341.1, 341.2, 343-345[1], 347-355 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են քննչական կոմիտեի քննիչները:

2. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 188, 189, 189.1, 193, 194, 202, 203, 205 (բացառությամբ մաքսային իրավահարաբերություններին վերաբերող հանցագործության), 207-211 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են քննչական կոմիտեի կամ հարկային մարմինների քննիչները: Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 205 հոդվածով նախատեսված՝ մաքսային իրավահարաբերություններին վերաբերող հանցագործության վերաբերյալ գործերով նախաքննությունը կատարում են ազգային անվտանգության կամ մաքսային մարմինների քննիչները:

3. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 189.1, 190, 217, 217[1] , 219-221, 224, 226, 233, 234, 250, 299, 302-307, 329, 329.1, 330, 384-397[1] հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են ազգային անվտանգության մարմինների քննիչները:

4. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 215.1, 215.2, 235.1 և 267.1 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են ազգային անվտանգության կամ մաքսային մարմինների քննիչները:

5. Նախաքննությունը զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված, ինչպես նաև զորամասի տարածքում կատարված կամ ժամկետային զինվորական ծառայության զինծառայողներին կամ պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնում և կազմակերպություններում (որոնց բաժնետոմսերի կառավարման լիազորությունը հանձնված է պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնին) ծառայություն իրականացնող անձանց վերագրվող հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են քննչական կոմիտեի քննիչները:

6. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149, 150, 154[1] , 154[2], 154.9, 314.2, 314.3, 310.1 հոդվածներով կատարում են հատուկ քննչական ծառայության քննիչները:

Անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը կարող է քննչական այլ մարմինների քննիչների վարույթից վերցնել և հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթին հանձնել քրեական գործեր, որոնք առնչվում են սույն մասում թվարկված պաշտոնատար անձանց հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործություններին, կամ որոնցով այդ անձինք ճանաչված են որպես տուժող, ինչպես նաև ցանկացած այլ քրեական գործ, եթե դրա փաստական հանգամանքներով պայմանավորված՝ առկա է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունը երաշխավորելու անհրաժեշտություն:

6.1. Նախաքննությունը ~~հատուկ քննչական ծառայության ծառայողների~~ **հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց**՝ իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են ազգային անվտանգության մարմինների քննիչները:

7. Սույն հոդվածի երկրորդ և չորրորդ մասերով նախատեսված գործերով նախաքննություն կատարում է այն մարմինը, որը հարուցել է տվյալ քրեական գործը,

բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գործը դատախազը հանձնում է նախաքննության այլ մարմնի:

8. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 128, 165, 200, 208, 209, 216, 308-310, 314, 315, 333-335, 337-340, 342, 345 և 346 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում է նախաքննության այն մարմինը, որի վարույթում գտնվող գործի քննության ընթացքում բացահայտվել է այդ հանցագործությունը, բացառությամբ սույն հոդվածի 6-րդ և 6.1-ին մասերում նշված անձանց կատարած հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի:

9. Ազգային անվտանգության կամ մաքսային մարմինների քննիչները 188, 189, 205, 206, 235, 263, 266, 268, 271, 272, 275 և 325 հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են նախաքննություն, եթե այդ հանցագործությունները բացահայտվել են իրենց վարույթում գտնվող գործի քննության ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գործը դատախազը հանձնում է նախաքննության այլ մարմնի:

10. Տարբեր պետական մարմինների քննիչներին ենթակա հանցագործությունների վերաբերյալ գործերը մեկ վարույթում միացնելու կամ գործի քննության ընթացքում այլ քննիչին ենթակա և սույն հոդվածի ութերորդ մասով չնախատեսված հանցագործության բացահայտման դեպքում ենթակայության հարցը որոշում է դատախազը: Այս կարգը չի տարածվում սույն հոդվածի 6-րդ և 6.1-ին մասերով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի վրա, որոնցից 6-րդ մասով նախատեսված քրեական գործերի նախաքննությունը կատարում են բացառապես հատուկ քննչական ծառայության քննիչները, իսկ 6.1-ին մասով նախատեսված քրեական գործերի նախաքննությունը կատարում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության քննիչները:

(պարբերությունն ուժը կորցրել է 19.05.14 ՀՕ-28-Ն)

11. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ, 54.1-ին գլուխներին համապատասխան ձևակերպված՝ քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին հարցումները նախաքննության մարմինները կատարում են սույն հոդվածով նախատեսված քննչական ենթակայությանը համապատասխան:

Սույն հոդվածով չսահմանված քննչական ենթակայության դեպքում հարցման կատարման ենթակայության հարցը որոշում է դատախազը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ

Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք

(Ընդունված է 2003 թվականի ապրիլի 18-ին)

Հոդված 84. Դատվածությունը

1. Անձը դատվածություն ունեցող է համարվում մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դատվածությունը մարվելու կամ հանվելու պահը:

2. Դատվածությունը, սույն օրենսգրքին համապատասխան, հաշվի է առնվում հանցագործության ռեցիդիվի դեպքում և պատիժ նշանակելիս:

3. Դատվածություն չունեցող են համարվում այն անձինք, ովքեր դատարանի դատավճռով դատապարտվել են առանց պատիժ նշանակելու կամ դատարանի դատավճռով ազատվել են պատիժը կրելուց կամ պատիժը կրել են այնպիսի արարքի համար, որի հանցավորությունն ու պատժելիությունը վերացված են օրենքով:

4. Դատվածությունը մարվում է՝

1) պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում՝ փորձաշրջանն անցնելուց հետո.

2) ազատազրկումից ավելի մեղմ պատժի դատապարտված անձանց նկատմամբ՝ նշանակված պատիժը կրելուց մեկ տարի անցնելուց հետո.

3) ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ՝ պատիժը կրելուց երեք տարի անցնելուց հետո.

4) ծանր հանցագործության համար ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ՝ պատիժը կրելուց հինգ տարի անցնելուց հետո.

5) առանձնապես ծանր հանցագործության համար ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ՝ պատիժը կրելուց ութ տարի անցնելուց հետո:

5. Եթե անձն օրենքով սահմանված կարգով պայմանական վաղաժամկետ ազատվել է պատիժը կրելուց, կամ պատժի չկրած մասը փոխարինվել է ավելի մեղմ պատժով, ապա դատվածությունը մարելու ժամկետը հաշվարկվում է հիմնական պատիժը և լրացուցիչ պատիժը կրելուց ազատելու պահից:

6. Եթե անձը պատիժը կրելուց հետո դրսևորել է անբասիր վարքագիծ, ապա նրա խնդրանքով դատարանը կարող է դատվածությունը հանել մինչև դատվածությունը մարելու ժամկետը լրանալը, բայց ոչ շուտ, քան այդ ժամկետի կեսը լրանալը: Դատվածությունը հանելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև պրոբացիայի պետական ծառայության կողմից դատարանի պահանջի հիման վրա ներկայացված՝ դատվածությունը հանելու վերաբերյալ խորհրդատվական զեկույցը:

7. Եթե անձը մինչև դատվածությունը մարվելը նոր հանցանք է կատարում, ապա դատվածության մարման ժամկետն ընդհատվում է: Առաջին հանցագործության համար դատվածությունը մարվելու ժամկետը հաշվարկվում է վերստին՝ վերջին հանցագործության համար պատիժը (հիմնական և լրացուցիչ) փաստորեն կրելուց հետո: Այդ դեպքում անձը երկու հանցագործությունների համար էլ դատված է համարվում մինչև դրանցից առավել ծանր հանցագործության համար դատվածությունը մարվելու ժամկետը լրանալը:

8. Դատվածությունը հանելը կամ մարելը վերացնում է դատվածության հետ կապված իրավական բոլոր հետևանքները: Սույն նորմն արգելք չէ օրենքով սահմանափակումներ նախատեսելու՝ դատավորի, դատախազի, ~~քննչական կոմիտեի ծառայողի, հատուկ քննչական ծառայության ծառայողի~~ **քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի, հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի**, ոստիկանության ծառայողի, քրեակատարողական ծառայողի, ազգային անվտանգության մարմիններում ծառայողի, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի պաշտոններ զբաղեցնելու համար:

~~**Հոդված 311[1].**~~ ~~**Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալը**~~

Հոդված 3111. **Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձի, հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալը**

~~1. Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալը, այսինքն՝ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալը կամ պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը՝ վարձատրություն տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին հանրային ծառայողի կողմից իր լիազորությունների շրջանակներում որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու կամ իր ծառայողական դիրքն օգտագործելով՝ այդպիսի գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար՝~~

~~— պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի~~

~~ժամկետով՝ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:~~

1. Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձի, հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալը, այսինքն՝ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձի, հանրային ծառայողի կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալը կամ պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը՝ վարձատրություն տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին հանրային պաշտոն զբաղեցնող անձի, հանրային ծառայողի կողմից իր լիազորությունների շրջանակներում որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու կամ իր պաշտոնեական կամ ծառայողական դիրքն օգտագործելով՝ այդպիսի գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

~~2. Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալը՝ վարձատրություն տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին ակնհայտ ապօրինի գործողության կամ անգործության համար՝ — պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:~~

2. Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձի, հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալը՝ վարձատրություն տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին ակնհայտ ապօրինի գործողության կամ անգործության համար՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

3. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) շորթմամբ,

2) խոշոր չափերով,

3) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝

4) ***(կետն ուժը կորցրել է 23.05.11 ՀՕ-143-Ն)***

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից յոթ տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով կամ երրորդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են՝

1) կազմակերպված խմբի կողմից,

2) առանձնապես խոշոր չափերով՝

պատժվում են ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

~~5. Սույն գլխում հանրային ծառայողներ են համարվում «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հանրային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված որևէ պաշտոն զբաղեցնող կամ օրենքով սահմանված դեպքերում և կարգով հանրային ծառայության համապատասխան կադրերի ռեզերվում գտնվող անձինք:~~

5. Սույն գլխի իմաստով հանրային ծառայողներ են համարվում «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող կամ օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական կամ համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող անձինք:

Հոդված 311[2]. Իրական կամ ենթադրյալ ազդեցությունը օգտագործելը

1. Իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով օգտագործելը՝ անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար դրամի, գույքի, գույքի նկատմամբ իրավունքի, արժեթղթերի կամ որևէ այլ առավելություն ստանալը կամ պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց օգտին որևէ պաշտոնատար անձի կամ պաշտոնատար անձ չհանդիսացող **հանրային պաշտոն զբաղեցնող անձի,** հանրային ծառայողի կողմից իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է ակնհայտ ապօրինի գործողության կամ անգործության համար՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

3. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) շորթմամբ,

2) խոշոր չափերով,

3) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝

4) ***(կետն ուժը կորցրել է 23.05.11 ՀՕ-143-Ն)***

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից յոթ տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են՝

1) կազմակերպված խմբի կողմից,

2) առանձնապես խոշոր չափերով՝

պատժվում են ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

~~**Հոդված 312[1]. Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողին ապօրինի վարձատրություն տալը**~~

«Հոդված 312[1]. Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձին, հանրային ծառայողին ապօրինի վարձատրություն տալը

~~1. Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողին ապօրինի վարձատրություն տալը, այսինքն՝ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողին անձամբ կամ միջնորդի միջոցով նրա կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալը կամ առաջարկելը կամ տրամադրելը՝ իր կամ իր ներկայացրած անձանց օգտին պաշտոնատար անձ չհանդիսացողի կողմից իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու կամ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից իր պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ այդպիսի գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:~~

1. Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձին, հանրային ծառայողին ապօրինի վարձատրություն տալը, այսինքն՝ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձին, հանրային ծառայողին անձամբ կամ միջնորդի միջոցով նրա կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալը կամ առաջարկելը կամ տրամադրելը՝ իր կամ իր ներկայացրած անձանց օգտին պաշտոնատար անձ չհանդիսացողի կողմից իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու կամ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձի, հանրային ծառայողի կողմից իր պաշտոնեական, ծառայողական դիրքն օգտագործելով՝ այդպիսի գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Ապօրինի վարձատրություն տալը, որը կատարվել է խոշոր չափերով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

3. Ապօրինի վարձատրություն տալը, որը կատարվել է՝

1) առանձնապես խոշոր չափերով,

2) կազմակերպված խմբի կողմից՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

4. Ապօրինի վարձատրություն տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել ապօրինի վարձատրության շորթում, և այդ անձը մինչև ապօրինի վարձատրություն տալու մասինքրեական հետապնդման մարմիններին հայտնի դառնալը, բայց հանցանքի կատարումից հետո՝ ոչ ուշ, քան եռօրյա

ժամկետում, այդ մասին կամովին հայտնել է քրեական հետապնդման մարմիններին և աջակցել հանցագործությունը բացահայտելուն:

Հոդված 312.2. Իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար ապօրինի վարձատրություն տալը

1. Անձին՝ նրա իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար ապօրինի վարձատրություն տալը, այսինքն՝ անձին անձամբ կամ միջնորդի միջոցով նրա կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալը կամ առաջարկելը կամ տրամադրելը իր կամ իր ներկայացրած անձանց օգտին որևէ պաշտոնատար անձի կամ պաշտոնատար անձ չհանդիսացող **հանրային պաշտոն զբաղեցնող անձի,** հանրային ծառայողի կողմից իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Ապօրինի վարձատրություն տալը, որը կատարվել է խոշոր չափերով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

3. Ապօրինի վարձատրություն տալը, որը կատարվել է՝

1) առանձնապես խոշոր չափերով,

2) կազմակերպված խմբի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

4. Ապօրինի վարձատրություն տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել ապօրինի վարձատրության շորթում, և այդ անձը մինչև ապօրինի վարձատրություն տալու մասինքրեական հետապնդման մարմիններին հայտնի դառնալը, բայց հանցանքի կատարումից հետո՝ ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, այդ մասին կամովին հայտնել է քրեական հետապնդման մարմիններին և աջակցել հանցագործությունը բացահայտելուն:

Հոդված 314.2. Հայտարարագրերը ~~Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի~~ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով դիտավորությամբ չներկայացնելը

1. Հայտարարատու պաշտոնատար անձի, ինչպես նաև նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հայտարարագրերը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.26-րդ հոդվածի 2-րդ կամ 4-րդ մասով սահմանված վարչական տույժի կիրառումից հետո՝ 30 օրվա ընթացքում, դիտավորությամբ չներկայացնելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հազարհինգհարյուրապատիկից երկուհազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ

որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Հոդված 344. Դատավորին, դատախազին, քննիչին, հետաքննություն կատարող անձին կամ ~~դատական ակտերի~~ հարկադիր կատարողին զրպարտելը

1. Դատախազին, քննիչին, հետաքննություն կատարող անձին կամ ~~դատական ակտերի~~ հարկադիր կատարողին զրպարտելը՝ կապված նախնական քննություն վարելու, դատարանի դատավճռի, վճռի կամ դատական այլ ակտի կատարման հետ՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է դատավորի նկատմամբ՝ կապված գործը կամ նյութերը դատարանում քննելու հետ՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, որոնք զուգորդվել են անձին ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրելով՝

պատժվում են ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

Հոդված 347. Նախնական քննություն վարելու կամ արդարադատություն իրականացնելու հետ կապված սպառնալիքը կամ բռնի գործողությունները

1. Դատավորի կամ նրա մերձավորի նկատմամբ սպանության, առողջությանը վնաս պատճառելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը՝ կապված գործը կամ նյութերը դատարանում քննելու հետ՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է դատախազի, քննիչի, հետաքննություն կատարող անձի, պաշտպանի, փորձագետի կամ ~~դատական ակտերի~~ հարկադիր կատարողի կամ նրանց մերձավորի նկատմամբ կապված նախնական քննություն վարելու, գործը կամ նյութերը դատարանում քննելու կամ դատարանի դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը կատարելու հետ՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված արարքը, որը զուգորդվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է Ազգային ժողովի կողմից
14 ապրիլի 1999 թ.

ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

անշարժ գույքի պետական միասնական կադաստր՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքի համար վարվող և կադաստրային քարտեզներում (հատակագծերում) անշարժ գույքի միավորների սահմանների նկարագրության վրա հիմնված անշարժ գույքի մասին տեղեկությունների համակարգված միասնական պետական ռեեստր.

անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարում՝ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման, գույքի կադաստրային գնահատման, հաշվառման, գույքի, դրա նկատմամբ իրավունքների, իրավունքների սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, տեղեկատվական բանկի ստեղծման և կառավարման միասնական գործառույթ.

անշարժ գույքի միավոր՝ միասնական տարածական ամբողջություն կազմող գույքի մաս, որը հանդիսանում է մեկ, իսկ ընդհանուր սեփականության դեպքում՝ մեկից ավելի անձանց սեփականության կամ այլ գույքային իրավունքների օբյեկտ.

անշարժ գույքի օբյեկտ՝ իրենց նպատակային նշանակությամբ անբաժանելի անշարժ գույքի միավորներ, որոնք կարող են սահմանակից չլինել, սակայն իրենց նպատակային օգտագործմամբ անբաժանելի են միմյանցից որպես ինժեներական, գծային, ճանապարհային, մայրուղային և այլ համակարգեր ու ենթակառուցվածքներ, ինչպես նաև այդ միավորների մաս կազմող կամ միմյանցից անբաժանելի հաղորդակցության ցանցեր (երկաթգիծ, մալուխային գիծ, խողովակաշար և այլն).

անշարժ գույքի հասցե՝ վավերապայմանների որոշակիորեն համակարգված համախումբ, որով միանշանակորեն որոշվում է հասցեավորման օբյեկտի տեղը բնակավայրում և որը պարունակում է առնվազն հետևյալ վավերապայմանները՝ մարզ, համայնք, ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտ (թաղամաս, հրապարակ, փողոց, պողոտա, նրբանցք, անցում, փակուղի, զբոսայգի և այլն), անշարժ գույքի հերթական համար.

բազմաբնակարան շենքի սեփականատերերի ընդհանուր գույք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված գույք.

գույք՝ անշարժ գույք՝ հողամասերը, անշարժ գույք հանդիսացող ընդերքի մասը, մեկուսի ջրային օբյեկտները, անտառները, բազմամյա տնկիները, ստորգետնյա և վերգետնյա, այդ թվում նաև՝ կառուցվող շենքերը, շինությունները և հողին ամրակցված այլ գույքը.

գույքագրման փաստաթղթեր՝ հողամասերի, շենքերի, շինությունների գույքագրում, տեխնիկական անձնագրավորում կամ գրանցում իրականացնող լիազոր մարմինների կողմից մինչև 1998 թվականի մարտի 1-ը կազմված՝ անշարժ գույքի գույքագրման, տեխնիկական անձնագրավորման կամ գրանցման արդյունքում կազմված կամ այդ գործառույթների ավարտի ձևակերպման համար օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր.

գրանցված իրավունքի սուբյեկտ՝ սույն օրենքով սահմանված կարգով գրանցված իրավունքի սուբյեկտ: Պայմանագրային ներդրումային ֆոնդի ակտիվների հաշվին ձեռք բերված իրավունքների գծով գրանցված իրավունքի սուբյեկտների անունից հանդես է գալիս և սույն օրենքով նախատեսված իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է տվյալ ներդրումային ֆոնդի կառավարիչը.

իրավատեր՝ սուբյեկտ, որի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված եղանակով ձեռքբերված գույքի նկատմամբ իրավունքը սույն օրենքով սահմանված կարգով դեռևս պետական գրանցման չի ենթարկվել.

իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթեր՝ օրենքով սահմանված հիմքերով պետական գրանցման ենթակա իրավունքների ձեռքբերման համար օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի ավարտի իրավական ձևակերպման համար անհրաժեշտ և բավարար գրավոր փաստաթուղթ, այդ թվում՝ քաղաքացիաիրավական պայմանագրեր, պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների անհատական ակտեր, դատական ակտեր, իսկ օրենքի ուժով ճանաչված իրավունքի համար՝ այդ օրենքով նման իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ և բավարար նախապայման հանդիսացող իրավաբանական փաստերը հաստատող գրավոր փաստաթղթեր.

իրավահաստատող փաստաթղթեր՝ իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթեր և գույքագրման փաստաթղթեր.

կադաստրային ծածկագիր՝ թվերի համակցություն, որը տրվում է անշարժ գույքի միավորին կամ դրա առանձին մասերին կամ անշարժ գույքի օբյեկտին և պահպանվում է այնքան ժամանակ, քանի դեռ այդ միավորը կամ օբյեկտը գոյություն ունի որպես մեկ միասնական տարածական կամ նպատակային նշանակությամբ անբաժանելի ամբողջություն կամ չի փոփոխվել տվյալ միավորի կադաստրային տարածքը կամ ենթատարածքը.

հողամասի հատակագիծ՝ օգտագործման համար սահմանված մասշտաբով գծված հողամասի տեղագրական գծագիրը (քարտեզը), որում, տվյալ հողամասի սահմաններում, վերջին նկարահանման (հանութագրման) պահին և հողաշինության վերջին նախագծին համապատասխան, պատկերված են հողամասի իրավիճակը և սահմանները.

շարժական գույքի կադաստր՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հաշվառման ենթակա շարժական գույքի՝ ըստ տեսակների հաշվառման տվյալների և շարժական գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքների և սահմանափակումների, դրանց ծագման, փոփոխման, փոխանցման և դադարման վերաբերյալ տվյալների միասնական տեղեկատվական համակարգ.

շարժական գույքի կադաստրի վարում՝ սույն օրենքում նշված պետական կառավարման մարմնի կողմից շարժական գույքի՝ ըստ տեսակների հաշվառում և հաշվառման մատյանների վարում, ինչպես նաև գրանցման ենթակա շարժական գույքի նկատմամբ իրավունքների, սահմանափակումների, դրանց ծագման, փոփոխման, փոխանցման և դադարման պետական գրանցում.

շինության հատակագիծ՝ շենքի, շինության հարկերի հորիզոնական կտրվածքի, իսկ առանձին կանգնած շենքերի, շինությունների դեպքում նաև հողամասում դրանց տեղադրության՝ որոշակի մասշտաբով և պայմանական նշաններով արտապատկերում.

պետական գրանցում՝ սույն օրենքով սահմանված կարգով պետական գրանցում իրականացնող մարմնի կողմից իրականացման ենթակա պարտադիր գործառույթ, որն ուղղված է պետության կողմից գույքի նկատմամբ իրավունքների ծագման, փոփոխման, փոխանցման, դադարման և սահմանափակումների ճանաչման, ինչպես նաև պետության կողմից գույքի նկատմամբ գրանցված իրավունքների պաշտպանության, անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տվյալների հավաքագրման, մատչելիության, օբյեկտիվության, անընդհատության ու միասնականության ապահովմանը.

սպասարկման գրասենյակ՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի ~~առանձնացված~~ **կառուցվածքային** ստորաբաժանում, որն իրականացնում է անշարժ գույքի պետական ռեգիստրի գործառույթների իրականացման համար դիմումների ընդունումը և այդ գործառույթների արդյունքում կազմված փաստաթղթերի տրամադրումը:

Հոդված 19. Պետական գրանցում իրականացնող լիազոր մարմինը

1. Սույն օրենքով սահմանված կարգով գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցումը, պետական գրանցման դադարեցումը, կասեցումը և մերժումը գույքի և դրա նկատմամբ իրավունքների և սահմանափակումների մասին տեղեկատվության տրամադրումն իրականացնում է Անշարժ գույքի կադաստրի կոմիտեն (այսուհետ՝ անշարժ գույքի պետական ռեգիստր) իր ~~առանձնացված (տարածքային)~~ **կառուցվածքային** ստորաբաժանումների միջոցով:

Հոդված 22. Անշարժ գույքի պետական ռեգիստրի ~~տարածքային~~ **կառուցվածքային** ստորաբաժանումները

1. Անշարժ գույքի պետական ռեգիստրի ~~տարածքային~~ կառուցվածքային ստորաբաժանումները ստեղծվում են անշարժ գույքի պետական ռեգիստրի

ղեկավարի կողմից և նրա սահմանած տարածքում իրականացնում են սույն օրենքով սահմանված կարգով գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցում, պետական գրանցման դադարեցում, կասեցում և մերժում, գույքի և դրա նկատմամբ իրավունքների և սահմանափակումների մասին տեղեկատվության տրամադրում, ինչպես նաև պետական գրանցման հիմնական սկզբունքներից ու խնդիրներից բխող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

2. Անշարժ գույքի պետական ռեգիստրի ~~տարածքային~~ կառուցվածքային ստորաբաժանումների միջև պետական գրանցման և տեղեկատվության տրամադրման և պետական գրանցման ու տեղեկատվության տրամադրման դիմումների ընդունման գործառույթների տարածքային ենթակայությունը սահմանում է անշարժ գույքի պետական ռեգիստրի ղեկավարը:

(22-րդ հոդվածը խմբ. 20.10.16 ՀՕ-166-Ն)

Հոդված 23. Պետական գրանցում իրականացնելու լիազորություն ունեցող պաշտոնատար անձինք

1. Սույն օրենքով սահմանված կարգով անշարժ գույքի պետական ռեգիստրի ~~տարածքային~~ կառուցվածքային ստորաբաժանումներում պետական գրանցումը, պետական գրանցման դադարեցումը, կասեցումը կամ մերժումն իրականացնում են ի պաշտոնե պետական գրանցում կատարելու լիազորություն ունեցող պաշտոնատար անձինք, որոնց պաշտոնների ցանկը սահմանում է անշարժ գույքի պետական ռեգիստրի ղեկավարը:

2. Պետական գրանցում կատարելու լիազորություն ունեցող պաշտոնատար անձանց արգելվում է գրանցել իրենց կամ իրենց մերձավոր ազգականների (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր) անվամբ գույքի նկատմամբ իրավունքները: